Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

(Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն)

ԵՐԵՎԱՆ

2012

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Տ 240

Սիմոնյան Ռ.
Տ 240 Տավուշի մարզ/ Ռ. Սիմոնյան. - 2-րդ լրամշակված հրատ.- Եր.: Տիգրան Մեծ, 2012. - 284+12 էջ:

Աշխատությունը նվիրված է ՀՀ Տավուշի մարզի պատմությանը:

Առաջին անգամ փորձ է արվել ի մի բերել մարզի մասին հին ու նոր ժամանակների հեղինակների աշխատություններում և մշակույթի հուշարձաններում եղած հիշատակությունները: Հեղինակի ուսումնասիրություններով նաև ճշգրտվել են փաստեր և որոշ հուշարձանների տեղավայրեր:

Զրուցարանի ձևով ներկայացվող գիրքը նախատեսվում է տարածաշրջանի պատմական անցյալով հետաքրքրվողների լայն շրջանակների և հայրենագիտություն պարապող ուսանողության համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-0-465-9
© Ռուբեն Սիմոնյան, 2012

Շապիկի առաջին էջին՝ Տավուշ բերդը X դ.:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վաստակաշատ լրագրող, գրող և հրապարակախոս Ռուբեն Սիմոնյանը ընթերցողի սեղանին է դնում հարազատ երկրամասի պատմությանը, հուշարձաններին և ժողովրդագրությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություն-էսսե:

Գրքի շարադրանքից ակնհայտորեն երևակվում են հեղինակի խոր և համապարփակ գիտելիքները, որոնք նա քաղել է ոչ միայն լրատվության զանգվածային միջոցներից, շրջագայությունների, հարցախույզների միջոցով, այլև՝ գիտական համապատասխան գրականության, մեր պատմիչների երկերի և նմանօրինակ աշխատանքների շարադրման համար կարևորվող արխիվային, վիճակագրական, ազգագրական և բանահյուսական, հավաքչական նյութերի, ժողովրդագրական տվյալների իմացությամբ ու օգտագործմամբ, որոնցով այս աշխատությունը շահեկանորեն առանձնանում է ցարդ հրապարակում եղած նույնատիպ գործերից:

Բազմաբնույթ սկզբնաղբյուրների, գիտական և տեղագրական գրականության բնաքաղումը Ռուբեն Սիմոնյանին չի ներփակել ակադեմիական շարադրանքին երբեմն բնորոշ «չոր ու ցամաք» լեզվամտածողության շրջանակներում: Աշխատանքը գրված է հայերենի հարուստ լեզվաոճական հենքի խորագիտակ իմացությամբ և հմտալից օգտագործմամբ, ինչը գրքի ընթերցումը դարձնում է առավել հետաքրքրական, ընկալելի և ուսանելի:

Հանրության ուշադրությանը ներկայացվող այս գրքի հիմնական առանցքը Տավուշ երկրամասի պատմական անցուդարձն է, սկսյալ

հնագույն ժամանակներից՝ մինչև օրս, որը կառուցված է հայ ժողովրդի ընդհանուր պատմության հենքի վրա:

Ռ. Սիմոնյանը չի հավակնել Տավուշի մարզի համապարփակ գիտական պատմության շարահյուսողի դափնիներին: Նրա սույն երախայրիքը «մի համեստ զրուցարան է», որը նպատակաուղղված է ընթերցող լայն շրջանակներին, հատկապես՝ հայրենակիցներին էսսեի ձևով ներկայացնելու ներկայիս մարզատարածքի պատմական հարուստ անցյալը:

Հեղինակը բազմաթիվ շրջագայությունների ժամանակ անձամբ եղել է մարզի հարյուրավոր հնավայրերում, մանրակրկիտ տեղազննել յուրաքանչյուր քար ու թուփ, մեկ առ մեկ ուսումնասիրել դրանք: Այս հետազոտությունների արդյունքում նա հայտնաբերել է տասնյակ նոր հուշարձաններ, ճշգրտել մի շարք հայտնի վանքերի, ամրոցների, եկեղեցիների տեղադրությունը: Այս շարքում հիշատակելի են Հին Գետիկի և Անդրեի վանքերի, Վանական վարդապետի քարայրի, Նոր Բերդ, Մահկանաբերդ, Գագ ամրոցների տեղադրությունների և անվանումների ճշգրտման հեղինակի փորձերը, որոնք խարսխվել են ոչ միայն հայեցողական նյութերի, այլև, որ առավել գնահատելի է՝ մատենագրական և վիմագրական տվյալների վրա:

Ուշադրության են արժանի Ռուբեն Սիմոնյանի քննությունները՝ նվիրված միջնադարյան և նոր շրջանի ճանապարհներին, որոնք ստրատեգիական, առևտրատնտեսական, հաղորդակցական կարևոր նշանակություն են ունեցել: Այս տվյալները նա ամփոփել է գրքում ներկայացված համապատասխան քարտեզում:

Հեղինակի ձեռքբերումներից է տարածաշրջանի XVIII-XXդդ. պատմությանը նվիրված շարադրանքը: Այստեղ Սիմոնյանը ամենայն բարեխղճությամբ և տեղին օգտագործել է արխիվներում, վիճակագրական հրապարակումներում և տեղագրական ուսումնասիրություններում պահպանված հարուստ նյութերը:

Ողջունելով Ռուբեն Սիմոնյանի այս գրքի հրապարակումը՝ հեղինակին ցանկանում ենք նորանոր հաջողություններ:

Պատմական գիտությունների թեկնածուներ՝
ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Այնքան անհոգ ու անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում մեր նախնիներից մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների. ձորերի և դաշտերի մէջ. չգիտենք թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների. մատուռների եւ եկեղեցիների. խաչարձանների և տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում. մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն:

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՀՀ Տավուշի մարզը կազմավորվել է ՀՀ Ազգային ժողովի հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքով, որը ՀՀ Նախագահը հաստատել է 1995թ. դեկտեմբերի 5-ին, իսկ մարզպետարանն իր գործունեությունը սկսել է 1996-ի փետրվարի 20-ին:

Մարզի տարածքը համընկնում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1977թ. հանրապետության սոցիալ-տնտեսական շրջանացման գծագրով սահմանված Աղստևի սոցիալ-տնտեսական շրջանին, որն ընդգրկում է նախկին Իջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի (Շամշադին) շրջանները և հանրապետական նշանակության Դիլիջան քաղաքը: Ձբաղեցնում է Անդրկովկասի ամենախոշոր Կուր գետի աջակողմյան Կողբ, Ոսկեպար, Աղստև, Հախում, Տավուշ և Խնձորուտ վտակների

վերին և միջին հոսանքների շրջանները: Հարավում և հարավ-արևելքում Տավուշի մարզը սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի, արևմուտքում՝ Լոռու մարզերին, հյուսիս-արևմուտքում՝ Վրաստանի Հանրապետության Քվեմո-Քարթլիի մարզի Մառնեուլի շրջանին, հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետության Ղազախի, Աղստաֆայի, Թովուզի և Գետաբեկի շրջաններին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է հասնում շուրջ 400 կմ ռելիեֆով չափազանց բարդ մի հատված, ուր Ադրբեջանի հետ շփման գիծը 300 կմ է:

Տավուշի մարզը զբաղեցնում է 2700 կմ^2 մակերես՝ հանրապետության տարածքի 9 տոկոսը: 2011թ. հունվարի 1-ի դրությամբ* մշտական բնակչության քանակը 131 911 մարդ էր, որոնցից 52 700-ը բնակվում էին քաղաքներում: Ունի 57 գյուղական և 5 քաղաքային համայնք: Մարզկենտրոնն Իջևան քաղաքն է, որը մինչև 1919 թվականը կոչվել է Քարվանսարա և քաղաքի կարգավիճակ է ստացել 1961-ին: Խոշոր գետերն են՝ մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսող Աղստևը և մարզի հյուսիս-արևմտյան սահմանագծով հոսող Դեբեդը: Վրջինիս ափին, Դեբեդավան գյուղի մոտ է գտնվում մարզի և Հայաստանի ամենացածր կետը՝ 380 մետր: Իսկ ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993 մ, որի գագաթից անամպ օրերին երևում են հրաշափառ Սևանա լիճը, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի, Թեղենյաց, Սևանա, Արեգունի, Գուգարաց լեռնաշղթաները, Կուր գետի հովիտը և Մեծ Կովկասի հզոր լեռնապատնեշը:

Մարզի համար Տավուշ անունը, «ի չգոյե լավագոյնի», պայմանական և կամայական է, որովհետև հայոց պատմությանն անհայտ է Տավուշ անունով վարչատարածքային մի միավոր, որը երբևէ ընդգրկած լիներ ներկայիս մարզի ողջ տարածքը: Ավելին, պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ Ուրարտու պետության (Արարատյան թագավորություն) ժամանակաշրջանում (մ.թ.ա. IX-VIդդ.) երկրի հյուսիս-արևելքը, մինչև Կուր գետը, զբաղեցրել է Եթիունէ կամ Ուտիք նահանգը, որը նաև ընդգրկել է ներկայիս ողջ Տավուշի մարզը: Իսկ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանն ապացուցել է, որ Ուտիք հայկական նահանգի անունը ոչ մի կապ չունի ուտի (ուդի) ցեղի հետ և առաջացել է հայերեն

* 2011թ. հոկտեմբերյան մարդահամարի արդյունքները դեռ չեն ամփոփված:

հովիտ բառից[1]: Ուրեմն, եթե ՀՀ Ազգային Ժողովին նորաստեղծ մարզերի համար անուններ առաջարկողներն անսային գիտության խոսքին և հանդես չբերեին գործելակերպի վարչահրամայական մոտեցում, ապա «բակլան խաշած չէին ցանի», հարցումների արդյունքում մարզը հավանաբար կկոչվեր Ուտիք, որն այժմ մեզ համար կորած է Գուգարք անվան պես:

Պատմահայր Մովսես Խորենացու հաղորդման և «Աշխարհացոյց»-ի տվյալների համաձայն, արդեն Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանում (մ.թ.ա. II - մ.թ. Iդդ.) մարզի կենտրոնական և արևմտյան հատվածները գտնվել են Տիգրան Բ-ի ստեղծած մեծ Հայաստանի եզրային կամ սահմանակալ չորս երկրամասերից մեկի՝ Գուգարք աշխարհի, իսկ արևելյան հատվածը՝ Կուր գետի աջափնյակը զբաղեցրած հարթավայրային Ուտիք նահանգի մեջ: Արշակունիների գահակալության ժամանակ (մ.թ. I-Vդդ.) Տիգրան Մեծի ստեղծած պետության վարչատարածքային սահմանները որոշ փոփոխության են ենթարկվել:

1996-ին լուծարված Իջևանի և Նոյեմբերյանի շրջանների տարածքները զբաղեցրել են Գուգարք նահանգի (բդեշխության) Ձորոփոր կամ Ձորափոր (Աղստև գետի միջին հոսանքում), Կանգարք կամ Կանգառք* (Ոսկեպար և Կիրանց գետերի հովիտներում), Կողբոփոր կամ Կողբափոր (Կողբ գետակի հովտում և հարակից հովիտներում) գավառները: Դիլիջանն իր շրջակայքով մտել է Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ և համարվել է «հովուց տեղիք»՝ ամառային հանգստավայր և որսարան: Իսկ ներկայիս մարզի արևելյան հատվածը մտել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի մեջ՝ կոչվելով *Տուս-*

* Կան տեսակետներ, ըստ որոնց, Կանգարք գավառի փոխարեն աշխարհագրական այս միջավայրում է գտնվել Արցախ աշխարհի Մեծ Կուենք (Կվենք) գավառը, որը մեր կարծիքով սխալ է: Նախ, գավառները պիտի գտնվեին որևէ աշխարհի (նահանգի) սահմաններից ներս, իսկ Արցախ աշխարհի և Աղստևի հովտի միջև, Կուր գետից մինչև Սևանա լճին հյուսիս-արևելքից հարող լեռնաշղթաների կատարներ ձգվել են Ուտիք աշխարհի Գարդմանք և Տավուշ գավառները: Ուստի Արցախ աշխարհի արևմտյան սահմանից շուրջ 80 կմ կտրված հովտում չէր կարող լինել նրա մասը կազմող գավառը: Իսկ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմության» մեջ պարզ և հստակ հաղորդում է, թե Մեծ Կվյանք կամ Մեծ Կվենք գավառը գտնվում է ***«խորաձորերով հարուստ, անտառախիտ և անտառներով առատ Արցախ երկրում»*** (ընդգծումը մերն է - Ռ.Ս.): Իր հերթին, «Նոր տետրակ, որ կոչվում է Հորդորակ»-ի հեղինակն Արցախ աշխարհի 5-րդ գավառ է նշում Մեծ Կուանքը, իսկ ներկայացված քարտեզում Շամխորից դեպի Տփխիս, ճիշտ իր տեղում՝ Կանգարք գավառը:

քուստակ գավառ: Այս տեղանվան «քուստակ» մասնիկը պարսկերեն բառ է, որը նշանակում է երկրամաս կամ գավառ: Ուրեմն Տուսքուստակ նշանակում է Տուսի գավառ: Իսկ ի՞նչ է այս «տուսը»:

Հայտնի է, որ հայկական շատ տեղանուններ ունեն էթնիկական ծագում և հաճախ կրում են հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած, տվյալ երկրամասում բնակված ցեղի (ցեղախմբի) անունը: Այդպես է նաև ՏԱՎՈՒՇ անունը, որը ժամանակին ստուգաբանել են Սուրեն Սաղումյանը, Յուրի Վարդանյանը և Արտաշես Շահնազարյանը: Նրանք նկատել են, որ հայ բանահյուսության մեջ առաջին անգամ Քերթողահայրն է իր մեծահռչակ աշխատությունում Վարդգես Մանկան առասպելի առիթով խոսել Տուհք (Տավուշ) գավառի մասին:

«Գաղթեց գնաց Վարդգես Մանուկը
Տուհաց գավառից, Քասախ գետի մոտ,
Եկավ ու նստեց Շրեշ բլրի
Արտեմիդ քաղաքի, Քասախ գետի մոտ,
Երվանդ արքայի դուռը թակելու»[2]:

Իսկ X դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցուն, մեզ հետաքրքրող աշխարհագրական միջավայրում, հայտնի է եղել Տուս[3] բնակավայրը: Եվ,ահա, գիտնականներն ինչպես են բացատրում հնագույն Տուհ (ք), Տուս և Տավուշ բառերի նույնականությունը: Հայտնի է, որ գրաբարում ուղղական հոլովաձևը եղել է տուհքը, իսկ սեռականը՝ տուաց: Հետևաբար, հայ ժողովուրդի կազմավորմանը մասնակցած տուհ ցեղից (տուհ ցեղանունից) ծագած Տուհք գավառանունը նույն Տուսն է: Հետագայում Տուհք դժվար արտասանելի բառը, ենթարկվելով հայերենի զարգացման օրինաչափություններին, տեղի է տալիս բարեհնչուն, բայց նույնարմատ Տավուշ անվանը: 1990թ. նոյեմբերի 11-ին նախ Տավուշի շրջան կոչվեց XVI դարից Շամշադին անվանվող գավառը (շրջանը), իսկ ՀՀ վարչատարածքային վերջին բաժանումից հետո՝ նորաստեղծ մարզը*: Միով բանիվ, պատմական անցյալում Տավուշ անունը երբեք ընդհանրական չի եղել այս երկրամասի համար, որը միջնադարյան հայ պատմիչները հաճախ կոչել են հայոց Կողմանք Արևելից: Իսկ մեր օրերի գիտնականները՝ Ուտիք ֆիզիկա-աշխարհագրական շրջան:

* 2009թ. հունվարին իր պատմական Տավուշ անունն է վերստացել օտարահունչ Թովուզ գյուղը:

ԲՆԱՇԽԱՐՀ

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելքում, Փոքր Կովկասի լեռնահամակարգի արտաքին շարի վրա, որը կազմված է Գուգարաց, Միափորի, Արեգունու լեռնաշղթաներից: Կենտրոնական դիրք գրավող Գուգարաց լեռները, որ ջրաբաժան են Դեբեդ և Աղստև գետերի միջև, տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաներ ու լեռնաբազուկներ են, որոնք, հյուսիս-արևելքում աստիճանաբար ցածրանալով, Կուրի աջափնյակում դառնում են բլրաշարեր ու ձուլվում հարթավայրին: Դիլիջան քաղաքից արևմուտք, Աղստև գետին գրեթե զուգահեռ ձգվում է Բովաքարի լեռնաշղթան, որի բարձրակետը Հալաբ սարն է (3016 մ) Լոռվա մարզի տարածքում: Այս գագաթից հարավ ընկած են Ախրիզամանի* և Դամյայի լեռները: Իսկ Բովաքարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան շարունակության վրա, Հաղարծին գետակի ակունքների շրջանից սկսվում և Աղստևին գրեթե զուգահեռ, մինչև Գետահովիտ գյուղի մատույցները (Սառնաջուր գետ) ձգվում է Իջևանի (Կայենի կամ Դալուդաղի) անտառապատ, զառիթափ ու մասնատված լեռնաշղթան (43 կմ): Այստեղ ամենաբարձրը Հովք լեռն է՝ 2507 մ: Իջևանի լեռնաշղթայի վրա առանձնանում են նաև Իջևան, Թոնուտ, Կապուտան (Գյոկչա), Խոռ և այլ գագաթներ:

Բովաքարի լեռնաշղթայի արևելյան ծայրից դեպի հյուսիս, շուրջ 80 կմ երկարությամբ, ձգվում է Դեբեդ և Աղստև գետերի ջրաբաժան Գուգարաց լեռնաշղթան, որի առավելագույն բարձրությունը Լոռվա

* Շատ տեղանուններ դեռ չեն անվանափոխվել, օտարահունչ են, ուստի ի չգոյե հայերենի, նշվում են օգտագործվող ձևով:

մարզի տարածքում գտնվող Չաթին սարն է (2244 մ): Ձառիթափ և քարքարոտ Դաշ-բաշ, Չինգիլ, Նազար սար կատարներից տարբեր ուղղություններով ձգվում են նույնանուն լեռնաբազուկները, որոնցից արևելք առանձնանում են Դալիկքարի, Շարուքարի, Աղբուղայի, Խաչաղբյուրի, Աղլի սարի կատարները: Վերջինիս հյուսիսային կողմում իր բացառիկ գեղեցկությամբ հառնում է Պաղակն (Սոյուղ բուլաղ) սարը՝ 2072 մ: Այս լեռնագագաթից դեպի արևելք ձգվում է երկու լեռնաշղթա: Մեկը՝ Քաչալ դաղ, Գոգ դաղ, Շամշաբաթ, Ղազանչի կատարներով, հյուսիս-արևելյան ուղղությամբ հասնում է Ոսկեպար և Կիրանց գետերի միախառնման անկյունը և կոչվում է Կիրանցի լեռնաշղթա:

Պաղակն սարից դեպի արևելք ճյուղավորվում է Մթնասարի լեռնաշղթան, որն, ալպյան բարձունքներում մի քանի անգամ ուղղությունը փոխելով, հասնում է Մեծ սարին՝ 1865 մ, որից ձգվում են երեք ճյուղավորումներ: Կենտրոնականը՝ Մթնասարի լեռնաշղթա անունով, հարավ-արևելք, հյուսիս-արևելք ուղղությամբ աղեղելով Կիրանց գետի Սամսոն վտակի ակունքների գեղեցիկ գոգահովիտը, Պայտաթափ կամ Նալթոքյան (1979 մ) կատարից ճյուղավորվելով մի շարք բազուկների (Աբո, Մամխաբաց, ճանճաքար, Սաթլմիշ), ձգվում է մինչև Ադրբեջանի Ղազախի շրջանի Դամիրչլար գյուղի մատույցները (38 կմ): Մեծ սարից դեպի հարավ-արևելք, ապա արևելք ճյուղավորվում է Կարմրաքարի լեռնաշղթան, որը Սառնաջուր գետի ձախափնյակին զուգահեռ իջնում է դեպի Աղստև գետը: Սրա վրա հայտնի են Ֆիդայասար, Պստի սար, Կոթքար, Կարմրաքար կատարները: Մեծ սարից դեպի հյուսիս-արևելք՝ Կիրանց և Սամսոն գետերի ջրաբաժանը, ժողովրդի կողմից Դեղձնուտ կոչված լեռնաբազուկն է, որի վրա աչքի են ընկնում Հարսնաքար ժայռը (բնական ժառանգության մի իսկական գոհար), Խաչի յալ, Կլոր (Շիշ) ուրթ, Հարամ քար գագաթները:

Գուգարաց լեռների Չաթին սարից արևմուտք, դեպի Դեբեդի աջափնյակ է իջնում Սևորդյաց լեռնաշղթան (15 կմ): Իսկ Գոմշավար գագաթից (1969 մ) դեպի հյուսիս-արևելք է ձգվում Ոսկեպարի լեռնաշղթան (26 կմ), որի վրա առանձնանում են Դոնդար, Ելակ, Փայտասար (Օդունդաղ), Ոսկիվանխաչ, Խոփիգլուխ, Շոռաղբյուր և այլ լեռնագագաթներ: Փայտասարից արևելք՝ պատմական Գագա դաշտի կենտրոնում, վեր է խոյանում Գավարգին ժայռը, որի վրա կա հայ-

կական միջնադարյան ամրոց: Ոսկեպարի լեռնաշղթայի վերջնամասում, Կուրի աջափնյա հարթավայրին իշխող լեռնագագաթին վեր է բարձրանում XX դարի սկզբին Ադրբեջանին գերի մնացած սուրբ Սարգիս վանք-ուխտատեղին, որի կառուցումն ավանդաբար ժողովուրդը վերագրել է հայոց գրագետ դարերի սկզբնավորող Մեսրոպ Մաշտոց ուսուցչապետին:

Գուգարաց լեռնաշղթայի հյուսիսային կողմից դեպի արևմուտք Դեբեդի ձորն է իջնում Կոտմանի կամ Կոզմանի անտառածածկ ցածրադիր լեռնաշղթան (21 կմ), որի նշանավոր կատարը Սալերքն է՝ 1261 մ: Գուգարաց լեռնահամակարգի հյուսիսային ծայրամասն է կազմում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պետական սահմանների կցանվածքով ձգվող Պապաքարի մերկ, քարքարոտ լեռնաշղթան (24 կմ), որի հարավային կողմում, Դեբեդի աջափնյակում տարածվում է Բագրատաշենի (նախկին Չորագետի կամ Ղուռուչայի) դաշտը:

Փոքր Կովկասի լեռնահամակարգի արտաքին շարի նշանակալի լեռնազանգվածներից է նաև մասնատված լանջերով Միափորի լեռնաշղթան, որը հյուսիս-արևմուտքից՝ Աղստև և Գետիկ գետերի միախառնման անկյունից, անընդհատ բարձրանալով Տավուշի և Գեղարքունիքի մարզերի սահմանագծով 54 կմ ձգվում է մինչև Սևանի լեռնաշղթայի Քաշաթաղ գագաթը: Միափորի լեռնաշղթան իրեն զուգահեռ ձգվող Արեգունու լեռնաշղթայի հետ ստեղծում է Գետիկի խոր հովիտը: Միափորի բարձրակետը հանդիսացող Մուրղուզ սարի (2993 մ)՝ դեպի Գետիկի ձորը կախված լանջերը խիստ զառիթափ են, ժայռոտ և զուրկ անտառային բուսականությունից: Նրա հյուսիսային լանջերը ևս պակաս զառիթափ ու քարքարոտ չեն, սակայն բարձունքներից դրանց, գրեթե ուղիղ անկյան տակ, միանում են աստիճանաբար Կուր գետի աջափնյա հարթավայրի վրա իջնող մի շարք անտառապատ լեռնաբազուկներ, որոնք լցնում են ձորահովիտներով հոսող գետերի միջև ընկած տարածությունը և իրարից բաժանված են այդ գետերի գեղանկար, խոր հովիտներով: Ուստի հսկայական Մուրղուզը լեռնաբազուկների աստիճանական էջքի շնորհիվ դեռ Կուրի ափերից դառնում է հստակ տեսանելի, ներկայանում է չափազանց տպավորիչ տեսքով և իշխող դիրք է գրավում հովտաշխարհի վրա: Մուրղուզի գագաթին ոտք դնելը, չքնաղ լանջերին ամռանը հանգստանա-

լը մշտական երազանք է նրա ծորահովիտներում ծնված հայորդիների համար:

Միափորի լեռնաշղթայի արևելյան եզրին գտնվող Քաչալդաղ գագաթից (2435 մ) սկզբնավորվելով՝ հայ-ադրբեջանական սահմանագծով դեպի հյուսիս-արևելք է գնում Խնձորուտի լեռնաշղթան (40 կմ): Այս անտառապատ լեռնապարն Այգեձոր գյուղից հարավ հատվում է Ախինջի գետով և ունի Աղդաշ (2021 մ), Յալի գոմեր, Պետրոսի ուրթ նշանակալի լեռնագագաթները: Մուրղուզ սարի լանջից նույն (հյուսիս-արևելյան) ուղղությամբ, Տավուշ և Ախինջի (Խնձորուտ) գետերի միջև մի շարք լեռնաբազուկներ առաջացնելով, ձգվում է Տավուշի լեռնաշղթան (35 կմ): Այստեղ բարձրանում են Քիշի ուրթ, Քարհատ, Հաչա քարիգլուխ, Բերի սար, Ծակ քար լեռնագագաթները: Տավուշ և Հախում գետերի վերնագավառում՝ Մուրղուզից հյուսիս, առանձնանում է Տավուշ և Հախում գետերի ջրաբաժան Կենաց լեռնաշղթան (42 կմ): Բարձրակետը Կենաց սարն է՝ 2138 մ, որին հաջորդում են մի շարք նշանակալի բարձրություններ: Իսկ Նավուր գյուղից արևմուտք այս լեռնաշղթան հարթակտուր սեռի (երկայնակի ձգվող կատարի) տեսք է ընդունում, որի վրա բարձրանում են Պահակ, Ծակ քար, Ղուզան, Շարքար, Կակիլու սար գագաթները: Մուրղուզից արևմուտք՝ Քառասուն աղբյուր (Ղըրխ բուլաղ) բարձր լեռնաբազուկից, սկզբնավորվում ու նորից հյուսիս-արևելք է ձգվում Հախումի (Սղնախի կամ Ղըրխ Սղնախի) լեռնաշղթան (40 կմ), որը Հախում և Աղստև գետերի ջրաբաժանն է և ունի Կովասար կամ Ինակդաղ (2120 մ), Կազանուչան (2018 մ), Սխտորուտ (2036 մ), Իծաքար, Արսար, Համզա, Սալթաղ, Կարմրաքար, Պառավաքարի յալ և այլ լեռնագագաթները: Իսկ այս նշանակալի լեռնաբազկի ելքից ավելի արևմուտք, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին բարձրացող Բաբախան կատարից (2337 մ) ձգվում է Քամոտի լեռնաշղթան: Սա նախ ձգվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ, ապա Շունքար կատարից (2079 մ) քարքարոտ ու խիստ զառիթափ լանջերով ուղիղ իջնում դեպի արևմուտք՝ Գետիկ և Աղստև գետերի միախառնման ներքին անկյունը: Իսկ Շունքար լեռնագագաթի հյուսիսային անկյունից սկսվում է Պայտապարի (Նալթոքյանի) լեռնաշղթան, որը շուտով անցնում է Ուրթիջուր գետի ձախ ափը և Գանձաքար գյուղի արևմուտքով ձգվում մինչև այդ գետակի՝ Աղստևին միանալու անկյունը, որն Իջևան քաղաքի հարավ-արևելյան արվարձանն է:

Տավուշի մարզի հարավում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի 56 կմ ընդհանուր երկարությամբ ձգվում է Արեգունի լեռնաշղթան, որը Փամբակի լեռնաշղթայի հետ հանդիպման տեղից՝ Սևանի կամ Դիլիջանի լեռնանցքի մատույցներից, կիսաշրջանաձև թեքվում է դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, ապա Դիլիջան քաղաքի արևելքից սկսում է Աղստևի աջափնյակով իջնել և հասնում է մինչև Աղստև ու Գետիկ գետերի միախառնման վերին անկյունը: Այս լեռնաշղթայի՝ Տավուշի մարզում բարձրացող նշանակալի գագաթներն են Եղջերվասարը (2555 մ), Մեծ Մայմեխը (2642 մ), Փոքր Մայմեխը (2559 մ), Չոբանօղլին (2092 մ): Հայաստանի մյուս նշանակալի՝ Փամբակի լեռնաշղթան Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանագլխի Թոփի յալ (2735 մ) լեռնագագաթից առաջանալով դեպի արևելք, Դիլիջանի (Սևանի) լեռնանցքի թամքոցում հանդիպում է Արեգունի լեռնաշղթային: Իսկ Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային և հյուսիս-արևմտյան բազուկների անտառապատ ծայրամասերը՝ բարձունքներից իջնելով, լցնում են Աղստևի ու նրա աջափնյա վտակ Հովաջրի ջրբաժանը և ավարտվում Դիլիջան քաղաքի սահմանագծում՝ այդ գետերի միախառնման անկյունում:

Լեռնային երկրամասի աշխարհագրական միջավայրը նկարագրելիս ավելորդ չէ ներկայացնել լեռնանցքները, որոնցով հնում իրականացվել են առևտրական քարավանների ու զորքերի տեղաշարժերը, մեր օրերում՝ ժողովրդատնտեսական բեռների և ուղևորների փոխադրումը:

Անդրկովկասում նշանավորներից է Փամբակի և Արեգունու լեռնաշղթաների հանդիպման տեղում, ծովի մակերևույթից 2114 մ բարձրության վրա գտնվող Սևանի (նաև՝ Դիլիջանի կամ Սեմյոնովկայի) լեռնանցքը, որը Սևանի ավազանը միացնում է Աղստևի հովտի հետ: Այստեղով է անցնում Երևան-Դիլիջան-Նոյեմբերյան-Թբիլիսի միջպետական ավտոմայրուղին: Մեր օրերում լեռնանցքի տակ կառուցվել է 2257 մ երկարությամբ և 8 մ երթևեկելի մասով թունել, որի շնորհիվ դուրս են մղվել Դիլիջանի 14 ոլորաններից 6-ը, որոնցում ծմռանը, ձնաբքի և սառցակալման հետևանքով, նախկինում հաճախ կազմալուծվում էր ավտոտրանսպորտի երթևեկությունը:

Տավուշի մարզը հարավ-արևմուտքից Փամբակի հովտի (Լոռվա մարզի) հետ միանում է Մարգահովտի լեռնանցքով: Դիլիջան քաղաքից հյուսիս-արևմուտք, Բովաքարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան

կողմում բարձրացող Այրի սարի ստորոտով ձգվող համանուն լեռնանցքով իրար են միանում Աղստևի ու Մարցագետի (Դեբեդի վտակ) հովիտները: Սրանից ավելի հյուսիս-արևելք, Բովաքարի և Իջևանի լեռնաշղթաների կցնվածքում է գտնվում Հաղարծնի լեռնանցքը, որով իրար են կապվում Աղստևի և Խաչաղբյուրի հովիտները:

Գուգարաց լեռնաշղթայի միջնամասում, Գիլիկ սարի ստորոտում գտնվող լեռնանցքով Դեբեդի հովիտը կապվում է Աղստևի հովտի հետ՝ Տավուշի մարզի Աղբուղա և Կարմիրգեղ սարամասերի միջոցով (այստեղով է անցել Լոռի բերդ-Դսեղ-Աքան-Կիրանց-Գագա դաշտ միջնադարյան կարևորագույն քարավանային ճանապարհը): Կոտմանի լեռնաշղթայում գտնվող Ծակ քարի լեռնանցքով իրար են կապվում Կողբ գետի վերնագավառն ու Դեբեդի հովիտը: Դրանք իրար են միանում նաև Բերդավանի լեռնանցքով: Կողբի գետահովիտը Ոսկեպարի հովտին է միանում Նոյեմբերյանի լեռնանցքով, որի թամքոցից սկսվում է դեպի Կարմիրգեղ սարամաս տանող ճանապարհը: Մի քանի փոքր լեռնանցքներով իրար են միանում Ոսկեպար, Կիրանց և Աղստև գետերի հովիտները:

Աղստևի և Հախումի հովիտներն իրար հետ կապված են Սխտորուտի (1900 մ) և Օձաքարի (Կարմրաքարի) լեռնանցքներով, իսկ Հախումի և Տավուշի գետահովիտներն իրար հետ՝ Ծաղկուտի, Չինչինի և Ներքին Կարմիրաղբյուրի լեռնանցքներով: Տավուշ գետի ձորից ճանապարհները Խնձորուտի (Ախինջիի) հովիտ են մտնում Այգեպարի, Մովսեսի, Վերին Կարմիրաղբյուրի և Արծվաբերդի լեռնանցքներով: Տավուշի մարզի արևելյան (Բերդի) տարածաշրջանի համար կարևորվում է Մուրղուզ սարի արևելյան թամքոցը կազմող Թթուջրի կամ Գետիկի (2092 մ) լեռնանցքը, որով խճուղային կարճ կապ է ապահովվում Գեղարքունիքի մարզի (Սևանի ավազանի) և հանրապետության կենտրոնի հետ:

Միջնադարում չափազանց կարևոր են եղել Արարատյան դաշտից Աղստևի հովտով դեպի Տփխիս և Գանձակ գնացող քարավանային ճանապարհի վրա գտնված երկու լեռնանցքները: Առաջինը Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղից 12 կմ հյուսիս գտնվող Մեյդանի (Քյոռօղլու թովլա) լեռնանցքն է, որով քարավաններն Աղստևի հովիտ են իջել Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան աջ կողմում ձգվող բարձրագահ սարի լանջով: Այդ քարավանային ճանապարհը Կոթի գյուղի հարավ-արևելյան կողմում գտնվող

Սուրբ Սարգսի լեռնանցքով իջել է Կուրի աջափնյա հարթավայր և Կարմիր կամուրջ-Գարդաբան գծով հասել Տփխիս: Աղստևի հովիտ-Կարմիր կամուրջ հատվածում այս ուղին կոչվել է «Դափլա յոլու»:

* * *

Տավուշի մարզին յուրահատուկ է բարձունքային գոտիականությունը, տիրապետում են լեռնանտառային և լեռնամարգագետնային լանդշաֆտները, իսկ ուղղաձիգ գոտիականությունը կանխորոշում է կլիման: Մարզը գտնվում է հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Անարև օրերի առավելագույնը հանրապետությունում դիտվում է այստեղ (Իջևանում)՝ մինչև 65 օր: Կլիմայական սեզոնների տևողությունը փոփոխվում է ըստ տեղանքի բարձրության: Գարունը լինում է տևական և հաճախ ուղեկցվում ցրտահարություններով: Ամառը չափավոր տաք է լինում, ծմեռը՝ մեղմ: Դեբեդամերձ (Բագրատաշենի) հարթավայրում և մարզի մերձկուրյան հարթավայրին հարող հյուսիս-արևելյան հովիտներում տեղ-տեղ տիրապետում է չոր, մերձարևադարձային կլիման: Լեռների բարձրության և դիրքադրման հետ կապված՝ մարզի լեռնային հարավն ու հովտային հյուսիսը զգալիորեն տարբերվում են կլիմայական պայմաններով: Այսպես, հարավի բարձրադիր լեռներում նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել -38^{0}C-ի, իսկ առավելագույն ջերմաստիճանը հյուսիսի ցածրադիր հովիտներում՝ 38-40^{0}C-ի: X դարի ավարտին անսովոր շոգեր են գրանցվել երկու անգամ: 1996թ. հուլիսի վերջին Նոյեմբերյանում, Բերդում և Իջևանում ջերմաչափը ցույց է տվել 42-43 աստիճան: Իսկ 2000թ. հուլիսի 16-ին և 17-ին, ժամը 15:00-16:00 սահմաններում ջերմաստիճանը 42 էր: Այս անգամ շոգն ուղեկցվում էր անողորմ երաշտով: Հունիսի 5-ից մինչև օգոստոսի 5-ը՝ ուղիղ երկու ամիս, բերքի կազմավորման և հասունացման ընթացքում ոչ մի կաթիլ անձրև չտեղաց, որի հետևանքով հսկայական վնաս կրեց գյուղացիական տնտեսությունները: Նաև գրանցվել են երաշտին հակառակ երևույթներ: 2002թ. ամռանը չափազանց հարուստ էր տեղումներով: Հուլիսին միջին տարեկան 95 մմ փոխարեն

տեղաց 144 մմ անձրև, իսկ օգոստոս ամսին՝ 45 մմ փոխարեն՝ 179.1 մմ: Նախկինում եղել է ասացվածք, թե՝ «Երաշտից սով չի լինում, իսկ շատ տեղումները սովի պատճառ են», քանզի ամառային գերխոնավությունից բերքը վատ է հասունանում և կործանվում է:

Իսկ, ընդհանրապես, տարեկան տեղումների քանակը մարզում 550-600 մմ է, առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին, որի պատճառով պտղատու ծառերը հաճախ ծաղկավիժում են, չափազանց դժվարանում է գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը*: Բույսերի վեգետացիայի ժամանակաշրջանը, ըստ գոտիների, 160-240 օր է: Ձյունածածկույթի հզորությունը միջին գոտիներում սովորաբար լինում է 10-15 սմ, իսկ անսառնամանիք օրերի քանակը՝ 100-240: Ձմռանը մարզի հարավային սարերում, ձյան առատության և տևական բքի պատճառով, մայրուղիներում երթևեկությունը հաճախ դժվարանում, երբեմն էլ կարճ ժամանակով ընդհատվում է: Իսկ XX դարի երկրորդ կեսին, Թիֆլիս-Դիլիջան-Երևան և Դիլիջան-Ալեքսանդրապոլ խճուղիների կառուցումից հետո էլ ձնահոսքերն ու ուժեղ քամիները երկար ժամանակ արգելակում էին փոստի կանոնավոր շարժմանը: Ավելին, ամեն տարի Դիլիջան-Ելենովկա (Սևան) և Դիլիջան-Ղարաքիլիսա (Վանաձոր) ճանապարհներին արձանագրվում էին ուղևորների ցրտահարման տասնյակ դեպքեր, իսկ մինչև խճուղու կառուցումն այստեղ զոհվում էին անգամ ուղտերի ողջ քարավաններ:

Մարզում, ընդհանրապես, և Աղստևի հովտում, մասնավորապես, հաճախակի երևույթ է կարկտահարությունը, որը ոչ հազվադեպ կրկնվում է մայիս-սեպտեմբեր ամիսներին և զգալի վնաս հասցնում գյուղատնտեսությանը: Ռուս բնախույզների XIX դարի դիտարկումներից հայտնի է, որ այստեղ սովորական երևույթ էին «հավի ձվի մեծությամբ» կարկուտ տեղալը, ամառային սարերի զմրուխտե կանաչ

* «Մշակ» թերթը 1905թ. մայիսի 3-ի համարում տևական անձրևների դառը հետևանքների մասին գրել է Ղազախի գավառի Բաղանիս գյուղի օրինակով. «Երկու շաբաթից աւելի է, որ մեր գիւղերում անընդհատ անձրև է գալիս, իսկ սարերում՝ ձիւն: Անձրևի գալը, որ գիւղացիների համար երկնային ողորմութիւն է համարվում, այժմ պատիժ է դարձել իր երկարատևությամբ, գարնանավարը մնացել է անկատար, տները, գոմերը շատ գիւղերում քանդվեցին, փլատակներից հազիւ-հազ կանայք և երեխաները ազատվեցին, գետերն ու գետակներն անանցանելի են դարձել»:

լանջերը մի քանի րոպեում սառցահատիկների հաստ շերտով պատվելը, անտառի ծառերի՝ տերևներից մերկանալը, ցանքերի, տնկիների ու կենդանիների կործանվելը: Այդ տեսակետից վատ համբավ են վայելել հնում Դալու դաղի (Գիժ սար), այժմ՝ Իջևանի և նրա շարունակությունը կազմող Մքնասարի լեռնաշղթաները: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել 2010թ. հունիսի 12-ին տեղի ունեցած ուժգին կարկտահարության մեր դիտարկումը: Տարերքը սկսվեց ժամը 20:01: Դրանից առաջ ողջ Աղստևի հովտի վրա արևոտ ամառային երկինքը րոպեների ընթացքում պատվեց սև ամպերով, ապա արևմտյան կողմից լսվեց ուժգնացող, գետնահար, խուլ աղմուկ, և ոչ խիտ անձրևի առաջին կաթիլների հետ սկսեց տեղալ անսովոր մեծության և ձևերի խիտ կարկուտ: Կլոր հատիկների տրամագիծը 35-40 միլիմետր էր, իսկ մյուսները բռնցքաձև էին, ուղղանկյուն, քառակուսի, եռանկյունի: Տարերքը տևեց ընդամենը 11 րոպե, որի ընթացքում տեղումի քանակը հասավ 18 միլիմետրի, այն դեպքում, երբ հունիսի ամսական բազմամյա միջինը հավասար է 92 միլիմետրի: Իջևան քաղաքում և հովտի գյուղերում կարկուտը ջարդեց շինությունների ապակիները, տանիքների ծածկերը, տերևներից մերկացրեց ծառերը, հողին հավասարեցրեց ցանքերը: Իջևան քաղաքի կենտրոնական փողոցներով, մայթից մայթ լիքը, սառցաշիլա էր հոսում, շենքերի բակերը վերածվել էին անանցանելի սառցալճակների: Զգալի վնասներ կրեցին Տավուշի մարզի 16 գյուղական համայնքները: 1960-ական թվականներից մինչև 1990 թվականն այդ չարիքի դեմ հաջողությամբ պայքարել են Բերդի, Իջևանի և Նոյեմբերյանի տարածքներում ստեղծած հակակարկտային ջոկատները, որոնց աշխատանքը կազմալուծվել է հայ-ադրբեջանական զինված հակամարտության պատճառով և հազարավոր հեկտար ցանքեր ու բազմամյա տնկարկներ մնացել են անպաշտպան:

Լեռնային երկրամասերում անխուսափելի են հեղեղները, որոնց ծնողները ապրիլ-հուլիս (երբեմն նաև՝ օգոստոս) ամիսներին տեղացող շառափնաթափ անձրևներն են: Դրանց շնորհիվ աննշան ձորակներն ու մոռացված հեղեղատները կարող են րոպեների ընթացքում վերածվել ահռելի ժայռաբեկորներ, արմատահանված դարավոր ծառեր քշող ահարկու, սև հոսանքատարներ, որոնք իրենց ճանապարհին կործանում են կամուրջներ, շինություններ, բնակարաններ, ցանքեր, այգիներ, կենդանիներ և մարդկանց: Բնորոշ երեք օրինակ:

Այգեձորցի Արտակ Գրիգորյանն իր «Տավուշ» ձեռագիր աշխատության մեջ (էջ 287) ականատեսից գրի է առել Մեհրաբ կոչվող ձորում 1887թ. օգոստոսի 1-ին տեղի ունեցած ողբերգության մանրամասները: Տարին եղել է երաշտ, ուստի Ղրղի (ներկայիս՝ Արծվաբերդ) գյուղի սարվորները Մուրղուզից ժամանակից շուտ են իջել ձորահովիտ, տեղավորվել հենց Խնձորուտ գետի հունի վրա: Երկինքը եղել է կապույտ, անխռով: «Կեսօրին մոտ,- հայտնել են հեղինակին,- շները սկսում են սաստիկ և աղիողորմ ոռնալ: Մյուս կենդանիները նույնպես անհանգիստ վիճակում են, սակայն յուրտերում եղողները դա համարում են կենդանիների՝ դեպի արոտ ձգտելու սովորական շարժում: Ժամը 4-ին մոտ, ինչպես պատմում էր ականատեսներից Գրիգոր Մարդանյանը, սարսափելի է դառնում շների ոռնոցն ու ձիերի խրխնջոցը, որից կասկած ու ահ է ընկնում որոշ սարվորների մեջ, իսկ ոմանք նշանակություն չեն տալիս այդ անսովոր երևույթին և տեղից չեն հեռանում: Բայց մի քանի տնտեսություններ եղած-չեղած իրերը վերցնում, հորթերին դուրս են քշում, որ հեռանան: Այդ ժամանակ մի շատ ուժեղ, շարունակվող դղրդյուն են լսում, և հանկարծ վրա է հասնում չափից ավելի հորդացած գետի ջուրն ու սրբում-տանում է այն ամենը, ինչ ընկնում է նրա հորձանքի բերանը: Հեղեղը քշում-տանում է մոտ երեսուն մարդու, որոնց մեծ մասը՝ կանայք ու երեխաներ, նաև բազմաթիվ կովի հորթեր, գոմեշի ձագեր, կապից չարձակված շներ»:

Դիլիջանաբնակ գետահովիտցի (թալեցի) Մելս Ենգիբարյանը գրի է առել 1939 թվականի մայիսի կեսին Ղազախի շրջանի անասնապահ ազերիների գլխին եկած պատուհասի մանրամասները: Այն հեռավոր տարիներին հարևան թաթարներն ավանդույթի ուժով դեռ զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ և օգտվում էին Տավուշի մարզի ամառային արոտավայրերից: Կես ճանապարհին՝ ներկայիս Իջևանի հանքային ջրերի գործարանի մոտակայքում, Սառնաջուր գետի հունի մեջ բարձրացող ուռենիների տակ նրանք հանգիստ էին տվել երկար ճանապարհից հոգնած ոչխարների չորս հոտերի՝ օժանդակ գրաստներով, տնային կահկարասիով, շներով, ուտելեղենի պաշարով, ճիժ ու պիժով: Օրն արևային էր, երկինքը՝ պարզ: Շները սկսեցին չարագուշակ ոռնալ: Մի քանի ձի հանկարծ վրնջացին ու ծառս եղան կանգնած տեղից: Չոբանները «տարօրինակ» կենդանիներին կարգի հրավիրեցին մահակներով: Գյուղից

թաթարների կողմ վազեցին մեկ տասնյակի չափ թալեցիներ, հեռվից գոռալով, որ սարվորները հոտերն արագ դուրս քշեն գետի հունից, որովհետև սելավ է մոտենում: Չորի վերնամասը խուլ դնգդնգում էր: Թաթարները չհավատացին բարի մարդկանց՝ նրանց հայտնած բոթը «հայի կատակ» համարելով: Իսկ երբ մոլեգնած հեղեղի երախը բռնեց սարվորներին, արդեն շատ ուշ էր: Տարերքին զոհ գնացին ոչ միայն գրեթե բոլոր կենդանիները, այլև՝ մարդիկ:

XX դարավերջի ահարկու հեղեղը ևս տեղի ունեցավ Իջևանում: 1998թ. հունիսի 2-ին, ժամը 19:05-19:40, Սուրբ Գրքի ասածի պես, կարծես բացվեցին երկնքի բոլոր պատուհանները, և չտեսնված խտությամբ ջուր էր հեղվում երկրին: Տարերքը սև, անթափանց վարագույր էր դարձել ամառային արևի ու երկրի միջև: 35 րոպեում տեղաց 53 միլիմետր անձրև, որը գերազանցեց ամսական միջին ցուցանիշը: Գանձաքարի ձորից եկող Ուրթիջուր գետակն Աղստևի հետ միախառնման տեղում բարձրացել էր կամրջի վրա և, հատելով մայր գետի հոսանքը, խփում էր նրա ձախ ափով ձգվող ավտոճանապարհի եզրից բարձրացող ժայռի հիմքին: Իջևանի արևմտյան թաղամասերի բարձունքներից գահավիժող ջրերը մեկ մետր բարձրությամբ, Աղստևին զուգահեռ, առաջ էին սուրում Երևանյան պողոտայով: Զարմանալի տեսարան. գետը կարծես երկհարկանի լիներ: Հսկայական ջրեր հոսեցին քաղաքի հյուսիս-արևելյան կողմով ձգվող Խոզմարագի սովորաբար ցամաք ձորով, իսկ Գետահովիտ գյուղի տարածքում Սառնաջուր գետը բարձրացել էր 7-8 մետր: Տնտեսական վնասները մեծ էին: Հեղեղվեցին ոչ միայն արտադրական շինությունները, այլև՝ բազմահարկ բնակելի շենքեր և առանձնատներ: Փառք Աստծո, որ բանը տեղի ունեցավ ցերեկը, մարդիկ արթուն էին, այլապես անխուսափելի էին զոհերը: Հաճախ կյանքի դառը փորձով է մարդն իմաստնացել, ճշտել ու սրբագրել իր սխալները, ըստ տեղանքի ու սպասվելիք արտակարգ իրավիճակների, ստեղծել ապահով ու անվտանգ ապրելու հարմարություններ, որոնց այժմ նպատակամետ տրամադրվում են մեծ ջանքեր ու միջոցներ: Այսպես, նաև լուսամիտ հներն են իմացել, որ լեռնային երկրամասերում շինություններ չի կարելի դնել գետերի ու հեղեղատների հունին մոտ՝ վտանգավոր հեռավորության վրա: Անվտանգության տրամաբանությամբ քարավանային ճանապարհներն անցել են ոչ թե գետափերին շատ մոտ, այլ՝ ապահով բարձունքներով: Այդ են հուշում նաև Տավուշի մարզով

անցնող միջնադարյան քարավանային ճանապարհները (տե՛ս քարտեզը):

Հայտնի է, որ Հայաստանի աշխարհագրական լայնություններում տիրապետող արևմտյան օդային հոսանքները լեռնային ռելիեֆի ազդեցությամբ աղճատվում և պայմանավորում են քամիների ուղղությունների բազմազանությունը, որոնք համընկնում են ձորերի ու հովիտների ուղղությանը: Օրինակ, Տավուշի մարզի կենտրոնում՝ Աղստև գետի հունին համապատասխան, տիրապետում են հյուսիսային և հարավային քամիները: Հատկապես ձմռանը մարզի հարավային և արևմտյան բարձրություններում մեծ է լինում քամու արագությունը, որը պատճառ է դառնում ձնահոսքերի: Ամռանը նկատելի են լեռնահովտային քամիներն ու վերընթաց հոսանքները: Այդ ժամանակ, օրվա երկրորդ կեսին զարգացող լեռնային քամիները հասնում են իրենց առավելագույն արագությանը և զգալիորեն մեղմում տապը: Նկատվող մթնոլորտային անսովոր զարգացումներից են նաև փոթորիկները: 1944 թվականի հունիսի ավարտին, հաշված րոպեների ընթացքում, շառափնաթափ անձրևով ուղեկցվող ուժգին փոթորիկը, արմատահան անելով՝ կործանել է Կիրանց գյուղի հին սարի Պուճուր քոլ կոչվող դարավոր հաճարենիների անտառը: 2000 թվականի հունիսի 1-ին՝ սկսած ժամը 16:15-ից, 40 րոպեի ընթացքում մոլեգնած քամին Գոշ գյուղի մերձակայքում արմատահան արավ 25 հեկտար արգելանոցային անտառ: Փոթորիկին ուղեկցված հորդառատ անձրևից ձորակներում աննշան առվակները բարձրացել էին 3-4 մետր:

Կապված օդային հոսանքների տատանումների հետ՝ մեր պարտքն ենք համարում գալիք ժամանակների մեր հայրենակիցներին ներկայացնել 2004թ. մարտի առաջին օրերին տեղի ունեցած անոմալիան: Ամսի 3-5-ը հարավ-արևմուտքից հանրապետության տարածք ներխուժած արևադարձային տաք օդային զանգվածի ազդեցությամբ ամենուրեք օդի ջերմաստիճանը բարձրացավ: Իջևան քաղաքում մարտի 5-ի կեսօրին օդի տաքությունը հասավ 28 աստիճանի: Օդերևույթաբանները նախկինում նման բան գարնանամուտին երբեք չէին արձանագրել Աղստև հովտում, ուր առավելագույն ջերմաստիճանը 22-23 աստիճան լինում է մարտի վերջին օրերին: Ջերմաստիճանի նման կտրուկ տատանման հետևանքով նաև առաջացան ուժգին քամիներ, որոնց արագությունն Իջևանում մարտի 5-ի

ցերեկը հասավ վարկյանում 45 մետրի և տևեց 15 ժամ: Տաք, տևական և ուժգին քամուց ուժգին ձնհալք սկսվեց Իջևանի, Բովաքարի, Փամբակի, Արեգունու և Միափորի լեռնաշղթաների լանջերին, որի հետևանքով հզոր հոսքեր դարձան փոքրիկ գետակներն ու առվակները: Մարտի 6-ի ցերեկը, մի քանի ժամ շարունակ, Աղստև գետի հոսքը (մոտավոր հաշվարկներով) վարկյանում կազմեց 160 մ^3, իսկ բազմամյա դիտարկումներով այդ ցուցանիշը նախկինում չէր անցել 144-ից: Մարդիկ զարմացած էին գետի հոսքի ուժգնությունից, որն իր ալիքների վրա՝ որպես փայտի թեթև տաշեղ, տանում էր արմատահան արված հսկա ծառեր:

Ինչպես բոլոր լեռնային երկրամասերին, Տավուշի մարզին ևս յուրահատուկ են երկրակեղևի սողանքները: Ստորերկրյա ջրերը թեք միջավայրում «սայթաքուն» միջոց են դառնում իրար վրա նստած հողի շերտերի համար: Սովորաբար, առատ տեղումների ժամանակ, վերին շերտերը ծանրանալով պոկվում են տեղից, հոսելով ներքև՝ զգալի վնաս հասցնում բնությանն ու մարդկանց: Նման երևույթի հետևանք է Դիլիջան քաղաքի հարավային թաղամասի «հարբած անտառը»: Պատմությունից հայտնի է, որ մարզի ներկայիս Վարագավան և Վերին Ծաղկավան գյուղերը մինչև XIX դարի ավարտը եղել են մեկ բնակավայր, որը գտնվել է Հախում գետի աջ ափին և կոչվել Հախում: Հանկարծ գյուղի զբաղեցրած տարածքը սկսել է ճաքեր տալ և հոսել դեպի ձորը: Վտանգավոր տեղամասից, որը նաև կոչվել է Ճաքած գյուղ, մարդիկ տեղափոխվել են գետի ձախափնյակ, բաժանվելով ստեղծել երկու ինքնուրույն գյուղ: Սողանքները XXI դարի սկզբին շարունակում էին ակտիվ մնալ Հաղարծնում, Գոշում, Հովքում, Գետահովտում, Ներքին Ծաղկավանում, Աչաջրում, Խաչթառակում և այլուր: Այդ պատճառով, արդեն տասնհինգ տարի, շարքից դուրս է եկել Դիլիջան-Իջևան երկաթուղու Հաղարծին գյուղի հատվածը, ուր տարհանվել են տասնյակ տների բնակիչներ: 2010թ. ապրիլի 14-ի վաղ առավոտյան իրեն զգացնել տվեց Հովք գյուղին հարող, միշտ ակտիվ վիճակում գտնվող սողանքը, որը Երևան-Իջևան միջպետական ճանապարհի 114-րդ կմ վրա, սարի բարձունքից շարժվելով առաջ, ավելի քան 100 մետրի վրա պոկելով ասֆալտապատ ճանապարհը, լցրեց Աղստև գետի մեջ՝ առաջացնելով 6-8 մ բարձրությամբ պատվար և ժամանակավոր ջրամբար: Դիլիջանից Իջևան ավտոմոբիլային հաղորդակցությունն ընդհատվեց

երեք շաբաթով: Սողանքին մոտեցած ուղևորները մի կողմից մյուսն էին անցնում ոտքով: ՀՀ կառավարության միջամտությամբ վերականգնվեց մայրուղու վթարված հատվածը և Հովք գյուղի միջով կառուցվեց շրջանցիկ ճանապարհ: 2011թ. հեկտեմբերի 2-ին, ժամը 19-ին, Վանաձոր-Բագրատաշեն միջպետական ճանապարհի 83-րդ կիլոմետրի վրա, Դեբեդի աջ ափին, Այրում քաղաքի մատույցներում տեղի ունեցավ ավելի մեծ սողանք: 350 մետրի վրա, դեպի գետի հուն շարժված լեռնազանգվածն իր տակ թողեց մայրուղին, տասնյակ մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ: Զոհվեցին մարդիկ, եղան զգալի նյութական վնասներ: Երկար ժամանակ մայրուղին փակ էր, չնայած գործում էր կողքին կառուցված այլընտրանքային ճանապարհը: Շարունակ ակտիվ վիճակում է նաև Այգեհովիտ-Վազաշեն-Այգեպար հանրապետական ճանապարհի 11-րդ կիլոմետրի վրա գտնվող սողանքը:

Սեյսմիկ գոտում է գտնվում մարզը: Դա հայտնի է պատմությունից: Վարդան Արևելցին ու Կիրակոս Գանձակեցին վկայում են, որ 1188-ի ուժգին երկրաշարժից ավերվել է Հին Գետիկի վանքը: Ուստի Մխիթար Գոշը, տեղ խնդրելով Իվանե Զաքարյանից, կառուցում է Նոր Գետիկի վանքը (Գոշավանք): Կիրակոս պատմիչը նաև հաղորդում է, որ 1220-ի հունվարի 11-ի կեսօրին ահավոր ուժգնությամբ երկրաշարժից ավերվում է հիասքանչ Մշկավանքը՝ իր փլատակների տակ թողնելով չորս հոգևորականների: Մարզի տարածքում ռուսական տիրապետության հաստատումից (1801թ.) հետո խնամքով գրանցվել են սեյսմիկ երևույթները: Այսպես, 1853թ. հունվարի 6-ին, 8-ին և 9-ին բավական ուժգին երկրաշարժեր են գրանցվել Դիլիջանում: Դրա հետևանքով Սևանի ափին գտնվող Չիբուխլու (Ծովագյուղ) գյուղում լիովին ավերվել է 12 տուն: 1861-ի մայիսի 12-ին 30 վարկյան տևողությամբ ուժգին երկրաշարժ է գրանցվել Դիլիջանի մերձակայքում, Ռեդկին լագեր վայրում: Նույն տեղում երկրաշարժը կրկնվում է սեպտեմբերի 15-ի կեսգիշերին, ապա Դիլիջանում՝ 1868-ի մարտի 6-ին և 17-ին: 1872-ի ապրիլի 14-ին երկրաշարժ է եղել Ղուլալիում (Այգեձոր), 1875-ի փետրվարի 1-ին՝ Թաքլուում (Պառավաքար), 1877-ի ամռանը՝ Աչաջրում, 1881-ի մայիսին՝ Ղուլալիում (Այգեձոր)[4]: Մարզում վերջին ուժգին երկրաշարժը (էպիկենտրոնում 7 բալ) տեղի է ունեցել 1997թ. հուլիսի 18-ին, ժամը 11:34, Նոյեմբերյանի ենթամարզում: Տարբեր կարգի վնասվածքներ ստացան ավելի քան հինգ

հազար բնակելի տներ, տասնյակ կենսապահովման ձեռնարկություններ, հասարակական, ուսումնական և առողջապահական շենքեր: Վնասի լիագումար արժեքը կազմեց 15 մլրդ դրամ կամ 30 մլն ԱՄՆ դոլար:

Մարզի գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա ու անձրևային ջրերից: Դրանք սակավաջուր են լինում աշնանն ու ձմռանը և հորդանում են գարնանն ու ամռան սկզբին, երբ շարունակվում են ձնհալն ու հորդառատ անձրևները: Այդ ժամանակ խոնարհ առվակներն անգամ հաճախ դառնում են ահեղագոչ գետակներ, որոնք, ողողելով ու ավերելով իրենց ճանապարհին հանդիպած ամեն բան, հաղթող են դուրս գալիս մարդկանց հետ բռնած գոտեմարտից: Խրամ գետի հզոր վտակ Դեբեդը անցնում է մարզի հյուսիս-արևմտյան սահմանագծով: Իսկ մարզի ներսում ջրայնությամբ աչքի են ընկնում Աղստևը, Հախումը և Տավուշը, որոնց տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը բերվում են ստորև.

ԳԵՏԵՐԸ	ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆԸ մ/խոր. վրկ.	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ մ/խոր. վրկ.	ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ մ/խոր. վրկ.	ՏԱՐԵԿԱՆ ՀՈՍՔԸ մլն. մ/խոր.
ԱՂՍՏԵՎ	9.18	144	2.24	290
ՀԱԽՈՒՄ	1.41	40	0.4	44
ՏԱՎՈՒՇ	0.75	110	0.16	24

Մարզում կենտրոնական դիրք է գրավում Կուր գետի աջակողմյան նշանակալի Աղստև վտակը, որը սկիզբ է առնում Լոռվա մարզի սահմանագծում, Փամբակի լեռնաշղթայի Թեժ լեռ գագաթի հյուսիս-արևմտյան լանջից և, հյուսիսային կամ հյուսիս-արևմտյան ուղղություն բռնելով, անցնում անդնդախոր, գեղանկար ձորով: Վերին հոսանքում արագահոս է, ունի մեծ անկում: Իջևան քաղաքից հունը լայնանում է՝ առաջացնելով դարավանդներ: Մայր գետին է միանում Ադրբեջանի Հանրապետության Ղազախի շրջանի Փոյլի երկաթուղային կայարանի մոտ: Ադրբեջանի տարածքում անվանվում է Աղստաֆա: Գետի ընդհանուր երկարությունը 133 կմ է, այդ թվում ՀՀ-ում՝ 99 կմ, ավազանը՝ մոտ 2889 ք/կմ: Ունի խառը սնուցում, հորդացումը՝

գարնանը և ամռան սկզբներին, ձնաանձրևային ջրերով: Գետի միջին հոսանքների շրջանը հարուստ է անտառներով, ալպյան բուսականությամբ, սառնորակ և հանքային աղբյուրներով: Ջուրն անուշահամ է, ձկնառատ, օգտագործվում է գերազանցապես ոռոգման համար: Այդ նպատակով կառուցված են բազմաթիվ ջրանցքներ, ջրամբարներ ու ջրհան պոմպակայաններ: Աղստևի գեղատեսիլ ձորով են անցնում Դիլիջան-Ղազախ-Թբիլիսի միջպետական, Դիլիջան-Վանաձոր, Երևան-Իջևան-Նոյեմբերյան-Բագրատաշեն խճուղիները, Իջևան-Երևան գազատարը, Իջևան-Հրազդան երկաթուղին:

Աղստև անվան ծագումը ոմանք կապում են ուրարտական Եթիունե երկրի Ալիշթու բնակավայրի անվան հետ (ինչպես էրեբունին է ժամանակի ընթացքում դարձել Երևան, այնպես էլ Ալիշթուն՝ Աղստև): Այլոք Աղստևը նույնացնում են հնօրյա Լոփնասի հետ, որը սխալ է, իսկ ժողովրդական ստուգաբանությամբ՝ հովտի գավառներից մեկին իշխած ոմն աղա Ստեփանի անունից է առաջացել Աղստև անունը: Գետն այսպես հիշատակվում է միջնադարյան հայ պատմիչների կողմից: Աղստևի ձախակողմյան վտակներից են Բլդանը (15 կմ), Շտողանը (16 կմ), Հաղարծինը (10 կմ), Դեղին աղբյուրը (12 կմ), Սառնաջուրը (31 կմ), Մթնաձորը (14 կմ), Աչաջուրը (10 կմ), Սևքարը (10 կմ), Ջողազը (38 կմ): Իսկ աջակողմյան վտակներն են Հովջուրը (Գոլովինկա - 11 կմ), Կոբխանը (10 կմ), Գետիկը (58 կմ), Ուրթիջուրը (20 կմ), Սալթաղը (10 կմ), Դիտավանը, Ուզունթալան և Լալիգյուղը (10-ական կմ):

Մարզի հյուսիսային կողմում հոսում է Կողբ գետը (44 կմ), որն Ադրբեջանի տարածք մտնելուց հետո կոչվում է Ինջա-սու: Սկիզբ է առնում Կոտմանի լեռնաշղթայի Ջիկատար գագաթից, ապա՝ աջից ընդունում Բարանա և Բարեկամավան վտակները, սակայն գրեթե երբեք չի հասնում մայր գետին՝ Կուրին: Աղստև գետից 15-17 կմ արևելք, նրան զուգահեռ, հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ հոսում է Կուրի հաջորդ՝ Հախում վտակը (40 կմ): Սա իր սկիզբն առնում է Մուրղուզի արևմտյան հիմքից՝ Քառասուն աղբյուրից, և հոսում խոր, անտառապատ ձորով: Պառավաքար գյուղի մոտից գետահովիտը սկսում է ընդարձակվել, իսկ անտառները վերանում են: Ավելի արևելք՝ հաջորդ համեմատաբար ընդարձակ ձորով, նույն ուղղությամբ հոսում է Մուրղուզի հյուսիսային լանջից սկիզբ առնող Տավուշ գետը (63 կմ), որը նույնպես հոսում է խոր, անտառապատ հովտով՝ ճանապարհին առաջացնելով բազմաթիվ գեղանկար սանդղաջրվեժներ: Բերդ քաղաքի մատույցներում գետի հունը գնալով լայնանում, իսկ ջրի անկումը նվազում է: Աջից նախ Տավուշին է խառնվում Ճգնավորի գոգահովտից սկիզբ առնող Մովսես վտակը, իսկ Ադրբեջանի Թովուզ քաղաքի մերձակայքում՝ նշանակալի Ախինջի գետը, որի ձախակողմյան օժանդակը Մուրղուզ սարի հյուսիս-արևելյան լանջից սկիզբ առնող Խնձորկուտն է:

Մարզի բնական մեծ լիճը Դիլիջան քաղաքից արևելք, գեղանկար անտառի մեջ ծվարած Պարզ լիճն է, որն անցյալում նաև կոչվել է Ղազախգյոլ: Գտնվում է Արեգունի լեռնաշղթայից դեպի հյուսիս-արևելք ուղղված լեռնաբազկի ստորոտին, ծովի մակերևույթից 1334 մ բարձրության վրա: Մակերեսը շուրջ երկու քառակուսի կիլոմետր է, միջին խորությունը՝ 7 մետր: Պարզ լճից դեպի արևելք, ոչ շատ հեռու, գեղատեսիլ, անտառապատ սարավանդի վրա գտնվում է Գոշի լիճը, կամ Տզրկածովը, որի մոտ եղել է Մխիթար Գոշի գյուղը: Տավուշի մարզում կան նաև ժամանակավոր ջրահոսքերից սնվող տասնյակ այլ լճակներ:

1970-1990-ական թվականներին, գյուղատնտեսական հողահանդակների ոռոգման նպատակով, կառուցվել են Ջողազի (45 մլն. մ^3), Հախումի (12 մլն. մ^3), Տավուշի (5 մլն. մ^3), Քոլագիրի կամ Ծիլի ծովի (4 մլն. մ^3), Իջևանի «Սպիտակ լիճ» (1.5 մլն. մ^3) ջրամբարները: Մարզի հովտային տեղամասերում խոնավության գոլորշիացման տարեկան քանակը (600-800 մմ) գերազանցում է մթնոլորտային տեղումների քանակին (550-600 մմ): Հետևաբար, մշակաբույսերին հատկացված հողահանդակների ոռոգման կարիքը հրամայական է դառնում հատկապես հուլիս-օգոստոս ամիսներին, երբ սովորաբար տեղումները կտրուկ նվազում են, իսկ օդում խոնավության մեծ պակաս է զգացվում: Եվ պատահական չէ, որ մարզի տարածքում վաղնջական ժամանակներից հարգի է եղել ոռոգովի հողագործությունը, ուստի գետերի ու գետակների ափերին կառուցվել են բազմաթիվ ջրանցքներ, որոնցից խոշորները նաև բանեցրել են ջրաղացներ: Դրանց հետքերը կարելի է տեսնել բոլոր ձորերում: Նշանակալի է Սրանոցի (Կիրանց) շուրջ 10 կմ երկարությամբ ջրանցքը, որը կառուցվել է միջնադարում, ունի ձորակի երկու քարափների շուրթերն իրար միացնող ջրանցույց և այժմ էլ գործում է անխափան: Իսկ բարձրադիր հողահանդակները ոռոգելու համար 1950-1980-ական

թվականներին կառուցվել են Նոյեմբերյանի բազմաստիճան, Հաղթանակի, Բագրատաշենի, Ջողազի, Այգեհովտի, Աչաջրի, Ակնաղբյուրի, Պառավաքարի պոմպակայանները:

Ըստ գոտիականության, հանրապետության հյուսիս-արևելքում տարածված են չոր տափաստանների շագանակագույն, լեռնանտառային գորշ, անտառային դարչնագույն, ենթալպյան և լեռնամարգագետնային ճմատորֆային հողերը: Տավուշի մարզի 271 000 հա մակերեսից գյուղատնտեսությանը ծառայում է 120 732 հեկտարը՝ 44 տոկոսը: Իսկ ողջ տարածքի 51 տոկոսը (առավելագույն ցուցանիշ է սակավանտառ հանրապետությունում) կամ 142 000 հեկտարը զբաղեցնում են անտառները: Մարզն աչքի է ընկնում բուսական համայնապատկերների ու բուսատեսակների արտակարգ բազմազանությամբ: Սա բացատրվում է տարածաշրջանի բարդ ռելիեֆով, կլիմայի, հողերի խայտաբղետությամբ, լեռնաշխարհի գոտիականությամբ և նպաստավոր աշխարհագրական դիրքով: Աճում են հարյուրավոր բուսատեսակներ: Եթե տափաստանային տեղամասերում աճում են փետրախոտը և օշինդրը, ապա բարձր լեռնային մարգագետիններում գերիշխում են ալպյան փարթամ բույսերը: 600-2000 մ բարձրություններում բուսածածկույթի մեջ տիրապետում են անտառները: Տաք հովիտների արևկող, քարքարոտ լանջերին (մինչև 900 մ բարձրության վրա) հանդիպում են սաղարթավոր նոսրանտառներ, որոնց մեջ՝ վայրի նշենու, գիհու, փռշենու, ցաքու, պիստակենու, թզենու, նռենու, հոնի, հասմիկի, դժնիկի, ցախակեռասի և այլ ցածրատեսակ, չորասեր ծառերի և թփերի մացառուտներ: Դրանցում լինում են նաև թխկու, հացենու և դաժու ծառեր: Իսկ ցածրադիր տաք հովիտներում աճում են մերձարևադարձային ծառեր՝ թթենի, պիստակենի, արքայախնձոր, դափնի: Մարզում հիմնականը և գերիշխողը հաճարենու անտառներն են, որտեղ անտառ կազմող հիմնական տեսակն է արևելյան հաճարենին: Կաղնու առավել տիպիկ անտառները տարածվում են Աղստևի ավազանում՝ 1000-1600 մ բարձրության վրա: Կաղնուն ուղեկցում են թխկին, բոխին, լորենին: Առավել ստվերոտ սարալանջերին, որտեղ հողերն ավելի խոնավ են և ունեն ավելի հզոր հումուսային հորիզոն, հեշտությամբ տեղի է ունենում կաղնու դուրս մղվելու և բոխիով փոխարինվելու գործընթաց: Դրան նպաստում է նաև մարդու ներգործությունը՝ անտառի անխելամիտ հատումներն ու անասունների արածեցումը: Որպես դրա հետևանք՝

500-1000 մ բարձրություններում այժմ բոխուն և կաղնուն փոխարինում են դաժու անտառները, որոնցում հանդիպում են հոնի, զկռենու, մամխի, ալոճենու (սզնի) թփածառերը և կծոխուրի թփերը: Անտառ կազմող հիմնական ծառատեսակներն ունեն արդյունաբերական նշանակություն, դրանք՝ վերամշակվելով, դառնում են մանրատախտակ, նրբատախտակ (ֆաներա), կահույք, տախտակ և կենցաղային առարկաներ: Անտառները հարուստ են վայրի պտուղներով և հատապտուղներով (ընկույզ, հոն, մասուր, տխիլ, խնձոր, տանձ, շլոր, մոռ, մոշ, հաղարջ, կոկռոշ, կծոխուր, մամուխ, ալոճ), սունկերով, ուտելի կանաչիներով (փիփերթ, սիբեխ, ավելուկ, շուշան, իծկոթ, քեղ, դանդուռ, թելուկ, ծտապաշար, ծնեբեկ, թրթնջուկ, սինձ), դեղաբույսերով (անթառամ, անանուխ, առյուծագի, եղինջ, դաղձ, ջղլաբատ, եզան լեզու, եղերդակ, ճարճատուկ, թանթրվենի, լորենի, խատուտիկ, իշակառ, կատվախոտ, ղանձիլ, սինդրիկ, խնկածաղիկ):

Մարզի կենդանական աշխարհը ևս հարուստ է ու բազմազան: Երկրամասին բնորոշ են կովկասյան գորշ արջը, այծյամը, նապաստակը, վայրի խոզը, գորշուկը, աղվեսը, ոզնին, գայլը, սկյուռը, շնագայլը (չախալ), կզաքիսը: Պատահում են կուղբ և լուսան, թռչուններից՝ արծիվ, բազե, կովկասյան ցախաքլոր, կաչաղակ, ագռավ, լեռնային հնդկահավ, կաքավ, լոր, կեռնեխ, արտույտ, ծիծեռնակ, կկու, մոշահավ, բու, վայրի աղավնի (դռլոն), տատրակ, հոպոպ: Կան զանազան սողուններ (իժ, գյուրզա, լորտու, շահմար, մողեսներ, կրիաներ): Գետերում բազմանում են կարմրախայտը, մուրծին (խրամուլի), կապույտը (կողակ), ճանարը, մանրածածանը: Մարզի ջրամբարներում հաջողությամբ աճում են նաև տարաշխարհիկ ծածանը և գետածածանը: Սակայն մարզի բնական և կենդանական աշխարհին հսկայական վնաս է հասցվել էներգետիկ ճգնաժամի տարիներին, առավելապես՝ հանցավոր ամենաթողության հետևանքով:

Տավուշի մարզի տարածքը Կովկասում վաղուց հայտնի է եղել որպես մետաղածուլության կենտրոն: Կիրակոս Գանձակեցին իր պատմության մեջ հայտնում է, որ 12-րդ դարի վերջին վրաց Թամարա թագուհու արքունիքում բարձր դիրքի հասած Զաքարե սպարապետը Գետիկի վանքին է նվիրել նաև Աբասածորի հանքավայրը՝ հավանաբար երկաթի: Այսպես ասելու հիմք են տալիս 20-րդ դարի երկրորդ կեսին հայտնաբերված երկաթածուլական վառարանները:

Նախ, 1970 թվականին հայ մեծավաստակ երկրաբան Կորյուն Մկրտչյանի ղեկավարած երկրաֆիզիկական արշավախումբը Հովք գյուղի դիմաց՝ Աղստև գետի աջ ափին որոնողական աշխատանքներ կատարելիս, Շունքար լեռան հյուսիսային լանջին, գրեթե 45 աստիճան թեքության վրա, հայտնաբերեց երկաթածուլման երեք «դոմենյան» վառարան: Վառելիք էր ծառայել անտառից մթերված փայտածուխը: Ձագարաձև վառարանի հատակը, պատերը և կտուրը կերտված էին տեղական բազալտի հաստ սալերով: Հանքաքարն ու վառելիքը լցվել էին ծուլատաշտի վերին եզրից: Հրահեղուկ ծուլվածքը, քարակերտ թեք հատակով, հավաքվել էր նեքնամասում և արտահոսքի անցքով (ծագարի ելքով) լցվել կավե կաղապարների մեջ, որոնց հետքերը նույնպես պահպանվել էին:

Երկրորդ ծուլարանը գրքի հեղինակը հայտնաբերեց 1998 թվականի սեպտեմբերին: Դիլիջանի պետարգելոցի աշխատակիցներ Ալբերտ Հովհաննիսյանը և Ռազմիկ Սահակյանը Պորտայալի բարձունքից իջեցրել և Թեղուտ-Հաղարծնի վանք ճանապարհի մոտ, Հաղարծին գետակի հենց ձախ ափին բարձրացող ինչ-որ ավեր շինության կենտրոնում դրել էին Խութլուբեկ, Էլբեկ, Ջոլբեկ եղբայրների՝ ՉԼՁ (1287) թվին կերտել տված թևավոր խաչը, որը մինչ այդ անհայտ էր հայագիտությանը և ընթերցվեց առաջին անգամ ու չափագրվեց: Հաջորդ տարվա մայիսին, երբ մարզ էր հրավիրվել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, ուշադրություն հրավիրվեց թևավոր խաչի հիմքը հանդիսացող ավեր շինության, գետի ջրերի բացած խարամների ու սև գույնի ծուլվածքի վրա: Ջուլածո սալիկներն ակտիվորեն արձագանքեցին մագնիսին: Գիտնականները (պատմական գիտությունների դոկտոր Արամ Քալանթարյան, գիտ. թեկնածուներ Հուսիկ Մելքոնյան և Գագիկ Սարգսյան) հավաստեցին, որ թևավոր խաչը դրված է երկաթածուլական վառարանի վրա: Հավանաբար հենց մոտակայքում միջնադարերում շահագործվող երկաթահանքն է Ձաքարե Ձաքարյանը նվիրել Գետիկի վանքին:

Երկրամասում մետաղական և ոչ մետաղական հանքերի որոնողական աշխատանքները բուռն թափով ծավալվեցին ռուսական տիրապետության հաստատումից հետո: Շուտով հայտնաբերվեցին Բարանա գյուղից հարավ, 10 կմ հեռավորության վրա գտնվող Միս-

խանայի, Քարվանսարա գյուղից 30 կմ արևմուտք, Տանձուտ գետի ձորակում, Սևքարի ձմեռանոցի մոտ՝ Խաչաղբյուրի, Դիլիջանի Գոլովինո գյուղի մոտ՝ Շամլուի պղնձահանքերը: Պղնձի երևակումներ հայտնաբերվեցին նաև Ղուլալիի ձորում, Ոսկեպարի Ղազանչի սարում և Լալի գյուղում: Միսխանայի հանքի շահագործումը շատ արագ ձախողվեց և նրա տերերը՝ հույն մասնագետները, փախան ասպարեզից: Տանձուտի կամ Խաչաղբյուրի հանքավայրը ևս, որ պատկանում էր հույն Նիկոլայ և Գեորգի Ձաֆարովներին, փակվում է միջոցների անբավարարության պատճառով: Նվազագույն հաջողություն է ունենում Դիլիջանի հանքը, որը պատկանում էր նահանգային քարտուղար Մարգար Արծրունուն և երևանցի Դավիթ Խուդաբաշյանին: Նրանց ընկերությունը հանքի շահագործումն սկսում է 1878 թվականին և հաջորդ տարի,16-21 բանվորներով, արդյունահանում 2800 փութ հանքաքար, որի մեջ պղնձի պարունակությունը 6-7 տոկոս էր: Հաջորդ տարիներին ծուլվում է 180-ական փութ պղինձ: Սակայն շուտով հանքի և ծուլարանի աշխատանքները դադարեցվում են աշխատուժի և ներկրվող միջոցների թանկության պատճառով[5]: Ռուս երկրաբանները մարզի գետահովիտներում որոնում են նաև ոսկի, բազմամետաղներ, այլ հանածոներ: Հին Դիլիջան գյուղի արվարձանում հայտնաբերվում է ոսկու հանք, որի արդյունահանումը մետաղի նվազ պարունակության պատճառով դադարեցվում է:

Սակայն ունեցած հարուստ բուսականության համեմատ Տավուշի մարզն աղքատ է օգտակար հանածոներով, հատկապես՝ մետաղով և վառելիքով: Կան բենտոնիտային կավերի, ցեոլիտի, ֆելզիտի, մարմարի, կրաքարերի, բազալտի, հանքային ներկերի, կոնգլոմերատի, դոլոմիտի, ագաթի, վիմագրական քարի, իսլանդական սպաթի, գիպսի, տուֆաքարերի, քարածխի, այրվող թերթաքարերի, մանգանի, պղնձի, երկաթի հետախուզված հանքավայրեր և երևակումներ: 1970-ական թվականներից Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կարևոր նշանակություն ձեռք բերեց Սարի գյուղի բենտոնիտային կավերի հանքավայրը: Այդ հարստությունը վերամշակելու համար կառուցվեց Իջևանի «Բենտոնիտ» ձեռնարկությունը, որի արտադրանքը լայն կիրառություն ուներ Խորհրդային Միության նավթի և գազի հանքավայրերի հորատանցման, մետաղածուլության, սննդի և կերերի արդյունաբերության բնագա-

վառներում*: Ոչ մետաղական հանածոներից մարզում հայտնի են Լուսածորի դոլոմիտի և Սարի գյուղի ագաթի հանքավայրերը, իսկ շինաքարերից՝ Հաղթանակի ֆելզիտը, Ենոքավանի մարմարը, Հաղարծնի գունագեղ կոնգլոմերատը: Կարմրավուն մարմարն արդյունահանվել և որպես երեսպատման շինանյութ վերամշակվել է վերջին տասնամյակներում: Իսկ կոնգլոմերատը՝ որպես շինություններ գեղազարդման միջոց, Ռուսաստանում և Եվրոպայում լավ հայտնի է եղել 20-րդ դարի սկզբից: Հատված քարաբլոկները սայլերով տեղափոխվել են Ղարաքիլիսայի (Վանաձոր) երկաթուղային կայարան և վագոններով առաքվել արևմուտք: Այս հիանալի քարից սղոցված և փայլեցված սալերով են կերտված Իջևանի հյուրանոցի ճեմասրահը, Մոսկվայի համագումարների պալատի ճեմասրահները և այլ նշանավոր շինություններ: Հայաստանի ակնագործության բուռն զարգացմանը կարող են իրենց մասնակցությունը բերել Իջևան քաղաքի մատույցներում հայտնաբերված վիմատիպ քարերի հանքերը (Խոլարքեր և Ցամաք ձոր): «Ալմաստների սինթեզման հարցերով զբաղվող մասնագետներին հայտնի է, որ սինթեզման հիմնական հումքը գրաֆիտն է, իսկ օժանդակը՝ վիմատիպ քարերը: Վերջիններս ալմաստների սինթեզման գործում ծառայում են որպես հիմնական հումքի՝ գրաֆիտի, համար կոնտեյներներ պատրաստելու հումք»: «Կարատ» ամսագրի 2000թ. հոկտեմբերյան համարում հայտնում է երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հրաչյա Ավագյանը և ավելացնում, որ Իջևանի վիմատիպ քարերի հանքատեսակները իրենց ֆիզիկամեխանիկական հատկանիշներով բավարարում են ալմաստների սինթեզման պետական ստանդարտների պահանջները:

* XIX դարի կեսերից այս հանքանյութը «գիլ» անունով հայտնի էր մերձակա գյուղերի բնակիչներին, որոնք դա հաջողությամբ օգտագործում էին որպես լվացման միջոց, որովհետև դեռ անմատչելի և անբավարար էին օճառը և մյուս լվացող նյութերը: Իսկ ահա, թե ինչպես էին օգտագործում: Նախ կավը (գիլը) ջրի մեջ խառնելով ստանում էին լուծույթ՝ «ռով», և թողնում հանգստանա, ապա նստվածքից վեր զուլալված ջրով լվանում գլուխները և հագուստները: Իսկ մի շարք սևքարեցիներ ու սարիգյուղացիներ «բիզնես» դարձրած են եղել գիլը, որ հանել և վաճառել են Ղազախի թաթարական գյուղերում: Նաև պատմում են, որ ապրանքի գինը չգցելու մտահոգությամբ, Ղազախում նույն օրը չվաճառված կավը խուրջինի հակից աննկատ լցնելիս են եղել Աղտևի մեջ և բեռից ազատված ավանակին բազմած վերադարձել գյուղ:

Բնական հանքային ռեսուրսների կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում նաև ստորերկրյա քաղցրահամ և հանքային բուժիչ ջրերը: Արժե հայտնել, որ XXI դարի մեկնակետին Տավուշի մարզի բոլոր բնակավայրերը, նախկինում կառուցված ցանցերի շնորհիվ, դեռ օգտվում են լեռնաշխարհի մոտ և հեռու բխող բնական, անուշահամ աղբյուրների ջրերից, իսկ հետագայում դրանց պաշար կարող են հանդիսանալ լեռնային գետերի հոսքերը: Հատկապես Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային, բուժիչ ջրերով, որոնց ուսումնասիրությունը XIX դարի վերջերին սկսել են ռուս, իսկ XX դարում շարունակել հայ գիտնականներն ու երկրաբանները: Հանրահայտ է հատկապես Դիլիջանի ածխաթթվա-ալկալային բաղադրությամբ, քիմիական կազմով Բորժոմի և ֆրանսիական Վիշի Գրան Գրիլ աղբյուրներին նման հանքային ջուրը, որը բխում է մի շարք ակունքներից: 1970-ական թվականներից հայտնի դարձավ նաև Կուծախ հանդամասի հանքային աղբյուրը, որը ֆիզիկաքիմիական հատկություններով Կիսլովոդսկի Նարզանի նմանակն է: «Դիլիջան» ջուրը նաև շշալցվում է՝ օգտագործվելով որպես սեղանի ջուր և աղեստամոքսային հիվանդություններով տառապող մարդկանց բուժման միջոց: Ուսումնասիրված են նաև «Ֆիոլետով», «Այգեհովիտ», «Սպիտակ», «Պուճուր Դիլի», «Հաղարծին», «Սալթաղ», «Լալի» հանքային աղբյուրները: Սակայն բնության ընձեռած հիանալի հնարավորությունները, դարավերջի տնտեսական ճգնաժամի հետևանքով, սկսեցին օգտագործվել ավելի ու ավելի վատ, մասնակիորեն:

ՊԱՏՈՒՄ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ

Հնագիտական ուսումնասիրություններով պարզված է, որ Տավուշի մարզի տարածքում մարդը բնակվել է հին քարե դարից: Բնական միջավայրը նպաստավոր է եղել լեռնային կուսական անտառներում ապրող որսորդական-հավաքչական ցեղերի համար, որոնք զբաղվել են նաև բրիչային երկրագործությամբ, հնձել կայծքարե երկարավուն շեղբերից պատրաստված մանգաղներով: Նոյեմբերյանի, Ենոքավանի, Բերքաբերի, Իջևանի, Հաղարծնի, Գոլովինոյի, Արծվաբերդի կիկլոպյան ամրոցներից և այլ հնավայրերից պեղված առարկաները վկայում են, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի XII-XI դարերը մարդը Տավուշի մարզի տարածքում զբաղվել է պղնձի հանքաքարի արդյունահանմամբ և ձուլմամբ, պատրաստել բրոնզե զենքեր, զարդեր, կենցաղային առարկաներ, հսկայական անմշակ ժայռաբեկորներից կերտել «կիկլոպյան» կոչված շինություններ: Հայտնաբերված օտարամուտ կիրառական արվեստի առարկաները նաև վկայում են, որ տարածաշրջանում ապրող մարդիկ սերտ առևտրական կապեր են ունեցել հարևան երկրների ցեղերի հետ: Պառավաքարում հայտնաբերված երկաթեդարյան առարկաները և Շունքարի երկաթածուլարաններն ապացույցն են այն բանի, որ մ.թ.ա. XII-XI դարերում Հայկական լեռնաշխարհում սկսված երկաթի դարը չի շրջանցել երկրամասը, և նրա բնակիչները գտնվել են հին աշխարհի զարգացման հորձանուտում: Ուրարտու (Արարատյան) թագավորության հաստատումից հետո (մ.թ.ա. IX դար) հայկական առաջին միասնական պետության մաս են կազմել նաև հյուսիս-արևելքի գավառները կամ ազգատոհմերի «աշխարհները», որոնց տերերի կենտրոնախույս նկրտումները պատժիչ

արշավանքներով ընկճել է Մենուայի որդին, և հաջորդը՝ Արգիշտի Ա-ն, որի գահակալության տարիներին Արարատյան թագավորությունը հասել է իր ռազմաքաղաքական հզորության բարձրակետին:

Այդ ժամանակաշրջանի սեպագիր աղբյուրներում հիշատակված Ալիշթու բնակավայրը գիտնականները նույնացնում են Աղստև անվան հետ, որը հետագայում տարածվել է երկրամասի մեծ գետի վրա: Աղստևի վտակ Ոսկեպարի հովտում հետազոտողները տեղադրում են ուրարտական ժամանակաշրջանի Կուարզանե (=Գավարզին) երկիրը: Գիտնականներից ոմանք նաև այն տեսակետն են արտահայտել, որ Աղստևի ներքին հոսանքի շրջանում տարածվել է ուրարտական Տուալբանի երկիրը, որը ապագայում անվանապես նույնացվել է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Մեծ Կուենք գավառի հետ:

Երվանդունիների թագավորության շրջանում (մ.թ.ա. VI-IIդդ.), լեռնաշխարհի ծայրամասերը հայկական էթնոսի և հայոց լեզվի ոլորտն ընդգրկելու շնորհիվ, ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը: Իսկ նրանց հաջորդած Արտաշեսյան արքայատոհմի մեծ փայլատակ Արտաշես Ա-ի օրերում (մ.թ.ա. 189 - մոտ 160թթ.) Հայաստանը դառնում է հին աշխարհի ուժեղ և ընդարձակ պետություններից մեկը, ապրում աննախադեպ զարգացում, ինչպես Քերթողահայրն է հայտնում՝ «մեր Հայաստանում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»: Արտաշես արքան իրականացնում է զանազան բարեփոխումներ, մասնավորապես երկրի անվտանգությունն ապահովելու նպատակով հաստատում սահմանակալ զորավարություններ, որոնցից մեկը՝ Գուգարքում: Նաև հրամայում է որոշել գավառների, գյուղերի և ագարակների սահմանները, որոնց կցանվածքներում դրվում են քարե հիմք ունեցող, գետնից բարձր քառակուսի քարակոթողներ, որոնցից մեկը հայտնաբերվել է Թեղուտում՝ արամերեն արձանագրությամբ, որը պահպանվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Նորից Խորենացին է հայտնում, թե Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) ստեղծած մեծ երկրի հյուսիս-արևելյան սահմաններն անցել են Կուր գետով՝ հայերեն խոսակցության վերջին սահմանով («յարևելից կողմանէ զեզերբ հայկական խոսիցս»)[6], ընդգրկելով Գուգարք և Ուտիք նահանգները: Իսկ Գուգարքի արևելյան կողմը զբաղեցրել են Ձորափոր կամ Ձոր (Աղստև գետի միջին հոսանքում), Կանգարք (Ոսկեպար և Կիրանց գետերի հովիտներում) տարածվող

գավառները, որոնք Կուր գետից անջատված են եղել նրա աջափնյակում նեղ լեզվակով ձգվող Ուտիքի Գարդման գավառով: Գուգարքի Չորափոր գավառին արևելքից սահմանակից է եղել Ուտիք աշխարհի Տուս-քուստակ գավառը, իսկ հարավից (Դիլիջանն իր շրջակայքով)՝ Արարատ աշխարհի Վարաժնունիք գավառը, որի այս անկյունը հայոց իշխանազունների կողմից սիրված է եղել որպես «հովուց տեղիք»՝ անզուգական հանգստավայր և փարթամ որսարան: Արտաշեսյաններին հաջորդած Արշակունիների գահակալության ժամանակաշրջանում (մ.թ. 66-428թթ.) հիշարժան իրադարձություններ տեղի չեն ունեցել Գուգարք սահմանակալ երկրամասի նոսր բնակեցված արևելյան գավառներում, որոնք նաև հետագա դարերում չեն ունեցել քաղաքներ, գոնե՝ իշխանանիստ խոշոր բնակավայրեր, ուստի և չեն կերտվել նշանակալի կառույցներ, ինչպես ոստան՝ նահանգի գավառներում, և մեզ չեն հասել այդ ժամանակի մշակույթի հուշարձաններ: Միայն մ.թ. II դարի հայտնի գիտնական Պտղոմեոսն է իր կազմած քարտեզներից մեկում Մեծ Հայքի հյուսիս-արևելքում նշել Լալա բնակավայրը, որը միջնադարում հիշվում է Լալ ձևով: Իսկ XVIII դարավերջին Ղարաբաղից այստեղ գաղթածները մոտակայքում հիմնած իրենց գյուղը կոչեցին Լալի, որը ներկայիս Վազաշենն է: Անշուշտ, հնօրյա բերդն ու բնակավայրն իրենց անունն առել են տեղավայրի վառ կարմիր՝ լալ գույնի, քարից կազմված Կարմրաքար սարից:

Հայաստանի վարչատարածքային բաժանման պատմությունից հայտնի է, որ Մեծ Հայքը կազմված է եղել թագավորական ոստան «Միջնաշխարհից» և սրա շուրջ տարածվող գավառներից ու «Եզրաշխարհ» նահանգներից: Վերջիններից հատուկ նշանակություն են ունեցել Աղձնիքի, Նոր Շիրականի, Կորդուքի և Գուգարքի բդեշխությունները (կուսակալությունները), որոնք եղել են սահմանապահ զորաթևեր, արևելքից, արևմուտքից, հյուսիսից և հարավից երկիրը հսկել արտաքին հարձակումներից: Ըստ այդմ, թագավորը յուրահատուկ հրովարտակով՝ Զորանամակով, կանոնակարգել է Հայաստանի ռազմական ուժերի քանակը, դասավորությունը, կառուցվածքն ու անելիքները խաղաղ օրերին և պատերազմական գործողություններ ծավալելիս: Տերության հյուսիսում երկրի պաշտպանությունն իրականացնող Գուգարքի բդեշխը մյուս բդեշխների հետ արքունիքում բարձր դիրք էին գրավում իշխանների համեմատ, մոտ էր նստում թագավորին և միշտ զենքի տակ ուներ 4500 հեծյալներ՝պատրաստ ամեն պահի նետվելու մարտադաշտ: Հայրենապահի բացառիկ դերով է բացատրվում բդեշխների մասնակցությունը համազգային կարևորագույն խնդիրների լուծմանը:

Ագաթանգեղոսն իր «Հայոց պատմության» մեջ վկայում է, որ Գուգարաց տերն անմիջական մասնակցություն է ունեցել Հայաստանում քրիստոնեության ամրապնդման գործում: Երբ Տրդատ Գ թագավորը, նոր հավատի քարոզիչների երկար հալածանքներից հետո, քրիստոնեության մեջ խորաթափանց մտքով տեսավ Հայաստանը պարսկական ոտնձգություններից զերծ պահելու հզոր միջոց և հայկական անկախ թագավորության գաղափարական ամուր հիմք, վճռեց այն ճանաչել որպես պետական կրոն: Ուստի հավաքեց հայոց աշխարհի տասնվեց երևելիներին և ուղարկեց Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, «որպեսզի տանելով Գրիգորին (Լուսավորչին - Ռ.Ս.), իրենց երկրի քահանայապետ դարձնեն»: Այս պատմական առաքելության մասնակիցն է եղել նաև «Գուգարաց երկրի իշխանը»[7]:

Իսկ գուգարքցիներն ու ուտիքցիները՝ հերոսաբար դիմագրավելով մերձկասպյան տափաստաններից, Միջին Ասիայից, Հյուսիսային Կովկասից արշավող ռազմատենչ, ավարառու ցեղերի հարձակումներին, պատվով էին կատարում երկրապահ զինվորի իրենց դերը: Տավուշի հովիտներում, սահմանային Կուր գետի ափերին, նրանք նաև հուժկու հարվածներ են հասցրել ալաններին, կիմերներին, հոներին, պեչենեգներին, խազարներին, մասսագետներին ու սակերին, որոնց մի մասը, ըստ հույն մեծ պատմիչ Ստրաբոնի, նաև հաստատվեց Կուր գետի աջ ափին՝ Հայաստանի «լավագույն հողերում», իսկ հետագայում ձուլվեցին վաղուց երկրագործության անցած, զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող հայերի հետ: Սակայն հայոց հյուսիս-արևելյան այս սահմանակալ աշխարհը տերության մեջ ունեցել է նաև յուրահատուկ մի այլ պարտականություն. կատարել է մեծ ծմեռանոցի դեր: Ամռանը հայ թագավորների բազմահազարանոց նախիրներն ու հոտերը պահվելիս են եղել Գուգարաց, Փամբակի, Գեղամա և Միափորի զովասուն սարերի արոտավայրերում, իսկ ձմռանը՝ Կուր գետի գրեթե ձյուն չտեսնող ափերին ու մերձակա տաք հովիտներում: Հայ Արշակունիներն Աղստև գետի ներքնագավառում նաև կառուցել էին իրենց Խաղխաղ ձմեռանոցային քաղաքը (ուրիշ-

ներն անվանում են գյուղ), որի մասին իրենց աշխատություններում գրել են հայ հին պատմիչները: Մովսես Կաղանկատվացին նաև վկայում է, որ Կուրի «ձմեռարոտ դաշտը արածելու» հոտեր ու նախիրներ էին բերում Արարատյան դաշտի գավառներից ու Սյունիքից[8]: Եվ, ընդհակառակը, գարնանն իրենց հոտերը հայոց սարերն ամառնարոտի էին քշում նաև Կովկասի քոչվորները: Բնիկների համար ավանդույթի ուժ էր դարձել անասնապահության վարման կիսաքոչվորական «սար-դաշտ» համակարգը, երբ գարնանը հովիտներից՝ դաշտ տեղերից, անասունները տեղափոխվում էին խոտառատ սարերը, իսկ ցրտերն ընկնելուց առաջ, երբ աշնանային անձրևներից նորից կանաչ էին հագնում ամռանը բարկ արևից խանձված հովիտները (դաշտերը), հոտերն ու նախիրները սարերից քշում էին այնտեղ և այդպես շուրջ տարի կենդանիները կերակրում բնական արոտավայրերով: Դա չէր կարող վրիպել ռազմարշավներից հետո նստակյաց ու կիսանստակյաց կյանքի անցնող եկվոր ցեղերի աչքից: Այդպիսին էին նաև ղազախ, շամշադիլ և մյուս թուրքալեզու ցեղերը, որոնք կարճ ժամանակում հայերին դուրս մղելով Կուրի աջափնյակից, երկար ժամանակ տիրություն արեցին հայոց սարերին՝ փոխելով դրանց հայկական անունները:

Հայոց հյուսիս-արևելյան կողմի ձմեռային մեղմ կլիման ի սկզբանե նաև չարիք էր դառնում բնիկների կյանքին: Ռազմարշավի ելնողներն ավարառությամբ կարող էին զբաղվել, մարտական գործողություններ ծավալել նաև անձյուն ձմռան ամիսներին, տաք հովիտներում հանգիստ տալ հոգնած զորքերին, մեծաքանակ ռազմածիերն ու գրաստները կերակրել բնական արոտով և նախապատրաստվել գարնանային հարձակումների դեպի հարևան երկրամասեր: Այսպես, մ.թ.ա. 65 թվականի աշնանից մինչև հաջորդ տարվա գարուն Կուրի հովտում ձմեռեց ու մի շարք կռիվներ մղեց հռոմեական զորավար Պոմպեոսի զորքը: Հետագայում այստեղ բազմիցս իրենց զորքերին ձմեռային հանգիստ տվեցին ու նոր ռազմարշավների նախապատրաստվեցին արաբները, սելջուկները, մոնղոլները, պարսիկներն ու թուրքերը: Երկրի տերը զրկված էր ազատ շունչ քաշելու հնարավորությունից, որովհետև հակառակորդի ասպատակն իր բարբարոս կրքերին կարող էր հագուրդ տալ ողջ տարին, անդադար, անգամ ձմռանը նրա երթի ճանապարհը փակող ձյուն չկար և ձնահոսքի վտանգ: Ավելին, հայոց այս երկրամասը դատապարտված էր մշտական ասպատակության: Քրիստոնեության տարածման շրջանում, երբ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը դեռ ավարառությամբ ապրող մասքութներին քարոզում էր կատարել աստծու կամքը՝ չգողանալ, չհափշտակել, այլ՝ վաստակել ձեռքերով և վայելել մարդկայնորեն, բարբարոս ցեղի ներկայացուցիչներն ասում են, թե դա հայոց թագավորի խաբեությունն է, որ ցանկանում է իրենց զրկել Հայաստանի ավարից: «Իսկ մենք ինչո՞վ պետք է ապրենք, եթե չավարենք ու չհափշտակենք»[9],- հարցնում են անկեղծ զարմանքով: Սա վայրենաբարո ցեղի պարզ և հասկանալի աշխարհընկալումն էր, նաև՝ բնական իրավունքը, որի դեմը կարելի էր առնել միայն ռազմական զորությամբ և ոչ խնկաբույր քարոզով կամ մեղկ ողոքումներով:

Պատերազմները մարդկության պատմության հավերժական ուղեկիցներն են եղել՝ ընդամենը խաղաղության պահերով ընդմիջված: Սովորաբար կռվող կողմերի «առաքինի» երդումով, թագավորների «ազնիվ» խոստումով և դաշնագրով հաստատված խաղաղությունն ամեն անգամ խախտել է նա, ով դժգոհ է մնացել հաշտության պայմաններից, շատ կորցրածից և քիչ ձեռքբերածից, ով նախորդ պատերազմից հետո արագ պատրաստվել է նոր պատերազմի՝ զորացնելով ուժերը, ձգտել շահել անաչալուրջ, արիությունն ու կռվելու ցանկությունը կորցնող հարևանի հաշվին: Հին Հայաստանի այն գերագույն տերերը, որոնք հասկացել են պատերազմից հոգնելու վնասակարությունը և ռազմասիրություն ու արիապաշտություն են ջատագովել, վարել են հաղթական պատերազմներ և, եթե չեն ընդարձակել Հայաստանի սահմանները, կորուստներ էլ չեն տվել: Ուստի հայոց գահակալները երբեմն իրենք են իրենց զորքերը շարժել հեռավոր ռազմարշավների, որպեսզի հայոց վրա ելնող չարիքը ոչնչացնեն իր բնում: Այդպես հայ Արշակունիների ինքնուրույն և ժառանգական արքայատան հիմնադիր Վաղարշ Բ-ի որդի Խոսրով Ա Մեծը (211-259) գահակալման սկզբին անցնում է Կովկասյան լեռները, պատժում ասպատակ խազարաց և բասլաց ցեղերին, ապահովում հայոց պետության հյուսիսային սահմանները: Դա էր լինելության ուղին: Կրավորականությունը կործանարար է եղել: Քերթողահոր հիացմունքի առարկան է եղել Հայկյան Արամը: «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով..., լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում հայրենիքի սահմանները և օտարները տիրում են ար-

յունակից հարազատների վրա»[10]: Եվ շրջակա ազգերից նեղվելով՝ հավաքում է հարազատ, քաջ և աղեղնավոր հինգ բյուր հմուտ պատերազմողների և հայոց սահմանների մոտ չարաչար պարտության մատնում նախահարձակ մեդացիներին, որոնք քուշանների նման արդեն մեկ անգամ «ասպատակելով սմբակներով ոտնակոխ» էին արել Հայաստանը:

Այսպես հայոց ոգորումները հաճախ պսակվել են ռազմական հաղթանակներով, պարտված հակառակորդի նվաստացուցիչ անձնատրությամբ՝ քաջերի նիզակներից կազմված «լծի» տակով հանդիսավոր անցկացմամբ: Իսկ հակառակորդը դիմել է ստորության ու խարդավանքի, հայոց մեծերին բարեկամության հավաստիացումներով հրավիրել է իր արքունիք ու վատաբար բանտ նետել, կամ թագավորական խոսքին հավատացած հայորդու արյունը հեղել «հյուրասիրության շքեղ սփռոցի վրա»: Հայոց նկատմամբ անասելի անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծվում է 226 թվականից հետո, երբ Իրանի գահին պարթև Արշակունիներին փոխարինելու եկավ Սասանյան գահատոհմը: Սա Իրանի երբեմնի հզորությունը վերականգնելու փառասիրական ձգտումներով էր տոգորված: Դրան կարող էին խանգարել իր անկախության կեցվածքին հավատարիմ Հայաստանն ու նրան կառավարող Արշակունիները: Պարսկաստանի նոր տիրակալ Սասանի որդի Արտաշիր 1-ինը, ըստ պատմիչների հաղորդման, շատ էր նեղված հայոց Խոսրով Մեծ թագավորի «հաջող ռազմական գործերից», որի շուրջն էին համախմբվում Իրանի հակասասանյան ուժերը: Վերջինները Հայաստանի միապետին հանդիպում են նրա ձմեռանոց Խաղխաղ քաղաքում: Շարունակվում են նաև երկու հզոր հարևանների՝Հռոմեական կայսրության և Պարսկաստանի բախումները, իսկ տուժողը, միևնույնն է, լինում է երկու սարի արանքում մնացած Հայաստանը: Վերջինս դիմագրավում է ողջ ուժերի լարումով, ըմբոստ նախարարների սանձահարումով: 371-ին հայրենիքի ճակատագրով այրվող Պապ թագավորին հաջողվում է անգամ վերականգնել Մեծ Հայքը՝ նախկին սահմաններով: Սակայն դա հզոր տերության մի նոր, կարճատև արշալույսն էր, տևական մայրամուտից առաջ:

Տապանաբնակներից սերված ազատ ու խրոխտ Հայկ նախահոր հառնումից ի վեր ավերումի ու ստրկացման անդադրում հեղեղներ են փոթորկել Հայաստանի վրա, այն դեպքում, երբ անգամ կաթիլն է

քար ծակում: Իհարկե նվաճումն էլ դյուրին չի եղել: Օտարը նաև սահմռկել է հայի դիմագրավման կերպից, որն իր ցեղի երթը շարունակելու համար կամովին նահատակվելու կամք էր դրսևորում, սերնդե-սերունդ «մահ իմացյալ՝ անմահություն» պատգամն էր բարբառում: Ուստի փորձված հակառակորդը ոտնձգություններ էր ձեռնարկում նաև «անզեն մարտադաշտում» և ձգտում տիրել շողոմ խոսքով, իր ոգեղեն ունեցվածքի առավելությունների փառաբանմամբ, հայոց թագավորի դեմ նախարարների անմիաբանության խորացմամբ, քայքայիչ միջամտությամբ, «թվով շատ սահմանափակ» փոքր ածուն իր մեջ լուծելու թույնով: Ինչպես հայոց երկրի հայրենասեր աշխարհիկ տերերը, չարիքի դեմ իր բազմադարյան սրբալույս լինելության սկզբից անկոտրում կամքով դիմագրավել է նաև ազգային եկեղեցին: Պարսկաստանի դեմ՝ այլ հավատքի, իսկ քրիստոնյա Հռոմի քաղկեդոնականության դեմ՝ միաբանակության նրբերանգի տարբերությամբ: Եվ ապրումի այդ պայքարը շարունակվեց նաև նրանից հետո, երբ 387-ին երկիրը երկու մասի բաժանեցին իրար բերան թքած հզոր հարևանները՝ Հռոմն ու Պարսկաստանը: Եղու~կ, Հայաստանը վերամիավորելու և անկախությունը վերականգնելու փորձերը չհաջողվեցին, սակայն մինչև 428 թվականն Արշակունյաց արքայատոհմը շարունակեց կառավարել Մեծ Հայքի արևելյան մասում, ուր Վռամշապուհ թագավորի օրերում տեղի ունեցավ հայապահպանության գլխավոր հրաշքը՝ գրերի գյուտը:

Եվ դա կատարվեց մի ժամանակ, երբ հայ ժողովրդի լինել-չլինելու, ազգային միասնության ու ինքնուրույնության վրա աննախադեպ օրհաս էր կախվել, «երբ վաղն այլևս չէր երևում կամ չպետք է լիներ, և գիրը պետք է դառնար զորավոր միջոց կորցնելիքը գտնելու, մանավանդ պահպանելու և պաշտպանելու համար»[11]: Եվ ազգափրկիչ այդ գյուտը տեղի ունեցավ պետության ու եկեղեցու զորակցությամբ, գալիքի վտանգավոր հեռանկարից մտահոգ երեք մեծ հայորդիների՝ Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի և երանելի Մեսրոպ Մաշտոցի համագործակցությամբ: Այդ նրանց երախտիքով հավերժելու, քարքարոտ ճանապարհով վստահ անցնելու համար հայկազունները ստացան ինքնանորոգվող, ինքնակատարելագործվող, ինքնազորացվող լուսեղեն մի զենք՝ հայոց այբուբենը: Կա ավանդույթ, թե մեր գրագետ դարերի նախակարապետ Մեսրոպ Մաշտոցը հայոց առաջին դպրոցներից մեկը բացել է հայոց հյու-

սիս-արևելյան կողմանքում, հավանաբար՝ Խաղխաղ քաղաքում: Իսկ Ոսկեպարի լեռնաշղթայի կուրահայաց ծայրամասի կատարին նա կանգնեցրել և օրհնել է փայտյա խաչ՝ մեջը դնելով Պարսկաստանում Շապուհ արքայի կողմից քրիստոնեական հավատքի համար նահատակված, ուստի սրբացած Սարգիս զորավարի ատամներից մեկը: Հետագայում Կուրի աջափնյակի լայնատարած դաշտին իշխող սարի կատարին կառուցվում է եկեղեցի և դառնում նշանավոր ուխտատեղի՝ Դաշտի Սուրբ Սարգիս անվամբ*, ուր XIX դարում և XX դարի սկզբին բազմաթիվ ուխտավորներ են եկել նաև Հյուսիսային Կովկասից, Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից: 1838 թվին Սուրբ Սարգիս եկեղեցին իր միջոցներով սպիտակ քարով նորոգել է Կոթի գյուղացի Արզուման Տեր-Սահակյանը: 1918-ին՝ Անդրկովկասի անկախ հանրապետությունների ստեղծման ժամանակից, սրբատեղին մնացել է Ադրբեջանի տարածքում: Ավանդույթը նաև ասում է, թե այստեղ է գտնվում սուրբ Մաշտոցի գերեզմանը:

Հետաքրքիր է, որ հեղինակի մանկության և պատանեկության օրերին, երկրորդ աշխարհամարտի թոհուբոհի մեջ անհետ կորած կամ գերի համարվող իրենց զավակների փրկության հույսով, Իջևանի և Նոյեմբերյանի շրջանների մերձակա գյուղերի տատիկներն ու պապիկները՝ դեմքով դառնալով հեռու սարի կատարին երևացող սպիտակ Սուրբ Սարգսին, խաչակնքելով աղոթում էին. «Այ հրեղեն բոզ (մոխրագույն – Ռ.Ս.) ձիավոր Սուրբ Սարգիս, երեսս ոտիդ տակ, դու հասնես իմ գերի բալին, թրովդ փշրես բերդի դուռն ու ազատես անմեղ եսիրներին: Դա մենակ դու կարաս, մեռնեմ զորությանդ: Քո անունից մատաղն էլ իմ պարտքը լինի»: Նաև նկատենք, որ այս խաչը սիրելի ուսուցչապետը դրել է իր դարում դավանակից ու բախտակից երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի, ճիշտ սահմանագլխին, կարծես խորհրդանշելով երեք ժողովուրդների՝ լուսավորչության գործում ներդրած անդուլ ջանքերի՝ նրանց համար գրերի ստեղծման կարևորությունը, որը, նրա ընկալմամբ, եղել է Քրիստոսի հավատքի զորությամբ:

* Ըստ Վարդան Արևելցու հաղորդման, Սուրբ Սարգիսը գտնվել է Գագիկ Բագրատունի թագավորի կողմից շինված գավառում, «որ կայ ի գլուխս Գագայ եւ հայի դաշտն լայնանիստ եւ երկայնատարած»: Հենց այս պատճառով սրբավայրը նաև կոչվել է Գագա Սուրբ Սարգիս:

378-ին Հայաստանը ոչ միայն բաժանվեց, այլև բզկտվեց: Մեծ Հայքից անջատվեցին նրա ծայրագավառները: Սա հզորների կամքն էր: Չէ՞ որ միասնական Հայաստանը կարող էր հարմար պահի կապանքները թոթափել և, մեջքը շտկելով, վերականգնել Տիգրան Մեծի պետությունը, որն իր կամքն էր թելադրում թե՛ Հռոմին, թե՛ Պարսկաստանին: Գուգարքը ևս պոկվեց Հայաստանից և Վրաստանի կազմում միացվեց պարսկական նորահաստատ Կապկոի մարզպանությանը*: Սակայն Գուգարաց տերերը, համազգային խնդիրներ լուծելիս, շարունակեցին հանդես գալ մարզպանական Հայաստանի ավագների հետ: Երբ 449-ին պարսիկներն արքայական հրովարտակով հայերից քրիստոնեությունն ուրանալու, զրադաշտականություն ընդունելու պահանջ դրեցին, Արտաշատում համազգային վեհաժողովի հրավիրված 17 աշխարհիկ տերերի մեջ էր Գուգարաց Աշուշա բդեշխը: Ագաթանգեղոսն իր պատմության մեջ հայտնում է, որ ժողովականները՝ խիզախելով, «ո՛չ» են ասում բռնացող Հազկերտին: Սա ազատաբաղձ ցեղի ավագներին պատասխանատվության է կանչում Տիզբոն, որոնց մի մասին, նրանց հետ նաև Գուգարաց բդեշխին, պահում պատանդ: Գաղափարական (դավանանքի) հակոտնյան անխուսափելիորեն հանգեցնելու էր ռազմական լուրջ ընդհարման: Եվ դա տեղի ունեցավ 451-ի մայիսի 26-ին, Ավարայրի դաշտում, երբ վարդանանք իմացյալ մահով հաստատեցին հայոց լինելիության իրավունքը՝ որպես ազգ և քրիստոնյա: Իսկ մինչ այդ, նախորդ տարվա ամռանը Վարդան Մամիկոնյանը գլխավորեց հայերի և աղվանների ապստամբությունն ընդդեմ Պարսկաստանի, որը մտադրվել էր բախտակից և դավանակից ժողովուրդներին ռազմական զորությամբ ընկճել առանձին-առանձին: 450-ի ամռանը հայոց սիրելի սպարապետը Գուգարքի արևելյան սահմաններում և Կուր գետի ափերին դիմագրավեց հակառակորդին և Խաղխաղ քաղաքի մատույցներում ջախջախիչ պարտության մատնեց պարսիկ Սեբուխտի զորքին:

Այս ճակատամարտի մասին Մովսես Կաղանկատվացի պատմիչը հայտնում է, որ Վասակ Սյունեցուց տեղեկացված Սեբուխտը, հաշվի

* Արշակունյաց գահատոհմի անկումից հետո, մինչև Բագրատունիների թագավորության հաստատումը, Ձոր կամ Ձորոփոր և Կողբա գավառները պատկանում էին Տաշրաց (Տաշիրքի) նախարարական տոհմին, ուստի Տաշիր-Ձորագետի միասնության ավանդույթը շարունակվեց նաև հետագայում, Կյուրիկյանների թագավորության շրջանում:

առնելով «դարանագործ» հայի քաջալերանքները, չի գնում Ճորա պահակի կողմերը, այլ հավաքում է իր զորքի ամբողջ բազմությունը, արագությամբ գալիս, անցնում է Կուր մեծ գետը և հանդիպում Վարդանին Վրաստանի սահմանների վրա՝ Խաղխաղ քաղաքի դիմաց, որն այդ պահին Աղվանքի իշխողի ծմեռանոցն էր: Չնայած հակառակորդի բազմությանը՝ քաջ Վարդանն իր զորքին նախապատրաստում է ճակատամարտի: Ապա «հայոց քաջերը հարձակվում են աջ թևը ջարդելով շպրտում են ձախ կողմը և բոլորին սրի քաշելով, փռում են դաշտի երեսին: Մի մասին էլ փախուստի մատնում, գցում են անտառային ապահով վայրեր՝ Լուբնաս գետի հեռավոր դարուփոս գետեզերքի մոտ»[12]: Ուրեմն ճակատամարտը տեղի է ունեցել նաև Տավուշի մարզի տարածքում, այնուհետև շարունակվել Կուր գետի ձախափնյակում: Խաղխաղի ճակատամարտից հետո քաջ Վարդանը գրավեց Դերբենդի կիրճը և Հայաստանի համար ծանր օրերին նպաստավոր դաշն կնքեց ռազմաշունչ հոների հետ:

Իսկ Կովկասյան ռազմարշավի շարունակությունը մի գեղեցիկ ավանդազրույց է՝ կապված Տավշո աշխարհի հետ: Այնտեղ ասվում է, որ աշնանը, Հյուսիսային Կովկասից մայրաքաղաք Արտաշատ վերադառնալիս, Վարդան Մամիկոնյանն իր քաջերին հանգիստ է տալիս Աղստևի ծեքծեքուն բնության գրկում՝ գետի ձախափնյակի անտառապատ ժայռի ստորոտից բխող հորդառատ աղբյուրի մոտ: Պատիվներ է տալիս իր հերոսներին, փառաբանում Գողթան երգիչների շուրթերով և, ի նշան հաղթանակի, կաղնու մի դալար շիվ է տնկում մշտակարկաչ աղբյուրի ակին: Ժամանակի հոլովույթում տնկին մի հզոր ծառ է դառնում՝ սերունդներին փոխանցելով նախնյաց ազատաբաղձ ոգին ու ապրելու կերպը, որը հաղթելու ու նաև վասն ցեղի հավերժության նահատակվելու կամքով է լինում: Վարդանի կաղնին ժամանակին յուրօրինակ այցեքարտ էր Ակնաղբյուր գյուղի և Իջևանի շրջանի համար: Ծառը սրբացրած գյուղացիները նրան վերագրում էին բուժիչ հատկություններ: Կրոնի պաշտոնական արգելքի տարիներին Զորավարի կաղնին փոխարինում էր եկեղեցուն: Ծառի հսկա փչակում հավատացյալներն աղոթում էին, մոմ վառում, մատաղացու կենդանիներ պտտում նրա շուրջը: Իսկ սիրահար երիտասարդները, այցի գալով հերոսի ծառին, ՆՐԱ ներկայությամբ սիրո և հավատարմության խոստում էին տալիս: Ափսոս, որ ամեն բան անցողիկ է արևի տակ: Մեկ ու կես հազարամյակ բնության այլազան

տարերքներին դիմագրաված հոգնաբեկ նահապետը հանկարծ այլևս չդիմացավ հերթական կայծակնառատ փոթորկին, հրդեհվեց ու տապալվեց ահարկու դղրդյունով՝ անհուն տխրությամբ համակելով մարդկանց (նրանց կամքով հատուկ կառուցված ցանկապատի մեջ՝ որպես սուրբ մասունքներ, պահպանվում են կործանված ծառի ոստերն անգամ, սրբապղծություն համարելով նրա փայտն այրելը): Եվ, որպեսզի գալիք դարերում Քաջ Վարդանի հիշատակը դալարի և նրա Գործի ոգեկոչման լույսը չմարի, 1977-ի աշնանը, հայրենիք հերթական այցի ժամանակ, խոնարհված հսկայի հարևանությամբ նոր կաղնի ծառ տնկեց XX դարի հայ անվանի զորավարներից մեկը՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը: Սպարապետի այս ծառն արդեն լցվում է առինքնող զորությամբ և, անշուշտ, կապրի նախորդի պես երկար, ու հայոց անդաստանների արժանապատիվ հսկումի ոգին անդադար կշշնջա երրորդ ու չորրորդ հազարամյակներում:

Մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը, Տավուշի մարզի տարածքը զբաղեցնող գավառներում հավանաբար իշխել են ոչ անվանի նախարարական տոհմեր, որովհետև Արշակունյաց շրջանի իշխանությունները, չդիմանալով պարսիկների, ապա և արաբների հալածանքներին, կազմալուծվել էին, ուստի հիշատակության արժանի քիչ բան է մնացել նրանցից հետո: 378-ին Հայաստանից պոկված այս երկրամասը բռնակցված էր պարսից Կապկոհ մարզպանությանը: Այս կացության հետևանքով այնքան է թուլանում Գուգարքում իշխող նախարարությունը, իսկ նախարարությունները սովորաբար ունեին իրենց եկեղեցական վիճակները, որ երբեմնի ճոխ բդեշխության եպիսկոպոսությունը կորցնում է իր նշանակությունը: Դրան նաև նպաստում է VII դարի սկզբին հայ-վրացական եկեղեցական պառակտումը: Մի քանի դար Գուգարքը ենթակա էր Այրարատի վիճակին: VI-VII դարերից մեզ են հասել հոգևոր մի քանի շինություններ, վկայությունն այն բանի, որ այստեղ հայոց կյանքը շարունակվել է նաև Մեծ Հայքից անջատվելուց հետո և խաթարվել արաբական արշավանքների հետևանքով:

Այդ կառույցներից է VII դարին վերագրվող Լուսահովիտի կամ Մորո ծորո վանքի սուրբ Աստվածածին գմբեթավոր, քառախորան եկեղեցին, որի նախնական տեսքը չի պահպանվել, սակայն համարվում է Հայաստանի փոքր, խաչաձև գմբեթավոր հուշարձաններից մեկը:

Հավանաբար ավերվել ու ամայացել է արաբական տիրապետության շրջանում և միայն հետագայում՝ XII դարի վերջին և XIII դարի սկզբին, Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյանների կողմից հիմնանորոգվելով, դարձել է այս գավառի հնագույն և նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը: Մորո ձորո վանքի արձանագրություններն այնքան էլ շատ չեն, սակայն կարևոր են իրենց բովանդակությամբ, քանի որ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն վերականգնված վանքի, այլև ողջ գավառի և իշխանական տների պատմության մասին: Առանձնացնենք մեկը, որը փորագրված է արտաքուստ, եկեղեցու գմբեթի թմբուկի հարավային երեսին:

«Ի թուին ՈՒԽԶ (1197) ի ժամանակ երկուց եղբարց Զաքարէ եւ Իվանէ, շինեաց Իվանէ զվանք Մորո ձորո: Եվ ես՝ Նանա կամակից և աւգնական եղէ Աստուածածնի եւ միաբանեցա սուրբ ուխտս եւ պատուական հաւրս Գրիգոր: Եւ միաբանքս հաստատեցին ինձ տարին: Բ: ժամ զաւագ հինգշաբաթ աւրն եւ զհոգոյ գալուստն: Հաստատ է գիրս անուամբն Աստուծոյ»:

Արձանագրությունը պատկանում է ամիրսպասալար Սարգիս Մեծի դուստր, Զաքարեի և Իվանեի քույր Նանային կամ Վանենուն: Սա կինն էր Մածնաբերդի Աբաս իշխանի, որի անժամանակ մահից հետո Նանան նվիրվեց բարեգործության, ամուսնու հիշատակին կառուցեց Սանահնի միակամար կամուրջը, Հովհաննավանքի բուրգավոր պարիսպները, իր որդեգիր Մարգարեի հիշատակին կանգնեցրեց խաչարձանը: Եվ այդ շարքը սկսեց Մորո ձորո վանքում, որը վայելչորեն վերանորոգեց (1197 և 1213թթ.) Զաքարյան աթաբեկ Իվանեն:

Իսկ VI-VIIդդ. վերագրվող Ոսկեպարի սուրբ Աստվածածին եկեղեցին բարեբախտաբար պահպանել է իր նախաստեղծ կերպարը (հիմնանորոգվել է 1960-ական թվականներին): Կարմիր բազալտից կերտված շինության քառակուսի հատակագծով աղոթասրահի կենտրոնական ծավալը պսակված է գմբեթով: Թմբուկը ներսից և դրսից ութանիստ է: Հուշարձանի ճարտարապետական կերպարի պարզության, լակոնիկության և արտահայտչականության գրավականն են հարդարանքից գրեթե զուրկ ճակտոնների մոնումենտալությունը, մոնումենտալ պատերի հարթայնությունը: Գողտրիկ տաճարի ամբողջականությունը, նրա համաչափությունների կատարյալ ներդաշնակությունը վկայում են կառուցող ճարտարապետի մեծ վարպետության մասին: Ինչպես հներն են սիրել ասել, անանուն Վարպետը

Ոսկեպար գետի լուսափրփուր գոտուն նռնաքարե ակ է դրել: Սա Տավուշի մարզի կանգուն հնագույն հոգևոր շինությունն է:

Մինչև XIX դարի 60-ական թվականները սուրբ Աստվածածինը եղել է Ոսկեպար գյուղի գործող եկեղեցին, իսկ հետագայում, երբ կրկնվող անողորմ մալարիայի պատճառով գյուղը տոթակեզ ձորից տեղափոխվել է զովաշունչ սարալանջ, հենց եկեղեցու բակից իրենց բնակավայրն են հիմնել նստակեցության անցնող, մինչ այդ քոչվոր թաթարները: Գյուղը կոչվել է Աշաղի Ասկիպարա (Ներքին Ասկիպար, որովհետև նրանք՝ հայկական հողի մեջ ներս խցկվելով, Ոսկեպարից վեր ստեղծեցին նաև Վերին Ասկիպար գյուղը): 1980-ական թվականների կեսերից արդեն ազերի կոչվող թաթարների լկտի առաջխաղացումը կանխելու նպատակով, ս. Աստվածածնի հյուսիսային կողմի գոգավորությունում, հենց հայոց սահմանի եզրին սկսվեց Ոսկեպարի նոր՝ Վանքի թաղի շինարարությունը, որը կիսատ մնաց (ավերվեց) հայ-ադրբեջանական վերջին զինված հակամարտության հետևանքով: Հակառակորդի համար հարմար նշանակետ է եղել նաև սուրբ Աստվածածինը, սակայն, ինչպես հավատացած են ոսկեպարցիները, կանգուն է մնացել Բարձրյալի զորությամբ:

VII դարը հին Արևելքում սկսվեց ռազմաքաղաքական հզոր ցնցումներով, որոնց հետևանքով վերածևվեցին տերությունների սահմանները, ժողովուրդները ներքաշվեցին արյունահեղ նոր կռիվների մեջ: 628-ին, պարսից Խոսրով Փարվեզ արքայի մահից հետո, կարճ ժամանակում փլուզվեց երեկ Հայաստանին ուժացման շղթաներ պարտադրող Սասանյան Իրանը: Երկարատև կռիվներից ու ներքին պայքարից թուլացած էր նաև Բյուզանդիան: Իսկ այդ ժամանակ մի նոր ուժ էր բարձրանում Արաբական թերակղզու խորքից, որը շուտով տիրելու էր հարևան երկրներին և տնօրինելու դրանց ժողովուրդների ճակատագրերը: Իր նոր հավատի գաղափարախոսության պարզ և արաբներին հոգեհարազատ մտքերի քարոզով անապատաբնակներին շատ արագ իր դրոշի տակ միավորեց իրեն մարգարե հռչակած Մուհամեդը և նրանց անհավատների (ոչ մուսուլմանների) դեմ սրբազան կռվի մղեց: Հին Արևելքը դողում էր անողորմ արյունահեղությունից: 640-ի հունվարին արաբները մտան հարավային Հայաստան, իսկ հոկտեմբերի 6-ին գրավեցին շքեղ Դվին մայրաքաղաքը, կողոպտեցին, մարդկանց անգթորեն սրի քաշեցին, իսկ փրկվածներից 25 հազարին գերի տարան: Հայերը, որ երկրի մարզպանական

կառավարման շրջանում պահպանել էին «հայոց պետականության հիմնական կառույցները՝ հատկապես ավատապետական կարգը, նախարարության և հոգևորականության ինքնիշխանությունը, նրանց գործակալական պաշտոնները, իրավունքներն ու պարտականությունները»[13], ոչ միայն արաբներին արժանի հակահարված տվեցին, այլև պայքար ծավալեցին անկախ պետականության վերականգնման համար: Սակայն, անհավասար էին ուժերը: Դավանակից բյուզանդացիները, չգիտակցելով մոտեցող վտանգի ահավորությունը, արհավիրքի ծավալման ժամանակ շարունակեցին հայերին քաղկեդոնականություն ընդունելու պահանջներ ներկայացնել, ապա՝ հեռանալով Հայաստանից, բազմաքանակ մուսուլմանների դեմ մենակ թողեցին բարեկամ ժողովրդին: Հայերը հասկացան, որ անհնար է մենակ և փոքրաթիվ ուժով դիմակայել օրավոր զորացող արաբներին: Սրանք էլ, զրադաշտական պարսիկների պես, բոլորի վրա ճնշում են գործադրում՝ ասելով, որ «եթե կամավոր կերպով ընդունեք մեր կրոնը, պարգևների ու պատիվների կարժանանաք արքայի կողմից, և պետական հարկը ձեզ կգիջվի»: Իսկ, եթե մեկնումեկը չենթարկվի, մահվան կդատապարտվի, ապա կնոջն ու որդիներին կտարագրեն երկրից: Ի՞նչ անել՝ հարցին նախադեպը չունեցած ազգօգուտ պատասխան գտավ այդ պահին հայոց իշխանապետության գլուխ կանգնած Թեոդորոս Ռշտունին: Օգտվելով նպաստավոր իրավիճակից՝ նա նախ Հայաստանը հռչակեց անկախ, իսկ հետագայում, մեծ դիվանագետին վայել մտքով, չառաջնորդվեց վասն հավատի նույնության խարդախ Բյուզանդիային հավատարիմ մնալու հեղհեղուկ զգացմունքով, այլ իրավիճակի թելադրանքով, սառը դատողությամբ գերակայեց հայրենիքի շահը, կողմնորոշվեց դեպի դրության տեր այլադավան խալիֆայություն՝ ընդունելով նրա գերիշխանությունը: Դրա շնորհիվ, 652-ին կնքված պայմանագրով, Հայաստանը երեք տարով ազատվեց հարկ վճարելուց, կարող էր ունենալ 15-հազարանոց զորք, իսկ արաբները հայոց բերդերում զորք չէին պահելու: Սակայն շուտով մեծ թափով սկսվում են արաբա-բյուզանդական զինված ընդհարումները, և դրանից մեծապես տուժում է հայ ժողովուրդը, որի երկփեղկված ավագանու մի մասը ձգտում էր դեպի Բյուզանդիա, իսկ մյուսը հարմար էր գտնում աշխարհասասան արաբների հովանին:

VII դարավերջին ծավալվող իրադարձությունների կենտրոնում

հառնում է միջնադարյան Հայաստանի կրոնաքաղաքական նշանավոր գործիչներից մեկը՝ Սահակ Գ Ձորոփորեցին, որը մեր 1700-ամյա եկեղեցու պատմության մեջ ծնունդով Տավշո աշխարհից միակ կաթողիկոսն է ցայսօր: Վեհապետի ծննդյան թվականն անհայտ է: Ծնվել է Գուգարքի Ձորափոր (կամ Ձորոփոր) գավառի Արքունաշեն գյուղում, հավանաբար երբեմնի հզորությունը կորցրած նախարարական գերդաստանում: Աշակերտել է VII դարի հայ եկեղեցական-քաղաքական գործիչ, մատենագիր և մանկավարժ, Արագածոտնի սուրբ Աստվածածին եկեղեցու վանահայր Թեոդորոս Քռքենավորին, որը վանքին կից դպրոցում հայ պատանիներ էր կրթում: Սահակ Գ Ձորափորեցին նախ եղել է Ուտիքի Ռոտ Պարսյան Գավառի եպիսկոպոս: 677-ին ընտրվել է հայոց կաթողիկոս, նորոգել է խախտված կապը Աղվանից եկեղեցու հետ, նպաստել Աղվանից Իսրայել եպիսկոպոսի՝ հոներին քրիստոնյա դարձնելու քարոզչությանը: Աթոռակալությունն ընթացել է Հայաստանի նվաճման համար արաբա-բյուզանդական պատերազմների ու արշավանքների ծանր ժամանակաշրջանում: Բյուզանդական կայսր Հուստինիանոս 2-րդը՝ 693-ին գրավելով Հայաստանը, Ս. Ձորափորեցուն տարել է Կոնստանդնուպոլիս, նպատակ ունենալով նրա կամքն ընկճել և նրա միջոցով քաղկեդոնականություն պարտադրել Հայոց Առաքելական եկեղեցուն: Հուստինիանոսի գահընկեցությունից հետո հայոց հովվապետը վերադառնում է հայրենիք և շարունակում կաթողիկոսական առաքելությունը: Շուտով արաբներին հաջողվում է վերջնականապես գրավել Հայաստանը, ինչպես նաև Վրաստանն ու Աղվանքը, որոնք միացնելով իրար՝ կազմում են Արմինիա փոխարքայությունը՝ Դվին մայրաքաղաքով: Արաբական գերիշխանությունը նշանավորվում է նաև նրանով, որ Արմինիայի առաջին ոստիկան Աբդալլահը 702-ին ձերբակալում է քրիստոնեական հավատից չնահանջող, մուսուլմանական պարտադրանքը մերժող հայոց կաթողիկոսին և ուղարկում Դամասկոս: Այս բարբարոս հագարացին նաև մտադրվեց «իրենց հեծյալներով հանդերձ» մեջտեղից վերացնել հայոց աշխարհի նախարարական ազատախումբ տոհմերը: Նրանք խորհրդաժողով գումարեցին և որոշեցին հեռանալ երկրից, գնալ հունաց թագավորի մոտ: Արաբները սրան խիստ արգելք եղան և սաստկորեն հետապնդեցին հայրենիքից հեռացողներին: Մայր Արաքսի ափին՝ Վարդանակերտ գյուղի մոտ, տեղի ունեցավ ճակատամարտ: Աբդալ-

լահի զորքը ջարդվեց, որի հինգ հազար զինվորներից, Շուշան իշխանուհու (հավանաբար՝ Կամսարական) վեհանձն միջամտության շնորհիվ, փրկվեց ու մարդասիրաբար ապաքինվեց երեք հարյուրը: Պարտության անպատվությունը չէր կարող տանել ամբարտավան ոստիկանը, ուստի իր զորքերի հրամանատար Մահմետին հրամայեց նոր զորք հավաքել ու պատժիչ արշավանք ձեռնարկել Հայաստանի վրա՝ սրի քաշել, ավերել, ավարել ու գերեվարել: Երբ Հայաստանի նախարարները ստույգապես իմացան զորավոր թշնամու մոտալուտ գալու մասին, ինչպես ասվում է պատմության մեջ, նրան ընդառաջ ուղարկեցին Սահակ Գ կաթողիկոսին՝ արաբների «զորավարի հետ խաղաղության մասին բանակցելու և ընդունելու նրա հպատակության լուծը»: Երբ վեհափառը հասավ արաբական մայրաքաղաք Խառան, այնտեղ ծանր հիվանդացավ, բայց հասցրեց մահվանից առաջ իր վերջին խոսքը գրել Իսմայիլ զորավարին:

«Ես, ասում է, առաքված եմ քեզ մոտ իմ ազգի կողմից, իմ խորհուրդները քո առջև պարզելու, որ Հայաստանի նախարարներն ու ռամիկները միաբան խնդրում են քեզանից: Սակայն նա, որ կյանքի շտեմարանապետն է, ինձ վաղաժամ խլեց իր մոտ ու ժամանակ չտվեց հանդիպելու ու խոսելու քեզ հետ: Արդ, երդվեցնում եմ քեզ կենդանի Աստուծով և դաշինք եմ կնքում քեզ հետ, ըստ ձեր նախահայր Իսմայիլի հետ Աստծու կնքած ուխտի, որով խոստացավ տալ տիեզերքը ի ծառայություն և ի հնազանդություն, որպեսզի իմ ժողովրդին խաղաղություն տաս, և նա քեզ կհպատակվի հարկատվությամբ: Ետ պահիր քո սուրը արյունահեղությունից ու քո ձեռքը՝ ավարառությունից, և քեզ կհնազանդվեն (հայերը) իրենց ամբողջ սրտով: Իսկ մեր հավատքի հարցում, թող մենք հնարավորություն ունենանք պահպանելու այն, որին հավատացել և խոստովանել ենք, և թող ձերոնցից ոչ ոք չխոշտանգի մեզ՝ ստիպելով հավատափոխ լինել: Արդ, եթե իմ խնդրածը կատարես, Սերը կամրապնդի քո իշխանությունը և քո ցանկությունները կկատարվեն, և Տերը ամենքին կհնազանդեցնի քեզ: Իսկ եթե չկամենաս լսել իմ խոսքերը և հակառակ դրանց հարձակվես իմ երկրի վրա, Տերը քո մտադրությունը կցրի, քո ոտքերի ընթացքը չի հաստատի, քո զորքի սիրտը շուռ կտա, որպեսզի չկատարեն քո կամքը, ամեն կողմից քեզ համար նեղիչներ կհարուցի, և հաստատուն չի լինի քո իշխանությունը: Արդ, անտես մի առնի իմ խնդրանքները, և քեզ վրա կգան իմ օրհնությունները»[14]: Մահվան ան-

կողնում ահա այսպես, վասն Հայաստանի ու հայ ժողովրդի կյանքի ապահովության ու հավատի այրվելով սրբալույս մոմի պես, հանգչում էր հայոց 32-րդ կաթողիկոսը: Ղևոնդ պատմիչը նաև հայտնում է, որ Մահմետ զորավարը՝ հասնելով Խառան, անմիջապես ծանոթանում է Սահակ Ձորոփորեցու նամակին և այցի գնում հանգուցյալին: Զորավարը ողջունում է իր լեզվով, ձեռքը բռնում է՝ ինչպես կենդանի մարդու, նրան գովում՝ ինչպես քաջ հովիվ, որը նաև մահվան սնարին նվիրվածությամբ հոգացել է իր հոտի մասին, ապա խոստանում է սուրը ետ պահել անմեղ մարդկանցից և կատարել այն ամենը, ինչ-որ հայցել է հայրենասեր կաթողիկոսը: Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ չափազանցնելով իր նախորդի առաքելության արդյունքը, վկայում է, թե «նրա աղոթքներով մեր աշխարհին մեծ փրկություն ծագեց»:

Անշուշտ, Սահակ Գ կաթողիկոսն առաջին հերթին եկեղեցական հաստատակամ գործիչ էր: Նաև մտքի մշակ: Նա «իր ստեղծագործական ուժերի մեծագույն մասը հատկացրել էր Խաչի և Եկեղեցու տոներին նվիրված երգերի հորինմանը»: Իսկ նրա ստեղծագործությունների պսակը «էջ Միածինն ի Հօրե» սքանչելի շարականն է, որն այսօր էլ հավատավոր հայորդին սրտաբուխ երգում է իր լույսի խորաններում (ներկայացվում է ժամանակակից ուղղագրությամբ):

Էջ Միածինն ի Հորե
Եվ լույս փառաց ընդ Նմա:
Ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց
Տեսյալ ըզլույս մեծ
Հայրապետին Գրիգորի,
Պատմեր ցնծությամբ հավատացյալ արքային:
Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսո,
Քանզի ի սմա ծագյաց մեզ լույս
Ի Հայաստան աշխարհի[15]:

Սակայն հայոց կաթողիկոսի դիվանագիտական առաքելության շնորհիվ արաբների հերթական ռազմարշավից հրաժարվելը ընդամենը մի երանելի պահ էր դառնաղետ իրադարձությունների շարքում: Խալիֆաթի զորքերը նաև նախկին բացթողածը ձեռք գցելու մոլուցքով շարունակում են իրենց հարձակումները, հայերը հեշտությամբ չեն ենթարկվում: Ավելին, հաճախ նաև չարաչար պարտու-

թյան են մատնում բռնակալին: Արաբները հասկանում են, որ իրենց հաջողությանը հիմնական խոչընդոտ են հայոց միաբանված նախարարները, որոնք փաստորեն Հայաստանի անկախության գաղափարի կրողներն էին և համաժողովրդական պայքարի կազմակերպիչները: Ուստի Խալիֆաթը ծրագրում է հրեշավոր մտահաղացում՝ գլխատել Հայաստանը: Եվ 705-ին ամիրապետի հրամանով, մարդահամարի և ռոճիկ վճարելու պատրվակով, հրավիրվում են դավին անտեղյակ նախարարներ, ապա՝ նշանավոր այրերից 1200-ին լցնելով Նախճավանի ու Խրամ ավանի եկեղեցիները, արգելափակեցին և «հրկիզեցին ու տոչորեցին աստվածային խորանի կամարների տակ»[16], իսկ հրկիզումից փրկվածներին ենթարկեցին դիվային խոշտանգումների: Սա անչափելի ծանր հարված էր հայոց մտավոր և ֆիզիկական զորությանը, որովհետև «հայոց աշխարհը թափուր մնալով նախարարական տոհմերից, գայլերի մեջ մնացած ոչխարների նման եղավ», քանզի զրկվեց իր պայքարի ազգանվեր կազմակերպիչներից: Դրա պատճառը պատմիչ Թովմաս Արծրունին (IX-Xդդ.) բացատրում է հայոց մեծերի անմիաբանությամբ. «թեպետ պես-պես կտտանքներով նեղվեցինք ու չարչարվեցինք իսմայելական ազգի արաբական տերության զորքից, բայց քիչ չափով և կարճատև ժամանակ: Եվ ավելի հաճախ մեզանից էին հարվածներ ստանում, քան՝ նրանցից, քանզի դեռ միաբան, միակամ ու համերաշխ էին ապրում Հայոց իշխաններն իրենց ազատազորքի բազմությամբ հանդերձ... Իսկ երբ միաբանության մեջ սպրդեց երկպառակությունը, հեռացավ գնաց աստվածատուր զորության շնորհը»[17]: Իհարկե, հիմնական պատճառը հայոց անմիաբանությունը չէր, այլ այն հզոր, կործանարար ուժերն էին, որոնք մեր հայրենիքի վրա գալիս էին Միջին Ասիայից, Հյուսիսային Կովկասից, Մերձավոր Արևելքից, ուժեր, որոնց միայնակ չէին կարող դիմագրավել ու երկրի պետական անկախությունը պահել փոքրաքանակ հայերը:

Արաբները շատ արագ նաև համոզվեցին, որ Հայաստանը վերջնականապես հնազանդեցնելն անհնար է՝ առանց ժողովրդի ոգին ընկճելու: Իսկ հայերի միասնությունը պահող մյուս զորավոր նեցուկը ազգային եկեղեցին էր՝ հանձին իր հայրենասեր սպասավորների, որոնք քրիստոնեական քարոզի մեջ հավատացյալներին միաբանության, ազգապահպանության կամքով էին տոգորում: Ուստի Մուհամեդի զինզկիր «առաքյալները» հայերի հավատափոխությունը

դարձրին կարևոր նպատակ: Նրանց ասպատակը քանդում էր ոչ միայն գյուղերն ու քաղաքները, այլև վանքերն ու եկեղեցիները: Ապա իրենց հավատին գնալու համար շողոմ խոսքեր էին շռայլում, ապա կաշառքներ՝ պարգևներ, գանձեր, ինչք, գյուղեր, կալվածքներ ու պաշտոններ էին խոստանում գերի ընկած իշխանազուններին ու հոգևորականներին: Երբ ստոր փաստարկները չէին ազդում, արաբ պետերը ի հայտ էին բերում իրենց իսկական դիվային կերպարը: Ոչ մուսուլմանի համար բախտավորություն էր համարվում սրի մեկ հարվածով մեռնելը: Մուհամեդի հավատքից հրաժարվողներին ենթարկում էին գեհենական փորձության, գելարանի տանջանքների ու անլուր կտտանքների: Արաբներն այսպես վարվեցին նաև Հայոց սպարապետ Սմբատի և Ուտի գավառի Տուս (Տավուշ - Ռ.Ս.) գյուղի տեր, սևորդիների ցեղի ավագ Ստեփանոս Կոնի ու այլ իշխանների հետ, որոնց նահրամիտ Բուղա ոստիկանը 855-ին տարել էր Բաղդադ:

Արաբների ավերիչ ռազմարշավներին ու սահմռկելի ճնշումներին հայերը պատասխանեցին նորանոր ժողովրդական, հուժկու ապստամբություններով: Դեպի մայրամուտ էր գլորվում ներքին պառակտումներից ու արտաքին հարվածներից թուլացած խալիֆայությունը, իսկ հայերը շարունակում էին անկախ պետականության վերականգնման ոգորումները: Օգտվելով իրավիճակի նպաստավոր պահերից՝ նախ իրենց կորցրած հողատիրական իրավունքները սկսեցին վերականգնել և ապա երկրի կյանքում վճռական դեր կատարել մի շարք նշանավոր նախարարական տոհմեր: Իսկ դրանցից գերիշխող դիրք զբաղեցրին Բագրատունիները, որոնք կարողացան քաջությունը, երկրի ուժերը համախմբողի ու կազմակերպողի ունակությունները զուգակցել դիվանագիտական հմտության հետ և իրենց համար ժառանգական դարձրին Հայոց իշխանի պաշտոնը:

Բագրատունիներն ասպարեզից վերացած նախարարական տների տիրույթների ձեռքբերման հաշվին իրենց իշխանությունը հաստատեցին Հայաստանի զգալի մասում՝ դառնալով երկրի գերագույն կառավարիչները: Վերջապես, ռազմական անհաջողություններ կրած և քայքայման եզրին հասած խալիֆայությունը 855-ին, Աշոտ Բագրատունու պահանջով, իր զորքերը դուրս բերեց Հայաստանից և հարկադրված «Հայոց իշխանաց իշխան» (բաթարիկ ալ-բաթարիկա) պատվանուն շնորհեց Աշոտին: Այսինքն, նրան ճա-

նաչեց Արմինիա փոխարքայության (Հայաստան, Վիրք, Աղվանք) գրեթե տիրակալ, որովհետև Դվինում նստած ոստիկանին զուտ վերահսկողի դեր էր վերապահվել: Բագրատունիների հեղինակությունն էլ ավելի բարձրացավ մարտադաշտում տարած մի շարք հաղթանակների և Աշոտի կողմից արաբների՝ հայ իշխաններին կոտորելու նոր դավադրությունը բացահայտելու, դավադիրներին զինաթափելու շնորհիվ: Բագրատունյաց ավագի փաստացի իշխանությունը երկրում արդեն այնքան իրական էր, «որ հայ հասարակության բոլոր խավերում հասունանում է Աշոտին թագավոր հռչակելու և անկախությունը վերականգնելու գաղափարը»[18]: Մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցը դիպուկ նկատել է այդ դարերի հայոց քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևորագույն փոփոխությունները՝ կապված Մամիկոնյան և Բագրատունյաց նշանավոր տոհմերի հերթագայության հետ: Մամիկոնյան տոհմը, որ մի քանի դար հայ ազգի բաբախուն սիրտն էր և հայրենապահի իր դրոշին ուներ «բռնության դեմ՝ բռնություն, արյան դեմ՝ արյուն, ուժի դեմ՝ ուժ» նշանաբանը, աստիճանաբար իր տեղը զիջեց ռազմական զորությունը նուրբ դիվանագիտության հետ զուգակցող ընդդիմախոսի: Երբ պետականությունից զրկված հայոց փոքր ածուն մնացել էր արաբների աշխարհակալ նոր հեղեղի բերանում, պետք էր մտածել նրա ֆիզիկական գոյատևման, ազգային մշակույթի պահպանման, գուցե և վերահառնումի՝ թվացյալ անհնարինը հնարավոր դարձնելու մասին: Մամիկոնյանների հաջորդը հայոց կյանքի երկնակամարում դարձավ Բագրատունյաց տոհմը, որի պայազատները, շարունակելով արիաբար կռվել մարտադաշտերում, հետագայում սակայն ստիպված էին ձեռքը կտրել դաշույնից և դնել ճակատին՝ մտածել լռությամբ տոկալու, ելքեր որոնելու մասին: Դա էր պահանջում հասարակական շահը: Եվ, ինչպես պատմաբան Ռաֆայել Մաթևոսյանն է գրում, «Խորաթափանց Բագրատունիք համակիր չէին ցնցումների, ընդունակ էին անգամ չարիք գործել՝ ավելի մեծ չարիք կանխելու համար»: Բարեբախտաբար, վճռական պահին հայ աշխարհիկ և հոգևոր տերերը հանդես են բերում ցանկալի միասնականություն և, Հայոց իշխանաց իշխանի «քաջամարտիկ պերճությունը տեսնելով, բոլորը միաբերան խորհուրդ են անում՝ նրան թագավոր նշանակել իրենց վրա»: Եվ այդ որոշումը հաստատելու խնդրանքով դիմում են ամիրապետին (խալիֆին): Երբ հայտնի է դառնում հայոց մեծերի կամքը, Հայաստանն իրենց կողմ պահելու համար Աշոտ Ա Բագրատունու թագն ու գահը ճանաչում և թագավորավայել նվերներ են ուղարկում թե՛ արաբ, թե՛ բյուզանդացի միապետները: Թագադրումը տեղի է ունենում 885 թվականի օգոստոսի 26-ին, Բագարանում: Այդ համազգային տոնախմբությամբ կարծես վավերացվում էին հայոց անկախ պետականության անկումից հետո, դրա վերականգնման համար, հայ ժողովրդի չորս ու կես դարյա անդուլ, արյունաքամ պայքարի ցանկալի արդյունքները:

«Իսկ հետո,- բանիբուն և քաջակորով Աշոտ Ա թագավորի անմահ գործերի մասին պատմիչը հայտնում է,- նա իր պետության աշխարհում պատրաստում է մեծ ու երևելի կարգեր, բարեկարգում է տների, ազգերի, քաղաքների, շեների, դաստակերտների հորինվածքը, հարթ ու հավասար կարգեր հաստատում լեռնականների և տաք ու բարեխառն դաշտավայրերում բնակվողների համար, բոլոր տափարակ տեղերում դնում ագարակներ և գոմեր, զարդարում բարեխառն վայրերի այգիներն ու բուրաստանները... Եվ նոր տրված թագավորության մեջ նա այդպես բարձրացնում էր Թորգոմյան ազգը: Եվ, ապա ձեռք գցելով հյուսիսային կողմերի՝ Մեծ Կովկասի ծործորների վրա, հովիտներում ու երկայնագոգ ձորերում բնակված ազգերին իրեն է ենթարկում, նաև ամբողջությամբ իր ազդեցության տակ է գցում Գուգարքի խռովարար ժողովրդին ու Ուտի գավառի ավազակային մարդկանց՝ նրանցից վանելով մարդադավ ավազակությունը*, բոլորին դարձնում օրինավոր ու հնազանդ և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ կարգում»[19]: Հենց այդ ժամանակից իրադարձությունների բուռն ոլորտ են ընդգրկվում նաև Մեծ Հայքի նախկին Գուգարք աշխարհի՝ ներկայիս Տավուշի մարզի, տարածքը զբաղեցրած գավառները, որոնք պատմագիրների մոտ արդեն անվանվում են Ձորափոր կամ Ձորագետ, Ուտիք, Սևորդյաց գավառ, Կայենո (Կայան)**

* Անշուշտ, Հովի. Դրասխանակերտցու խոսքը վերաբերվում է Տավուշ, Հախում, Աղստև գետերի ներքնագավառներում IX դարի սկզբից Հյուսիսային Կովկասից վերաբնակեցված սևորդիների ցեղին, որը, քրիստոնեություն ընդունելով, արագ ձուլվեց բնիկ հայերի հետ:

** Հնում բանակի կայազորների գտնվելու վայրերը կոչվել են «կայենականք», այսինքն՝ զինվորականների կայանելու տեղեր: Այդպիսի մի վայր է եղել նաև Աստևի հովտի այն հարմար անկյունը, որն այստեղ կառուցված անառիկ բերդի անունով սկսել է կոչվել Կայան կամ Կայեն գավառ:

գավառ, Տավշո գավառ, Միափորի գավառ (Գետիկի հովտում), Գագա բերդի և Մահկանաբերդի իշխանություններ:

Բագրատունիների* գահակալությունը սկսվում, միայն խաղաղության և արարումի երջանիկ պահերով ընդհատվելով, շարունակվում է երկրի միասնությունը քայքայող ներքին ուժերի ընդվզումների և արտաքին չդադարող արհավիրքների դեմ հաճախ ողբերգական ծայրահեղությունների հասնող պայքարի պայմաններում: Գահակալները ստիպված էին սրընթաց ռազմարշավով, զենքի ուժով իրենց տիրապետությունը վերահաստատել նախորդ թագավորի մահից հետո հայոց պետությունից հեռացած իշխանների գավառներում և արյունահեղ մարտեր մղել արաբների և բյուզանդացիների դեմ: Հայոց պետականության ամրության, իրական անկախության հասնելու հիմնական կռվանը մնում էր մարտնչելու կամքով տոգորված ռազմական ուժը: Ուստի Բագրատունյաց թագավորները հայոց սպարապետին ենթակա զորքի թիվը հասցրին 100 հազարի, որի մեկ երրորդը հարվածային ուժն էր՝ այրուձին: Ապա վերականգնվեցին արաբների տիրապետության ժամանակ ավերված բերդերը և կառուցվեցին նորերը, որովհետև այն դարերում նման ամրություններով էր հնարավոր հուսալի պաշտպանություն կազմակերպել, թշնամու առաջ փակել տերության սահմանները, խափանել և կասեցնել հակառակորդի հարձակումները, պաշտպանել մերձակայքի խաղաղ բնակչությանը և ժամանակ շահել հակահարձակման նախապատրաստության համար: Ամրացվում են նաև հայկական թագավորության հյուսիս-արևելյան սահմանները: Նորոգվում և կառուցվում են Կայան, Կայծոն, Կածարեթ, Տերունական, Տավուշ, Երգեվանք և Գագա բերդերը: Հետագայում կառուցվում են Նոր բերդը, Մածնաբերդը, Մահկանաբերդը, Խալինջաքարի, Գավարգինի, Թանիկի, Բուդուրի ամրոցներն ու պաշտպանական այլ շինություններ:

Քարտեզն ուշադիր դիտողը կնկատի, որ դրանք պաշտպանական նույն համակարգի առանձին օղակներն են՝ կոչված հակառակորդի առաջ փակելու Խնձորուտ, Տավուշ, Հախում, Աղստև, Կիրանց, Ոսկեպար և Կողբ գետերի հովիտների մուտքերը դեպի Հայաստանի կենտրոն: Դրանք հիմնականում կառուցված են մի քանի կողմից զառիթափ լանջերով ժայռերի կատարներին կամ բարձրագահ սարավանդների եզրերին և կապ են ունեցել տեսողական ազդանշանների՝ հիմնականում կրակի լույսի և ծխի միջոցով: Այդ տեսակետից բացառիկ նշանակություն է ունեցել Կուր գետից 15-16 կիլոմետր դեպի հարավ՝ Ոսկեպար գետի ձախափնյակի ճիշտ հարթության մեջ, հրաշքի պես վեր խոյացող Գավարգին կամ Քավազին ժայռը: Հակառակորդի համար այնգործնականում եղել է անմատչելի՝ վերելքի աննպաստ արահետի պատճառով, որի երթուղին կարող էին իմանալ սահմանափակ թվով յուրայիններ: Ահա, Գավարգինի կատարից ափի պես բացված շրջակայքին օրնիբուն հսկող դետքերը շատ արագ նկատել են հեռվից մոտեցող հակառակորդին և անհապաղ բորբոքել ազդանշանի խարույկը: Իսկ սովորաբար ամպ չտեսնող Գավարգինի կատարը լավ տեսանելի է Խալինջաքարից, Գագա բերդից, Մահկանաբերդի պահակակետերից, Կայծոնից, Բուդուրից և Նոր բերդից: Ազդանշանը Կայան բերդին է փոխանցվել Կայծոնից: Իսկ Նոր բերդը նման կապ է ունեցել Հախում գետի աջափնյակում գտնված բերդի (հավանաբար՝ պատմիչների ասած Տերունականի) հետ, իսկ այնտեղից ազդանշանը փոխանցվել է Կածարեթ ամրոցին և ապա Տավուշ բերդին:

Աշոտ Ա-ն դրեց հայոց նոր պետության հիմնաքարը, նրա որդի Սմբատը քսանչորս տարվա անդուլ պայքարով շարունակեց կերտել այդ կառույցը, որը պիտի ավարտեր մյուս Աշոտ թագավորը, որը կոչվեց Երկաթ: Սմբատը, գահակալության սկզբում ռազմարշավ ձեռնարկելով, իր դիրքերն ամրապնդեց Սև ծովի ափերին և Վիրքում, ընդհուպ մինչև՝ Ալանաց դուռը: Ապա, այնտեղից վերադառնալով հարավ, հայոց թագավորության արևելյան սահման հաստատեց

* Պատմաբան Ռաֆայել Մաթևոսյանն իր «Բագրատունիներ. պատմա-տոհմաբանական հանրագիտարան» (Երևան, 1997) աշխատությունով բարի գործ է կատարել՝ առաջին անգամ ստեղծելով նման բնույթի գիրք: Նա, ձգտելով ընդգրկել բոլոր հանգույցային, կարևոր հարցերը, միաժամանակ գտնում է, որ հնարավոր են բացթողումներ: Մեր կարծիքով, դրանք երկուսն են: Ժամանակի անցուդարձի ականատես պատմիչը (Հովհաննես Դրասխանակերտցի, «Հայոց պատմություն», Գ. Թոսունյանի աշխարհաբար թարգմանությամբ, Երևան, 1996) երեք անգամ նշում է, որ Սմբատ Ա-ն ունեցել է Սահակ անունով եղբայր, իսկ մեկ անգամ տալիս վերջինի տղայի՝ Սմբատի, անունը (էջեր 185, 189, 239): Ուրեմն, 1-ին բաժնում Աշոտ Ա Հայոց թագավորի որդիների (Դավիթ, Շապուհ, Սմբատ Ա) շարքում պիտի դրվի Սահակը, որն, ըստ պատմիչի, այդ իրադարձությունների ժամանակ արդեն հանգուցյալ էր և հայտնի չէ, թե մինչ մահն ինչ պաշտոններ է վարել տերության մեջ: Հարկ կլինի Բագրատունիների տոհմածառում տեղ տալ նաև վաղամեռիկ Սահակի Սմբատ զավակին, որը հավանաբար զոհվել է արաբ ոստիկանի սրից:

Կուր գետը՝ այդ պահին Ուտի կոչվող գավառի մեջ մտնող Հունարա-կերտ, Տուս (Տավուշ – Ռ.Ս.) և Շամքոր քաղաքներով: Այդպիսով ազգային կյանքի ոլորտ ընդգրկվեցին Հայաստանի 387 թվականի բաժանումից հետո նրանից պոկված հյուսիս-արևելյան գավառները: Սակայն պետության կայունությունը խախտվել սկսեց նորից: «Քանզի դառնության արմատը,- եզրակացնում է պատմիչը,- որը երբեմն Տերը խլեց հայոց տնից, կրկին ճյուղավորվելով, տնկվեց մեր իմանալի այգիներում՝ վերընձյուղվելով փշախեղդ մացառներում եղծելու ու ապականելու համար»[20]: Բանն այն է, որ իրենց «աշխարհներում» ինքնուրույն թագավորիկներ հիշեցնող ավատատերերը, որոնք թագավորի և կենտրոնական «իշխանության գոյությունը շատ էլ անհրաժեշտ ու ցանկալի չէին համարում», հաճախ դրսևորում էին բացահայտ անհնազանդություն, բանը հասցնում զինված ընդհարման: Աննպատակ վատնվում էին երկրի առողջ կենսահյութերը: Միասնության մեջ խրված այդ «սեպի» պատճառով՝ որպես անբուժելի հիվանդություն, հաճախ օտարների օժանդակությամբ, ահագնանում էր ազգային ուժերը տարանջատող ճեղքը: Հանձինս եսակենտրոն իշխանների՝ իրենց նպատակների իրականացնողներ էին գտնում Հայաստանի թուլությամբ կամ չգոյությամբ շահագրգիռ հզոր հարևանները: Հակառակորդը հայոց օրինական թագավորի դեմ էր հանում ոչ միայն անհնազանդ իշխաններին, այլև թագավորական տան պայազատներից մեկին՝ երկրի մի մասի վրա թագավորեցնելով: Բաժանում էին, որ տիրեն:

Վասպուրականի Արծրունիների զորեղ իշխանությունը, որ նոր թագավորության հաստատման սկզբից հավակնում էր գահին, այն ստանալու խնդրանքով դիմում է խալիֆին: Արաբ միապետը Արծրունյաց մեծ իշխան Գագիկին ճանաչում է թագավոր, նրան հակադրելով համընդհանուր ճանաչման արժանացած Բագրատունիների գահատոհմին: Դրանով չբավարարվելով՝ Ատրպատականի Յուսուֆ ամիրան՝ Վասպուրականի Գագիկ և Գուրգեն իշխանների աջակցությամբ, 909 թվականին ներխուժում է Հայաստան: Սմբատ թագավորն արաբների ու դավաճան հայ նախարարների դեմ մեծ զորք է ժողովում՝ տալով իր Աշոտ և Մուշեղ որդիների ձեռքը: Ճակատամարտը տեղի է ունենում Արագածոտնի Նիգ գավառի (ներկայիս՝ Ապարանի ենթամարզ) Ձկնավաճառ վայրում: Թագավորի դրոշի տակ մարտադաշտ են մտնում նաև պետության հյուսիս-արևելյան գավառների

կռվողները, նրանց հետ՝ Ուտիքում հաստատված սևորդիները, որոնք առանձին զորամաս ունեին հայոց բանակում: Թագաժառանգները, հատկապես՝ սավառնաթև արծվի նման «օդում սլացող», մարտական գործի մեջ փորձված Աշոտը, կռվում են քաջաբար: Սակայն վճռական պահին ուտիքցիների զորքը, լքելով մարտական բնագիծը, հեռանում է ասպարեզից: Ապագա թագավոր Աշոտ Բ-ն փորձում է մարտադաշտ վերադարձնել դասալիքներին: Սակայն, ապարդյուն: Սևորդիների դավաճանության պատճառով հայոց զորքը պարտություն է կրում: Ձոհվում է գրեթե պատանի Մուշեղը: Արաբներն անողորմ ասպատակություններ են սկսում երկրում, որի դեմն առնելու հույսով ծերունազարդ Սմբատ Ա-ն հանձնվեց արաբ ոստիկանին, որն ուխտադրժորեն գլխատեց հայոց թագավորին և Դվինի հրապարակում բարձրացրեց խաչափայտի վրա: Եվ, ինչպես ժամանակագիրն է պատկերավոր ասում, օրվա կեսօրին գիշերվա նման մութը, մեգը, մառախուղն ու աղջամուղջի խավարը պատեցին, պաշարեցին Ասքանազյան ազգին:

Հոր եղերական մահից հետո նրա գործն արժանապատվորեն շարունակում է իր վառ հայրենասիրության, անբեկանելի կամքի, հաղթական ճակատամարտերի ու անձնուրաց քաջության համար երախտապարտ ժողովրդից «Երկաթ» պատվանունով մեծարված թագաժառանգ Աշոտը, որի կերպարը գեղարվեստական մարմնավորում է ստացել Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում: Երիտասարդ թագավորը՝ իր շուրջ համախմբելով հայրենասեր ուժերին, քայլ առ քայլ հասնում է հայոց անկախ պետականության գերնպատակին, որի համար նրան հարկ եղավ անցնել իր նախորդների փշոտ ճանապարհով՝ անդադար պայքար մղել արտաքին թշնամու և կենտրոնախույս ներքին ուժերի դեմ: Արաբներին պարտության մատնելով երկրի տարբեր կողմերում, հայտնում է պատմագիր կաթողիկոսը, իր հարազատ եղբայր Աբաս իշխանաց իշխանի հետ Աշոտ թագավորն օդասլացի նման չվում, գնում է Գուգարք, և գրավելով այն ու իր տերության ամրոցները՝ գցում է իր հպատակության տակ: Ապա, հանկարծակի ու մեծ արագությամբ, նաև Վրաստանի մայրաքաղաք Տփխիսում սաստիկ ջարդ է տալիս արաբներին: «Եվ լսելով, որ իսմայելյան զորքը թաքնվել, նստել ու դադար է առել Աղստևի ապահով ու խոր ձորերում, նա այնուհետև, իր զորքից ընտրելով մոտավորապես երկու հարյուր մարդու, գնում հարձակվում է

հագարացու զորքի վրա, մեծ կռիվ տալիս, նրանց բոլորին սրի քաշում և առ ու ավարով վերադառնում է իր բանակը... Այնուհետև, այն ապականողներն այլևս չհարձակվեցին նրա տերության վրա»[21]:

Սակայն այս խաղաղությունը ևս կարճ է տևում: Խալիֆաթը հայոց նորընծա Աշոտ Բ (Աշոտ Երկաթ) թագավորին չէր ների բյուզանդական կողմնորոշման համար, և շուտով Հայաստանը մատնեց նոր արհավիրքների: Սմբատ Ա-ի ժամանակակից, արաբների կամքով, հանձին Վասպուրականի մեծ իշխան Գագիկ Արծրունու, Հայաստանն ուներ ազգային միասնությունը խաթարող զորավոր ուժ, սակայն հագարացին չբավարարվեց օրինական Բագրատունի թագավորին մեկ այլ թագավոր հակադրելով: Խալիֆաթն Աշոտ Բ-ի դեմ հանեց հորեղբոր որդի սպարապետ Աշոտ Շապուհյանին՝ սրան ևս կարգելով Հայաստանի թագավոր: Երբ Աշոտ Երկաթը և նրա եղբայր Սմբատը, որին Աշոտը կարգել էր հայոց իշխանաց իշխան, հանդես էին գալիս միասնաբար, ուղեկցում էին հաղթանակները: Սակայն, երբ Աբասն իր աներ, Վրաց Գուրգեն իշխանի հետ դավ է նյութում թագավոր եղբոր դեմ, ապա ինչպես պատմիչն է հաղորդում, «դղրդալով սասանվեց մեր ողորմելի աշխարհը մերոնց պատճառով», կենտրոնախույս իշխանների անհնազանդությունը նորից ծայրահեղության հասավ: Դրանցից էր նաև Տավուշի մարզի մեծ մասին իշխած քաջ և խելացի Սահակ Սևադան: «Սա միաժամանակ տիրեց Գարդմանին, Քոսա և Փառնա (Քուստ-ի Փառնես կամ Փառիսոս - Ռ.Ս.) գավառներին,- հայտնում է մի այլ պատմիչ,- այլև ամբողջ Ջորագետի (խոսքն Աղստևի միջին հոսանքի շրջանը զբաղեցրած Կայան կամ Կայեն գավառի մասին է - Ռ.Ս.)* ավազակապետների իշխանը դարձավ ու

* Տես Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Ջորագետ, Երևան, 1982: Գիտական փաստերի մանրակրկիտ վերլուծման և համադրման շնորհիվ հեղինակն իր այս աշխատության մեջ ապացուցում է, որ Մեծ Հայքի Արշակունիների և մարզպանական ժամանակաշրջանի Ջորափոր գավառը հետագայում սկսել է կոչվել Ջորագետի, ապա՝ *Կայան* կամ *Կայենո* գավառ, որի նշանավոր բերդը եղել է Աղստև գետի ձախափնյակի ժայռերից մեկին հառնող Կայան բերդը: Գիտնականի տեսակետը միանգամայն ամրապնդվում է նրան անհայտ երկու վավերագրերով: ա) «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» աշխատության մեջ (Երևան, 1988, էջ 340) ասված է. «Արդ գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս *ի գաւառիս Կաենո, ի ձորս որ կոչի Միափոր,* ի վասն Զարմանազանից, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի, յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի Աղուանից կաթողիկոսի»: Մենք գիտենք, որ Միափորի ձորը ներկայիս Գետիկի հովիտն է, որը եղել է Կայան

հմուտ եղավ գրագիտության ու իր տան մեջ ուսուցիչներ նշանակեց: Սրա դեմ մեծ ջանքերով ու հնարներով պայքարեց հայոց Սմբատ թագավորը, բայց նրան չկարողացավ շեղել իր մտադրություններից»[22]:

Ապագայում երկրի արևելքում հայոց միասնությանը խոչընդոտող այդ կնճիռը հարթելու փորձված ուղի ընտրեց ամուրի թագավորը: Աշոտ Երկաթն ամուսնացավ Սահակ Սևադայի դստեր հետ՝ կարծես վերացնելով թագավորության առջև ծառացած սպառնալիքներից մեկը: Իսկապես, Գարդմանա տերը դստեր ճոխ հարսանիքից հետո զորք է տալիս թագավոր փեսային՝ արաբների կողմից թագավոր կարգված Աշոտ Շապուհյանին ճնշելու համար: «Եվ ապա իր հետևից նրան զինելով՝ իր ամբողջ զորքով գնում է Ուտի գավառ՝ հնազանդեցնելու Մովսեսի բիրտ ապստամբությունը, որին հենց ինքն էր կանգնել իշխան և հրամանատար Ուտի գավառի այն վայրենի ցեղերի վրա»[23]: Ըստ պատմիչի հաղորդման փեսան և աները ռազմարշավով արևելքից գնացել են արևմուտք՝ Մովսեսի տիրապետության տակ եղած Տավուշի, Կենաց, Հախումի լեռնաշղթաներն ընդգրկող տարածքները, ուր բնակված էին «վայրենի ցեղերը»՝ հյուսիսից եկած սևորդիները, որոնք շուտով լուծվեցին հայերի մեջ: Աշոտ Երկաթի հորդորները Մովսեսին՝ հնազանդ և խաղաղ ապրելու մասին, չեն ազդում: Հանկարծակի հարձակման սիրահար թագավորն անսպասելի հարվածով ցանուցիր է անում Մովսեսի զորքերը,

(=Կայենո) գավառի կազմում: բ) 1995-ի ամռանը Կայան բերդից երեք կիլոմետր արևմուտք՝ այժմ Վերին Դանաղռան կոչվող հնավայրի աղբյուրի մոտ, մեր կողմից հայտնաբերված թևավոր խաչը, որը 1996-ի օգոստոսին սխալմամբ տեղափոխվել է Ակնաղբյուր գյուղ և տեղադրվել Վարդան Մամիկոնյանի կաղնի ծառի մոտ, կարելի է համարել Կայան բերդի (նաև գավառի) «ծննդյան վկայականը», մերժումը՝ գավառն այլ միջավայր տեղափոխելու տեսակետի: Կոթողը կերտված է բազալտ քարից, ունի 170X78սմ չափեր: Այն առավել կարևորվում է երկու երեսին փորագրված 26-տողանոց, խիստ ուշագրավ արձանագրությամբ, որն առաջին անգամ ընթերցել և գիտական շրջանառության մեջ են դրել Ա. Քալանթարյանը, Հ. Մելքոնյանը և Գ. Սարգսյանը (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ): Արձանագրությունը, որը «Կունճանց հողի» առ ու վաճառքի մասին վավերագիր է, հայտնում է. «Յանուն աստուծոյ Սանար/ին արեւովն, մեծ *Կաենո* /ծմեռնաւոր Մոկոշ/ երեց, Յակոբ, Ալեքսիոս, Անդրիասն»: Հիշատակված են նաև այլ ձեռնավորներ, որոնց անունները հայտնի են Աղստևի հովտի (Կայան կամ Կայենո գավառի) պատմա-ճարտարապետական այլ հուշարձանների վիմագրերից: Ուստի վստահորեն կարելի է պնդել, որ Կայան (=Կայենո) գավառը գտնվել է Աղստևի և ոչ թե Դեբեդի հովտում:

իր հուժկու սրով մեջտեղից շեշտակի ճեղքում նրա գլխանոցը, գերի վերցնում և կուրացնում: Հետագայում ևս Տավուշի մարզի տարածքը զբաղեցրած գավառները շարունակում են մնալ երկրում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունների հորձանուտում:

Շատ շուտով, երբ Աշոտ Երկաթը բացահայտում է իր Աբաս եղբոր և նրա աներ Վրաց Գուրգեն իշխանի պատրաստած դավադրությունը, դրան մասնակցելու համար մեղավոր է համարում Սյունյաց տեր Վասակ իշխանին և, չանսալով կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու հորդորներին, Վասակին կապելով երկաթյա շղթաներով՝ փակում է Կայան կոչվող անառիկ ամրոցում, որի տերը թագավորն էր: Ըստ Մովսես Կաղանկատվացի պատմիչի հաղորդման, այդ ժամանակ Մեծ Հայքի նախկին Գուգարք նահանգի Ձորափոր գավառը կոչվում էր Ձորագետ, իսկ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Բագրատունյաց թագավորների իրականացրած վարչա-տարածքային բաժանմամբ այն մտնում էր Ուտի գավառի մեջ: Դա ակնհայտ է դառնում Սահակ Սևադայի ընդվզումների մասին պատմությունից: Գարդմանի տերը, նախ անսալով չարախոհ մարդկանց սադրանքներին, այնքան է լարվում թագավորի դեմ, որ անխուսափելի է դառնում արյունահեղ ճակատամարտը: Բարեբախտաբար, կողմերը խաղաղվում են երկրի ավագանու երևելիների հորդորանքով: Սակայն պարզվում է, որ Սահակ մեծանուն իշխանի հիվանդոտ կրքերը չեն խաղաղվել, պատրաստ է անտեսել իր թագավոր փեսային և տերության մեջ գերազանցել իր իրավունքները: «Ուտի գավառից Աշոտ թագավորի մոտ գուժկան է հասնում՝ հայտնելով նրան իր աներ Սահակ իշխանի շարժվելը դեպի Ուտի գավառ, նրանց (Սահակյանների - Ռ.Ս.) կողմից առհասարակ ուժգնորեն այն ամրոցների կողոպուտն ու հափշտակությունը, որոնք գտնվում էին Ձորափորում, իր երկրի (Աշոտ Երկաթի - Ռ.Ս.) գաղթականներին իր տերության ամրոցները տանելը, իր հաստատվելը, մնալն ու նստելը գավառի լեռնային կողմում»[24]: Գարդմանա տիրոջ՝ հարազատի նկատմամբ ձեռնարկած անպատվաբեր գործերի մասին իմանալով, Հայոց թագավորին ռազմական անհապաղ օգնությամբ եղբայրական ձեռք է մեկնում Վրաց Ատրներսեհ թագավորը: Սակայն քիչ ուժերով և սրընթաց հարձակման սիրահար Աշոտ Երկաթը «իր զորքը թողնում է ետևում, իր թիկունքում և միայն մոտավորապես երեք հարյուր ընտիր մարդկանցով շատ շտապ գալիս հասնում է Ձորոփոր: Եվ նախ տեսնում են, որ

Կայան կոչված բերդը հափշտակել է Սահակ իշխանը»[25]: Ավելին, սա Կայան բերդի բանտից ինքնագլուխ արձակել էր դավադրության մասնակցության մեղադրանքով այստեղ պահվող Սյունյաց տեր Վասակին՝ իր երկրորդ փեսային, որը թագավորի քենակալն էր, ինչպես նաև՝ որպես գերիներ այդ բերդում պահվող ազնվական կանանց, դավադրության մասնակիցների ընտանիքներից: Գարդմանցին նաև գրավել էր մոտակայքում գտնվող մյուս՝ Կայծոն բերդը, բերդապահներին սրի քաշել, երկրի բնակիչներին իրենց ունեցվածքով գաղթեցրել իր իշխանության ապահով տեղերը: Սակայն՝ դրանով չի բավարարվում և խաղաղվում: Թագավորին շոշափելի վնաս պատճառելու նպատակով՝ ժամանակից շուտ գերանդիներով հնձել է տալիս ու հրկիզում գաղթեցվող շինականների արտերը:

Աշոտ Երկաթի ռազմական հաղթանակների ազդեցությամբ արաբական խալիֆաթը նրան ճանաչում է շահնշահ՝ 701-ին ստեղծված Արմինիա (Հայաստան, Վիրք և Աղվանք) վարչական միավորման մեջ մտնող երկրների թագավորների թագավոր: Նա առաջինն է դառնում նաև խալիֆի սադրանքով Հայաստանում կարգված մյուս երկու թագավորների՝ Վասպուրականի Գագիկ Արծրունու և Բագրատունի Աշոտ Շապուհյանի, համեմատ: Սակայն կարգավիճակի բարձրացումով Աշոտ Բ-ն չձերբազատվեց կենտրոնախույս իշխանների ու գավառատերերի անհնազանդության աղետներից: Սևադայի հետ հարցերը դաժանորեն լուծելուց հետո հարկ եղավ զենքի ուժով հնազանդեցնել Վասակ Գնթունուն, որին վստահված էր Շամաշուլդե ամրոցի պաշտպանությունը: Բայց այստեղ կանգ չառավ, շտապեց Ուտի գավառ՝ ամրապնդելու իր դեռևս խախուտ դիրքերը, որովհետև աղճատված էր պատմիչների ասած վայրենաբարո բնակիչների բնավորությունը: Աշոտ շահնշահը հավանաբար եղել է պերճախոս հռետոր և սրտառուչ զրուցակից, որովհետև կարողանում է բարի խոսքով զսպել ուտիացիներին, հետ է պահում ապիրատ մտքերից, հաստատուն խորհուրդներով նրանց դնում ճիշտ ուղու վրա և այդպես գցում իր ազդեցության տակ: Անարյուն պայքարում կատարվում է ևս մեկ քայլ վասն հայրենիքի խաղաղության և ժողովրդի ապահով կյանքի: Նաև հաշտվում, խաղաղության և սիրո դաշն են կնքում Աշոտ Բ-ն և նրա հորեղբորորդի Աշոտը: Սակայն այդ առթիվ Դվին մայրաքաղաքում կազմակերպված տոնահանդեսը ստիպված կիսատ է թողնում շահնշահը:

Ուտի գավառից նրան գույժի ձայն է հասնում, «որ այն Ամրամ կոչեցյալը, որն իր ուժեղության համար շատերի կողմից հորջորջվում էր Ցլիկ անունով, և Շահնշահն էլ հենց նրան էր հրամանատար կարգել երկրի գործերի վրա, իսկ նա չարամտորեն մթան մեջ թաթախվելով ու իրեն այլ կերպարանքով ներկայացնելով, դուրս է գալիս Շահան կոչված շահի (Աշոտ Երկաթի - Ռ.Ս.) հնազանդության տակից: Եվ լքելով, արհամարհելով, անարգելով իր բնիկ տերությունը՝ նա ցանկանում ու համաձայնվում է մտնել ոչ բնիկ՝ Գամիրի աշխարհի իշխանաց իշխան Գուրգենի լծի տակ: Եվ այդ նահանգի մյուս բոլոր նախարարների հետ հարձակվելով՝ նա նույն ապստամբությանն էր պատրաստվում: Եվ ապա անմիջապես գրավելով Տավուշ ամրոցը՝ նա ապահով կերպով այնտեղ է պահում իր տան անդամներին»[26]: Հավանաբար Ամրամը ցանկացել էր ստանալ ժառանգատեր իշխանի կարգավիճակ և չէր բավարարվել երկրամասի գործերի կառավարչի դիրքով: Երկրամասը Հայաստանի կազմում պահելու անհրաժեշտությամբ Աշոտ Բ-ն, ռազմական օգնության հույսով դիմում է եգերացիների թագավորին և, ստանալով այն, գնում է Ցլիկ Ամրամի վրա, որը «մյուս ապստամբ սրիկաների հետ օգնական շատ զորք էին հավաքել ու ամրացել Կուր գետի ափին, ծառախիտ անտառում»: Թագավորն ընկնում է Ցլիկ Ամրամի* և մյուս ապստամբ իշխանների զորքերի շրջապատման մեջ, ապրում օրհասական պահեր, բայց,

* Ղազար քահանա Հովսեփյանը 1904թ. Թիֆլիսում հրատարակած իր «Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին» գրքում վկայում է, որ Կովկասյան լեռնաշղթայի հարավային կողմում, պատմական Աղվանքի Վարդաշեն գյուղում XX դարի սկզբին բարեհարմար կյանքով ապրող նշանավոր տոհմերից մեկը՝ Սիլիկյանները, Ցլիկ Ամրամի հետնորդներն են; Բացատրելի է Ցլիկ մականվան վերափոխումը Սիլիկի, որովհետև այդ երկրամասում վերջին դարերում մահվան սպառնալիքի տակ մահմեդականություն ընդունած, լեզու փոխած հոծ հայությունը չէր կարող արտասանել հայերեն ց հնչյունը և թաթարների պես օգտագործում էր ս հնչյունը: Եվ քանի որ թաթարների լեզվում առանց ձայնավորի չեն համերաշխվում հարևան ս և լ բաղաձայնները, ուստի դրանց միջև հավելվել է ի հնչյունը: Ցլիկը սկսվել է արտաբերվել Ցիլիկ: Ցլիկից առաջացել է Սիլիկ, դրանից՝ Սիլիկյան: Այդ տոհմի ամենաերևելի փայլատակն է ռուսական բանակի գեներալ Մովսես Սիլիկյանը (1862-1937), որի ղեկավարած զորքերը թուրքերի դեմ կռվել են Արևմտյան Հայաստանում, իսկ 1918-ի մայիսին նա Սարդարապատի ճակատամարտի ղեկավարներից էր: Ադրբեջանից հայերի բռնագաղթից (1988) հետո Սիլիկյանների շառավիղները տեղափոխվեցին Հայաստան և այժմ բնակվում են նաև Տավուշի մարզի Հաղթանակ և Պտղավան գյուղերում:

վերջապես ճեղքելով հակառակորդի օղակը՝ փրկվում գերվելու վտանգից:

Պետության միասնությունը խարխլող ապստամբների հաջողությունները կարծես գործողությունների ահազանգ են դառնում արաբների համար, որոնք, վստահ իրենց գերակշիռ ուժերի հաջողությանը՝ վերսկսում են հարձակումները, սակայն Սևանի ափին (ծովամարտում) և Խոսրովի անտառում չարաչար պարտվում թագավորի և հայրենասեր Գևորգ (Մարզպետունի) իշխանի փոքրաթիվ, բայց ահագնորեն և հանկարծակի շանթահարող ջոկատներից: Դեպի մայրամուտ գլորվող խալիֆաթը դադարեցնում է հարձակումները Բագրատունյաց Հայաստանի վրա՝ համակերպվելով նրա կատարյալ անկախության հետ: Հաստատվում է խաղաղություն, որը տևում է շուրջ մեկ դար: Երկիրը թևակոխում է տնտեսական ու մշակութային զարգացման մի նոր փուլ: Վերականգնվում են անդադար կռիվների ու ասպատակությունների հետևանքով ավերված քաղաքներն ու գյուղերը, կազմալուծված գյուղատնտեսությունն ու առևտուրը: Զարգանում, շքեղորեն կառուցապատվում են մանավանդ Կարս և Անի (961-ից) մայրաքաղաքները: Իսկ այդ ժամանակից Տավուշի մարզի տարածքի եզրագավառներում կերտվում են միայն համեստ, մատուռատիպ եկեղեցիներ, գյուղեր, որոնք վաղուց մնացել են անտառի տակ, նաև պարզ, անվիմագիր խաչքարեր: Սա տնտեսապես աղքատ եզրաշխարհների ճակատագիրն է՝ բավարարվել քչով և սպասել հույսով:

Հաստատված խաղաղության պտուղներից Բագրատունի թագավորներից առաջինն օգտվեց Աշոտ Բ-ի հաջորդ և եղբայր Աբասը, որը երկրում ծեռնամուխ եղավ բարեկարգումների, որոնք ավելի խորացրեց ու ընդարձակեց Աբասի որդին՝ Աշոտ Գ Ողորմածը: «Աշոտն արմատական վերակառուցման է ենթարկել պետության կառավարման համակարգը, սահմանամերձ խոշոր երկրամասերը՝ Վանանդ-Արշարունիքն ու Տաշիր-Ձորագետը, ստացել են հատուկ քաղաքական կարգավիճակ, նրանք վերածվել են փոխարքայությունների, իսկ կառավարումը հանձնվել է արքայի մերձավորներին, եղբորը՝ Մուշեղին, և որդուն՝ Գուրգենին»[27]: Առաջին անգամ նաև կիրառվել է գահակցությունը: Թագաժառանգ Սմբատը դարձել է հոր՝ Աշոտի, թագավոր-գահակիցը: Հայաստանի եզրաշխարհներում ստեղծվում է ավատական թագավորությունների և խոշոր իշխանությունների դաշնա-

պետություն (ֆեդերացիա), որը գլխավորում է թագավորը՝ «առաջինը հավասարների մեջ»: Սա նպատակամետ ձեռնարկում էր, որովհետև երկրի սահմանագոտիների պաշտպանության համար թագավորի կողմից նշանակված իշխանները, ինչպես Տաշիր, Ուտիք և Տավուշ գավառների « հրամանատարներ» Գնթունի եղբայրները, Մովսեսն ու Ցլիկ Ամրամը պարզապես դավաճանեցին իրենց « տիրոջը»՝ թագավորին: Ուստի վարչական նոր կազմավորումների ղեկավարներ կարգվեցին թագավորական տան անդամները, ավելի հուսալի մարդիկ: Որոնցից էր նաև Կյուրիկյանների (Լոռու կամ Տաշիր-Զորագետի) թագավորությունը, որի տիրապետությունը ընդգրկում էր նաև ներկայիս Տավուշի մարզի ողջ տարածքը: Այս ռազմավարչական մարզը, որը գոյատևել է 966-1118 թվերին, կոչված էր Բագրատունիների թագավորությունը հյուսիս-արևելքում պաշտպանել Տփխիսի և Գանձակի ամիրայությունների հարձակումներից:

Ահա այս նոր թագավորության լինելության առաջին քայլերի հետ նաև ստեղծվում է նրա հոգևոր իշխանությունը՝ եպիսկոպոսությունը, որովհետև այն դարերում խոշոր իշխանություններն ու նախարարությունները և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր գործերում պատճենում էին հայոց «ազգապետ» թագավորին, որը համահայկական խնդիրների լուծման աջակից և մասնակից ուներ հայոց կաթողիկոսին: Այդպես էլ, տեղական իշխանությունները ստեղծում են իրենց հոգևոր թեմերը: Եվ երբ 979-ին Աշոտ Գ Ողորմածի ավագ որդին և հաջորդը՝ Հայոց թագավոր Սմբատ Բ Տիեզերակալը, գալիս է Կյուրիկյանների թագավորություն և Սանահինում այցելում իր հոր՝ Աշոտ թագավորի և իր մոր՝ Խոսրովանույշ թագուհու, կառուցած սուրբ Աստվածածին եկեղեցի, տեսնում է «աստուածաշէն և թագաւորաշէն» տաճարը, հավանաբար հենց այս նոր թագավորության գահակալի խնդրանքով կազմում է հրովարտակ և վճռում Սանահինը դարձնել եպիսկոպոսական աթոռանիստ և անբեկանելի հրամանով թեմի սահման հաստատում Վրաստանից մինչև Նիգ և Շիրակ գավառները, «և մինչև ի սահմանս Կայենոյ»[28]: Եվ Տավուշի մարզը Սանահինի եպիսկոպոսության մեջ մնում է մինչև 1081 թվականը, երբ մոտակա Հաղբատում ստեղծվեց Կյուրիկյան թագավորության հոգևոր թեմը, որը գտնվում էր Աղվանից կաթողիկոսության իշխանության տակ:

Լոռվա կամ Տաշիր-Զորագետի թագավորության առաջին թագավորը (966-991թթ.) Աշոտ Ողորմածի կրտսեր որդի Գուրգենն էր, որի


ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
1. ԲԵՐԴ
2. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ
3. ՔԱՂԱՔ
4. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋ
5. ՎԱՆՔ
6. ՀՅ ՊԵՏ. ՍԱՀՄԱՆ
7. ՀՅ ՄԱՐԶԵՐԻ ՍԱՀՄԱՆ
8. ԳԵՏ
ՍԱՆԱՀԻՆ
ՍՈՂԱՆԼՈՒ
ՎԱՆԱՁՈՐ
ՄԱՍԻՍ
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

անունը Գուգարքի բարբառով արտասանվել է Կյուրիկե, որից առաջացել է Բագրատունիների Կյուրիկյան տոհմաճյուղի անունը: Գուրգենի՝ գահից ինքնակամ հրաժարվելուց հետո Տաշիր-Ձորագետի գահին 996-ից փոխարինում է նրա որդի Դավիթը, որը դարձավ Կյուրիկյանների ամենանշանավոր գործիչը: Իսկ այդ ժամանակ Անիում հայոց գահակալն էր Գագիկ Ա-ն, որի ժամանակ Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին: Դավիթ Կյուրիկյանն իր գործունեությունն սկսեց գլխավորից՝ սեփական թագավորության սահմանների ամրապնդումից և, ըստ պատմագրի հաղորդման, կառուցում է տասներկու բերդ: Նաև սրա շնորհիվ նա կարողացավ ոչ միայն հաջողությամբ դիմակայել արտաքին թշնամիներին, այլև պարտության մատնեց Գուգարք ներխուժած Գանձակի Շադդադյան Փատլուն քուրդ ամիրային ու փախուստի մատնեց:

X-XI դարերի սահմանագլխին Կյուրիկյանների թագավորությունում նաև ներքին ըմբոստություն է բորբոքվել կենտրոնական իշխանության դեմ, և այդ առթիվ հայտնի է դառնում Տավուշի մարզում իշխած կառավարիչներից մեկի անունը: Ըմբոստության հեղինակը Գագի տեր, սահմանամերձ շրջանների մարզպան, վրացադավանություն ընդունած Դեմետրեն էր: Դուրս գալով Կյուրիկյան Դավիթ թագավորի դեմ՝ նա իր որդուն նշանակում է Տաշիրի կառավարիչ: Դավիթը ճնշում է անհնազանդ մարզպանի ապստամբությունը, խլում Գագ և ենթակա մյուս բերդերը: Շուտով, ճիշտ և ճիշտ ինքնագլուխ Դեմետրեի պես, իր իրավունքներն է գերազանցում Լոռվա թագավոր Դավիթը: Ձեռք բերած ռազմական հաղթանակները և երկրամասի տնտեսական հաջողությունները նրան դրդում են ավելի ինքնուրույն լինել Բագրատունի «ազգապետի»՝ հայոց թագավորի հանդեպ: 1001 թվին Դավիթն ըմբոստանում է Գագիկ Ա շահնշահի դեմ, բայց պարտվում: Նրանից հարքունիս խլվում է Կյուրիկյան թագավորության մի զգալի հատվածը՝ Աղստևի հովիտը, որի պատճառով Դավիթն ստանում է «Անհողին» մականունը[29]:

Դավիթ Անհողինի գահակալության տարիներին (996-1048) կարևոր իրադարձություններ են տեղի ունենում Բագրատունյաց Հայաստանում և նրա շուրջ: Գագիկ Ա շահնշահի անդուլ ջանքերով երկիրը հասավ իր քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման բարձրակետին: Հայոց թագավորից վախենում են տարածաշրջանի մահմեդական ամիրաները, նրան հարգում են հարևան երկր-

ների միապետները: Այդ վիճակն, անշուշտ, ցանկալի չէր կարող լինել արդեն կորստյան եզրին հասած արաբական խալիֆաթի և, հատկապես, հզորացող բյուզանդական կայսրության համար, որի տեսադաշտից, Բուլղարիայի գրավման պատճառով, առժամանակ դուրս էին մնացել արևելյան խնդիրները: Նաև՝ Հայաստանը, որի թագավորն անգամ հարկ չհամարեց տեսակցության գնալ Հայաստանի արևմտյան նահանգներ մտած Վասիլ Բ կայսրին՝ բոլոր քրիստոնյա թագավորների «գերադասը» համարվող թագավորին:

1020 թվականին մահացած Գագիկ Ա շահնշահին, ըստ սահմանված կարգի, փոխարինեց նրա ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատը, որին գահակից թագավոր էր նշանակված եղբայրը՝ Աշոտը (Աշոտ Դ Բագրատունին): Հենց սկզբից եղբայրների միջև անզիջում պայքար սկսվեց գահակալության համար, որը հարթվեց կաթողիկոսի և ազնվականության միջամտությամբ: Երկիրը բաժանվեց եղբայրների միջև: Հովհաննես-Սմբատին բաժին հասան տերության կենտրոնական գավառները, նաև Աղստևի հովիտն ու Տավուշը, որոնք գահակալը հանձնեց հայոց սպարապետ Վասակ Հոլում Պահլավունուն: Հայաստանը սկսել էր թուլանալ ներսից, իսկ բյուզանդական սպառնալիքը գնալով ահագնանում էր դրսից:

Վասիլ Բ կայսրը 1021-ին գրավեց Տայքը, անողորմաբար քարուքանդ արեց դրա 12 գավառները և սրածեց բնակչությանը: Կատարվածին դեմ հանդիման Վասպուրականի թագավոր Սենիքերիմ Արծրունին ինքն իր երկիրը հանձնեց բյուզանդացուն: Վասպուրականը սկսեց դատարկվել իր հիմնական բովանդակությունից՝ հայ բնակչությունից: Օղակը սեղմվում էր Բագրատունյաց կենտրոնական թագավորության շուրջ, որի սահմանին, ուր որ է, հայտնվելու էր բյուզանդական կայսրը: Սպասվող արհավիրքը հետաձգելու, գուցե ինչ-որ ձևով կանխելու հույսով, Հովհաննես-Սմբատը Վասիլ Բ-ի հետ բանակցելու ուղարկեց հայոց Պետրոս Գետադարձ կաթողիկոսին: Սա հայոց վեհապետի իր անունն «անմահացրեց» 1022-ի հունվարին Տրապիզոնում կնքված հանրահայտ պայմանագրով: Նա, ունենալով համապատասխան լիազորություններ, համաձայնեց, որ Հովհաննես-Սմբատի մահից հետո նրա թագավորությունն անցնելու է Բյուզանդիայի գահակալին: Պահանջը ձևակերպվեց հայոց թագավորի կտակով, որը համարվեց Հայաստանի վաճառք, հայ ժողովրդի անկախ պետականության երազանքի մարմնացում Բագրատունյաց

թագավորության «կորստի գիր»: Իսկ դրա կատարումը թողնվեց կամքով անարի և մարմնով տարտամ Հովհաննես-Սմբատի մահից հետո: 1042-ին նրան փոխարինած Գագիկ թագավորը (Գագիկ Բ)՝ Աշոտ Դ-ի որդին, գահակալության հենց սկզբից բիրտ ճնշման ենթարկվեց Բյուզանդիայի նոր կայսր Միխայիլի կողմից՝ կատարել մահացած Հովհաննես-Սմբատի կտակը, Հայաստանը հանձնել իրեն՝ քրիստոնյա թագավորների «գերադասին»: Գագիկ շահնշահն արի էր իր հոր նման. համառեց: Հարցի լուծմանը չօգնեց նաև կայսրի ուղարկած զորքը, որին պարտության մատնեց Գագիկը: Այս լարված պահին տեղի ունեցավ նաև սելջուկյան թուրքերի առաջին արշավանքը, որին հաջողությամբ դիմագրավեցին հայերը: Արևելքից հորդացող նոր վտանգը չսթափեցրեց քրիստոնյա թույլ երկրների ինքնուրույնության և ապահովության թշնամի Բյուզանդիային, որի նոր կայսրը՝ Կոնստանդին Մոնոմախը, ևս վճռականորեն պահանջում էր Անին՝ Հայոց թագավորության մայրաքաղաքը, և նորից ստանում մերժողական պատասխան: Նրա չորս հարձակումներն ավարտվում են պարտությամբ, որովհետև հայ ժողովուրդն էր ելել պանծալի գոյամարտի: Սակայն այնտեղ, ուր ի զորու չէ հաղթել սուր զենքը, կարող են հաղթել դիվանագիտությանը շաղախված խարդավանքն ու սուտը, երկրի վրա աստծո փոխանորդ հոռոմ միապետի «ազնիվ» խոսքն ու երդումը: Այդպես արդեն որերորդ անգամ Ավետարանով ու սուրբ Խաչով երդված բյուզանդական կայսրը, հայոց թագավորին շողոմ խոսքերով հրավիրելով մայրաքաղաք Կոստանդնուպոլիս, պահում է որպես պատանդ և ստիպմամբ Գագիկ Բ-ից ստանում Բագրատունյաց թագավորությունը: Նաև՝ ներկայիս Տավուշի մարզի տարածքը, որը բյուզանդացիներին է հանձնում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և հեռանում երկրից: Իսկ կայսրը, շարունակելով Բագրատունյաց թագավորության հայաթափումը, աններելիորեն թուլացրեց իր արևելյան սահմանները և դարձավ իր մոտալուտ դժբախտության պատճառը: Կայսրության հեռավոր երկրամասեր էին գաղթեցվում հայ զինվորականները, իշխանական տների պայազատները, որոնց հետևում էր աշխատավոր բնակչությունը: Կծծի խնայողության հաշվին կայսրը արձակել տվեց հայերից և վրացիներից կազմված 50 000-ոց զորքը, որը պատրաստ էր վասն հայրենիքի և իր ունեցվածքի կյանքով դիմագրավել արևելքից եկող նոր արհավիրքին: Հայկական լեռնաշխարհի «հաջողակ» տերը՝ Բյուզան-

դիան, այժմ ինքը պիտի պաշտպաներ նոր սահմանները, «ապավիներ այժմ իր սեփական ուժերին, այն է՝ զանազան կողմերից Հայաստան բերված օտար վարձկան զորքերին, որոնց համար այս երկիրը ո՛չ հայրենի տուն էր, ո՛չ էլ հարազատ բնակավայր»[30]: Հայոց անտերունչ զինական ուժի մի մասն էլ աննպատակ շրջում էր հարևան երկրներում: Իսկ սելջուկյան թուրքերի մեծաքանակ, անողորմ հրոսակները ուր որ է ռազմարշավ էին սկսելու դեպի արևմուտք:

Հայկական պետության կործանմանը, դժբախտաբար, նպաստում են երեկվա օրինալի միասնությունը կորցրած հայերը, առավելապես՝ բյուզանդամետ ուժերը, որոնք՝ արևմուտքի տիրակալի խոստումներից ու շնորհումներից կուրացած, Վեստ Սարգսի պես մոտեցնում էին Բագրատունյաց թագավորության անկումը: Պատմիչը վկայում է, որ նրանք «միմյանց դեմ գրգռվելով, անհեթեթ հոխորտանքներով և խորամանկությամբ միմյանց վրա հարձակվելով՝ ստախոսությամբ հղանում էին միմիայն կայսրին մատնելու նենգ խորհուրդներ»: Եվ, որպես ինքնամաշող պայքարի ու արտաքին հարվածների հետևանք՝ 1045-ին, Հայաստանի կենտրոնական թագավորության անկումից հետո, Բագրատունյաց փառավոր տերությունից կենսունակ է մնացել Կյուրիկյան թագավորությունը, որն ընդգրկում էր հիմնականում Տաշիրը (Դեբեդ գետի վերին և միջին հոսանքները՝ հարակից շրջաններով) և Ձորափորը, որը սկսել է կոչվել նաև Ձորագետ (Աղստևի միջին հոսանքները և դեպի արևմուտք տարածվող լեռնաստանը), ուստի կոչվում էր Տաշիր-Ձորագետի և ապա, 1065-ին թագավորության մայրաքաղաքը Լոռի բերդ տեղափոխելուց հետո, նաև՝ Լոռվա թագավորություն:

Բագրատունյաց թագավորության կորստի դառն պտուղները շուտով քաղելու էր շուրջ մեկ դար համեմատաբար խաղաղ կյանքով ապրած, օրինալի արարումներով զբաղված հայ ժողովուրդը: Միասնական պետության գոյության օրերին հայերը մարտադաշտերում հաջողությամբ դիմագրավում և պարտության էին մատնում արաբներին, բյուզանդացիներին և երկիրը ներսից հյուծող մահմեդական ամիրայություններին: Սակայն բյուզանդացիների նանրամիտ քաղաքականության հետևանքով երկիրը սկսեց թուլանալ, և Անիի թագավորության անկումից հետո սելջուկյան թուրքերի արշավանքները հայ ժողովրդի գլխին շրջվեցին որպես անբուժելի պատուհասներ: 1047-ին Միջին Ասիայից ռազմարշավի ելած թուրքերը մտան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգներ: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ, 1049 թվին, միայն Արծն քաղաքում, «միահամուռ» կերպով պատերազմի ելած այլազգիները կոտորեցին 150 000 մարդ, 100 000-ին գերի տարան, ինչպես նաև՝ մեծաքանակ ռազմավար: Հերթը հասավ հյուսիս-արևելյան Հայաստանին: Մեծագույն դժբախտություն էր, որ այս վրանաբնակ ասպատակիչները ռազմարշավի էին ելել իրենց գաղթականության՝ ընտանիքների հետ, որոնց համար բնակության տեղ և կենդանիների արածեցման արոտավայրեր էին ընտրում՝ տեղաբնակներին կոտորելու կամ հայրենիքից դուրս մղելու ճանապարհով: Նաև հետագայում եկած թաթարներն ու մոնղոլները տեր դարձան վաղուց քաղաքակրթության ճանապարհով ընթացող բնիկ ժողովուրդների հայրենիքներին, միավորվեցին որպես էթնիկական նոր հանրություն և փոխեցին ոչ միայն Անդրկովկասի ազգային նկարագիրը, այլև՝ամենուր դուրս մղելով տեղավայրերի բուն անունները, դրեցին իրենցը: Հավանաբար այն օրերից է մնացել դառնահամ ասացվածքը, թե «Թուրքը հայի եզը իրենը դարձրեց ու անունն էլ Օղլան դրեց»:

1064-ին Ալփասլանը, սրածելով ու ավերելով Աղվանքը, մտավ Վրաստանի ու Կյուրիկյանների Տաշիր-Ձորագետի թագավորությունները: Նա նպատակ ուներ տարածաշրջանից դուրս մղել արաբական խալիֆաթի քայքայման հետևանքով հզորացող Բյուզանդիային: Հակառակորդի մեծաքանակ ուժերի առաջխաղացումը կանխել չէին կարող հայերն ու վրացիները: Երկիրն ավերումից և ավարառությունից փրկելու նպատակով, վրաց թագավորի օրինակով, բարբարոս վաչկատուների սուլթանին հպատակություն հայտնեց նաև Տաշիր-Ձորագետի Կյուրիկե Ա թագավորը (1048-1089): Նա նաև ստիպված Ալփասլանին կնության տվեց իր դստերը: Սելջուկներից կրած պարտությունից հետո, նրանց դեմ միասնական ճակատ ստեղծելու նպատակով, Բյուզանդիան փոխում է (ցավոք՝ ուշացած) քաղաքականությունը հայերի և վրացիների հանդեպ. նա հովանավորում է Կյուրիկեին, որին վերադարձնում է Աղստևի հովիտը, որը հանձնվել էր կայսրությանը[31]:

Կյուրիկե Ա-ն եղել է հայրենիքի ճակատագրով մտահոգ թագավոր, քաջ կռվող և խելացի դիվանագետ: Նա «փորձում է համախմբել դեռևս գոյատևող ֆեոդալական իշխանությունները» և համահայկական կյանքում ձեռք է բերում այնպիսի կշիռ, որ 1081-ին Անի է վե-

ռադարձնում բյուզանդական կայսեր կամքով Հայաստանի կենտրոնից հեռացված կաթողիկոսական աթոռը: Հպատակության գնով նրան սկզբում հաջողվեց երկրից հեռու պահել սելջուկյան թուրքերի առաջին արշավանքների արհավիրքը: Սակայն վրանաբնակ ելուզակները դադար չունեին, նրանց ավար էր հարկավոր ապրուստի, և արոտավայրեր՝ իրենց մեծաքանակ խաշների համար:

1076թ. սելջուկյան ամիրա Սևթեքենը նվաճեց Քարթլին, և «թուրքերը տեղավորվեցին Առանի երկրներում, բերդերում, բնակավայրերում և հովիտներում»: Նրանք «իրենց վրաններով աշնանը Հայքով (Սոմխիթով) էին անցնում՝ կանգ առնելով Գաջենքում (Գաչիանում) և Կուր գետի եզերքին՝ Տփխիսից մինչև Պարտավ (Բարդավ)՝ և Իորի ափին և ձմեռային արոտատեղ (ծառայող) բոլոր այս սքանչելի տեղերում... Իսկ գարնանը սկսում են (կրկին) վեր բարձրանալ դեպի Հայոց (Սոմխիթի) և Արարատյան լեռները, ուր ամռան պահին նրանք գտնում էին հանգիստ և ուրախություն՝ խոտով և դաշտավայրով, սքանչելի աղբյուրներով և ծաղկապաճույճ տեղերով...»[32]:

Վրաց պատմիչ Ջուանշերը վկայում է, որ վրաց թագավորը ցանկացել է զենքի ուժով հեռու վանել Կուր գետի հովտից, Կյուրիկյան թագավորության տարածքով, դեպի երկրի խորքը տարածվող չարիքը, ուստի հանկարծակի մտնում է Խունան, «ուր թուրք քոչվորներն արածեցնում էին ձմերոցում իրենց հոտերը: Այստեղ նրանց սրի անցկացրեց, կոտորեց գյուղերում թուրք գաղթականներին և հասավ մինչև Պարտավ»[33]: Սակայն իրենց նախահայրենիքն արևելքում մեկընդմիշտ թողած թուրքերին անհնար եղավ վտարել հայկական հողերից, մանավանդ, որ նրանց դիրքերն Անդրկովկասում հետագայում ամրացան ցեղակից այն 40 000 տուն ղփչաղների շնորհիվ, որոնց, մշտական զորք կազմելու համար, Դավիթ Շինարար թագավորը Վրաստան գաղթեցրեց Հյուսիսային Կովկասի տափաստաններից:

Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ Տաշիր-Զորագետի Կյուրիկե թագավորը նեղվում էր նաև հյուսիսային հարևաններից՝ վրացիներից, որովհետև հզորացող Վրաց Բագրատունիներին՝ Հյուսիսային Հայաստանին տիրելու հարցում, խոչընդոտ կարող էին լինել միայն Հայոց Բագրատունիները, որոնց օրինական ժառանգները Կյուրիկյաններն էին: Կյուրիկե Ա-ի մահից հետո (1089) նրա տիրապետությունում հավասար իրավունքով թագավորում են որդիները՝ Դավիթն

ու Աբասը: Սրանք կառավարում են ավելի ծանր ժամանակներում: 1113 թվին Կյուրիկյան թագավորության մեծ մասը նվաճեցին սելջուկները, իսկ 1118-ին Դավիթ Շինարարը, ջարդելով Գուգարք մտած սելջուկներին, միաժամանակ գրավեց Տաշիր-Զորագետի «մայրաքաղաք» Լոռին, իսկ շուտով տիրեց նաև Կյուրիկյան ողջ թագավորությանը: Թագավորազն եղբայրներ Դավթին և Աբասին այլ բան չէր մնում, քան դիմել վրաց թագավորի հակառակորդ Գանձակի ամիրային, որը հայրենազուրկ պայազատներին վերադարձրեց նրանց տոհմական տիրույթների արևելյան հատվածը՝ Տավուշ գավառը, ուր հիմնվում են Տավուշի և Մածնաբերդի* երկու ոչ մեծ իշխանությունները: Առաջինի տերն էր Դավիթը, երկրորդինը՝ Աբասը: 1145թ. Գանձակի նոր ամիրա Չավլին (Չոլին), հավանաբար չհանդուրժելով Կյուրիկյանների զորացումը, հարձակվում է Տավուշի բերդի վրա, ուր ամրացած էր Աբասը, 40 օր պաշարում ու գրավում: Աբասն իր յուրայինների հետ ապաստան է գտնում եղբոր մոտ՝ Մածնաբերդում:

Բոլոր կայսրությունների ճակատագրերն էլ մեկ կետում նման են՝ որպես ջրի երկու կաթիլ, դատապարտված՝ կործանման, քանզի բռնությամբ միավորված այլացեղ, այլադավան, հոգեկերտվածքով ու զարգացման տարբեր մակարդակներում գտնվող ժողովուրդներից անհնար է որևէ զորությամբ կերտել մշտական միասնություն: XI դարի երկրորդ կեսին հսկայածավալ մի թագավորություն էր ձևավորվել Սելջուկի թոռնորդի «գոռոզ և անվանդակ գազան» Ալփասլանի նվաճումների շնորհիվ: Սրա սպանությունից հետո գահին հաջորդած Մելիքշահի թագավորության տարիների մասին գովեստով են

* Հայ գիտական գրականությանը երկար ժամանակ անհայտ է եղել Մածնաբերդի տեղը: Ս. Բարխուդարյանը (Դիվան հայ վիմագրության V, Եր., 1982, էջ 265) Մածնաբերդը նույնացրել է Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջանի Չովդար գյուղից հարավ-արևելք գտնվող Մըլզնաբերդ կոչվող հնավայրի հետ: Իսկ Վ. Առաքելյանը (Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, «Ծանոթագրություններ», էջ 315) հայտնում է, որ Մածնաբերդը գտնվում է Մեծ Հայքի Ուտի նահանգում, այժմ՝ Ադրբեջանի Նուխիի շրջանում, ուր մնում են ավերակները: Պետք է համաձայնվել Ա. Շահնազարյանի (Վահրամյանների իշխանությունը, Եր., 1990, էջ 89-90) տեսակետի հետ, որը Մածնաբերդը նույնացնում է Տավուշի մարզի (նախկին Տավուշի շրջանի) Այգեձոր գյուղի հարավային մատույցում, Ախինջի գետի աջափնյա ժայռին բարձրացող Աղջկա բերդ (Ղզղա լա) կոչվող ամրոցի հետ, որի օգտին խոսող փաստերը շատ են, իսկ պատմիչների, հատկապես՝ Կիրակոս Գանձակեցու խոսքը վերաբերվում է հենց աշխարհագրական այս միջավայրում եղած Մածնաբերդին:

խոսում հայ պատմիչները: Կիրակոս Գանձակեցին արյան ծարավ Ալփասլանի «բարեբախտ որդու» մասին հայտնում է, թե սա չհետևեց իր հոր չարությանը, այլ բարի մտածեց և նույնը արեց բոլոր իրեն հպատակվածների նկատմամբ, առավելապես՝ հայոց հանդեպ: Այս բռնակալն, ունենալով խելացի և մարդկային առաքինությունների տեր խորհրդական, վասն իր ապահով կառավարման և ապագա հարստության, բարեկարգումներ մտցրեց պետության մեջ, որի բնակչությունը տառապում էր սելջուկ իշխանավորների հարստահարությունից և վայրենաբարո անկարգություններից: Հպատակ ժողովուրդները մի պահ ազատ շունչ քաշեցին: Սակայն Մելիքշահը գահակալության քսաներորդ տարում, կնոջ կողմից թունավորվելով, վախճանվեց, և ծայր առան անասելի խռովությունները: Սկսվեց սելջուկյան թուրքերի ստեղծած ընդարձակ պետության քայքայումը: Գահին տիրելու համար անողորմ կռիվներ մղեցին Մելիքշահի եղբայր Դըդուշն ու որդի Բեքիարուխը: Աշխարհի անդորրությունը նրանք վերացրին, նորից «արյունահեղությունը ջրի առատ հոսքի նման էր, և դա ոչ միայն վերաբերվում է կռվող զինվորներն, այլև ընդհանրապես ազգերին և երկրներին»[34]: «Սելջուկյան խարխլվող տիեզերակալության կուսակալները մի ահավոր պատուհաս էին դարձել հպատակ ժողովուրդների համար,- նկատում է պատմաբանը:- Նրանք անտանելի էին հատկապես այն պատճառով, որ գալիս էին մեծամեծ հավակնություններով և կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ: Տեղերում նրանք անմիջապես իրենց զգում էին ինքնիշխան, տիրակալ, ապստամբում էին կենտրոնական իշխանության դեմ, կամ տիրապետությունն ընդարձակելու նպատակով կռվում հարևանների հետ՝ փորձելով հիմնել անկախ ու ինքնիշխան իրենց պետական միավորները: Այս մարտերից տուժում էին առաջին հերթին հպատակ երկրամասերը, որոնք և ակամա մասնակից էին դառնում բոլոր այդօրինակ կռիվներին, բացի այն անագորույն պարագայից, երբ իրենց երկիրը միշտ էլ ոտքի կոխան էր և եկվոր տիրողների ասպատակությունների, ավերի ու ավարի թատերաբեմում»[35]: Հենց դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Բագրատունիների և Կյուրիկյանների տիրապետության շրջանից Տավուշի մարզում շատ քիչ բան է մնացել հետագա դարերի համար, որովհետև եղածը ավերվել և նորը չի կառուցվել, երկրի տերը մտահոգված է եղել կյանքի փրկության և ոչ թե մշակութային արարումների մասին: Իսկ

XII դարի առաջին քառորդում ծեռնարկվող ռազմարշավների շնորհիվ շարունակվում էր Վրաստանի հզորացումը: Դավիթ Շինարարին հաջողվեց ոչ միայն ազատագրել ութերորդ դարից օտար իշխանության տակ գտնվող Տփխիս քաղաքը, այլև 1123-ի ամռանը նվաճել Գուգարքի (Կյուրիկյան թագավորության) արևելյան շրջանները և դրանցում գտնվող Գագ, Գավարզին, Կայեն, Կայծոն, Տերունական, Նոր բերդ, Տավուշ, Մահկանաբերդ, Մանասագոմ, Խալիճաքար բերդերն ու ամրոցները[36]:

1145 թվականին, հայտնում է պատմիչը, Տավուշի և Մածնաբերդի իշխանությունների հիմնադիրներ Դավիթն ու Աբասը «մահվամբ փոխադրվում են այս աշխարհից»: Վերջինիս տոհմը մարում է: Իսկ Դավթից սերում է Մածնաբերդի Կյուրիկե իշխանը (Կյուրիկե Բ), որն ունենում է երկու տղա և չորս աղջիկ: Հետո Մածնաբերդին տիրում է նրա Աբաս որդին (Աբաս Բ), իսկ Վասակ որդին դառնում է Կյուրիկյանների Նոր բերդի* ճյուղի հիմնադիրը: Աբասը ժառանգատեր է կարգվում 1170 թվականին, տասներկու տարեկան հասակում: Սա կին է բերում վրաց պետության մեջ վերելք ապրող Զաքարյանների ավագ Սարգիս Մեծի դստերը, Զաքարե և Իվանե ապագա մեծագործ իշխանների քրոջը՝ Նանային: Երիտասարդ զույգը զավակ չի ունենում: Աբասը մահանում է տասնինը տարեկանում: «Երբ նրա Բալրինա անունով քույրը տեսավ տոհմով բնաջնջվում են, անասելի սգի մատնվեց: Ապա նրան ասացին, թե կա մի կին, որ կաթնակեր մանուկ ունի քո եղբորից: Ուրախանում է այդ կինը (քույրը), վերցնում է այդ

* Վ. Առաքելյանը (Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն. Եր., 1982, «Ծանոթագրություններ», էջ 315) Նոր բերդը նույնացրել է Վայոց Ձորում գտնվող Ամաղուի հնավայրի հետ, ուր Սյունյաց թեմի Վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը XIII դարի հենց սկզբին կառուցել է Նորավանքը և 1205 թվականին տեղափոխվել այնտեղ: Իրականում Նոր բերդը գտնվել է Հայաստանի հյուսիս-արևելքում, որը XII դարի առաջին կեսի բերդերի շարքն են բազմիցս դասել հին պատմիչները: Ի դեպ, նրանք Նոր բերդը թվարկության շարքում նշում են մի կողմից՝ Գագ, Մահկանաբերդ, Գավարզին, Կայեն, Կայծոն, մյուս կողմից՝ Տավուշ, Մածնաբերդ, Կածարեթ, Տերունական բերդերի արանքում: Իսկ դրա տեղը համընկնում է Հախումի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան հատվածին, ուր գտնվում է նաև Կյուրիկյանների հիմնած հոգևոր կենտրոնը՝ Նոր Վարագա վանքը: Իսկ սրանից մոտ, Վազաշեն գյուղից չորս կիլոմետր արևելք, Ցից քարի (նաև՝ Կարմրաքար) վրա կա միջնադարյան բերդ, որը հավանաբար Նոր բերդն է: Ուստի Կյուրիկյաններն իրենց մայրամուտին չէին կարող իշխել յոթ սարից այն կողմ՝ Վայոց Ձորում, և այնտեղ իրականացնել մեծածավալ շինարարություն:

մանուկին ու սնուցանում: Նրա անունը դնում են Աղսարթան, որը դարձավ Մածնաբերդի ժառանգատերը... Իսկ Նոր բերդի Դավիթ իշխանը խաբեց մանուկ Աղսարթանին ու նրան փեսայացրեց՝ տալով իր դուստրը, իսկ ինքը տիրեց Մածնաբերդին, ապա իր դուստրը բաժանեց նրանից: Աղսարթանը իր կողմը գրավեց բերդի բնակիչներին, որոնք հանկարծակի անսպասելի մի պահ բռնեցին Դավթին իր ընտանիքի հետ միասին, դուրս հանեցին բերդից ու բերդը հանձնեցին Աղսարթանին: Նա որոշ ժամանակ անց, իր կենդանության օրոք, իշխանությունը հանձնեց իր որդի Կյուրիկեին, իսկ ինքը դարձավ կրոնավոր Գետակիցք վանքում»[37]:

Ի սկզբանե անկատար է եղել մարդը, թուլությունների գերի: Նոր բերդի տեր Դավիթ իշխանը մտադրվում է իր տիրություններն ընդարձակել ի հաշիվ թույլ մերձավորի՝ քրիստոնեական բարոյականության ոտնահարման, զավթման ճանապարհով: Նա իր դստերն ամուսնացնում է դեռահաս հարազատի՝ Աղսարթանի հետ՝ որպես խնամակալ տեր դառնում նրա ունեցվածքին, ապա դստերն ամուսնալուծելով, «փեսային» թողնում ծեռնունայն: Շարունակությունը հայտնի է ընթերցողին: Խարդախը վռնդվում է Մածնաբերդից: Սակայն այս Դավիթ իշխանը նաև թողել է պատմության հիշատակությանն արժանի հետք: 1193-1198 թվերի ընթացքում նա իր նստավայր Նոր բերդից ոչ շատ հեռու՝ ներկայիս Տավուշի մարզի Վարագավան գյուղից երեք կիլոմետր արևմուտք, անտառապատ բարձր սարավանդի եզրին, կառուցել է այստեղի հնագույն Անապատ վանքը և իր տոհմական տապանատունը:

Ապա նրա որդի Վասակը 1224-1237 թվերին, վանքի հյուսիսային կողմում, Շամքոր քաղաքի, Գարդմանի, Երգեվանքի, Տերունականի, Տավուշի և Վահրամյանների իշխանության այլ կողմերի արքեպիսկոպոս Հովհաննես Տվեցու առաջնորդությամբ և օժանդակությամբ կառուցեց հրաշագեղ եկեղեցի, որը 1240-ին օծվեց և մկրտվեց սուրբ Աստվածածին անունով: Ապա վանական համալիրը, Վանա լճի մոտ գտնվող Վարագա վանքի անունով, կոչվեց Նոր Վարագա վանք*: Իսկ շուտով Նոր բերդի Կյուրիկյանների տոհմածյուղը մարեց: Նրանց իշխանության տարածքն անցել էր վրաց թագավորությունում բարձր դիրքի հասած Զաքարյանների կրտսեր ճյուղին՝ Գագա բերդի Վահրամյաններին: Հովհաննես Տվեցու առիթով նաև անհրաժեշտ ենք համարում ասել, որ որոշ հոտազոտողներ նրան շփոթել են Հովհաննես Տավուշեցի վարդապետի հետ: Վերջինս եղել է Մխիթար Գոշի ուսուցիչը: Իսկ հայտնի է, որ Մխիթար Գոշը նրանից վարդապետական կոչում է ստացել և Կիլիկիա մեկնել 1163 թվին: Ուրեմն այդ ժամանակ Տավուշեցին պիտի լիներ գոնե 35-40 տարեկան: Իսկ Հովհաննես Տվեցին՝ 1240-ին Նոր Վարագա վանքի սուրբ Աստվածածին եկեղեցին օծողը, մահացել է 1261 թվին: Անհավանական է, որ մոտավորապես 1125 թվին ծնված Հովհաննեսն ապրած լինի 130-135 տարի: Ուստի սխալ է նրանց նույն անձը համարելը, մանավանդ, որ մեր պատմիչները, տարբերակելու համար, առաջինին կոչել են Տավուշեցի, երկրորդին՝ Տվեցի:

Հայ Բագրատունիների շառավիղ Կյուրիկյաններն իրենց մոտալուտ մայրամուտից առաջ նաև դարակազմիկ ձեռնարկման սկիզբ դրեցին, որի արդյունքը խիստ շահեկան դարձավ և՛ հայ, և՛ վրաց ժողովուրդների համար: XII դարի սկզբին նրանք Մեծ Հայքի Կորճայք նահանգից Հյուսիսային Հայաստան գաղթած դեռևս անհայտ մի աննշան իշխանական տոհմի ներկայացուցիչներին՝ որպես «տուն բնակութեան», հատկացրին Գուգարք աշխարհի Ծոբոփոր գավառի Խոժոռնի բերդը՝ իր շրջակայքով: Այս նորեկները շուտով ղեկավարելով հայոց պետականության պահպանված կառույցներից մեկի՝ վրացական թագավորությանն ապավինած հայկական զինվորական կազմավորումների գործունեությունը, դարձան հայոց ազատագրա-

* Նոր Վարագա վանքի սուրբ Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունը հաղորդում է, որ Խլաթ (Վանի) գավառի մեծահռչակ սուրբ Վարագա ուխտից, ուր պահվում էին Քրիստոսի սուրբ նշաններից մեկի՝ Խաչափայտի մասունքները, Ղուկաս վանահայրը՝ Ջալալ ադ-Դինի հրոսակներից հալածված, իր հետ ունենալով «զտիեզերահամբաւ սբ նշանն», վեց տարի տեղից-տեղ թափառելով, ՈՉԶ (1237) թվին հասնում է Նոր բերդի քրիստոսասեր տիրակալ Վասակ իշխանի Անապատ վանքը: Այստեղ նոր էր ավարտվել սուրբ Աստվածածին գեղակերտ եկեղեցու շինարարությունը, որը և սուրբ Նշանի հանգստյան արժանի է գտնում հայր Ղուկասը: Համալիրը սկսում է կոչվել Նոր Վարագա վանք, ուր պահվող Քրիստոսի խաչափայտի մասունքներով հպարտացել ու երանություն է ապրել նրա XIX դարի առաջին կեսի վանահայրը՝ ազգային ազատագրական պայքարի հերոս, արքեպիսկոպոս Գրիգոր Մանուչարյանը: 1978 թվին վանքի հայացքի տակ փռված Հախում գյուղն էլ վերանվանվել է Վարագավան:

կան պայքարի, հայրենիքը սելջուկյան թուրքերի տիրապետությունից ազատագրման, Հայաստանի կորուսյալ փառքի վերականգնման դրոշակակիրներ՝ իրենց համարելով Բագրատունյաց մեծագործ տոհմի հետնորդներ: Լոռին Վրաստանին միացվելուց (1118) հետո նրանք արդեն վրաց Դավիթ Շինարար թագավորի վասալներն էին: 1120-ական թվականներից այդ տոհմի նախնիներից Զաքարիան, որի անունով հայ մատենագրության մեջ նրանք սկսեցին կոչվել Զաքարյաներ, և նրա որդի Սարգիսը (Սարգիս Մեծ) դառնում են նոր տերերի՝ Օրբելիների վասալ ֆեոդալներ:

Զաքարյանները շուտով իրենց դիրքերը ամրապնդեցին Մահկանաբերդի, Հաղբատի և Կայանի տեր Արծրունիների հետ խնամիանալու շնորհիվ, որոնք XII դարի առաջին կեսից ազդեցիկ դիրք ունեին վրաց պետությունում: Վահրամ Արծրունու որդի Վասակ իշխանը Տփխիսի շահապն էր (քաղաքապետ), որին հետագայում այդ պաշտոնում փոխարինեց Քուրդ եղբայրը և դարձավ վրաց ամիրապետ: Ահա այս եղբայրների Սահակդուխտ քույրն ամուսնացավ Սարգիս Զաքարյանի (Սարգիս Մեծի) հետ: Եվ, ապա 1177-ին՝ Գեորգի թագավորի դեմ Օրբելիների կազմակերպած ապստամբության ժամանակ, Ամիր-Քրդի խորհրդով, իսկ ըստ պատմաբան Արտաշես Շահնազարյանի՝ ինքնակամ, Սարգիս Զաքարյանը զորավիգեց թագավորին: Այդ հավատարմությունն աննկատ և անհատույց չմնաց: 1185-ին Թամար թագուհին Զաքարյաններին կարգեց ազնվազարմների բարձր դասի (դիդեբուլների) շարքը, իսկ Սարգիս Մեծին հանձնեց Վրաստանի զորքերի սպարապետի՝ նորահաստատ ամիրսպասալարի պաշտոնը: Նաև՝ գահակալի դեմ մեղանչած Օրբելիների կալվածքները, որով նաև տնտեսապես ամրապնդվեցին Զաքարյանների հիմքերը: Սարգիս Մեծին նաև տրվեց «Մխարգրձելի» (Երկայնաբազուկ) մականունը, որն այնուհետև վրացիների կողմից համարվեց տոհմանուն: Սարգիս Երկայնաբազուկի անվանն ու գործին միանգամայն արժանի եղան նրա որդիները՝ հայ-վրացական զորքերի ամիրսպասալարներ Զաքարեն և Իվանեն: Նրանցից առաջինը 1203-ին Թամար թագուհուց ստացավ պետության կնքապահի և թագուհու թիկնազորի պետի պաշտոնը: Իվանեն 1191-ից վարում էր արքունի մեծ վեզիրի (մսախուրթ-ուխուցեսի) պաշտոնը, իսկ Զաքարեի մահից (1212) հետո դարձավ արքունի խնամակալ՝աթաբեկ (թագավորահայր):

Այս քաջակորով ու աշխարհաշեն պայազատների բուռն ոգորումներով Զաքարյանները հասան իրենց փառքի գագաթնակետին: 1190-ական թվականներից հետո՝ շուրջ երեսուն տարի, նրանք հայ-վրացական զորքերի գլուխն անցած հաղթական կռիվներ մղեցին սելջուկ նվաճողների դեմ, ազատագրելով ամբողջ հյուսիս-արևելյան Հայաստանը, որով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրամասի տնտեսական ու մշակութային զարգացման, աննախադեպ բուռն շինարարության համար: Այդ առթիվ Իվանե Աթաբեկը 1213 թվին Մորո ձորո վանքում վերանորոգված սուրբ Աստվածածին եկեղեցու գլխավոր խորանի արձանագրության մեջ հայտնում է. «Մենք՝ որդիք ամիրսպասալար Սարգսի՝ աթաբեկ Իվանէ եւ ամիրսպասալար Զաքարէ առաք զերկիս Հայոց ի յանաւրէնաց եվ շինեցաք զվանքս, որ վաղուց հետէ աւերեալ կայր, զուրութեամբ Աստուծոյ»[38]: Իսկ Կիրակոս Գանձակեցին հոգու վայելքով մանրամասնում է, թե Զաքարյան եղբայրները սելջուկյան թուրքերից խլեցին նրանց կողմից գրավված շատ երկրամասեր՝ Գեղարքունյաց ծովի շուրջը գտնվող գավառները, Տաշիրը, Այրարատը, Բջնին, Դվինը, Ամբերդը, Անի քաղաքը, Կարսը, Վայոց ձորը, Սյունյաց աշխարհը և նրա շուրջը գտնվող բերդերը, քաղաքներն ու գավառները: Ապա Զաքարեի ու Իվանեի օժանդակությամբ կրտսեր Զաքարյանները (Վահրամյաններ) «գրավեցին ևս պարսից բազմաթիվ գավառներ ու ամուր բերդեր՝ Գարդմանը, Քարահերձը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Տերունականը, իսկ Շամխոր քաղաքը պաշարեց, և հետո գրավեց Վահրամը՝ Աղբուղի հայրը»[39]:

Զաքարյան եղբայրներից ավագը վրաց Բագրատունիների պետության մեջ թագավորից հետո համարվում էր առաջին անձը, կրում էր «շահնաշահ» տիտղոսը և փաստորեն Հայաստանում դարձել էր հայ Բագրատունիների իրավահաջորդը: Եվ այդպես էլ Զաքարյանները կոչում էին իրենց՝ Բագրատունիներ: Այս երևելի հայ իշխանական տան պայազատների հայրենասիրական ոգորումներին, «զերկիրս Հայոց ի յանաւրէնաց» առնելուն, խոչընդոտ չեղան վրաց թագավորները, որովհետև այդ ձեռնարկումները կենսականորեն համընկնում էին Վրաստանի շահերին: Չէ՞ որ պետությունը հարավից ու հարավ-արևելքից հուսալիորեն պաշտպանվում էր վրաց միապետին ենթակա Զաքարյանների տիրույթով, որոնք հայոց գահը վերականգ-

նելու հավակնություն չունեին և հավատարմորեն սահմանակալ իշխանի դեր էին կատարում:

Իսկ Զաքարյան իշխանությունները երեքն էին: Սարգիս Մեծի փառապանծ որդիներից Զաքարեի «արքունիքը» գտնվում էր երբեմնի թագավորական ոստան Անիում, որն ազատագրվել էր Շադդադյան ամիրայից: Իվանեինը՝ Բջնիում, ապա՝ Դվինում: Իվանեն՝ որպես վրաց պետության մսախուրթ-ուխուցես (արքունի մեծ վեզիր), XII դարի վերջից տիրում էր նաև Կայան գավառին (Աղստևի հովիտ): Վարդան Արևելցին, Մխիթար Գոշի մահվան առթիվ հիշելով Նոր Գետիկ վանքի հիմնադրման հետ կապված անցքերը, հայտնում է, որ նոր վանական համալիրի շինարարությունը 1189 կամ 1190 թվականին «սուրբ և սքանչելի վարդապետն Մխիթար» սկսել է Իվանեի թույլտվությամբ. «զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենօք ի Հասանայ Կայենեցւոյ շինողէ (պիտի հասկանալ՝ նորոգող - Ռ.Ս.) բերդին»[40]: Այստեղից հետևում է երկու բան, որ մինչ այդ Մահկանաբերդի Արծրունիներին պատկանած և նրանցից մեկի՝ Հասան իշխանի, նորոգած հայ ամրոցաշինության գոհարներից մեկը՝ անառիկ Կայան բերդն, ինչ-որ պատճառով, հետագայում կտեսնենք թե ինչու, անցել է Իվանեին: Տեղի է ունեցել երկրամասին իշխող երկու իշխանական տների դիրքերի փոփոխություն՝ հօգուտ Զաքարյանների: Իվանեի իշխանությունը տարածվել է նաև Միափորի գավառի (Գետիկի հովիտ) վրա, որոնք նրա մահից հետո անցան որդուն՝ Ավագ Զաքարյանին: Այդ են վկայում Դիլիջանի Զուխտակ վանքի սուրբ Աստվածածին եկեղեցու երկու արձանագրությունները: Մեկում ուխտի առաջնորդ Հայրապետը հայտնում է թե, 1201 թվին սրբազան շինարարությունն իրականացվել է «ի տէրութեան Իվանէի», իսկ 1247 թվին արված արձանագրությամբ հիշվում է Իվանեի որդի Ավագը, որը մոնղոլական տիրապետության հաստատումից հետո էլ տերն էր Կայենո գավառի:

Իսկ Զաքարյանների երրորդ ճյուղի՝ Վահրամյանների, ֆեոդալական իշխանությունը* ընդգրկում էր ներկայիս Տավուշի մարզի տարածքի զգալի մասը (Դեբեդ գետից մինչև Շամքոր քաղաքը, Կուր գետից մինչև հարավի նախալեռները), որի տերն իր նստավայր Գագ

* Նրանց համապարփակ պատմությանը մենագրություն է նվիրել պատմաբան Արտաշես Շահնազարյանը (տե՛ս նրա «Վահրամյանների իշխանություն»-ը, Երևան, 1990):

բերդի անունով նաև կոչվել է Գագեցի: Սրանց նախնին նշանավոր Սարգիս Մեծ Զաքարայնի կրտսեր եղբայր Վահրամն էր, որի զույգ որդիներից ավագը՝ Բլուզ Զաքարեն, դարձավ Գագի Վահրամյանների ճյուղի հիմնադիրը: Այս Զաքարեն, որ հորեղբորորդի, տարիքով ավագ Զաքարեից տարբերվելու համար Բլուզ (փոքրիկ) մականունն ուներ, ռազմական ունակություններով օժտված իշխանազուն էր և ավագ Զաքարյանների շարքում հեղինակության, պատիվների արժանացավ վրաց արքունիքում: Հավանաբար քսան տարին դեռ չբոլորած, 1176-1177 թվերին, երկու Զաքարյանները, որոնք վրաց պատմության մեջ կոչված են «հիանալի պատանիներ», մասնակցում են Գեորգի 3-րդ թագավորի դեմ Իվանե Օրբելու ապստամբությանը և Սարգիս Մեծի հետ անցնում թագավորի կողմը: Հայտնի է, որ հետագայում ներքաղաքական ճգնաժամը շարունակվեց և նոր սրացման ժամանակ (1187), երբ Թամարա թագուհու դեմ բռնկվեց ապստամբություն, Զաքարյանները ի սկզբանե հանդես եկան իբրև թագավորական իշխանության անձնուրաց պաշտպաններ: «Այդ առումով չափազանց բնութագրական է, որ Բլուզ Զաքարե Վահրամյանը Սոմխիթի ազնվականներից միակն էր, որ ոչ միայն չհարեց ապստամբներին, այլև եռանդուն մասնակցեց նրանց ելույթի ճնշմանը»[41]: Ինչպես ասված է պատմության մեջ, 1191-ին Բլուզ Զաքարեին հանձնվեց «Գագ և Քուրդ-Վաճառից մինչև Գանձակ (ընկած տարածքը) բազում լրիվ հարկատու և բազում կիսով հարկատու քաղաքներով, բերդերով ու գյուղերով»: Վահրամյանները դարձան թագավորի անմիջական վասալները: Այսպես, սեփական կալվածքների տիրանալով, իր ինքնուրույն կյանքը սկսեց Վահրամյանների ֆեոդալական տունը: Բլուզ Զաքարեին փոխարինում է միակ տղան՝ Վահրամը, որն ըստ «Վրաց ժամանակագրության», խելամիտ ու նշանավոր մարդ էր և ռազմարշավներին մասնակցում էր սեփական զորքով, իսկ նշանավոր Իվանե Զաքարյանի աթաբեկ դառնալուց (1213) հետո գահակալը նրան նշանակում է մսախուրթ-ուխուցես (արքունի տնտեսության ղեկավար):

Վահրամյանները, որ ենթակա էին վրաց թագավորին, իրենց հերթին ենթակա ունեին երկու հայկական իշխանություններ՝ Նոր բերդի և Մածնաբերդի Կյուրիկյաններին:

Գրեթե երկու դար (XII-XIII) Տավուշի մարզի հյուսիս-արևմտյան հատվածներին իշխել են Վասպուրականի Արծրունիներից սերված

Մահկանաբերդի Արծրունիները: Նրանք արդեն XII դարի երկրորդ կեսին տիրում էին նաև նախկին Ձորափոր գավառին և նորոգեցին սելջուկների արշավանքների հետևանքով ավերված Կայան անառիկ բերդն ու, երկրամասում տարանցիկ առևտրին նպաստելու նպատակով, Աղստևի հովտից Հրազդանի հովիտ ձգվող քարավանային ճանապարհի միջնամասում, Փամբակի լեռնաշղթայից դեպի արևելք (Սևանի կողմ) ճյուղավորվող Արջանոցի կամ Մեյդանի լեռնաշղթայի լեռնանցքի վրա կառուցեցին հոգետուն (=քարավանատուն)[42]: Արծրունիների, ինչպես նաև Զաքարյանների, մուտքը պատմության ասպարեզ համընկավ սելջուկ-թուրքերի դեմ հայ և վրաց ժողովուրդների ազատագրական պայքարի ծավալմանը, վրաց պետության հզորացմանը, որին բոլորանվեր նպաստեցին Բագրատունյաց թագավորության անկումից հետո փրկված, հարազատ ժողովրդի լինելիության ճակատագրով մտահոգ հայ ֆեոդալական տներ և հայկական զինվորական կազմավորումներ: Վրացական պետության գործերին նրանք ակտիվ մասնակից էին XII դարի սկզբից և աստիճանաբար արքունիքում փոխարինեցին հյուսիսից հրավիրված ղփչաղ ազնվականությանը: Իսկ այս անցումը ունի իր տրամաբանությունը: «Սելջուկներից ազատագրված հայկական շրջաններում վրաց գահակալները կառավարիչներ էին նշանակում բանակում աչքի ընկած հայ իշխանների, զորավարների, դրանով ապահովում այդ շրջանների կախումը իրենցից և մյուս կողմից ավելի շահագրգռում հայ իշխող դասակարգի վերնախավին, խթանում նրա գործուն մասնակցությունը ռազմական գործողություններին: Այս ճանապարհով Մահկանաբերդի Արծրունիները և հատկապես Ձորագետի Զաքարյան տան ներկայացուցիչները Գեորգի Գ-ի և մանավանդ Թամար թագուհու գահակալության տարիներին աչքի ընկան արքունիքում, աստիճանաբար ձեռք բերեցին պաշտոններ, երկրի քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացին և գլխավորեցին Հայաստանի ազատագրման գործը»[43]:

Զաքարյան պանծալի իշխանական տան ծագմանը, տոհմագրությանը, ռազմական, պետական, շինարարական և հովանավորչական գործունեությանը պատշաճ ուշադրություն են նվիրել թե՛ անցյալի, թե՛ մեր ժամանակների հեղինակները: Մեր կարծիքով այսօր նման վերաբերմունքի են կարոտ Մահկանաբերդի Արծրունիները: Տարակարծություններ կան Արծրունիների տոհմացուցակի, դրանում Հասան Կայենեցու տեղի, Աբուլ-Հասանի անձնավորության, հատկապես՝ նշանավոր Ամիր-Քրդի պատմության հարցերում: Նա ե՞րբ է շնորհազրկվել և մեկնել Կարին, ե՞րբ է ներման և շնորհների արժանացել ու նշանակվել Թիֆլիսի քաղաքապետ ու արքունի գանձապետ, ովքե՞ր են նրա որդիներն ու ժամանակակից հարազատները: Ահա այդ տեսակետներից մի քանիսը:

1. «Հալածվելով Գեորգի III թագավորից (1156-1184)՝ Վասակը և Ամիր-Քուրդը 1156-ին գնացին Կարին՝ Սալդուխ ամիրայի մոտ և որպես տիրույթ ստացան բազմաթիվ գյուղեր: Վասակի մահից հետո Ամիր-Քուրդը ժառանգեց եղբոր տիրույթները Կարին գավառում: 1180-ական թթ. վրաց ամիրսպասալար Սարգիս Զաքարյանը, որը ամուսնացած էր Ամիր-Քուրդ Արծրունու քույր Սահակդուխտի հետ, միջնորդեց թագուհու առաջ և վերադարձնել տվեց Ամիր-Քուրդ Արծրունուն՝ նրան վերստին նշանակելով Քարթլիի և Թիֆլիսի ամիրապետ»[44]:

2. Ամիր-Քրդի կյանքի անհայտ փաստերի լուսաբանմանը նպաստում է Մխիթար Գոշի կողմից Նոր Գետիկի վանական համալիրի հիմնարկեքի պատմությունը, որը թողել է Կիրակոս Գանձակեցին[45]: Հովհաննես Տավուշեցու մոտ վարդապետական աստիճան ստացած Մխիթարը՝ ցանկանալով ավելի խորացնել իր գիտելիքները, 1163թ. մտնում է Կիլիկիայի Սև լեռան նշանավոր հոգևոր-գիտական դպրոցը և, թաքցնելով իր վարդապետ լինելը, աշակերտում Կիլիկիայի գիտնական համբավավոր այրերին, կրկին ստանում վարդապետական աստիճան և հարուստ իմացությամբ վերադառնում Հայաստան: «Վերադարձին, 1177թ. Մխիթարը Կարինում ծանոթանում և մտերմանում է Վրաստանի Գեորգի Գ թագավորի կողմից այստեղ աքսորված Մահկանաբերդի իշխանաց իշխան ամիրա Ամիր-Քրդի հետ, որը հետագայում մեծապես օժանդակում է Մխիթարի շինարարական և գիտական գործունեությանը... Երբ Գեորգի Գ-ից հետո Վրաստանի գահին նստում է նրա դուստր Թամարը (1185), վերջինիս բարեհաճությամբ վտարանդի Ամիր-Քուրդը վերադառնում է հայրենական տիրույթը՝ Կայենի գավառ, Մխիթարը տեղափոխվում է այստեղ և հաստատվում Աղստև գետի ձախ կողմում (պիտի լինի՝ աջ կողմում - Ռ.Ս.) գտնվող Գետիկի վանքում իր աշակերտ Սարկավագ վանահոր մոտ»[46]:

3. Ա. Շահնազարյանն այն տեսակետն է հայտնում, որ Ամիր-Քուր-

դը սկզբից մինչև վերջ (1176-1177) մասնակցել է վրաց թագավոր Գեորգի III-ի դեմ Օրբելիների գլխավորած հուժկու ապստամբության անցուդարձին՝ լինելով գահակալի ճամբարում, նա իր Մահկանաբերդում 1176-ին պարտության է մատնել Լիպարիտ Օրբելու զորաբանակին, սակայն կենտրոնախույս ֆեոդալների խռովության ճնշումից հետո թագավորի կողմից չի արժանացել «որևէ շնորհման»: Հեղինակն իր աշխատության մեջ Ամիր-Քրդին վերջին անգամ հիշում է Գեորգի III-ի մահից (1184) հետո՝ նրա դուստր Թամարի գահակալության (1185) սկզբում, նրա դեմ երկրի ընդդիմադիր վերնախավի նոր ելույթի կապակցությամբ, երբ խռովարարների համառ պահանջով թագուհին ստիպված կրկին թագադրվեց նրանց ձեռքով և պաշտոններից ու տիրույթներից զրկեց հանգուցյալ հոր կողմից առաջ քաշված ֆեոդալական միջին ավագանու ներկայացուցիչներին: Ըստ Ա. Շահնազարյանի, շնորհազրկվեց նաև Ամիր-Քուրդը, և նրա փոխարեն Թիֆլիսի քաղաքապետ նշանակվեց Աբուլ-Հասանը[47]:

4. Ռ. Մաթևոսյանը հակառակ տեսակետն է պաշտպանում: Կայան կամ Կայեն բերդի կառուցման և պատկանելիության կապակցությամբ նա փաստարկված հայտնում է, որ արդեն XII դարի 70-ական թվականներին Կայեն բերդի տերը Հասան Կայենեցին էր՝ Ամիր-Քրդի որդին: Հայտնի է, որ վրացիները Մահկանաբերդի նշանավոր իշխանին կոչում էին Աբուլ-Հասան, որն արաբերեն նշանակում է «Հասանի հայրը»: Նաև հայտնի է , որ Օրբելիների գլխավորած խռովության ժամանակ Հասան Կայենեցին Գեորգի III-ի հակառակորդների շարքում էր: «Օրբելիների խռովությունը ճնշելուց հետո Քուրդը շնորհազուրկ եղավ և զրկվեց բոլոր պաշտոններից: Դա պետք է իր պատճառներն ունենար: Առայժմ մանրամասները պարզ չեն, բայց նրա որդու հարելը խռովարարներին անհետևանք չէր կարող մնալ: Քուրդ իշխանը գնաց Կարին Սալդուխ ամիրայի մոտ, Սարգիս Զաքարյանի միջնորդությամբ Վրաստան վերադարձավ միայն 1185թ. Թամար թագուհու ժամանակ, և վերստին ստացավ իր տիրույթներն ու պաշտոնները»[48]:

Մահկանաբերդի Արծրունիների մասին կարևոր տեղեկություններ ունեն XII դարի նրանց ավագ սերնդակից Մխիթար Գոշը և XIII դարի կրտսեր սերնդի ժամանակակից Կիրակոս Գանձակեցին: Վերջինս, Արծրունիների պատմությունը շարադրելիս, հավանաբար օգտվել է նաև իր մեծ նախորդի աշխատությունից: Կարևորագույն սկզբնաղբ-

յուր է հատկապես Մխիթար Գոշը, որովհետև նա եղել է ոչ միայն Արծրունիների ժամանակակիցը, այլև անձամբ ճանաչել նրանց, եղել նրանց առնչվող իրադարձությունների անմիջական մասնակիցը: Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ Գոշը հայտնում է, թե, երբ մեռավ վրաց Դեմետրե թագավորը և նրա փոխարեն թագավորեց որդին՝ Դավիթը, «այր բարեմիտ՝ մանաւանդ առ իշխանսն Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորս. և զի յոյժ մեծարէր պատուով զշահապ քաղաքին Տըփխաց՝ զՎասակ որդի Վահրամայ իշխանի և զեղբարս նորա զՔուրդն կոչեցեալ և զՍարգիս, և այնքան բարեսրտութիւն ցուցանէր՝ մինչև զի առաքէր և կոչէր զթագաւորն Կիւրիկէ որդի Դաւիթ թագաւորի Բագրատունւոյ, խոստանայր նմա դարձուցանել ի նա զթագաժառանգութիւն նորա, զոր նախնյացն իւրոց հանել էր ի նոցանէ»[49]:

Աներկբա է վկայությունը՝ Արծրունիների տոհմի ավագը XII դարի սկզբին եղել է Վահրամ իշխանը, որի Կարին փախած երեք զավակներին իմացել է պատմիչը: Նրանից ավագը՝ Վասակ իշխանն է վրաց թագավորից առաջինն արժանացել պատվի և կարգվել Տփխիսի քաղաքապետ: Իսկ Քուրդ իշխանը Կարին փախչելուց առաջ դեռ պաշտոն չէր վարել և հայտնի է եղել որպես Վասակ շահապի եղբայր: Այնուհետև Գոշը հայտնում է, թե Արծրունիների նկատմամբ Դավիթ թագավորի բարեհաճությունը վրաց իշխանների նախանձն ու ատելությունն են շարժում: Նրանք թունավորելով սպանում են բարեմիտ թագավորին, նրա տեղը կարգելով եղբորը՝ Գեորգիին (Գեորգի III), որը թագավորեց 28 տարի (1156-1184թթ.): Դավիթ թագավորի մահից հետո Արծրունի եղբայրները ստիպված են լինում փախչել Վրաստանից:

Գեորգին թագավորական իշխանությունը վերցնելուց հետո ցանկացավ ձերբակալել Տփխիսի քաղաքապետ Վասակին և նրա եղբայրներին, վրեժով էր լցված նրանց հանդեպ, որովհետև նախորդ թագավորի ժամանակ իրեն չէին մեծարում և սպասավորում արժանի ձևով, ինչպես թագաժառանգ Դավիթին: Համառորեն չարախոսում էին նաև այլ վրացի իշխաններ. «յաղագս այսորիկ փախստական եղեալ Վասակայ իւրովք եղբարքն հանդերձ, և երթալ ի Թիոդուպոլիս որ այժմ ասի Կարնոյ քաղաք: Եւ ամիրային որ կոչէր Սալտուխ խնդութեամբ և մեծարանօք ընկալեալ զնոսա»[50]: Նման ջերմ ընդունելությունը պատահական չէր: Երբ 1154 թվականին Կարինի այդ

սելջուկ Ամիրան Անի քաղաքի գրավման համար կռվում պարտվեց և գերի ընկավ վրաց թագավորին, Տփխիսի քաղաքապետ Վասակ Արծրունին մարդասիրաբար վերաբերվեց Սալդուխի հետ, սպասավորելով թեթևացրեց նրա կյանքը: Իսկ այժմ, երբ վրաց թագավորի ձեռքից փախստական էին դարձել Արծրունի եղբայրները, Կարնո տերը նրանց պատիվների արժանացրեց և շնորհեց բազմաթիվ գյուղեր: Մի քանի տարի անց այստեղ մահանում է Վասակը և թաղվում քաղաքի սուրբ Աստվածածին եկեղեցում: Վասակի (Արծրունիների) դրոշը, փողը և իշխանությունը տրվեց նրա Քուրդ եղբորը և, ըստ Մխիթար Գոշի, «Կայր նա անդ մեծաւ պատուով»:

Կարինից Գոշին հայտնի են եղել Վասակ, Քուրդ և Սարգիս Արծրունի եղբայրները, իսկ Կիրակոս Գանձակեցին չի իմացել Վասակի և Սարգսի մասին, բայց գիտի Քրդի՝ Թամար թագուհու կողմից հարգված հոգևորական եղբոր՝ Բարսեղի մասին, նաև Քրդի Դավիթ և Սադուն տղաներին, Արզուխաթուն դստերը, Սադունի Շերբարոք տղային և սրա հռչակավոր Սադուն զավակին[51]: Սակայն երկուսին էլ անհայտ է Քուրդի որդի Հասանը՝ Կայան գավառի տերը (Հասան Կայենեցի), որը պատմությունում հայտնի է Աղստևի հովիտ-Հրազդանի հովիտ քարավանային ճանապարհի միջնամասում կառուցած իր հոգետնով (=քարավանատուն) և վրաց Գեորգի Գ թագավորի դեմ Օրբելի իշխանների բարձրացրած ապստամբությանը (1176-1177) իր մասնակցությամբ: Նրան վրացիները կոչում են Գուզան Թաոսքարելի՝ Տայոցքարեցի, որովհետև Կայան գավառում Արծրունիների սեփականազրկվելուց և ապա, ժամանակ անց, թագավորից նորից շնորհների արժանանալուց հետո նշանակվել է Տայքի կամ Տայոց քարի կառավարիչ, ուստի Կայենեցի մականունը փոխվել է Տայոցքարեցի-Թաոսքարելիով:

Կարինի ամիրայության տեր մելիք Սալդուխը քսանհինը տարի կառավարելուց հետո մահացել է 1174 թվին[52]: Հավանաբար մինչև այդ վրաց թագավորի անողորմ վերաբերմունքը փոխվել է հօգուտ վտարանդի Արծրունի եղբայրների, մանավանդ, որ այլևս ողջ չէր նախորդ թագավորի ժամանակ իրեն անտեսած Վասակ իշխանը՝ Տփխիսի շահապը: Նախ 1161-ին Գեորգի III-ը Քրդի որդի Սադունին նշանակում է Շադդադյաններից ազատագրված Անիի քաղաքացիական կառավարիչ[53]: Անշուշտ, 1170-ականների սկզբին էր Հասանը ստացել Կայան գավառի իշխանությունը, իսկ Քուրդը՝ հրավիրվել Վրաստան, արժանացել շնորհների, նշանակվել Քարթլիի և Տփխիսի ամիրյանց ամիրա, որովհետև նրանք այդ պաշտոններով են հիշվում թագավորի դեմ Օրբելիների կազմակերպած խռովության առիթով:

Իսկապես, Քուրդն անմիրա չի եղել Կարինում գտնվելիս, այլապես դա կնշեր նրան լավ ճանաչող և հայրաբար սիրող Մխիթար Գոշը: Տավուշի մարզում Հասան Արծրունու (Կայենեցի) մասին վերը նշված քարավանային ճանապարհին հոգետան կառուցումից հետո այլ հիշատակություններ չկան: Եվ պիտի ընդունել, որ այդ շինարարությունը կատարվել է 1185-ից հետո, երբ տեղի ունեցավ Քուրդ Արծրունու բարձրացումը մինչև Քարթլիի և Տփխիսի ամիրաների ամիրայի, Տփխիսի քաղաքապետի, պետական խորհրդի («դարբազիի») անդամի և արքունի գանձապետի պաշտոնների մակարդակին: Իսկ Արջանոցի լեռնաշղթայի քարավանատան արձանագրության մեջ Քուրդը հիշատակվում է որպես իշխանաց իշխան և մանդատուրտուխուցիս, ուրեմն հոգետունը կառուցվել է 1180-ականների երկրորդ կեսին: Իսկ Քրդի մասին խոսելիս պետք է ընդունել այն տեսակետը, որ վրաց ազնվականների խռովության ժամանակ (1176-1177թթ.) թագավորի կողմ անցած «հայրենադարձ» Արծրունի իշխանը շնորհների է արժանացել ոչ անմիջապես և չի աքսորվել երկրորդ անգամ, ինչը պնդում են որոշ հեղինակներ: Վերջիններս նաև գտնում են, որ Ամիր-Քուրդը հայրենիք է վերադարձել Թամար թագուհու գահակալությունից հետո՝ 1185-ին: Իսկ փաստերը վկայում են, որ 1176-1177 թվականների ազնվականների խռովության ժամանակ թագավորի կողմ կանգնած Արծրունիները մնացել են տեղում և քայլ առ քայլ շարունակել իրենց վերընթացը ֆեոդալական հիերարխիայի աստիճանակարգում:

Նախ, մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից կարևորվում է Դավիթ Քոբայրեցու՝ Գրիգոր Աստվածաբերանի և Գրիգոր Նյուսացու ճառերի մեկնությունը, որի հիշատակարանն[54] արժեքավոր աղբյուր է ժամանակաշրջանի իրադարձությունների ընկալման համար: Պատմելով վրաց ազնվականների մի խմբի՝ Գեորգի թագավորի դեմ բարձրացրած խռովության մասին, պատմիչը հայտնում է, որ խռովության ղեկավարներ սպասալար Իվանե Օրբելին և նրա եղբայր Լիպարիտը նախ իրենց գավառացիների հետ ամրանում են անառիկ Կայան և նրա դիմաց գտնվող Կայծոն բերդերում: Ուրեմն Կայան գավառը XII դարի 60-70-ական թվականներին եղել է Օրբելիների տի-

րույթը: Այնուհետև սպարապետ Իվանեն իր որդիներով, կանանցով, ծառաներով գնում, մտնում է անառիկ Լոռի բերդը, իսկ նրա Լիպարիտ եղբայրը Դեմետր թագաժառանգի հետ՝ անմատույց Կայան բերդը, «որոնց թագավորի (Գևորգի Գ) հրամանով հետապնդեց Տփխիսի Քուրդ կոչվող բարեպաշտ ամիրապետը և նրանց հասնելով իր սեփական Մահկանաբերդ կոչվող գավառի կիրճի սահմանին, պատերազմի ավագափողը հնչեցնելով, բախվում են նրանց հետ, նրանց կրունկը շրջելով փախուստի մատնում, և հետապնդելով գրավում բանակի կահկարասին»: Ապստամբները Կայան գավառից «ծիապուրծ» հասնում են Լոռի դղյակը: Այս տեսնելով՝ Կայանի ամրոցականները և նրա սահմանակիցները հնազանդության են գալիս Գեորգի թագավորին: Ուստի այս ծառայության համար Քուրդ Արծրունին պիտի արժանանար միապետի մեծարանքին և ոչ թե պատժի կամ նոր աքսորի:

Արժանահիշատակ Կարո Դաֆադարյանը, Սանահնի վանքին նվիրված իր աշխատության մեջ ներկայացնելով Ամենափրկիչ եկեղեցու սքանչելի ճարտարապետությամբ գավիթը, բերում է դրա շինարարությանը նվիրված արձանագրությունը, ուր ասված է. «ՈԼ թիւ: (1181): Ի ժամանակս յաղթող թագաւորին Գեորգեա եւ յամիրսպասալարութեան Սարգսի եւ որդոց իւրոց Զաքարէի եւ Իվանէի եւ յամիրութեան Քրդին, ես Յոհաննէս, առաջնորդ սուրբ ուխտիս շինեցի զերբեմն լեալ զեկեղեցիս աւգնութեամբ ամիր Քրդին եւ վարդապետի մեծ Գրիգորի»[55]: Հետազոտողը նաև հայտնում է, որ ամիրա Քուրդն այդ ժամանակ Զաքարյանների կողմից Սանահնում նշանակված էր գործակատար իշխան: Թերակարծության տեղիք է տվել 1181-ին Սարգիս Զաքարյանին «ամիրսպասալար» անվանելը, քանի որ նա պաշտոնապես վրաց զորքերի սպարապետ (ամիրսպասալար) է նշանակվել 1185 թվականին՝ Թամար թագուհու գահակալությունից հետո: Այդ կարծեցյալ հակասությունը չի վրիպել մեծավաստակ Հակոբ Մանանդյանի ուշադրությունից, որը ճիշտ եզրահանգել է. «Հայկական վիմական արձանագրությունների վկայությունից կարելի է կռահել, որ Զաքարյանները, Վրաստանի համայն զորքերի գլխավոր հրամանատարության և ամիրսպասալարի պաշտոնը ստանձնելուց առաջ, եղել են, ըստ երևույթին, արդեն XII դարի երկրորդ կեսում՝ զորապետներ և սպասալարներ հայկական զորքերի: ...Հավանական է, ուրեմն, որ նրանք այդ թվականներին լինելով հայ զորքերի

հրամանատարներ՝ օգնականներ էին Վրաստանի ամիրսպասալարների»[56]: Ըստ այդմ, պետք է ընդունել, որ Քուրդ Արծրունին հայրենիքում է գտնվել Թամար թագուհու գահակալությունից շատ առաջ և վարել ամիրայի պաշտոն:

Ամիր Քրդի՝ Գեորգի III-ի կենդանության ժամանակ հայրենիքում գտնվելու օգտին է խոսում նաև Հաղարծնի վանքի*, ներքուստ, արևելյան պատին արված նվիրատվական հայտնի արձանագրությունը, որին անդրադարձել են շատ հեղինակներ: «Ի ՈԼԳ թուիս (1184) հայոց, ի թագաւորութեանն ափխազաց (պետք է հասկանալ՝ վրաց – Ռ.Ս.) Գեորգեա, ի հայրապետութեանն Հայոց տեառն Գրիգորի, ես՝ Խաչատուր վարդապետս և Սուքիաս նորոգեցաք զՍուրբ Գրիգորս, հրամանաւ թագաւորին եւ իւր մեծամեծ իշխանացն՝ Սարգսի, Ամիր-Քրդին, Անտոնի Եղունտելին, Ելբեկին»[57]:

Այս նշանավոր իշխաններից առաջինը Վրաստանի ապագա ամիրսպասալար Սարգիս Մեծն է՝ Զաքարյան-Երկայնաբազուկը, երկրորդը՝ արդեն ամիրա կարգված Մահկանաբերդի և Հաղբատի տեր Արծրունիների ավագը: Ինչպես երևում է ցուցակի հերթականությունից, վրաց արքունիքում եղած հայ ֆեոդալներից, Օրբելյանների խռովությունից հետո, սկսել էին գերադաս դիրք գրավել Զաքարյանները: Նաև պետք է աներկբայորեն ընդունել, որ Օրբելիների խռովության ժամանակ թագավորի դեմ կանգնած և նրա հակառակորդ Լիպարիտ Օրբելուն Մահկանաբերդում պարտության մատնած Ամիր-Քուրդը նորից չի արտաքսվել Կարին, և դա կլիներ անտրամաբանական: Այլապես, դեռ աքսորում գտնվող, այսինքն՝ ներման ու շնորհների չարժանացած Մահկանաբերդի Արծրունին 1181-ին և 1184-ին չէր կոչվի «ամիր» պատվանունով և տեղ չէր ունենա թագավորի հետ նույն ցուցակում, դա բացահայտորեն կհակասեր ֆեոդալական ազնվականության հետևած էթիկային:

* Հայկական ճարտարապետության այս նշանավոր հուշարձանի հիմնադրումը վերագրում են XI դարի երկրորդ կեսին (1071թ.), երբ երկրամասին իշխում էր մեծագործ Բագրատունիների Կյուրիկյան ճյուղը: Հաղարծինը եղել է միջնադարյան Հայաստանի կրթա-մշակութային և հոգևոր խոշոր կենտրոններից մեկը (վարժապետարան, ճեմարան): XII դարի երկրորդ կեսին Հաղարծնի վանահայրն էր Խաչատուր Տարոնացին, որը եղել է երաժիշտ և կանոնավորել է հայկական ձայնագրությունը, գրել գանձեր: Հանրահայտ է նրա «Խորհուրդ խորին» շարականը:

Արձանագրությունը նաև կասկած չի թողնում, որ Արծրունիները մինչև 1184 թիվը վերստացել էին իրենց հայրենիք Կայան գավառը: Դա ապացուցվում է նաև Մխիթար Գոշի՝ Խաչենից Քուրդ իշխանի մոտ (Կայան գավառ) վերադառնալու առթիվ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ: Իսկ հայտնի է, որ դա տեղի է ունեցել Արցախ աշխարհի Խաչեն գավառի Հաթերքի Դասնո անապատում Գոշի կողմից հայոց Դատաստանագրքի Նախադրությունը գրելուց (1184) հետո, «երբ Մխիթար վարդապետը լսեց, թե իշխանը վերադարձավ իր հայրենիք, եկավ նրա մոտ հին սիրո և մտերմության համար, որ ունեին միմյանց հանդեպ»[58]:

Գեորգի III թագավորի կենդանության ժամանակ Ամիր-Քրդի՝ հայրենիքում, և ոչ թե տարագրության մեջ, գտնվելու օգտին են խոսում նաև Աղստևի հովտի Մորո ձորո վանքի եկեղեցու ներքուստ, հյուսիսային խորանի թաղի վրա, քիվից վերև հինգ և վեց տողանի արձանագրությունները: Առաջինում ասված է. «Կամաւն աստուծոյ եւ ողորմութեամբ թագաւրի Գիաւրգէ, ես՝ Ամիր-Քուրդս առի գիր ազատութեան ի թագաւորէ սուրբ Աստուածածնիս Մորո ձորո»: Իսկ երկրորդով Գեորգի թագավորաց թագավորը հրամայում է Մորո ձորո վանքը տալ հայր Հովհաննեսին, ազատել ամեն տեսակի հարկից՝ «Ամիր-Քրդի հոգեցողությամբ»: Այս վիմագրերն ընթերցողները ժամանակին նկատել են, որ թեև նրանք չեն թվագրված, սակայն ժամանակը որոշվում է նրանցում հիշատակված անձերի ժամանակագրությամբ: Հայտնի է նաև, որ Թամարի ռուս ամուսին Յուրիին էլ վրացիները կոչել են Գեորգի, բայց ոչ երբեք՝ «թագավորաց թագավոր»: Արձանագրությունում խոսքը վերաբերվում է 1156 թվականից թագավորած և 1184-ին մահացած Գեորգի III-ին, որի օրերում Քուրդ Արծրունին հասել էր վրաց պետության ամիրայի դիրքին: Ասվածին օժանդակ ապացույց կարող էր ծառայել նաև Ամիր-Քրդի Սադուն որդու ներկայությունը 1181 թվականին Տավուշի մարզի Շխմուրադ (մեր կարծիքով Գետակիցք) կոչվող վանքի արձանագրության մեջ, ուր ասված է. «Ես՝ Գրիգոր շինեցիս զխորանիկս ածաբնակ, հրամանաւ Սադունոյ մեծ իշխանի»[59]: Վերջինս, ինչպես ասվեց, Գեորգի երրորդի կողմից 1161-ին նշանակվել է ազատագրված Անիի քաղաքացիական կառավարիչ:

Տարակարծություններ կան նաև Աբուլ-Հասանի անձնավորության հարցում: Ուսումնասիրողներից ոմանք նրան նույնացնում են

Ամիր-Քրդի հետ, ուրիշները՝ համարում են այլ մարդ: Մեր կարծիքով պետք է ընդունել առաջին տեսակետը, և ահա թե՝ ինչու: Նախ վրաց պատմագրությունից հայտնի է, որ վրացիները Քարթլիի և Թիֆլիսի ամիրա Քուրդ Արծրունուն կոչել են իր հայտնի Հասան որդու անունով՝ Աբուլ-Հասան[60], այսինքն՝ Հասանի հայր, որովհետև արաբերեն «աբուլ» նշանակում է «հայր»: Այդ տեսակետի օգտին են խոսում նաև հայկական աղբյուրները: Մեկում ասվում է. «Ի ՈԼԸ: 1189: Ի առաջնորդութեան տեառն Բարսեղի՝ հաւրեղբաւր իմո, ես՝ Դավիթ, որդի Վասակա միաբանեցա...»[61]: Սա փորագրված է Արծրունիների սեփականության Հաղբատի վանքի մեծ գավթի ավանդատան մուտքի ճակատին: Այս Դավիթը Կարինում մահացած Վասակ ամիրայի որդին էր, իսկ նրա հորեղբայր Բարսեղը նույնպես պատմական հայտնի անձնավորություն էր՝ Հաղբատի աթոռակալ եպիսկոպոսը, որը «տեսքով գեղեցիկ մարդ էր: Վրաց թագուհի Թամարը սրան տեսնելով՝ նրա վայելուչ գեղեցկության համար չափազանց մեծարեց նրան, մանավանդ, որ նրա եղբայրներն էլ արքունի տան վերակացուներ էին»[62]: Բարսեղ Արծրունին, վրացիները նրան կոչում էին Վասիլ, Թամար թագուհու հրամանով նշանակվեց Քարթլիի արքեպիսկոպոս՝ ընդունելով քաղկեդոնական դավանանք: Հավանաբար դա տեղի է ունեցել 1190-ական թվականների սկզբին, քանի որ, ինչպես տեսանք, նա 1189-ին դեռ հիշվում է որպես Հաղբատի առաջնորդ:

Բարսեղի դավանափոխությունը կատարվել է հեշտությամբ, որովհետև թագավորից հովանավորվող վրաց եկեղեցականները, հատկապես՝ նրանց Գրիգոր IV կաթողիկոսը, բացարձակ քաջալերում էին հայերի դարձը քաղկեդոնականության: Իսկ տխուր միջադեպն արդեն կար ամենաբարձր մակարդակով: Բարսեղ եպիսկոպոսի քրոջ՝ Սահակդուխտի տղան, նշանավոր Զաքարյան եղբայրներից Իվանեն է՝ արքունի վիզիրը, պատերազմական դաշտի հերոսը «խոտորվեց դեպի քաղկեդոնական աղանդը*... որովհետև նա (Իվանեն) մարդկային փառքն ավելի սիրեց, քան աստծու՝ հրապուրվելով Թամար թագուհուց՝ Գեորգիի դուստրից: Իսկ Զաքարեն մնաց հայերի դավանած ուղղափառության մեջ»[63]: Վարդան վարդապետն էլ երկ-

* Հայ քաղկեդոնականներից Տավուշի մարզում մնացել է XII-XIII դարերին վերագրվող Կիրանց և Սրվեղ եկեղեցիները: Ի դեպ, Կիրանցի եկեղեցու ներսի պատերին պահպանվել են հունատառ և վրացատառ մակագրություններ:

որդում է, թե՝ «Իվանէ խաբեալ ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացավ ի հաւատոյն»: Եվ այդ ժամանակ դավանական, հույների կողմից վաղուց բարձրացվող միարարության խնդիրներն այնքան էին լարվել հայ և վրաց եկեղեցիների միջև, որ վեճի կարգավորմանը Զաքարե ամիրսպասալարի խնդրանքով միջամտում են Կիլիկիայի հայոց Լևոն թագավորը և Նոր Գետիկի վանահայր, «օրինագիտական ուսումով հռչակված» Մխիթար Գոշը: Սակայն դառնանք Ամիր-Քուրդ և Աբուլ- Հասան զուգորդությանը:

Այս երկու անձերի նույնականության հաստատմանը նաև նպաստում է Քարթլիում Թամար թագուհու կողմից արքեպիսկոպոս նշանակված Բարսեղի (վրացերեն՝ Վասիլ) Թբիլիսիում եկեղեցու կառուցման կապակցությամբ արված արձանագրությունը (ներկայացվում է հայերեն թարգմանությամբ): «Իսկ կառուցեցի (խոսքը եկեղեցու մասին է - Ռ.Ս.) ի հատուցում իմ և իմ սիրելի եղբոր, Քարթլիի էրիսթավների էրիսթավ, ամիրաների ամիրա, Ռուսթավիի և յոթ մթիուլեթների (լեռնային մարզերի) տեր Աբուլ-Հասանի և իմ եղբոր առաջնեկ Դավիթ տղայի»[64]: Ինչպես վերը տեսանք Հաղբատի 1189 թվականի արձանագրությունից, մի այլ Դավիթ՝ Վասակ ամիրայի որդին, արդեն իր հորեղբայրն է անվանել Բարսեղին: Վրաստանում Վասիլ կոչված նույն Բարսեղը վկայում է, որ ինքը մյուս Դավթի հորեղբայրն է, Աբուլ-Հասանի եղբայրը: Ուրեմն Աբուլ-Հասանն ու Վասակը հարազատ եղբայրներ են, իսկ Վասակը ունեցել է Քուրդ անունով եղբայր: Եվ քանի որ ճշտորեն կրկնում է Ամիր-Քրդի վարած պաշտոնները, հետևաբար նա և Աբուլ-Հասանը նույն մարդիկ են: Դրա օգտին է խոսում նաև նոր Գետիկի վանքի սուրբ Աստվածածին «հռչակավոր ու ծիծաղատեսք» եկեղեցու շինարարության ավարտի կապակցությամբ Կիրակոս Գանձակեցու հաղորդումը: Պատմիչի ասածից իմանում ենք, որ Մխիթար Գոշն այն կառուցել է ոչ միայն միաբանների, «այլև բարեպաշտ իշխանների՝ Քրդի որդիներ Դավթի և Սադունի, սրանց քույր Արզուխաթունի՝ հաթերքցի Վախթանգի կնոջ օգնությամբ»[65], որն իր դուստրերի հետ այծի շատ փափուկ աղվամազի գույնզգույն թելերով պատրաստեց սուրբ խորանի գեղեցիկ վարագույր՝ Փրկչի մարդեղության պատկերով, որոնք հիացնում էին տեսնողներին: Հայտնի է նվիրատվության ժամանակը՝ «Ի ՈՒԶ թուին» (1197): Երբ Ամիր-Քուրդը չկար, և ասպարեզում էին նրա երկու տղան և մեկ աղջիկը: Իսկ ինչպես երևում է Գանձակեցու ներկայացրած

ցուցակի հերթականությունից, Ամիր-Քուրդի ավագ որդին Դավիթն է, ինչը Աբուլ-Հասանի կապակցությամբ վկայում է նրա եպիսկոպոս Բարսեղ եղբայրը, որը Դավթին անվանում է առաջնեկ: Ուրեմն այս երկու Դավիթների հայրերը՝ Ամիր-Քուրդը ու Աբուլ-Հասանը, նույն անձինք են: Միջարկելով նշենք, որ հոր կամ պապի անունը զավակներին տալով նրանց հիշատակը հարգելը սովորություն է նաև հայերիս մեջ: Օրինակ, Զաքարյան Սարգիս և Վահրամ եղբայրները, երկուսն էլ ունեին Զաքարե որդիներ՝ իրենց հոր անունով և նրանց զավակների մեջ կային Սարգիս ու Վահրամ: Կարելի է մտածել, որ Մահկանաբերդի Արծրունիների նախնին՝ Վահրամի հայրը, կոչվում է Դավիթ, որի պատվին իրենց տղաներին կոչել են նրա Վասակ և Քուրդ զավակները, ուստի սրանց տոհմածառը կազմելիս կսկսենք (վերապահումով) Դավթից: Իսկ դառնալով Վահրամ Արծրունու նշանավոր որդուն՝ ասենք, որ երբ ղփչաղ զորահրամանատարի փոխարեն վրաց ամիրսպասալար նշանակվեց Սարգիս Զաքարյանը, ապա նոր պատիվների ու պաշտոնների արժանացավ նաև նրա աներձագ Ամիր-Քուրդը կամ Աբուլ-Հասանը: Նա դարձավ Տփխիսի քաղաքապետ, ամիրապետ, պետական խորհրդի («դարբազիի») անդամ և ֆինանսների նախարարի տեղակալ, ապա՝ նախարար, որոնք այնուհետև Վրաց պետության մեջ դառնում են Մահկանաբերդի և Հաղբատի տերերի ժառանգական արտոնությունը:

Գեորգի Գ-ի մահից հետո գահակալած Թամարն ամուրի էր, և ազնվականությունը շահագրգռված էր դեռատի թագուհու շուտափույթ ամուսնությամբ, իսկ մեծատոհմիկ աստիճանավորների յուրաքանչյուր խումբ ցանկանում էր իր թեկնածուին փեսայացնել: Այդ առթիվ հրավիրվում է պետական խորհրդի («դարբազիի») նիստ, որին իր նախաձեռնությամբ ուղղություն է տալիս Ամիր-Քուրդը: «Խորհրդակցությունում ելույթ ունեցավ Թբիլիսիի բնակիչներից մեկը, թավադ և արքայաց արքայից լիակատար վստահություն վայելող, Քարթլիի և Թբիլիսիի Աբուլ-Հասան անունով ամիրան»[66] և փեսացու առաջարկեց Անդրեյ Բոգոլյուբովսկի ռուս մեծ իշխանի տղա Յուրիի թեկնածությունը, որին ենթակա էին երեք հարյուր ռուս իշխաններ, որը սակայն այդ պահին, թագավոր հորեղբոր կողմից հալածված, գտնվում էր ղփչաղների մոտ: Տեղի է ունենում թագավորավայել հարսանիք, Զաքարյան Զաքարե և Իվանե զորավարների գլխավորությամբ իրականացվում են նաև մի քանի հաջող ռազմարշավներ:

Այս երջանկալի օրերին, երբ Աբուլ-Հասանը (=Ամիր-Քուրդ) նշանակվում է Տփխիսի քաղաքապետ, Արցախից Կայան գավառի Գետիկի վանք է գալիս Քրդին հայրաբար սիրող Մխիթար Վարդապետը: 1187-ին մահանում է Սարգիս Զաքարյանը՝ վրաց ամիրսպասալարը, և նրան փոխարինում է Գամրկել Թորելին: Շուտով Ամիր-Քրդի (=Աբուլ-Հասան) կացությունը կտրուկ վատանում է, երբ 1188-ին հարբեցողության պատճառաբանությամբ վրաց արքունիքից վռնդվում է Թամար թագուհու ռուս ամուսին Յուրին, և նրան նոր ամուսին է հրավիրվում օսերի թագաժառանգ Դավիթ Սոսլանը: Սա Ամիր-Քրդի համար պարտություն էր նշանակում: Որպես թագավորական տան հավատարիմ պաշտպաններ՝ հանդես եկան կենտրոնական ամուր պետության կողմնակիցներ Զաքարե և Իվանե Զաքարյանները, որոնք շրջվեցին Յուրի Բոգոլյուբովսկու վերադարձի համար պայքարող անհեռատես քեռուց: Եվ իսկապես, Ամիր-Քուրդը մի անգամ էլ ցանկացավ իր դիրքը պահպանել՝ փորձ անելով Թամարին երկրորդ ամուսին դարձնել իր բարեկամ Կարինի սելջուկ ամիրա Սալդուխի թոռ Նասրեդդինին, բայց՝ չստացվեց[67]: Ավելին, նա մասնակցեց Բոգոլյուբովսկու վերադարձի համար նրա կողմնակիցների ապստամբությանը, որը ճնշեցին Զաքարյան պայազատները: Ամիր-Քուրդը զրկվեց բոլոր պաշտոններից և պատիվներից, արտաքսվեց իր հիմնական տիրույթ Մահկանաբերդ, ուր մեռավ 75-80 տարեկան հասակում: Այդպես մտածելու հիմք է 1161-ին Անիի քաղաքացիական կառավարիչ նշանակված նրա որդի Սադունի (Սադուն Ա) հասակը, որն այդ ժամանակ պիտի լիներ գոնե 25-30 տարեկան: Ուստի Ամիր-Քուրդն էլ նրանից մեծ պիտի լիներ 20-25 տարով, և ծնված՝ 1110-1115 թվականներին: Ինչպես հայտնում է «Վրաց ժամանակագրությունը», հավատարիմների և յուրայինների նկատմամբ ողորմած Թամար թագուհին վրաց պատմության նվիրյալ պաշտպան Զաքարյաններին արժանացրեց մեծամեծ պատիվների, մասնավորապես, Իվանեին որպես հայրենիք տալով Ամիր-Քրդի Կայանն ու Կայծոնը[68]:

Ամիր-Քրդի (=Աբու-Հասան) Դավիթ տղայի հետագա կյանքի մասին 1197-ից հետո ոչինչ հայտնի չէ: Ասվեց, որ Հասանը նշանակվել է Տայքի կառավարիչ: Իսկ Սադունը, որը 1161-ին կարճ ժամանակով եղել է Անիի քաղաքացիական կառավարիչ, 1181-ին Շխմուրատի վանքում կատարված արձանագրությունում հիշատակված է որպես «մեծ իշխան»: Ուրեմն նա հոր պաշտոնեական վերելքի ժամանակ

տեր է դարձել Արծրունիների տիրույթների արևելյան ծայրամասին: Ինչպես տեսանք, 1197-ին նա դեռ իշխան էր կոչվում, իսկ ահա Մակարավանքի ՈԾԴ (1205) թվականին կերտված խաչքարի արձանագրության մեջ՝ «մեծ եւ հզաւր իշխանին Կայենոյ Սադունին»[69]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Յուրի Բոգոյլուբովսկուն վրաց գահին վերադարձնելու համար բարձրացված ապստամբության ժամանակ Սադունը եղել է կենտրոնական ամուր պետության աներեր պաշտպաններ Զաքարյան եղբայրների հետ և հոր՝ Ամիր-Քրդի, մահից հետո, XIII դարի սկզբին ճանաչվել է Արծրունիների ժառանգատեր և ստացել դրան համապատասխան պատվանունը «մեծ եւ հզաւր իշխանին Կայենոյ»: Իսկ XIII դարի կեսին, երբ Զաքարյանների և նրանց տոհմաճյուղերի ազդեցությունը սկսում է թուլանալ վրացական պետության մեջ, նորից բուռն առաջադիմում են Մահկանաբերդի Արծրունիները:

1205-ից հետո այլևս հիշատակություններ չկան Սադուն Ա-ի մասին, որի Շերբարոք որդու գոյությունը վկայում է նրա ժամանակակից Կիրակոս Գանձակեցին: Անհայտ են Շերբարոքի ռազմաքաղաքական գործունեությունը կամ բարեգործական ձեռնարկումները, որոնցով սովորաբար հետք էին թողնում իշխանազունները: Բայց Գանձակեցու աշխատությունից և այլ աղբյուրներից պատմությանը քաջածանոթ է նրա մեծահամբավ Սադուն (Սադուն Բ) տղան՝ Մահկանաբերդի և Կայանի հզոր իշխանաց իշխանը, Թիֆլիսի ամիրան, Իվանե Զաքարյանի որդի Ավագի մահից հետո (1270) վրաց գահի խնամակալը (աթաբեկ) և ամիրսպասալարը (զորքերի սպարապետ): Իշխել է մոնղոլների ծանր տիրապետության ժամանակներում և իր խելքի, ֆիզիկական ուժի, լեզուների իմացության (նաև մոնղոլերեն) ու անպարտ նետաձգության շնորհիվ սիրելի է դարձել Հուլավու խանին, որը Սադուն Բ-ին 1260-ին նշանակել է Սասունի կառավարիչ: Ժամանակագրությունը վկայում է, թե Հուլավուի հովանավորության շնորհիվ Վրաստանի թագավորը Սադուն Մահկանաբերդցու ձեռքին էր և «բարվոք վարում էր Վրաստանի գործերը: Ուստի նրա օրոք թաթարների կողմից բռնություն և անիրավություններ չէին լինում: ... Այսպես շենացավ Վրաստանն ու զորացավ»[70]: Նրա մահից (1283) հետո Վրաստանի աթաբեկությունն անցավ Սյունյաց մեծահամբավ Տարսայիճ Օրբելյանին, շուտով, նրա մահից հետո՝ Սադունի Խուբլուբուղա որդուն: Այս մեծահռչակ մահկանաբերդցին հիշատակու-

թյան արժանի հետքեր է թողել նաև հայրենի հողի վրա: Նա Հայաստանի տարբեր կողմերում հովանավորել է բազմաթիվ հոգևոր-մշակութային կենտրոնների, Տավուշի մարզում առանձնապես՝ Առաքելոց և Դեղձնուտ վանքերին, որոնցից երկրորդն իր ծաղկմանն է հասել Սադունի իշխանության օրոք: Բանասիրությանը հայտնի է, որ Սադուն Բ-ն ունեցել է երկու տղա: Կիրանցի ձորում՝ Խնձորուտ գյուղատեղի ավերակներում, կանգուն խաչքարի արձանագրությունը «Ի թվիս: Չ: (1251)» հայտնում է իշխանաց իշխան Սադունի Պապաց որդու մասին: Հայաստանում և Վրաստանում ճանաչված ռազմական գործիչ է եղել Սադուն Բ-ի Խութլուբուղա որդին, որը հաջորդել է հորը՝ ստանալով նրա տիրույթները, պաշտոնները ու տիտղոսները՝ տեր Կայանի[71] ու Մահկանաբերդի, Վրաց աթաբեկ և ամիրսպասալար: Վկայություն կա Խութլուբուղայի Մանկասար եղբոր մասին[71], հավանաբար՝ ոչ նույն մորից ծնված, որովհետև մոնղոլների բարքերը սեփականած Սադուն Բ-ն ունեցել է չորս կին, որոնցից վերջինը վրաց թագավորի աղջիկն էր: 1279-ին Շահնշահ Զաքարյանի Զաքարե որդու հետ կատարված դեպքերի կապակցությամբ մի այլ աղբյուրում հիշատակված է նրա կողակից, աթաբեկ և ամիրսպասալար Սադունի Վանեն աղջիկը:

ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴԻ ԱՐՇՐՈՒՆԻՆԵՐ



Եվ վերջապես անհրաժեշտ ենք համարում ճշտել Մահկանաբերդի Արծրունիների համար XII դարի սկզբից հայրենիք հանդիսացող գավառի պաշտպանական համակարգի հիմնական գործությունը համարված Մահկանաբերդի տեղը և առաջին անգամ նկարագրել՝ ըստ 2001-ի նեյեմբերի 10-ին կատարված մեր ուսումնասիրության:

Արշակունյաց թագավորության անկումից հետո հայ ժողովրդի չորս ու կես դար տևած անդադրում, հերոսական ոգորումների արդյունքը հանդիսացավ IX դարի վերջին Հայաստանի անկախ պետականության վերականգնումը Բագրատունյաց մեծագործ իշխանական տոհմի գլխավորությամբ: Սակայն լիիրավ անկախության հասնելու հրամայականով թելադրված՝ Բագրատունիներին հարկ եղավ նոր պետության ամրապնդման նպատակամետ քայլեր ձեռնարկել՝ նուրբ արտաքին քաղաքականությունը զուգակցելով տնտեսական զարգացման և հատկապես ռազմական շինարարության հետ: Վերջինիս կարևոր տարրերից մեկը տերության սահմանների երկայնքով պաշտպանական համակարգի (ամրությունների) ստեղծումն էր, որը կոչված էր արգելակել թշնամական բանակների մուտքը Հայաստանի ներքին շրջաններ: Բերդեր ստեղծվեցին նաև երկրի հյուսիս-արևելյան գավառների նախալեռնային գոտու ձորահովիտների վրա իշխող, դժվար մատչելի կետերում, ուր կարող էին հարձակումների ժամանակ հուսալիորեն պաշտպանվել և հակառակորդի դեմ հաղթական մարտեր մղել սահմանակալ գավառների տերերը:

Ներկայիս Տավուշի մարզում այդ ժամանակին վերաբերվող պաշտպանական համակարգի բաղկացուցիչներն են Գագ, Կայան, Կածարեթ, Տավուշ, Մածնաբերդ և Երգեվանք բերդերը: Նաև՝ Մահկանաբերդը, որը, ինչպես նկատել է Ռաֆայել Մաթևոսյանը, ճարտարապետական առումով լավ չի ուսումնասիրված[72]: Իսկ որոշ հետազոտողներ էլ շփոթել են այս ամրոցի տեղադրությունն ու անունը: Այսպես, ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (հ. 3, Երևան, 1991, էջ 650), Մահկանաբերդը տեղադրվում է «Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ձորափոր (Կայան) գավառում, Աղստև գետի միջին հոսանքի վրա, Ոսկեպար վտակի աջ ափին, Դեղձնուտ վանքի մոտակայքում»: Այո, պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ վաղ միջնադարում Ձորափոր, հետագայում Կայան կոչված գավառը գտնվել է Աղստև գետի միջին հոսանքի վրա, իսկ Ոսկեպարի հովտում տարածվել է Մեծ Հայքի Գու-

գարք աշխարհի Կանգարք գավառը[73], որը XII-XIII դարերում կոչվել է «գավառ Մահկանաբերդոյ»: Իսկ Մահկանաբերդը չի գտնվում Աղստևի Ոսկեպար վտակի աջ ափին, ուր և պիտի լինի Դեղձնուտի վանքը: Իրականում Մահկանաբերդը գտնվում է Ոսկեպարի աջակողմյան օժանդակ Քարահանի (կամ Կիրանց) Սամսոն վտակի աջ ափին և Դեղձնուտ վանքի դիմաց՝ հարավ-արևելյան կողմում: Սակայն մի այլ տեղում մասնագետներից մեկը հայտնի ամրոցն անվանել է Բերդախոր՝ առանց նշելու օգտագործած աղբյուրը: Իսկ Սարգիս Բարխուդարյանն, աշխարհագրական այս միջավայրին վերագրելով Մահկանաբերդ վանքը, այն ենթադրաբար նույնացրել է Քարահան (Կիրանց) գետի միջնամասում գտնվող Առաքելոց հնավայրի* բարձունքում հառնող վանք-ամրոցի հետ: Եվ իրավացի է եղել մեծավաստակ գիտնականը, քանզի շրջակայքում բազմաթիվ են Մահկանաբերդի Արծրունիներին վերաբերող արձանագիր հուշարձանները: Անշուշտ, միջնադարյան քարավանային ճանապարհների խաչմերուկում գտնվող շահաշատ, մեծ գյուղաքաղաքը խաղաղ օրերին հանդիսացել է գավառի իշխանների նստավայրը, իսկ թշնամական հարձակումների դեպքում նրանք, հետ քաշվելով, սատարել են ոչ շատ հեռվում գտնվող իրենց անառիկ բերդին:

Անհայտ է Մահկանաբերդի կառուցման ստույգ ժամանակը, նաև՝ ում կողմից կառուցված լինելը: XII-XIII դարերում այն պատկանել է վրաց թագավորությունում բարձր դիրքի և շնորհների արժանացած Արծրունիներին, որոնք իրենց գավառի և բերդի անունով կոչվում են Մահկանաբերդի Արծրունիներ: Նրանց տիրապետության տակ տարբեր ժամանակներում եղել են նաև Աղստև գետի միջին հոսանքը զբաղեցրած Կայան (ավելի հնում՝ Ձորափոր) գավառը, Հաղբատն ու Սանահինը: Իսկ Մահկանաբերդը գտնվում է այդ տարածաշրջանի կենտրոնում, Քարահանի (Կիրանցի) ձորում, ավելի ստույգ՝ նրա աջակողմյան նշանակալի վտակ Սամսոնի ստեղծած ակնահաճո գոգահովտի գրեթե կենտրոնում, Մթնասարի լեռնաշղթայի արևմտյան

* Հնավայրը ներկայումս կոչվում է վանական համալիրի անունով: Հավանաբար դա Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կանգարք գավառի արդեն VII դարից հայտնի իշխանանիստ Կուսեն գյուղաքաղաքն է, որին XII-XIII դարերում իշխել են Մահկանաբերդի Արծրունիները, XVI-XVII դարերում՝ Խերումյան տոհմի մելիքները (տես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, Եր. 1991, էջ 145, և «Էջմիածին» ամսագիր, 1998, Զ, էջ 77-80):

հիմքից սկզբնավորվող խիտ անտառապատ, երկու կողմերից խիստ զառիթափ լանջերով ժայռապարի ծայրին, ճիշտ անդունդի եզրին, որի մութ ու խոնավ հատակին բնության լռությունն է խախտում միայն մշտահոլով գետակը: Մահկանաբերդը, իհարկե, հանդիսացել է ոչ միայն անառիկ ամրություն, այլև՝ հիանալի դիտակետ, որովհետև անզեն աչքով հստակորեն ընկալվում է Մթնասարի լեռնաշղթայի լեռնալանջերով և Սամսոնի ձորով ձեռնարկված յուրաքանչյուր շարժում:

Անվան մասին: Մահկանաբերդ տերմինը բանասիրության մեջ ստուգաբանվում է երկակի՝ «մահկան+ացու» և «բերդ», կամ «մական+ա» և «բերդ» ձևերով: Առաջինով կոչվել է մահկանացու արարածներին պատկանելու՞, թե՞ կործանման ենթակա լինելու պատճառով՝ անհայտն է: Սակայն տեղավայրի ուսումնասիրությունից հետո մենք հակված ենք ընդունելու երկրորդ անվանումը՝ ունենալով տրամաբանական բացատրություն: Բանն այն է, որ ժայռաբերդը գտնվում է Մթնասարի լեռնաշղթայի միջնամասում թառած բարձրադիր Սանգյառ սարավանդի հիմքից ճիշտ արևելք-արևմուտք ուղղությամբ դեպի Սամսոնի ձորի գոգահովտի կենտրոն ուղիղ գծով ճառագայթվող լեռնաբազկի զանգվածեղ ծայրին: Ներքևում Սամսոնի վանքն է, իսկ աջակողմյան բացատում՝ Դեղձնուտի վանքը, որի մոտով դեպի Կյուրիկյանների Տաշիր-Ձորագետի թագավորության մայրաքաղաք Լոռի բերդ է ձգվել քարավանային ճանապարհը: Կողքից նայելիս՝ ուղիղ գծով ձգվող լեռնաբազուկը չափազանց նման է դեպի նպատակակետ մեկնած թագավորական իշխանության խորհրդանիշ մականի (=գայիսոն): Սարավանդի հիմքից դեպի անդունդի եզր խիստ զառիթափ լանջերով անտառապատ լեռնաբազուկը՝ մականի նման հաստանալով, ավարտվում է բարձրակետից ճառագայթվող երկար ու կարճ նոր, ժայռեղեն սլաքներով (Ա և Բ), կազմելով մի եռաթև աստղ, որոնց ելման կետում կերտվել է բերդի համալիրը (Տես Մահկանաբերդի հատակագիծը): Ինչպես և վայել է գայիսոնին (=մականին), մեր կողմից «մական» կոչված, ավելի քան մեկ կիլոմետր ձգվող լեռնաբազուկը զառիթափ լանջի վերին շարունակության վրա, ողջ երկայնքով, ակնառու քանդակների նման պատված է կարծես երկնի լազուրից կաթած ուլունքաշար ինը գեղեցիկ ժայռերով, որոնք արևելյան կողմից գրեթե անմերձենալի են դարձնում ամենամեծի կատարին թառած բերդը: Հայոց բնության ոգին մի



ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

անձեռակերտ զարդ է շնորհել, իսկ նրա զավակները՝ հավանաբար երկրի պաշտպանունակությամբ մտահոգ Բագրատունյաց գահատոհմի պայազատները, մականի նմանվող լեռնաբազկին հագցրել են ադամանդե մի ակ՝ Մականաբերդ անունով, որին հետագայում հավանաբար հավելվել է «հ» հնչյունը և սկսել է կոչվել Մահկանաբերդ: Իսկ ավելի ուշ նախնական անունը մոռացած տեղաբնակները նախ կոչել են «բերդի քար», ապա դարձրել հատուկ անուն՝ Բերդաքար*:

Խորին հարգանք մեր բերդաշինարար ճարտարապետին: Անանուն վարպետն իր ստեղծագործությունը կարողացել է լավագույնս տեղադրել Սամսոնի ձորի հատակից ուղղահայաց լանջերով, 200-250 մետր բարձրության վրա հառնող ժայռի կատարին՝ լիովին բավարարելով պատվիրատուի պայմանն անառիկության մասին: Տեղանքի խիստ զառիթափության շնորհիվ այստեղ ի սպառ բացառված է եղել հակառակորդի կողմից պարսպակործան մեքենաների կիրառումը: Բոլորովին դյուրին չեն եղել նաև հակառակորդի զորքերի քարագնաց և անձավամուտ ստորաբաժանումների՝ բերդին գեթ հասնելու փորձերը, որովհետև վերևի հարմար դիրքից մեկ հարյուրյակը կարող էր հեշտությամբ խափանել ներքևից վեր ձգվող հազարյակի առաջխաղացումը: Հավանաբար Մահկանաբերդը գրավել ձգտող հակառակորդի հիմնական կռվանը մնացել է տևական պաշարումը, քանզի բերդականներն ունեցել են կարևոր խոցելի կողմ. չեն ունեցել ջրաղբյուր և դրա պակասության պատճառով շուտով սկսել են տոչորվել ծարավից: Ինչպես երևում է ներկայացվող գծագրից, Մահկանաբերդն ունեցել է ոչ ուղղանկյուն հատակագիծ, սակայն ունեցել է չորս որմնահեցավոր միջնաբերդ, նաև դրսի բակ՝ նորից պարիսպներով, զույգ զորանոցներ (մեր կարծիքով), ջրամբար և օժանդակ սենյակներ: Դրանք կերտված են հիմնականում մանր քարերից՝ կապակցված կրաշաղախով: Հասկանալի է՝ դարերն անհետ չեն անցել: Պարիսպների և մյուս շինությունների վերնամասերն ավերված

* «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում (հ. 1, Եր., 1986, էջ 667) «Բերդաքար» հոդվածի հեղինակը մեր կարծիքով ճիշտ է ներկայացրել կառույցի տեղը՝ սակայն չնշելով, որ դա Մահկանաբերդն է: Նաև անընդունելի է, որ բերդը ներսում ունեցել է ջրավազան, և ջուրը խողովակներով բերվել է դրսից, որովհետև դիմացի սարալանջից բերված ջրի ճնշմանը, ձորից բարձրանալու ճանապարհին, չէին դիմանա կավե խողովակները:

են երկրաշարժերից, քամուց և արևից: Մեր օրերի գանձախույզներն էլ իրենց սև գործն են կատարել պայթեցումներով:

Համալիրի առանցքային կետը N 1 որմնահեցն է, որը մյուսներից (N 2, 3, 4) չափերով մեծ է գրեթե երեք անգամ: Դրանից դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք 1200 անկյան տակ բացվում են «Մական» լեռնաբազկի վերջնակետից ճառագայթվող Ա և Բ սանրանման, սրակատար ժայռերը: Բ կամ կարճ ճառագայթի մեծ մասը մնացել է միջնաբերդի տակ և հատակագծի վրա նշված է սպիտակ շրջագծիկներով: Դժվարին տեղանքի փոքր ինչ հարմար յուրաքանչյուր մակերես արդյունավետ օգտագործելու նպատակով մտահոգ ճարտարապետը երկար կամ Ա ճառագայթի երկու կողմերին կարծես կպցրել է մի քանի օժանդակ շինություններ, և մեր կարծիքով, երկու զորանոցները՝ 4 մX12 մ չափերի: Ժայռի արևմտյան լանջին՝ միջնաբերդի մուտքի մոտ, կառուցվել է նաև 2.5 մX4 մ չափերով ջրամբար, որը պահպանվել է 2 մ խորությամբ և ունեցել է ծածկ: Ոչ ուղղանկյուն հատակագծով միջնաբերդի հարավ-արևմտյան 17 մ երկարությամբ և 6-8 մ բարձրությամբ պահպանված պարսպապատը միացնում է N 2 և Բ ճառագայթի վրա կերտված N 3 որմնահեցերը: N 1 և N 2 որմնահեցերը միացնող պատի մեջ, բերդի հյուսիսային կողմում, գտնվում է 1.4 մ լայնքով և 1.5 մ բարձրությամբ միակ մուտքը, որի բարավորը պահելիս են եղել հավանաբար կենի կամ կաղնի չորս հաստ, կլոր կոճերը, որոնց վրա կախվել է դուռը: Բերդի տարողությունը մեծացնելու, ավելի շատ խաղաղ բնակիչ ընդունելու նպատակով միջնաբերդի հարավային և արևելյան կողմերը վերածվել են արտաքին բակի, որը միջնաբերդից ցածր է եղել 8-10 մետրով: Կան ավերված բազմաթիվ սենյակների, անշուշտ՝ կացարանների հետքեր: Այս բակը պաշտպանված է անդունդներից ելնող, հաճախ ուղղահայաց ժայռերի շարունակությունը կազմող, արտաքին պարսպով, որը սկսվում է մեծ (N 1) որմնահեցի հյուսիսային հիմքից, ուղիղ գծով 35 մ ձգվում դեպի հարավ-արևելք, ապա սուր անկյան տակ թեքվում արևմուտք և, ուղղությունը մի քանի անգամ ժայռերի կատարներով փոխելով, N 3 որմնահեցի հիմքին միանում արևելյան կողմից: Այս որմնահեցի բարձրության միջնամասից սկիզբ է առնում միջնաբերդի հարավային՝ ոչ ուղիղ, մեջտեղում անկյունավոր պարսպապատը, որը միանում է արտաքին բակի մեջ բարձրացող N 4 որմնահեցին: Վերջինս, իր հերթին ձգվելով հա-

րավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ՝ միանում է N 1 որմնահեցին:

Մնում է նորից զարմանալ ու հիանալ մեր նախնիների շինարարական տաղանդով ու անսպառ տոկունությամբ: Ինքնապաշտպանության, ազգակիցների կյանքն անողորմ բարբարոսների հարվածներից զերծ պահելու հրամայականին ունկնդիր՝ նրանք «Մական» լեռնաբազկի բարձրակետում կերտել են անառիկ ամրոց, իսկ ջուրը, կիրը, ավազն ու քարի մեծ մասը վեր բարձրացրել ձորերի հատակից: Եթե ջրի, կրի ու ավազի մասին խոսքն աներկբա է, ապա ասենք, որ բերդաշինարարները ողջ քարը չէին կարող հավաքել նման բարձրությունում, և դրա ապացույցն են պարիսպների մեջ շարված մեծաքանակ գետաքարերը: Հանուն կյանքի շարունակման, թե ինչով են վեր բարձրացրել շինանյութերը՝ կարելի է միայն կռահել: Գրաստների աշխատանքի համար շատ թե քիչ հարմար են եղել Բ ճառագայթի ներքին լանջերը, որոնց միջնամասից վեր կարող էր հարմարվել միայն մարդու ոտքը: Ուստի այստեղ հավանաբար մի քանի տարի լարվել են հազարավոր բանվորների մկաններ: Իսկ պատմությունից հայտնի է, որ նման ծավալուն աշխատանքների մեջ ներգրավվելիս է եղել հայոց զորքը: Շինարարության ավարտից հետո ծառացել են այլ խնդիրներ, որոնց մեջ չափազանց կարևորվել է խմելու ջրի պաշարների լրացումը: Ուստի, մինչև հակառակորդի մոտենալը, մերձակա ձորից տկերով, կժերով ջուր են կրել ու լցրել 20-25 խմ տարողությամբ ջրամբարը: Գուցե ջրահավաք (տեղումներից) հարմարություններ են եղել նաև միջնաբերդից ներս և արտաքին բակում: Դրանց մասին կարող են ասել միայն ապագայի ուսումնասիրողները, որոնք կձեռնարկեն պեղումներ և մանրակրկիտ կչափագրեն պատմական Մահկանաբերդը:

Ինչպես Տավուշի մարզի մյուս բերդերը, այնպես էլ՝ Մահկանաբերդը, պաշտպանական կարևոր դեր է խաղացել Բագրատունիների, նրանց շառավիղ Կյուրիկյանների, ապա՝ Զաքարյանների և Արծրունիների տիրապետության ժամանակներում, երբ այդ կառույցները սահմանակալ ամրությունների դեր էին կատարում: Իսկ մոնղոլական տիրապետության հաստատումից հետո (XIII դարի կեսեր), երբ նախկին սահմանակալ բերդերը մնացին նոր տերության ներքին նահանգներում, ապա արագ սկսեցին կորցնել իրենց նշանակությունը՝ դրանք լքվեցին: Օրինակ, Մահկանաբերդի Արծրունիները մեկընդ-

միշտ հաստատվեցին Տփխիսում և Կունեն գյուղաքաղաքում: Ուստի բերդերն էլ մնացին անխնամ և արդեն 7-8 դար շարունակում են քանդվել-քայքայվել: Այդ ճակատագրով է իր տարեգրությունը շարունակում նաև Մահկանաբերդը:

* * *

Մեր շարադրանքում մանրամասնելով Մահկանաբերդի Արծրունիների պատմությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նրանց ժամանակաշրջանին և իրադարձություններին առնչվող հայ մտքի մեծերից մեկին՝ Մխիթար Գոշին: Նրա կյանքի ու բեղուն գործունեության մասին կա զգալի գրականություն, որը տարբեր տեսանկյունից ներկայացնում է միջնադարի անվանի մտածողի անմահ վաստակը հայ և համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Անգնահատելի է նրա գործով խանդավառ Կիրակոս Գանձակեցու պատմությունը: Փաստերի համադրությամբ ուսումնասիրողները համերաշխորեն պնդում են, որ Մխիթարը Հովհաննես Տավուշեցու մոտ վարդապետական կոչում (ինքնուրույն քարոզելու իրավունք) ստանալուց հետո Կիլիկիա է մեկնել 1163 թվականին: Միջնադարերում սովորաբար նման գիտական կոչման արժանանում էին 30 տարեկան հասակում: Ուրեմն իրավացի են նրանք, ովքեր պնդում են Մխիթարի՝ մոտավորապես 1130 թվականին ծնված լինելը: Եվս մեկ յոթամյա վարդապետական ուսուցման դասընթաց նա ավարտել է Կիլիկիայի բանիբուն գիտնականների մոտ: Պետք է ընդունել, որ Մխիթարն Արևելյան Հայաստան է վերադարձել 1170-ին և նախ սպասավորել Կարինում: Այստեղ բավական ժամանակ է ունեցել ծանոթանալու և մտերմանալու վրաց թագավորի կողմից հալածված Քուրդ Արծրունու հետ: Այժմ կա շրջանառվող տեսակետ, թե Կիլիկիայից վերադառնալուց հետո նա ապրել է Գանձակում, ապա Աղվանից Ստեփաննոս կաթողիկոսից հալածվելով՝ տեղափոխվել Խաչեն: Մեր կարծիքով ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է ոչ անհայտ վավերագրի ստեղծման տարեթիվը և Մխիթարի «Գետիկցի» մականունը, որպիսին սովորաբար տրվում էր որևէ միաբանության վարդապետի կամ թեմի առաջնորդ եպիսկոպոսի: Խոսքը վերաբերում է հյուսիս-արևելյան Հայաստանի երևելի հոգևոր հայերի՝ 1179-ին Հռոմկլայում նստող հայոց

կաթողիկոս Գրիգոր Տղային (Գրիգոր Դ) հղած մերժողական նամակին՝ բյուզանդական եկեղեցու հետ միավորվելու առաջարկի կապակցությամբ: Դրա մուտքում ասված է.

«Սուրբ և աստուածընկալ գլուխ մեր և պսակ պարծանաց Հայաստանեայց Գրիգոր կաթողիկոս, որ արևելս հիւսիսոյ. վարդապետ Գրիգոր Սանահինին, և հայր Յոհաննէս, վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դավիթ. Խաչատուր վարդապետ Հաղարծնին, Մխիթար վարդապետ Խառակերտոյ. ***և միւս վարդապետ Գետիկայ***»[74] (ընդգծումը մերն է - Ռ.Ս.):

Վավերագրից պարզ է դառնում, որ Կիլիկիայից Կարին, ապա Արևելյան Հայաստան վերադառնալուց հետո Գոշը մշտական բնակություն է հաստատել Կայան գավառի Գետիկ (Հին Գետիկ) վանքում և 1179-ից առաջ ծավալել եկեղեցական և գիտամանկավարժական գործունեություն, դարձել Գետիկի վանքի միաբանության առաջնորդ-վարդապետ, դրսևորել այնպիսի խոր գիտելիքներ, որ մասնակից է դարձել համազգային դավանական կարևորագույն խնդիրների լուծմանը: Իսկ նրա՝ Գետիկի վանք գալը պետք է բացատրել Քուրդ Արծրունի իշխանի հետ Կարինում հաստատված ջերմ բարեկամությամբ: Չէ՞ որ Գետիկի վանքը գտնվում էր Կայան գավառում: Իսկ դա եղել էր Մահկանաբերդի Արծրունիների հայրենիքը, և այնտեղ դեռ կային Քուրդ իշխանի հարազատներից ու հավատարիմներից շատերը, որոնք կարող էին իրենց վտարանդի իշխանի հանձնարարականով եկած իմաստասեր վարդապետին ընդունել հավուր պատշաճի, տալ ապաստան և կրթամշակութային գործունեություն ծավալելու կարելիություններ:

Պատմիչը հայտնում է, թե Մխիթարի՝ հայրենիք վերադառնալուց հետո «Նրա իմաստության լուրը տարածվեց ամբողջ երկրում: Շատերը աշակերտում էին նրան ուսուցչական ուսման մեջ»[75]: Պետք է ընդունել, որ Գետիկի վանքում Գոշի առաջին աշակերտներից է եղել նաև Գետիկի վանքի ապագա առաջնորդ Սարկավագը, որն ուսուցչի՝ Արցախի Դասնո անապատից վերադառնալուց (1185-ից) հետո «մեծ ուրախությամբ նրան ընդունեց և ինքն էր սպասավորում նրան. այնտեղ բավական ժամանակ մնաց»[76]: Իսկ Մխիթարի վերադարձը Դասնո անապատից համընկնում է 1184-ին արդեն ամիրայի տիտղոս ստացած Քուրդ Արծրունու (Ամիր-Քուրդ)՝ իր հայրենի Կայան (կամ Կայենո) գավառ վերադառնալուն և Դատաստանագրքի Նախադրու-

թյան գրելն ավարտելուն: Որովհետև Գետիկի վանքում է նա սկսել և 1188-ին ավարտել «Մեկնութիւն համառօտ մարգարեութեան Երեմիայի» աշխատությունը, որի հիշատակարանը ընդլայնում է մեր գիտելիքները: Գոշը հայտնում է, թե Վրաց պետությունում շփոթ վիճակ էր տիրում Թամար թագուհու պատճառով, որը թողել էր «ռըզոց» (ռուսների) թագավորի որդուն և ամուսնացել ալանաց թագաժառանգ Վրաստանում Դավիթ կոչված Սոսլանի հետ, և ավելացնում, որ աշխատությունը գրվել է Գրիգոր Տղայի (1173-1193) կաթողիկոսության և «յեպիսկոպոսութեան տեառն Բարսեղի՝ հռչակաւոր ուխտիս Հաղբատայ: Բայց գրեցաւ յանապատիս Գետկայ, ընդ հովանեաւ Սրբոյն Գողգոթայի և Լուսավորչին Գրիգորի»: Հայտնի է, որ Թամարը Սոսլանի հետ ամուսնացել է 1187 թվականին, ուրեմն հիշատակված մեկնությունը նա սկսել է շարադրել գուցե մեկ-երկու տարի առաջ: Բացի այդ, Գոշը հայտնում է Հին Գետիկի վանքի եկեղեցիների անունը՝ «Սրբոյն Գողգոթայի և Լուսաւորչին Գրիգորի»: Վանքը երկրաշարժից հիմնովին ավերվել է 1188 թվականին:

Իսկ Մխիթար վարդապետը Հաթերքի (Խաչենի) տեր Վախթանգի մոտ կարող էր գնացած լինել 1182 կամ 1183 թվականին, երբ Գետիկի վանքում տվել էր իր դպրոցի առաջին շրջանավարտներին, նաև քահանա ձեռնադրել Սարկավագին: Նաև հայտնի է, որ Հաթերքի գահակալ իշխանաց իշխան Հասանը, երկիրն ասպատակող թշնամիների դեմ 40 տարի հաղթական պատերազմներ մղելուց հետո, 1182-ին իր տիկնոջ հետ կրոնավորելու է գնում Դադի վանք: Գահերեց է դառնում ավագ որդին՝ Վախթանգը (1184-1214): Հաթերքի նոր գահակալը և նրա եղբայրները մեծ պատիվներով են ընդունում Աղվանից Ստեփաննոս Գ կաթողիկոսի (1155-1195) բանսարկությամբ սելջուկ թուրքերի հալածանքներից նեղված Մխիթար Գոշին: Նրանց ջերմ վերաբերմունքն էլ իր բացատրությունն ունի: Մխիթար վարդապետի սիրելի բարեկամ Քուրդ Արծրունին Վախթանգ իշխանի աներն էր, նրա կնոջ՝ բարեպաշտ Արզուխաթունի հայրը, որոնց շուտով երախտագետ գիտնականը նվիրեց Դատաստանագրքի առաջին ձեռագիր օրինակներից մեկը «Յիսուս Քրիստոս, յորժում գաս ի նորոգեալ զերկիր, նորոգե հոգւով և մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախթանգ և զամուսին իւր Արզու խաթուն ի կեանս անմահս» ընծայագրով:

Մխիթար Գոշն ինքն է վկայել, որ իր նշանավոր ստեղծագործությունը՝ Դատաստանագիրքը, սկսել է գրել ՈԼԳ (1184) թվականին, Արցախի Դասնո անապատի Հոռոմաշեն վանքում: Սակայն խոսքը վերաբերում է մեծահռչակ աշխատության գլխավոր բաժնին՝ Նախադրությանը, որովհետև այն ամբողջությամբ ավարտել է ավելի ուշ՝ 1193-ին, Նոր Գետիկի վանքում: Նաև հայտնի է, որ միջնադարյան իրավագիտական մտքի այդ նշանավոր հուշարձանի երևան գալուն նպաստել է Աղվանից Ստեփաննոս կաթողիկոսը, որը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, նաև հալածել է գիտնականին: Ինչու՞: Հավանաբար պատասխանի համար բավարար է Դատաստանագրքի հետ Գոշի թողած հիշատակարանի հաղորդումը. ինքը չի հնազանդվել կաթողիկոսի՝ դատաստանագիրք գրելու առաջարկին:

«Բայց եղ պատճառ գրելոյ զսա ի հարկելոյ զմեր տեառն Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի, մի անգամ և երկիցս, և ես պատճառեցի զանձիս տկարութիւն, և զտգիտութիւնս, ***իսկ իբրև առաւել ստիպեաց, յանձն առի մոռացեալ զիմ տկարութիւնս, գիտելով պարտ է հնազանդ լինել հոգևոր հրամանի*** զի թե յԱստծոյ իցէ խորհուրդս, և կատարեցի նորին հանճարով»[77]:

Գանձակեցու հաղորդումը պետք է հասկանալ այնպես, որ Մխիթար Գոշը Աղվանից Ստեփաննոս կաթողիկոսի կողմից հալածանքի է արժանացել դատաստանագիրք գրելու հոգևոր հրամանին չենթարկվելու համար, ուստի, Գետիկի վանքից փախչելով՝ գիտնականն ապաստան է գտել իր մեծ բարեկամ Ամիր-Քրդի փեսա, Խաչենի նորընծա գահակալ իշխան Վախթանգի մոտ: Իսկ մինչ այդ, նա գիտության լույս էր բախշում Հին Գետիկի վանքում, որն այն ժամանակ Գուգարքի մյուս վանքերի հետ ենթարկվում էր Աղվանից կաթողիկոսությանը: Ուրեմն Դատաստանագրքի երկունքը ևս սկսվել է այստեղ, երբ նման լուրջ աշխատության ստեղծումը պարտաճանաչ վարդապետը համարել է իր ուժերից վեր գործ և հրաժարվել կաթողիկոսի առաջարկից:

Հայտնվելով Արցախի Դասնո անապատում՝ Գոշը չի ազատվել Ստեփաննոս կաթողիկոսի՝ դատաստանագիրք գրելու հորդորներից ու պարտադրանքից: Եվ, փառք Աստծո, բանիբուն վարդապետն, անսալով հոգևոր հրամանին, սկսում է շարահարել «Գիրք դատաստանին»՝ Հայոց առաջին աշխարհիկ օրենքների ժողովածուն՝ փակելով օտարների բերանը, որոնք բամբասում էին, թե հայերը մարդկանց պատժում են առանց դատաստանի: Նաև այն կացության հրամայա-

կանով՝«զի բազումք յեպիսկոպոսաց, և ի վարդապետաց, և ի քահանայից, և ի գլխաւոր աշխարհականաց ընդ երեսաց և վասն կաշառոց և տգիտութեամբ թիւրեն զդատաստանս ճշմարիտ»[78]: Ահա մարդասեր և հայրենասեր գիտնականի մտահոգությունը՝ որպեսզի տգիտության կամ կաշառքի պատճառով դատավորները չխեղաթյուրեն ճշմարիտ դատաստանը, որովհետև, ինչպես ժողովուրդն է խոսում՝ «Օրենքի կտրած մատը չի ցավում»:

Եվ վերջապես, որտե՞ղ է գտնվում Հին Գետիկի վանքը: Այս հարցը մինչև այժմ էլ հետաքրքրում է միջնադարյան Հայաստանի պատմությունն ուսումնասիրողներին, առավելապես՝ «հռչակավոր և գիտությամբ մեծիմաստ» Մխիթար Գոշի բեղուն գործունեությամբ զբաղվողներին, անշուշտ, նաև՝ պատմական աշխարհագրության մասնագետներին: Իսկ Հին Գետիկի վանքի գոյության մասին սկզբնաղբյուր են ժամանակի իրողություններին քաջածանոթ XIII դարի պատմիչները, մտերիմ ընկերներ Վարդան վարդապետը (Արևելցին) և Կիրակոս Գանձակեցին: Հատկապես՝ երկրորդը, որը տվել է նաև խնդրի լուծման բանալին:

Վարդան վարդապետին է պատկանում ***Հին Գետիկի վանք*** («ի Հինն կոչեցեալ Գետիկ») արտահայտությունը[79], և հավանաբար նա կարճառոտ օգտվել է իր բարեկամի՝ Կիրակոս Գանձակեցու, ընդարձակ շարադրանքից, որից աներկբայորեն հասկացվում է, թե XII դարավերջին տեղի ունեցած երկրաշարժից սաստիկ ավերված Հին Գետիկ վանքի փոխարեն Մխիթար Գոշը նոր տեղում կառուցել է Գետիկ անունով նոր վանք*:

* Նոր Գետիկը կամ Գոշավանքը հայկական ճարտարապետության նշանավոր հուշարձան է, XII-XIIIդդ. ծանքային համալիր՝ Տավուշի մարզի Գոշ գյուղում: Եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր և կրթամշակութային նշանավոր կենտրոններից: Պատմական աղբյուրներում անվանվել է վարժարան, վարժապետարան, համալսարան, ճեմարան: Գոշավանքում ուսուցանվել են հայոց և օտար լեզուներ (հունարեն, լատիներեն), քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Այստեղ են կրթվել և գործել հայ մշակույթի նշանավոր գործիչներ Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին: Գոշավանքում ստեղծվել և պահվել են բազմաթիվ ձեռագրեր: Վանքն ունեցել է այգիներ, ջրաղացներ, գյուղեր, վարելահողեր, անտառներ և ամառանոցներ: Նոր Գետիկի վանքի հովանավորները, հիմնադրումից սկսած՝ մեծագործ Զաքարյաններն էին, իսկ նրանց իշխանության թուլացումից հետո՝ XIII դարի կեսերին, Նոր Գետիկը ԽՌ (40 000) դուկատով գնել է այդ դարի հայ խոշոր առևտրական, Կարինից Արևելյան Հայաստան գաղթած Ումեկը:

Կիրակոս պատմիչը, հանգամանորեն ներկայացնելով Գոշ կոչված Մխիթար վարդապետի ուսումնառության ընթացքը և կյանքի ոդիսականը, հայտնում է, թե նա Արցախում իմանալով Կայան և Մահկանաբերդ գավառի տեր Արծրունի Քուրդ իշխանի տարագրությունից հայրենիք վերադառնալը, եկավ նրա մոտ հին սիրո և մտերմության համար: «Եվ ապա բնակվեց Գետիկ կոչված վանքում՝ Կայան գավառում, Աղստև մեծ գետի աջ կողմի վրա: Վանքի առաջնորդը նրա աշակերտ Սարկավագ կոչված վարդապետն էր, որ մեծ ուրախությամբ նրան ընդունեց և ինքն էր սպասավորում նրան...: Ապա սաստիկ երկրաշարժ եղավ, որ բազմաթիվ վայրեր կործանեց ու տապալեց բարձրաբերձ շենքեր, որոնց հետ այնպես ուժեղ խաթարվեց նաև Գետիկ եկեղեցին, որ վերստին նորոգելու հնար չկար»[80]:

Ապա վանքի բնակիչները, երկմտելով, կամենում էին ցրվել այս ու այն կողմ, ոչ միայն եկեղեցու խախտվելու պատճառով, այլև նեղված էին մերձակայքից, որովհետև իշխաններից Սարգիս անունով մեկը իր գյուղը տեղահան արեց և բերեց վանքի մոտ մի այլ գյուղ շինեց: Այնուհետև վանքի և նորահաստատ գյուղի բնակիչները գժտության մեջ էին միմյանց հետ և պարսավում էին իրար: Իսկ սուրբ Մխիթար վարդապետն արգելեց նրանց ցրվելու մտադրությունը և հորդորեց միասին ապրել: «Ապա միաբան գնացին մեծ իշխան Իվանեի՝ վրաց զորավար Զաքարեի (ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի մասին է խոսքը, որը Մխիթար Գոշի խոստովանության հոգևոր որդին էր - Ռ.Ս.) եղբոր մոտ, որոնք այդ ժամանակ Կայան բերդին և գավառին իշխող բարեպաշտ Քուրդ իշխանի քեռորդիներն էին, ցույց տվեցին նրան իրենց խնդիրքը, որպեսզի տեղ տա, ուր փոխադրեն իրենց վանքը: Նա հրամայեց նրանց. որ որոնեն, թե որտեղ է հարմար: Նրանք շրջելով գտան մի բարեվայելուչ ու գոգաձև տեղ երկու լեռների ստորոտների մոտ (ուր կա գետ), որ գալիս է նրա լեռան գլխից: Տեղը անվանում էին Տանձուտի ձոր: Այնտեղ կար մի գյուղ և մի փոքրիկ ձորակ էր անցնում նրա միջով և մի (գետ) ավելի հորդառատ աջ կողմից. տեղը փայտաշատ էր ու ջրավետ[81]»: Հենց այս հարմար տեղում Մխիթար վարդապետն իր միաբանների հետ միասին մեծ իշխան Իվանեի հրամանով ձեռնարկեց վանքի և եկեղեցու շինարարությունը՝ դնելով Նոր Գետիկի այսօրվա նշանավոր համալիրի հիմքերը:

Երկար մեջբերումները կատարվեցին միայն այն նպատակով, որ ցույց տրվեն պատմիչի վկայություններն այն մասին, թե Գետիկ կոչված վանքը ի սկզբանե գտնվել է Կայան գավառում, Աղստև անվանվող մեծ գետի աջ կողմի վրա: Նաև՝ որ նոր վանք կառուցելու համար գտած բարեվայելուչ տեղով լեռան գլխից եկող գետակից աջ հոսում էր մի ավելի հորդառատ գետ, որի անունը պատմիչը չգիտեր:

Ըստ նկարագրության, «լեռան գլխից» եկողը համապատասխանում է ներկայիս Գոշ գյուղի միջով անցնող գետակին, իսկ նրանից աջ հոսող ավելի հորդառատը՝ ներկայիս Գետիկին, որը XIII դարում՝ Կիրակոս Գանձակեցու օրերում, անուն չի ունեցել, կամ դա անհայտ է եղել պատմիչին:

Առաջին անգամ Գետիկի (Հին Գետիկի) վանքի տեղադրության մասին սխալ տեսակետ է հայտնվել Վարդան վարդապետի՝ վերը նշված աշխատության 1862-ի վենետիկյան հրատարակության 140-րդ էջի ծանոթագրությունում, որը հետագայում կրկնել են այլ հեղինակներ: Այնտեղ ասված է. «Հին Գետիկ ի Միափոր գաւառի որ ելից կուսէ ծովուն Սեւանայ, երկրասասան կործանմամբ աւերեալ. Մխիթար շինեաց զՆոր ոչ հեռի ի հնոյն»: Այս ծանոթագրության հորինողները պարզապես մեղանչել են պատմական, աշխարհագրական իրողությունների և Կիրակոս պատմիչի վավերական վկայության դեմ:

Նախ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Հին Գետիկի վանքը գտնվել է ոչ թե Միափոր, այլ Կայան գավառում, այն էլ՝ Աղստև գետի աջ ափին: Ապա հայտնի է, որ նկարագրվող ժամանակում Կայան գավառը զբաղեցրել է նախկին Գուգարք աշխարհի Ձորափոր գավառը՝ Աղստև գետի միջին հոսանքի շրջանը, ներկայիս Իջևան քաղաքի սահմաններից մինչև Աղստևին Գետիկի միախառնման սահմանն ընկած տարածքը: Սրա իշխանանիստը Բագրատունիների օրերից եղել է Աղստևի ձախափնյակում, Իջևան քաղաքից 17-18 կմ հարավ-արևմուտքում այժմ էլ կանգուն Կայան անառիկ ամրոցը: Իսկ Գետիկի ողջ հովիտն ընդգրկել է Միափոր գավառը, որն է իսկապես «ելից կուսէ ծովու Սեւանայ»: Ուստի հին Գետիկի վանքը Աղստևի աջ ափից՝ Կայան գավառից, Միափորի գավառ տեղափոխելը կամայականություն է: Ի դեպ, ժամանակին անվանի հնագետ Գրիգոր Կարախանյանն ապացուցել է, որ Միափորի գավառում՝ ներկայիս Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ենթամարզի Մարտունի գյուղի մոտ, գտնվող ավերված կարծեցյալ Հին Գետիկի վանքը Խամշի վանքն է,

որն Աղստև գետից հեռու է 32 կմ, ուստի պատմիչը նրա մասին չէր ասի, թե գտնվում է Աղստև մեծ գետի աջ ափին:

Ժամանակին տեսակետ էինք հայտնել, որ Հին Գետիկի վանքը գտնվել է Աղստև մեծ գետի աջ ափին՝ Կայծոն բերդի ստորոտով հոսող Բերդաձորի ջուր գետակի ձախափնյա բարձունքին, սակայն Մխիթար Գոշի վկայությունը ստիպեց հրաժարվել դրանից: Կիրակոս պատմիչի աներկբա տեղագրությանը պետք է հավելել Գոշի պատմության հաղորդումն այն մասին, որ Հին Գետիկի վանքը եղել է համալիր, ունեցել է երկու եկեղեցի՝ Սուրբ Գողգոթա և սուրբ Գրիգոր Լուսավորիչ: Նման համալիր մեզ հետաքրքրող միջավայրում 2002թ. ամռանը մեր ուշադրությունն է գրավել Հովք գյուղից արևելք, Աղստևի աջ ափից մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորության վրա, Շունքար ժայռի արևմտյան ստորոտի անտառում: Այստեղ գտնվում է մի մոռացված հոգևոր շինություն: Սա ունի կենտրոնական մեծ, երկու կողմից՝ համեմատաբար փոքր սրահներ: Իջևան քաղաքից մինչև մայր գետի հետ Գետիկ վտակի միացման անկյունն Աղստևի աջ ափին, բացի սրանից, ուրիշ նման շինություն չկա: Ուստի մեր կարծիքով սա է Հին Գետիկի վանքը, որի կողային շինությունները եղել են ս. Գողգոթա և ս. Գրիգոր եկեղեցիները, իսկ կենտրոնականը՝ երկուսի գավիթը, որի հյուսիսային պատին կցվածը փոքր է հարավայինից: Այս հնավայրը Միափորի (Գետիկի) ձորում գտնվող Նոր Գետիկի վանքից (Գոշավանքից) անջատում է Միափորի լեռնաշղթայի արևմտյան ծայրը հանդիսացող Շունքար լեռնաթևը: Իսկ վանքը Գետիկի է կոչվել հավանաբար վանքին մերձ, հյուսիս-արևելյան կողմից հոսած գետակի շնորհիվ: Այն սնվելիս է եղել Շունքարի ստորոտից բխող հորդ աղբյուրից, որը սակայն անհետացել է հայտնի երկրաշարժի ժամանակ: Կարևոր է ընթերցողին նաև հայտնել, որ վանքից ոչ շատ հեռու, արևմտյան կողմի անտառում, նշմարվում են հին բնակավայրի բազմաթիվ տնատեղեր: Հավանաբար սրանք հոգևորականների հետ գժտության պատճառ դարձած Սարգիս իշխանի հիմնած գյուղի հետքերն են:

Կարելի է ասել, որ Բագրատունիների օրերում հիմնված վանքն ունեցել է մեծ և բանիբուն միաբանություն, վարդապետական դպրոց, գողտրիկ եկեղեցիներ, որոնց համալիրը մշտահոս, զուլալ գետակի անունով կոչվել է Գետիկ, իսկ նրա ավերվելուց հետո, երբ միաբանները մեծ ուսուցչապետ Մխիթար Գոշի գլխավորությամբ նոր

վանք են հիմնում Զաքարյան Իվանեի շնորհած Տանձուտի ձորում, պահպանում են նախկին բնակավայրի անունը՝ կոչելով Նոր Գետիկի վանք, ինչը վկայում են պատմիչները: Իսկ հետագայում «լեռան գլխից» եկող և Նոր Գետիկի վանական համալիրի հարավ-արևելյան կողմով, ներկայիս Գոշ գյուղի միջով անցնող գետակը կոչվել է Գոշ, իսկ դրա աջ կողմով հոսող ավելի հորդառատ գետը՝ Աղստևի Միափոր գավառից եկող նշանակալի վտակը, որ Կիրակոս Գանձակեցու ժամանակ եղել է անանուն, հին և նոր վանական համալիրների պատվին՝ Գետիկ: Ճիշտ է, մեր հայրենիքին տիրած օտարներն ապագայում այս գետը կոչել են Թարսա-չայ, «հակառակ գետ», որովհետև երկրամասի գետերի պես չի հոսել հյուսիս-արևելյան ուղղությամբ, այլ դեպի արևմուտք կամ հյուսիս- արևմուտք: Սակայն օտարամուտ անունը դուրս է մղվել և պահպանվել է հայկականը, գեղեցիկը, նախնականը՝ Գետիկ:

* * *

XIII դարի արշալույսին մեծ իրարանցում էր տիրում կենտրոնական Ասիայի տափաստաններում: Մոնղոլական խաշնարած ցեղերից մեկի առաջնորդն՝ իրեն ենթարկելով, նրանց միավորեց ու ստեղծեց ռազմականացված հզոր պետություն, որը երաշխիք էր խոստանում ուրիշի հաշվին ապրելու ձգտող ցեղակիցներին: Չէ՞ որ լավ կյանքը չէր սահմանափակվում անասնապահի խղճուկ, թաղիքե յուրթի տակ: Ռազմաշունչ խաշնարածների երևակայությունը բորբոքում էին պատմությունները վաղուց նստակեցության անցած հեռավոր երկրների հարստությունների մասին: Խաշնարածի երակներում եռք էր տալիս բարբարոսի երիտասարդ արյունը: Հայ պատմիչները պետական նոր կազմավորման մեջ մտնող նշանավոր ցեղերից մեկի անունով նրանց կոչում էին թաթար, նաև՝ «ազգ նետողաց», որովհետև, ինչպես վրաց անանուն ժամանակագիրն է վկայում, եկան «առանց սպառազեն ու սննդամթերք ունենալու, այլ միայն նետերով, առանց սրերի»: Սրանց ընդհանրությունը նաև կոչվում էր մոնղոլների կամ թաթար-մոնղոլների անունով:

Ու հանկարծ այս թաթար-մոնղոլները Զեբեյ և Սուբադայ բահադուրների (զորավարների) գլխավորությամբ 1220-ի ավարտին

30-հազարանոց բանակով հայտնվեցին Հայաստանի հարավ-արևելյան սահմանին, Արաքսի ափին պարտության մատնելով հայ-վրացական զորքին, Նախճավանով շարժվեցին հյուսիս: Հավանաբար նրանք շտապել են մինչև ձյան տեղումներից լեռնանցքների փակվելը հասնել Մուղանի տաք դաշտը, որը նվաճողների համար ավանդաբար հանդիսացել էր զորքերի ձմեռային հարմարավետ հանգստավայր և նոր, մեծ հարձակումների հենակետ, մանավանդ, որ ամբողջ ձմռանն էլ կարելի էր շարունակել հարևան գավառների ասպատակումը և հոտերն էլ պահել Կուրի ափամերձ ձմեռային արոտավայրերում: Շուտով Տավուշի մարզի հյուսիս-արևելյան կողմում՝ Վահրամ Գագեցու տիրույթներում, տեղի ունեցավ Կոտմանի ճակատամարտը, որի ձախ թևում քաջաբար կռվում էին նշանավոր Իվանե Զաքարյանի, աջում՝ Վահրամ Գագեցու զորքերը: Ճակատամարտին մասնակցում էր նաև հանգուցյալ Զաքարե ամիրսպասալարի Շահնշահ որդին: Հայ-վրացական բանակը տանում է փայլուն հաղթանակ՝ Սագամի (Զագամ) դաշտը լցնելով կոտորված թաթարներով: Սակայն տեղի ունեցած դավաճանության պատճառով սաստիկ պարտություն է կրում հայ-վրացական զորքը, և դա դառնում է իր հզորության բարձունքին հասած վրացական պետության (և նրա կազմի մեջ բարգավաճած հայկական իշխանությունների) անհաջողությունների սկիզբը: Այդ իրողությունն իրավացիորեն «երջանիկ ճակատագրի անկում» է համարվել վրաց պատմագրության մեջ: Հետախուզական արշավանքի ելած թաթար-մոնղոլները մեկ անգամ էլ հայ-վրացական զորքերի հետ ճակատամարտում են Տավուշի մարզի հյուսիսային մատույցներում՝ Կողբ գետի ներքին հոսանքի շրջանում, նորից Վահրամ Գագեցու տիրույթներում, նորից տանում հաղթանակ, ապա Դերբենդով անցնում Հյուսիսային Կովկաս ու վերադառնում հայրենիք՝ մեծ խանին պատմելու իրենց տեսած երկրների հարստությունների, ռազմական կարողությունների և դրանք գրավելու հնարավորությունների մասին:

Ավերված Հայաստանն ու Վրաստանը խաղաղության ու վերականգնման կարճատև ժամանակ ունեցան: Թաթար-մոնղոլներից հալածվել, հայրենազուրկ էր դարձել Խորեզմի սուլթան Ջալալ ադ-Դինը: Նա իր կորցրածն այլոց հայրենիքներում գտնելու վճռականությամբ յուրայիններին կոչ արեց թողնել իրենց երկիրը, վերցնել գերդաստան, հարստություն, նախիր և գնալ արևմուտք: «Եթե

մեզ թաթարներն են հաղթում,- հաղորդում էր նա,- մենք էլ կհաղթենք մյուս ազգերին»[82]: Խորեզմացին իր զորքերը շարժեց առաջ և շուտով մտավ Անդրկովկաս, ինչպես պատմիչն է վկայում՝ «կոտորելու և ջնջելու քրիստոնյաներին»: Եվ նորից սաստկորեն տուժեց վրացական թագավորության հարավ-արևելյան դարպասը հանդիսացող Վահրամյանների իշխանությունը, որը Խրամ գետից տարածվում էր մինչև Գանձակ, Գարդմանի վերնագավառից և Աղստևի ներքին հոսանքից (ընդգրկելով Ոսկեպար և Կողբ գետերի հովիտները)՝ մինչև Կուր գետը: Տավուշի մարզում խորեզմացու բերած աղետներից մեկի մասին հայոց պատմությունը հաղորդում է մանրամասներ: Խոսքը վերաբերում է դեռ իր կենդանության օրերին հռչակված գիտնական, մանկավարժ, եկեղեցական ու մշակութային գործիչ, «վսամականին համբաւատենչ և արդիւնական»[83] Վանական վարդապետին:

* * *

Վանականը հոգևոր սնունդ ստանալով Մխիթար Գոշի հիմնած Նոր Գետիկի վանքում, վերադառնում է ծննդավայր Տավուշ գավառ և օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից, ծավալում «դժվար գերագնահատելի բազմաբեղուն շինարարական և գիտամանկավարժական գործունեություն..., առանց որի արդյունքների հաշվառման դժվար է պատկերացնել հայ միջնադարյան մշակույթի արծաթե դարը»[84]: Վահրամյան հայրենասեր իշխանների, առաջին հերթին հավանաբար Վահրամ Գագեցու աջակցությամբ 1211-ին Վանական վարդապետը հիմնադրում է նշանավոր Խորանաշատի վանքը և բացում դպրոց: 1225-ին Ջալալ ադ-Դինի զորքերն առաջին անգամ մտան հայոց հյուսիս-արևելյան գավառները և անողորմ ավերածությունների ենթարկեցին բնակավայրերն ու եկեղեցիները: Այնքան անողորմ կոտորածներ էին սարքում, հայտնում է ժամանակագիրը, որ չէին խնայում նույնիսկ կանանց ու գրկանոց մանուկներին: 1229 թվին թալանվեց ու հրդեհվեց նաև նորահաստատ Խորանաշատի վանքը: Իր գլխավոր նպատակն իրականացնելու հույսով Վանականն իր դպրոցը տեղափոխեց ապահով մի վայր, որի տեղն անհայտ էր մինչև 1997 թվականը: Ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մեր ուսումնասիրությամբ հայտնաբերված Վանական վարդապետի քարայրային դպրոցին:

Իրադարձությունների անմիջական մասնակից և ականատես, վանականի աշակերտ Կիրակոս Գանձակեցին խորեզմցիների հարձակումից հետո իր ուսուցչի ձեռնարկած քայլերի մասին հետևյալն է հայտնում: «Այն ժամանակ Վանական կոչված մեծ վարդապետը մի շատ բարձր քարի գագաթին իր ձեռքով իր համար քարայր էր փորել, որը գտնվում էր Լորուտ կոչված գյուղի հանդեպ, Տավուշ բերդի հարավային կողմից: Այդ վայրում շինել էր մի փոքրիկ եկեղեցի ու այնտեղ դադար առել... Այնտեղ հավաքված էին բազմաթիվ գրքեր, որովհետև այդ մարդը ուսումնասեր և մանավանդ աստվածասեր էր: Շատերը գալիս էին նրա մոտ և նրանից սովորում էին վարդապետական ուսումը: Երբ մարդիկ շատացան, նա հարկադրված եղավ իջնել քարայրից և ժայռի ստորոտում շինեց եկեղեցի, սենյակներ և այնտեղ տեղակայվեց»[85]: Անպաշտպան Խորանաշատի համեմատ, անշուշտ, պատերազմական խառնաշփոթ օրերում այստեղ ապահով պիտի լիներ նրա կրոնական և գիտամանկավարժական արդյունավետ գործունեությունը շարունակելու համար:

Սկսվում են թաթար-մոնղոլների գլխավոր արշավանքները: 1235-ի ամռան սկզբին Մուղանի դաշտում անցկացված վիճակահանությունից հետո յուրաքանչյուր զորավար բանակը շարժեց իրեն բաժին ընկած իշխանությունը գրավելու: Մի զորաբանակ, Մոլար նոյինի գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ Վահրամյանների հողերի գրավմանը, նրանց հպատակեցմանը: Տավուշ գավառի մոտակա գյուղերի բնակիչները փրկության հույսով շտապեցին Վանական վարդապետի կառուցած քարայրը: «Քարայրը լցվեց տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով: Թաթարները եկան, այդ վայրում նրանց պաշարեցին: Նրանք ոչ ուտելիք ունեին, ոչ ջուր, ամառային եղանակ էր ու խիստ շոգ: Սկսեցին այդ արգելարանում՝ իբրև բանտում, տապակվել: Մանուկները ծարավից պապակվում էին ու մերձիմահ էին: Թշնամիները դրսից ձայն էին տալիս, թե՝ «Ինչու՞ եք մեռնում, դուրս եկեք մեզ մոտ, ձեզ համար վերակացուներ կնշանակենք ու ձեզ կթողնենք ձեր տեղերում: Երդումով կրկնում ու երեքկնում էին»[86]: Ասվածից պարզ է դառնում, ***որ բացառիկ անառիկ դիրքում է գտնվել քարայրը, այնպես անառիկ, որ աշխարհը գրված թաթար-մոնղոլները չեն կարողանում գրավել Վանականի քարայ-***

ը, ուստի ստիպված պաշարվածներին երդվում են վնաս չտալ, եթե իջնեն ու գան հնազանդության:

Շարունակությունը ևս հայտնի է: Որպեսզի ծարավից պապակվող, մերձիմահ հայրենակիցներին փրկի կործանումից, քրիստոնյային վայել մղումով քարայրից իջնում և դիմացի բլրակի վրա ամպահովանու տակ կանգնած թաթար զորապետին է ներկայանում Վանական վարդապետը: Հարցուփորձից հետո, երբ Մոլար զորավարն իմանում է, որ իր առջև ոչ թե երկրի տերն է՝ Վահրամ Գագեցին, այլ «իմաստուն և երևելի » վարդապետը, խոստանում է խաղաղ ապրելու համար վերակացուներ կարգել քարայրում պատսպարվածների վրա և վերականգնել գյուղերն ու ագարակները: Վանականի կանչով եռօրյա պաշարման ժամանակ ծարավից տառապած մարդիկ իջնում են քարայրից և տեղափոխվում մոտակա վանքը, ուր կար փոքրիկ աղբյուր: Ապա խոստումնազանց մոնղոլները տանջանքի են մատնում մարդկանց՝ ոտաբոբիկ քարշ տալով իրենց ետևից: Աշնանը Գագա բերդի բնակիչներն ութսուն դահեկանով փրկագնում են Վանական վարդապետին, իսկ նրա աշակերտ Կիրակոսին՝ ապագա պատմիչ Գանձակեցուն, հաջողվում է փախչել գերությունից և հասնել իր «սննդյան տեղը՝ Գետիկ կոչված վանքը»:

Այս շարադրանքի մեջ մեզ հետաքրքրող Վանական վարդապետի քարայրն է, որի «ճշգրիտ տեղը դեռևս հայտնի չէ»[87]: Ինչպես ասվեց, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Վանականի աշակերտի և իրադարձությունների անմիջական մասնակցի, ***քարայրը «գտնվում է Լորուտ կոչված գյուղի հանդեպ Տավուշ բերդի հարավային կողմից» մի շատ բարձր քարի գագաթին*** (ընդգծումը մերն է - Ռ.Ս.): Լորուտ գյուղն, իր տեղադրությամբ հանդերձ, մնացել է պատմական անցյալի անհայտության մեջ, իսկ Տավուշ բերդը եղել է և կա իր տեղում, որի հարավային կողմում պիտի լինի անառիկ քարայրը: Սակայն՝ այդպիսին չկա: Աներկբա ուղեցույց ունենալով պատմիչի հաղորդումը Տավուշ բերդի հարավային կողմում քարայրի գոյության մասին, ապագայի ուսումնասիրողները կամայականորեն Վանական վարդապետի քարայր են համարել Տավուշ բերդի ճիշտ արևմտյան կողմում, ներկայիս Բերդ քաղաքի Սորան սարի արևելյան լանջին եղածը, ուր մտնել կարող են անգամ երեխաները և նրա առաջ անկարող չէին գտնվի աշխարհը գրաված թաթար-մոնղոլները: Բացի այդ, նրա մեջ և ստորոտում չկան Գանձակեցու հիշատակած եկեղեցին ու սենյակները:



Իսկ ականատես պատմիչը հո չէ՞ր կարող հորինել քարայրի հետ կապված անցուդարձերը: Չէ՞որ Մարկոս, Սոսթենես, Պողոս քահանաների հետ նա այնտեղ վարդապետական ուսում է ստանալիս եղել մինչև մոնղոլների հարձակումը, իսկ հարձակման ժամանակ ժողովրդի հետ ապաստանել է այնտեղ: Կասկածից վեր է, որ նման ամրություն կա Տավուշ բերդի մոտակայքում: Պատմիչի հայտնած գլխավոր կողմնորոշիչը հենց բերդն է: Մի՞թե չի կարելի ընդունել, որ Գանձակեցին է շփոթել աշխարհագրական կողմը կամ սխալվել՝ նրա աշխատությունն ընդօրինակողը: Հավանական է, որ հյուսիսի փոխարեն գրվեր հարավ, և ավելի անհավանական՝ շփոթել արևելքի և արևմուտքի հետ: Այս միտքն ընդունելու դեպքում ամեն ինչ ընկնում է իր տեղը, և մենք կարող ենք վերջապես տեսնել Վանական վարդապետի քարայրը:

Տավուշ բերդից ուղիղ գծով 7-8 կմ հյուսիս-արևմուտք՝ ներկայիս Տավուշի մարզի Իծաքար գյուղից երեք կիլոմետր հյուսիս, Քարագյուղ հանդամասում, Հախում գետի խորածորի վրա, ճիշտ աջ ափից ելնելով՝ հառնում են մի քանի ուղղահայաց պատերով բարձրագահ ժայռեր: Դրանցից ձախակողմյանի (N1) ծերպերին այժմ էլ պահպանվում են հնօրյա ապաստարանների հատակի փայտե հեծանները, իսկ որոշ խորշերի բացվածքներին պատեր են շարված: Թե ինչպես են մարդիկ ել ու մուտ արել այդ կացարանները, մնում է կռահել և հիանալ մեր նախնիների հնարամտությամբ:

Սակայն մեզ հետաքրքրողը գտնվում է ժայռոտ հնավայրի միջնամասում, առաջինից մի փոքր աջ և 50-60 մետր վեր, հովտի այս մասին արևելյան կողմից իշխող սարի բարձրակետի (Ղուզանի քար)՝ հյուսիս-արևմուտք - հարավ ուղղությամբ անկումով աղեղվող ժայռի (N2) կենտրոնում: Իսկ այդ քարեղեն աղեղի ներքին ծայրը հենվում է մի այլ ժայռի (N3) թիկունքին, որի ուղղահայաց պատը դարձած է հարավ-արևմուտք և նույնպես վեր է հառնում գետափից: N1 և N3 ժայռերն իրարից հեռու են 200-220 մետր և այդ բացվածքն իրենից ներկայացնում է գետափից սկսվող, ուղղահայացին մոտ թեքությամբ մի անտառապատ լանջ: Հենց սրա վերին եզրի և N2 ժայռի միացման սահմանում ուշադիր դիտողը (ձմռանը) ծառերի ետևում, ձորի հատակից 200-220 մետր բարձրության վրա կնկատի 6-8 մետր տրամագծով և սահուն եզրագծով քարայրը, որի մուտքին մի քանի մետր հեռավորության վրա, քարայրի տարողությունը մեծացնելու

նպատակով, դրված է 10-12 մետր երկարությամբ և 2,5-3 մետր բարձրությամբ պատ: Քարայրի կամարը համաչափ գեղեցիկ աղեղ է, ուրեմն՝ մարդու ձեռքով հարդարված: Կարծում ենք, որ հենց սա է Կիրակոս Գանձակեցու նկարագրած «մի շատ բարձր քարափի գագաթին» Վանական վարդապետի ձեռքով փորված անառիկ քարայրը, որը անկարող եղան գրավել թաթար-մոնղոլները:

Այս շինությունը հեռադիտակով կարելի է լավ տեսնել միայն ծառերի տերևաթափից հետո և դա բացարձակապես անհնար է ապրիլ-նոյեմբեր ամիսներին, երբ մարդկանց աչքից հեռու է պահում փարթամ բուսածածկը: Հենց այդ պատճառով, կառուցված-հարդարված ազդեցիկ քարայրը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Նաև այն պատճառով, որ մերձակա գյուղերում շատերը չգիտեն դրա տեղը, իսկ փոքրաթիվ տեղյակները կոչում են Տուն քար: Պատմում են, որ անցած տարիներին ինչ-որ երիտասարդի հաջողվել է գրեթե ուղղահայաց լանջով մոտենալ քարայրին, սակայն ներս մտնել չի հաջողվել սանդուղքի բացակայության պատճառով, մանավանդ, որ տեղումներն էլ ողողել են քարայրի առջև դրված պատի հիմքը, որը 1-1.5 մետր բարձրությամբ մնացել է օդում: Այդ համարձակը նաև պատմել է, որ մեծ քարայրից ներքև, մի փոքր աջ, ինքը տեսել է ավելի փոքրիկ մի քարայր, նույնպես մուտքի առաջ՝ պատով:

Գետի խորածորի ձախ ափին, ճիշտ քարայրի դիմաց, 250-300 մետր հեռավորության վրա վեր է բարձրանում հարթակտուր, դարավանդավոր մի բլրակ, որի գագաթից քարայրում գտնվողների հետ կարելի է զրուցել բարձր ձայնով, ինչպես և իրար հետ հաղորդակցվելիս վարվել են բլրի վրա, ամպահովանու տակ կանգնած Մոլար նոյինը և իր անառիկ քարայրում արծվի պես թառած Վանական վարդապետը: Թե որքան մարդ կարող էր արհավիրքի ժամանակ ընդունել քարե ապաստարանը, անհայտ է: Ասվեց, որ քարայրի տարողությունը մեծացնելու նպատակով նրա առջև պատ է դրված: Իսկ այդ բացվածքը ծածկ է ունեցել: Այդպես ասելու հիմք է տալիս պատի պատուհանանման բացվածքից երևացող, ուղղանկյուն տաշված գերանակոճը, որի մի ծայրը թեքությամբ ընկած է հատակին: Պիտի նաև ընդունել, որ Վանական ուսուցչապետի հիմնած քարայրային համալիրի մեջ մտել են նաև N1 ժայռի բազմաթիվ ծերպերի ապաստարանները:

Սակայն միայն բարձրագահ քարայրը չէ, որ խոսում է այն Վանական վարդապետին վերագրելու օգտին: N3 ժայռի ստորոտում, Հախում գետի աջափնյակի հարթության վրա տարածվում է մի հնավայր, որն, այո, ունեցել է ***փոքրիկ եկեղեցի ու բազմաթիվ*** սենյակներ, և դրանք համապատասխանում են Կիրակոս Գանձակեցու հաղորդածին: Ավելին, N3 ժայռի մեջ սկսել են փորել եկեղեցի, բայց շինարարությունը կիսատ է մնացել: Հետագա դարերում այս շինություններն ու պատերի քարերն իրենց տնտեսական նպատակներին են օգտագործել մերձակա գյուղերի բնակիչները: Դրանցով կառուցվել են ջրաղացներ, գոմեր, ժամանակավոր կացարաններ, այգիների ցանկապատեր: Միակ հնարավոր արահետը, որով մարդիկ կարող էին մոտենալ Վանական վարդապետի բարձունքում թառած քարայրին, հավանաբար սկսվել է N3 ժայռի հարավ-արևմտյան ստորոտից, կիսավարտ եկեղեցու բակից, ապա անցնելով ժայռի արևմտյան լանջը՝ N2 ժայռի հարավ-արևմտյան ստորոտով հանգել նպատակակետին:

Քարայրի դիմաց, գետի ձախափնյա անտառում կան հին գյուղատեղեր, որոնցից մեկը, անշուշտ, լորենիներով հարուստ Լորուտն է եղել: Հարկ է նորից անդրադառնալ քարայրի հարթակտուր քարափին. որովհետև, եթե մոնղոլները պաշարած լինեն Տավուշ բերդի դիմաց հառնող Սորան սարի կարծեցյալ քարայրը, ինչը պնդել են որոշ հետազոտողներ, ապա ***այնտեղ գտնվողների դիմացի բարձունքը կլիներ Տավուշ բերդի զբաղեցրած ժայռը,*** որի անունը կտար լավատեղյակ պատմիչը և ոչ թե անորոշ կասեր՝ «մի բլրակ», որովհետև Տավուշ բերդն էլ գտնվում է ոչ թե բլրակի, այլ զանգվածեղ ժայռի կատարին:

Վանական վարդապետի քարայրի* մոտակայքում գտնվում է մեր միտքը հաստատող փաստերից ևս մեկը: Գանձակեցին հայտնում է, թե քարայրից իջնելուց հետո իրենց տարել են «մի շատ փոքր աղբյուրի մոտ, որ գտնվում էր վանքի մոտ» և ջուր են տվել: Աներկբա հասկացվում է, որ Վանական վարդապետի քարայրի ստորոտում կառուցված եկեղեցու մասին չէ խոսքը, այլ Գանձակեցուն ***անծանոթ***

* Որպես քարայրային շինություն, անշուշտ, մեզանում առանձնանում է Ենոքավանի եռահարկ Փոքր անապատ վանքը (տե՛ս Ռ. Սիմոնյան, «Ենոքավան», Եր., 2010):

մոտակա մի վանքի, որի մոտ կար աղբյուր: Եվ, իսկապես, գետի ձախ ափին, հոսանքով 2-2.5 կմ ներքև, գտնվում է չորս շինություններից բաղկացած Շխմուրատի վանքը՝ մոտակա աղբյուրով, որից իրենց ծարավն են հագեցրել Վանական վարդապետի հետ երեք օր քարե արգելարանում պաշարվածները: Իսկ նման վանքային համալիր չկա Տավուշ բերդի հարևանությամբ և ընդհանրապես Տավուշ գետի ձորում:

Նաև վերջապես պետք է ընդունել, որ օտար անունով կոչվող Շխմուրատը մինչ այժմ տեղադրությամբ անհայտ Գետակիցք վանքն է, որի մասին Մածնաբերդի տեր Աղսարթանի՝ հօգուտ իր Կյուրիկե որդու, ինքնակամ իշխանությունից հրաժարվելու և կրոնավոր դառնալու կապակցությամբ հայտնում է պատմիչը[88]: Իսկ, ըստ ավանդույթի, կրոնավոր դառնալ ցանկացող իշխանը հետագա կյանքի ապաստան էր ընտրում իր իշխանության տարածքում գտնվող վանքերից մեկը, որի հովանու ներքո համախմբված հոգևոր եղբայրները լավ էին ճանաչում իրենց թեմի բարեպաշտ, աշխարհական իշխանին: Հայտնի է, որ ճիշտ այդպես է վարվել նաև Հաթերքի գահակալ իշխանաց իշխան Հասանը, որը հօգուտ իր գահակալ զավակի հրաժարվելով աշխարհականի պաշտոնից՝ կրոնավորելու մտավ Դադի վանք: Մածնաբերդի Աղսարթանն էլ պիտի ընտրեր իր իշխանության տարածքում գտնվող երևելի վանք, որպիսին Գետակիցքն էր, մանավանդ, որ այդ ժամանակ դեռ չկային Տավուշ գավառի մյուս եկեղեցիները: Իսկ վանքի Գետակիցք անունը միանգամայն համապատասխանում է իր տեղադրությանը: Կառուցված է Հախում գետին կից, գետի ջրերից մի քանի մետր բարձրացող քարեղեն հարթակի վրա: Իսկ Շխմուրատ կոչվել է ուշ միջնադարում, այստեղ եղած գյուղի անունով: Ուստի հարկավոր է հենց այժմվանից վերադառնալ վանքի ավազանի գեղեցիկ անվանը՝ ԳԵՏԱԿԻՑՔ:

* * *

Սակայն դառնանք թաթար-մոնղոլական արշավանքին: Սկզբում, երբ վրացական տերության մեջ, հայ-վրացական զինակցության շարքերում, միաբանվում էին իշխանները, նրանք նաև հաջողությամբ դիմագրավում էին նվաճողների հարձակումներին: Սակայն

մոնղոլները հանդես էին գալիս խստագույն կարգապահությամբ, անասելի դաժանություններով, հնարամտությամբ և խորամանկությամբ, ուստի հաջողությամբ առաջ էին տանում նվաճողական ծրագիրը՝ անցած ճանապարհին թողնելով մահ և ավերածություններ: Կիրակոս Գանձակեցին հավաստի մանրամասներով է նկարագրել Բագրատունյաց փառքի վկա Անիի կործանումը, որի բնակիչները հրաժարվել էին ենթարկվել Չարմաղան նոյինի՝ քաղաքը հանձնելու կոչին: Երբ դիմադրող Անին վերջապես գրավվեց, մոնղոլները «սրերը քաշելով անողորմաբար համահավասար կոտորեցին՝ թողնելով սակավաթիվ կանայք, մանուկներ և արհեստավոր տղամարդիկ, որոնց քշեցին գերության: ...Այնտեղ պետք էր տեսնել ողորմագին տեսարանը. համահավասար կոտորված ծնողները և զավակները նրանց հետ դիզված էին միմյանց վրա, ինչպես կուտակված քարակարկառները»[89], հողը հագեցել էր արյունից: Միայն Անիից հեռավոր երկրներ արտագաղթեց մոտ 40 հազար հայ: Անիի ճակատագիրը կիսեցին հայկական շատ քաղաքներ, որոնք արագ անշքացան և վերածվեցին ավերակների կամ աննշան բնակավայրերի: Իսկ բնակչության զանգվածային բնաջնջման, գերեվարության և արտագաղթի պատճառով խիստ կրճատվեց Հայաստանի աշխատուժը, անկում ապրեց քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը[90]:

Ըստ վրաց անանուն ժամանակագրի հաղորդման, այլևայլ հնարքներով հաղթանակի հասնելու և սոսկալի դաժանությունների շնորհիվ այնպիսի խուճապային տրամադրություններ էին ստեղծել, որ Վրաստանի զորեղների և անվանիների միջև միաբանությունը խաթարվեց, և նրանք «անկարող դարձան թաթարների դեմ փրկության կռիվ տալու»[91], ուստի թշնամուն թողեցին բերդերն ու ամրությունները և Կովկասյան լեռները փախան: Որպեսզի խուսափեն դառը ճակատագրից, իրենց տիրույթները (Վրաստանի սահմանակալ գավառները) փրկեն վերջնական կործանումից, շատ իշխանների պես, Իվանե Զաքարյանի մահից (1227) հետո աթաբեկ և ամիրսպասալար կարգված նրա որդի Ավագը, Զաքարեի որդի Շահնշահը և Վահրամ Գագեցին հնազանդություն հայտնեցին մոնղոլներին, որոնք հրաման տվին սրից ու գերությունից փրկվածներն, որ յուրաքանչյուրն իր գյուղը վերադառնա, շենացնի ու հարկատու լինի: Բարբարոսն էլ է հասկանում, թե ինչից է կախված իր գանձարանի հարստությունը: Ուստի երկիրը քիչ-քիչ սկսեց բարեկարգվել, շա-

ռունակվեց Զաքարյանների իշխանության ժամանակ սկսված տնտեսական և մշակութային զարգացումը: Այդ ժամանակ կառուցվեցին կամ վերակառուցվեցին եկեղեցիներ Հաղարծնում, Նոր Գետիկում, Մակարա վանքում, Նոր Վարագա վանքում, Խորանաշատում, Առաքելոց գյուղաքաղաքում, Դեղձնուտում, Կիրանցում, Մշկավանքում, որոնց հովանու ներքո եկեղեցական, գիտական ու մշակութային բեղուն գործունեություն ծավալեցին Վանական վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Առաքել վարդապետը, ճարտարապետ Մինասը, Հյուսնը, խաչքարագործ Պաւղոսը և ուրիշներ:

Նվաճողներին հպատակություն հայտնած իշխաններն իրավունք ստացան շարունակելու իրենց գավառների կառավարումը, վրաց պետության մեջ պահպանել իրենց պաշտոնները: Սակայն պայմանով, որ պարտաճանաչորեն վճարեն սահմանված հարկերը և իրենց մարդկանցով մասնակցեն ձեռնարկվելիք արշավանքներին: Ճիշտ այդպես դեպի հարավային Հայաստան, Միջագետք և սելջուկյան պետություն ձեռնարկված արշավանքներին մասնակցեցին նաև հյուսիս-արևելյան Հայաստանի հայ իշխանները, նրանց հետ՝ Վահրամ Գագեցին և նրա որդի Աղբուղան, որի՝ մարտադաշտում ցուցաբերած քաջության մասին մեծարանքի խոսքեր է թողել պատմիչ Գրիգոր Ակնեցին: Այդ անհարազատ գործին՝ մոնղոլների ձեռնարկած արշավանքներին, հայ իշխանների և զինվորականների մասնակցության մասին Կիրակոս Գանձակեցին 1242 թվին, Կարին քաղաքի գրավման առթիվ, հայտնում է. «Այնտեղ կային մեծամեծ ու փոքր աստվածային գրքերի անթիվ կտակարաններ. դրանք գրված այլազգիները թանկագիները չնչին գնով ծախում էին զորքի մեջ գտնվող քրիստոնյաներին: Իսկ նրանք ուրախությամբ առնում էին՝ տարածելով շատ գավառներում, բաժանում էին եկեղեցիներին ու վանքերին: Այլև գերվածներից շատերին գնեցին՝ տղամարդկանց, կանանց, մանուկների, եպիսկոպոսների, քահանաների ու սարկավագների, որքան որ հնարավոր էր: Գնեցին քրիստոնյա իշխանները՝ Ավագը, Շահնշահը, Վահրամի որդի Աղբուղան, Դոփիի որդի Գրիգոր Խաչենցին, որ մի աստվածավախ մարդ էր. նրանց զորքը»[92]: Մեկ տարի անց, հաղորդում է պատմիչը, Երզնկա քաղաքի գրավման ժամանակ մոնղոլներին զինվորագրված քրիստոնյաները, նաև վերը թվարկված հայ իշխանները, ոմանց բացարձակ կամ գաղտնի նորից

ազատեցին գերությունից, և այդ մարդասիրական ձեռնարկմանը նորից մասնակցեցին հայ զինվորները:

Ըստ պատմաբան Արտաշես Շահնազարյանի, Տավուշի մարզի հյուսիս-արևելյան և արևելյան հատվածները զբաղեցրած Վահրամյանների իշխանությունը XIII դարի երկրորդ կեսից սկսում է թուլանալ: Նրանց մասին ունեցած վերջին տեղեկությունները վերաբերում են 1280-ական թվականներին, որից հետո «Վահրամյաններն այլևս երկրի ռազմաքաղաքական կյանքում նախկին ազդեցությունը չունեին»[93], նոր աննպաստ պայմաններում սկսեցին մարել և ընդհանրապես հեռացան պատմության թատերաբեմից: Իսկ մոնղոլական տիրապետության հաստատումից հետո հայտնվելով նոր կայսրության ներքին գավառներից մեկում՝ իր երբեմնի նշանակությունն ու փայլը կորցրեց Վահրամյանների Գագա բերդը, որի տեղը, մեր համոզմամբ, մինչ այժմ ճիշտ չի նշվում, ուստի անդրադառնում ենք խնդրին՝ ըստ մեր ուսումնասիրության:

* * *

Մինչև XVIII դարի ավարտը Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները ռազմատենչ ցեղերի և աշխարհակալ հզոր տերությունների արյունալի ընդհարումների և անվերջանալի ասպատակությունների թատերաբեմ էին: Այստեղ ավարառությամբ և նախճիրներով են զբաղվել հոները, սակերը, ալանները, պարսիկները, արաբները, սելջուկ-թուրքերը, թաթար-մոնղոլները, Դաղստանի լեռնականները: Թաթար-մոնղոլների անողորմ բռնություններից հետո ներկայիս Տավուշի մարզը գրեթե հայաթափվեց: Իսկ, երբ երկրի տիրոջ կյանքն ընդհատվեց, ապա մոռացումի փոշով պատվեցին շատ տեղավայրերի և շինությունների հայկական անունները, որոնց մեծ մասը սկսեց կոչվել մոնղոլներին փոխարինած խաշնարած թուրքմեն, ապա XVI դարում այստեղ բնակեցված ղազախ, շամշադիլ, զուլքյադար, բորչալու և այրումլու թուրքական ցեղերի կնքած անուններով: Այսպես մոռացության դատապարտվեց նաև Բագրատունյաց Գագիկ Ա (989-1020թթ.) թագավորի կառուցած նշանավոր Գագ կամ Գագա բերդը, որի տեղը փաստորեն հայտնի չէր մինչև վերջերս[94], չնայած իշխող տեսակետ կա, որ այն գտնվում է «նախկին Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղից մոտ 7 կմ հեռավորության վրա»[95], իբր թե՝ Գագ կոչվող լեռան վրա, որն այժմ թուրքերեն կոչվում է Գյոք: Նաև ասվում է, որ պահպանվել են պաշտպանական պարիսպների ավերակները, և բերդի մոտ բարձրացող սարի կատարին է գտնվում սուրբ Սարգիս եկեղեցին, որի կառուցումը կապում են Մեսրոպ Մաշտոցի հետ: Մեր օրերում այդ բառահոդվածը հրատարակության պատրաստող հեղինակը դժբախտաբար ավելորդ է համարել հնավայրը հավանաբար առաջինն ուսումնասիրած Մակար Բարխուտարեանցի հաղորդած շատ կարևոր մանրամասները. «Բավական ամուր է բերդս, ափսոս, որ ***ջուր չունի իր մէջ, վասն որոյ փորուած են մի քանի վիմափոր աւազաններ, որ բազմիցս լի են լինում անձրևաջրերով: Համարեա թե 20 ից աւելի վիմափոր այրեր կան յատկապէս պատրաստուած, որք ի հնումն գուցէ ծառայած են իբրև զորանոց, յորոց մի քանիսն ունին երդիկներ»***[96] (ընդգծումները մերն են – Ռ.Ս.):

Սակայն Մ. Բարխուտարեանցը, նման կարևոր տեղեկության հետ, իր նշանավոր աշխատության մեջ սխալ է ներկայացնում Գագա դաշտի սահմանները, որը, ըստ նրա, սկսվելով Կուր և Խրամ գետերի միախառնման անկյունից՝ Կոտրած կամրջից (Կարմիր կամուրջ), ձգվում է մինչև Աղստև գետը և, թեքվելով հարավ, «սեղմվելով վերջանում է Նոր-Պիպիս (նարկայիս Բերքաբեր – Ռ.Ս.) գիւղի մօտ»: Այդպիսով անտեսվել է Վարդան Արևելցու չափազանց կարևոր և ստույգ հաղորդումն այն մասին, որ ***Գագա դաշտում են սուրբ Սարգիսը, Մշկավանքը, Մակարավանքը, Կայան և Կայծոն բերդերը***[97]: Կողք և Աղստև գետերը հիշատակվող տարածքի եզրեր ընդունելով՝ կենտրոնում կունենանք Ոսկեպար գետի ձորահովիտը, որի միջին հոսանքի շրջանից սկիզբ առնող դաշտը, ձգվելով դեպի հյուսիս-արևելք, միանում է Կուրի աջափնյակի հարթավայրին: Ուրեմն հենց սա է Գագա դաշտը, որի հյուսիս-արևելյան ծայրին է սուրբ Սարգիսը, իսկ նրա ստորոտին՝ կարծեցյալ Գագա բերդը:

IX դարի վերջին Հայաստանի անկախ պետականությունը վերականգնած Բագրատունյաց գահատոհմը նոր տերության ամրապնդման բազմաբնույթ քայլերի մեջ կարևոր տեղ հատկացրեց ռազմական շինարարությանը: Ոչ միայն բազմապատկվեց հայոց զորքի քանակը, այլև պետության սահմանների երկայնքով ստեղծվեցին պաշտպանական կառույցներ, որոնք կոչված էին խոչընդոտելու հակառակորդի մուտքը երկրի ներքին մարզեր: Բերդեր (ամրոցներ) կա-

ռուցվեցին նաև նոր տերության հյուսիս-արևելյան գավառներում: Հնավայրերի քարտեզն ուշադիր դիտողը կնկատի, որ, պետության պաշտպանական խնդիրներին համապատասխան, ամրոցները դրվել են Կուր գետի առափնյա հարթավայրից 15-20 կմ հեռավորության վրա, այդ գավառների նախալեռնային գոտու ձորահովիտներին իշխող դժվար մատչելի կետերում, ուր կարող էին հարձակումների ժամանակ հուսալիորեն պաշտպանվել և, հակառակորդի ուժերը մաշելով՝ նաև հաղթական մարտեր մղել սահմանակալ երկրամասի տերերը: Եվ, ահա այդ տրամաբանությանն ու կոչմանը միանգամայն համապատասխանում են Խնձորուտ, Հախում, Աղստև և Կիրանց գետերի ձորահովիտների միջնամասում կառուցված Երգեվանք, Մածնաբերդ, Տավուշ, Կածարեթ, Տերունական, Նոր բերդ, Կայծոն, Կայան, Մահկանաբերդ ամրոցները, իսկ Կոթի գյուղի մոտ նշվող Գագա բերդը՝ ոչ: Ինչու՞: Չէ՞ որ այս բնակավայրը (ամրոցը) գտնվել է Բագրատունյաց պետության հենց սահմանի եզրին: Միթե՞ նրա տերերը եղել են այնքան անխելամիտ, որ տեղի սխալ ընտրության պատճառով, իրենց հպատակների հետ, անընդհատ ենթարկվել են Կուրի հարթավայրից և Կովկասյան լեռների կողմից անարգել հոսող թշնամիների հարձակումներին՝ ժամանակ չունենալով ինքնապաշտպանության կազմակերպման համար: Իսկ հարթավայրին հարող բերդի գրավումը դժվար չէր լինի, որովհետև պաշարումը տեղի կունենար անհապաղ, և շատ արդյունավետ կգործեին պարսպակործան մեքենաները, որոնց կիրառումը մյուս բերդերում գրեթե բացառված էր դժվարին տեղանքի շնորհիվ: Իսկ այս հնավայրի ամենախոցելի կողմը խմելու ջրի հեռավորությունն է: Դրան ավելացնենք, ամռանը՝ նաև խիստ շոգը: Համալիրին ծանոթ հնագետները նաև կարող են վկայել, որ պահպանված պարիսպները պատկանում են այլ՝ XIII դարում ապրած Վահրամյաններից վաղ ժամանակին: Իսկ, եթե սա չէ նշանավոր Գագա բերդը, ապա միթե՞ թշնամիների առաջ բաց է մնացել Բագրատունյաց թագավորության այս սահմանի՝ Ոսկեպար գետի հովիտը: Իհարկե՝ ոչ:

Գագա բերդը գտնվել է ճիշտ այնտեղ, ***ուր հյուսիս-արևելյան կողմանքի պաշտպանական համակարգի կոչման տրամաբանությամբ պիտի լիներ. Գագա դաշտի վերնամասում, Ոսկեպար գետի միջին հոսանքի շրջանում, բնական խոր անդունդի եզրին, բավականին ընդարձակ ավերակ գյուղաքաղաքի հարավային***

կողմում, որտեղից՝ գետի հոսանքն ի վեր, բացվում է Գագա դաշտը: Հայտնի է, որ Զաքարյանների և Վահրամյանների իշխանության ժամանակներում (XII-XIIIդդ.) Գագա բերդը եղել է ոչ միայն նշանավոր ամրոց, այլև՝ մեծ բնակավայր, որպիսին չի նշմարվում կարծեցյալ Գագա բերդի հնավայրում: Եվ՝ այնքան հարուստ կյանքով է ապրել, որ նրա բնակիչները մոնղոլ զորապետ Մոլար նոյինի գերությունից ութսուն դահեկան ոսկով փրկագնել են Խորանաշատի առաջնորդ Վանական վարդապետին[98] և, մոնղոլական հրոսակներից փախչելով՝ այստեղ ապաստան են գտել շրջակա գավառների հազարավոր բնակիչներ: Կրկնենք, որ կարծեցյալ Գագա բերդն այնքան էլ մեծ բնակավայրի տպավորություն չի թողնում: Եվ դժվար է հավատալ, որ Կուրի դաշտավայրից հարձակվող թշնամիներից հալածված խաղաղ հայ մարդիկ փախել են դեպի «սրի բերան»՝ հարթավայրի եզրին գտնվող ջրազուրկ բնակավայրեր և ոչ թե դեպի Գագա դաշտի հարավկողմյան լեռները, որոնց քարափների ծերպերին, խոր ձորերում, մութ անտառներում, գուցե նաև այնտեղ հառնող հզոր բերդերում կամ նրան կից մարդաշատ գյուղաքաղաքում շատերը կարող էին փրկություն գտնել, նաև՝ ջուր: Ուրեմն այնտեղ՝ գավառի նախալեռնային գոտում, պիտի գտնվեր Վահրամյանների իշխանանիստ Գագա բերդը: Ուստի մեր որոնումների ընթացքում առաջնորդվեցինք հանգուցյալ Բագրատ Ուլուբաբյանի տեսակետով: Հենվելով Կիրակոս Գանձակեցու, Վարդան վարդապետի, Մ. Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությունների վրա՝ անվանի պատմաբանն իրավացիորեն նկատում է, թե Գագա բերդի «Ստույգ տեղադրությունը հայտնի չէ: Հավանորեն գտնվել է Աղստև գետի ձախ ափին, Գագա դաշտի հարավային կողմում»[99]:

Իսկ Գագա բերդի՝ Կոթի գյուղի մոտ գտնվելու տեսակետը գալիս է XIX դարի հետազոտողներից, որոնք պարզապես ճիշտ չեն ընկալել XIII դարի մեծ գիտնական Վարդան Արևելցու հաղորդումը Գագա գավառի և Գագա բերդի մասին: Պատմիչը հայտնում է, որ թաթար-մոնղոլները Հայաստանի վրա հարձակվել են վիճակահանությամբ, ուստի յուրաքանչյուր հրամանատար իր զորքերը տարել է իրեն բաժին ընկած գավառի ու դղյակի վրա. «Իսկ Մոլար նոյինն իր բաժին առեալ զբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ, և նախ առնու զՇամքոր հնարիւք. և Վահրամ որդւովն Աղբուղայիւ փախչի ի տեղւոջէ ի տեղի, մինչև գիտաց եթէ խնայեն ի հնազանդեալս՝ որք կամօք խոնարհին ի

ձեռս նոցա: Եվ ապա եկեալ առնոյր զառեալն ի նոցանէ զդղեակս և զգաւառն՝ որ սեփական էր լեալ նոցա ի հայրենեաց. որ և զամենայնն առեալ էին, զՏավուշ, զԿածարէթ, զՏերունական, զԵրգևանքն, զՄածնաբերդ՝ որ էր Կիւրիկեան Ասխարթանայ. Նոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորազնին, և ***զՔաւազինն անմատչելի ամրոց, և զԳագ անուանի բերդ, և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի սրբոյն Մեսրովբայ Վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտին լայնանիստ և երկայնատարած»***[100]:

Ինչպես տեսնում ենք, պատմիչը բծախնդիր հերթականությամբ է թվարկում Վահրամ իշխանից Մոլար նոյինի գրաված բերդերի ու գավառների անունները: Խնդրո առարկա տարածքում մոնղոլ զորավարը նախ գրավել է Գագա դաշտի հարթության մեջ հառնող Քաւազին (կամ Գավարզին) անմատչելի ժայռ-ամրոցը, ապա՝ Գագ անվանի բերդը, իսկ հետո՝ Գագիկ թագավորի շինած գավառը: Այստեղ, անշուշտ, կենտրոնական դիրք է գրավել Գագա դաշտը, որի «գլխին»՝ այսինքն ծայրամասի կատարին, վեր է խոյանում «լայնանիստ և երկայնատարած» դաշտին նայող սուրբ Սարգիս եկեղեցին, որն օրհնել է հայոց գրագետ դարերի սկզբնաղբյուր Մեսրոպ Մաշտոցը: Եվ ոչ մի խոսք այն մասին, թե Գագա բերդը գտնվել է սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ, կամ՝ ընդհակառակը: Պարզապես Վարդան Արևելցու ասածը սխալ է հասկացվել, մանավանդ, որ երկար ժամանակ չի իմացել Կոթի գյուղի մերձակայքի հնավայրի ինչ լինելը և Գագա բերդի որտեղ գտնվելը:

Ներկայիս Տավուշի մարզի Ոսկեպար գյուղից 7-8 կմ արևմուտք, համանուն լեռնաշղթայի սկզբնամասի ստորոտում, Ոսկեպար գետի ձախափնյա սարավանդին 8-10 հեկտարի վրա տարածվում է մի հնավայր: Դեռ հեռվից այցելուին գրավում են որմնահեցավոր հզոր բերդապարիսպներն ու նրանից ներս կանգուն աղյուսապատ երկհարկանի շինությունը, որի շրջակայքում նշմարվում են երկրաշարժի՞ց, թե՝ պայթեցումներից կործանված կառույցների փլատակներ: Պարսպից դուրս, դեպի Ոսկեպարի լեռնաշղթայի ստորոտ, դարավանդների վրա տարածվում է բերդին կից ավերակ բնակավայրը, որը չափերի շնորհիվ գյուղաքաղաք պիտի կոչել: Բերդի հատակագիծը նման է արևելքից արևմուտք ուղղված սեպի, որի գլխամասը

բաղկացած է իրարից 45 մետր հեռավորությամբ, զուգահեռաբար հյուսիսից հարավ ձգվող կրկնապարիսպներից: Դրանցից արտաքինի հարավային անկյունից, գետի խոր հատակից գրեթե ուղղահայաց ելնող ափեզրով աղեղվում է 8-12 մետր բարձրությամբ պարիսպը, որը մի քանի տեղում ավերված է: Շարվածքով սա չափազանց նման է Կայան բերդին: Արտաքին կրկնապարսպի հյուսիսային ծայրից սկիզբ առնող բերդապատը, որը միջնաբերդն անջատել է կից գյուղաքաղաքից, ինչ-որ արհավիրքից սաստիկ ավերվել, երկար ձգվող քարակույտի է վերածվել: Սրա միջնամասում եղել է միակ դարպասը: Բերդից ներս, հյուսիս-արևելյան կողմում, արևելք-արևմուտք ուղղությամբ վեր են բարձրանում, մեր կարծիքով, իշխանական պալատի պահպանված երկու հատվածները, որոնց միջանկյալում եղել է մեծ սրահ: 30 մX5.5 մ ուղղանկյուն հատակագծով այդ շինությունը, ի տարբերություն պարիսպների, կերտված է թրծված կարմիր աղյուսներից, որոնք կապակցված են կիրավազի շաղախով: Առավել հետաքրքրություն է ներկայացնում կառույցի արևելյան, երկհարկանի հատվածը: Մեր կարծիքով առաջին հարկը բերդի (գավառի) իշխանին ծառայել է սեղանատուն, իսկ երկրորդը՝ ննջարան: Դրանց հետևում գտնվող ավերված մեծ սրահում երկրամասի տերը հավանաբար հյուրեր է ընդունել և աշխատել: Անանուն ճարտարապետն աղյուսե պատերից վեր, տանիքի եզրերով ձգվող բազալտե քիվերի վրա թողել է իր վարպետության կնիքը՝ հիացմունքի արժանի բարձրարվեստ զարդաքանդակներ: Պատը ներսից ծեփված է եղել և զարդարված՝ որմնանախշերով: Երկհարկանի հատվածի հարավային պատից կից, դրա սագաշեն տանիքի շարունակության տակ, եղել է մի այլ՝ այժմ լիովին ավերված շինություն, որի ծեփին պահպանվել են գունավոր սրբապատկերներ: Կասկած չկա, որ սա եղել է բերդի եկեղեցին: Ասել է, թե գավառիս աշխարհիկ ու հոգևոր կառավարիչները ապրել են հարևանությամբ, և դրա կարիքը ծանր ժամանակներում, անշուշտ, շատ է զգացել ժողովրդի հոգևոր հովիվը: Պալատի և հյուսիսային բերդապարսպի միջև ձագարաձև ջրավազանն է, որը կարող էր խաղաղ պահերին լցվել մոտակայքից հոսող առվի զուլալ ջրով և լեռնաշղթայի ստորոտի աղբյուրց՝ կավե խողովակներով: Ուստի ջրավազանից հազարավոր մարդիկ կարող էին հագեցնել իրենց ծարավը: Հարավային պարսպի երկայնքով ու բերդի արևմտյան հատվածում կան ավերված ու կիսավեր շինություններ, որոնց

նշանակությունը կարող է պարզվել միայն պեղելուց հետո: Այստեղից երևում է Կուրի աջափնյակի անցուդարձերը հսկող Գավարգին (Քավարգին) ժայռ-ամրոցը, որը կրակի ու ծխի ազդանշանով կապ է ունեցել նաև Նոր բերդի, Կայծոն բերդի, Գանձաքարի Բուդուր ամրոցի հետ: Հնավայրի սահմաններում կան գերեզմանոցներ և այլ շինություններ: Նորահայտ բերդը ժամանակի պահանջներին համեմատ բարեկարգ ճանապարհով, Ոսկեպար գետի ձախափնյակով, միացված է եղել Գավարգինի ստորոտով անցնող Դվին-Տփխիս և Տփխիս-Գանձակ քարավանային ճանապարհներին: Հնավայրի արևելյան կողմից մեկ այլ ճանապարհ հիմնականից թեքվել է դեպի Մշկավանք, Կողբի ձորահովիտ: Իսկ բերդից 4 կմ ներքև, դեռ կանգուն միակամար «Ջորու» կամրջով ճանապարհի մի կարևոր ճյուղն անցել է Ոսկեպար գետի աջափնյակ և ավերակ մի քանի գյուղի միջով բարձրացել արևելյան կողմի լեռնաշղթան և իջնել հաջորդ ձորահովտին (Կիրանցի) իշխած Մահկանաբերդի Արծրունիների Կունենի գյուղաքաղաքը*: Եվ այս ամենն ավելի են ընդգծում Ոսկեպարի ձորում մեր ուշադրությանն արժանացած հնավայրի դերն ու նշանակությունը՝ անցյալի հերոսական ու եղերական անցուդարձերի շարքում: Ուստի կարծում ենք, որ սա է Վարդան Արևելցու ասած Գագ անվան բերդը: Այդ դեպքում օրինական հարց կառաջանա՝ մի՞թե հնարավոր է, որ մինչև այժմ այն վրիպած լինի մեր հնագետների ուշադրությունից:

Կարող է լինել մեկ բացատրություն: Ճիշտ է, բերդը գտնվել է նախկին Նոյեմբերյանի շրջանի վարչական տարածքում, սակայն նրան մերձենալու միակ ուղու վրա մինչև 1992 թվականը Հայաստանի սահմանից ներս հայտնված Ադրբեջանի Ղազախի շրջանի Յուխարի Ասկիպարա գյուղը հայկական ամենամոտ Ոսկեպար գյուղին պարզապես մեկուսացրած է պահել հնավայրից: Թաթարները բերդը կոչել են Ղալաքենդ (Բերդագյուղ): Դրա տեղն իմացել են ոսկեպարցիք, սակայն մտածել են, թե թաթարական է, ասկիպարցիները՝ հակառակը: Եվ այսպես, Գագա բերդը մնացել է աշխարհի մոռացված անկյունում՝ չուսումնասիրված, անհայտության ու անորոշության մեջ: «Ոչ մեկի չպատկանելու» պատճառով այս գյուղերի համար այն վերջին տասնամյակներում ծառայել է որպես «աղյուսահանք», որի շինությունների թրծված կարմիր աղյուսներից բազմաթիվ փռեր են կառու-

* Ներկայումս կոչվում է Առաքելոց հնավայրի անունով:

Գուգարաց սարերում

Մարզի «տանիքը»՝ Մուրղուզ սարը (2993 մ) ձմռանը

Աղստևի հովտի համայնապատկերը Կայան բերդից

Պարզ լիճ

Սառնաջուր գետի ջրվեժներից

Գագա դաշտի համայնապատկերը

Զինվորի բրոնզե արձանիկ՝ «Նիզակակիր», Ք.ա. IX դ. (Պառավաքար)

Արձան-կուռքեր, Ք.ա. VI-V դդ. (Ջուջևան)

Հայոց Արտաշես I թագավորի սահմանաքարը, Ք.ա. 189-160թթ. (Թեղուտ)

Մկրտության բրոնզե ավազան, 1232 թ. (Հաղարծին)

Կիկլոպյան ամրոց, Ք.ա. I հազարամյակ (Ենոքավան)

Միջնադարյան կամուրջ, X-XI դդ. (Կիրանց)

Սուրբ Աստվածածին եկեղեցի, VI-VII դդ. (Ոսկեպար)

Մակարավանք, X-XIII դդ. (Աչաջուր)

Հաղարծին վանք, X-XIII դդ. (Դիլիջան)

Մխիթար Գոշ, մանրանկարը՝
Հայսմավուրքից
(1713 թ., Մատենադարան)

Գոշավանք, XII-XIII դդ. (Գոշ)

Վարագավանք, XIII դ. (Վարագավան)



Կիրանց վանք, XII-XIII դդ. (Աճարկուտ)

Դեղձնուտ վանքի շքամուտքը,
XIII դ. (Կիրանց)

Խալինջաքար բերդ, X-XI դդ. (Բերդավան)

Առաքելոց վանքի «հազարաշեն» եղանակով կերտված տանիքը,
XII-XIII դդ. (Կիրանց)

Խերումյան մելիքական տոհմի դամբարանը, XVI-XVII դդ. (Աճարկուտ)

Խաչքարեր, XII-XIII դդ. (Գոշ)

ցել: Մնում է տալ մեկ այլ հարցի պատասխան: Եթե Ոսկեպարի ձորի միջնամասի դժվար մատչելի սարավանդի վրա գտնվող ամրոցը Գագ բերդն է, ապա ի՞նչ է այդ հովտի հյուսիս-արևելյան, Գագա դաշտի ներքնամասում, սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ գտնվող վիմափոր այրավոր հնավայրը, որին սխալմամբ վերագրվել է Գագա բերդի դերը: Իսկ դրա ինչ լինելը փորձենք իմանալ հայ պատմիչների հաղորդումներով:

III դարի կեսերից Պարսկաստանի թշնամանքը Հայաստանի նկատմամբ գնալով ուժգնացավ, որովհետև ասպարեզ եկած նոր՝ Սասանյան գահատոհմը մի աննախադեպ մոլեռանդությամբ դրոշի վրա բարձրացրեց մազդեզանց կրոնը: «Արտաշիրի (Սասանյան առաջին արքայի - Ռ.Ս.) ու նրա հաջորդների համար արդեն երդվյալ թշնամիներ էին ոչ միայն Պարթև Արշակունիները, որոնց ոչնչացնում էին ամենուրեք, այլև՝ նրանցից ծյուղավորված հայ Արշակունի թագավորները»[101]: Պարսից արքան ցանկացավ պատժել Հայոց Խոսրով Բ թագավորին (279-287), որը չէր ենթարկվում և պատուհասում էր իրեն: Ուստի արքան իր մոտ է հրավիրում պետության մեծամեծերին, նրանց խնդրում իր վրեժը լուծելու որևէ հնար գտնել:

Ոտքի է կանգնում պետության գլխավոր նահապետներից մեկը՝ Պարթև Անակը, և խոստանում՝ իբրև թշնամիներից, վրեժ առնել իր ազգականներից՝ հայ Արշակունիներից: «Այն ժամանակ,- հայտնում է պատմիչը,- Պարթևն իր եղբոր հետ պատրաստվեց ընտանյոք, կանանցով, որդիներով, ամբողջ ունեցվածքով շարժվեցին, ճանապարհ ընկան, զննելով ճանապարհները, ելան, գաղթելու պատրվակով գնացին Հայաստանի կողմերը, իբրև թե ապստամբել էին պարսից արքայի դեմ: Եկան հանդիպեցին Խոսրով թագավորին Ուտիք գավառի Խաղխաղ քաղաքում՝ Հայոց թագավորության ծմեռանոցում»[102]: Անակ Պարթևն ու իր եղբայրը հեշտությամբ սպանում են դավին անտեղյակ Խոսրով թագավորին: Պատմական աշխարհագրությունից հայտնի են Մեծ Հայքի Ուտիք աշխարհի սահմանները, որոնք ընդգրկում էին Կուրի աջափնյակի հարթավայրն ու հարավային կողմի նախալեռները: Հավանաբար Ագաթանգեղոսը հարկ չի համարել արձանագրել Հայաստանի հին վարչատարածքային բաժանումը, այլ ներկայացրել է մարզպանության շրջանի իրողությունը, երբ Ուտիքն այլևս նահանգ չէր, այլ գավառ, ուր գտնվող Խաղխաղ քաղաքը III դարի վերջին դեռ հայ թագավորի ծմեռանոցն էր: Եվ սա

այդ քաղաքի մասին առաջին հիշատակությունն է հայոց պատմության մեջ՝ առանց աշխարհագրական միջավայրի ստույգ նշման:

Հետագայում, Պարսկաստանի և Բյուզանդիայի ռազմական ու քաղաքական խարդավանքների հետևանքով (387թ.), Հայաստանը բաժանվեց այդ կայսրությունների միջև: Պարսկաստանն իր նոր սեփականած տարածքներում մտցրեց մարզպանական կառավարում: Այդ ժամանակ Մեծ Հայքից պոկվեցին ու Կապկոի (Աղվանքի) մարզպանությանը կցվեցին հյուսիս-արևելյան գավառները: Սակայն պարսիկները դրանով չբավարարվեցին և հետամուտ քայլեր ձեռնարկեցին քրիստոնյա հպատակներին՝ հայերին, վրացիներին և աղվաններին իրենց մեջ ձուլելու համար: Հազկերտ 2-րդ արքան, 449-ին, իր հրովարտակով հայերին քրիստոնեությունն ուրանալու, զրադաշտականություն ընդունելու պահանջ դրեց: Հայ ժողովրդի արժանապատիվ պատասխանը դարձավ Ավարայրի ոգեղեն հերոսամարտը, որը սակայն իր նախերգանքն ունեցավ Հայաստանի հյուսիս-արևելյան կողմանքում, և նորից՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ:

Հազկերտի հավատուրացության պարտադրանքի դեմ ընդվզեց ողջ հայ ժողովուրդը: 450-ի ամռանն Աղվանքի Սեբուխտ մարզպանն իր բանակներով ցանկանում էր հյուսիս-արևելյան կողմից հարվածել Հայաստանին: Դրանով փորձ էր արվում զենքի ուժով «խելքի բերել» եկեղեցիներն ատրուշաններ դարձնելուն արգելակող հայերին: Հակառակորդի մտադրություններին տեղյակ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանն իր սակավաթիվ զորքն առաջ մղեց և Կուր գետի աջափնյա դաշտում, Խաղխաղ քաղաքի մոտ պարտության մատնեց պարսիկներին, չնայած՝ Վարդանի գալու մասին Սեբուխտին նախապես հայտնել էր Վասակ Սյունին: Դեպքերի ժամանակակից պատմիչն ասում է. «Այս բանը գրեց ու հասկացրեց մարզպանին, որի անունը Սերբուխտ էր: Իսկ նա, երբ լսեց Վասակից այդ բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզվեց, որ Հայոց սպարապետը սակավաթիվ գնդով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Ճորա կողմերում, այլ հավաքեց իր ամբողջ բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր անունով մեծ գետը և հանդիպեց նրան ***Վրաց սահմաններին մոտիկ Խաղխաղ քաղաքի հանդեպ, որ Աղվանների թագավորների ծմեռանոցն էր»***[103]: Ղազար Փարպեցին, Մովսես Կաղանկատվացին՝ անդրադառնալով Խաղխաղի ճակատամարտին, կրկնել են եղիշեին:

Սակայն Մովսես Կաղանկատվացին Խաղխաղ քաղաքի տեղադրությունն ավելի է ճշտել 5-րդ դարում Հայաստանի վրա հոների ձեռնարկած արշավանքի առթիվ շարադրանքում: «Այդ ժամանակներում . . . թագավորն իր զորքերն ու . . . բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավառում: Իր բանակը բերեց, բնակեցրեց ***Խաղխաղ քաղաքի մոտ:*** Այստեղ երեք զորավարներ ընտրելով՝ նշանակեց մեծ բանակի հրամանատարներ ու նրանց հրամանատարության տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը. և հրամայեց երեք մասի բաժանել, ***հարձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաստանի վրա: Իր զորքերի երրորդ մասը, զատկի սկզբին հասնելով Արցախ, հարձակվում են Մեծ Կվյանքի վրա»***[104]: Ուրեմն Խաղխաղ քաղաքը գտնվել է Անդրկովկասի կենտրոնում, Արցախից բավականին հեռու, ***և դա համընկնում է Վրաց թագավորության հարավ-արևելյան սահմանների ամենամոտ տարածքին:***

Իսկ պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ այդ դարերում Ուտիքի և Վրաստանի սահմանն անցնում էր Կուր և Խրամ գետերի հունով, որոնց միախառնման անկյունում էր գտնվում Հունարակերտ ամրոցը՝ Խաղխաղի ամենամոտ կետը: Դրանք իրարից հեռու էին 20 կմ: Իսկ Գագա բերդի տեղը ստույգ չիմացած Ղևոնդ Ալիշանն ու Մակար Բարխուտարեանցը քաղաքը տեղադրել են Գանձակի կողմերում՝ Ջագամ գետի ներքին հոսանքի շրջանում, Վրաստանի սահմանին ամենամոտ կետից՝ Հունարակետից, 75-80 կմ հեռավորության վրա, որը, իհարկե, եղիշեի վկայության անտեսում է:

Ուստի պետք է ընդունել, որ սուրբ Սարգիս եկեղեցու մոտ գտնված հնավայրն է եղել Հայաստանի և Աղվանքի թագավորների ձմեռային քաղաքը, որի կենսագործունեության համար խիստ նպաստավոր էին աշխարհագրական դիրքը, բնությունն ու ձմեռային մեղմ կլիման: Հավանաբար շոգ ամռանն այստեղ շատ քիչ մարդ է մնացել: Իսկ սեպտեմբերի կեսերին, երկար ընդմիջումից հետո, երբ սկսվել են կենարար անձրևները, կարճ ժամանակում անդաստանները պատվել են փարթամ կանաչով և զովություն է իջել երկրին, թագավորն իր մերձավորներով ոստան քաղաքից Խաղխաղ է եկել, որը գտնվում է Անդրկովկասի կենտրոնում՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի սահմանների գրեթե կցանվածքում: Բազմաքանակ նախիրներն ու հոտերը մինչև գարուն, Գուգարաց սարեր ամառնարոտի տեղափո-

խելը, արածել են գրեթե ձյուն չտեսնող տաք հովիտներում: Երկրամասի անտառներն ու գետերը որսառատ էին: Խմելու ջրի հարցը զով եղանակին կարելի էր լուծել ձմեռանոցային քաղաքից արևելք, մոտակայքից հոսող Ոսկեպար գետից, կամ՝ աջակողմյան ձորի (ներկայիս՝ Կոթի գյուղի) բնական աղբյուրներից: Գտնվելով Ոսկեպար լեռնաշղթայի հեռավոր ծայրամասի հարավային ստորոտին՝ Խաղխաղը պաշտպանված է եղել ձմռանը հյուսիսից փչող վտանգավոր քամուց, որը XIX-XX դարերում կոչում էին «ղարայազ»: Մոտակա հարթության մեջ, ձորերում ու սարերի վրա ռազմախաղեր անցկացնելու լավ հնարավորություններ են ունեցել թագավորի դրանիկ գունդն ու բերդապահ զորքը, որոնց զորանոց են ծառայել վիմափոր այրերը: Հայոց մայրաքաղաքի հետ Խաղխաղը կապված է եղել Արտաշատ-Տփխիս քարավանային ճանապարհով, որից ձմեռային քաղաքը հեռու է եղել 3 կմ:

Գրքի նախորդ հրատարակությունից հետո Գագա բերդի տեղադրության մեր այս տեսակետը մասնագետների կողմից ոչ ընդունվեց և ոչ էլ մերժվեց: Իսկ շարունակելով որոնումներս՝ ուշադրություն դարձրի մի նոր ամրոցի՝ Ոսկեպար գյուղից հյուսիս-արևմուտք, բարձր ժայռին թառած Կոռաբերդին, որն իր շինարարական մտածողությամբ նման է Մահկանաբերդին: Գուցե սա՞ է Գագա բերդը:

* * *

Անհայտ է, թե Վահրամ Գագեցին ու նրա որդի Աղբուղան մոնղոլների դեմ ճակատամարտե՞լ են, թե՝ ոչ: Նրանց պատկանող Շամքոր քաղաքի գրավման կապակցությամբ Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ Վահրամը խուսափել է թշնամու հետ հանդիպելուց և դա արգելել է անել իր տաքարյուն որդուն: Եվ սա արդեն առաջացող տարիքում գտնվող ողջախոհ մարդու քայլ պետք է համարել: Չէ՞ որ, ինչպես վրացի և հայ պատմիչներն են վկայում, Վրաստանում խախտվել էր Գեորգի թագավորի և Թամար թագուհու օրերում հաղթանակներ բերած օրհնալիր միասնությունը, իշխանները թաթար-մոնղոլների ահագնացող վտանգից գլուխներն առած փախչում էին Կովկասյան լեռները: Մայրաքաղաքը թողնելով՝ Արևմտյան Վրաստան էր ճողոպրել Ռուսուդան թագուհին: Ուստի վրացական

պետության սահմանները հարավ-արևելքից պաշտպանող Վահրամ իշխանը չէր կարող օգնական զորք ակնկալել արքունիքից կամ հարևան իշխանություններից: Մնում էր խուսափել առճակատումից և հարմար պահի հպատակություն հայտնել: Մարտադաշտի հերոս Զաքարե Զաքարյանի Շահնշահ որդին ամրացավ Լոռե քաղաքում: Նա ևս խուսափեց մոնղոլների հետ կռվի մեջ մտնելուց: Քաղաքի պաշտպանությունը հանձնեց աներոջ թուլամորթ ու հարբեցող որդիներին, իսկ ինքը թաքնվեց ինչ-որ քարայրում: Չաղատայ զորավարի զինվորներն արագ կործանեցին բերդի պարիսպը, գրավեցին քաղաքը և բնակիչներին կոտորեցին: Նրանք հեշտությամբ գտան Շահնշահին ու նրա հարուստ գանձերը:

1236-ի ամռանը մոնղոլական մի ուրիշ բանակ, պատմիչի ասելով՝ «հսկա բազմությամբ», Իտուղատա զորավարի գլխավորությամբ լցվեց Տավուշի մարզի կենտրոն, ուր տարածվում էր Վրաստանի աթաբեկ և ամիրսպասալար Ավագ Զաքարյանին պատկանող Կայան գավառը: Ավագ իշխանն ամրացավ անառիկ և ամուրի համբավ ունեցող Կայան բերդում*, որի շուրջն ամրացան գավառի բնակիչները: Մոնղոլները «բերդի շուրջն ամեն կողմից ստորոտով պատ քաշեցին և լուր ուղարկեցին Ավագին, որ գա նրանց հարկատվության և հնազանդվի և չվախենա»[105]: Սակայն Ավագն ու նրա հպատակ հայերը մերժեցին հակառակորդի խորհուրդը՝ ապավինելով իրենց քաջությանն ու Կայան բերդի ամրությանը, շարունակեցին ինքնապաշտպանությունը: Եվ ինչը չկարողացավ անել թշնամու բանակը, հնարավոր դարձրեց մահաբեր ծարավը: Պապակած մարդիկ ստիպված իջան բերդից ու ընկան սրի բերանը: Ազգակիցների հուսահատ վիճակը թեթևացնելու, տոչորված երեխաներին ծարավի տանջանքից փրկելու համար՝ Ավագ իշխանը հանձնվեց մոնղոլների գլխավոր հրամանատար Չարմաղունին, որն ամռան տապին հանգիստ էր վա-

* Կայանի միջնաբերդը հայ անանուն ճարտարապետի տաղանդի փայլատակման շնորհիվ սովորական իմաստով մուտք, դուռ կամ դարպաս չի ունեցել, և դրանց անհրաժեշտությունը չի էլ զգացվել, որովհետև միջնաբերդի՝ ժայռի կատարին գտնվելու և լանջերի մեծ թեքության պատճառով բացառված է եղել սայլերի և գրաստների ելումուտը: Իսկ հետիոտն մարդկանց այդ նպատակով հուսալիորեն ծառայել է արևմտյան պատի մեծաշառավիղ որմնահեցի վրայով աղեղվող «օդային» (բարձակային) անցուղին (տես «Էջմիածին», Զ, 2000, էջ 80-83):

յելում գեղածիծաղ Գեղամա ծովի զովասուն ափին: Մոնղոլ զորավարն Ավագին պատիվների արժանացրեց և իր ենթականերին հրամայեց այլևս չկռվել նրա իշխանության տակ գտնվող բերդերի ու քաղաքների դեմ: Եվ երկրի դրությունը թեթևացավ ու բազմաթիվ գերիներ ազատ արձակվեցին ի սեր նրա: Նաև արհավիրքից փրկվածները վերադարձան՝ վերահաստատվելով իրենց ավերված գյուղերում: Սկսեց աշխուժանալ տնտեսական կյանքը, նաև՝ մշակույթը, որը երևում է երկրամասում իրականացված եկեղեցաշինությունից, կերտված բազմաթիվ խաչքարերից, գրված մեծարժեք ձեռագրերից, ստեղծված մանրանկարներից և ծավալված գիտամանկավարժական աշխատանքից:

Սխալված չենք լինի ասելու, որ Ավագ Զաքարյանի՝ իր հայրենական տիրույթներում նախկինի պես իշխել վերահաստատվելու և նրա հոգածության շնորհիվ Կայան գավառում ստեղծագործելու հնարավորություններ են ստանում պատանի հասակում Նոր Գետիկի վանքում հոգևոր կրթություն ստացած սննդակից եղբայրներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին: Ավագ Զաքարյանի անառիկ Կայան բերդի հովանու ներքո՝ նրա մատույցներում կառուցված սուրբ Անդրեի մենաստանի[106] վարդապետարանում, իր բեղուն գիտամանկավարժական գործունեությունն է շարունակում հայ միջնադարյան արծաթե դարը կերտողներից և իր հզոր տաղանդով XIII դարը իմաստավորողներից մեկը՝ Արևելցի կոչված Վարդան վարդապետը, որն արդեն իր կենդանության ժամանակ մեծարվում էր որպես «իմաստուն և հանճարեղ վարդապետ», «հարազատ և սքանչելի», «քաջաբան մեկնիչ», «տիեզերալույս քարոզիչ», «եռամեծ մատենագիր»: Պատմությունից հայտնի է, որ նա շնորհակալ աշխատանք է կատարել նաև Խորվիրապի համալսարանական տիպի դպրոցում, որի երևելի սանն էր միջնադարյան հայ դպրության պարծանք, «երկրորդ Աթենք» հռչակված Գլաձորի համալսարանի առատամիտ հիմնադիրներից մեկը՝ Ներսես Մշեցին:

Գրքի շարադրանքն առաջ տանելու համար անհրաժեշտ ենք համարում դիմել մի կարևոր միջարկության, անդրադառնալ միջնադարյան Հայաստանի նշանավոր ամրոցներից մեկի՝ Կայան բերդի տեղադրության խնդրին, որն այսօր էլ զբաղեցնում է մասնագետների միտքը[107]: Մեր համոզմամբ, այդ հուշարձանի տեղի հստակեցումով հնարավոր կլինի ճշտել պատմական այլ իրողություններ, իսկ

հետազոտողները կձերբազատվեն հետագա անպտուղ որոնումներից: Հայտնի է, որ Կայան ամրոցի (նրա հետ նույնացված Աղջկա բերդի) ուսումնասիրությունը 1874թ. ամռանը սկսել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի բարձր դասարանի աշակերտ, ծնունդով Քարվանսարա գյուղացի (այժմ՝ Իջևան քաղաք) Մարտիրոս Սիմոնյանը, որը բարձրաբերձ ժայռերին թառած ամրոցում տեսել էր ***բազմաթիվ սենյակներ*** (ընդգծումը մերն է - Ռ.Ս.) և այդ ամենի մասին թղթակցությունով հանդես եկել «Մեղու Հայաստանի» թերթի նույն տարվա օգոստոսի 10-ի համարում: Հետագայում Կայան բերդի և համանուն գավառի ուսումնասիրության, տեղադրման և անունների ճշտգրտման հարցերով զբաղվել են Մ. Բարխուտարեանցը, Լևոն, Հ. Եղիազարյանը, Թ. Հակոբյանը, Մ. Հովհաննիսյանը, Գ. Շախիկյանը, Ռ. Մաթևոսյանը և Հ. Եսայանը: Սպասելի էր, որ նրանք բոլորն էլ կանսային խնդրի լուծման սկզբնաղբյուր հանդիսացող Հովհաննես Դրասխանակերտցի և Կիրակոս Գանձակեցի պատմիչների վկայություններին, բայց հաճախ ստացվել է հակառակը:

Դրասխանակերտցին հաղորդում է, որ Բագրատունիների ժամանակ հայտնի դարձած Կայան բերդը գտնվում է ***Ուտիքի կողմերում՝ Չորափոր գավառում***, որը համապատասխանում է Աղստև գետի միջին հոսանքի շրջանին: Իսկ Կ. Գանձակեցին Մխիթար Գոշի՝ Դասնո անապատից Հին Գետիկի վանք վերադառնալու կապակցությամբ ասում է, թե մեծահռչակ վարդապետը ***«բնակվեց Գետիկ կոչված վանքում՝ Կայան գավառում Աղստև մեծ գետի աջ կողմի վրա»:***

Հետևելով իր լավատեղյակ նախորդների վկայությանը և թեմայի համար ունենալով սեփական պրպտումների արդյունքը՝ խորագիտակ Լեոն Կայան բերդն իրավացիորեն տեղադրել է ***Դիլիջանի կիրճում (Աղստևի հովտում) գտնված Չորսփոր գավառում:*** Սակայն ուսումնասիրողներից ոմանք անտեսելով ակնհայտ փաստերը, Կայան ամրոցը և համանուն գավառը սկսել են որոնել այլուր և .գտել են»: Նաև փորձ է արվել նույնանուն բերդն ու գավառը տարանջատել իրարից. մեկը թողել են Աղստևի ափին, մյուսը ***տեղափոխել Տաշիրք***՝ Դեբեդի հովիտ:

Նոր միջավայրում Կայան բերդ և նույնանուն գավառ գտնելու որոնումների մեջ մեծ է Միքայել Հովհաննիսյանի «ներդրումը»[108], որը ճիշտ ընթերցելով սկզբնաղբյուրը՝ եկել է անճիշտ եզրահանգման: Նա գրում է. ***«մանրամասնելով տեղագրական ճշտումը կը***

յիշենք հոս Կիրակոս պատմիչի յստակ վկայութիւնը, որ խօսելով Գետիկի վանքին վրայ՝ կըսէ. «Ի գաւառին Կայենոյ, որ ի վերայ գետոյն մեծագունի զոր անուանեն Աղստեւոյ գետ»: Արդ, Գետիկի վանքը եւ բերդը իրարու շատ մօտ եղած ըլլալով՝ կարելի է Աղստեւ գետին հետ կապել դիրքը նաև բերդին: Եւ արդարեւ Սովետական Հայաստանի պատմական ատլասն ալ կը դնէ Աղստեւ գետի ձախ ափի վրայ»: Ահա այսպես ընդունելով Կիրակոս պատմիչի վկայությունը՝ Մ. Հովհաննիսյանը տարօրինակ տրամաբանությամբ հայտարարում է, թե Կայան կամ

Կայեն անվանված բերդը գտնվում է Աղստևի հովտից ուղիղ գծով հավանաբար 100 կմ հեռավորության վրա՝ Դեբեդի հովտում, «Կայենոյ ձոր կամ Ձորոփոր գաւառին մէջ», Սանահին և Հաղբատ վանքերի միջև: Սա հարմարվել է մեր ժամանակակից հետազոտողներից ոմանց տեսակետին, որոնք նպաստել են սխալի խորացմանը:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ը[109] պատմական Գուգարք աշխարհին վերագրում է Կայան անունով երկու բերդ՝ մեկը տեղադրելով Տաշիրք գավառի Ձորագետի (Դեբեդի) հովտում, Սանահին և Հաղպատ գյուղերի միջև, իսկ մյուսը՝ ***«Ձորոփոր գավառում, Աղստև գետի ափին, Իջևան քաղաքից 15 կմ հարավ, Սևանա լճից հյուսիս, այժմ Արջանոց կոչված լեռների վրա, բացատում»:*** Մեզ հետաքրքրողը վերջինն է, որի տեղադրությունը լիովին ճշտելու համար մեր պարտքն էենք համարում ասել, որ Կայան բերդը չի գտնվում Արջանոցի լեռների վրա, որոնք կազմում են Փամբակի լեռնաշղթայի արևելյան թևը և, իսկապես, գտնվում են Սևանա լճից հյուսիս՝ ներկայիս Գեղարքունիքի մարզում:

Իսկ Կայանը տեղադրված է Գուգարաց լեռնահամակարգի Իջևանի լեռնաշղթայի բազուկներից մեկի ժայռեղեն կատարներին, և ոչ՝ բացատում:

Երեք տասնամյակ առաջ խնդրի պարզաբանմանը նկատելի ավանդ բերեց հանգուցյալ Ռաֆայել Մաթևոսյանը: Նա իր աշխատության մեջ[110] ապացուցել է, որ Արշակունիների թագավորության և մարզպանական ժամանակներում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ձորոփոր գավառը, Բագրատունիների թագավորության շրջանում (ենթադրաբար՝ Աշոտ Երկաթի) կառուցված անառիկ Կայան բերդի անունով, Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյանների ժամանակներում կոչվել է Կայան գավառ: Հետագայում մեր կողմից այդ

տեսակետն ավելի ամրապնդվեց գիտնականին անհայտ երկու վավերագրերով[111]:

Դրանցից առաջինը 13-րդ դարի սկզբին ***Կայան գավառի Միափոր կոչված ձորի (Գետիկի ձոր) Զարմանազանք վանքում*** ընդօրինակված Ավետարանն է: Մյուսը նույն դարի երկրորդ կեսին խնդրո առարկա բերդից երեք կիլոմետր արևմտյան կողմի վրա գտնված թևավոր խաչն է, որի արձանագրությունը կազմել են տեղի՝ Կայան գավառի ձեռնավորները: Այսպիսով, այս գավառի տեղադրության հարցը վերջնականապես լուծված պետք է համարել, իսկ ահա Կայան բերդի տեղադրության խնդիրը մնում է բաց, քանզի իր նորագույն ուսումնասիրությամբ հնագետ Հ. Եսայանն այն նույնացրել է Աղստևի աջափնյակի ժայռերին թառած Մանթաշ ամրոցի հետ, որը մեր կարծիքով անընդունելի է: Եվ ահա թե՝ ինչու:

Նորից ունկնդրենք մեր հարազատ Կիրակոս պատմիչին: Որպես իրադարձությունների ժամանակակից և անմիջական մասնակից՝ մոնղոլական արշավանքի կապակցությամբ նա հայտնում է. «Իսկ իշխանն մեծ՝ որդին Իւանէի, որ Աւագն կոչէին, իբրեւ ետես զայն ամենայն բազմաթիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ եւ ***նա ի բերդն ամուր, որ կոչի Կայեան. եկին եւ ամենայն բնակիչք գաւառին, ամրացան եւ նոքա շուրջ զբերդովն:*** Իբրեւ գիտացին զօրքն այլազգեաց, թէ անտ ամրացաւ իշխանն, մի ոմն ի նոյնց գլխաւորացն, որում անուն էր Իտուղատայ, առեալ զօրս բազումս, եկն պաշարեաց շուրջ զբերդովն: Եւ առհասարակ լցաւ աշխարհն ի զօրաց այլազգեաց, զի ի նմա գաղթեալ էին յամենայն կողմանց վասն ամրութեան վայրացն: ***Ածին շուրջ զստորոտով բերդին որմս յամենայն կողմանց, յղէին պատգամս առ Աւագն՝ գալ ի հնազանդութեան նոցա եւ մի երկնչիլ»:***

Բերդի ստորոտով պատ դնելն այնտեղ պաշարված գավառի բնակչությանը ծարավի մատնելու փորձված միջոց էր, որի զորությամբ մոնղոլները շուտով գրավեցին ամրոցը: Աշխատության մեկ այլ էջում պատմիչը Կայանն անվանում է անառիկ: Ուստի մեզ պետք է մտնել մի բերդ, որը լինի. ***ա) անառիկ, բ) այնքան մեծ, որ կարողանար ապաստան տալ գավառի ողջ բնակչությանը, գ) որի ստորոտում ամեն կողմից նշմարվեին մոնղոլների դրած պատերի հետքերը:*** Այդպիսին գտնելու համար նախ ներկայացվող գծապատկերով դիտարկենք մեզ հետաքրքրող բնական միջավայրը:



ԿԱՅԱՆ ԳԱՎԱՌԻ ԲԵՐԴԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ինչպես երևում է գծապատկերից, Աղստև գետի ձախափնյակում կա երկու (նշված են N1 և N2 թվերով), իսկ նրանց դիմաց, գետի աջ ափին, շուրջ 3 կմ հեռավորության վրա՝ մեկ (նշված է N3 թվով) բերդ: Եվ ստացվել է այնպես, որ դրանցից 2-րդը միշտ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

N1-ը, որ հառնում է Իջևանի լեռնաշղթայի հիմքից դեպի հարավ-արևելք (Աղստևի ձախափնյակ) ձգվող լեռնամատի ծայրին վեր խոյացող, խիստ զառիթափ լանջերով ժայռի կատարին, ունի պարիսպներ, ջրավազան, գողտրիկ մատուռ, մի քանի կացարանների հետքեր և շուրջ կես հեկտար մակերես: Տեղացիներին հայտնի է Աղջկա բերդ (Ղզղ ղալա) անունով, իսկ հնագետները սա նույնացրել են Կայան բերդի հետ: Անշուշտ, անառիկ ամրոց է, սակայն փոքրության պատճառով չէր կարող տեղավորել գավառի՝ թշնամուց փախած մեծաքանակ բնակչությանը: Բացի այդ, 40-50 մետր գրեթե ուղղահայաց վեր հառնող բոլորշի ժայռի ստորոտներում չկան որմեր: Ուրեմն, Կիրակոս պատմիչը սրա մասին չէ, որ վկայում է:

N3-ը, որը Հ. Եսայանը ներկայացնում է որպես Կայան ամրոց, տեղացիներին հայտնի է Աշոտ Երկաթի բերդ կամ Մանթաշ ղալա անունով: Սա, ինչպես վերն ասվեց, գտնվում է Աղստև գետի հակադիր՝ աջ ափին, Միափորի լեռնահամակարգի Պայտապարի լեռնաշղթայի անտառապատ ժայռերից մեկի վրա: Գրավում է գրեթե երկու հեկտար տարածք, ունի փոքրիկ միջնաբերդ, ջրավազան, եկեղեցու և կացարանների հետքեր: Այս ամրոցը, իհարկե, կարող էր թշնամական հարձակումների ժամանակ ընդունել բազմաթիվ մարդկանց, անառիկ է եղել երեք կողմերից, ուր խիստ զառիթափ լանջերով ժայռերն են: Սակայն հարավ-արևելքից եղել է խոցելի, քանի որ հակառակորդը կարող էր այդ կողմից ելարաններ դնել կամ մոտեցնել պարսպակործան մեքենաներ և տեսնել իր սև գործը: Իսկ գլխավորն այն է, որ ո՛չ ժայռերի ստորոտներում և ո՛չ էլ հարավ-արևելյան հարթակի վրա չեն նշմարվում արտաքին որմերի հետքեր: Ուրեմն սա էլ չէ պատմիչի ասած բերդը:

Հիմա մոտիկից դիտարկենք մինչ այժմ հնագետների ուշադրությունից վրիպած N2 բերդը, որը հառնում է N1 ամրոցը կրող լեռնամատին արևելքից զուգահեռ, մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորությամբ, նույնպես Իջևանի լեռնաշղթայից դեպի Աղստև գետի ձախափնյակ սլաքվող, երկու խոր ձորակների արանքում բարձրա-



N2 (ԿԱՅԱՆ) ԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ցող խիստ զառիթափ լանջերով եռագագաթ լեռնաճյուղի ծայրամասին: Այս «թերակղզին» անտառապատ ու քարքարոտ լեռնաբազուկ է, որը տեղացիներին հայտնի է էվլկուտի յալ (Ավելաշատ բլուր) անունով: Սակայն նրա ինչ լինելը տեղացիներից շատերին անհայտ է, քանի որ ամբողջովին քարակարկառներով ծածկված լինելու հանգամանքով հետաքրքրություն չի ներկայացնում՝ որպես արոտատեղ կամ դեղաբույսերի, հատապտուղների և ուտելի բանջարների հավաքման վայր, ուստի կողքով անցնում են անհաղորդ: Հենց այդ պատճառով մասնագետներն անտեղյակ են մնացել հնավայրի գոյությանը:

Էվլկուտի յալը երկու ձորերի հարակից մեծ թեքությամբ և 70-100 մետր բարձրացող եռակատար ու թրաձև ձգված քարեղեն գոյացություն է (N2 բերդի հատակագծում կատարները նշված են Ա, Բ, Գ տառերով): Իջևանի լեռնաշղթայի հիմքին մոտ Ա ժայռը հնավայրի համար այն դերն է կատարում, որ նրա և Բ կատարի հյուսիս-արևմտյան եզրը հանդիսացող քարափի արանքով է անցնում միջնադարյան Հայաստանի կարևորագույն հաղորդակցության ուղիներից մեկը՝ Արարատյան դաշտ-Աղստևի հովիտ-Գագա դաշտ-Տփխիս քարավանային ճանապարհը: Իսկ մեզ հետաքրքրողները Բ և Գ կատարներն են, որոնց միասնությունը կողքից նման է թամբի, և դրանք միացած են 35-40 մետր իջվածքով: Այս երկու կատարների եզրերով ձգվում է քարակուռ բերդապարիսպը, որը որոշ հատվածներում պահպանվել է 2.5-3 մետր բարձրությամբ, իսկ ուղղաձիգ քարափներին հանդիպելիս՝ ընդհատվում, քանզի դրանց մոտենալը պարզապես անհնարին է եղել հարձակվողների համար:

Որոշ հեռավորությունից խիստ զառիթափ լանջեր ունեցող, խոր թամքոցով իրար միացող Բ և Գ կատարների միասնական համայնապատկերը հիացմունք և զարմանք է պատճառում: Դրանք նման են բյուրափող հսկա երգեհոնների, քանզի կազմված են երկրի ընդերքից դեպի երկինք խոյացող անհաշիվ քանակի 3,4 և 5-կողանի բազալտե սյունափնջերից: Դարերի ընթացքում սրանց ծայրերը բնության հարվածներից կոտրատվել են տարբեր երկարությամբ, լեռնաթևի վրա կուտակվել որպես անսպառ պատրաստի որմնանյութ: Ապա ինչ-որ ժամանակ բնության այս կերտվածքն արժանացել է երկրի պաշտպանությամբ մտահոգ տիրոջ ուշադրությունը, որը եղածին հավելել է իր կառուցողական փայլուն միտքը և հիմնել անառիկ մեծ

ամրոց: Եվ այնքան մեծ, որ թշնամիների հարձակումների ժամանակ ***նրանում կարող էին ապաստանել Կայան գավառի գյուղերի մի քանի հազար բնակիչներ,*** քանզի երկու լեռնակատարներն օղակող պարսպներից ներս պարփակված է 4-4,5 հեկտար տարածք: Շարվածքի եղանակով և մեծությամբ այս ամրոցը եզակի է Հայաստանի հյուսիս-արևելքում:

Բերդի բոլոր պարիսպներն ու կացարանների պատերը կերտված են բացառապես վերը նշված բազալտե բազմանիստ սյուներով, երկայնակի իրար վրա շարվելով՝ առանց շաղախի: Իսկ համալիրը բաղկացած է Բ և Գ կատարների եզրերով ձգվող պարսպից, Բ գագաթի բարձրակետում կառուցված կլոր հատակագծով «իշխանական պալատից», երկու գագաթներին տարածված ուղղանկյուն հատակագծով մի քանի տասնյակ սենյակներից (հավանաբար 1874թ. ամռանը դրանք է տեսել Մ. Սիմոնյանը): Զրավազանի և հոգևոր շինության հետքեր չեն նշմարվում, գուցե գտնվում են քարակարկառների տակ: Պարիսպները դնելիս անանուն ճարտարապետն օգտվել է տարբեր հաստության և երկարության պատրաստի բազալտե սյուներից, որոնց արտաքին ծայրերը կազմել են որմերի ճակատը, իսկ սենյակների ներսում՝ պատերը: Անշուշտ, սենյակներն ունեցել են փայտե ծածկ, որը մթերվել է շրջապատի անտառից: Բ կատարից թեքությամբ դեպի թամքոցի հատակն իջնող սենյակները տեղադրված են հարավ-արևելյան, Գ կատարինը՝ հարավային ուղղությամբ: Ի դեպ, Գ կատարի սենյակները կառուցված են «փոփոխական հարկերի» եղանակով, ներքևինների տանիքները բակ են ծառայել վերևինների համար: Ամրոցի տարողությունը զգալիորեն մեծացվել է պարսպից դուրս գտնվող կլոր և ուղղանկյուն հատակագծով կացարաններով, որոնք գուցե նախատեսված են եղել բերդապահ զինվորների համար: Մուտքերը հավանաբար եղել են թամքոցի արևելյան եզրից և Բ կատարի ժայռի արևմտյան լանջի ստորոտից: Խմելու ջուր պաշարվածները վերցրել են լեռնաբազկի աջ և ահյակ կողմերի ձորերից բխող աղբյուրներից: Եվ վերջապես, ամրոցի պարիսպներից շատ ներքև՝ ***էվլկուտի յալի ստորոտի երկայնքով, նշմարվում են քարե պատերի հետքեր:*** Ուրեմն Աղստևի հովտի այս հատվածում առկա բերդերից միայն սա է համապատասխանում Կիրակոս Գանձակեցու ասածին:

Այդ դեպքում օրինաչափ հարց է առաջանում՝ շատ մոտ տարածության վրա ի՞նչ դեր է կատարել N1 ամրոցը: Այդ մասին «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում հետաքրքիր տեսակետ է հայտնել «Կայան» հոդվածի հեղինակ Թ. Հակոբյանը: N1-ը ընդունելով որպես Կայան բերդ՝ նա միաժամանակ, առանց տեղը ստույգ նշելու, ասում է. «Բուն բերդի ավերակները գտնվում են մի առանձնացված ու զառիթափ լանջով լեռան վրա»: Եվ հոդվածի հեղինակն էական արդյունքներ է ակնկալում հետագա հետազոտողներից: Լիովին համամիտ ենք բանիբուն գիտնականի հետ: Մեր կարծիքով, Կիրակոս պատմիչի ասած Կայան բերդը սույն շարադրանքում ներկայացված էվլկուտի յալի հնավայրն է, իսկ «Տեղանունների բառարանի հեղինակի ընդունած Կայան ամրոցը (N1)՝ նույնանուն հզոր բերդի համակարգի մեջ մտնող ***միջնաբերդը****, ուր մոնղոլների հարձակման ժամանակ իր աղխով ապաստանել էր հռչակավոր Իվանե Զաքարյանի որդի Ավագը: Այսպիսով, եթե ճշտված ենք համարում Կայան բերդի տեղադրությունը, նաև ճշտված պիտի համարենք Կայծոն բերդի տեղադրությունը, քանզի Դավիթ Քոբայրեցին հայտնում է, որ Կայծոն բերդը գտնվում է Կայան բերդի դիմաց: Այդ է վկայում նաև Հովհաննես Դրախանակերցի պատմիչը Սահակ Սևադա իշխանի՝ Աշոտ Երկաթի դեմ բարձրացրած խռովության կապակցությամբ, որը գրավել էր ոչ միայն Կայան, այլև նրա մոտ գտնվող Կայծոն բերդը, բերդապահներին սրի քաշել, բնակիչներին գաղթեցրել: Կայան բերդի կապակցությամբ մեր ընդարձակ և կարևոր մեջբերումն ավարտելուց հետո՝ վերադառնանք գրքի բուն շարադրանքին:

Սուրբ Անդրեի վանքի և նրան կից վարդապետական դպրոցի մասին հայ բանասիրության մեջ առաջին անգամ խոսել է Կիրակոս Գանձակեցին, իր «հարազատ և սքանչելի» բարեկամի՝ Վարդան վարդապետի, եկեղեցական-հասարակական գործունեության կապակցությամբ: Պատմելով Կիլիկիայի Հռոմկլա քաղաքում գահակալող հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսի (1221-1267թթ.) գլխավորությամբ գումարված եկեղեցական ժողովի հաստատած հավատացյալների վարք ու բարքի վերաբերյալ բարե-

* Հատուկ ուշադրության է արժանի Կայան ամրոցի միջնաբերդի մուտքի հորինվածքը (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 2000թ., Զ, էջ 80-83: Ռ. Սիմոնյան, «Կայան ամրոցի միջնաբերդի մուտքի խնդիրը»):

կարգական կանոնների ստեղծման հանգամանքների և դրանք Արևելյան Հայաստանում տարածելու գործընթացի մասին՝ Կ. Գանձակեցին որպես լավատեղյակ ժամանակակից հայտնում է, որ կաթողիկոսի «սահմանադրության» արմատավորման վստահելի անձը հանդիսացել է բեղմնավոր Վարդան վարդապետը: Դա տեղի է ունեցել 1246 թվականին: Երկրի հոգևոր և աշխարհիկ տերերը պարտավոր էին, ըստ սահմանված կարգի, փաստաթուղթը արտագրել տալ և իրենց համաձայնությունը կաթողիկոսական օրինակի վրա վավերացնել ստորագրությամբ: «Եւ առեալ զայս գիր,- այնուհետև վկայում է Կիրակոս պատմիչը,- հավանութեան իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթողիկոսն Կոնստանդին ի Կլայն Հռոմայական, և ինքն եկեալ ի ծորն Կայանոյ ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէն կոչէին, հանդեպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նման վարդապետական բանին»:

Ըստ դեպքերի ժամանակակից պատմիչի հաղորդման, պարզ է դառնում՝ ա) որ մինչև Կիլիկիա՝ հայոց կաթողիկոսի մոտ մեկնելը, հավանաբար մոնղոլների գլխավոր արշավանքից (1235թ.) առաջ*, XIII դարի մեծ ուսուցչապետ Վանական վարդապետի դպրոցում վարդապետական կոչում ստացած Վարդան Արևելցին Կայան ծորում հիմնել էր իր մենարանը՝ սուրբ Անդրեի անվամբ, բ) որ այն գտնվել է Կայան անառիկ բերդի հանդեպ, գ) որ այնտեղ գործել է վարդապետական դպրոց:

* Այսպես ասելու հիմք է տալիս Կիրակոս Գանձակեցու հաղորդումը (տե՛ս նրա «Հայոց պատմություն»-ը) Վանական վարդապետի դպրոցի մասին: 1229-ին, Խորասանի սուլթան Ջալալ ադ-Դինի անողորմ ասպատակությունից հետո, Վանականն իր հիմնած Խորանաշատի դպրոցը տեղափոխում է Տավուշ բերդի մոտ գտնվող, իր ձեռքով բարձր ժայռի վրա փորած քարայրը և այնտեղ շարունակում գիտամանկավարժական աշխատանքը: Համեմատաբար հանգիստ պայմաններում դպրոցը գործում է յոթ տարի: Հետագայում մոնղոլների ձեռքից անլուր տառապանքներ են կրում Վանականն ու իր աշակերտները, որոնցից Գանձակեցին, իրենից բացի, հիշատակում է Մարկոս, Սոսթենես և Պողոս քահանաներին: Անշուշտ, նա առիթով կտար նաև իր սիրելի հոգևոր եղբոր՝ Վարդանի անունը: Բայց նա այլևս չկար դպրոցում: Լինելով տարիքով մեծ՝ նա, հավանաբար վարդապետական կոչում ստանալով, իր ինքնուրույն գիտամանկավարժական բեղուն գործունեությունն էր սկսել Կայան գավառում՝ իր իսկ հիմնած սուրբ Անդրեի մենաստանում:

Իսկ, ահա մենաստանի ստույգ տեղադրությունը անհայտ է, չկա նաև նախկին Իջևանի շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցուցակում: Տեղադրությունը որոշակի չի դառնում նաև «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ով, ուր սուրբ Անդրեի մասին ասված է. «վանք (մենաստան) Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ձորափոր գավառում, Կայեն բերդի մոտ, Աթոռիկ գյուղից ոչ հեռու: Կառուցված է միջին մեծության որձաքարերով, առաստաղը՝ կոփածո քարերով: Այժմ կիսավեր է: Մինչև 1264թ. այստեղ է ապրել նշանավոր պատմիչ, աշխարհագիր Վարդան Արևելցին, որի գերեզմանը (խաչարձանով) գտնվում է նույն վանքի բակում»[112]: Մենարանի տեղը կարծես թե հեշտությամբ կարելի է ճշտել հենց Աթոռիկ գյուղի միջոցով: Իսկ դրա մասին նույն աշխատության մեջ (էջ 53) ասված է, որ գտնվում է Կայան բերդի դիմաց (ներկայիս՝ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի հանդամասում), Անդրեի վանքի մոտ և այժմ լքված է: Սա էլ անորոշ է, որովհետև Հաղարծին գյուղից դեպի հյուսիս-արևելք, Կայան բերդի մոտակայքում կան բազմաթիվ գյուղատեղեր, որոնցից մի քանիսը՝ մատուռով, խաչքարերով և գերեզմանաքարերով, իսկ վանական համալիր հիշեցնողը չունի խաչարձանով գերեզման, որը բառարանի հեղինակները վերագրել են Վարդան Արևելցուն:

Մեր կողմից 2000թ. ամռանն ուսումնասիրվել է խնդրո առարկա տարածքը, և հնավայրերից միայն մեկն է ներկայանում որպես վանական համալիր: Այն գտնվում է Կայան բերդի արևմտյան կողմի անտառում՝ բերդի և ներկայումս Վերին Դանաղռան կոչվող սարամասի բացատում տարածվող բավականին մեծ, հնագույն, ավերված բնակավայրի մոտ, երեք կողմից, խոր ձորերից վեր հառնող թերակղզու՝ Խաչի յալ սարի, կատարին ու լանջերին: Մոտենալ կարելի է արևմտյան կողմից: Տեղավայրի բնական դժվար մատչելիությունը, բնակավայրից հեռու լինելն աշխարհիկ կյանքից մեկուսացվածության, ուստի և բոլորանվեր ճգնելու և սաների կրթական գործերով զբաղվելու բացառիկ պայմաններ են ստեղծել ճգնակյացների եղբայրության համար:

Ձգալի տարածք է զբաղեցնում մենաստանի համալիրը: Ամենաբարձր կետում՝ ժայռեղեն հիմքի վրա, կառուցված են սուրբ Անդրեի ճգնարանի զույգ, զարդարանքից զուրկ մատուռները: Արտաքուստ 530 սմX410 սմ չափերով մեծ մատուռի հարավային պատին կից է

արտաքուստ 310 սմX190 սմ չափերով երկրորդ մատուռը (առաջինի կամարակապ առաստաղի բարձրությունը 360 սմ է, երկրորդինը՝ 220 սմ): Մեծ սրահի դուռը բացվում է հարավից, փոքրինը՝ արևմուտքից: Ներսից, մեծ մատուռի արևելյան լուսամուտի երկու կողմերում, կան ոչ մեծ չափսի անվիմագիր խաչքարեր, իսկ դրանց ներքևում՝ աբսիդի պատից դեպի սրահ, միակտոր քարի սեղանաձև ելուստ՝ ճգնավորին անհրաժեշտ բացված մատյանները տեղադրելու համար: Ցերեկը լույսը քարե «գրակալին» է ընկել արևելյան պատի լուսամուտից, որին օժանդակել է արևմտյան պատի լուսամուտից ներս թափանցող լույսի շողը: Իսկ գիշերային ընթերցումների ժամանակ քարե սեղանին դրված մագաղաթների էջերը լուսավորել են սրահի առաջնամասի կողային պատերին բացված երկուական խորշերում այրվող ճրագները: Արևմտյան պատի լուսամուտի ներքևում, դեպի աջ, սալ քարերով կերտված է հավասարասյուն, եռանկյունաձև մի այլ մեծ խորշ, ուր, անշուշտ, դրվելիս են եղել մենաստան՝ աղոթելու եկող բնակիչներին անհրաժեշտ գրքերն ու ծիսական պիտույքները: Հավանաբար մեկ հոգու աղոթելու համար նախատեսված փոքր մատուռը հարավային պատի մեջ ունի ճրագ դնելու խորշ: Գուցե հենց այստեղ է սիրել միայնության մեջ Բարձրյալի հետ հաղորդակցվել միջնադարի մեծ մտածողը:

Շինությունները կերտված են կոփածո բազալտով, իսկ ներքուստ սվաղված են եղել կիրավազով: Պատերի ամրության նպատակով, կառուցող վարպետը որմերի մեջ տեղադրել է 100-290 սմ երկարությամբ քարե հեծաններ, և դրանք փրկել են ութ դար առաջ կառուցված շինությունը: Առավելապես ավերված է մեծ մատուռի արևելյան պատի վերնամասը: Նախ խիստ քայքայված է կտուրի ծածկը, որին աճել են ծառեր: Սագաշեն մեծ մատուռի տանիքի հարավային եզրն ավարտվել է փոքր մատուռի միաթեք ծածկի վրա, 30-40 սմ բարձրությամբ, ինչը երևում է կից մատուռների տեսքի գծագրից: Շինության բակում կան տանիքից ընկած քարեր, նաև՝ անշուք գերեզմանաքարեր, իսկ խաչարձանով գերեզման, որի մասին խոսվեց վերը, չկա:

Մատուռներից ներքև՝ բլրի հյուսիսային, արևելյան և հարավային կողմերում, խիստ զառիկող լանջերը հատելու շնորհիվ, ստեղծվել են 4-6 մետր լայնությամբ դարավանդներ, որոնց վրա այժմ էլ պարզ «կարդացվում» են մենարանի բնակիչների շուրջ երեք տասնյակ կացարանների, Վարդան վարդապետի դպրոցի լսարան-

ների ու կենցաղային շինությունների հատակագծերի չափերը: Դրանցից մի քանիսի համար մի կողմի պատ է ծառայել դարավանդի ժայռամերձ, ուղղահայաց քարե հատվածը: Վանական համալիրը նաև ունեցել է հաստահեղույս բերդապարիսպ, որի հետքերն ավելի ակնհայտ են մատուռների արևմտյան կողմում, իսկ բերդապարսպից դուրս դարավանդված, այժմ անտառածածկ հողակտորները վկայում են, որ մենաստանի եղբայրությունը զբաղվել է հացահատիկի և այլ կուլտուրաների մշակությամբ: Իսկ խոտառատ լեռնաստանը հիանալի ասպարեզ է եղել անասնապահության համար: Ջուրը կավե խողովակներով հնարավոր է բերված լինի հնավայրի ձախակողմյան ձորով հոսող գետակի բարձրակետից կամ մենաստանի համայնքի սպասարկու անդամների ուժերով՝ «ողնաբարձ բեռամք»:

* * *

Հայտնի փաստ է, որ մոնղոլները Հայաստանին տիրելուց հետո տեղական իշխաններին կարգադրեցին վերականգնել պատերազմի հետևանքով անխնամ մնացած, ուստի ավերված ճանապարհները, որպեսզի իրենք հնարավորություն ունենան երթևեկել կառքերով: Ուրեմն նախորդ դարերում Հայաստանում զարգացած է եղել ճանապարհային ցանցը: Ուստի անհրաժեշտ ենք համարում՝ որպես շարադրանքի կարևոր բաղկացուցիչ, ըստ մեր տևական ուսումնասիրությունների, ներկայացնել Տավուշի մարզի միջնադարյան ճանապարհների նկարագրությունը և քարտեզը[113]:

IX դարավերջին Բագրատունիների թագավորության հաստատումով, երբ վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը, երկրում սկսվում է տնտեսական կյանքի բուռն վերելք, և զարգանում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ու տարանցիկ առևտուրը: «Առանձնապես մեծ ծավալ էր ստացել միջազգային քարավանային առևտուրը: Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, որոնք դուրս էին մնացել արաբաբյուզանդական երկարատև պայքարի ոլորտից, IX-XI դարերում դարձել էին Արևելքն Արևմուտքի հետ կապող կարևոր օղակներ: Առանձնապես բանուկ են դառնում Հայաստանի վրայով անցնող տարանցիկ ճանապարհները, որոնց կենտրո-

Ս. ԱՆԴՐԵ ՄԵՆԱՍՏԱՆԻ ՄԱՏՈՒՌՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻՇԸ (XIIIդ.)



ԿԻՑ ՄԱՏՈՒՌՆԵՐԻ ՏԵՍՔԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ (վերակազմություն)

ՆԸ և գլխավոր հանգույցը VIII-IX դարերում Դվինն էր»[114], իսկ X դարի երկրորդ կեսից՝ արագորեն զարգացող Անին:

Հայաստանով անցնող քարավանային ճանապարհները, նաև Դվինից Հրազդան և Աղստև գետի հովիտներով դեպի Տփխիս և Գանձակ գնացող ուղիները նկարագրել են մեծավաստակ Հակոբ Մանանդյանը[115] և Վարազդատ Հարությունյանը[116], սակայն՝ ընդհանուր գծերով, առանց մանրամասնելու: Խնդրո առարկա տարածաշրջանի և իրադարձություններով հարուստ ժամանակի մասին իր «Վահրամյանների իշխանությունը» շահեկան աշխատության մեջ պատմաբան Արտաշես Շահնազարյանը՝ վերլուծելով Զաքարյանների կրտսեր ճյուղի իշխանությունում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նաև անդրադարձել է այստեղով իրականացվող տարանցիկ առևտրին, որի գլխավոր զարկերակը Կուրի աջափնյակով անցնող Պարտավ-Տփխիս ճանապարհն էր: «Առևտրական այդ ուղին,- գրում է նա,- ոչ միայն Վահրամյանների համար եկամտի աղբյուր էր, այլև նրանց ֆեոդալական իշխանությունը կապում էր արտաքին աշխարհի հետ» և միաժամանակ ապրանքադրամական հարաբերությունների կարևոր խթանիչ էր: Այնուհանդերձ, նաև այս հեղինակը, ինչպես աշխատության շարադրանքում, այնպես էլ մատուցած քարտեզում, չի տվել Բագրատունիների և նրանց շառավիղ Կյուրիկյանների ու ապա նրանց հաջորդած Զաքարյանների ժամանակների՝ ներկայիս Տավուշի մարզի տարածքով անցնող ճանապարհների մանրամասն նկարագիրը: Դրանք քննարկված չեն նաև Ռաֆայել Մաթևոսյանի՝ Տաշիր-Զորագետի թագավորությանը նվիրված աշխատությունում: XIX դարավերջին երկրամասի նոր ճանապարհներին անդրադարձել և կարևոր տեղեկություններ է հայտնել Ալեքսանդր Երիցյանը, սակայն՝ առանց խորանալու մինչև ռուսական տիրապետության հաստատումը (1801թ.) եղած քարավանային ճանապարհների պատմության մեջ:

Պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին հայրենասերի հոգու վայելքով է նկարագրել հայոց պետականության հաստատման փաստը և Բագրատունյաց անդրանիկ թագավորի՝ Աշոտ Ա-ի (885-890թթ.), մեծագործության մանրամասները, երբ նա արքայավայել նպաստել է այն ամենին, ինչ արժանի էր «թագավորությանը և՛ թագավորության մեջ, և՛ թագավորության շուրջ»: Նա «նախ ամբողջությամբ իր ազդեցության տակ է գցում Գուգարքի խռովարար ժողովուրդներին և Ու-

տի գավառի ավազակային մարդկանց՝ նրանցից վանելով մարդադավ ավազակությունը, բոլորին դարձնում է օրինավոր ու հնազանդ և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ է կարգում»[117]: Երկիրը բարեկարգելու գործը շարունակում են Բագրատունի հաջորդ թագավորները: Նրանց ժամանակներում են կառուցվում կամ վերակառուցվում Կուրի դաշտավայրի կողմից հարձակվող թշնամիների առջև հայոց թագավորության հյուսիս-արևելյան ծորաբերանները փակող Գագ, Գավարզին, Մահկանաբերդ, Կայան, կայծոն, Տերունական, Տավուշ, Երգեվանք և Մածնաբերդ ամրոցները, որոնք, անշուշտ, ճանապարհներով կապված են եղել իրար հետ՝ որպես պաշտպանական նույն համակարգի մասնիկներ: Նորաստեղծ պետության սահմանները Տփխիսի և Գանձակի ամիրայությունների ոտնձգություններից զերծ պահելու նպատակով՝ պատմական Գուգարք նահանգի կենտրոնական, հյուսիսային և արևելյան կողմերում, որոնք արդեն միասնաբար կոչվում էին Տաշիր-Ձորագետ, 996-ին ստեղծվում է ռազմավարչական մարզ, որն իր հիմնադիր-կառավարիչ Գուրգենի՝ թագավոր Աշոտ Գ Բագրատունու կրտսեր որդու, անունով կոչվում է Կյուրիկյանների (Լոռու կամ Տաշիր-Ձորագետի) թագավորություն, որը գոյատևում է մինչև 1118 թվականը:

Սկզբում այս թագավորության նստավայրը Վրաց դաշտում գտնվող Շամաշուլդե բերդն էր, իսկ 1065-ից՝ Կյուրիկյան Դավիթ Անհողին թագավորի հիմնադրած Լոռե կամ Լոռի բերդաքաղաքը, որի մոտակայքում՝ Սանահինում, հետագայում Հաղբատում էր գտնվում Կյուրիկյան թագավորության հոգևոր կառավարչությունը՝ հայոց եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդարանը[118]: Ահա, աշխարհիկ և հոգևոր այս կենտրոններից թագավորության՝ մինչև Արցախի սահմանները տարածվող արևելյան գավառների հետ բազմազան կապերի իրականացման հիմնական մայրուղին է, մեր կարծիքով, մինչ այժմ անտեսված և չճշտված: Իսկ այդպիսին, որ անպայման պիտի լիներ՝ աներկբա է:

Նայելով քարտեզին՝ յուրաքանչյուր ոք կնկատի, որ թագավորանիստ Լոռի բերդից դեպի Կուր գետի աջափնյակում տարածվող երկրամասի կենտրոն ամենակարճ ուղին Լոռվա սարահարթից կարող էր անցնել ներկայիս Դսեղ-Աթան-Կիրանց գծով, միջնամասում հաղթահարելով Կյուրիկյան թագավորության երկու մասերը՝ Տաշիրն ու Ձորագետը, իրարից բաժանող Գուգարաց լեռնաշղթան: Եվ, իսկապես, եղել է նման մայրուղի: Լոռի բերդից սկզբնավորվող քարավանային ճանապարհը Դեբեդի կամուրջներից մեկով բարձրացել է Դսեղի սարավանդ, Մարց գետի ձորով թեքվել հյուսիս-արևելք, գնացել Աթան գյուղ և Գիլիկ սարի ստորոտի լեռնանցքով հատել Գուգարաց լեռնաշղթան և դուրս եկել Աղստևի վտակներ Պաղջուր և Կիրանց գետերի ակունքների շրջան (տե՛ս ներկայացված քարտեզը): Նաև սայլերի և կառքերի համար նախատեսված ճանապարհը գնացել է դեպի Կուրի դաշտավայր:

Ներկայիս Տավուշի մարզի Կիրանց և Ոսկեպար գյուղերի ամառանոցների Գառնասար հանդամասի ուղեհանգույցում գլխավոր ճանապարհից առանձնացել են մի շարք ճյուղեր: Կենտրոնականը մինչև Մեսրոպավան (նախկին Չայղոշան) իջել է երկու տեղով: Մեկը Գառնասարի արևելյան ծայրից անմիջապես մտել է Կիրանց գետի ձորը և համանուն վանքի մոտով, միշտ գետի արևահայաց ձախափնյակով հասել Մեսրոպավան (այս ճանապարհի սկզբնամասն այժմ փակված է անտառով): Մյուս ճյուղը Գառնասարից Պաղջրի (Աղբուղա) և Կիրանցի ջրբաժանը հանդիսացող լեռնաբազկի կատարներով գնացել է արևելյան ուղղությամբ և Մեծ սարի (Հարսնաքարի) մոտ թեքվել հյուսիս-արևելք, ու Դեղձնուտ վանքի մոտով՝ աջ կողմում թողնելով բարձր ժայռի կատարին թառած Մահկանաբերդը, նույնպես ձգվել դեպի Մեսրոպավան, Կիրանց ու Սամսոն գետակների միախառնման անկյունի հնագույն, քարե, կամարակապ կամրջով միացել Կիրանցի վանքի կողմից եկող ճյուղին:

Առաջին ճյուղը համեմատաբար կարճ է եղել, բայց՝ ոչ անվտանգ, որովհետև ապրիլ-հունիս ամիսներին հազվադեպ չեն և քարավանների համար վտանգավոր են եղել հանկարծահաս հեղեղները: Իսկ Դեղձնուտի վանքի մոտով անցնողը՝ մի փոքր երկար, բայց ավելի անվտանգ է եղել: Մեսրոպավանում նորից միատեղված ճանապարհը Կիրանց գետի արևահայաց ձախ ափով մտել է Մահկանաբերդի Արծրունիների ոստան, ապա Կանգարք գավառի (ուշ միջնադարերում Խերումյան տոհմի)[119] մելիքության կենտրոն Կունեն գյուղաքաղաք, և Ոսկեպար ու Կիրանց գետերի միախառնման անկյան քարե կամուրջով դուրս եկել Գագա դաշտ, նախ հատել Դվին-Տփխիս ճանապարհը, ապա այստեղ բարձրացող միայնակ Գավարզին (կամ Քավազին) ժայռ-ամրոցի արևելյան ստորոտով գնացել՝ միանալու Տփխիս-Գանձակ ճանապարհին: Ինչպես վկայում են փաստերը, Լո-

ռի բերդ-Աքան-Կիրանց-Գագա դաշտ կարևոր ճանապարհն իր նախնական նշանակությամբ բանուկ է եղել մինչև XX դարի առաջին տասնամյակները և հատվածաբար բանուկ է նաև այժմ: Եվ, հավանաբար, սա եղել է Մետաքսի մեծ ճանապարհի ճյուղերից մեկը:

1975 թվի ամռանը Կիրանց գյուղի 117-ամյա բնակչուհի Խանում Շահինյանը հեղինակին պատմել է. «Երբ Շահնանց տուն հարս եկա, նրանց մեծ նանը, ութսուն տարեկանն անց մի պառավ, դեռ ապրում էր: Դե՛, հիմա դու հաշվիր, թե որ թվին էր ծնվել: Նանն ասում էր, թե իր աղջկության ու նորահարսության տարիներին քարավան քարավանի ետևից, առևտրականները մեր Կիրանցի ճանապարհով Պարսկաստանի կողմից աբրեշումի ճոթ կտորներ էին տանում Տրապիզոն ու Ստամբոլ, իսկ ետեղից բերում էին «ֆրանգի» ապրանքներ: Առևտրին շատ են վնասել լեզգիները»: Ժողովրդի հիշողության այս տարրը պատմական հիմք ունի:

Հայտնի է, որ Պարսկաստանը XVIII դար մտավ որպես քայքայվող, թույլ երկիր: Վիճակից օգտվել ցանկացան հզոր հարևանները՝ ցարական Ռուսաստանն ու սուլթանական Թուրքիան: Օսմանացիները դեպի Պարսկաստան ռուսների առաջխաղացմանը պատասխանեցին Անդրկովկասի մեծ մասի գրավումով և ոտքի հանեցին դավանակից (սուննի) Դաղստանի լեռնականներին, որոնց չդադարող ասպատակություններն ավելի քան մեկ դար պատուհաս դարձան հյուսիս-արևելյան Հայաստանի բնակչության համար: Ներկայիս Տավուշի մարզի գյուղերը գրեթե հայաթափվեցին: Իսկ ամենամոտ թուրքական իշխանության՝ Ախալցխայի փաշայության, հետ իրենց կապը Դաղստանի լեռնականները պահպանել են վրաց թագավորության համար խոցելի այս կարճ ու հարմար ճանապարհով: Որպես անցած դժնդակ օրերի հիշողություններ՝ Կիրանցի ձորում մնացել են Լեզգու քար, Չերքեզի տափ, Լեզգու կածան, Չաչանի (չեչենի) գոմեր տեղանունները:

Մինչև 1980-ական թվականներ ապրող տարեցների վկայությամբ այս քարավանային ճանապարհը ռազմական նպատակով վերջին անգամ օգտագործվել է 1918-ի հունիսի առաջին օրերին, երբ Լոռի մտած թուրքական բանակը Գուգարաց սարերից երթով իջել է Կիրանցի ձորն ու անցել Ղազախ: Երկրամասում աշխարհաքաղաքական իրավիճակի փոխվելուց հետո, երբ XIX դարի սկզբին Անդրկովկասից վերջնականապես դուրս մղվեց Պարսկաստանը և նրա տեղը

գրավեց Ռուսաստանը, Գագա դաշտ-Կիրանց-Լոռվա սարահարթ քարավանային ճանապարհը կորցրեց իր վաղեմի նշանակությունը: Մինչև 1950 թվականը դրանից՝ որպես քոչի ճանապարհ, ավանդույթի ուժով օգտվում էին անասնապահ ադրբեջանցիները: Վերակառուցելու շնորհիվ միջնամասում ճանապարհը սկսել է ծառայել Աճարկուտի անտառատնտեսությանը, որից շարունակում են օգտվել մերձակա գյուղերի համայնքները: Այժմ էլ բեռնատար մեքենայով մի քանի ժամում կարելի է հասնել Աքան կամ Դսեղ:

Լոռի բերդ-Կիրանց-Գագա դաշտ քարավանային ճանապարհի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել Կիրանցի ձորում գրեթե անվթար մնացած Կուց աղբյուր-Թեղուտ հատվածով*: Ճանապարհը նախատեսված է եղել ոչ միայն հետևիոտների ու գրաստների, այլև սայլերի ու կառքերի համար: 2.5-3.5 մետր լայնությամբ այս հնագույն մայրուղին, աննշան բացառությամբ, անցել է ձորի արևահայաց ժայռեղեն լանջով, հարմարվելով ռելիեֆին՝ ոլոքներ տալով քարափների շուրթերին, կրկնելով ձորերի ու բարձունքների կորությունը, որովհետև հին ճանապարհաշինարարներին անհայտ են եղել պայթուցիկ նյութերն ու հզոր տեխնիկական միջոցները:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում որոշ հատվածներում մինչև 2.5 մետր բարձրությամբ առանց շաղախի («չոր շարվածք») քարե հենապատերը, որոնց շնորհիվ հարթեցվել, անվտանգ երթևեկելի են դարձել ձորափի մեծ թեքությունները: Իսկ ժամանակի ընթացքում աճած ծառերն ու թփերն այնպես են ամրացրել հենապատերը, որ ճանապարհի այս հատվածով 1930-1940-ականներին երթևեկել են անտառանյութ կրող բեռնատար ավտոմեքենաները: Քարավանային ուղու վրա կառուցվել են մի շարք միակամար կամուրջներ: Առաջինը Մեսրոպավանում է, երկրորդը՝ Կիրանց գյուղի Շոռ աղբյուրի ձորում, երրորդը Ոսկեպար գետի վրա՝ Մազամլի գյուղի մոտ, որը մնացել է Ջողազի

* Ճանապարհահատվածի փրկությանը նպաստել է բնության տարերքը: Ըստ Աճարկուտի բնակիչներ Պավլիկ Սիմոնյանի և Ավագ Ավետիքյանի հաղորդման, 1952-ի հունիսի 22-ին տեղացած հորդառատ անձրևի ժամանակ մերձակա ժայռից պոկված հսկա քարաբեկորը սահելով ընկել է ճիշտ ճանապարհի բանուկ մասի վրա, ընդմիշտ արգելակելով ծանր մեքենաների երթևեկը: Ուստի ճանապարհն էլ մնացել է որպես հայոց շինարարական մտքի անխաթար հուշարձան:

ջրամբարի տակ, և վերջինը՝ Գագա դաշտի հյուսիս-արևելյան կողմում, Կոթի գյուղից դեպի Ջողազ (կամ Ոսկեպար) գետ ծգվող ծորակի վրա:

Այն դարերում ընդունված կարգի համաձայն՝ ելնելով անվտանգության և հարմարության պահանջներից, այս ճանապարհի վրա, հետևակ մարդու քայլքի մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ պիտի կառուցվեին քարավանատներ կամ լինեին այլ ապաստարաններ: Իսկ այդպիսիք եղե՞լ են այստեղ: Այո՛, եղել են: Գանձակ-Տփխիս ճանապարհից դեպի Լոռի թեքվող ճյուղի սկզբում, Գավարգինից 4-5 կմ հյուսիս-արևելք, ըստ տարեցների հաղորդման, եղել է ավերված քարավանատուն: Հաջորդ իջևանատունը եղել է Մահկանաբերդի Արծրունիների ոստանում (Առաքելոց հնավայր) և այժմ էլ կանգուն է կիսավեր վիճակում: Այս նպատակին, անշուշտ, ծառայել է Կիրանցի վանքի պարսպապատ, ընդարձակ բակը: Մինչև Գուգարաց լեռնաշղթան հատելը, վերջին քարավանատունը կառուցված է եղել վերը հիշատակված Գառնասարի հարավ-արևմտյան կողմում՝ նորից գետակի արևահայաց ափին, ուր պարզորոշ նշմարվում են շինությունների ուղղանկյուն հիմքերը: Նաև կան անվիմագիր խաչքարեր և խաչեր կրող գերեզմանաքարեր: Այստեղից ուղևորները մեկ օրում հասել են Դսեղ, իսկ հաջորդ օրը՝ Լոռի բերդաքաղաք: Կուրի ափից մինչև Կյուրիկյանների ոստան շուրջ 120 կմ ճանապարհը հաղթահարվել է հինգ օրում:

Երկրամասում կենտրոնական դիրք գրավող այս քարավանային ճանապարհով Կյուրիկյանների ոստանը բազմաթիվ ճյուղերով կապված է եղել Տաշիր-Զորագետի թագավորության արևելյան գավառների հետ: Գառնասարում գլխավորից դեպի հյուսիս, արևելք և հարավ բացվում են ևս երեք կարևոր ճանապարհ: Մեկը ներկայիս Լոռվա մարզի Ահնիձոր գյուղի արևելյան կողմով (Գուգարաց լեռնաշղթայի արևահայաց լանջերով) հասնում է Բովաքարի (Հալաբի) լեռնաշղթայի հյուսիսային թամբոցին՝ գագաթի լեռնազանգվածը շրջանցելով հյուսիս-արևելյան կողմից, Հալաբ սարի արևելյան (արևահայաց) լանջերում հանգում Լոռվա մարզի Մարգահովիտ գյուղին, որից ոչ շատ հեռու պատմական Վերին Տաշիրն է (Չիչխան գետի հովիտ): Մարգահովտի մատույցներում մայրուղին ճյուղ է տալիս դեպի հարավ-արևելք և, հաղթահարելով Փամբակի լեռնաշղթան, մտնում Հրազդանի հովիտ, պատմական Վարաժնունիք: Գառ-

նասար-Մարգահովիտ ճանապարհից, Ահնիձորից արևելք, մի այլ ճանապարհ գնում է դեպի Սառնաջուր գետի աջափնյա վտակ Խաչաղբյուրի ձորը և, Կեչուտ սարամասից հաղթահարելով Իջևանի լեռնաշղթան, մտնում է Հաղարծին (Կայան գավառ) և միանում Դվին-Տփխիս քարավանային ճանապարհին, որի մասին կխոսվի հանգամանորեն: Գառնասար-Մարգահովիտ ճանապարհի միջնամասից, Հալաբ սարից հյուսիս-արևելք, Մենակ քարի (Այրի դաշ) լեռնանցքով* մի ուրիշ քարավանային ճանապարհ իջել է Դիլիջան ու նորից միացել Դվին-Տփխիս ճանապարհին:

Գառնասարից դեպի հյուսիս գնացող կարևոր ճանապարհը՝ Նոյեմբերյանի Կարմիրգեղ սարամասից թեքվելով ձախ, մտել է Կյուրիկյանների թագավորության հոգևոր կենտրոն Հաղբատի վանք, ապա Դեբեդի աջափնյակով առաջանալով դեպի Խրամ գետը՝ գնացել է դեպի Տփխիս: Իսկ Կարմիրգեղ հասած հիմնական ճանապարհը մտել է պատմական Կողբափոր գավառ, որտեղից բացվող ճյուղերով կապվել Վրաստանի, Կուրի աջափնյակի, Գագա դաշտի, Կիրանցի հովտի և Աղստև գետի ներքնագավառի հետ: Գառնասարից դեպի հարավ-արևելք ճյուղավորված ճանապարհը Պաղակն (Աղբուղա) վտակի ձախափնյակով իջել և Խաչաղբյուրի հետ միախառնման անկյունից անցել է Սառնաջրի աջափնյակ և, Իջևանի լեռնաշղթան հաղթահարելով Սպիտակ ժայռ (Աղ ղայա) գագաթի հյուսիս-արևելյան ստորոտի լեռնանցքում, ներկայիս Իջևան քաղաքի ամառանոցի մոտ նորից միացել Դվին-Տփխիս քարավանային ճանապարհին, մտել Կայան գավառ: Վերը հիշատակված Լոռի բերդ-Աթան-Կիրանց-Գագա դաշտ մայրուղու միջնամասում՝ Մեծ սարի արևմտյան ստորոտին, սկիզբ է առել մի ճանապարհ, որն, այնուհետև ճյուղավորվելով, Կարմրաքարի և Մթնասարի լեռնաշղթաների վրայով Աղստևի ձախափնյակում միացել է Դվին-Տփխիս մայրուղուն: Կիրանցի ձորով անցնող նշանակալի ճանապարհի միջնամասում, Առաքելոց գյուղաքաղաքից, նույնպես սկիզբ են առնում երկուսը: Մեկը, հատելով արևմտյան կողմում գտնվող Հացուտ հանդամասի բարձունքը, իջել է Ոսկեպարի ձորը և Ջորու կամրջով միացել Գագա

* Հենց այս լեռնանցքով 1918-ի մայիսի վերջին իր զորքն ու շուրջ քսան հազար գաղթականներին Դսեղից Մարցա ձորով Դիլիջան տեղափոխեց զորավար Անդրանիկը:

բերդին, իսկ այստեղից Գոմշավար հանդամասով՝ Գառնասար-Կողբափոր ճանապարհին: Առաքելոց գյուղաքաղաքից մի ճանապարհ էլ թեքվել է արևելք և դեռ պահպանվող Սրանոցի միակամար կամրջով անցել Կիրանց գետի աջափնյակ, ուր նշմարվում են մաքսատան հետքերը և գնացել դեպի Մակարավանք և միացել Կայանի ներքնագավառով անցնող ճանապարհներին: Աղստև հովտի ճանապարհների մասին կխոսվի ստորև:

Այժմ փորձենք նկարագրել Տավուշի մարզի արևելյան տարածաշրջանի (պատմական Տավուշ գավառ) ճանապարհները: Նախ հարկ է նշել, որ Կուրի աջափնյակից դեպի Միափորի լեռնաշղթան (Մուրղուզ սար) ճանապարհներ են ձգվել Հախում, Տավուշ և Խնձորուտ (Ախինջի) գետերի հովիտներով: Իսկ Գանձակից Տփխիս գնացող ճանապարհի ճյուղը Ասրիկ գետի հովտով թեքվել է ձախ, Խորանաշատի լեռնանցքում հատել Խնձորուտի լեռնաշղթան, անցել Ախինջի գետի ձախ ափը, Արծվաբերդի հին գյուղատեղից մտել Չորաթան, ապա Մովսես և Տավուշի գետի հովտից հաղթահարելով Կենաց լեռնաշղթան, իջել Հախումի ձորը, որի արևմտյան լանջերին են Նոր Վարագա, Շխմուրատի (Գետակիցք) վանքերը և Կյուրիկյանների Նոր բերդը: Նոր Վարագա վանքի մոտից հարմար ուղին հատելով Հախումի լեռնաշղթան, ներկայիս Այգեհովիտ գյուղից մի փոքր հեռու բարձրացող Սրվեղի վանքի մատույցներում միացել է Աղստևի աջափնյակով Կուրի հարթավայրից դեպի Կայանի վերնագավառ ձգվող ճանապարհին:

Սակայն վերադառնանք Խորանաշատ: Այստեղից քարավանային ճանապարհի մի ճյուղը թեքվել է ձախ, ներկայիս Այգեձոր գյուղի միջով, Երգեվանք և Մածնաբերդ ամրոցների ստորոտով, Խնձորուտի ձախափնյակի արևահայաց լանջով առաջացել դեպի Միափորի լեռնաշղթայի արևելյան ծայրամասի թամքոցին գտնվող լեռնանցք (Գետիկի), իջել Գետիկի հովիտ (Միափորի գավառ): Իրար մոտ գտնվող Մածնաբերդի և Երգեվանքի մատույցներից մի այլ ճանապարհ՝ հյուսիս-արևմտյան ուղղությամբ հատելով Տավուշի լեռնաշղթան, ներկայիս Արծվաբերդ-Վերին Կարմիրաղբյուր երթուղով իջել է Տավուշի ձոր, մտել համանուն բերդ: Այստեղից երկու ճանապարհ՝ հատելով Կենաց լեռնաշղթան, նույնպես մտել են Հախումի ձորը: Նավուրից ձորը մտած ճանապարհը դարձել է եռաճյուղ: Աջակողմյանը հաղթահարելով Հախումի լեռնաշղթան, մտել է

Աղստևի հովտում գտնվող Մորո ձորո վանք: Կենտրոնականը նույնպես, հատելով այդ լեռնաշղթան, Սխտորուտի լեռնանցքով միացել է Կայան գավառի արևելքում՝ ներկայիս Գանձաքար գյուղի տարածքում, գտնվող ճանապարհների հանգույցին: Նավուրից ձախ թեքվող ճանապարհը Հախումի ձորով գնացել է վեր և Քառասուն աղբյուրից արևմուտք, Միափոր (Մուրղուզ) գագաթի արևմտյան ստորոտի և Քամոտի լեռնաշղթայի կցանվածքի լեռնանցքով իջել Գետիկի հովտում (Միափորի ներքնագավառում) գտնվող ներկայիս Աղավնավանք գյուղ:

Մեծ Հայքի հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանությանը կոչված Գուգարքի բդեշխության (կամ զորաթևության) մեջ կարևոր դերակատարում է ունեցել Աղստև գետի միջնամասում տարածվող Չորափոր գավառը, որն իր ամրություններով Հյուսիսային Կովկասից և արևելքից արշավող ռազմաշունչ ցեղերի առջև հուսալիորեն փակել էր դեպի երկրի կենտրոն ձգվող կարևորագույն ուղիներից մեկը: Հակոբ Մանանդյանը, խնդրին վերաբերվող իր հայտնի աշխատության մեջ քննարկելով մ.թ.ա. 66-64 թվականներին հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքի շրջանածև ուղին Անդրկովկասում, գտնում է, որ նա իր բանակը Կոլխիդայից՝ Սև ծովի ափից, Ջավախքով հասցնելով Շիրակի դաշտ, այնուհետև շրջվել է հյուսիս-արևելք և ներկայիս Սպիտակ-Վանաձոր-Դիլիջան-Իջևան կարճ ու հարմար ճանապարհով Ղազախ քաղաքի մատույցներում հասել Կուր գետին, ապա հաղթահարելով այս մեծ ջրարգելը՝ արշավել Աղվանքի վրա[120]: Նաև հայտնի է, որ մ.թ. 450 թվի ամռանը հայոց մեծ սպարապետ Վարդան Մամիկոնյանը Աղստևի հովտով իր զորքերը շարժել է դեպի Խաղխաղի դաշտ, հաղթական ճակատամարտ տվել Պարսից բանակին ու նույն ճանապարհով վերադարձել մայրաքաղաք Արտաշատ: Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից հասկացվում է, որ այս ճանապարհից է իր մի քանի ռազմարշավների ժամանակ օգտվել Աշոտ Երկաթ թագավորը: Տարբեր դարերում այստեղով անցել են պարսիկները, արաբները, թուրք-սելջուկները, հյուսիս-արևելյան Հայաստանն օտարի լծից ազատագրող Զաքարյանների զորքերը, թաթար-մոնղոլները, հետագայում Արևելյան Հայաստանի ազատագրությանը մասնակցած ռուսները: Իսկ պատերազմների դադարների պահերին՝ առևտրական քարավանները: Սակայն խոսքը ո՞ր ճանապարհի մասին է: Մեր ուսումնասիրությամբ,

Աղստևի արևահայաց ծախափնյակում դրանք երեքն են, մեկը՝ հայտնի (ներկայիս՝ Իջևան-Երևան ասֆալտապատ մայրուղին), երկուսը՝ գրեթե անհայտ:

Արարատյան դաշտից Թիֆլիս գնացող քարավանային ճանապարհի մասին չափազանց ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի անմահ բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովը[121], որը 1819-ի հունվարի վերջին և փետրվարի առաջին օրերին դիվանագիտական առաքելությամբ մեկնում էր Պարսկաստան: Քսանհինգ հոգուց բաղկացած նրա խումբը շատ բեռնատար ձիերով և ուղեկիցներով Թիֆլիսից դուրս է եկել հունվարի 28-ին և նույն օրը երեկոյան հարթ տեղանքով հասել 42 վերստ հեռավորության վրա գտնվող Դեմուրչիզամ գյուղը՝ Գարդաբանում: Հաջորդ օրը քարավանը, Կարմիր կամուրջն անցնելով, Ինջա (Կողբ - Ռ.Ս.) գետի ափից թեքվել է աջ, հաղթահարել Ոսկեպարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ծայրամասին մոտ գտնվող Սուրբ Սարգսի լեռնանցքը: Ապա Կոթի գյուղից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շոռ աղբյուր հանդամասի փոստային կայանով, Գավարզին ժայռի ստորոտով, որին Գրիբոյեդովը Պեպիս է կոչում, հասել Պեպիս՝ ներկայիս Բերքաբեր գյուղ, և դադար առնել: Այս անցման երկարությունը 48 վերստ է: Գավարզին ժայռից մեկ կիլոմետր հարավ այս ուղին հատվել է Լոռի բերդ-Կիրանց-Գագա դաշտ ճանապարհի հետ: Հունվարի 30-ին օրը եղել է ցուրտ, սարերը՝ սառցակալած, ուստի Պեպիս-Քարվանսարա ճանապարհն անցել են մեծ դժվարությամբ: Այնուհետև նա գրում է.

«Մեզ խիստ վախեցնում են Դիլիջանի կիրճով. Քարվանսարայից մեկնեցինք Աղստաֆայի հոսանքով, նրա հոսանքին ընդառաջ, և առաջացանք մի կիրճով, որտեղ մեր կողքին կրկնվում էին կովկասյան վայրերը՝ անտառապատ ժայռերը, որոնց ստորոտին, նրանց միջով աղմկում է գետը, մերթ էլ բաժանվում է բարակ առվակների: Տարբերությունը միայն այն է, որ նախորդ կիրճերում վառոդով ու բրիչով պայքարել էին ճամփախափան ապառաժների դեմ, իսկ այստեղ մարդու ձեռքով ոչինչ չի հարմարեցված հանգիստ ընթանալու համար: Քարերի կույտերը ամեն քայլափոխի կարծես աճում են. ծառերի երկարած ճյուղերը դիպչում են աչքերիդ. ճանապարհը համարյա անանցանելի է. դուրս եկենք բաց տեղ, ուր ուժեղ քամի բարձրացավ մեզ ընդառաջ և հետո էլ չդադարեց փչել, երբ լեռներն արդեն նեղացան, և մենք մոտակայքում, անտառում, սարալանջի մոտ ընտ-

րեցինք գետակին հենված մի վայր հանգստանալու, գիշերելու համար»[122]:

Փետրվարի 1-ին Քարվանսարա գյուղից, ուր գիշերել էին, դեպի Դիլիջանի կիրճ (այդ ժամանակ Դիլիջան գյուղը դեռ չկար - Ռ.Ս.) քարավանն անցել է 42 վերստ ճանապարհ և դադար առել «բողասի» բացօթյակներում: Ըստ անցած ճանապարհի երկարության և «բողաս» տեղանվան, կարելի է պնդել, որ խումբը դադար է առել Աղստևի աջափնյա վտակ Հովջրի նեղուցի (թուրքերեն՝ «բողասի») նմանվող ձորում, ներկայիս Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան համալիրի ստորոտում, որտեղից հարավկողմյան լեռնաբազկի վրա է բարձրանում մի հնագույն ճանապարհ և որից այժմ օգտվում են Աղստևի հովտի գյուղերի սարվորները: Նկատենք, որ Դիլիջան-Սեմյոնովկա-Սևան-Հրազդան ճանապարհը կառուցվել է 1870-ական թվերի սկզբին: Գրիբոյեդովի խումբը, անշուշտ, գնացել է ոչ այս ճանապարհով: Մանավանդ, որ նա հայտնում է, թե՝ հաջորդ վաղ առավոտյան բարձրանալով սարի վրա, հանկարծ հայացքով փարվել է մարդկային ցեղը համաշխարհային ջրհեղեղից փրկած հրաշքին, անշարժացել սրբազան ավանդույթներից ծնված ապրումներից: Իրենց շարժման ուղղությամբ, հարավային հեռաստանի տիեզերական կապույտ գմբեթից կախված էր երկու փառահեղ զանգ: Ուղեգիրն այլևս մանրամասներ չի հաղորդում, թե որտեղից է տեսել Նոյյան հանգրվանը՝ Արարատ սարը:

Հաղթահարելով 36 վերստ ճանապարհ, քարավանը Դիլիջանի ձորից նույն օրը հասնում է մի այլ Քարվանսարա գյուղ, որը Հրազդան քաղաքի այսօրվա Վանատուր թաղամասն է: Իսկ մեկ օր անց դեսպանական առաքելությունը հասնում է Երևան, ըստ Գրիբոյեդովի՝ «հայկական մայրաքաղաք»*: Հրազդանի և Աղստևի ձորերի Քարվանսարա անունով գյուղերն ապացույցն են այն բանի, որ նրանք նախ՝ որպես քարավանատուն, գտնվել են քարավանային ճանապարհի վրա և ապա իրենց դերային անունը տվել ստեղծվող բնակավայրերին: Քարվանսարաների կապող կարևորագույն օղակը Դիլիջան-Հրազդան ուղիղ գծի վրա՝ Դդմաշեն գյուղի Մեյդան սարա-

* Հարկ է նշել, որ 1735 թվի ամռանը Ամենայն հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին Թիֆլիս ուղևորվելիս անցել է Երևան-Բջնի-Հաղարծին-Հաղբատ-Բորչալու երթուղով:

մասում, գտնվող քարավանատունն է, որը XII դարի երկրորդ կեսին կառուցել է Կայան գավառի տեր Հասան Կայենցին: Այստեղից մինչև Հրազդանի Քարվանսարա և Աղստևի ձորում գտնվող «բողաս» միևնույն հեռավորությունն է: Անամպ օրերին հենց այստեղից, ասես ափիդ մեջ, հառնում են Արարատները, որոնք չեն երևում Սևանի լեռնանցքը բարձրանալուց հետո:

Քանի որ Թիֆլիս-Ղազախ-Դիլիջան-Սևան մեծ ուղին (տեղացիների խոսվածքում՝ «ռսի ճամփեն») կառուցվել է գրեթե «մեր օրերում»՝ XIX դարի 2-րդ կեսին, ապա մեր հետաքրքրության առարկան մնում են Աղստևի ձորով ձգվող հնագույն ճանապարհները: Այս հովիտը ստորին մասում բավական ընդարձակ է, և գնալով վեր, սկսում է նեղանալ, իսկ Իջևան քաղաքի մատույցներում՝ որպես ծագարի հիմք, սեղմվում է գետի երկու ափերից մոտեցած Իջևանի (Կայենի) և Պայտապարի լեռնաշղթաների շնորհիվ: Նաև Գրիբոյեդովի ուղևորությունից առաջ միջնադարյան քարավանային ճանապարհը Թիֆլիսից Աղստևի հովիտ է մտել կարճ ու իր ժամանակի համար հարմար Կոտրած կամուրջ (հետագայում՝ Կարմիր կամուրջ)-Շոռ աղբյուր (Կոթի գյուղից արևելք)-Պիպիս (Ջողաս)-Աչաջուր երթուղով և Աղստևի բարձր, արևահայաց ձախափնյակով հասել Իջևան քաղաքի տեղում կառուցված քարավանատուն: Այստեղից սկսվել է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջորափոր, հետագա դարերում Կայան կոչված գավառը: Հետաքրքիր է, որ մինչ այժմ էլ այս քարավանային ճանապարհը տեղաբնակների մեջ հիշվում է «Ղափլա յոլի» անունով*:

Քարավանային ճանապարհը, Իջևան քաղաքից 3 կիլոմետր հարավ-արևմուտք, ուղիղ անկյան տակ թեքվել է աջ և Խոլարքեր հանդամասում երկճյուղվել: Աջակողմյանը, որ երթևեկելի է եղել նաև սայլերի համար, անտառամիջով դեպի վեր 8 կիլոմետր շարունակել է գետափին սկսած իր երթուղին՝ հասնելով Իջևանի լեռնաշղթայի

* Այս բառակապակցության երկրորդ մասը թաթարերեն նշանակում է ճանապարհ: Իսկ «ղափլա» բառի բացատրությունը գտնում ենք «Վրաց ժամանակագրություն» աշխատության մեջ (էջ 121): Երբ Հուլավու խանը Վրաց արքունիքում ատյան էր բացել Արղուն խանի դեմ բարձրացված խռովության կապակցությամբ, «Թագավորի և խանի զրույցի ժամանակ Դերբենդի ճամփապաշտպաններից մարդ եկավ, որոնք ղափուլ էին կոչվում»: Ուստի այս ուղին կոչվել է իրեն պաշտպանողների անունով՝ ղափուլիների ճանապարհ:

Սպիտակ ժայռ (Աղ ղայա) գագաթի մատույցներին, շրջվել ձախ և արևելյան կողմից Իջևանի (Կայենո) լեռնաշղթային զուգահեռ ընթացել հարավ-արևմուտք, ձախում 3-3.5 կիլոմետր հեռավորության վրա թողնելով Կայան բերդը, մի շարք հին բնակավայրեր, մտել Հաղարծնի վանք, որը կապված էր նաև Իջևանի լեռնաշղթայի թիկունքում գտնվող Խաչաղբյուրի հովտով ձգվող ճանապարհների հետ: Այստեղից դեպի ձախ մի ճյուղ իջել է Աղստևի ափ, միացել Գրիբոյեդովի անցած ճանապարհին: Հաղարծնի վանքից մյուս ճյուղը Դիլիջան քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում հառնող Չորաքար (Ղուռու դաշ) սարի լանջով, նախկինում Պողոսքիլիսա կոչված գյուղով բարձրացել է դեպի Հալաբ սարը՝ միանալով Գառնասարից եկող ճանապարհին, գնացել դեպի Մարգահովիտ-Վանածոր: Ըստ Հակոբ Մանանդյանի, հենց այս ճանապարհով են դեպի Կուրի դաշտավայր շարժվել Շիրակում իրենց երթուղին փոխած հռոմեացի Պոմպեոս զորավարի լեգեոնները (մ.թ.ա. 65թ.): Սակայն այս ճանապարհով (Իջևանից մինչև Դիլիջան) չի անցել Ալեքսանդր Գրիբոյեդովը, որովհետև միշտ նրա աչքի առաջ է եղել Աղստև գետը:

Իջևանի մատույցներում գտնվող Խոլարքեր հանդամասից սայլերի համար նախատեսված երկար, իսկ ծմռանը ձնահոսքերից փակվող ճանապարհից դեպի ձախ, Միրզոյանների աղբյուրի մոտից ծունկ է տալիս գրաստների ու մարդկանց համար հարմար, կարճ ճյուղը: Այստեղով մարդիկ և կենդանիները կարող են քայլել հիմնականում իրար հետևից՝ մեկ-մեկ (ինչաշարուկ), որովհետև որոշ հատվածներում ուղին փոխվում է նեղ արահետի: Ահա այս ճանապարհը Միրզոյանների աղբյուրից հարավ հառնող, թրածև գագաթ ունեցող, լեռնաբազկի հյուսիսային լանջով նախ գնում է ձախ՝ արևելք, ապա, կտրուկ աջ թեքվելով դեպի արևմուտք՝ մտնում Ղազումյանների հուշաղբյուրի ձորը: Այստեղից ևս հերթական լեռնաբազկի հյուսիսային լանջով քարավանային ճանապարհը, որը պատվել է խիտ անտառով, գնում է Աղստևի ձախափնյակին իշխող բարձր սեռի ծայրը, որն այժմ կոչվում է Տախտի քոլ: Այստեղ առաջին անգամ մեր ուշադրությանն է արժանացել շուրջ երկու հեկտարի վրա տարածվող հնավայրը, որն ունի մի քանի տասնյակ ավերակ շինություններ, իսկ սեռի ծայրին՝ եկեղեցի: Անշուշտ, սա եղել է բնակեցված միջանկյալ հոգետուն (=քարավանատուն): Այդպիսին ստեղծելու նախադրյալ են եղել գրաստների կերակրման համար արոտների առկայությունը և

խմելու ջրի մոտիկությունը: Երևի սա Իվանե Ջաքարյանի այն իջևանատեղն է, որի մասին հայտնում է պատմիչը՝ Նոր Գետիկի վանքին պատկանող գինին ոմն վրացի Բասիլայի կողմից բռնագրավելու փորձի կապակցությամբ[123]:

Տախտի քոլի հնավայրից դեպի հարավ, 200-250 մետր հեռավորության վրա, Լոգոցի զույգ (կից) ձորակներում բխում են աղբյուրներ, որոնց արանքում կա շինություն, մեկը՝ 2X2.5 մետր, մյուսը՝ ավելի փոքր չափերով: Առաջինը հավանաբար եղել է աղբյուրների պահակակետ, իսկ երկրորդում դրվելիս են եղել ջուր վերցնելու պարագաներ: Լոգոցի ձոր մտնելուց հետո, շուրջ 500 մետր երկարության վրա, ուղին դառնում է մեկ գրաստի քայլքի համար հարմար արահետ և ներկայիս «Աշոտ Երկաթ» ռեստորանի մերձակա ժայռի թիկունքով իջնում Ծառատի ձորը, և Կայան բերդի արևմտյան ստորոտով, ինչպես Գրիբոյեդովն է վկայում՝ հանգիստ ընթանալու համար մարդու ձեռքով չհարմարեցված, համարյա անանցանելի երթուղին ձգվել է ավելի հարավ: Ներկայիս Ներքին Դանաղռան հանդամասից քարավանային ճանապարհը, երևացող Աղստևի ափով, մտել է երկրաբանների ավան, ուր կա միջնադարյան ընդարձակ հնավայր, որի մատուռի մոտի քարափների արանքով իջել Հովք գյուղի հյուսիս-արևելյան կողմում գտնվող ձորը: Այս ճանապարհը, համանուն գյուղի արևելյան կողմից աղեղվելով, իջել է հարավկողմյան ձորը: Սակայն ճանապարհը չի գնացել գետափով, որովհետև դիմացի լեռնաբազկի երկու ծայրերը՝ բարձր պատի պես, մտել են հորդահոս գետի հունի մեջ: Ուստի ճանապարհը Հովքի հարավկողմյան ձորից կտրուկ թեքվել է արևմուտք, անցել լեռնաբազկի հարավային լանջը, որտեղից մի նոր ճյուղ՝ արմունկ տալով դեպի արևելք, ապա՝ հարավ-արևելք, գնացել է Միափորի ներքնագավառ և Նոր Գետիկի վանք:

Իսկ հիմնական ճանապարհը ներկայիս Հաղարծին և Թեղուտ գյուղերի տարածքով՝ աջից միանալով Հաղարծնի վանքից եկողին, Դիլիջանի ներքին կամրջով անցել է Աղստևի աջ ափը, ապա հանգել Փամբակի և Արեգունու լեռնաշղթաների հանդիպումից առաջացած «բողասին»: Իսկ աջ ափ անցում կատարելուց հետո ճյուղավորվելով՝ Դիլիջանի կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տան հարավային կողմով ձգվել է մի այլ կարևոր ճանապարհ, որն Արեգունու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջով շարունակվել է դեպի Գետիկի հովտի (Միափորի) վերնագավառ: Հավանաբար Թիֆլիսը գրավելուց հետո Պարսկաստան վերադառնալիս Գուգարաց զորավարն սարերից Հաղարծնով Աղստևի հովիտ մտած Շահ-Աբաս Առաջինը հենց այստեղով է գնացել դեպի Մուղանի դաշտ, Միափոր գյուղում հյուրընկալվել հովիվ Աթայից և նրան շնորհել մելիքի տիտղոս:

Աներկբա է, որ մեր նկարագրած Խոլարքեր-Ղազումյանների աղբյուր-Տախտի քոլ-Ծառատի ձոր-Հովք-Դիլիջանի «բողաս» դժվարին ճանապարհով է 1819-ի փետրվարի 1-ին անցել հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա. Ս. Գրիբոյեդովը: Սակայն նրա այն համոզմունքը, թե «այստեղ մարդու ձեռքով ոչինչ չի հարմարեցված հանգիստ ընթանալու համար», ճիշտ է մասնակիորեն: Կարելի է մտածել, որ երկարատև պատերազմների հետևանքով անխնամ է մնացած եղել ոչ միայն այս ճանապարհը: Իսկ XIX դարի սկզբին, այո, Աղստևի հովտում դեռևս վառոդով՝ պայթեցումներով, չէին պայքարել ճամփախափան ապառաժների դեմ, շատ ձորերի վրա չկային կամուրջներ, սակայն, որ գործել է արարիչ բրիչը՝ աներկբա է: Դրա ապացույցներն են ոչ միայն աղբյուրների ակունքներին կառուցված շինությունները, այլև ճանապարհի՝ հենապատեր ունեցող հատվածները, որոնք թեք ռելիեֆը հարթեցնելով՝ հարմար ու անվտանգ են դարձրել քարավանային «մայրուղին»: Վերջինս, ի հավելումն այդ բոլորի, անցել է հեղեղների վտանգից բացարձակապես զերծ բարձունքներով և բնական աղբյուրների ակունքների մոտակայքով: Այս ճանապարհով 1837-ի աշնանն անցել է ռուսաց Նիկոլայ Առաջին ցարը, և Կոթի գյուղում մինչև այժմ էլ տարեցները հիշում են իրենց նահապետների զրույցն այն մասին, որ ցարը Ջողասի կողմից եկել և Թիֆլիս է գնացել երեկոյան: Ուստի կոթիգյուղացիները՝ որպես բացառիկ հարգանքի նշան, Սուրբ Սարգսի լեռնանցքի վերելքին և վայրէջքին թագավորի ճանապարհը լուսավորել են հարյուրավոր ջահերով: Այս ուղու վրա կարևորվել է Պիպիս (Ջողաս) գյուղը, ուր կառուցվել է փոստակայան, արքունական դպրոց, խանութ և կամուրջ: Վերջինս ժողովուրդը կոչել է «ռսի խելի»: Սակայն 1868-1870 թվերին Թիֆլիս-Աղստև գետ (այն ժամանակ դեռ չկար Ղազախ քաղաքը)-Քարվանսարա խճուղային ճանապարհի կառուցման հետևանքով իսպառ անգործության ու մոռացումի մատնվեց Կարմիր կամուրջ-Շոռ աղբյուր-Ջողաս քարավանային ճանապարհը:

Առաջին անգամ 1827-ի դեկտեմբերին Երևան-Դիլիջան-Թիֆլիս

քարավանային ճանապարհի վիճակի և նրա փոխարեն նորը կառուցելու մասին միտքը հայտնել է գեներալ Ի. Պասկևիչը: Նա, վայելելով Պարսկաստանի դեմ տարած հաղթանակի բերկրանքը, արդեն Թուրքմենչայի պայմանագիրը ստորագրելուց հետո, հաջորդ տարվա մարտի 8-ին իր օրագրում նշում է. «Քանի որ վաղը վերջին զորքերը մեկնում են Թավրիզից, ապա ես այսօր դուրս եմ գալիս այստեղից: Պիտի Թիֆլիս գնամ Երևանի և Դիլիջանի հովտի միջով, որպեսզի տեսնեմ՝ ինչ վիճակում են գտնվում նոր ձեռք բերված երկրամասերը և անձամբ դիտեմ այդ հովիտը, որով տեղի է ունենում կարճ հաղորդակցությունը Թիֆլիսի և Երևանի հետ. հնարավո՞ր չէ արդյոք նրանով կառուցել մեծ ճանապարհ»*: Գեներալը վերադառնում է Երևան և մարտի 19-ին ճանապարհվում Թիֆլիս: Ամսի 21-ին նա հասնում է նորահաստատ Դիլիջան գյուղ: Եթե ճանապարհի առաջին 64 վերստը (Երևան-Էլար-Բջնի-Քարվանսարա (Հրազդանի Վանատուր թաղամաս)-Դդմաշեն-Քյոռօղլու թովլա (Արջանոցի լեռնաշղթայի վրա գտնվող ավերված քարավանատուն) գեներալը հարմար է գտնում կառքերի շարժման համար, ապա հետագա ճանապարհը, կտրուկ վերելք-վայրէջքների պատճառով, համարում է չափազանց դժվարանցանելի: Վերջինս, անշուշտ, Արջանոցի լեռնաշղթայի քարավանատնից կտրուկ Ձկնագետի խորածորն իջնող և զառիթափ լանջով Փամբակի լեռնաշղթայի կատար բարձրացող, ապա նորից կտրուկ անկումով ներկայիս Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան արևելյան, անտառապատ լանջով Հովջուր գետակի ափ իջնող իսկապես դժվարին ճանապարհահատվածն է, ուր պայթեցումներով սայլերի շարժման համար հարմար ճանապարհ կառուցելու նպատակով, անհրաժեշտ էր մեծածավալ աշխատանքներ կատարել: Գեներալ Պասկևիչի մտահաղացումը չիրականացված է մնում գրեթե քառասուն տարի: 1860-ական թվերի երկրորդ կեսին սկսվում է Թիֆլիս-Ղազախ-Դիլիջան-Սևան-Հրազդան-Երևան խճուղային ճանապարհի** շինարարությունը: Դրանով Հայաստանը ստանում է իր դարին վայել հաղորդակցության միջոց:

* Присоединение Восточной Армении к России (сборник документов), том 2, Ереван, 1978, ст. 470.

** Դիլիջանից դրա մեկ ճյուղը ձգվում է Վանաձոր, ապա՝ Գյումրի:

Ինչպես վերն ասվեց, Կյուրիկյանների մայրաքաղաքը ճանապարհների ցանցով կապված է եղել նաև իր արևելյան գավառների հետ, որոնցից կարևորը, մեր կարծիքով, հանդիսացել է Աղստևի աջափնյակով գնացողը: Դվին-Տփխիս քարավանային ճանապարհից, Հովք գյուղի արևելյան կողմում, բացվել է մի հարմար ուղի, որն անցնելով Աղստևի աջ ափը, քարածխի հանքի սարի ստորոտով աստիճանաբար բարձրացել է Պայտապարի լեռնաշղթայի սեռի վրա, ձգվել մինչև Կուր գետի հարթավայրը: Կայծոն բերդի մոտ սրան միացել է գետի ձախ քարափին թառած Կայան բերդից եկող ճանապարհը, որը նախ հատել է «Գրիբոյեդովյան» ուղին և ապա հաղթահարել Աղստև գետի հոսանքը: Կայծոն բերդի արևելյան կողմում գտնվող ուղեհանգույցից քարավանային ճանապարհը մտել է մի շարք գյուղատեղեր, միջնամասում շրջվել լեռնաշղթայի արևելահայաց լանջ և ներկայիս Գանձաքար գյուղի տարածքում միացել ճանապարհների մի նոր հանգույցի: Ուրթիջուր գետի ձորով մեկը գնացել է դեպի Իջևան քաղաքի տեղում եղած քարավանատուն՝ Դվին-Տփխիս ճանապարհի վրա: Գանձաքարից դեպի արևելք բացվող ուղին Սխտորուտի լեռնանցքով գնացել է Տավուշ գավառ: Իսկ կենտրոնականը Գանձաքար-Մորո ձորո վանք-Խաչքառակ-Դիտավան-Այգեհովիտ (Սրվեղի վանք)-Վազաշեն երթուղով իջել է Կուրի դաշտավայր: Ինչպես երևում է՝ Սրվեղի մատույցներում եղել է մի այլ կարևոր ուղեհանգույց, ուր խաչվել են Տավուշ բերդի կողմից եկող և Գանձաքար-Կուրի դաշտավայր ձգվող ճանապարհները: Այս խաչմերուկից տավուշյան ճանապարհը գնացել է հյուսիս, հատել Աղստև և նրա օժանդակ Ոսկեպար (նաև Ջողաս) գետերը, նախ միացել Լոռի բերդ-Գագա դաշտ, ապա՝ Դվին-Տփխիս ճանապարհներին: Տավուշի գավառ-Կուրի դաշտ ճանապարհը հորդահոս Աղստև գետը հաղթահարել է քարե կամրջով, որի ձախ ափից ելնող կամարի մի մասը դեռ պահպանվում է Կայանավան գյուղի մատույցներում: Կամրջի հարևանությամբ ուշ միջնադարերում կառուցված է եղել կլոր, աշտարակավոր պահակակետ:

* * *

«Մոնղոլական տիրապետության ծանրությունը կայանում էր այս շրջանում, գլխավորապես, նրանում, որ Հայաստանը՝ մասնակցելով մոնղոլների հեռավոր և մշտական արշավանքներին, կորցնում էր շարունակ ժողովրդի աշխատունակ առողջ մասը և հետզհետե ուժասպառ ու արյունաքամ էր լինում: Որ այս զինապարտությունը մի կատարյալ արհավիրք էր երկրի համար՝ այդ պարզ երևում է հայ աղբյուրների վկայությունից»[124]: Հպատակ այլազգիները, նաև հայերը, ճակատամարտերի առաջին գծում մոնղոլների համար վահանի դեր էին կատարում: Այդ կենդանի պատնեշն էր իր վրա առնում հակառակորդի զինուժի մահացու հարվածները: Հայտնի է, որ 1260 թվին Եգիպտոսի սուլթանի դեմ Պաղեստինի Թաբորական դաշտում տեղի ունեցած ճակատամարտում մոնղոլ զորավարի հետ կոտորվեցին կռվող հայերն ու վրացիները:

Իսկ գրավված երկրամասերի ավերումն ու մարդաթափումը բխում էր մոնղոլների վարած քաղաքական նպատակներից: Նրանց անընդհատ ռազմավար էր հարկավոր և ընդարձակ արոտավայրեր՝ իրենց բազմաքանակ, քոչվորական անասնապահական տնտեսության համար, որ ինչպես պատմիչն է վկայում, նրանք ռազմարշավի էին եկել «ժողովուրդով ու բանակով, իրենց կանանցով, որդիներով ու վրաններով»: Ուստի կարող էին հետ չնայել, չմտածել արագ տունդարձի, այնտեղ մնացած հարազատների ու հայրենական սրբությունների մասին: Սրանք իրենց նախորդ քոչվորներից՝ սելջուկյան թուրքերից, տարբերվում էին ոչ թե դաժանությամբ, դա նույնն էր, այլ կազմակերպվածությամբ ու հետևողականությամբ, խաղաղ բնակչության զանգվածային կոտորածով, ամբողջ երկրամասերի ամայացումով: Սահմռկեցուցիչ տեսարաններ են նկարագրել չինացի, պարսիկ, հայ, արաբ, վրացի և ռուս հեղինակները:

Մոնղոլներն իրենց նպատակին հասնելու համար կարևոր տեղ էին տալիս հակառակորդի հոգեբանական ճնշմանը՝ հարձակումից առաջ գրավվելիք երկրամասերի բնակչության շրջանում լուրեր տարածելով իրենց անպարտելիության, ընդդիմացողների նկատմամբ կիրառվելիք դաժանությունների, անողորմ պատիժների մասին: Իսկ

վատ լուրը թռչունից էլ արագ է թռչում՝ խուճապի մատնելով խաղաղ մարդկանց: Հայտնի է ինքնապաշտպանության դիմած հնդկական նիշպուր քաղաքի ճակատագիրը: «Հրաման էր եղել, որպեսզի քաղաքն այնպես ավերեն, որ այնտեղ կարելի լինի վարուցանք անել, և որպեսզի շուն ու կատու էլ կենդանի չթողնեն»: Սրահարվեց 1 740 000 մարդ: Չինգիս խանի դուստր Թաղաջար խաթունն իր աղխով քաղաք եկավ և ովքեր որ դեռ կենդանի էին մնացել, բոլորին սպանեցին, բացի չորս հարյուր արհեստավորներից, որոնց տարան Թուրքեստան[125]:

Ռուս պատմաբան Ի. Պետրուշևսկին XIII-XVI դարերի Իրանում հողագործությանը և ագրարային հարաբերություններին նվիրված իր հայտնի աշխատությունում* փաստերով ցույց է տվել, որ նշված ժամանակաշրջանում ամայացել են Առաջավոր Ասիայի այդ զարգացած տերության շատ երկրամասեր ու գավառներ՝ վերածվելով ընդարձակ արոտավայրերի, որովհետև մոնղոլներին ընդդիմացողներին ոչնչացնում էին ընտանիքներով՝ լինեին հասարակ շինական, գյուղապետ կամ իշխան: ***«Ինչպես խավարով պատած էր ամբողջ երկիրը,- վկայում է իրադարձությունների հայ ականատեսը,- և մարդիկ ավելի գիշերն էին սիրում, քան ցերեկը: Երկիրը թափուր դարձավ իր բնակիչներից, իսկ նրա վրա օտար որդիներ էին շրջում: Ինչք և ունեցվածք հափշտակեցին, իսկ նրանց ագահությունը երբեք չհագեցավ»***[126] (ընդգծումը մերն է - Ռ.Ս.): Սակայն Կիրակոս պատմիչի ասածը վերաբերում է մոնղոլական արշավանքի առաջին փուլին, երբ դեռ չէր դրսևորվել կրոնական դաժան անհանդուրժողականությունը և երկրամասի ու քաղաքների կառավարիչները, ազնվական իշխանները կարող էին իրենց կյանքն ու պաշտոնը փրկել հպատակությամբ, խնամիությամբ ու կաշառքով: Անգամ հնարավոր էր ինչ-որ չափով զարգացնել ազգային մշակույթը:

Վիճակը սկսեց էապես վատանալ 1254 թվականից հետո, երբ մոնղոլական կայսրության գահակալ Գույուկ խանի հրամանով Անդրկովկասում անցկացվեց աշխարհագիր՝ հարկահանության գործը կարգավորելու համար: Հայկական աղբյուրները վկայում են այդ

* И. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране, Москва-Ленинград, 1968.

գործընթացի հետ ուղեկցվող անասելի դաժանություններն ու չարաշահումները*: Մարդահամարը կատարվեց ըստ աշխատունակ տղամարդկանց թվաքանակի: Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ հարկադրվեցին 10 տարեկանից բարձր տարիք ունեցողները, բոլորը՝ թագավոր, գավառապետ իշխան, շինական, ձկնորս, առևտրական, թե արհեստավոր: Սակայն այս աշխարհագրով մոնղոլները նաև հնարավորություն ստացան իրենց զորքերը համալրել անհրաժեշտ քանակի տեղացի նորակոչիկ զինվորներով: Բայց նրանք հարկապահանջությամբ, «ուտելով ու խմելով չէին գոհանում, այլ պահանջում էին ձիեր, թանկագին հագուստներ, քանի որ չափազանց ձիասեր էին: Այդ պատճառով ամբողջ երկրից ձին կտրվեց»: Արշավանքի սկզբից հպատակություն հայտնած Վրաց թագավոր Դավիթը ծանր հարկապահանջությունից այնքան էր նեղված, որ ապստամբեց մոնղոլների դեմ և, թողնելով գահանիստ Տփխիսը, փախավ Սվանեթիա: «Նրա հետ փախան նաև գավառների մեծամեծ իշխաններ, որոնք նեղվել ու տառապել էին, ծախել ու գրավ էին դրել քաղաքներ և գավառներ, բայց չէին կարողացել կշտացնել անկուշտներին, որ նման էին ագահ տզրուկների»[127]:

Հարկահանների գլխավորներ Արղուն խանը և Բուղան իսկական հոգեառ հրեշտակներ էին, որոնք, ընկնելով պարսիկ և արաբ մոլեռանդ մուսուլմանների ազդեցության տակ, տմարդի էին վարվում քրիստոնյաների հետ: Նրանք Բուղային լարեցին Խաչենի տեր բարեպաշտ Ջալալ իշխանի դեմ, որին բազմազան պատիժների ենթարկելով չգոհացան, քանդել տվեցին նրա Խոխանաբերդը, Ծիրանաքարը, Դադը և այլ ամրոցներ: «Եվ այնպես հատակեց,- վկայում է ժամանակագիրը,- որ մինչև իսկ հետքերը չէին երևում, թե բնավ չի եղել»: Աղբյուրներից մեկն էլ հայտնում է, որ Հայաստանը գրավելուց հետո մոնղոլներն ընդհանրապես սկսել էին քանդել երկրի ամրությունները, գլխավորապես՝ անառիկ համարվող բերդերը: «Անառիկ բերդերի ոչնչացումը նրանք խիստ կարևոր էին համարում, որպեսզի

* Մաղաքիա աբեղան բանն այսպես է ներկայացնում. «Առնուին այնուհետև զաշխարհն ի գլխաթուոյ մարդկան, քանզի որ գրեալ լինէր ի դաւթարն , և այսպէս այլ աւերեցին զաշխարհն Արևելից, զի մի փոքր գեղն Ծ մարդ համարէին կամ Լ. ի ժե տարեկանէն ի վերն զամենն համար էին մինչ Կ տարեկանն, և ամէն գլխոյ որ համուրէն Կ սպիտակ առնուին»:

տևականորեն իշխանները չկարողանան ամրանալ և իրենց դեմ ապստամբել»[128]: Եվ ռազմարշավների առաջին փուլում հավանաբար մոնղոլները հասան իրենց նպատակին, որովհետև XIII դարի երկրորդ կեսին այլևս չէին հիշատակվում Տավուշի մարզի նշանավոր Կայան, Կայծոն, Գագ, Խալինջաքար, Մահկանաբերդ, Նոր բերդ, Տավուշ, Երգեվանք, Մածնաբերդ ամրոցները, որոնց տերերն արդեն հանդես էին գալիս մոնղոլներին ենթական տեղական կառավարչների դերում և՝ որպես հսկա կայսրության սովորական հպատակներ, մուծում ծանր հարկեր ու մասնակցում նրանց ձեռնարկած նորանոր արշավանքներին և արյունահեղ ճակատամարտերին՝ զոհվելով վասն անհարազատ գործի:

Հյուսիս-արևելյան Հայաստանն իր ազգային բովանդակությունից սկսեց զրկվել մոնղոլական կենտրոնական կառավարչության թուլացումից հետո՝ իշխանների և խաների միջև խավալված խռովությունների և արյունահեղ երկպառակությունների բովում, երբ հաղթող կողմը մահվան էր մատնում ոչ միայն պարտվող մոնղոլին, այլև նրա ճամբարում հայտնված այլազգիներին, որոնց հողերի վրա բնակեցնում էին ռազմարշավներին ակտիվորեն մասնակցած բեկերին՝ իրենց ցեղակիցներով: Այս ձևով մոնղոլներին միացած խաշնարած թուրքերը՝ գալով իրենց հեռավոր հայրենիքից, հանդիպեցին ավելի վաղ արևմուտք շարժված իրենց ցեղակից սելջուկ թուրքերին, հետագայում խառնվեցին Թուրքեստանից գաղթած թուրքմենների հետ, տեր դարձան տեղաբնակների հայրենիքին՝ երբեմնի ծաղկուն երկրամասերը դարձնելով արոտավայրեր:

Հայերն ավելի արագ սկսեցին դուրս մղվել իրենց բնօրրաններից, երբ Արղուն խանի որդի Թուգուդարը (1282-1284), որին կոչում էին նաև Ահմադ, ընդունեց մահմեդականություն և շարունակեց արաբների ժամանակներից քրիստոնյաների նկատմամբ կիրառվող հալածանքի ու բռնի դավանափոխության քաղաքականությունը: Վիճակն ավելի անտանելի դարձավ Ուլջեյտեյ իշխանի կառավարման տարիներին (1304-1316), երբ վերականգնվեց այլադավաններից գանձվող «ջիզայե» հարկը: «Անկարելի է խոսք գտնել ու պատմել հեծյալների պատճառած աղետն ու տագնապը,- ասված է մի հիշատակարանում:- Եվ ո՞վ կարող է պատմել այն անօրենությունները, որ նրանք արին ու գործեցին: Նրանք գերեցին բազմաթիվ գավառներ, ավերեցին ու կործանեցին. նրանք հափշտակեցին ամբողջ բերքը և ինչքը

ու կողոպտեցին բոլոր քրիստոնյաներին: ...դեռ երեկ մարդիկ տան տեր էին և ամեն ինչ լիառատ ունեին, իսկ այսօր սրտաբեկված են, տխրած ու նստած են մերկ մոխրի վրա. որովհետև երկիրը ամեն բարիքներով այնքան լիքն էր և հանկարծակի այնպես արին, որ շները սատկում էին սովից»: XIV դարի սկզբին ուժեղացավ հայերի արտագաղթը: «Եղև փախուստ ամենայն գաւառին, նաև քաղաքին միահամուռ... Եւ ամենայն ոք փախաւ և չուեցին յերկիր աւտար»: Այսպես հայաթափվեցին կամ գրեթե հայաթափվեցին Տավուշի մարզի տարածքում գտնված երբեմնի ծաղկուն ու շեն գավառները, ուստի նրանց վրա ևս «օտար որդիներ էին շրջում»: Շուրջ երկուսուկես դար մոռացումի ծանր վարագույրն իջավ երկրամասի վրա, և այդ ժամանակներից հիշատակություններ չկան նրա բնիկ տերերի մասին:

Մոնղոլական հսկա պետության հոգեվարքին Փոքր Ասիա թերակղզում իր չարաբաստիկ լինելիության անդրանիկ քայլերն էր անում օսմանյան թուրքերի աշխարհակալությունը: XIV դարավերջին նույնպես արյունալի իրադարձությունների թատերաբեմ դարձան Առաջավոր Ասիան և Հայաստանը: Թաթար-մոնղոլական չաղաթայ ցեղի կաղ առաջնորդ Թեմուրը (Լենկ Թեմուր), որ օժտված էր ռազմական կազմակերպչի տաղանդով, Միջին Ասիայում վերականգնեց Չինգիզ խանի տղա Չաղատայի ստեղծած ուլուսը (կուսակալություն) և 1380-ական թվականներին ձեռնարկած, անողորմ դաժանությամբ ուղեկցվող ռազմարշավների շնորհիվ աստիճանաբար իրեն ենթարկեց Պարսկաստանը, Ատրպատականը, Հայաստանն ու Վրաստանը: Սա բերած արհավիրքներով գերազանցեց իր նախորդներին, և դրանք սարսափելի գույներով են ներկայացրել ականատես հեղինակները: Նրանք վկայում են, որ կաղ հրեշն ամենուր ընդդիմացողներին ճնշելուց հետո կոտորում էր անխնա, նրանց գլուխներից բուրգեր էր կերտում կամ գերիներին ողջ-ողջ դնել էր տալիս շարվող պատերի մեջ: Լենկթեմուրյան բարբարոսության պակասը լրացրին ռազմարշավներին հաջորդած սովն ու մահտարաժամը:

Իսկ Թեմուրի մահից հետո սկսվեց նրա ստեղծած լայնածավալ տերության քայքայումը: Գլուխ բարձրացրին իրենց պաշտած սև և սպիտակ ոչխարների անունով կոչվող կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը, որոնք երկար ժամանակ տիրեցին Հայաստանին: Սրանց և Լենկ Թեմուրի հաջորդների միջև տեղի ունեցած ընդհարումների պատմությունից ոչինչ հայտնի չէ Տավուշի

մարզի մասին, հավանաբար այն պատճառով՝ նկատել է Հակոբ Մանանդյանը, որ Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները ևս ամայացած էին և ազգաբնակչությունը նրանց մեջ սաստիկ նվազել էր[129]: Ժամանակին այդ նկատել էին նաև օտար նվաճողները: Հետաքրքիր է, որ բացը լրացնելու, հարկատու հպատակներ ունենալու նպատակով կարա-կոյունլուների առաջնորդ Կարա Յուսուֆի որդիների՝ Սքանդարի և Ջհանշահի, ժամանակ հարավային Հայաստանից հայերի մի զանգված ստիպմամբ վերաբնակեցվեց հայաթափված Արարատյան և Սյունյաց նահանգներում: Իսկ 1437 թվականին Սքանդարը երկիրը սաստկորեն ասպատակող Թեմուրի որդի Շահռուխից ազատեց 6000 հայ ընտանիք, հասցրեց վրաց կողմերը, որի Ալեքսանդր Ա թագավորը նրանց բնակվելու տեղ տվեց Լոռիում[130]: Հավանաբար այս վերաբնակիչների մի մասն էլ դարձան Զաքարյանների ու Արծրունիների ժամանակներում նշանավոր Կայան, Տավուշ և Մահկանաբերդ գավառներում հայոց կյանքի վերականգնողները և նպաստեցին բնօրրանում դեռ մնացած փոքրաթիվ հայերի հառնումին՝ անթեղված կրակի մոխիրների միջից:

Այսպես բնականից անմատչելի Գավարգին (=Գավազան) ժայռ-ամրոցին ապավինելով՝ ապրում և անգամ հալածական քրիստոնյաներին կյանքի նեցուկ էին դառնում նախորդ դարերում փոքրաթիվ փրկվածների հետնորդները: 1436 թվականին «Գանձարան» կազմած Հովհաննես գրիչն իր հիշատակարանում հայտնում է Գանձակից Տփխիս իրենց ճանապարհորդության մանրամասները.

> ***«Եկաք մինչև Աղստև, հանդիպեցաւ Ջաղաթին իլղարն բազում հեծեալ, և թալանեցին զմեզ ու զամէն քրիստովնեայքն, և մերկացուցին, որ քան զոտից ամաև այլ իր չթողին, այլ ծմերան աւուրք և ցուրտ: Այլ եկաք ի Գաւազանին բերթն, քրիստովնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւն»***[131] («Եկանք մինչև Աղստև (գետի մասին է խոսքը – Ռ,Ս,), հանդիպեց Ջաղաթայի բազմաքանակ սրընթաց հեծելազորը. և թալանեցին մեզ և բոլոր քրիստոնյաներին, և մերկացրին ձմռան ցուրտ օրով, այլ իր չթողեցին, անգամ՝ ոտնամանը: Եկանք Գավազան բերդը, քրիստոնյաները մոտեցան մեզ և ծածկեցին մեր մերկությունը»):

XV դարի վերջին ստեղծվեց համաիրանական պետականության ավանդույթներով առաջնորդվող կըզլբաշների (նաև ղըզլբաշներ, հայերեն՝ կարմրագլուխներ, իրենց գլխին կրած կարմիր փաթթոցի պատճառով) նոր տերությունը, որը շուտով պիտի բախվեր իր արևմտյան հզոր հարևանին՝ Թուրքիային, և նրա հետ բաժաներ Հայաստանը: Ինչպես դիպուկ նկատել է մեծավաստակ Աշոտ Հովհաննիսյանը, «մեկուկես դարի ընթացքում պարբերաբար կրկնվող բախումների ընթացքում Առաջավոր Ասիայի պատմության անիվը թավալվում էր հայ ժողովրդի մեջքով» և դրանք իրենց բերած հարվածներով ու ավերումներով նվազ դաժան չէին, քան սելջուկների ու մոնղոլների արհավիրքները: Տավուշի մարզն այդ ժամանակներից մտել է պարսից Թահմազ շահի ստեղծած Գանջայի (Ղարաբաղի) բեկլարբեկության մեջ, որն իր 1548 և 1557 թվականների հրովարտակներով էջմիածնում վերահաստատված Ամենայն հայոց կաթողիկոսությանը վերադարձրեց ժամանակի ընթացքում Աղվանից կաթողիկոսության կողմից խլված Ջագամի, Աղստաֆայի (=Աղստևի) և Լոռվա վիճակները:

1583-ին օսմանյան սուլթան Մուրադի հրամանով Ֆահրատ փաշան գրավում է հյուսիս-արևելյան Հայաստանը և կառուցում քսանհինգ բերդ, որոնցից մեկը հավանաբար Ոսկեպար գյուղից արևմուտք, համանուն գետի ձախ ափին մինչև այժմ կանգուն ամրոցն է: Առաքել Դավրիժեցին հաղորդում է, թե 1588-ին այդ Ֆահրատ զորավարը նորից է հրաման ստանում խոնդակարից՝ տիրել Գանձակին, այնտեղից հեռացնել կարմրագլուխներին (պարսիկներին) և բերդ կառուցել, որն իրականացվում է հաջողությամբ: XVI դարի վերջին Անդրկովկասի և Ատրպատականի փաստացի տերը թուրքերն էին: Սա չէր կարող հանդուրժել պարսից նոր, հզոր տիրակալ Շահ Աբասը (1580-1629), որը թուրքերից նախ ազատագրեց Թավրիզը, ապա նրանց դուրս մղեց Նախիջևանից և Երևանից: 1606-ի գարնանը Շահ Աբասը գրավեց Գանձակը, կոտորեց օսմանցիներին և շարժվեց Թիֆլիսի վրա: Նա «հասնելով Աղստև գավառը*,- հայտնում է պատմիչը,- բանակ զարկեց Ինջասու կոչված ձորում, ջրի ափին»[132]:

* Հայկական իշխանությունների վերացումից հետո Տավուշի մարզի կենտրոնական և արևմտյան հատվածները զբաղեցրած վարչական միավորը հայերեն կոչվել է Աղստև, թուրքերեն՝ Աղստաֆա, ավելի ուշ՝ Ղազախ:

Իսկ Ինջան Կողբ գետն է, որի ստորին հոսանքի շրջանով անցնում էր Գանձակ-Թիֆլիս քարավանային ճանապարհը:

Ծավալվող թուրք-պարսկական պատերազմները ուղեկցվում էին կրոնական վայրի անհանդուրժողականությամբ: Բանն այն է, որ սուննի դավանանքին հետևող թուրքերը Մուհամեդի ճշմարիտ հավատից շեղված էին համարում շիա դավանանքի հետևորդ պարսիկներին, վերջիններն նույն կերպ՝ թուրքերին: Եվ երկու հզոր ուժերը հակառակորդին «ճշմարիտ հավատի» բերելու համար մահացու բախվում էին իրար հետ: Սակայն նշանակություն չուներ, թե նրանցից ով էր հաղթում կամ պարտվում: Երկու դեպքում էլ անասելի հարվածներ էին ստանում քրիստոնյաները: Այդ հուժկու հակամարտությունից առավելապես տուժում էին ազգային, աշխարհիկ, նշանակալի իշխանությունից զրկված հայ ժողովուրդն ու գահազուրկ Հայաստանը, որովհետև հակառակորդի ճնշման տակ նահանջող կողմը, հարձակվողներին վնասելու համար, ամայացնում ու մարդաթափ էր անում հայոց գավառները: Պատմությունից քաջածանոթ է «չարիք մտորելու մեջ հանճարեղ» Շահ Աբասի կամքով իրականացված հայոց գաղթի ողջ ահավորությունը: «Եվ պարսից զորքերը,- հայտնում է պատմիչը,- որտեղից որ ժողովրդին դուրս էին քշում՝ գյուղերից, թե քաղաքներից, բոլոր շենները, տները, բնակավայրերը անխնա այրելով՝ հրկիզում էին: Հրկիզում էին նաև խոտի, հարդի, ցորենի, գարու և այլ պիտույքների համբարանոցները, ամեն ինչ այրելով՝ ոչնչացնում էին: Այսպես այրելով՝ դատարկեցին երկիրը օսմանցի զորքերի համար, որպեսզի որևէ պահիկ չմնա և նրանք վտանգավոր կացության մեջ լինեն: Նաև տեղահանված ժողովուրդը, այդ տեսնելով, հուսահատ լինի և ետ չդառնա»[133]:

Այս դարերի արյունալի անցքերի մասին արժանահավատ հիշատակություններ են թողել նաև վրացի, պարսիկ և թուրք պատմագիրները: Վերջինները բանաստեղծական վառ գույներով, անզուսպ հրճվանքով են նկարագրում սուլթանների ու վեզիրների անմիջական ղեկավարությամբ ենիչերական հորդաների կատարած գազանությունները քրիստոնյաների և, մասնավորապես, ստեղծարար հայ ժողովրդի նկատմամբ: «Թուրք պատմագիրներն իրենց սոցիալ-քաղաքական դիրքով, իրենց դասակարգային ու հասարակական պատկանելիությամբ և կրոնական ֆանատիզմի հետևանքով անընդունակ էին հասկանալու և իրենց երկում արտահայտելու հայ ժողովրդի ող-

բերգական վիճակը: Նրանք այդ բոլորը համարել են բնական, իրերի ու դեպքերի անհրաժեշտ արդյունք, հանուն Իսլամի հաղթանակի»[134]: Օրինակ, թուրքական բանակի կատարած անասելի բարբարոսությունները թուրք պատմիչ Փեչեվին նկարագրում է քնարական լեզվով, գովաբանում օսմանյան բանակի զորավարների ու ենիչերների անասնական, սանձարձակ կրքերի դրսևորումը պարտված երկրամասերի քրիստոնյա խաղաղ բնակչության նկատմամբ: Այդ հեղինակը նաև հպարտանում է, որ Նախիջևանի դաշտում, ճանապարհին, 4-5 օրվա տարածության վրա գտնվող բոլոր գյուղերն ու ավանները թուրքերն այնպես ավերեցին, քանդեցին, քարը քարի վրա չթողեցին, որ շինության ու կենդանության հետք չմնաց: Այդ բարբարոսները քանիցս անցել են նաև Հայաստանի հյուսիս-արևելյան գավառներով, որի բնիկ բնակիչների նկատմամբ երբեմն կրոնական հանդուրժողականություն և վարչական բարեմտություն էին ցուցաբերում պարսիկները:

Տավուշի մարզի ժողովրդագրական նկարագիրը հօգուտ եկվորների սկսեց փոխվել XVI դարի կեսերին, երբ պարսից Շահ-Թահմազն իր տերության թիկունքն ազատության ձգտող հայերից ու վրացիներից ապահովելու նպատակով մինչ այդ Սվազի (Սեբաստիա) շրջանից Պարսկաստանի Շիրազ նահանգ տեղափոխված թուրքալեզու խաշնարած ցեղերին բնակեցրեց Գարդմանում, Տավուշի, Աղստևի և Դեբեդի հովիտներում: Նրանցից մեծաքանակն ու զորեղը ղազախ ցեղն էր, որը բնակություն հաստատեց Աղստև, Հախում, Կողբ գետերի հովիտներում՝ իր տնտեսածևին համապատասխան Կուրի ափերին ունենալով ձմեռնարոտ հարթավայրեր, Գուգարաց սարերում՝ ամառնարոտ փարթամ մարգագետիններ: Այս ղազախներն, իրենց հերթին, բաժանվում էին երկու ցեղի՝ չոբանքյարա (ունակ, կարող հովիվ) և ղարափափախ (սև փափախ)[135] անունով, որոնցից երկրորդը հետագայում բնակություն հաստատեց Գետիկի հովտում, և ժողովուրդն էլ նրանց ոչ թե թուրք, թաթար կամ ղազախ էր անվանում, այլ՝ ղարափափախ:

Բազմաքանակ թաթարական ղազախ ցեղի անունով Աղստևի, Ոսկեպարի և Կողբի գետահովիտներն ընդգրկող տարածքները սկսեցին կոչվել Ղազախի, իսկ Հախումի, Տավուշի, Ախինջիի և Ասրիկի գետահովիտների ամբողջությունը, շամշադիլ կամ շամշադին ցեղի անունով՝ Շամշադինի սուլթանություններ: Սակայն սրանք նման վերամբարձ հորջորջումով միայն գավառի, իսկ դրանց «սուլթանները» միայն գավառապետի նշանակություն ունեին: Սրանց տիրապետության տակ էին բնիկ հայ բնակիչները և հայկական հողերը, որոնք Պարսկաստանի թուլացումից հետո անցան վրաց թագավորությանը: Ռուսական կայսրությանը Վրաստանի միացումից հետո՝ 1819 թվականին, վերացվեցին նոր իշխանություններին շատ գլխացավանք պատճառած Բորչալուի, Փամբակի, Ղազախի և Շամշադինի սուլթանությունները՝ վերանվանվելով թաթարական տեղամասեր (դիստանցիա): Եվ «սրանք թաթարական անունը ստացան այն պատճառով, որ դեռևս վրացական թագավորների ժամանակ այս շրջանների կառավարումը հանձնված էր թաթարական ցեղապետերին, որոնք դրա դիմաց պարտավոր էին զինվորական ծառայություն մատուցել վրացական արքունիքին»[136]:

XVII դարի սկզբին ծավալված թուրք-պարսկական կռիվներին հաջորդեց սոսկալի սովը: Չէ՞ որ հողը մշակող չուներ: Հիշատակություններից մեկը վկայում է, որ էրզրումում մարդու միս և յուղ էին ծախում: «Եւ ապայ յետ այնորիկ ցրուեցաւ ազգս Հայոց յերեսաց սովուն»՝ դեպի Պարսկաստան, Միջագետք, Հյուսիսային Կովկաս ու ավելի հեռավոր երկրներ, ուստի «երկիրն այլազգեաց եղեն Հայոց գերեզման»: XVI դարի ավարտին և հատկապես XVII դարի ընթացքում Տավուշի մարզում տեղի ունեցած իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել մի շարք հոգևորականների ու բանիբուն մշակութային գործիչների ստեղծագործություններում, որոնք եղել են «ի դուռն Սուրբ Բարձրահամբաւ Սուրբ Խորանաշատում և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, Ս. Վանական վարդապետիս»: Նրանց շնորհիվ հայտնի են դառնում Տավուշի մարզի արևելյան կողմում կյանք շարունակող Թովուզ, Բերդ, Լղարակ, Պապաջան, Ղարամուրադ, Ղեղան հայկական գյուղերը, ժամանակաշրջանի կարևոր դեպքերի մանրամասները, դրանց մասնակից մարդկանց անունները:

Դավիթ եպիսկոպոս Գեղամեցին և Հովասափ երեցը Ղարամուրադ գյուղում 1610 թվականին կազմել են Հայսմավուրք՝ «ի դառն և վշտահար ժամանակից, որ գրով ոչ կարեմք արկանել զեղեալ չարիսն ու գալոցն Աստուած գիտէ, որ ոչ գոյ խաղաղութիւն մեջ երկու թագաւորաց՝ աւդամնուլին և ղզլբաշին (օսմանցու և պարսիկի - Ռ.Ս.)»: Դավիթ Գեղամեցին նաև բանաստեղծելու շնորհք է ունեցել և իր եղերական պատումը դարձրել է բանաստեղծություն.

«Դարձեալ պատմեմք և այլ չարիս,
Որ եղև այս ժամանակին,
Հազար հիսուն և հինգ (1606) թուիս,
Սաստկացաւ սով վերայ երկրիս:
Բազումք սովու մեռանէին,
Շատ ոք զորդիսըն ծախեին
Ոմանք մարդոյ միս ուտէին,
Եւ այլք դրռնէ դուռ շրջէին»[137]:

Տայուշ (Տավուշ) գավառի Լղարակ գյուղում 1620-ին Հակոբ երեցը ընդօրինակել է Ավետարան և ընթերցողին աղերսագին խնդրել ներողամիտ լինել ոչ կատարյալ արվեստի համար, որովհետև շտապել է չափազանց, ժամանակ չի ունեցել: Շահ-Աբասը նոր էր անցել երկրամասով, ավերել, ավարել, մարդկանց կոտորել, կենդանի մնացածներին գերի տարել իր աշխարհը: Ավելի բեղմնավոր է եղել Թովուզ գյուղացի Եսայի գրիչը: Նա Խորանաշատի հովանու ներքո գրել է Սաղմոսարան, Ժամագիրք, Մաշտոց, Աստվածաշունչ և Ժողովածու, որոնք հասել են մեր օրերը: Եսային վկայում է, որ 1645 թվականին «պարսիկ ավազակների անօրինության չարիքը բռնացավ մեզ վրա, ստրկության լծի տակ ծեծելով ու տանջելով՝ մեզ ստիպում էին դառնալ իրենց մոլոր հավատին»[138]: Ավետիս քահանան իր ծննդավայր Պապաջան գյուղում ընդօրինակել է Ավետարան և Շարականոց: Այս հեղինակներն իրենց հիշատակարաններում նաև հայտնում են, որ Գանձակը, Տավուշը և Գարդմանը կառավարել է Մուրթուզա խանը, որը հարգված էր նաև քրիստոնյաների կողմից՝ արդարամտության ու կրոնական հանդուրժողականության համար:

Հավանաբար ավելի անողորմ ավերածությունների, կոտորածի ու բռնագաղթի է ենթարկվել Տավուշի մարզի կենտրոնական մասը՝ Աղստևի հովիտը, որովհետև այստեղ XII-XIII դարերում ծաղկող հոգևոր-մշակութային կենտրոններ Մակարա, Մորո ձորո, Նոր Գետիկի, Մաթոսա և Ջուխտակ վանքերի մասին չկան հիշատակություններ: Լինելիության կայծեր կարելի է համարել Հաղարծնում 1624-ին Հովհաննես գրչի ծաղկած և կազմած Աստվածաշունչը: Նաև՝ Աստվածատուր քահանայի կողմից 1627-ին գերությունից ավետարան ազատելու փաստը, որի հիշատակարանում ասված է. «Ես չեմ արժան և մեղապարտ Աստվածատուր քանայս տեսի զսուրբ Աւետարանս ի ձեռն գերութեան Տաճկաց, հառաչման և փափակ սրտիւ առի զսուրբ Աւետարանս յիշատակ հոգւոց իմոյ, ծնաւղացն, և մերձաւորացն իմոյ»[139]: Մահկանաբերդի Արծրունիների կամ Զաքարյանների հետնորդների շնորհիվ հայոց կյանքը սկսել է աշխուժանալ պատմական Կայան գավառում*: Այդ են վկայում Հաղարծնի վանքային համալիրում XVII դարում արված շինարարական արձանագրությունները: Առաջինը գտնվում է ս. Ստեփանոս եկեղեցու արտաքուստ հարավային պատին.

«Ի թվին Հայոց ՌԾ ին (1651), ի թագաւորութեան պարսից Շահ Սուլէմանին որդոյ Փոքր Շահ-Ապասին և տէրութեան .....ս իշխանին եւ մէլիքութեան պարոն Շահնազարին և ի հայրապետութեան Յակոբ Ջուղաեցոյ եւ առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Յակոբ եպիսկոպոսի, Պետրոս աշակերտի, նորին: Ողորմութեամբն Աստուծոյ, մեք՝ յետինքս կրօնից թիփլիզեցի Հոգիջանի որդիքս՝ պարոն Պրապս, Մխիթարս, Սափարս եւ Ջալիս եւ որդիքն մեր՝ Գասպարն, Հոգիջանն, Բաղտասարն եւ Մէլքոնն զմեր հոգոյ արդեամքն նորոգեցաք զՍուրբ Ստեփանոսս, որ հոյժ խախտեալ էր, վասն փրկութեանհոգոց մերոց և երկարութեան կենաց որդոց մերոց: Եւ միաբանք սորայ հաստատեցին Յայտնութեան և Յարութեան պատարագին զմեզ յիշատակել: Եւ մեք խոստացաք, որ զկանթեղ սորին միշտ ի վառ պահել, որդեց որդի: Կատարողքն օրհնին Աստուծոյ: Ամեն»[140]:

Հաջորդ արձանագրությունն արված է ս. Աստվածածին եկեղեցու արտաքուստ արևմտյան պատին, հարավային անկյան մոտ.

«Ես՝ թիփլիզեցի Չիթաղի որդոյ Թաղոյ որդի մահտեսի Սուլխանս եւ եղբայրն իմ Ջալն եւ մեր որդիքն՝ Ստեփանոսն եւ Թաղին, եւ Փահրապարեցի Խոջայգուլին եւ իւր որդին Յարութիւն մեծաւ յուսով առ Քրիստոս վերստին նորոգեցաք զԽաղարծուոյ զեկեղեցիսն՝ զՍուրբ Աստուածածնին եւ սրբոյն Գրիգորին, յիշատակ մեզ եւ համօրէն ննջեցելոց մերոց: Ի թվին Հայոց ՌՃԼ (1681)»[141]:

Առաջին արձանագրությունը հետաքրքիր է նրանով, որ Շահ-Աբաս Մեծից հետո հայերը վերականգնել են սկսել իրենց իշ-

* ՌԾԹ (1710) թվին վանեցիները ջահ են նվիրել Գոշավանքին, որը մինչ այդ ունեցել է միաբանություն և լեզգիների արշավանքների հետևանքով ամրացել XVIII դարի կեսերին, երբ Գոշավանքը հիշվում է ոչ որպես բնակավայր, այլ հանդամաս:

խանությունները, դժբախտաբար ընթեռնելի չէ իշխանի անունը, իսկ ահա այս տարածաշրջանի մելիքի անունը նշված է հստակորեն, որը պատկանել է Խերումյան մելիքական տոհմին, երկար ժամանակ անհայտ է եղել հայ պատմագիտությանը և առաջին անգամ արժանացել է մեր ուշադրությանը[142]:

Հայտնի է, որ XV դարում հզորացող թուրքական պետության առաջն առնելու և իր տերությունն ամրապնդելու ու հզորացնելու համար կարակոյունլուների առաջնորդ Ջհանշահը Հայաստանում կազմակերպեց մելիքություններ: Դրանցում Ջհանշահը կառավարիչներ՝ մելիքներ, նշանակեց նախորդ դարերից պահպանված հայկական իշխանական տների շառավիղներից, որոնք մինչ այդ դարձել էին սոսկ «տանուտերեր»: Կարա-կոյունլիների ծամանակ նրանք ներքին հնարավորություններ ստացան իրենց մելիքությունների սահմաններում գործելու համար: Պարսկաստանում հաղթած Սեֆեվյանները, XVI դարում գրավելով Արևելյան Հայաստանը, սկզբում մեծ հարված հասցրին հայկական մելիքություններին: Սակայն շուտով ըմբռնելով նրանց կարևորությունը հայերով բնակեցված գավառների նպատակամետ կառավարման գործում՝ Սեֆեվյան շահերը հայկական մի շարք մանր իշխանությունների՝ մելիքությունների, վերադարձին կորցրած ներքին ինքնավարությունը, որը դարձավ ժառանգական և նախորդի փոխարեն նոր մելիքի «գահակալումը» հաստատվում էր շահի կողմից: Անշուշտ, նման մի իշխանական տոհմի հետնորդներ էին Խերումյան մելիքները:

Մեզանում հայտնի հնավայր է Կիրանցի ձորում գտնվող, VII դարից հիշատակվող Կունեն (Հին Կունեն) գյուղը, որն այժմ գտնվում է Տավուշի մարզի Աճարկուտ գյուղի վարչական տարածքում՝ գետի երկու ափերին, մի քանի հեկտարի վրա: Այստեղ կան XII-XIII դարերին վերագրվող բնակելի տների, իշխանական պալատի ավերակներ, անխափան գործող հնամյա ջրանցք, կամուրջ, խաչքարեր և ճոխ զարդանախշեր ունեցող տապանաքարերով գերեզմանոցներ: Բնակավայրի միջով անցնելիս է եղել Տփխիս-Գագա դաշտ (նաև՝ Գանձակ-Գագա դաշտ)-Առաքելոց գյուղաքաղաք-Դեղձնուտի վանք-Աթան-Դսեղ-Լոռի բերդ քարավանային ճանապարհը*:

* Տե՛ս «Տավուշի մարզի միջնադարյան քարավանային ճանապարհներ» քարտեզը:

Կիրանց (Քարահան) գետի աջ ափին և դրա ու Մելքանց տան ձորի ջուր (կամ Տամարք) կոչվող վտակի միախառնման սուր անկյունում, որը բնական բարձր թերակղզի է, նաև այժմ վթարային վիճակում կանգուն է ոչ մեծ չափերի, թաղակապ, անմշակ քարերով կերտված, ծեփաթափ պատերով սուրբ Աստվածածին եկեղեցին: Շինության հարավային մուտքի ճակատակալ սալքարին այսօր էլ հինգ տողի մեջ հստակորեն ընթերցվում է հետևյալ արձանագրությունը:

« Ի թվին ՌՃԻ (1675): Ես՝ Մելիք Շահնազարս, որդի Մելիք Ասլամազին, ասկէն Խէրումէ, ամուսին իմ Խանզատէն շինեցինք Սուրբ Աստուածածին»: Սալաքարի ձախակողմյան լեզվակին գրված է. «Ձեռամբ Յակոբի»: Վերջինս, անշուշտ, եկեղեցին կառուցող վարպետն է:

Այս արձանագրությունը լավ հայտնի է եղել 1914 թվականին լույս տեսած «Նյութեր հայ մելիքության մասին» աշխատության հեղինակ Կարապետ եպիսկոպոս Շահնազարյանին: Նա տեղյակ է եղել նաև Հաղարծնի սուրբ Ստեփանոս եկեղեցու հարավային արտաքին պատին 1651-ին թիֆլիսեցի Հոգիջանի որդիների թողած արձանագրությանը, որի մեջ ի շարս այլ աշխարհիկ տերերի հիշատակված է Մելիք Շահնազարի անունը: Կարապետ եպիսկոպոսը հատուկ ուշադրություն է դարձրել Հին Կունենի և Հաղարծնի եկեղեցիներում առկա, միմյանց ժամանակակից (1651 և 1675 թվականներ) Մելիք Շահնազարներին: Սխալ օգտագործելով տարեթվերը, նա միաժամանակ նույնացրել է երկու Շահնազարյաններին՝ բայց նրանց համարելով Գեղարքունիքի Մազրա գյուղից սերված մելիքական տոհմի շառավիղ:

Նախորդ հետազոտողին զբաղեցրած խնդիրը չի վրիպել նաև «Դիվան հայ վիմագրության» (պրակ VI) կազմողների՝ Ս. Ավագյանի և Հռ. Ջանփոլադյանի ուշադրությունից: Նրանք Հին Կունենի Աստվածածին եկեղեցու արձանագրության կապակցությամբ ասում են. «Բնագրում հիշատակված շինարար ամուսինների՝ Մելիք Ասլամազի որդի Մելիք Շահնազարի և իր կին Խանզատեի, մասին դժվար է որևէ հավաստի կարծիք հայտնել նախ այն պատճառով, որ այլ աղբյուրներից նրանք հայտնի չեն և ապա այդ շրջաններում Մելիք-Շահնազարյանների գոյությունն անհավանական է, քանի որ աղբյուրներից հայտնի է, որ նրանց ժառանգական տիրույթները գտնվում են Գեղարքունիքում... Սակայն Մելիք Շահնազարի մելիքության հիշատակությունները Կունենի ձորից ոչ այնքան հեռու ընկած Հաղարծնի

վանքի համարյա նույն տարիների արձանագրության մեջ գալիս է ամրապնդելու այն վարկածը, որ Մելիք-Շահնազարյանների սերունդներից մեկը տիրույթներ է ունեցել նաև Գեղարքունիքի սահմաններից դուրս, Սևանա լճի հյուսիս-արևմուտքում ընկած այս գավառներում... Մենք միանգամայն անվիճելի ենք համարում Մելիք Շահնազարի իշխանությունն այստեղ՝ հետագային թողնելով այն հարցը, թե Մելիք Շահնազարը ինչ ազգակցական կապեր է ունեցել Մազրայի համանուն մելիքական գերդաստանի հետ»[143]: Վստահորեն ասենք՝ ոչ մի կապ, իսկ անունները պարզապես պատահական զուգադիպություններ են, և ահա թե՝ ինչու:

Բանն այն է, որ Կունենի Աստվածածին եկեղեցու ոչ խրթին արձանագրությունը թերի է ընթռնվել, իսկ հնավայրը վատ է ուսումնասիրվել և այդ պատճառով անուշադրության են մատնվել կարևոր մանրամասներ: Չէ՞ որ բարեգործ գավառապետը չի ասում, թե ինքը Մելիք-Շահնազարյանն է, այդ մելիքական գերդաստանից, այլ Մելիք Ասլամազի որդին է, այն էլ՝ «***ասկէն խէրումէ***»: Իսկ մինչև այժմ էլ Տավուշի և Լոռվա մարզերի գյուղերում մեկի որ ընտանիքից, տոհմից կամ գերդաստանից լինելն իմանալու համար հարցնում են՝ ո՞ր ազգից ես: Որովհետև վերջինս փոխարինող հոմանիշ բառ է նախորդ բառին: Նաև՝ «ազգ» բառի փոխարեն այս կողմերի խոսակցական լեզվում օգտագործվում է բարբառային «ասկ» ձևը, ինչպես եղել է Մելիք Շահնազարի օրերում: Բացի այդ, Կիրանցի ձորի գավառապետը նաև հայտնում է, որ ինքը ***Խէրումենց*** տոհմից է: Ուրեմն՝ Մելիք-Շահնազարյան չէ, ինչը պնդել են վերը նշված ուսումնասիրողները, այլ՝ ԽԵՐՈՒՄՅԱՆ: Եվ նրա տիրապետության տակ է եղել նաև Աղստևի հովտի միջնամասը՝ միջնադարերի Կայան գավառը: Այդ է հուշում Հաղարծնի վանքի արձանագրությունում Խերումյան Մելիք Շահնազարի անվան հիշատակումը: Ստացվում է, որ Խերումյաններն իշխել են Մահկանաբերդի Արծրունիների տիրույթներին, գուցե եղե՞լ են նրանց հեռավոր շառավիղները: XVIII դարի առաջին կեսի կաթողիկոսական կոնդակներից մեկի հաղորդմամբ պարզվում է, որ բազմաթիվ հայկական գյուղեր են գտնվել Սառնաջուր գետի հովտում, որը կոչվելիս է եղել Աղբուղա: Այսօր էլ այդ բնակավայրերի հետքերը կան գետի երկու վտակների ափերին: Նաև՝ սագաշեն եկեղեցի, գերեզմանոցներ, խաչքարեր, որոնցից մեկին կերտված է ՌՂ (1641) թվականին մահացած հեծյալ տղամարդ: Այս բնակավայրերը

միջանկյալ դիրք են գրավում Կիրանցի հովտի, Հաղարծնի և Հաղբատի միջև: Գյուղերն էլ պատկանելիության առումով վեճի առարկա են եղել Հաղբատի ու Հաղարծնի միաբանությունների միջև, որին միջամտել են Ղազար Ջահկեցի (1739-1759), Հակոբ Շամախեցի (1759-1763), Սիմեոն Երևանցի (1763-1780) և Ղուկաս Կարնեցի (1780-1800) կաթողիկոսները:

Նախորդ ուսումնասիրողները նաև տեղյակ չեն եղել, որ Հին Կունեն գյուղում Մելիք Շահնազարի կառուցած Աստվածածին եկեղեցուց մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա պահպանվել են ոչ միայն «անարձանագիր տապանաքարեր, ինչպես հայտնում են «Դիվան հայ վիմագրության» VI պրակի կազմողները, այլև ճոխ զարդարված արձանագիր տապանաքարեր և վիմագիր խաչքարեր, որոնցից մի մասը դեռ հնում՝ ջարդված: Դրանք պատկանել են XVI-XVII դարերում գավառին իշխած տոհմի զավակներին և հավանաբար կործանվել Դաղստանի լեռնականների կողմից՝ Խերումյան պայազատների հերոսական դիմադրության պատճառով: Մեր տեսակետի օգտին է խոսում դեպքերի ժամանակակից հեղինակ, Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, որը վկայում է, թե լեզգիների 1712 թվականի արշավանքի հետևանքով քարուքանդ եղավ Ղազախ գավառը, իսկ նա նկատի ունի գավառի հայությունը, որի աշխարհիկ կենտրոնն այդ պահին Խերումյանների Կունեն գյուղաքաղաքն էր: Նաև վրաց աղբյուրներն են վկայում, որ ողջ XVIII դարի ընթացքում չեն դադարել լեզգիների անողորմ ասպատակությունները հայոց հյուսիս-արևելյան գավառների վրա:

Գերեզմանաքարերից մեկը քննարկվող հարցի տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում: Խոսքը Խաչատուր կազմողի (քարագործի) կենցաղային հարուստ պատկերներով կերտված օրորոցաձև տապանաքարի մասին է, որը վկայում է Մելիք Ասլամազի Բահրամ անունով որդու մասին: Հետևաբար Մելիք Շահնազարն ունեցել է եղբայր, որը մահկանացուն կնքել է ՌՃԻԳ (1674) թվականին, հավանաբար ս. Աստվածածին եկեղեցու հիմնարկեքի ամիսներին: Փաստերը խոսում են այն մասին, որ Խերումյան մելիքական տոհմը հին ծագում ունի, գուցե եղել է Բագրատունիների (Կյուրիկյանների), Ջաքարյանների կամ այս ձորահովտին որպես «հայրենիք» իշխած Մահկանաբերդի Արծրունիների հեռավոր շառավիղը, որովհետև հնարավոր է նման հաջորդում: XV դարի կեսերից՝ կարակոյունլիների թագավոր

Ջհանշահի ժամանակներից, «իշխանությունը» տեղի տվեց «մելիքությանը»՝ նախկին իշխանական սահմանների վրա հրովարտակներով վավերացնելով մելիքների իրավունքներն ու արտոնությունները[144]:

Մեր մտքի հաստատումն է գերեզմանոցի կենտրոնում հայոց ՌԺԹ (1570) թվականին մահացած Մելիք Աղայի՝ ճոխ հարթաքանդակներով զարդարված օրորոցաձև տապանաքարը, որի արևմտյան ճակատին գրված է. «երբ խոնդկարը եկավ Երևան»: Ուրեմն այդ թվականին օսմանցիների սուլթանը գրավել է Երևանը: Գերեզմանաքարի հյուսիսային երեսին, վերին աջ անկյունում Աղա կոչված մելիքն է, ձախ ձեռքին՝ հրացան, աջին՝ զինանշան, որն աղավնուն հոշոտող հովհարաձև թևաբաց արծիվ է: Տապանաքարի վերին ձախ անկյունում իշխանուհին է, որի առջև նախշկեն սփռոցի վրա բացված սուփրա է: Կինը սպասում է ամուսնուն ոչ միայն ուտեստներով, այլ նետերով լի կապարճով, որի պատրաստումը երևի կանանց պարտականությունն է եղել: Տավուշի մարզի անցյալի կենցաղն ու կանանց զբաղմունքը հասկանալու տեսակետից ամենահետաքրքիրը օթոցին նստած տիկնոջ ձախ կողմում դրված տորքն է՝ գորգագործական հաստոցը: Շնորհալի քարագործ վարպետը կիսավարտ գորգը ներկայացրել է այնպես, որ հստակ երևում են ոչ միայն հենքի թելերը, այլև գործված մասի նախշազարդերը: Անկերկբա է, որ Տավուշի մարզը հանդիսացել է Հայաստանի գորգագործության հնագույն կենտրոններից մեկը, որի ավանդույթները ցայսօր շարունակում են ժողովրդական արվեստի վարպետուհիները: Ի դեպ, 1905 թվականին Քարվանսարա գյուղում (ներկայումս՝ Իջևան քաղաք) է ստեղծվել նշանավոր «Դեղնաքյունջ» գորգը, որը մինչև այժմ էլ մեծ պահանջարկ ունի միջազգային շուկայում և բազմիցս արժանացել է բարձր պարգևի: XIX դարում Անդրկովկասում լավ հայտնի են եղել Ղազախի գավառի հայ կանանց ձեռագործ առարկաները, նաև այն ասացվածքը, թե՝ «Եթե ուզում ես ընտանիքդ կնոջ վաստակով պահել, ամուսնացիր աչաջրեցի գորգագործ կամ կոթիգյուղացի շալագործ աղջկա հետ»:

Սակայն դառնանք Մելիք Աղայի տապանաքարի պատկերների ներկայացմանը: Դրանց կենտրոնում չորս տարբեր տարիքի տղամարդիկ են, անշուշտ՝ մելիքի որդիները, որոնք շարունակել են Խերումյան տոհմը: Նրանցից մեկը հավանաբար եղել է Մելիք Ասլամազը՝ Մելիք Շահնազարի և Բահրամի հայրը: Հարթաքանդակների շարքն ավարտվում է ներքևի աջ և ձախ անկյուններում կազմ ու պատրաստ ճանապարհ ելնելու սպասող ձիերի պատկերներով, որոնց սանձերը բռնած ունեն հավատարիմ ծառաները: Միով բանիվ, հայոց պատմության մեջ (XVI-XVIIդդ.) եղել է նաև Խերումյան մելիքական տոհմ՝ գուցե սերված Բագրատունիներից (Կյուրիկյաններից), Զաքարյաններից կամ Մահկանաբերդի Արծրունիներից: Կունենի Խերումյանները, ինչպես իրենց փառավոր նախորդները, տիրել են նաև Աղստևի հովտին, այլապես 1651-ին Հաղարծնի ս. Ստեփանոս եկեղեցին նորոգած «Թիֆլիզեցի Հոգիջանի որդիքը» պարսից տիրակալի և հոգևոր պետերի հետ նույն ցուցակում իրավունք չէին ունենա գրելու Խերումյան Մելիք Շահնազարի անունը: Եվ, վերջապես, ավելորդ չէ ասել, որ Խերումյան մելիքական տոհմի աշխուժացումը համընկնում է պարսից Շահ-Աբաս երկրորդի (1642-1666) և Շահ-Սուլեյմանի (1667-1694) գահակալության ժամանակաշրջանին, երբ արյունահեղ կռիվներից և 1639 թվականին թուրք-պարսկական պայմանագրի կնքումից հետո Պարսկաստանին անցած երկրամասում տիրեց խաղաղություն, վերակառուցվել սկսեց ավերված տերությունը, չափավորվեցին հարկերը, կարգավորվեց դատավարությունը և, ինչպես Գանձասարի եսայի կաթողիկոսն է հայտնում՝ «շենացան ամենայն աւերակ գեղք և քաղաք»:

Խերումյանների նստավայր Հին Կունեն գյուղի գերեզմանոցում վերը հիշատակված Խաչատուր կազմողի անվան գոյությունը վկայություն է դառնում այն բանի, որ մոնղոլներից հետո հայաթափված այս երկրամասը բնակեցվել է այլուստ եկած հայերով: Մակար Բարխուտարեանցը հայտնում է, առանց ժամանակը նշելու, որ Կունեն գյուղի բնակիչները գաղթել են Երևանի Նորք և Շամշադինի գավառի Կրզեն գյուղերից: Կունեն-Կրզեն սերտ կապի արտահայտություն պիտի համարել Խաչատուր քարագործին, որը բազմաթիվ գերեզմանաքարեր է կերտել նաև Կրզեն գյուղում[145], խաչքարեր՝ Բերդում և Նոր Վարագա վանքում, որոնց ոճը, զարդանախշերն ու կենցաղային պատկերները հարազատ են Հին Կունենի գերեզմանոցում գտնվող Մելիք Ասլամազի որդի Բահրամի՝ 1674-ին կերտված տապանաքարին և ջարդված հիանալի խաչքարին: Հավանաբար շատ առաջացած տարիքում է վարպետ Խաչատուրը եկել Կունեն, գուցե՝ Կռզենից այստեղ տեղափոխված իր հարազատների մոտ: Նրա Կրզենում

ստեղծած առաջին գերեզմանաքարը թվագրված է ՌԿԹ (1620) թվականին:

Ավելորդ չէ ասել, որ հեղինակը 1987-ի աշնանը երկու անգամ եղել է Կրզենի հնավայրում, ուսուցիչ Ենգիբար Հովհաննիսյանի ուղեկցությամբ ծանոթացել ազգային հին հիշատակներին, գտել Մակար Բարխուտարեանցի նկարագրած Մելիք Ջահանկիր Մելիքբեկյանի աչքի ընկնող գերեզմանաքարը, որի հյուսիսային երեսին կար «որ էր մելիք Կռզեն գիւղի» գրությունը: Եվ հարկ ենք համարում նկարագրել անսովոր մեծ տապանաքարի հարավային երեսին, ասես մեծ կտավի վրա, ներկայացված հետաքրքիր կենցաղային պատկերը: Մելիք Ջահանկիրը, որ հավանաբար գեղեցիկ ժամանցի սիրահար է եղել, հզոր ձին հեծած (քարի վրա՝ արևելք-արևմուտք ուղղությամբ) մտնում է այգի կամ անտառի պուրակ: Երեք սպասավորներից մեկը մոտեցել, բռնել է ասպանդակը, որ մելիքը հեշտ իջնի ձիուց (սա ընդունված հարգանքի ձև է եղել իշխանավորի, հոգևորականների և ընդհանրապես ավագների նկատմամբ): Ծառերից մեկի տակ բացված սուփրան կարգավորում է մյուս սպասավորը: Ուտեստների կույտերը, գինու սափորների և ափսեների շատությունը հուշում է, որ հյուրերը ևս քիչ չեն լինելու: Սուփրայից դեպի ձախ բորբոքվում է խարույկը, իսկ նրանից դեն երրորդ սպասավորը մշակում է ծառի ճյուղից կախված ոչխարի մսեղիքը: Ափսոս, որ հնարավոր չեղավ տապանաքարին գտնել այն կերտող վարպետի անունը, որը նաև գեղարվեստորեն վավերագրել է Կուր գետի աջափնյակում հայկական մելիքություն (Մելիքբեկյան ազգանունով) ունենալու փաստը: Նրա նստավայրը եղել է Կռզեն գյուղը, որի պատմությանն իր աշխատության մեջ տեղ է տվել Մակար Բարխուտարեանցը[146]:

Որ հին Կունեն գյուղը եղել է մելիքության նստավայր, իմացել են նրա զավակները, նաև՝ Կունենի հետնորդ Կիրանց գյուղի բնակիչները, որոնք իրենց և պատվական նախնիների անունները ճշմարիտ հայրենասերի փառքով պսակեցին մերօրյա գոյամարտի տարիներին: Պատմական հիշողության պահապանները կարող են Սրգալկուտ կոչվող բացատում և Աճարկուտ գյուղի արևմտյան բարձունքին ցույց տալ մելիքների դաստակերտերի հիմքերը, մելիքանիստ գյուղաքաղաքի բարձունքներին թառած թաղամասերը, որոնք իրար միացված են եղել ձորակների վրա աղեղված քարե կամուրջներով: Ինչպես ասվեց, գյուղաքաղաքի միջով է անցել Կուրի ափից

Լոռի բերդ և երկրամասի հոգևոր կենտրոն Հաղբատ ձգվող միջնադարյան քարավանային ճանապարհը, որից պահպանվել են զառիթափ լանջերին կառուցված հիանալի հենապատեր և կամուրջներ: Իսկ Խերումյան մելիքներին պատկանած կալվածքներից մեկում ստեղծված գողտրիկ բնակավայրը XVIII դարում կոչվելիս է եղել Մելիք գյուղ և խորհրդային տարիներին անվանափոխվել է Ծաղկավան: Խերումյանները ունեցել են նաև իրենց խաչքարերի «գործարանը», որը 1970 թվականին Կիրանց գյուղում, Աբգար Սիմոնյանի տնամերձում, հայտնաբերվել է հողահարթեցման ժամանակ: Երկրի երես են հանվել պատրաստի, կիսապատրաստ, կոփված և կիսամշակ բազմաթիվ խաչքարեր, որոնցից մի քանիսը կանգնեցված են Կիրանցում, իսկ մեկը 1990-ին տեղափոխվել և այժմ զարդարում է Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի հայկական Եդեսիա (Էդիսիա) գյուղի սուրբ Աստվածամայր եկեղեցու բակը:

Խերումյան մելիքական տոհմը՝ հավանաբար չկարողանալով դիմագրավել լեզգինական անվերջանալի ասպատակություններին, Կունենում սպառվել է XVIII դարի առաջին կեսին, որովհետև հետագայում նրանց մասին հիշատակություններ չկան: Սակայն նրանց փրկված հետնորդները բնակություն են հաստատել նախ Թիֆլիսում, ապա Հյուսիսային Կովկասի գաղթօջախներում, որոնց հայ համայնքների ծխական ցուցակներում կան Խերումյաններ: Հավանաբար նրանց շառավիղներից է նաև Խաչատուր Աբովյանի տոհմը, որի մասին կխոսվի առանձին:

* * *

Բագրատունյաց թագավորության անկումից (1045թ.) հետո անցել էր վեց ու կես դար: Հայը սպառվում էր իր հայրենիքում: Ճիշտ է, Զաքարյանների տիրապետությունը հյուսիս-արևելյան Հայաստանում ուղեկցվեց աննախադեպ սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացմամբ և անկախ պետականության վերականգնման հույսերով, անգամ Զաքարյաններն՝ իրենց համարելով Բագրատունիների հետնորդներ, կրում էին «շահնշահ» տիտղոսը, սակայն երանելի հառնումը կարճ տևեց: Մոնղոլական արշավանքների հետևանքով այն բզկտվեց և մարեց այդ կայսրության փլուզման, գահակալական

արյունահեղ երկպառակությունների թոհուբոհում և դրան հաջորդած թուրքմենական կարա-կոյունլու, ակ-կոյունլու խաշնարած ցեղերի տիրապետության դարերում:

Ջարդերից ու գերեվարությունից մազապուրած խաղաղ, արարման կարոտ հայը բռնեց գաղթի ճանապարհը: Ուժգնանալով՝ երկրից արտահոսեց նրա թանկ կենսահյութը, որի ճակատագիրը կորուստն էր օտար ափերում՝ անխուսափելի ձուլումը: Այդպես զգալիորեն հայաթափվեցին նաև Տավուշի մարզի տարածքը զբաղեցրած գավառները, որոնցում XVI դարի կեսերից իրենց «հայրենիք» էին գտել և մեծաքանակ խաշնարածությամբ էին զբաղվում ղազախ, շամշադիլ, բորչալու բազմամարդ ցեղերն ու նրանց կցված փոքր ցեղախմբերը: Թե որքան էր երկրամասում հայոց թիվը նվազել, պարզ երևում է հայոց ազատագրական մտքի նվիրյալ Իսրայել Օրու՝ 1699-ին Պֆալցի կուրֆյուրստին ներկայացրած զեկուցագրից: Նա հայտնում է, որ կայսրի օգնության դեպքում ընդարձակ Լոռին, որի մեջ մտնում էր նաև Տավուշի մարզի մեծ մասը, կարող էր տալ ընդամենը 6000 զինվոր: Համեմատության համար ասենք, որ հարևան ոչ մեծ Ջագամ գավառը պատրաստ էր տալ 5 000, Գեղարքունիքը՝ 15 000, Դարալագյազը (Վայոց ձոր)՝ 10 000մարդ[147]: Ի դեպ, այդ լուսամիտ հայորդին ապագա ձեռնարկվելիք արշավանքի ամենահարմար ժամանակամիջոցն էլ է նշում՝ ամառը, որովհետև այդ ժամանակ զինապարտ քոչվոր մուսուլմաններն, իրենց հարյուր հազարի հասնող տնտեսություններով, Հայաստանի և հարևան խանությունների լեռնային արոտավայրեր էին քշում ոչխարների հոտերը, ձիերի, ուղտերի ու ջորիների երամակները և Մուղանի դաշտ, Կուրի եզերք ձմեռնարոտի վերադառնում սեպտեմբերին, ուր մնում էին մինչև հաջորդ տարվա մայիս ամիսը:

Իսկ հայ ազատագրական միտքը հանգիստ չուներ, ծանր իրականության կապանքների մեջ մնում էր արթուն և դեգերում հզոր հովանավոր գտնելու քարքարոտ արահետներում: Սեփական աննշան ուժերով անհնար էր արևելքի վայրագ տերությունների լուծը թոթափել: Այդ խնդրի իրականացնողի դերը ստանձնել էր Հայ Առաքելական եկեղեցին, քանի որ աշխարհիկ ուժը՝ հայ ազնվականությունը (իշխանական տները), հիմնականում ոչնչացել էր, իսկ փրկվածները թույլ էին: Համոզվելով, որ սեփական ուժերով հնարավոր չէ ձերբազատվել օտար տիրապետություններից՝ հայ ազատագրական շարժման գործիչները հրավիրում են գաղտնի խորհրդաժողովներ, որոնցում քննարկման առարկա է դառնում Հայաստանի ազատագրության խնդիրը[148]: Նման խորհրդաժողովներ են տեղի ունենում Ս. Էջմիածնում (1547), Սեբաստիայում (1562), նորից Ս. Էջմիածնում (1677) և ապա Սյունիքի Անգեղակոթ գյուղում (1699): Դրանց առաքած բանագնացները, անգամ եկեղեցական զիջումների և հայոց թագը Պֆալցի մեծ իշխանին շնորհելու գնով, թախանձագին խնդրանքներով ձգտում էին եվրոպական միապետներին և Հռոմի պապին համոզել՝ շուտափույթ ռազմական օգնություն ցույց տալ:

Հայոց այդ դեսպաններից իր բազմամյա ջանքերով, սրբազան գործին անմնացորդ նվիրվածությամբ առանձնանում է Իսրայել Օրին, որը, Եվրոպայում չհասնելով հայոց ցանկությունների իրականացմանը, ազգային-ազատագրական պայքարը կողմնորոշեց դեպի Ռուսաստան, որը երիտասարդ Պետրոս Առաջին միապետի օրերում հետևողականորեն ձգտում էր զորացող տերության համար «պատուհան» բացել ոչ միայն արևմուտքում՝ Բալթիկ ծովի, այլև արևելքում՝ Կասպից ծովի ափին, որտեղով կարելի էր աշխույժ առևտուր ծավալել Եվրոպայի, Պարսկաստանի, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ: Ուստի նորընծա Պետրոս ցարը կարևորեց Կասպից ծովի ափերին բնակվող ազգերի մասին տեղեկությունների հավաքումը և «միանգամից հասկացավ հայերի նշանակությունը արևելյան քաղաքական և առևտրական գործերում,- նկատել էր Լեոն,- ուստի փայփայում էր նրանց»: Օրին նրա հետ հանդիպելուց հետո հասկացավ, որ հարազատ ժողովրդի, բզկտված հայրենիքի ազատագրության հարցում այլևս երկրորդական չի կարող լինել հզորացող Ռուսաստանի դերը, ուստի ծանրության կենտրոնը Եվրոպայի միապետների պալատներից պետք է տեղափոխել Մոսկվա: Շուտով այդ տրամադրությամբ համակվեցին ազատագրական պայքարի մյուս գործիչները, ավելի խոր՝ Ղարաբաղի հոգևոր առաջնորդն ու աշխարհիկ տերերը՝ Խամսայի մելիքները: «Հանրահայտ է, որ Անգլիան ու Ֆրանսիան, ելնելով իրենց տիրապետությունն ու ազդեցությունը Մերձավոր Արևելքում ամրապնդելու նպատակներից, բացահայտ ռեակցիոն դիրք էին գրավում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Նրանք դիմակայել են Ռուսաստանի՝ դեպի Մերձավոր Արևելք առաջխաղացումը, հանդես եկել Թուրքիայի պաշտպանի դերում և

բոլոր միջոցներով արգելակել հայ ժողովրդին՝ թոթափելու թուրքական լուծը, որ կոնկրետ այդ պայմաններում հնարավոր էր ռուսական զենքի հաղթանակի միջոցով»[149]: Ցավոք, ռուսական ռազմական օգնությունն ուշացավ աշխարհաքաղաքական իրադրությունների անպաստ վայրիվերումների պատճառով:

1071-ին սելջուկյան Ալփասլանի բանակի՝ Մանազկերտի մոտ տարած հաղթանակից հետո, երբ խորտակվեց Բյուզանդական կայսրության ռազմական զորությունը և «թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը», օսմանյան տերությունը հետագա դարերում չդադարող արյունահեղ պատերազմներով շարունակում էր մագլցել «իր նվաճումներ գագաթը» և արդեն լրջորեն սպառնում Եվրոպային: Սակայն XVII դարի ավարտին քայքայումի ցավով էր բռնված բարբարոս կրքերով առաջնորդվող այդ «անբուժելի հիվանդ մարդը», որը բացահայտվեց Վիեննայի պատերի տակ և Տիսսա գետի ափին կրած ծանր պարտություններով: Սուլթանական Թուրքիան հետագայում էլ փորձ արեց շտկել իրավիճակը, մարտադաշտերում անգամ նոր հաղթանակներ տարավ, սակայն այլևս ի զորու չեղավ կանխել մեծ կայսրության փլուզումը և հյուսիսից ահագնացող վտանգը՝ ռուսների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս, Պարսկաստան և Սև ծովի ափերը: Բարվոք չէր նաև Պարսկաստանի կացությունը, որի ապաշնորհ գահակալների պատճառով տերությունը քայքայվում էր: XVII և XVIII դարերի սահմանագծում թագավորած Շահ Հուսեինի ժամանակները (1694-1722) Լեռն Իրանի պատմության ամենամռայլ էջերից մեկն է համարել: Սեֆեվիներից այդ ամենաանընդունակը մեծաքանակ արքունիքի միջոցներով ապահովելու մտադրությամբ հպատակներին կեղեքելու, իր գանձարանը լցնելու անողորմ համակարգ էր հորինել, որի գործադրումը սկսվեց 1699-1702թթ. անցկացված մարդահամարից հետո: Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսն իր «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» աշխատության մեջ վկայում է, որ Ղարաբաղում և Գանձակի կողմերում, որի մեջ մտնում էր ներկայիս Տավուշի մարզը, հարկահանությունը հազար հարյուր գազանաբարո օգնականների հետ իրականացրեց Ատրպատականի մեծ վեզիր Միրզաթահիրը և «սկսաւ առնուլ յոյժ աւելորդօք քան զգրեալն»: Եվ գեհենական տանջանքների էին մատնում մարդահամարից դուրս մնացածներին և ինչք-ունեցվածք թաքցրածներին:

Հակապետական հուժկու ապստամբություններով էր բռնկված Պարսկաստանը: Շահին բացահայտ անհնազանդություն էին հայտնում թե՛ երկրի ծայրամասային խանություններում, և թե՛ կենտրոնական նահանգներում: Խռովարարներին զսպելու ընդունակ ուժ չկար: Դեպի անդունդ էր գլորվում տերությունը, որին պատրաստ էին ծվատել հզոր հարևանները, իսկ հպատակ հայերն ու վրացիները՝ ձեռք բերել անկախություն: Իրադարձությունների զարգացմանն աչալուրջ հետևում էին Ռուսաստանն ու Թուրքիան: Առաջինը երազում էր Կասպից ծովի արևմտյան ափերին հաստատվելու շնորհիվ իրականացնել Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական միջնորդ դառնալու նպատակը, իսկ Թուրքիան ձգտում էր ամեն գնով կանխել մոսկովյանների վտանգավոր առաջխաղացումը: Ավելին, թուրքերը Կասպից ծովի արևմտյան ափին հաստատվելը համարում էին իրենց բնական իրավունքը՝ երկրամասի դավանակից սունիներին շիա դավանանքի մահմեդականների ոտնձգություններից պաշտպանելու պատճառաբանությամբ:

Ինչպես անցած դարերում, այդ հակադիր կրոնական համայնքներն իրար համարելով մուսուլմանական ուղիղ հավատից շեղված, առիթը բաց չէին թողնում թույլ հակառակորդին ճնշելու և ոչնչացնելու համար: Այդ պահին Կասպից ծովի արևմտյան ափին ուժը Շամախու խանության շիաների կողմն էր, և սունիներն իրենց ճնշված ու արհամարհված էին զգում, ուստի օգնություն խնդրեցին Դաղստանի իրենց դավանակիցներից: Իսկ Դաղստանի «խստադեմ, հանդուգն» մարդկանցից բաղկացած կիսավայրենի տոհմերը «թողնելով խաղաղ արտադրության ձևը՝ հողագործությունը, արհեստները, նրանք որպես մշտական զբաղմունք էին դարձրել ասպատակությունները, գերեվարությունը, քանի որ նրանք կարող էին ապրել միայն զբաղվելով թալանով: Աստիճանաբար (XVII-XVIIIդդ.) լեզգինական ասպատակների երևալը դարձավ սովորական բան»[150]: Եվ դա մահացու չարիք հանդիսացավ Վրաստանի և նրա կազմի մեջ գտնվող հյուսիս-արևելյան Հայաստանի և նրա սահմանակալը հանդիսացող ներկայիս Տավուշի մարզի համար: Ավարառության սիրահար ցեղերի բարբարոս կրքերին ազատություն տվեց Անդրկովկասում ամրանալու խնդիրներով շահագրգիռ Թուրքիայի խրախուսանքը: Սուրխայի, Շամխալի, Իսմիի, Ալի Սուլթանի և Հաջի-Դաուդի առաջնորդությամբ սկսեցին ընդհանրական անունով լեզգինական կոչվող արշա-

վանքները, որովհետև դրանց մասնակցում էին նաև ավարներ, լակեր, դարգիններ, չեչեններ, չերքեզներ, կաբարդիններ, բալկարներ, թաբասարանցիներ և այլք: Արշավանքներն անողորմ մոլուցքով շարունակվեցին ողջ XVIII դարի ընթացքում և ճակատագրական եղան հյուսիս-արևելյան Հայաստանի, նաև Տավուշի մարզի հայկական բնակավայրերի ավերման ու հայաթափման գործում: Այդ օրերի դառն հառաչանքն է նաև Խաչատուր Աբովյանի «Վերքը» և Աբովյան տոհմի հայտնվելը Քանաքեռում:

Հեղինակի և նրա անմահ ստեղծագործության մասին անցած մեկ և կես դարի ընթացքում կարծես թե ասվել է ամեն բան, քանզի իրենց խոսքն են ասել թե՛ նրա ժամանակակիցները, թե՛ նրան հաջորդած բանիբուն աբովյանագետները: Սակայն մեզ թվում է, թե ճշտելու կարիք է զգում տեսակետներից մեկը, իսկ խոսքը վերաբերում է Մեծ Քանաքեռցու տոհմի ծագմանը և անվանադիր նախնուն՝ Աբովին:

Աշխատության առաջին գլխում Աբովյանը, որդիական սիրով տալով իր ծննդավայր Քանաքեռ գյուղի նկարագրություն, նաև հայտնում է իր բարեգործ նախապապի մասին, որի դուռը միշտ բաց է եղել «հազար շուն, գել, թուրք, հայ, աղքատ, ղարիբ, ղուրբաթ» մարդկանց առաջ, որն իր ձեռքով տնկած այգին խնամել էր տալիս չորս այգեպանի, իսկ դրա բերքը երբեք տուն չէր տանում, այլ հավաքում էին քթոցներում, դնում ճամփու մոտ, որ անցնորդներն օգտվեն: Եվ եզրահանգում է երախտապարտ թոռը. «Մարդ ինչ կանի, է՛ն իր առաջը կգա: Լավություն կանիս՝ լավություն կտեսնիս, վատություն կանես՝ վատություն: ***Հարիր տարի կըլի, որ լուսահոգի Ապովը մեռել ա,*** էլի նրա ողորմին հա՛ կա, հա՛ կա: Թուրք ու հայ նրա գերեզմանովն են օրթում ուտում»:

Հայտնի է, որ «Վերքը» գրվել է 1841 թվականին, ուրեմն, ըստ իր տոհմագրությունն իմացող Խաչատուր Աբովյանի, Աբով պապը մահացած պիտի լիներ 1740-ական թվականների սկզբին: Իսկ, ահա 1981թ. Երևանի պետական համալսարանի հրատարակչության տպագրած «Վերք Հայաստանի» գրքի ծանոթագրության մեջ (բնագիրը լրացումներով և հավելվածներով հրատարակության էր պատրաստել և խմբագրել պրոֆեսոր Պիոն Հակոբյանը) գրողի հաղորդումն իր հարազատ պապի տարիքի մասին համարվել է ***վիպական ակնհայտ չափազանցություն:*** Ապա, ասածը հիմնավորելու համար, ծանոթագրողն ասում է (էջ 325). «Լուսահոգի Աբովը» Խ. Աբովյանի անմիջական պապն է, իրական-պատմական անձնավորություն, որը մասնակցել է 1784թ. մայիսին Երևանում հրավիրված գաղտնի խորհրդակցությանը, որտեղ որոշվում է Հայաստանի ազատագրության շուրջ բանակցություններ սկսել Եկատերինա 2-րդի հետ: Ապովը վախճանվել է 1794թ. փետրվարին, ուրեմն՝ «Վերքի» տպագրությունից 47, իսկ նկարագրվող դիպվածից (այն տեղի է ունեցել 1821թ.) 27 տարի առաջ: Նրա անձնավորության և բարեգործությունների մասին հանգամանորեն պատմում է գերմանացի տնտեսագետ Աուգուստ Ֆոն Հեքստհաուզենը (1792-1866)՝ հիմք ունենալով Խ. Աբովյանի մանկապատանեկան տարիների հիշողությունները»:

Անշուշտ, կարելի է ընդունել, որ Աբով նախապապի թոռներից մեկը՝ Խ. Աբովյանի անմիջական պապը, նույնպես կրել է Աբով անունը և մասնակցել ծանոթագրողի հիշատակած իրադարձություններին: Սակայն Աբովյանի հաղորդումն այն մասին, թե «Հարիր տարի կըլի, որ լուսահոգի Ապով պապը մեռել ա» այլևս չպիտի համարվի վիպական չափազանցություն: Ինչպես երևում է, այս աբովյանագետի ուշադրությունից վրիպել է «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականում (Գ տարի, թիւ Ա. 1862, էջ 23) տպագրված հոդվածը, ուր ասված է, թե ***1840-ականի կեսերին Աբովյանը բարեկամին պատմել է, որ իր պապը «վեց սերունդով յառաջ հալածուելով թշնամեաց ձեռքից (լազգիներից) եկավ հիւսիսից, միայն յայտնի չէ, թե որտեղից, իր մարդիկներով և հարևաններով երեւանա խանի՝ Սարդարի մօտ եւ խնդրեց նորանից թույլատրիւն բնակուիւն հաստատելու այն տեղում, ուր ներկա ժամանակս գտնում է Քանաքեռը: Այս առաջնորդը կոչվում էր Աբով եւ հին ազնուական տոհմից էր»:***

Նախ պարզենք ***«վեց սերունդով յառաջ հալածուելով թշնամեաց ձեռքից (լազգիներից) եկավ հիւսիսից»*** հատվածը: 840-ականի կեսերի համեմատ վեց սերունդ հետ գնալով՝ կհանգենք 1720-ական թվերին: Իսկ պատմությունից հայտնի է, որ 1719-ին սկսվել և հետագա տասնամյակում շարունակվում էր Կովկասի լեռնականների՝ «լեզգինական» անունով հայտնի անողորմ ու անդադրում արշավանքը, որի գլխավոր հատվածի կիզակետում էին հայտնվել Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները, հիմնականում՝ պատմական Գուգարք նահանգի արևելյան և հյուսիսային կողմերը: Ժամանակակիցները հայտնում են, որ այդ բարբարոսները երկրամասով բազմիցս անցան որպես կործանիչ հեղեղ, անողորմաբար կոտորեցին ընդդիմացողներին, իս-

պառ հափշտակեցին ինչքերը, շինություններն այրեցին, ողջ մնացածներին գերի տարան, որ վաճառեն: Փրկվածները փախան ապահով վայրեր: Երկրամասը դատարկվեց իր բնիկ տերերից և այդպես մնաց մինչև ռուսական տիրապետության հաստատումը: Մեր կարծիքով, ***հենց պատմական Գուգարքի այս կողմերից, որոնք Քանաքեռի համեմատ գտնվում են հյուսիսում, 1720-ականի սկզբներին է գաղթել Խ. Աբովյանի Աբով նախապապը:*** Այդ ժամանակ նա պիտի լիներ գոնե 35-40 տարեկան և իր շրջապատում ճանաչված մարդ, որ Երևանի խանից՝ նրան ենթակա Քանաքեռ կոչվող վայրում բնակություն հաստատելու թույլտվություն խնդրեր իր ընտանիքի անդամների և հարևանների համար: Իսկ Աբովն ազդեցիկ մարդ էր, «ազնուականական տոհմից»: Ուստի 1840-ականների կեսերին ապրող մեծանուն թոռան համար վիպական չափազանցություն չէր, որ նրա նախապապը մեռել էր հարյուր տարի առաջ:

Ժամանակին տեսակետ* ենք հայտնել, որ Աբովյանի տոհմի անվանադիր նախնին Քանաքեռ է տեղափոխվել ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի հովտից՝ XVI-XVIII դարերում Կունեն (պատմական Գուգարք աշխարհի Կանգարք) գավառին իշխած Խերումյան մելիքական տոհմի տիրույթներից, հավանաբար հանդիսանալով նրա շառավիղներից, այլապես Խաչատուր Աբովյանը չէր ասի, թե Աբովը «հին ազնուականական տոհմից էր»: Վերն ասվեց, որ Խերումյան մելիքների՝ 1720-ական թվերին լեզգիների ավերած դաստակերտը, նրանց կառուցած սուրբ Աստվածածին կիսավեր եկեղեցին և տոհմական դամբարանը հիմա էլ կան Տավուշի մարզի Աճարկուտ գյուղից արևելք երկար ձգվող բնական «թերակղզու» վրա: Այս հնավայրից 1,5-2-կմ հարավ բարձրանում է անտառապատ ***Աբով*** սարը, որի հյուսիս-արևելյան լանջին նշմարվում են ***Աբով*** գյուղի տնատեղերը: Հետաքրքիր է, որ մինչև 1930-1940-ական թվերը հին Կունեն գյուղի (այժմ՝ Կիրանց) բնիկ տարեցներն այս ավերված գյուղն իրենց նախնիների պես կոչելիս են եղել ***Աբովի գյուղ***, իսկ ժամանակի ընթացքում արմատավորվել է ներկայիս անունը:

Ուստի Խերումյան մելիքների դաստակերտին կից Աբովի անունով եղած գյուղի փաստը, իրադարձություններին ժամանակների

* Տես «Գրական կյանք» (թերթ), Բ տարի, 2011, N3 (Ռուբեն Սիմոնյան, «Խաչատուր Աբովյանի տոհմի ծագման միասին»):

համապատասխանությունը և Խ. Աբովյանի հաղորդումն իր տոհմի ծագման մասին՝ մեզ հիմք են տալիս ասելու, որ նրա Աբով նախապապը, 1720-ական թվերին հալածվելով անողորմ լեզգիներից, Քանաքեռ է տեղափոխվել Տավուշի մարզի Աճարկուտ գյուղի մերձակայքում գտնված Աբով գյուղից և եղել է Խերումյան մելիքական տոհմի շառավիղը: Ասվածի օգտին է խոսում նաև հետևյալ փաստը: Հեգ հայրենիքի սիրով տառապող Աբովյանը, իր պատվական ազգին հասկանալի լինելու համար, դիմել է սխրանքի. գրաբարը թողած՝ նա «Վերքը» գրել է Քանաքեռի խոսվածքով, որը հարազատ երկվորյակն է «նախահայրենիք» Կունեն գավառի հին խոսվածքի, որտեղից Քանաքեռ գաղթածները տարել են իրենց նախնիների հարազատ բարբառը: Սակայն դառնանք մեր հիմնական շարադրանքին:

Մարտադաշտերում հաղթել սովորած Պետրոս I-ը Կասպից ծովի արևմտյան ափեր արշավելու առիթի էր սպասում: Իսկ այդպիսին հանդիսացավ լեզգիների կողմից 1721-ի օգոստոսին շիաներով բնակեցված Շամախի քաղաքի ավերումը, պարսկական կառավարիչ խանի սպանությունը: Անդրկովկասի այս վաճառաշահ քաղաքի ռուս վաճառականներից թալանվել էր 500 000 ռուբլի: Նրանց մեջ կային նաև զոհեր: Երիտասարդ ցարն իր պետության հեղինակությունն ու կենսական շահերը պաշտպանելու, Պարսկաստանը վերջնական կործանումից փրկելու հիմնավորումով 1722-ի գարնանը Հյուսիսային Դաղստանի Աղրախան գետի ափին կենտրոնացված իր բանակին հրամայեց անցնել պարսկական սահմանը: Արշավանքը գլխավորում էր ցարը, որը նախապես պատրաստվելու և հայ-վրացական զինական ուժով իր բանակին միանալու ուղերձ էր հղել Վրաստանի Վախթանգ VI թագավորին, որը սերտ կապեր էր պահպանում Աղվանից Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի հետ: Այս հայրենասեր վեհապետի մտահղացմամբ և կազմակերպչական ղեկավարությամբ, լեզգիների չդադարող ասպատակությունների դեմն առնելու համար, ստեղծվեցին Ղարաբաղի նշանավոր սղնախները՝ ռազմական ամրացված շրջանները, որոնք ունեին կամավորապես հավաքագրված իրենց ինքնապաշտպանական ռազմական ուժերը: Տեղի էր ունեցել «պատմական չափազանց կարևոր իրադարձություն. հայկական պետականության կորստից հետո, առաջին անգամ, վերականգնվում էր հայկական կանոնավոր բանակը, որը կարող էր մղել ոչ միայն պաշտպանական, այլև հարձակողական մարտեր»[151]:

Ռուսական արշավանքը բաղձալի ազատությանը հասնելու հարմար պահ էր համարում ղարաբաղահայության փաստական առաջնորդ Եսայի կաթողիկոսը, որը Ռուսաստանում իր ներկայացուցիչ Մինաս վարդապետին շտապեցնում էր. «Ո~հ, եթե կատարվեր այն գործը մեր ցանկության ու դիտավորության համաձայն, որպեսզի ազատվեր մեր խեղճ ժողովուրդը բռնավորական ձեռքերից: Իսկ դուք, սիրեցյալդ, որքան կարող եք, ամբողջ ձեր ուժերով աշխատեցեք ամեն կերպ, որպեսզի մեր կենդանության ժամանակ մեր աչքերով արժանանանք տեսնել վաղուց սպասված ազատությունը»: Հայ-վրացական միացյալ զորքը Վախթանգ թագավորի ընդհանուր հրամանատարությամբ Գանձակի մոտ սպասում էր Պետրոս ցարի առաջ շարժվելու հրահանգին: Սակայն երազանքը վիճակված չէր իրականանալու: Ռուսաստանը ստիպված էր դադարեցնել ռազմարշավը, նահանջել գրաված տարածքներից, որովհետև Աստրախանից ռազմամթերք փոխադրող նավերը խորտակվել էին ուժգին փոթորկից, զինվորները մահանում էին երկրամասում մոլեգնող վարակիչ հիվանդություններից: Արշավանքի սկզբում ցարին հպատակություն հայտնած լեռնականների առաջնորդները ռուսների նահանջից հետո ավելի վայրագաբար վերսկսեցին իրենց ասպատակությունները, որով կարևոր ծառայություն էին մատուցում 1723-ի գարնանն Անդրկովկասը գրավելու մտադրությամբ արշավանքի ելած Թուրքիային, որովհետև թուրքերից ռոճիկ էին ստանում և ավարից՝ բաժին: Սուլթանի զորքերն արագ գրավեցին ներազգային երկպառակություններից քայքայվող Վրաստանը, ապա նրանից հարավ-արևելք տարածվող սուլթանությունները՝ մինչև Գանձակ:

Ինչպես վերն ասվեց, արդեն XVII դարում Կողբա գետի, Կիրանցի, Աղստևի, Տավուշի և Խնձորուտի հովիտներում աշխուժանում են բազմաթիվ գյուղեր, կառուցվում են մի շարք սագաշեն մատուռներ, կերտվում բարձրարվեստ խաչքարեր ու գերեզմանաքարեր, ակտիվանում է նաև հոգևոր-մշակութային կյանքը: Խորանաշատի վանքում 1716 թվականին կազմված մի ցուցակի համաձայն, Կուր գետի աջափնյակում, Գանձակից մինչև Թիֆլիս, կային 92 հայկական գյուղեր: Եթե ընդունենք, որ դրանք միջին հաշվով ունեցել են 100 ծուխ, իսկ ծխերը բաղկացած են եղել 6-8 շնչից, ապա հայ բնակչության թիվը եղել է 60-80 հազար: Եվ, ահա գալիս է հին չարիքը՝ Թուրքիան, որ ինչպես շիա պարսիկներին, անողորմ կոտորածի, ավերի ու ավարի է

ենթարկում գյավուր (անհավատ) հայերին: Թուրք պատմագիր Իսմայիլ Չելեբի Զադեն է վկայում, որ թուրքական բանակի հրամանատար Սիլիհդար Իբրահիմ փաշան՝ 1724-ին մտնելով Կուր գետի հովիտ, հայկական գյուղերը հիմնահատակ ավերեց, իսկ բնակչության «մեծ մասը քշեց տարավ»: Նրանց հետ նաև՝ հպատակություն և հնազանդություն հայտնած Գանձակի 3000 հայերին: Թուրքական բարոյականության գաղափարախոս այդ ուսյալ հեղինակի հաղորդմամբ, իր ցեղակիցների բոջախոի կրքերի բավարարման առարկան էին հատկապես «արտաքինից արծաթի նման մարմին ունեցող նորաբողբոջ սիրեկան տղաները, նորահաս և վարդանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկները»:

Այս արշավանքների հետևանքով վերջնականապես Ուտիք աշխարհի հայկական գավառներն ամայացան, որոնցում սկսել էին մշտական բնակություն հաստատել երկրամասում դեռ թափառող թուրքմենական ցեղերը, որոնք իրենց վայրագությամբ հետ չէին մնում ավագ եղբորից՝ թուրքից: Եվ ճակատագրի դաժան հարվածներին միայն դիմակայեց ու մինչև 1988-ի նոյեմբերյան բռնագաղթն իր պապենական հողի վրա մնաց Կուր գետի աջ ափին փռված Կրզեն գյուղը, որը եղել է ծաղկուն բնակավայր, մելիքության կենտրոն և երկրամասի մյուս գյուղերի պես զբաղվել շերամապահությամբ, բամբակագործությամբ, բրնձագործությամբ, խաղողագործությամբ, ձկնորսությամբ, նավավարությամբ, արհեստներով և առևտրով: Ասվածի ապացույցը ոչ միայն կրզենացիների վկայություններն են, այլև 1500-ական թվականներից հետո այստեղի գերեզմանոցում թաղված, հեռավոր երկրներից ժամանած առևտրականները, որոնց տապանաքարերին մետաքսի ու բամբակի հակեր են փորագրված, գինով լի տկեր, արհեստագործության առարկաներ:

XVIII դարասկզբին, լեզգիների ավերիչ արշավանքներից հետո, Տավուշի մարզի նախալեռնային գոտու գյուղերում հայոց կյանքը նորից է ծաղկել: Դա երևում է Ղազար Զահկեցի կաթողիկոսի (1738-1759) մի կոնդակից, որով նա խստորեն սահմանում է, թե որ վիճակին պիտի ենթարկվի Աղստևի գավառի նոր բնակչությունը. ***«Աղստևու երկիրն Ինջու ծորն*** (Կողբա գետի հովիտ - Ռ.Ս.), ***Ջողազն, Կիրանցու ծորն, Կունեն իր բոլոր գյուղարևքն, Մելիքի գյուղն, Մակարա վանքն (գյուղ), Սեավ քարն, Քուրդեվանն, Աղբուղեն իր բոլոր գյուղարևքն, Աղդան գյուղն, Թառակն և Դավ-***

Ոիշողություն... Գրեցավ հաստատութիւն թեմի և վիճակի Սրբոյն վանեցին Հաղբատա նգովիվք փակեալ կոնդակս ի ՌՃՁԷ (1738) թուին Հայոց, հունիս ամսո Ժ և Ը (18) տան մեծի և գեղազարդայ անհաղթելի Սուրբ Աթոռոյս էջմիածնի»:

Նախ պարզվում են այն գյուղերի անունները, որոնք գոյություն են ունեցել XVIII դարի սկզբին: Նաև, որ դրանց բնակիչները նորեկ են, ըստ այլ աղբյուրների, նաև ոստան նահանգից՝ Այրարատ աշխարհից, Վրաց թագավորի արշավանքի ժամանակ տեղահանվածներ[152], քանի որ այժմ էլ որոշ գյուղերում խոսվածքը, զրույցները, սովորությունները նման են հին Երևանի (Նորք), Աշտարակի, Քանաքեռի խոսվածքին ու սովորություններին: Այդ մասին վկայություն կա նաև Մակար Բարխուտարեանցի «Արցախ» գրքում: Դժբախտաբար Ղազար կաթողիկոսը չի նշել Ինջա (Կողբ) գետի հովտի գյուղերի անունները: Հատկապես հին գյուղատեղերի ավերակներն ու գերեզմանոցները վկայություն են այն մասին, որ այդ ժամանակ եղել են Ղալաչա, Կողբ, Բարանա, Կոթի, Դոստուլու, Ղոշխոթան, Բաղանիս և Ոսկեպար գյուղերը: Ի դեպ, Հերակլ II թագավորն Արարատյան դաշտից Արևելյան Վրաստան է տեղափոխում, իսկ Տավուշի մարզը գտնվում էր նրա կազմում, ութ հայկական գյուղերի բնակիչների: Մարզին վերաբերվող հիշատակարանների առիթով արդեն ասվեց, որ պատմական Տավուշ գավառում XVI-XVII դարերում, ի շարս այլ գյուղերի, եղել են Տայուշը (Թովուզ), Բերդը, Ղարաղայան կամ Ղրղու ձորը: Իսկ այլ գյուղերի անուններ հայտնի են դառնում հետագա իրադարձությունների ծավալման առթիվ:

1730-1740-ական թվականներին թուրքերը վտարվեցին Անդրկովկասից և լեզգիների ավերիչ արշավանքներն առժամանակ դադարեցին: Եվ դա՝ թուրքմենական աշրաֆ ցեղի մի անհայտ, հանդուգն ու համարձակ ավազակապետի շնորհիվ, որը շուտով Պարսկաստանում իրեն դրսևորեց որպես տաղանդավոր զորավար, հաղթեց գահակալող Շահ Թահմազի ոխերիմ հակառակորդ աղվաններին, ապա գահընկեց արեց ապաշնորհ միապետին և Իրանի շահ հռչակել տվեց նրա ծծկեր տղային: Դա Թահմազ-Ղուլի վերանվանված Նադիր-Ղուլի խանն էր: Սա Բաղդադի մոտ, Թիֆլիսում, ապա 1735-ի հունիսի 8-ին Արարատյան դաշտում, Եղվարդի մոտ, կատարյալ պարտության մատնեց թուրքերին: Ռազմադաշտի հերոսը չէր կարող՝ որպես անչափահաս շահի վասալ, մնալ նրա ստվերում: Ուստի 1736-ի

գարնանամուտին Պարսկաստանի ռազմական, աշխարհիկ և հոգևոր պետերին հրամայեց հավաքվել Մուղանի դաշտում՝ Իրանի համար թագավոր ընտրելու նպատակով: Հրավիրվածներն անսխալ հասկացան, թե ում են ընտրելու: Պարսկաստանի շահ հռչակված Նադիր խանի մեջքին թուր կապելը, դա հավաքույթի գլխավոր արարողությունն էր, կատարեց հայոց Աբրահամ կաթողիկոս Կրետացին (1714-1737): Մի քանի ամիս անց 36-ամյա շահը գրավեց Հնդկաստանն ու Թուրանը: Իսկ 1747-ին նրան խողխողեց պարսից բանակի մի սպա, և երկիրը նորից ընկղմվեց անիշխանության քայքայումի, գահակալական արյունալի բախումների անորոշության գիրկը:

Ի սկզբանե անարգ նվաճողի՝ Թուրքիայի դեմ պատերազմող Նադիրի հետ էին բազմաթիվ հայ զինվորականներ: Ղարաբաղի հայ մելիքները ևս նրան աջակցում էին հավատարմորեն: Թուրք նվաճողներից անմարդկայնորեն ճնշված հայերը համակրանքով էին վերաբերվում Նադիրի հաղթանակներին, իսկ Աբրահամ Կրետացի կաթողիկոսը չափազանց հարգվում և մեծարվում էր նրա կողմից: Հայոց վեհապետն իր հերթին Նադիր շահին անվանում էր «Երկրորդ Ալեքսանդր» (Մակեդոնացի): Երիտասարդ շահն արժանիորեն հատուցեց իր հաղթանակներին աջակցած և հավատարմություն դրսևորած հայերին: Նաև՝ Քարթլանիայի և Կախեթի տերեր Թեյմուրազին և նրա որդի Հերակլին (Հերակլ II), որոնց մատուցած ծառայությունների համար 1744-ին կարգեց Քարթլանիայի և Կախեթի թագավորներ՝ միաժամանակ Հերակլին տալով Գանձակի խանից խլված Ղազախ, Բորչալու գավառները (մի փոքր անց՝ Գանձակի խանի դեմ ապստամբելով, նրանց միացավ Շամշադիլի (Շամշադին) սուլթանը, իսկ Նադիր շահի մահից հետո՝ օգտվելով փլուզվող մեծ տերության մեջ տիրող անիշխանությունից, Հերակլն իրեն անկախ թագավոր հռչակեց և սկսեց կարևոր դեր խաղալ Անդրկովկասում):

Վրաց զույգ պետությունների թագավորները՝ հայր և որդի Թեյմուրազն ու Հերակլն իրենց այնքան զորեղ էին զգում, որ տարածաշրջանում կարգ ու կանոն հաստատելու համար սկսեցին ռազմական օգնություն ցույց տալ Երևանի և Գանձակի խաներին՝ ձեռնարկելով մի շարք արշավանքներ: Սկիզբը հաջող էր, քանի դեռ վրաց թագավորներին առաջնորդում էր նպատակի առաքինությունն ու վարվելակերպի ազնվությունը: Սակայն 1752 թվականին Թեյմուրազը Գանձակի մոտ դավաճանաբար կալանավորեց Շիրվանի Հա-

ջի-Չելեբի խանի դեմ դաշնակցության կազմի մեջ մտած Գանձակի, Նախիջևանի և Ղարաբաղի խաներին: «Այդ միջոցին Հաջի-Չելեբի խանը գտնվում էր Մինկեաչովր գյուղում (Կուր գետի վրա), ուր հավաքել էր իր բանակը և պատերազմի էր սպասում: Մի ծերունի նրան լուր է բերում խաների կալանավորման մասին. նա փոխանակ այդ բանն իր համար ձեռնատու համարելու, վճռում է պատերազմել վրացիների հետ՝ խաներին ազատելու համար: Պատերազմը տեղի է ունենում Գանձակի մոտ: Վրացիները սաստիկ պարտություն են կրում և փախչում: Խաներն ազատվում են, իսկ Հաջի-Չելեբին, շարունակելով վրացիների հետապնդումը, պատերազմական գործողություններն անց է կացնում Վրաստանի ներսը և կանգ առնում Թիֆլիսի մոտերքում»[153]: Վրաց զինվորական ուժը, որի հետ լավ կյանքի հույսեր էին կապում նաև հայերը, խորտակվում է:

Նոր կացությունից անմիջապես օգտվում են Դաղստանի լեռնականները, վեսկսվում են նրանց արշավանքները: Ավարառության ու գերեվարության ասպարեզ են նորից դառնում Արևելյան Վրաստանի հարավ-արևելյան գավառները՝ հայերով բնակեցված Շամշադինը, Ղազախը, Լոռին և Բորչալուն: Թալանի սովոր լեռնականները չէին բավարարվում գյուղերն ավերելով, ինչքի ու անասունների հափշտակությամբ, այլ գերի էին տանում երիտասարդ կանանց, դեռահաս աղջիկների ու տղաների, որովհետև նրանցից յուրաքանչյուրը փրկագնման կամ վաճառքի դեպքում հնչուն ոսկի էր ավարառուի համար: Լեզգիների դյուրաշարժ հեծյալ խմբերը դարանակալում էին ճանապարհների վրա, գյուղերի մերձակայքում, դաշտերում, այգիներում, ծմակներում ու մոտակա քարափների ծերպերին: Հաճախ, ձեռք չգցելով անհրաժեշտ քանակությամբ ավար, բնակավայրերից որոշ հեռավորության վրա մնում էին ձմեռակաց, մինչև ասպատակությունների համար նպաստավոր գարնան բացվելը: Այդ օրերի արձագանքն են Չաչանի գոմեր, Չալաբի, Չերքեզի տափ, Լեզգու քարայր, Ավարի թալա տեղանունները: Իրադարձությունների ժամանակակից Հակոբ կաթողիկոս Շամախեցու կոնդակներից մեկը վկայում է սահմռկեցուցիչ իրողություններ «մարդագողաց և շաղախակերաց և վայրենաբարոյից» կովկասաբնակ լեզգիների վայրագությունների մասին: «Թե արդյոք որքան գերի են տարել և որքան մարդկանց են սպանել և որքան հռչակավոր վանքեր ու անապատներ (ճգնարաններ) են միաբանությունից զրկել և որքան եկեղեցի են քանդել և

նրանց միաբաններին և անոթները գերի տարել, չեմ կարող գրով հայտնել»: Իսկ մեկ այլ վավերագիր այդ օրերի հայոց դժբախտ կացության բուն պատճառի մասին ասում է. «զի երկիրս այլազգոց ձեռուցէ, և մեք ի ձեռս սոցա կամք, ոչ միայն այս երկիր, այլ և յամենայն տեղիս ուր գտանին ազգ մեր»: Եվ այնպես ավերված էին հայոց գավառները, որ հասուն արտերի հնձող չէր ճարվում:

Շամշադինի կողմի հայերը՝ զրկված սեփական զինական ուժից, անկարող էին կազմակերպել ինքնապաշտպանություն, զզված լեզգիների անվերջանալի հարձակումներից՝ տրամադրվեցին արտագաղթի: 1757-ի գարնանը, հայտնում են աղբյուրները, Կորխ, Քյամանդար, Մրեջուր, Մմրթլու, Աղբուլաղ, Մելիքզադա, Շմեղ և Ղարամուրատ գյուղերի* բնակիչները՝ 2000 գերդաստանով, իրենց մելիք Մխիթար Քալանթարյանի գլխավորությամբ գաղթեցին Շուլավեր՝ նոր հիմնած թաղամասերին տալով հարազատ ծննդավայրի անունները: Երվանդ Լալայանը «Բորչալվի գավառ» աշխատության մեջ տեղադրել է նաև այդ իրադարձության բանաստեղծական արձագանքը, որի հեղինակն է Շուլավերի 1860-ականների հոգևոր հովիվ Պողոս քահանա Իսահակյանը.

«Այսպես թողին ծգեցին,
Ամենայն ինչ սիրելի,
Տուն, անդաստան պտղաբեր,
Եվ բուրաստան բարելի:
Հարկ տաճարաց վերացան,
Դարձան փարախ անբանից»:

Ավելի ապահով ու բախտավոր չէին Ղազախի հայերը: Բանն այն է, որ լեզգիներին դավանակից սուննի Թուրքիայի ամենամոտ՝

* Այս հայաթափված գյուղերը հետագայում բնակվեցին ... Ղարաբաղի հայաթափման հաշվին: Ռաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ հայտնում է, որ 1788-ին Գյուլիստանի Մելիք-Աբովի հպատակներից 500 ընտանիք, չկարողանալով տանել Շուշվա Իբրահիմ-խանի բռնությունները, թողեցին իրենց հայրենիքը և Գանձակի Ջավադ-խանից բնակության տեղ ստացան Շամխորում: Դարձյալ այդ ժամանակներում Մելիք-Մեջլումի հպատակներից մոտ հազար ընտանիք թողեցին Ջրաբերդը և բնակություն հաստատեցին Շամշադինում:

Ախալցխայի փաշայության հետ կապող ամենակարճ ու հարմար ուղին անցնում է Կուր գետ-Կունեն-Կիրանցի վանք-Աթան-Դսեղ-Լոռվա սարահարթ-Ջավախք հնագույն քարավանային ճանապարհով*, որի անվտանգությունը չէր կարող այդ պահին ապահովել անխոհեմության պատճառով Շիրվանի խանից չարաչար պարտված վրաց թագավորը: Ղազար Ջահկեցի կաթողիկոսի՝ վերը բերված կոնդակից հայտնի դարձավ, որ XVIII դարի 30-40-ական թվականներին դեռ հիմնականում պահպանվում էին Ինջա (Կողբ), Կիրանց, Ջողազ, Աղստև և Աղբուղա (Սառնաջուր) գետերի հովիտների հայկական գյուղերը: Անհրաժեշտ է նշել, որ դրանք ենթարկվում էին Հաղբատի թեմին և հայոց կաթողիկոսին որպես հարկ տալիս էին երկրամասին բնորոշ հարկեր՝ յուղ, պանիր, տախտակ, սայլեր, ակեր, լծասարքեր, տակառներ, կոտեր, կամեր, եղաններ, հորսելիներ, փոցխեր, տաշտեր: Թե Կովկասի լեռնականների չդադարող անողորմ ասպատակությունների հետևանքով Ղազախի գավառի հայությունն ինչ ահավոր վիճակի էր հասել, երևում է վավերագրից:

«Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ (Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարանը»).

էջ 162: «Ավերվել և անմարդաբնակ էին դարձել բազմաթիվ գավառներ, Թիֆլիս քաղաքի դռնից մինչև մեր երկրի սահման...և Կուր գետի ափով մինչև Գանձակի դուռը» («Ուստի՝ աւերեալ և անմարդաբնակ լեալ էին գաւառք բազումք, ի դրանէ Թիֆլիզոյ քաղաքին մինչև ցսահմանս մերոյ երկրիս... և առ ափամբ Կուր գետոյն մինչև ցդուռն Գեանճայու»):

էջ 834: «Իսկ մեր մյուս հայրենակիցներին՝ կանանց, մանուկներին և կահկարասիներն ու ծանրոցները շարժելով փոխադրեց հեռավոր տեղեր, ամրոցներ ու այրեր. բոլոր գնացողներն այնտեղ մնացին, մեր երկիրը և շրջակայքը թողնելով անմարդ և ամայի» («Իսկ զայլ երկրականսն, զկանայս, զմանկտիս, և զայլս կահս և զծանրութիւնս զամենեսեան

* Տե՛ս «Տավուշի մարզի միջնադարյան քարավանային ճանապարհները» քարտեզը:

խաղաղուցելոց չուեցոյց ի հեռաւոր տեղիս, ի յամուրս և ի յայրս. որք ամենեքեանքն գնացելք ամրացան թողուլով զերկիրս և շրջակայս մեր անմարդ և ամայի»):

Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարանը» նաև վկայում է, որ Դաղստանի լեռնականների ասպատակություններից գրգռվել են երկրամասերի թաթարների բարբարոսական կրքերը, որոնք բազմապատկել են հայերի գլխին թափվող դժբախտությունները:

էջ 208-209: «Ղազախներն ու բորչալուներն ուր հասնում անխնա ավերում էին, բացում շտեմարանները և իրենց կարիքների չափ ուտում և փչացնում, իսկ մնացորդները թափում էին և մտնելով տները, ինչ գտնում վերցնում էին, անգամ մաղերն ու խախալները... Ողորմելի և դառնորեն արտասվալի էր նրանց (հայերի – Ռ.Ս.) կյանքը» (Ղազախքն եւ Բոռչալուքն ուր և հասանէին աւերեին անխնայաբար, բանային զշտեմարանսն, և ըստ չափու պիտոյին իւրեանց ուտէին և բառնային, մինչև զմաղս և զխախալս... Ողորմելի ին կեանք նոցին և դառնապես լալի»):

Իսկ այս ամենը դառը հետևանք է ունենում, կործանարար հետևանք: 1765-ի սեպտեմբերի 22-ին է կազմվել արյունը երակներում սառեցնող այս վավերագիրը, որը վկայում է, թե հայը գրեթե սպառվել էր իր հայրենիքում:

էջ 303: «Ղազախեցի ժողովուրդը (խոսքը գավառի հայերի մասին է - Ռ.Ս.), առանց քահանայի ու կրոնի ուսմունքի, տաճիկների յուրաքանչյուր գյուղում մնալով երեք կամ չորս տնով, սովորել են նրանց բարքերն ու զբաղմունքը, իսկ նրանց երեխաներից շատերը չեն կարողանում խոսել հայրենի լեզվով: Նրանք մեծ աղերսանքով թուղթ են գրել սրբազան Վեհին (հայոց կաթողիկոսին – Ռ.Ս.) և խնդրել են իրենց հարցի մասին գրել Հերակլ թագավորին (որի տիրապետության տակ գտնվում էր Ղազախի գավառը - Ռ.Ս.), իրենց հանի տաճիկների միջից, մի տեղ հավաքի և հանձնի Իսկանդար բեկին, որը Ղազախի մեծն էր» («Ղազախեցի ժողովուրդքն գոլով երեք և չորս տամբք իւրաքանչիւր գիւղորայս տաճ-

կաց առանց քահանայի և օրինաց և ուսեալք չբարս և զգործս նոցա, մինչև բազումք ի նոցին մանկաց ոչ կարէին խօսիլ զհայրենի լեզուն, գրեալ էին մեծաւ աղերսանօք զթուղթ առ սրբազան Վեհին, և խնդրեալ էին գրեալ վասն իւրեանց առ Հերակլ Արքայն, և ի մի վայր ժողովել, և յանձնել Իսկանդար բէկին, որ մեծն էր Ղազախու»):

Մեկ տարի անց կազմված մի վավերագիր հաղորդում է, որ վրաց թագավորն՝ անսալով կաթողիկոսին, նախ մի տեղ է ժողովել Ղազախի գավառի՝ սպառման եզրին հայտնված հայերին, որոնց հոգևոր առաջնորդ է կարգվում Հաղբատի թեմին ենթական Հաղարծնի վանքի վարդապետ Մանուելը, իսկ տանուտերն էր մելիք Շաքրոն: Սակայն իրավիճակի փոփոխման հետ անսպասելիորեն ցանկալի լուծում է ստանում գավառի հայոց հարցը, որոնց մի մասը՝ լեզգիների ահից հալածված, դեռ ապաստանած էին հարազատ լեռների անմատչելի ծործորներում և անտառների խոր ծմակներում: Բանն այն է, որ պարսից քայքայվող պետության մեջ վրաց թագավորը, Նադիր շահի սահմանած կարգով, գերադաս դիրք էր գրավում Երևանի խանի նկատմամբ, սակայն վերջինս, երկրում տիրող անիշխանության պատճառով, չէր ենթարկվում Հերակլ 2-րդին: Վերջինս ՌՄԺԴ (1765) թվականի հունիսին հարձակվեց Արարատյան նահանգի վրա, սակայն չկարողանալով հնազանդեցնել պարսիկ խանին՝ կատաղությունը թափեց հայերի վրա, քար ու քանդ արեց գյուղերը, ըստ դեպքերի ժամանակակից Հարություն Արարատյանի, դիմեց «ամենաքստմնեցուցիչ բռնութիւնների ու հալածանքների», հարուստ, թե աղքատ՝ բոլոր հայերին գերի տարավ Թիֆլիս և՝ որպես ճորտ, բաժանեց իր իշխանների վրա: Քրիստոնյա թագավորը թույլ տվեց իր զորքին կողոպտել ու քարուքանդ անել Արարատյան նահանգի հայկական վանքերն ու եկեղեցիները*, այն դեպքում, երբ իրենց բռնություններով հանդերձ, պարսիկները և մինչև անգամ լեզգիները «ձեռնամերձ չեն եղած մեր սուրբ նուիրակութիւններին՝ մեր սուրբ եկեղեցիներին»:

* Ճակատագրի դառն ծաղրանքով ծերունազարդ ՀերակլII թագավորն Աղա Մահմադ խանի՝ Վրաստանի վրա 1795թ. սեպտեմբերյան արշավանքից հետո՝ իր հարազատների ու մերձավորների կողմից լքված, հեռավոր մի վանքում մնացել էր իր ծերունի, հավատարիմ հայ խոհարարի խնամքին:

Երիցս ճշմարիտ է ժողովրդական այն իմաստնությունը, թե՝ չիք չարիք, առանց բարիքի: Այո, անշուշտ, չարիք էր Երևանի խանից վիրավորված Հերակլ 2-րդի հարձակումը Արարատյան դաշտի հայերի վրա, նրանց տարագրումը, բնակավայրերի ու սրբավայրերի ավերումն ու թալանը: Սակայն գերեվարած հայերի մի մասով նա վերակենդանացրեց Ղազախի գավառի՝ լեզգիների անդադրում արշավանքների պատճառով ավերված մի շարք գյուղեր, որոնց անուններն առանց նշելու, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը հայտնում է դրանց տանուտերերի անունները՝ Բաղալ, Աղաբեկ, Հովհաննես, Վարդան, Բեկնազար, Պողոսո, Փարսադան, Ռևազ: Այդ անունները մեզ հայտնի են դառնում հայոց հովվապետի 1772թ. հոկտեմբերի 8-ի կոնդակից, որով նա հօգուտ էջմիածնի Ղազախի գավառի հայ հավատացյալներից հոգևոր պտուղ (յուղ, պանիր, մսացու, նաև փայտեղեն՝ Բճ (200) հատ հաճարի տախտակ և այլ առարկաներ) հավաքելու համար նվիրակ է կարգում Հաղարծնի վանքից Մանուել վարդապետին: Այդ ժամանակ երկրամաս է այցելում մի ռուս գիտնական, որը, մանրակրկիտ ուսումնասիրելով Աղստևի, Ոսկեպարի և Կողբի հովիտները, ներկայացրել է գոյություն ունեցող գյուղերի ցուցակը[154]:

Երկրամասի թուրքական բարբառով խոսողներին այս գիտնականը կոչում է թարաքամա թաթար: Ուսումնասիրությունը նա սկսել է ***Ախիստազի հովտից,*** որն Աղստևն է, ուր եղել են ***Սալթաղ, Շալաբագի, Ալչաչու, Սեիքար հայկական գյուղերը,*** իսկ լեզգիների արշավանքներից հետո հաստատված ***Ուզումթալա*** (Ուզունթալա) գյուղում ապրում էին թաթարներ: Սալթաղի տեղը նշմարվում է նույնանուն հանդամասում՝ Խաշթառակ և Դիտավան գյուղերի միջև, անտառում: Անհայտ է Շալաբագիի տեղը, չկա նաև նման անունով հանդամաս: Ալչաչուն ներկայիս Աչաջուրն է, Սեիքարը՝ Սևքարը: Ջողազի կամ Ոսկեպարի հովտում եղել են ***Կազանիշ, Ակիպարա, Կունեն, Կիլկախ, Գավասանո*** և ***Դեմուրչուլաս*** հայկական գյուղերը: Կասկած չկա, որ Կազանիշը Ղազանչ սարի արևմտյան ստորոտում, Ոսկեպարից երեք կիլոմետր հարավ գտնված գյուղն է, որի անունը մնացել է Կիրանցի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ծայրամասին հասնող կատարի վրա: Ակիպարան Ակսիպարայի աղավաղված ձևն է, որն այժմ կոչվում է Ոսկեպար: Կունենը ներկայիս Կիրանցն է: Իսկ, ահա ներկայիս Ջողազի ջրամբարի մերձակայքում եղած Կիլկախ

գյուղը գտնվել է Բերքաբերից երկու կիլոմետր արևելք՝ սարալանջին տարածվող համանուն հնավայրում, որի բնակիչները տեղափոխվել են Ջողազ կամ Պիպիզ: Այլազգի գիտնականը Գավասանո ձևով է ներկայացրել Գագա դաշտի հարթության մեջ հառնող Գավարգին ժայռի անունով կոչված հայկական գյուղը: Տարակուսել պետք չէ, որ ներկայիս Ադրբեջանի Ղազախի շրջանի Դեմիրչիլար գյուղը ներկայացվել է որպես հայկական: Բանն այն է, որ 60-70 տարի առաջ մեր ծորերի տարեցները գիտեին Ջողազ գետի ներքին հոսանքի շրջանի գյուղերի հայկական լինելը, որոնցում եղել են խոնարհված եկեղեցիներ, եղծված խաչքարեր ու խաչակիր գերեզմանաքարեր: Ակադեմիկոս Գիլդնշտեդը նաև հայտնում է՝ ***Կողբ գյուղը***, որի մոտ կար երկաթահանք, լիովին ավերված էր: ***Ղալաչա*** գյուղում ապրում էին քանդված Կողբ գյուղի նախկին բնակիչները, որոնք լեզգիների վախից քոչվորական կյանք էին վարում: Կողբ գետի վերին հոսանքի շրջանում կար Միշանա (հավանաբար՝ Միսխանա) անունով գյուղ: Մշկավանքը պարզապես կոչվում էր Վանք: Ամփոփենք: 1770-ական թվերին ռուս գիտնականին հայտնի գյուղերը պիտի սկզբնաղբյուր հանդիսանան Տավուշի մարզի բնակավայրերի ծագման ժամանակագրությունը ճշտելու համար և ոչ թե առաջնորդվել կամայականությամբ:

Ինչպես նախորդ դարերում շարունակվում էր հայերի բռնի հավատափոխությունն ու ծուլումն այլազգիների մեջ: Իրադարձությունների ականատես Հովսեփ էմինը՝ հայ ազատագրական մտքի անվանի երախտավորը, հայտնում է, թե թուրքական և պարսկական բռնակալները հայերին իրենց դավանանքին դարձնելու և իրենց ժողովուրդների մեջ ծուլելու նպատակով ուժգին քարոզչություն էին տանում: Դարեր շարունակ այլադավան հզոր հարևանները փորձել են հայ ժողովրդի մեջ մեռցնել ազգային հիշողությունը՝ պնդելով, թե հայերն իսկզբանե մահմեդականներին են ծառայել, և այդպես շարունակվելու է «մինչև Քրիստոսի հարությունը»: Թուլահավատներին կաշառելով, վարելահողեր ու պաշտոններ տալով՝ Մուհամեդի նվիրյալները հասնում էին իրենց նպատակին: Իսկ նորընծա մուսուլմանները սովորաբար անողորմ չարիք էին դառնում իրենց քրիստոնյա ազգակիցների գլխին: Սրանց, մինչև XX դարի վերջը, Նոյեմբերյանի և Իջևանի տարածքների տարեց բնակիչները կոչում էին «կլինչ-մուսուլման» (սրի մուսուլման), այսինքն՝ սրի ահից, ստիպմամբ հավա-

տափոխվածներ: Ղազար քահանա Հովսեփյանը խնդրին վերաբերվող իր աշխատության[155] մեջ հայտնում է, որ արդեն XVIII դարի կեսերին ***Ղազախի սուլթանությունում մուսուլման էր դարձել 1000 հայ ընտանիք, «իսկ մի փոքր մասը միայն ամենածանր զոհեր և ահագին զրկանքներ կրելուց յետո հաւատարիմ ու հաստատ մնաց իւր սուրբ կրոնի մէջ»:*** Իսկ «այդ մի փոքր մասը», անշուշտ, նրանք էին, որոնք հայոց Սիմեոն կաթողիկոսին խնդրում էին Հերակլ թագավորի կարգադրությամբ իրենց հանել թաթարների միջից, մի տեղ հավաքել, որպեսզի չկորցնեն մայրենի լեզուն և քրիստոնյայի հավատքը:

(1986-ի մայիսին Անդրանիկ զորավարի զինվոր, սևքարեցի 102-ամյա Նշան Հովհաննիսյանը հիանալի հիշողությամբ, ամենայն մանրամասներով պատմում էր ոչ միայն ծննդավայր Բիթլիսի նահանգի Խիզանի գավառի Խարխոց գյուղի պատմության, բնության, մարդկանց, կենցաղի ու սովորությունների, «հայենիքի տեր ու պաշտպան» փաշայի զորքին անդամագրվելու, թուրքերի դեմ մղված կռիվների, այլև XIX դարում մահվան սպառնալիքի տակ հավատափոխված հայկական գյուղերի մասին, որոնց բնակիչները մինչև XX դարի սկիզբը, ծուլվելով թուրքերի հետ, գրեթե կորցրել էին ազգային նկարագիրը և միայն հայկական միջավայրում հայտնվելիս էին հիշում իրենց ծագումը: «Հետո հասկացա, որ մինչև Ռուսաստանին միանալը նույն բանը տեղի է ունեցել Արևելյան Հայաստանում,- եզրահանգում էր հայրենիքի զինվորը: - Եղավ եղեռն, կորցրինք էրգիրը... Սևքարում բնակություն հաստատելուց հետո, երբ իրենց ադրբեջանցի անվանող թաթարները դեռ մեր սարերն էին գալիս իրենց հոտերով, դե, մենք էլ տարբեր առիթներով գնում էինք նրանց գյուղերը, ծանոթացա շատերի հետ: Եվ որքան մեծ եղավ զարմանքս, որ բավական մտերմանալուց հետո նրանցից ոմանք խոստովանեցին, թե իրենց նախնիները 5-6 սերունդ առաջ եղել են հայ ու քրիստոնյա, ապա մահվան սպառնալիքի տակ դարձել մուսուլման ու թուրքացել: Ուստի բանից տեղյակ «իսկական» թուրքերը նրանց կոչում էին կլինչ-մուսուլյան, այսինքն՝ սրի ուժով դավանափոխվածներ»: Ադրբեջանի Ղազախի շրջանի գյուղերում եղած բազմաթիվ հավատափոխ տոհմերի մասին լավ տեղեկություններ ունի գետահովիտցի, ներքին զորքերի պաշտոնաթող կապիտան Շամիր Ղազարյանը, որը ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ, պաշտոնական պարտականություններ

կատարելիս, ազատորեն մտել էր այդ գյուղերը, ունեցել բազմաթիվ ծանոթներ և ձեռք բերել նրբին տեղեկություններ՝ թե որ գյուղում, որ տոհմերն են նախկին հայեր: Եվ հետաքրքիրն այն է, որ վեճի ու կռվի ժամանակ կողմերից նա, որ «իսկական» սունnի մուսուլմանի սերունդ էր, դավանափոխվածին ծայրահեղ վիրավորանք հասցնելու ցանկությամբ կոչում էր «կլինչ-մուսուլման»):

Վաղնջական ժամանակներից իրենց գրված աշխարհագրական դիրքի շնորհիվ Հայաստանի համար առաջապահ զորաթևության դեր են կատարել հարևան Արցախ, Ուտիք և Գուգարք աշխարհները, որոնք ընդհանրական անունով նաև կոչվել են Հյուսիս-արևելյան կողմանք հայոց: Հայտնի է, որ դրանք մայր հայրենիքից անդամահատվեցին Հայաստանի մարզպանական կառավարման շրջանում, ապա վերամիավորվեցին Բագրատունյաց թագավորությանն ու Զաքարյանների իշխանությանը: Սակայն վերջինիս անկումից հետո (XIVդ.) ընկնելով խաշնարած ցեղերի ծանր լծի տակ, զրկված լինելով ազնվականությունից՝ Ուտիքն ու Գուգարքը չունեցան ազգային, պետական կառույցների վերականգնման նկատելի դրսևորումներ: Իսկ տևական, արյունաքամ կռիվներից չհոգնած Արցախի հայությունը հարազատ հողի վրա վերահաստատեց լինելիության իր բնական իրավունքը: Այստեղ հայկական պետականության վերականգնման ջատագովները դարձան Աղվանքի կաթողիկոսությունը և Ղարաբաղի մելիքությունները, որոնք՝ կործանարար ուժերի դեմ-հանդիման միավորվելով, երջանիկ նպատակին հասնելու հույսը կապել էին հզոր հովանավորի՝ Ռուսաստանի հետ: Նրանց ազատագրական պայքարը հաջողակ էր, քանի դեռ հանդես էին գալիս միասնաբար և անառիկ սղնախներ էին կապում հակառակորդի առաջ: Սակայն Վարանդայի տեր մելիք Շահնազարի դավաճանության պատճառով թուրք տարրը՝ որպես անբուժելի հիվանդություն, բույն դրեց Արցախի սրտում: Միասնությունը ճաքեր տվեց: Խամսայի մելիքությունները սկսեցին թուլանալ, փոշիանալ ու ոչնչանալ: Դավաճան մելիք Շահնազարի սխալներն ուղղելու փորձեր պիտի անեին XX դարի սկզբին Արցախի անկախության նվիրյալները, զորավար Անդրանիկը, Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների ղեկավարները, դարավերջին՝ հանուր հայությունը:

Իսկ XVIII դարի վերջին քառորդում ներկայիս Տավուշի մարզն ավելի ու ավելի սերտ ու բախտորոշ կապերի մեջ էր մտնում Արցախի հետ: Սա այն ժամանակ էր, երբ ներքին թուլության պատճառով արտաքին հարձակումներից իրեն պաշտպանել չկարողացավ Վրաստանը և 1783-ին ընդունեց Ռուսաստանի հպատակությունը: Ղարաբաղի մելիքների դաշնակիցն էր վրաց Հերակլ 2-րդ թագավորը, որի նոր քաղաքականությանը հետևելով, մելիքներն ու Գանձասարի կաթողիկոսը ռուսական իշխանություններին էին հղում նորանոր նամակներ՝ հայ ժողովրդին ևս Ռուսաստանի հովանավորության տակ առնելու առաջարկներով և դրանք իրականացնելու ծրագրերով: Հայերը նաև անկախ պետականության վերականգնման հույսեր էին փայփայում և նախապատրաստել էին հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, որը նախատեսում էր ամենից առաջ «հաստատել զսէր և զմիաբանութիւնն ի մեջ երկուց ազգաց»: Ղարաբաղահայության վիճակը սկսել էր անտանելի դառնալ լեռնաշխարհի խանության ղեկը վարող բռնավոր Իբրահիմ-խանի՝ մելիք Շահնազարի փեսայի, անողորմ հալածանքների, հարստահարության, թալանի ու զանազան ոճրագործությունների և լեզգիների շարունակվող ասպատակությունների պատճառով:

Պատուհաս էին դարձել Ախալցխա անցած երեք հազար լեզգիները, որոնք անխնա, անարգել ավերում էին հարավային և հարավ-արևելյան Վրաստանը, որի կազմի մեջ այդ ժամանակ մտնում էին ներկայիս Տավուշի, Լոռվա մարզերի տարածքներն ու Երևանի խանությունը: Վրաց հեղինակ Վախուշտի Բագրատիոնին «Վրացական թագավորության պատմություն» աշխատության մեջ հայտնում է, որ լեզգիները 1789 թվականի մի հերթական արշավանքի ժամանակ միայն Ղալայչի (Ղալաչա) գյուղից տարան 200-ից ավելի գերիներ: Հայտնի է, որ հին Ղալաչան կից է եղել Խալինջաքար բերդին՝ պաշտպանված: Իսկ թե ինչպիսին է եղել բերդ չունեցող գյուղերի վիճակը, միայն եզրակացնել կարելի է (վավերագրերից հայտնի է նաև Կողբ գյուղի անունը): Տարածաշրջանի մուսուլման տիրողները թաքուն կամ բացահայտ պայքար էին մղում Ռուսաստանին հպատակություն հայտնած Հերակլ թագավորի դեմ, և նորից հարվածներ էին ստանում հայերը: Աղբյուրներից մեկը հայտնում է, որ 1787-ի ամռանը ողջ Ղազախի գավառում մնացել էր ընդամենը 700 ընտանիք, որոնց իր քոչվորների հետ Ղարաբաղ քշեց գավառապետ Ահմետ աղան[156]: Շամշադիլի Ալի Սուլթանն իր հերթին Գանձակ է քշում 3200 ծուխ հայերի:

Թե դրությունը որքան էր ծանրացել, երևում է նաև Հաղբատի վիճակի ողբալի կացությունից, որի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսը 1792-ին Կովկասի լեռնականների չդադարող ասպատակությունների պատճառով «նստէր ի քաղաքն Տփխիս, որ կալեալ ունէր զքէմս Հաղբատայ վանից զբոլոր Կախէթ, զՍօմխէթ, զՂազախ և Ջշամշադին և զմասն ինչ ի Տփխիս քաղաքի»[157]: Հայ ազատագրական միտքն էլ հանգիստ չուներ: 1792-ի փետրվարին հայոց թագավորության վերականգնման նոր ծրագիր է ներկայացվում Եկատերինա 2-ին, պահը համարելով խիստ հարմար, որովհետև երկպառակություններից խիստ թուլացած էր Պարսկաստանը, իսկ Թուրքիան բավարար ռազմական ուժ չուներ միջամտելու համար:

Սակայն դարավարտ տասնամյակում Պարսկաստանը սկսեց ուշքի գալ՝ վերջ դնելով երկրում տիրող անիշխանությանը: Այդ մահամերձ հսկայի ժամանակավոր վերակենդանացնողը դարձավ Սպահանի Աղա Մահմադ խանը, որը մեկը մյուսի հետևից հաղթեց ու իրեն հնազանդեցրեց տերության ինքնագլուխ խաների մեծ մասին՝ կիրառելով աննկարագրելի դաժանություններ: Նա ատում էր մարդ արարածին, որովհետև պարտադրված էր տղամարդկային անլիարժեքության: Նադիր շահը նրան ներքինացրել էր պատանի հասակում: Նոր շահը փորձ արեց Պարսկաստանի հպատակության տակ վերադարձնել նաև իր նախկին կուսակալությունը՝ Վրաստանը: Սակայն վերջինիս ծերունազարդ Հերակլ թագավորը մերժեց՝ ռազմական օգնություն խնդրելով Ռուսաստանից: Օգնությունը չստացվեց ժամանակին, և դա կովկասյան գծի հրամանատար, գեներալ-անշեֆ Իվան Գուդովիչի մեղքն էր: Նա, Աղա Մահմադ խանի ծավալվող գործողությունների մասին մանրամասն զեկուցագիր ներկայացնելով Եկատերինա թագուհուն, օգնություն չկազմակերպեց ահագնացող վտանգի առջև հայտնված Վրաստանին: Ավելին, Հերակլ 2-րդին հանգստացնելով, թե վտանգ չի տեսնում Վրաստանի դեմ, գեներալը միաժամանակ անարգելով կատաղեցրեց Աղա Մահմադ խանին՝ արգելելով նրա բանագնացների մեկնումը Պետերբուրգ: Մի փոքր ավելի ուշ՝ Թիֆլիսի անկումից հետո, ռուսահայության հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը կատարվածի համար կմեղադրի Գուդովիչին՝ նրան անվանելով «հաստ գլուխ»:

Անդրկովկասի անհնազանդ խաներին դարձի բերելու նպատակով, 1795-ի ամռանը, պարսից զորքը բաժանվելով շարժվեց երեք

ուղղությամբ՝ դեպի Կասպից ծովի արևմտյան ափերը, Երևան և Ղարաբաղ: Այդ զորաջոկատներից մեկը, որը ղեկավարում էր անձամբ Աղա Մահմադ խանը, հարձակվեց Շուշվա բերդի վրա՝ նպատակ ունենալով ծերբակալել անհնազանդ Իբրահիմ խանին: Պաշարումը շարունակվեց ավելի քան մեկ ամիս, սակայն բերդը գրավել չհաջողվեց, որի պաշտպանությանը մասնակցում էին մեծ թվով հայեր: Վրացական սահմանափակ զինուժն էլ էական օգնություն ցույց տալ չէր կարող դաշնակից Իբրահիմ-խանին: Շահը հասկացավ, որ Շուշվա տևական պաշարումը խանգարում է իր գլխավոր նպատակի՝ Վրաստանի մայրաքաղաքի գրավման իրականացմանը: Ուստի նա իր հիմնական ուժերը շրջեց դեպի Վրաստան և արդեն օգոստոսի 28-ին հասավ Գանձակ՝ իր դաշնակից Ջավադ խանի մոտ: Այդ ժամանակ իր 15-հազարանոց զորքով Շամշադինում 16 օր հակառակորդի հետ հանդիպման սպասած ծերունազարդ Հերակլ թագավորը նահանջեց: Նման քայլի համար պատճառներ կային: Հերակլը բազմաքանակ պարսից բանակի առաջն առնելու համար չուներ բավարար զորք, իսկ օգնության հասած իմերելները՝ կողոպտելով Թիֆլիսը, հեռացել էին: Տարանջատ էին երկրում եղած զորքերը: Մի խոսքով, Վրաստանն անպատրաստ էր Աղա Մահմադ խանի հարձակմանը դիմագրավելու, անգամ անհոգություն էր տիրում: Թիֆլիսցիները կերուխումով էին զբաղված և անբարտավանորեն ծաղրում էին պարսից շահին «Մահմադ խանը գալիսայ. ներքինի է լալիսայ» զվարթ բառաշաղախով, որի համար կյանքով հատուցեցին: Նման վերջաբանն անխուսափելի էր նաև այն պատճառով, որ պարսիկները կռվում էին կատաղորեն: Չէ՞, որ շահը խոստացել էր հարուստ քաղաքը, գրավելուց հետո, թողնել հաղթողների տնօրինությանը՝ կողոպտելու:

Աղա Մահմադ խանը Շամշադին և Ղազախ գավառներով, առանց որևէ դիմադրության հանդիպելու, մտավ անհնազանդ Վրաստանի սահմանը և գլխավոր հարձակումից առաջ բանակ դրեց Ինջա (Կողբ) գետի ափին: Սակայն մարդատյաց մսագործը հայոց այդ գավառներում անգործ մնաց. ժողովուրդը նախապես փախել էր: Մարդիկ իրազեկված էին, որ անողորմ ներքինի շահը, գերյալներին չսպանելու դեպքում, կուրացնում և անձամբ է հաշվում աչքերը կամ մատնում է նորահայտ կտտանքների: Ուստի, ինչպես վավերագիրն է վկայում. «բազումք հայք ի Տաւուշայ (Շէմշէդին) և ի Ղազախայ ամենայն գերդաստանօք անցեալ ընդ Կուր գետ ամրացան ի Վրաստան,

յորոց բազումք ոչ ևս դարձան անտի մինչև ցայսօր, որոնց զորդիս և զթոռունս իշխանք և ազնուականք վրաց արարին իւրեանց իբրև արծաթագին ծառայ (ճորտ) որոնք մինչև ցայսօր կան մնան ի նոյն անկապ կապանաս տոռացն: Եւ իբրև այսպէս դատարկուեցաւ ի բնակչաց երկիրն Գագայ, Կողբոփորոյ, Ծոբոփորոյ և Սօմխէթի»[158]: Այսպես մի վերջին անգամ հայաթափվելով՝ ամայացան հայոց հյուսիս-արևելյան գավառները: Սարսափելի ճռաքաղից փրկված հատ ու կենտ մարդիկ ապաստանեցին բարձր լեռներում, մութ ծմակներում, քարայրներում և ժայռերի ծերպերին:

Իսկ պարսից խառնիճաղանջ, մեծաքանակ զորքը՝ մի քանի օրվա ընթացքում գրավելով ծաղկուն Թիֆլիսը, սկսեց թալանել ու կործանել: Շուտով համատարած, հսկա ավերակ դարձավ գեղեցիկ քաղաքը, որի փողոցներում, այգիներում և բակերում անթաղ էին մնացել հազարավոր դիակներ: Առնելով գրաված անբավ հարստությունները, 105 000 գերիներին՝ շահը շարժվեց Մուղանի դաշտ՝ ձմեռելու, որտեղից միտք ուներ հաջորդ գարնանը շարունակել Ղարաբաղի գրավումը: Գերիների մեծ մասը թողնվեց Գանձակում, որի Ջավադ խանը սկսեց կենդանի «ապրանքի» վաճառքը թուրքերին և լեզգիներին: Իսկ նրանց, ում կարող էին գնել հարազատները, վաճառքի գնից ավելի, յուրաքանչյուր մարդուց խանը գանձում էր 25 ռուբլի մաքսատուրք: Ի դեպ, այս սրիկան՝ օգտվելով Աղա Մահմադ խանի հովանավորչությունից, գրեթե անմարդաբնակ էր դարձրել իր խանության հարևան Շամշադինի գավառը, որը մտնում էր Վրաստանի կազմի մեջ: Նա քշել-տարել էր 26 թաթարական և 7 հայկական գյուղերի 1900 ընտանիքները: Գավառում մնացել էր շուրջ 400 ընտանիք (4 թաթարական և մեկ հայկական գյուղերում), որոնք, Ջավադ խանից փախչելով՝ թափառում էին Մուրղուզի լեռներում[159]: Այդ մնացած հայերը և Գանձակի խանից ազատվածները, ռուսական տիրապետության հաստատումից հետո, անմիջապես վերադարձան իրենց բնօրրան գյուղերը, և մարդահամարների առաջին ցուցակներում գրված են «հնաբնակ»:

Ուշացումով, 1795-ի դեկտեմբերի սկզբին, Եկատերինա 2-րդը՝ շահի հետագա ավերածություններից Վրաստանը պաշտպանելու նպատակով, հրամայում է զորք ուղարկել այնտեղ: Միաժամանակ Պետերբուրգում հասունանում է ամբողջ Առաջավոր Ասիան գրավելու ցնորական ծրագիրը, որի հեղինակը ռուսական արքունիքում և Եկատերինայի անձնական կյանքում հզոր Գրիգորի Պոտյոմկինին փոխարինած Պլատոն Զուբովն էր: 1796-ի փետրվարին մտահղացման մասին նա հայտնում է ռուսահայության հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին: Որպեսզի սպասվող պատմական հաղթանակների փառքից անմասն չմնան Զուբովները, միապետուհու սիրեցյալը համոզում է արշավանքի ղեկավարումը հանձնարարել իր եղբորը՝ կոմս Վալերիան Զուբովին, որը 25-ամյա գեներալ էր: Իսկ այս երիտասարդ զինվորականը, ըստ ռուսական պատմագրության գնահատականի, առաջ էր գնացել, աստիճաններ և կոչումներ վաստակել համարյա առանց ծառայության՝ իր եղբոր հովանավորչությամբ: Սուվորովի հրամանատարության ներքո Լեհաստանը խաղաղեցնելիս երիտասարդ սպան իրեն արատավորել էր լեհուհիների նկատմամբ ցուցաբերած ստոր և զայրացուցիչ արարքներով: Միակ առավելությունը, որ ուներ... մեկ ոտանի էր: Լեհաստանում հետախուզության ժամանակ վիրավորվել էր ոտքից, որը հետագայում հեռացրել և փոխարինել էին ոսկե պրոթեզով: Անխոնջ Հովսեփ արքեպիսկոպոսը, հենց իմացավ ռազմական ուժով Անդրկովկասում ռուսների վնասված հեղինակությունը վերականգնելու ծրագրի մասին, շտապեց ռազմարշավն ուղղել դեպի Երևան: «Եթե միայն Թիֆլիզի վրա գնան,- համոզմունք էր հայտնում ռուսների կողմից բարձր գնահատվող հոգևորականը,- ոչնչով չեն օգնի, այլև հեշտությամբ ավերակներ կգտնեն, որովհետև թշնամին դրա համար կործանեց»[160], ուստի անհրաժեշտ էր Դերբենդի, ապա Գանձակի շուտափույթ գրավումը, որտեղից արդեն դյուրին կլիներ օգնել Երևանին:

1796-ի ապրիլի 16-ին սկսվեց մեծ ծախսեր պահանջած և գրեթե անարդյունք ավարտված արշավանքը: Սկզբում նորից խանդավառված էին հայերը, որոնք՝ փայփայելով հզոր տերության ռազմական օգնությամբ անկախ Հայաստան վերականգնելու գաղափարը, նվիրվածությամբ նպաստում էին ռուսական բանակի հաղթանակին: Նրանց շնորհիվ, առանց մեծ կորուստների, գրավվեց լավ պաշտպանված Դերբենդ բերդաքաղաքը: Մուշկուրի հայերը ռուսների համար ուղեկցողի և հետախույզի դեր էին կատարում՝ հոգալով զորքի կարիքները: Սեպտեմբերի վերջին ռուսական զորքերը Արաքսի հետ միախառնման շրջանում հասան Կուր գետին: Գլխավոր հրամանատար Վալերիան Զուբեվը շտապեց այդ և հետագա լավատեսական ծրագրերի մասին հայտնել հայոց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին.

«և պատրաստվում ենք Մուղանի միջով, մեծահոգի և աստծո բարեպաշտ օծյալուհու (խոսքը Եկատերինա 2-րդի մասին է - Ռ.Ս.) արդար վրեժն առնել թշնամու սրտում»[161]: Սակայն հայոց աստեղային ժամը դեռ չէր հասել: Նոյեմբերի 6-ին հանկարծամահ եղավ Եկատերինա կայսրուհին, որին փոխարինեց նրա որդին՝ Պավել 1-ը: Նոր ցարը զորքերին ռազմական գործողությունները դադարեցնելու, Հյուսիսային Կովկաս վերադառնալու հրաման արձակեց:

Իսկ ռազմական նահանջը մահացու հետևանքներով էր հղի Կասպից ծովի արևմտյան ափերին բնակվող հայերի համար, որովհետև արշավանքի ժամանակ ամեն կերպ աջակցել էին ռուսներին և այդպիսով գրգռել մահմեդականներին: Վերահաս վտանգից խուսափելու համար՝ Մուշկուրի (Ղուբայի) հայերը ռուսական զորքերի հետ գաղթեցին Ռուսաստան, և մնացել է դրա հուզական նկարագրությունը:

«Քաղցր է հայր և քաղցր են հայրենիք և բաժանումն ի հայրենաց ի հարկէ դժնդակ. սակայն ազատութիւն հաւատոց և աստուածապաշտութեան առավել քաղցր, որոնց վասն պատրաստեցան ի չուել զհէտ Զուբովայ: Թողին այնուհետև զնորատունկ այգիս զծաղկեալ բուրաստանս և դաշտս ամենայն լիալիր վաստակօք, ինքեանք նմանեցան որդւոցն Յակոբայ և զառաջնորդս իւրեանց Մարգարէ Մովսես. ապա այնուհետև խոպանանայր դաշտն, հոգւոց հանէր որթն, մացառապատ լինէր երկիրն և ի սուգ համակէր աշխարհն գլխովին»[162]:

Այդ գաղթականները հայկական բնակավայրեր հիմնեցին Հին Մաջարում՝ վերանվանելով Սուրբ Խաչ (այժմ կոչվում է Բուդյոնովսկ), Թերեքի հովտում՝ Ղարաջալիլ, Մոլախալիլ և Ղարաբաղլի, իսկ Մոզդոկի գավառում՝ Եդեսիա գյուղերը[163], որոնցից մինչև այժմ պահպանվել են Եդեսիան (Էդեսիա) և Ղարաբաղլին: Ռուս պատմաբան Պ. Բուտկովը մահմեդականների վրեժխնդրությունից այս հայերի Ռուսաստան տեղափոխումը համարել է ռուսների միակ «չնչին վարձը» 1796-ի պարսկական արշավանքի ժամանակ ունեցած բոլոր զոհողությունների դիմաց:

Աղա Մահմադ խանի 1795-ի արշավանքը, Վրաստանի մայրաքաղաքի անողորմ ավերումը մեծ հուզմունք ու անորոշություն էր առաջացրել Անդրկովկասում, որոնք ավելի ուժգնացան ռուսների անհաջող արշավանքի պատճառով: Պարսկական վտանգն էլ չէր վերացել, սպասվում էր ներքինի շահի վերադարձը, որը նպատակ ուներ արյան գետեր հոսեցնելով, հակառակորդների կտրած գլուխներից բուրգեր շինելով հագուրդ տալ իր ժանտ զգացմունքներին և հպատակեցնել ողջ Անդրկովկասը: Ուստի մահացու վտանգի տակ հայտնված Ղարաբաղի և Գանձակի հայերն, իրենց ֆիզիկական գոյությունը փրկելու հույսով, ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոսին անդադրում խնդրում և շտապեցնում էին լուծել Ռուսաստան տեղափոխելու, վերջապես քրիստոնեական մեծ տերության հովանու տակ անցնելու խնդիրը:

1797-ի գարնանամուտին պարսից շահն ավերելով Ղարաբաղի դաշտային և ապա լեռնային մասերը, հեշտությամբ մտավ նախորդ արշավանքի ժամանակ անառիկ մնացած Շուշի բերդը: Սակայն երկար չվայելեց հաղթանակը, որովհետև անգութ դաժանությունների դիմաց խողխողվեց իր ծառայի ձեռքով: Ամռանը կաթողիկոս Ղուկաս Կարնեցին՝ Պավել Ա ցարին ներկայացնելով Անդրկովկասում ստեղծված վիճակը և հայերի դառնաղետ կացությունը, թախանձանքով խնդրում է մեծ տերության հովանավորության տակ վերցնել հայ ժողովրդին և այդ մասին հանրությանը հայտնել հրովարտակով: Ստեղծված կացությունից ելքեր են որոնում նաև Ղարաբաղի փառապանծ մելիքների շառավիղները: Օգոստոսի 1-ին հայոց Արցախի կործանման պատճառ դարձած մելիք Շահնազարի որդին, Վարանդայի տեր, առաքինի ու հայրենասեր մելիք Ջումշուդը և Գյուլիստանի տեր մելիք Ֆրիդոնը հերթական նամակով ներկայացնելով հայ-ռուսական հարաբերությունների ողջ պատմությունը, բոլոր մելիքների անունից ռուսական արքունիքից խնդրում են այդ պահին փախուստի մեջ գտնվող իրենց 11 000 ընտանիքներին բնակության տեղ տալ Կովկասյան գծի երկայնքով՝ նրանց ապահով տեղափոխության համար հատկացնելով Թիֆլիսում գտնվող ռուսական զորքը: Հովսեփ արքեպիսկոպոսի ուղեղից ծնված այս ազգավնաս ծրագրին ցարը հավանություն է տալիս, սակայն, որը բարեբախտաբար հանգամանքների բերումով չի իրականացվում:

Դեկտեմբերի 29-ին Կովկասյան գծի հրամանատար գեներալ Իվան Գուդովիչը կանցլեր Ալեքսանդր Բեզբորոդկոյին հայտնում է Ղարաբաղի մելիքների 11 000 ընտանիքները Ռուսաստան տեղափոխելու «չափազանց կարևոր դժվարությունների մասին»: Նա բացատրում է, որ նախ այդ հայերը «լրիվ կախման մեջ են Շուշիի Իբրահիմ-խանից, որը նրանցից ստանում է ծանրակշիռ եկամուտներ և

կազմում են նրա տերության մեծ մասը, ուստի նա չի համաձայնի նրանց ինքնակամ արձակումը: Իսկ տեղափոխման ժամանակ նրանց հովանավորության և պաշտպանության համար ռազմական զորքեր չկան»[164]: Ավելին, մեծ միջոցներ էին պահանջվում վերաբնակվել ցանկացողներին ընդունելու և տնավորելու համար, իսկ այդպիսիք բացակայում էին: Անշուշտ, այս մասին չգիտեր հայկական կողմը, որը կրկնում էր իր խնդրանքը:

Հայերին հայրենիքից տարաբնակեցնելու, այլ հայրենիքում «բախտավորեցնելու» Հովսեփյան (Հովսեփ արքեպիսկոպոսի մասին է խոսքը) հայավնաս ծրագիրը վաղուց համակել էր Ղարաբաղի մելիքներին: Սակայն մելիքներ Ջումշուդն ու Ֆրիդոնը շտապ կշռադատելով ստեղծված իրավիճակը, հանդես են գալիս նոր առաջարկով: 1798-ի մարտի 8-ին Պավել ցարին հղված նամակում նրանք խնդրում են վերականգնել պատմական արդարությունը, հափշտակիչ Շուշվա Իբրահիմ խանից վերցնել Ղարաբաղի հինգ մելիքներին պատկանած հողերը և հանձնել օրինական տերերին, որի շնորհիվ ամենուր ցրված հայերը ցանկություն կունենան վերադառնալ այնտեղ՝ որպես ռուս միապետի զորությամբ պաշտպանվող անվտանգ և հուսալի երկրամաս: Իսկ, եթե դրա իրագործումն աննպատակահարմար կլինի, ապա խոնարհաբար խնդրում են 12-հազարանոց զորք ուղարկել վերաբնակվել ցանկացող հայերին (արդեն 20 000 ընտանիք) Անդրկովկասից ապահովաբար Հյուսիսային Կովկաս տեղափոխելու համար: Եվ, որպեսզի չտարածվեն այլուր, մելիքները խնդրում են գաղթականներին բնակության համար հատկացնել այն ընդարձակ տափաստանը, որը Մոժար բնակավայրից տարածվում է մինչև Եկատերինոգրադ՝ Կումա գետի ողջ հովիտը: Եվ այստեղ կբնակվեն ոչ միայն առաջին, այլև հետագայում եկածները, որոնք կկարողանային շուտով Ռուսաստանում ստեղծել մի նոր փոքրիկ Հայաստան, որը քնում, թե արթնի տեսնում էր Հովսեփ արքեպիսկոպոսը: Ապա մելիքները ավելացնում են.

«3. Եթե այս երկու խնդիրներն էլ հաճելի չեն լինի Ձերդ կայսերական մեծությանը, ապա ծայրահեղ դեպքում գոնե շնորհ արեք հրամայելու վրաց թագավորին, որ բնակության համար մեզ տա իր իշխանության տակ գտնվող ամայի հողը, որը հնում Գուգարք էր կոչվում, իսկ այժմ Խազախ (խոսքը Ղազախի ընդարձակ գավառի մասին է - Ռ.Ս.), և տարածվում է մինչև Լոռվա

գավառ, որի վրա առաջ էլ կային հայկական գյուղեր, որոնք պարսիկների կողմից ավերվել են տարբեր ժամանակ: Դրա համար մենք պարտավոր կլինենք ցարին ոչ միայն ընդմիշտ հավատարիմ լինել, այլև ամեն դեպքում մեզ նվիրել նրա պաշտպանությանը և նրա կարիքների օգնությանը, մեզ վերապահելով մինչև այսօր մեր հպատակների վրա ունեցած իշխանությունը:

Թեև լեռնոտ է այս երկիրը, բայց չափազանց բերրի է և հարուստ բազմազան հանքերով..., դրա հետ միասին ունենալով օգտագործման պիտանի շատ անտառներ, որով կարելի է նորոգել քանդված ու ավերված բերդերը և վրացական թագավորությունը որպես պարսպով պաշտպանել բարբարոսներից: Եվ այդ բոլորը դարձնելով օգտավետ, որոշ ժամանակ անց Ձերդ միապետական մեծության բարեխնամ աջի ողորմածության շնորհիվ կարող ենք հասնել ծաղկուն վիճակի: Իսկ տեսնելով մեր բարօրությունը, արտասահմանում գտնվող բազմահազար հայերը վերստին կվերադառնան մեզ մոտ՝ իրենց նախկին բնակավայրերը: Եվ մեր ազգը բազմապատկվելով, ոմանք հող մշակելով, ոմանք արդյունահանելով տարբեր տեսակի մետաղներ, իսկ ուրիշները հակված առևտրին և հիմնելով տարբեր գործարաններ, կարող են առևտուրը տարածել նույնիսկ մինչև Հնդկաստան՝ ընդհանուրի և Ձերդ թագավորական մեծության օգտի համար»[165]:

Մեզ հետաքրքրող թեմայի առնչությամբ առանձնացնում ենք վերը բերված նամակի վկայություններն այն մասին, որ XVIII դարի ավարտին վրաց թագավորության կազմում գտնվող Տավուշի մարզը ներկայացնում էր ***ամայի հող զրկված իր հիմնական տերերից, իսկ գյուղերը տարբեր ժամանակներում ավերվել էին պարսիկների, թուրքերի, լեզգիների և Գուգարաց լեռներում անասնապահությամբ զբաղվող թաթարական քոչվոր ղազախ, շամշադիլ և բոչալլու ցեղերի կողմից: Նաև, որ երկրամասի հայ բնակչության մի մասը կոտորածներից ու գերեվարումից փրկվելով ապրում էր արտասահմանում,*** իր նախկին բնակավայրեր կվերադառնար, եթե երկրամասը տրվեր Ղարաբաղի մելիքներին և ստեղծվեին ապահով կյանքի պայմաններ: Իսկ հող հատկացնողն արդեն պիտի լիներ վրաց Գեորգի XII թագավորը, որովհետև նրա հայր Հերակլ 2-ը մահվամբ տեղափոխվել էր մի այլ աշխարհ:

Եվ քանի դեռ տեղի էին ունենում հայերի՝ Ռուսաստան գաղթելու

հետ առնչվող նամակագրությունները, կենդանի կյանքն ուղղումներ էր մտցնում հօգուտ մելիքների ծրագրի երրորդ կետի: Բանն այն է, որ վերջին պատերազմների և լեզգիների անդադար ասպատակությունների հետևանքով իսպառ քայքայվել էր երկրամասի տնտեսությունը, իսկ Աղա Մահմադ խանի անփառունակ վերջաբանին հաջորդեցին եռամյա երաշտը, անբերրիությունը ու մարդակուլ սովը: Դրանք կարծես քիչ էին, մարդկանց գլխին անողորմաբար մոլեգնել սկսեց ժանտախտը: Փրկվելու հույսով անկազմակերպ գաղթ սկսվեց Ղարաբաղից*: Ամենից դաժանը 1798 թվականն էր, երբ «Մեծ և Փոքր Սիւնեաց երեք հարիւր տասն և հինգ հազար բազմամարդ տան հայ բնակիչներից և ո՛չ կէսն մնացած է: Կիւլիստանի, Զրաբերդի, Ստորին Խաչէնի, Վարանդայի և Դիզակի ժողովրդաց ամենամեծ մասն գաղթեցին, իսկ Վերին Խաչէնն, Զառիստան, Ղափանն և Մեղրին համարեա թէ ամբողջապէս դատարկուած են բնակիչներից, յորոց շատերն մեռան և շատերն գաղթեցին»[166]: Ըստ այս աղբյուրի հաղորդման, սովին ու ժանտախտին Արցախում և Սյունիքում ընդհանրապես զոհ գնաց 20 105 ընտանիք, իսկ 26 500-ը գաղթեց Տաճկաստան, 15 000-ը՝ Պարսկաստան, 18 000-ը՝ Լոռի և Բոլնիս, 13 000-ը՝ Վրաստան, 15 000-ը՝ Ղազախ և Շամշադին: Մեր կարծիքով թվերն անհարկի մեծացված են, որովհետև XIX դարի սկզբին՝ երկրամասը Ռուսաստանին միանալուց հետո, անցկացված աշխարհագրի արդյունքում Ղազախի և Շամշադինի դիստանցիաներում չկար 15 000 ընտանիք և 75-80 հազար հայ: Եվ հայտնի է, որ Աղա Մահմադ խանի արշավանքի հետևանքով, սովից ու ժանտախտի մահտարաժամից հետո Ղարաբաղի 60 000 հայ ծխերից մնացել էր 20 000-ը:

1799-ի հունիսի 2-ին Պավել 1-ը հրովարտակ է ստորագրում Ղազախ գավառը Ղարաբաղից վերաբնակվել ցանկացող մելիքներին և նրանց հպատակներին հատկացնելու մասին, իսկ մեկ այլ հրովարտակով Վրաստանի Գեորգի թագավորին պարտավորեցնում է այդ որոշումն իրականացնել: Քանի որ ղարաբաղահայության գաղթը դեպի Ղազախի գավառ սկսվել էր նախորդ տարում՝ սովի և ժանտախտի վախից, ապա կարելի է ասել, որ Պավել ցարի հրովարտակը կատարված փաստի իրավական վավերացումն էր: Այս վիճակը ձեռնտու էր ռուսաց ինքնակալին, որովհետև հանգիստ էր թողնում ղարաբաղահայության հոգեառ, Ռուսաստանին առերես հպատակություն հայտնած նանրամիտ Իբրահիմ Խալիլ խանին: Չէ՞որ նրանից հեռացնում էր հայության մի հոծ զանգված՝ իր պահանջատեր մելիքների հետ: Միաժամանակ կատարում էր վերջիններիս վերաբնակվելու ջերմ ցանկությունը: Սակայն այս գաղթը մահացու եղավ Արցախի ապագայի համար, որովհետև շատ արագ Դաշտային Ղարաբաղի հայաթափված գյուղերում նստակեցության անցնելով՝ մշտական բնակություն հաստատեցին մինչ այդ տարածաշրջանում թափառող թուրքական ցեղերը: Ղարաբաղը զրկվեց իր բնիկ բնակիչների մեծ մասից և իր ազգային նկարագիրը ցայսօր պահպանում է երկրամասի լեռնային մասում, այն էլ՝ որպես կռվախնձոր և հզորների քաղաքական անմաքուր հաշիվների մանրադրամ, չնայած՝ ժողովուրդը հանրաքվեով արտահայտել է անկախ ապրելու իր կամքը: Սակայն նրա հայաթափման փաստը բարերար եղավ պատմական Հայաստանի Տաշիր, Լոռի, Ծոբափոր, Կողբափոր, Ջորափոր և Տավուշ գավառների ազգային նկարագրի վերահաստատման գործում, որոնք վերակենդանացան ղարաբաղահայերով: Եվ սա մայր հայրենիքին Արցախ զավակի պատմական կարևորագույն ծառայություններից մեկը պետք է համարել, քանզի նրա կենսահյութով նորից հայացան անդադրում պատերազմների հետևանքով ազգային նկարագիրը կորցրած հայոց հյուսիս-արևելյան կողմերը:

Վրաստան տեղափոխված մելիքները, որոնք շնորհված հողերում իրենց հպատակների նկատմամբ ինքնիշխանության պահպանման, արժանապատիվ կյանքով ապրելու երաշխիքներ էին ստացել ռուսաց ցարից և վրաց Հերակլ II թագավորից, շուտով զրկվեցին շնորհներից և վրաց ազնվականության ու ռուս պաշտոնյաների անհանդուրժողականության և խարդավանքների հետևանքով դուրս մղվեցին ասպարեզից, պարզապես ոչնչացան: Ավելին, Վրաստան տեղափոխված գաղթականների մեծ մասը՝ չտանելով այս երկրում տիրող ճորտատիրական կյանքի անծանոթ իրողությունները (նրանք Ղարաբաղում եղել էին պետական գյուղացիներ, ուստի՝ ավելի ազատ), խումբ առ խումբ, մինչև 1840-1850-ական թվական-

* Մագդա Նեյմանն իր «Հայերը» գրքում այդ կապակցությամբ նշում է, որ լեռնային ու անտառային երկրամասում, ինչպիսին Անդրկովկասն է, տեղաշարժերը ոչ մեծ տարածությունների վրա ծառայում են որպես նման հիվանդություններից ապահով միջոց. «լեռները և անտառները նման դեպքերում հանդիսանում են բնական կարանտին»:

ները հետ դարձան դեպի Ղազախ, Շամշադին, Շամխոր և նախահայրենիք Արցախ:

Վրաց թագավորության հանձնառությունը Ղարաբաղից վերաբնակվածների ու նրանց մելիքների նկատմամբ Հերակլ թագավորի մահից հետո կատարել չէր կարող որդին՝ Գեորգին, որին հայրը թողել էր «մի թագավորական ընտանիք, որը ինտրիգների բույն էր, որ տնտեսական ու քաղաքական ուժասպառության ծայրին էր հասել և մատնված էր ավատական տարրերի կամայականություններին: Գեորգին այդ դժբախտ ժառանգության վրա ավելացնում էր անձնական անկարողությունը: Նա բարի, բայց հիվանդոտ, թույլ ու վախկոտ մարդ էր: Կառավարել այդպիսի դրությամբ անիշխանությունից կեղեքվող մի երկիր, իհարկե նա չէր կարող: Ուստի նա ավելի եռանդուն դարձրեց դիմումները, որոնք և, վերջ ի վերջո, հասցրին նրան ցանկացած նպատակին»[167], Ռուսաստանի հետ միավորմանը:

XIX դարը միջազգային կյանքում սկսվում էր նոր երևույթով: Պետությունների դաշնակցություններ էին ստեղծվում, որոնցից նշանակալին 1801-ի հունվարին Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի թագավորությունների միավորումն էր: Այդ օրինակին պատրաստ էին հետևելու Ռուսաստանն ու Վրաստանը: 1800 թվականի ավարտին վրաց Գեորգի XII-ի կողմից չափազանց սրվել էր Վրաստանը Ռուսաստանին միավորելու խնդիրը, որովհետև Պարսկաստանի Ֆաթալի շահը՝ ահաբեկելով նոր արշավանքով, համառորեն պահանջում էր կապերը խզել հյուսիսային դաշնակցի հետ, վերադառնալ իր տերության հովանու ներքո: Թագաժառանգ Դավիթն էլ պատրաստ էր ուժով նստել գահին: Ռուսաց ցարին Գեորգին նորից կրկնեց իր խնդրանքը: Վերջապես Պավել 1-ը դեկտեմբերի 17-ին հռչակագիր ստորագրեց Վրաստանը ռուսաց կայսրությանը միավորելու մասին: Այս փաստաթուղթը հրապարակվեց 1801-ի հունվարի 18-ին, սակայն իրագործումը հետաձգվեց:

Նախ դեկտեմբերի 28-ին մահացել էր վրաց վերջին թագավորը՝ Գեորգի XII-ը, իսկ մարտի 12-ին կյանքից հեռացավ Պավել 1-ը: Նոր ցարը՝ Ալեքսանդր I-ը, ևս հապաղեց որոշումը կենսագործել: Ազատախոհի և վարպետ դիվանագետի համբավ վայելած Ալեքսանդրը, չնայած հռչակագրի հրապարակված լինելուն, չհրամայեց անմիջապես զորքերով զբաղեցնել Վրաստանը և այնտեղ ռուսական կառավարում մտցնել: Նա հայտարարեց, թե Ռուսաստանը հսկայական

տարածքներ է զբաղեցնում և ուրիշի հողի վրա աչք չունի, ինքը հարգում է Վրաստանի թագավորի ու ժողովրդի՝ ռուսաց հովանու ներքո խաղաղ ապրելու խնդրանքը, միայն ցանկանում է պարզել, միացումն օրինակա՞ն է, թե՝ ոչ: Ուստի փաստաթուղթն ուղարկվեց նորաստեղծ պետական խորհրդի քննարկմանը, որի համաձայնությունից հետո միայն ցարը, սեպտեմբերի 12-ին, ստորագրեց հռչակագիրը[168]:

1801-ի աշնանը Վրաստանը պաշտոնապես միացավ Ռուսաստանին, նրա կազմում նաև՝ հայոց հյուսիս-արևելյան գավառները, ներկայիս Տավուշի և Լոռվա մարզերը: Սա Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու առաջին փուլն էր: 1813-ի հոկտեմբերին Ռուսաստանին միացվեցին Արցախը, Գանձակը, Սյունիքն ու Շիրակը, 1828-ի փետրվարին՝ Արարատյան դաշտի, Գեղարքունիքի և Նախիջևանի գավառները:

Ռուսական կայսրությունը՝ տիրանալով Անդրկովկասին, իհարկե, մտահոգված չէր լուծելու այնտեղ բնակվող ժողովուրդների ազգային խնդիրները, մասնավորապես, գահին հավատարիմ հայերի անկախ պետականություն ստեղծելու երազանքը: Եթե Ռուսաստանին այլևս ավելորդ էր գոյություն ունեցող Վրաց թագավորության պահպանումը, որի գահը չշարունակվեց Գեորգի XII-ի մահից հետո, ապա կհիմնե՞ր հայոց նոր թագավորություն: Իհարկե՝ ոչ, կայսրություններում նման հարցեր չէին լուծում: Ուստի «ազատախոհ» Ալեքսանդր I-ի օրերում լուծարվեցին նաև ազգային, պետական կառույցների պահպանված տարրերը՝ մելիքությունները, թավադություններն ու սուլթանությունները, որոնց հիմքի վրա, առանց ազգային տարանջատման ստեղծված վարչական նոր միավորների կառավարիչներ նշանակվեցին ռուս պաշտոնյաները, որոնց ենթակա էին տեղական իշխանական տների պահպանված շառավիղները: Տավուշի մարզի բնակչությունը (հայ, թաթար) պարսկական տիրապետության ժամանակների պես շարունակեց կառավարվել Լոռվա գավառի մեջ մտնող Ղազախի և Շամշադիլի կամ Շամշադինի թաթարական դիստանցիաների՝ ռուսական զինվորական կոչման արժանացած նախկին սուլթանների կողմից, որոնք ենթարկվում էին գավառապետին (մովրով): Իսկ գյուղական համայնքները նախկինի պես ղեկավարում էին դրանց ընտրած ավագները, որոնք հայկական գյուղերում կոչվում էին քյոխվա, թաթարական գյուղերում՝ աղալար:

Ռուսաստանին նոր միացված երկրամասի՝ Պարսկաստանին սահմանակից բնակավայրերի բնակչության մասին 1802-ի մայիսի 25-ին Ալեքսանդր ցարին անուրախ տեղեկություններ հայտնեց Վրաստանում կուսակալ և զորքերի հրամանատար նշանակված Կ. Կնորինգը. «Ամենուր երկիրն ինձ ներկայացավ բնությունից հարուստ, իսկ գյուղերն արտաքին գիշատիչների ձեռքից և ներքին խժդժություններից քայքայված ու ամայացած: Ամենուր ինձ լսելի էին անցած դժբախտությունների հիշողությունները և ուրախության դրսևորումները Վրաստանը Ձերդ կայսերական մեծության հզոր հովանավորության և իշխանության մեջ ընդունելու մասին»[169]:

Ռուսական տիրապետության հաստատումից հետո Վրաստանում կազմավորվեցին. Քարթլիում՝ Լոռվա, Գորու և Դուշեթի, Կխեթում՝ Թելավի և Սղնախի գավառները: Իսկ Լոռվա գավառի մեջ մտցվեցին նախկին Շամշադինի, Ղազախի, Բորչալուի, Լոռվա և Փամբակի գավառները՝ Շամքոր գետից մինչև Դեբեդի հովիտ, իսկ գավառապետը նստում էր Թիֆլիս քաղաքում: Բանն այն է, որ XVIII դարի արյունալի իրադարձություններից հետո ռուսական կառավարչությունն այդ գավառները գտավ այնպես անողորմ ավերված և աննշան բնակչությամբ, որ վարչական առումով հարմար գտավ նման ընդարձակ տարածքը միավորել մեկ՝ նոր ձևավորվող Լոռվա գավառի մեջ: Եվ դրա կենտրոն սահմանվեց Թիֆլիս քաղաքը, քանի որ այդ նպատակով գավառում չկար քաղաք կամ նշանակալի բնակավայր:

Ռուսական իշխանություններին նոր երկրամասի կացության մասին կարևոր տեղեկություններ տվեց 1802-ի մայիսի 8-ին առաջին անգամ անցկացված աշխարհագիրը, երբ կազմվեցին նաև գյուղերի ցուցակները, որոնց բնակիչների զգալի մասը նախորդ մի քանի տարվա ընթացքում գաղթել էր Ղարաբաղից: Այդ պահին Ղազախի և Շամշադինի դիստանցիաներում համապատասխանաբար կար 56 և 13 գյուղ: Բայց դրանցից շատերն անբնակ էին կամ շատ քիչ բնակչություն ունեին: Բնակիչները դեռ փախուստի կամ Աղա Մահմադ խանի ժամանակից գերության մեջ էին Գանձակի խանի մոտ, որոնք իրենց գյուղերը սկսեցին վերադառնալ ռուսական տիրապետության հաստատումից հետո: Սակայն 69 գյուղերից (հայկական, թաթարական) շատերը մնացին քանդված և տարբեր կողմերից հավաքվող բնակչությունն իր համար ընտրեց նոր գյուղատեղեր: Որպես այդ իրողության ապացույցն են նոր ստեղծված գյուղերի անվան զուգա-

հեռները՝ Հին Ղալաչա, Հին Ոսկեպար, Հին Կունեն, Հին Աչաջուր, Հին Խաչթառակ, Հին Մովսես, Հին Թալա, Հին Ղարաղոյլի (Ղրղի): Ամբողջովին անմարդաբնակ մնաց Աղբուղա (այժմ՝ Սառնաջուր) կոչվող գետի՝ մի ժամանակ խիտ բնակեցված վերնագավառը: 1850-1860-ական թվականներին այստեղ պղնձահանքն արդյունահանող հույները վերականգնեցին Արմուտլու (Տանձուտ) գյուղակը, որն արագ մարեց հանքի փակման պատճառով: Հիմա այդ սարամասը լավ ամառնարոտ է Իջևանի տարածքի գյուղեր համար: Հարկ է նշել, որ գավառի հայկական գյուղերը հիմնականում տեղավորված էին նախալեռնային գոտում և ապահովված վարակիչ հիվանդություններով (տենդ, ժանտախտ) վարակվելու վտանգից, սակայն զրկված էին հարթավայրային, բարեբեր հողերից, ուստի՝ աղքատ:

1802-ի մայիսի 8-ին անցկացված աշխարհագրի համաձայն, Ղազախի դիստանցիայում եղել է հայերով բնակեցված 17, Շամշադինի դիստանցիայում՝ 6 հայկական և հայերով ու թաթարներով խառն բնակեցված երկու գյուղ: Ահա դրանք (ներկայացվում են հին ու նոր անուններով):

ՂԱԶԱԽԻ ԴԻՍՏԱՆՑԻԱ

1.	Ղալաչա	-------	Բերդավան
2.	Բարանա	-------	Նոյեմբերյան
3.	Կողբ	-------	
4.	Կոթի	-------	
5.	Կլիչքենդ	-------	Սարի գյուղ
6.	Ուզունթալա	-------	Այգեհովիտ
7.	Թալա	-------	Գետահովիտ
8.	Ակսիբար	-------	Ոսկեպար
9.	Ղարանլուխդարա	-------	Լուսաձոր
10.	Լալի	-------	Վազաշեն
11.	Ղարադաշ	-------	Սևքար
12.	Հաչասու	-------	Աչաջուր
13.	Խաչդարակ	-------	Խաչթառակ
14.	Կունեն	-------	Կիրանց
15.	Ղոշխոթան	-------	Ոսկեվան
16.	Բաղանիս	-------	
17.	Աղդան	-------	Ակնաղբյուր

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԴԻՍՏԱՆՑԻԱ*

Մովսեսլի	-------	Մովսես
Ղըզըլ բուլաղ	-------	Կարմիր աղբյուր
Ղուլալի	-------	Այգեձոր
Սարատակլի	-------	(էրի ձոր, միացել է Այգեձորին)
Չորաթլու	-------	Չորաթան
Կիրզան	-------	Կրզեն
Ալի-բեգլու	-------	բնակեցված հայերով և թաթարներով
Կիրիխլու	-------	բնակեցված հայերով և թաթարներով[170]

Ռուսաստանին միանալուց հետո, երբ առանց կոտորածի երկյուղի, կրոնական ճնշումներից զերծ, խաղաղ ապրելու և գույքի ապահովության երաշխիքներ էին ստեղծվել երկրամասում, հայերը շարունակում էին հյուսիս-արևելյան Հայաստան, նաև Տավուշի մարզի տարածք ներգաղթել ոչ միայն Ղարաբաղից ու մերձակա գավառներից, այլև Արարատյան նահանգից (Երևանի խանությունից): Վերջինիս պարագայում կային լուրջ պատճառներ: Նախ իրենց ճնշված և իրավազուրկ էին համարում մահմեդական իշխանավորների կամայականությունների մշտական զոհ հայերը, ուստի հասկանալի պիտի լիներ նրանց համակրանքը քրիստոնյաների համար կյանքի տանելի պայմաններ ստեղծած ռուսական պետության նկատմամբ: Եվ քանի որ ռուս-պարսկական սահմանը (մինչև 1828 թվականը) անցնում էր մոտակայքով՝ Փամբակի և Արեգունու լեռնաշղթաների կատարներով, ապա հայերը փորձում էին ընտանիքներով, անգամ գյուղական համայնքներով անցնել Փամբակի և Ղազախի գավառներ**: Նրանց ձգտումները համընկնում էին ռուսական պետության նպատակներին, որը ցանկանում էր գրավել Երևանի խանությունը: Այստեղից հայերի գաղթով երկու խնդիր էր

* Այդ ժամանակ Գետիկի ձորում եղել է Ղարաղոյլի գյուղ, որի՝ Շամշադինի գավառից (հավանաբար Աղա Մահմադ խանի արշավանքի պատճառով) փախած բնակիչները ռուսական տիրապետության հաստատումից հետո վերադարձել են Ներքին շեն, ապա հիմնվել ներկայիս տեղում՝ կոչելով Ղրղի, որն այսօրվա Արծվաբերդն է:

** Այդ մասին բազմաթիվ հիշատակություններ կան կաթողիկոսական դիվաններում:

լուծվում: Նախ կորցնելով ջանասեր հպատակներին՝ Երևանի խանը տնտեսապես թուլանում էր, իսկ ռուսական սահման մտածները շենացնում էին Փամբակի, Լոռվա, Ղազախի գավառների թափուր գյուղերը: Հայոց պատմական երկու նահանգներից տեղի ունեցած ներգաղթն անհետևանք չի անցել: Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի և Բերդի տարածքների խոսվածքներն ունենալով միմյանց նման մի շարք գծեր՝ նրանց դարձնում են Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ, բայց նրանք ունեն թեկուզ աննշան տարբերություններ: Այդ խոսվածքները նաև անցումային բնույթ ունեն մի բարբառից մյուս բարբառը: Նշված տարածքների խոսվածքները կազմում են անցումային օղակ Արարատյան բարբառից դեպի Ղարաբաղի բարբառը:

1801-ի հուլիսին ռուսական զորքն արդեն զբաղեցրել էր Փամբակի ձորը և հրաման ուներ դեպի Երևան առաջ չշարժվել, մինչև պարսիկներն առիթ չտային: Շուտով նման առիթ ստեղծվեց հայոց կաթողիկոսության թափուր գահի հավակնորդ եպիսկոպոսների՝ Դավթի և Դանիելի, խայտառակ հակամարտության ընթացքում: Հակառակորդին ոչնչացնելու նպատակո միջոցների մեջ խտրություն չէին դնում սուրբ գահին հավակնող, անսուրբ ընթացք բռնած բարձրաստիճան հոգևորականները: Անշուշտ, անբարո վարքագծով, քսությամբ, կաշառատվությամբ ու բիրտ դաժանությամբ աչքի էր ընկնում 1801-ին ձեռնադրված Դավիթը , որը հաջորդ տարվա դեկտեմբերին Մարաղայում կաշառքով ձերբակալել տվեց մայիս ամսին Բագրևանդի սուրբ Հովհաննես վանքում (Ուչքիլիսե) 14 արքեպիսկոպոսների, 35 վարդապետների, 50 քահանաների և բազմաթիվ աշխարհականների մասնակցությամբ ձեռնադրված Դանիել կաթողիկոսին: Կաթողիկոս է «վերահաստատվում» պարսկամետ Դավիթը, որը մարմնական տանջանքների է մատնում Դանիելին, ածիլել է տալիս մորուքը, բեղերն ու գլուխը և նետում խոր գուբի մեջ: Պարսիկ խանը հոխորտում էր՝ երկիրը մերն է, հայոց մայր աթոռը գտնվում է մեր երկրում, ուստի ինչպես կամենանք, այնպես էլ կվարվենք, օծել կտանք Դավթին: Վերջինից խանը 4000 թուման կաշառք էր ստացել: Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոսին հաջողվեց փախչել իրեն արևելյան ճիվաղի պես պահող Դավթից: Իսկ մյուս եպիսկոպոսներն ու վարդապետները հեծում էին բիրտ կաթողիկոսի ձեռքին: Առանձնապես Դանիելի շուրջօրյա հսկողության

համար խանն իր բարեկամ Դավթին տրամադրել էր 10 պարսիկ զինվոր:

Հայոց կաթողիկոսի հարցում կողմնակի դիտողի դերում չէր կարող լինել քայլ առ քայլ երկրամասին տիրացող, հայկական մեծ համայնքներ ունեցող Ռուսաստանը, որի ղեկավարության համակրանքը ռուսամետ Դանիելի կողմն էր: Կովկասի և Վրաստանի կառավարիչ իշխան Պավել Ցիցիանովը բացեիբաց հայտարարում էր, թե ով դեմ է օրինական ընտրված Դանիել կաթողիկոսին, դեմ է իրեն, այսինքն՝ ռուսաց պետությանը, որի կամքը համարում էր անտեսված: Բանն այն է, որ ընտրվող կաթողիկոսին իրենց հրովարտակով պիտի ճանաչեին Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի միապետները, այլապես կաթողիկոսի նվիրակները մուտքի թույլտվություն չէին ստանա նրա իրավասությունը չճանաչած երկիր: Ռուսաստանը փորձ արեց խճճված հարցի մեջ ուղղում մտցնել զենքի ուժով:

Օգտագործելով Դանիելի բանտարկության առիթը՝ Ցիցիանովը 1803-ի ամառնամուտին իր զորքերը Փամբակից շարժեց դեպի Երևան: Սակայն ուժերն անհավասար էին: Ռուսական փոքրաթիվ զորաջոկատը վատ էր ապահովված սննդամթերքով ու ռազմամթերքով, իսկ պարսիկներըԵրևանի բերդում, որ լավ պաշտպանված էր, ունեին 7000 զինվոր և 60 թնդանոթ: Երևանի բերդի առումը ձգձգվեց: Ցիցիանովը լավ գիտեր, որ թիկունքից բավարար օգնություն չէր ստանա սկսած գործը գլուխ բերելու համար, ուստի սեպտեմբերի սկզբին վերադարձավ Թիֆլիս: Պարսիկները սկսեցին խոշտանգումով, մահվան մատնելով, ինչքը հափշտակելով վրեժ առնել ռուսների գալով ուրախացած և նրանց աջակցած հայերից: Հայ երևելիները ռուսներին անդադար դիմում էին փրկության խնդրանքով, իսկ շատերը՝ չդիմանալով դաժանություններին, Երևանի խանության մահալներից փախչում էին ռուսաց տիրապետության սահմանները՝ Ղազախ, Փամբակ, Լոռի, Շուլավեր:

Պարսկական մոտիկ խանությունից հայերի փախուստին նպաստում էին ռուսական իշխանություններն ու հայոց եկեղեցու Վրաստանի թեմակալ առաջնորդ Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոսը: Նրանք Արարատյան նահանգի հայերին հորդորում էին գաղթել ռուսական կողմը՝ մինչև Երևանի խանության ազատագրումը և այնտեղ ռուսական տիրապետության հաստատումը: Նաև պարզ է դառնում արդյունքը: Պ. Ցիցիանովը հստակ գրությամբ Ալեքսանդր


ՏԱՎՈՒՇԻ ՄԱՀԱԼԻ ՄԻՀՆԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԿՈՒՐ
ՔՈՒՐ
ԱՐԱՔՍ
ԵՐԵՎԱՆ
ԳԱՆՁԱԿ
ՇԱՄԱԽԻ
ԳՈՐԻՍ
ՍՈՒՍԱՄՐ
ՍԱՍՆԱ
ՍՈՒՍԱՆԼՈՒ
ՍԱՍՆԱ ՁՐ
ՍԱՍՆԱ ՁՐ
ՍԱՍՆԱ ՁՐ

Ի-ին ցարից խնդրում է Հովհաննես արքեպիսկոպոսին պարգևատրել այն բանի համար, որ նրա շնորհիվ Երևանի մերձակայքից հանվել և Վրաստան է տեղափոխվել 1000 հայ ընտանիք: Անշուշտ, հենց այս ժամանակ Ղազախի գավառ են անցել Երևանի մերձակա մահալներից փախած բազմաթիվ հայեր՝ համալրելով սակավամարդ գյուղերը, կամ ստեղծելով նորերը: Դրանցից է Քարվանսարա գյուղը (ներկայիս Իջևան քաղաքի նախորդը), որի հիմնադրման մասին անհրաժեշտ ենք համարում հատուկ խոսք ասել:

Բանն այն է, որ Քարվանսարայի հիմնադրման տարեթվի մասին տարբեր հեղինակների աշխատություններում, անգամ «Հայկական սովետական հանրագիտարան»-ում սխալ, փաստազուրկ տեսակետներ են ներկայացվել: Աներկբա է, որ միջնադարերում ներկայիս Իջևան քաղաքի շրջակայքում եղել են ոչ քիչ թվով գյուղեր, որոնց ավերակներն այժմ էլ նշմարվում են: Ավելին, Ստեփան Լիսիցյանը, անդրադառնալով հռոմեական զորավար Պոմպեոսի՝ մ.թ.ա. 65 թվականին Անդրկովկասով անցած ուղուն, գտնում էր, որ Պոմպեոսը Սև ծովի ափից գալիս դեպի Աղվանք է շրջվել ոչ թե Շիրակից, ինչպես կարծում էր ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, այլ նախ հասել է Արտաշատ մայրաքաղաք, ապա անցել Արտաշատ-Գառնի-Գողթ-Արթիզ (Գեղարդ)-Ճաթղռան (Գեղադիր)-Սուխոյ Ֆանտան-Ալափարս-Բջնի-Մայրավանք-Էշակ մեյդան (Արջանոցի լեռնաշղթա)-Դիլիջան ճանապարհով և Աղստևի հովտի միջնամասում հասել Սանորա քաղաքին[171], որը նույնացրել է Իջևանի տեղում եղեծ բնակավայրի հետ, ապա մտել Կուրի ափին գտնված Ասպիդ: Մեր կարծիքով Սանորայի հետքերն են մինչև այժմ բացվում Իջևան քաղաքի արևելյան կողմի հնավայրում, պրոֆտեխնիկական ուսումնարանի մերձակա հողահանդակներում: Իսկ քաղաքի տեղում ուշ միջնադարերում գործել է ախոռներից և հյուրատնից բաղկացած քարվանսարա (քարավանատուն), այսինքն՝ քարավանների իջևանատուն, որտեղ հանգիստ են առել Երևանից դեպի Թիֆլիս ու Գանձակ և հակառակ շարժվող քարավանները*: Ինչպես վերը բերված ցուցակից երևում է, Լոռվա գավառի Ղազախի դիստանցիայի հայկական գյուղերի շարքում 1802-ին (նաև 1806-ի աշխարհագրի ժամանակ) Քարվանսարա գյու-

* Տե՛ս «Տավուշի մարզի միջնադարյան քարավանային ճանապարհները» քարտեզը:

ղը բացակայում է: Եվ արդեն 1817-ի կամերալ ցուցակագրության մեջ կա, ուր պարզորոշ ասված է. «Գյուղ Քարվանսարա. հայեր, որոնք դուրս են եկել Երևանից (պետք է հասկանալ Երևանի մերձակայքից - Ռ.Ս.) 1806 թվականին»[172]: Իսկ, թե որտեղից՝ ճշտում է Քարվանսարա գյուղի երկարամյա քահանա Կոմիտաս Սիմոնյանը:

«Մեր նախնիքները,- հայտնում է նա,- չվել են Երևանի մոտիկ (ներկայիս Կոտայքի մարզի Աբովյանի տարածքի – Ռ.Ս.) Քյամրիս (Գյամրեզ-Կամարիս) և Արզնի գյուղերից, որտեղ այժմ ասորիք են ապրում, և որոնք հպատակվելիս են եղել Արսեն Սուլթան Մելիք-Աղամալյաններին՝ ինչպես ճորտեր: Բայց այն ժամանակի խստություններին չդիմանալով՝ մոտավորապես 30 տուն թողնում են իրենց բնակավայրերը և փախչում Լոռի, Թիֆլիզ, Շուլավեր, այնուհետ բավական ժամանակ թափառելուց հետո, գալիս են Ղազախի գյուղերը՝ Աչաջուր, Սևքար, Ռևազլու և զանազան տեղեր, պատսպարվում են բնիկների մոտ, և երբ անհաստատ կացությունից կամ բնիկների սառը վերաբերմունքից բեզարում են (աղբյուրները վկայում են, որ պատճառը հողասակավությունն է եղել – Ռ.Ս.), մտածում են մշտական տեղ գտնել, ցրված տեղերից ի մի են ժողովվում և զանազան կողմերի վրա ընտրված մարդիկ են ուղարկում, որ մի հարմար տեղ գյուղ գցեն ապրեն»[173]:

Եվ հետախույզներն ընտրում են Աղստև և Ուրթիջուր գետակների միախառնման անկյունը կազմող հյուսիսային սարալանջը: Սրա հյուսիսային կողմում գտնվում էր միջնադարերում կառուցված քարվանսարան, որի անունով էլ նորահաստատ գյուղը կոչում են Քարվանսարա և հիմնում փայտե եկեղեցի: Ըստ վավերագրերի, ստուգապես հայտնի է, որ քարվանսարեցիների գաղթը Երևանի մերձակայքից տեղի է ունեցել 1806 թվականին, իսկ նրանց դեգերումները Լոռիում, Շուլավերում, Թիֆլիսի կողմերում և Ղազախի գյուղերում, Կոմիտաս քահանայի հաղորդմամբ, տևել է «բավական ժամանակ», իսկ բանավոր հիշողությունների համաձայն՝ 3-4 տարի: Ուստի կարելի է ասել, որ Քարվանսարա-Իջևանը հիմնադրվել է 1810 թվականին: Կողմնակիորեն դրա օգտին է խոսում այն փաստը, որ 1806-ին Երևանի մերձակա մահալից հեռացած 30 ընտանիքներ՝ աճելով, ըստ 1817-ի մարդահամարի հաղորդման, դարձել էին 54-ը[174]: Այդ ժամանակ գյուղն ուներ 147 արական և 106 իգական սեռի բնակիչ, երկու քյոխվա, երեք հոգևորական, 7 վերստ վարելահող և 9 վերստ

այլ հողատեսքեր: 1820-ական թվականների կեսերին Քարվանսարայից անջատվում են 20 ընտանիքներ, որոնք այլուստ եկածների հետ դառնում են Դիլիջան* և Պողոսքիլիսա (ներկայիս Դիլիջանի Շամախյան թաղամաս) գյուղերի հիմնադիրները: Եվ մինչև այժմ էլ դրանցում և Իջևանում պահպանվում են բաժանված տոհմերի ազգանունները կրող ընտանիքները:

XIX դարի սկզբին ստեղծված այս բնակավայրի մասին առաջին անգամ կարևոր մանրամասներ է հաղորդել ռուսական աղբյուրներից մեկը: Հայտնի է, որ Անդրկովկասին տիրանալուց հետո ռուսական պետությունը նպատակամետ ծրագրեր է իրականացնում երկրամասի բնության ուսումնասիրման համար: Ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո սկսվում է Ղազախի և Շամշադինի դիստանցիաների երկրաբանական վիճակի ուսումնասիրությունը: 1829-ի գարնանն Աղստևի հովիտ է ուղարկվում մի լեռնային արշավախումբ, որը ղեկավարությանը հաշվետվություն պիտի ներկայացներ տարածաշրջանի օգտակար հանածոների մասին: Արշավախումբը, Դաղքյասաման գյուղից դժվարությամբ հասնելով Քարվանսարա, որոշ ժամանակ կանգ է առնում փչացած գործիքները նորոգելու համար: «Հայկական այդ գյուղը,- հայտնում է վավերագիրը,- ոտի մոտ, Աղստև գետի վրա կամուրջ է կառուցված, փռված է սարալանջին: Նրա շուրջը աճում են անտառներ, որոնք բնակիչներին տալիս են ինչպես վառելափայտ, այնպես էլ շինանյութ: Ափերին փռված դաշտերն ու խաղողի այգիներն ամռանը ոռոգվում են գետի ջրերով և առատորեն կվարձատրեն հողագործի աշխատանքը, եթե չլինի բերքահավաքից առաջ տեղացող հորդ կարկուտը: Ինչպես այստեղ, այնպես էլ բոլոր գետերի վրա, գտնվում են բավականին հին և ոչ կատարյալ կառուցվացքի բազմաթիվ ջրաղացներ: Բոլոր ջրաղացները կամ նրանց մեծ մասը գործի են դրվում հորիզոնական թափանիվի միջոցով (այսինքն հարվածի ու ջրի ծանրության լիագումար գործողությամբ), չնայած՝ ջրի անկումը թույլ է տալիս կառուցել բավականին մեծ տրամագծով թափանիվ: Հենց գյուղի մոտ, Երևանից ապրանքներով եկող առևտրականների համար ***կար դեռ թուրքերի***

* 1801-ի փետրվարի 17-ին Ղարաբաղի Իբրահիմ- խանի 200 հրոսակների անասնագողության կապակցությամբ ռուսական չինովնիկների զեկուցագրում Դիլիջանը Դիլիջան ձևով կոչվում է սարամաս կամ տեղավայր:

կողմից կառուցված քարավանատուն, որի փլատակները դեռ նկատելի էին»[175]:

Այս կապակցությամբ ընդունելի է մեր հայրենակից Համլետ Սարգսյանի փաստարկված տեսակետն* այն մասին, որ Քարվանսարա գյուղը «կարող էր հիմնադրվել 1805թ. հետո»: Ինչպես վերն ասվել է, 1770-1773 թվականներին Աղստևի հեվիտ այցելած ռուս գիտնական Գիլդենշտեդը Քարվանսարա անունով գյուղ չի տեսել, այդպիսին չի եղել նաև ռուսական իշխանությունների 1806թ. անցկացրած աշխարհագրի ժամանակ: Իսկ 1817թ. կամերալ ցուցակագրության ժամանակ ոչ միայն առաջին նախադասությամբ ասվում է, թե գյուղի նախնիները 1806 թվին դուրս են եկել Երևանից (պիտի հասկանալ Երևանի խանությունից - Ռ.Ս.), այլ ցուցակի վերջում՝ կարծես մեր օրերի թնջուկը պարզելու նպատակով, հավելվում է. «Նախկին կամերալ ցուցակագրության ժամանակ (այսինքն՝ 1806թ. – Ռ.Ս.) գյուղը դեռ չէր հիմնադրվել, իսկ նրանում բնակություն են հաստատել Երևանից գաղթածներ, որոնցից 147-ը՝ արական, և 106-ը՝ իգական սեռի»: Վավերագիրը նաև հայտնում է, որ հիմնադրման սկզբից Քարվանսարայում եղել է 253 բնակիչ. այնքան, որքան 1817թ. ցուցակագրության ժամանակ: Կարելի է ընդունել, որ այդ ժամանակ նրանք նոր էին եկել Քարվանսարա: Ուստի շարունակում ենք պնդել, որ ներկայիս Իջևանը հիմնադրվել է մոտավորապես 1810 թվականին:

Ողջ XVIII դարի ընթացքում հայ ազատագրական պայքարի գործիչները՝ Ռուսաստանից ռազմական օգնություն խնդրելով, հավաստիացնում էին, թե նման առիթի դեպքում հայերը պատվով կմասնակցեն մարտական գործողություններին և ամեն ինչով կնպաստեն ռուսական բանակի հոգսերի թեթևացմանը: Վրաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, երբ ռուսական բանակը Փամբակից շարժվեց դեպի Երևան, նրան միացան հայրենիքի ազատագրության ապագայով խանդավառ հայ աշխարհազորայինները: 1803-ի ամռանը ռուս-պարսկական սահմանն առաջինը հատեցին գեներալ-մայոր Լեոնտևի զորամասերը և պարսիկների դեմ ճամբար դրեցին Գյումրի գյուղի մատույցներում: Քնած չէր հակառակորդը, որի հրահրմամբ ակտիվացան Բորչալուի, Ղազախի և Շամշադինի թաթար սուլթանները: Նրանք անհնազանդություն հայտնեցին ռուսներին, զենքի դիմեցին՝ չափազանց դժվարացնելով զինամթերքով բարձված գումակների երթը դեպի ռազմաճակատ: Ռուսական բանակի համար թիկունքից կտրելու վտանգ առաջացավ: Զգոն էին նաև հարազատ ժողովրդի մոտալուտ ազատագրության գաղափարով տոգորված հայերը: Առաջինը ռուսներին օգնության նետվեց Վրաստանում հաստատված Գյուլիստանի Մելիք-Աբովի որդին՝ Ռուստամը, իր գլխավորած հայկական հեծյալ ջոկատով: Այս քաջ հայորդին իր զինակիցներից շատերի հետ սեփական կյանքով հատուցեցին ազատարար ռուսներին օգնելու համար: Որդու հերոսական նահատակությունից հետո մարտական մի նոր ջոկատ կազմեց ծերունազարդ Մելիք-Աբովը: Ռուսներին մեծ ծառայություններ են մատուցել 10 ծուխ ունեցող Մելիք գյուղի տանուտեր Հովհաննես Սարիբեկյանը, որը փոքրիկ գյուղը դարձրել էր հայ աշխարհազորայինների հավաքակայան[176], և Աղդան գյուղացի Դոնղուզչի օղլին[177] (Խոզարածի տղան), որի ավազանի անունը դժբախտաբար չի պահպանվել: Վերջինիս գլխավորությամբ գավառի հայկական գյուղերի 2000 աշխարհազորայիններ հանդուգն հարձակումով ծերբակալեցին պարսիկների կողմն անցած վրաց արքայազնին*:

Հարավային Կովկասում ռուսական տիրապետության հաստատման սկզբում հանկարծ կարևոր նշանակություն է ստանում ներկայիս Տավուշի մարզի տարածքը: Կովկասյան բանակի շտաբը որոշում է Հասան-սու (Հախում) գետի ափին և նորահաստատ Մելիք գյուղում ստեղծվել ռազմական հենակետեր: Դիտարկելով ժամանակաշրջանի քարտեզը՝ կարելի է նկատել, որ շահական Պարսկաստանի Երևանի և Գյանջայի խանությունների հետ Ռուսաստանի՝ այդ պահին դեռ չհստակեցված բարդ սահմանագծի վտանգավոր հատվածները կարող էին պաշտպանվել միայն ռազմական բավարար ուժերի միջոցով, որոնք ի զորու կլինեին ամենօրյա հսկողության տակ պահել հակառակորդի կողմից հաճախակի հարձակման և ավարառության ենթարկվող Թովուզ, Հասան-սու, Աղստև, Կիրանց, Ոսկեպար,

* ՏԱՎՈՒՇ - նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ 211:

* Ռուսական արքունիքը չմոռացավ հայերի երախտիքը: Ինչպես հայտնում է ռուս պատմաբան Վ. Իվանենկոն, (Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, ст. 340), Նիկոլայ Առաջին ցարի 1837թ. անդրկովկասյան այցի ժամանակ Ղազախի գավառի տասը հայկական գյուղեր, երբ խնդրանք ներկայացրին իրենց ազատել թուրք աղալարների կախումից, հայցը բավարարվեց:

Կողբ գետերի հովիտները և հետ վանել արշավող զինված հրոսակախմբերին (ի դեպ, արևմուտքից արևելք ձգվող սահմանը Փամբակի լեռնաշղթայի վերջնամասում անցնում էր Բալըղ չայի (Ձկնգետի) հունով և Ծովագյուղից (ներկայիս՝ Գեղարքունիքի մարզ) հարավ ձգվող ձորով միանում Սևանա լճին): Վերը նշված զորակայանների կարևորության և մարտական ուժերի մասին գաղափար կարող է տալ 1801թ. օգոստոսի 1-ին կազմված այս փաստաթուղթը:

Մելիք գյուղում տեղակայված զորամասի հրամանատար փոխգնդապետ Ջորաևը Թիֆլիսում գտնվող գեներալ-մայոր Տորմասովին զեկուցում է, որ Երևանի խանության կողմից՝ Ղազախի գավառի Գուգարաց սարերում գտնվող քոչվոր անասնապահների վրա չդադարող հարձակումները կասեցնելու համար անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել, նախ ինքը կարգադրություն է արել ժամկետից շուտ հոտերն ու նախիրներն իջեցնել ալպիական արոտներից, դրանք տեղավորել Ակսիպարայի, Կունենի, Ջողազի, Դիլիջանի ձորերում, իսկ ***«Նրանց պաշտպանել զինվորներով. Մոլլա դայադում՝ 160, Նալթոքյանի ճանապարհին՝ 60, Կունենի ճանապարհին՝ 40, Ղոշխոթանի ճանապարհին՝ 60, Կոզմանի ճանապարհին՝ 60, Համզայի տեղամասում՝ 25 զինվոր: Իսկ 500 զինվոր ինձ հոտ գտնվում են Աղստաֆայի և Ջողազի մոտ՝ Մելիք գյուղ կոչվող վայրում և եթե երբևէ ինձանից զորք կպահանջվի, ապա հանձնարարության ստացման դեպքում չեմ հապաղի այն կատարել»****:

Այս փաստաթղթով հայտնի են դառնում նորաստեղծ ռազմակայաններից մեկի զինվորների քանակը և սահմանի պաշտպանություն պահանջող կետերը: Գյանջայի խանության գրավումից հետո նախ հանվեց Հասան-սու հենակետը, իսկ 1827-ի հոկտեմբերին, երբ ռուսական բանակը հայ աշխարհազորայինների հետ գրավեց Երևանի բերդը, ազատագրեց Արարատյան դաշտն ու Նախիջևանը, հաջորդ տարվա փետրվարից ռուսական տերության սահմանն արդեն անցնում էր Արաքս գետով: Իրավիճակի նման փոփոխության հետևանքով անմիջապես վերացվեց նաև Մելիք գյուղի ռազմակայանը, որի լինելիության արձագանքները մնացել են վավերագրերում:

Այդ տարիներին ասպարեզ եկավ մի զարմանալի հայ, որը լեռնաշխարհում շրջում էր իր խենթ երիվարով և ձախ ձեռքում սուրբ խաչ ուներ, աջում՝ հատու սուր, թիկունքին՝ հայրենյաց ազատության համար զոհվելու պատրաստ քաջ հայորդիներ:

Հախում փոքրիկ գյուղի հոգևոր հովիվն էր Գրիգոր Մանուչարյանը*: Սքեմի մեջ հեզ հոգևորական էր, ասպազենի մեջ՝ անպարտելի զորահրամանատար: Հայոց ազատագրական ոգորումների պահանջված ծնունդն էր Գրիգոր Հախումեցին, հարազատ ժողովրդի՝ ապրումի զինվորը: Եվ օրինակն այն բանի, թե ինչու խաղաղ հայ շինականն իր կյանքն ու արժանապատվությունը պահպանելու համար թողնում է մաճ ու հորովել, ձեռքը մեկնում զենքի ու մտնում պատերազմի արահետ: Տեր Գրիգորը 1803-ի ամառնամուտին սուրբ Հովհաննես եկեղեցում, որ գտնվում էր Նոր Վարագա վանքի սուրբ Նշան տաճարի դիմաց, ջերմեռանդ աղոթում էր իր նորահաստատ հոտի խաղաղության և ազատարար ռուսների զենքի հաջողության համար, երբ ականջալուր եղավ Շամշադինի, Ղազախի և Բորչալուի թաթարների՝ ռուսների թիկունքում բարձրացրած խռովության մասին, որը վերջին հաշվով ուղղված էր հայերի դեմ: Այդ ժամանակ երեսուն տարեկան էր Տեր Գրիգորը:

Երկրամասում մեծ հեղինակություն վայելող երիտասարդ քահանան անցնում է գյուղից-գյուղ, հրեղեն խոսքով իր շուրջը համախմբում անկախ հայրենիքի համար կռվել ցանկացող երիտասարդ հայրենակիցներին, նրանցից կազմում աշխարհազորայինների հեծյալ ջոկատ ու հանկարծակի հարվածում ապստամբ թաթարներին և ցիրուցան անում: Իմանալով հայ կամավորների քաջագործությունների մասին՝ Կովկասի կառավարիչ գեներալ Պավել Ցիցիանովը ծանոթանում է նրանց հրամանատարի հետ և առաջարկում մասնակցել Երևանի խանության վրա ծրագրված արշավանքին, որի առիթը տվել էին պարսիկները:

Նրանք բանտարկության ու տանջանքների մեջ էին պահում ռուսների պաշտպանած Դանիել կաթողիկոսին: Հայտնի է, որ այդ

* Акты Кавказской Археологической Комиссии, том 4, Тифлис, 1870, ст. 480.

* Մեծ հայի մասին սրտառուչ խոսք են ասել բազմաթիվ ժամանակակիցներ, նաև՝ անմահ Խաչատուր Աբովյանը: Նրա կյանքն ու գործն առաջին անգամ համապարփակ ներկայացրել է Ալեքսանդր Երիցյանը «Ամենայն հայոց կաթողիկոսութիւն եւ Կովկասի հայք XIX դարում» (Թիֆլիզ, 1894թ.) աշխատությունում, ապա՝ Եղիշե Գեղամյանն իր «Պատմական քաղվածքներ»-ում (Բաքու, 1909), որոնցից օգտվել է շարադրանքիս հեղինակը:

արշավանքը ռուսների համար անարդյունք ավարտվեց: Թիկունքից կտրված, փոքրաթիվ և վատ զինված ռուսական ջոկատը, թողնելով Երևանի բերդի պաշարումը, վերադարձավ Վրաստան: Դյուրագրգիռ և կոպիտ իշխան Ցիցիանովը մարտի դաշտում տեսավ ու բարձր գնահատեց Տեր Գրիգորի արիությունը: Սակայն Գրիգոր Հախումեցին Շամշադինի և Ղազախի հայ երիտասարդներից կազմված հեծելագնդով հռչակվեց Ցիցիանովի Գանձակի խանության դեմ 1804-ի ամռանը ձեռնարկված արշավանքի ժամանակ: Վեղարը և հոգևորական տարազը ծալելով տանը, նա հագել էր շինականի չուխա, ծածկել ոչխարենու մեծ փափախ, կապել թուր ու դաշույն և հրացանը ձեռքին, սպիտակ նժույգին հեծած առաջնորդում էր իր գունդը:

«Պարսից հեծելազօրքի հետ կռիւ սկսող և ճակատահար լինողը՝ միշտ Գրիգոր արհին էր լինում իւր կտրիճներով: Սարսափելի էր լինում այս հեզ և համեստ հոգևորականը պատերազմի դաշտում, թուրը հանած միջոցին: Իշխան Ցիցիանովը, որ առհասարակ հայերին չէր համակրում, բայց և այնպէս Գրիգոր եպիսկոպոսի գործած քաջութիւններին ականատես լինելով՝ նոյնիսկ կռւի դաշտում կախեց նրա կրծքին Ս. Գէորգի չորրորդ աստիճանի զինուորական խաչը և 300 ռուբլի մշտական թոշակ նշանակեց: 1808 թուին էլ կոմս Գուդովիչը Երևանի վրայ արշաւելիս՝ իր հետ տարաւ նաև Մանուչարեանցին իր կտրիճներով: Այստեղ, Նախիջևանը վեր առնելիս, եպիսկոպոսը մեծ կոտորած անելով և թշնամու արեան մէջ շաղախուած՝ ինքն էլ վէրք ստացաւ և հազիւ մահից պրծաւ: Կոմսի առաջարկութեամբէ կայսրը առանձին հրովարտակով նրան շնորհեց Վլադիմիրի և Աննայի շքանշանները և 300 ռուբլու փոխարեն 600 ռուբլի թոշակ կապեց»[178]:

Պարսկաստանի հետ խաղաղություն հաստատվելուց հետո Գրիգոր եպիսկոպոսը «զորացրեց» իր հեծելագունդը, անշուշտ, հարկավոր պահին իր կանչով հավաքելու պայմանով, իսկ ինքը քաշվեց իր հայրենի Հախում գյուղը և նորից ստանձնեց Նոր Վարագա սուրբ Նշան վանքի վանահայրությունը: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, այստեղ նա աճեցնում է հայ եկեղեցու տասնյակ սպասավորներ, մասնակցում երկրամասի նորահաստատ գյուղերում եկեղեցիների կառուցմանը, ձեռնադրում բազմաթիվ քահանաներ: Եվ այս աշխատանքը նա նվիրյալ քրիստոնյայի

ընթացքով շարունակում է մինչև մահը (1846թ): Միայն երբեմն, երբ նա լսում էր, թե թուրք ավազակները հայերից տավար են գողացել կամ մարդ են սպանել, իսկույն վեղարը փոխում էր փափախի, կապում զենքը և ձի հեծած թռչում էր չարագործներին պատժելու: Նրանից առհասարակ սարսափում էին թուրքերը և կոչում էին «Դալի քեշիշ» (խենթ տերտեր), իսկ հայերն ակնածում և խորապես հարգում էին իրենց աստվածաշնորհ հոգևոր հորն ու անձնուրաց պաշտպանին:

1813 թվականին ռուս-պարսկական պայմանագիրը, ըստ որի Ռուսաստանին անցան Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի, Բաքվի և Դերբենդի խանությունները, չէր համապատասխանում պարսից կառավարության նպատակներին, որը առիթ էր որոնում կորցրած տարածքները հետ գրավելու համար: Իսկ նման առիթ հանդիսացավ 1825-ի նոյեմբերի 19-ին Ալեքսանդր Ա ցարի մահից հետո ստեղծված կացությունը: Քանի որ Ալեքսանդրը անզավակ էր, ապա երկրորդ եղբայրը՝ Կոնսատանդինը, պիտի լիներ թագաժառանգը, սակայն սա հանդես եկավ ինքնահրաժարականով: Ըստ գոյություն ունեցող կարգի, կայսերական գահին բազմեց երրորդ եղբայրը՝ Նիկոլայ Պավլովիչը (Նիկոլայ Ա): Սակայն երկու օր անց թիկնապահ մի քանի գնդերի (գվարդիական) մասնակցությամբ նոր կայսեր դեմ ապստամբություն բարձրացավ, որը շատ արագ ճնշվեց: Պարսկաստանում մտածում էին, թե դա կվերաճի քաղաքացիական կռվի և ապստամբությունը Ռուսաստանի թուլության նշան է, ուստի պահը հարմար է նրան Անդրկովկասից դուրս քշելու համար: Եվ, ահա 1826-ի հուլիսի 16-ին պարսից մեծաքանակ զորքերը լցվեցին Շորագյալի և Փամբակի սահմանից ներս, ուր ռուսական սակավաթիվ զորքեր էին կանգնած: Ռուսաց դեմ ապստամբեցին Գանձակի, Շամշադիլի, Ղազախի, Բորչալուի, Փամբակի և Շորագյալի թաթարները: Փամբակում և Շորագյալում ծավալված կռիվների ընթացքում ռուսական սակավաթիվ զորամասերի հետ քաջաբար կռվում էին հայ տղամարդիկ, երիտասարդներ, անգամ աղջիկներ (նրանց սխրանքն իր անմահ վիպասքում նկարագրել է Խաչատուր Աբովյանը): Ուժերն անհավասար էին: Այդ գավառների հայկական գյուղերը նորից ավերվեցին, դարձան անմարդաբնակ և լի էին դիակներով: Հուսահատություն էր տիրում, որովհետև Ղարաբաղի կողմից դեպի Թիֆլիս առաջացող պարսկական 50-հազարանոց զորքի դեմն առնելու համար

ռուսները բավարար ուժեր չունեին: Այդ պահին Ղազախում կանգնած զորքի հրամանատարությունը հանձնարարվեց ռուս-թուրքական (1808-1810թթ.) և Նապոլեոնի դեմ մղած (1812-1814թթ.) պատերազմների հերոս, հայազգի գեներալ իշխան Վալերիան Մադաթովին, որը անպարտելիության համբավ ուներ թուրքերի ու պարսիկների շրջանում: Ռազմաճակատի գծում նրա հայտնվելն ահա թե ինչպես են նկարագրել պարսիկները. «Մի քանի օրից յետոյ հրեշտակի պես Աղստափում յանկարծ երևեցաւ կեավյուր Մատաթովն Ներսէս անուն (խոսքը Վիրահայոց թեմի առաջնորդ ապագա Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի մասին է - Ռ.Ս.) մի հայ եպիսկոպոսի հետ սակաւաթիւ զօրքով, որը դաշտումն թողոլով՝ ինքն եպիսկոպոսին հետ ելաւ լեռներն, և յորդորելով ռուսաց զօրաց յետ միացրին լեռներն ապաստանած գաւառցի հայ տղամարդիքը հեծելազօր կազմած»[179]:

Իսկ նույն աշխատության մեջ տեղ գտած այլ վավերագրերից պարզ է դառնում, որ Ղազախի գավառի հայերից կազմվել է 2000-ոց հեծելազոր, որին շուտով միացել են Նոր Վարագավանքի առաջնորդ Գրիգոր Մանուչարյանցի 500 հեծյալ կտրիճները:

Հայոց համար պահի կարևորությունը շատ խորն է գիտակցում Գ. Մանուչարյանի հոգևոր եղբայր, Վիրահայոց թեմի առաջնորդ, ապագա ամենայն հայոց կաթողիկոս Ներսես արքեպիսկոպոսը: Հայերն ազատ ու խաղաղ ապրել կարող էին պարսից բռնատիրության լուծը թոթափելուց հետո, իսկ այդ նպատակն այժմ կարելի էր իրականացնել ռուսական զենքի զորությամբ, ուստի նա ռուսներին մղում էր Պարսկաստանի դեմ, և նրանց օգնելու կոչով դիմեց Անդրկովկասի հայերին՝ բացատրելով հայոց գլխին թափված արհավիրքների պատճառն ու վիճակից դուրս գալու ելքը: «Հասաւ ժամը,- գրում էր Ներսեսը,- երբ աչքով պիտի տեսնենք Արարատեան աշխարհի և հայոց ազգի ազատութիւնը. երբ Մայր Աթոռը պիտի վերականգէ իր վաղեմի անկախութիւնը. ոտքի կանգնեցէք, Հայոց քաջեր, թոթափեցէք պարսից լուծը, ուրախացրէք ալեզարդ Մասիսին, մի անգամ արիւնով ներկեցէք հայրենի հողերը և ապա ապրեցէք ազատ: Ժամն է արդէն, օ~ն անդր հիմա կամ երբէք»[180]: Նաև՝ «մեռնենք քաջութեամբ և առանց հայրենեացը դաւաճանելու և այդպիսով ժառանգենք մեր նախնեաց պանծալի անունն ու փառքը»: Հայերի ազատագրական ձգտումները համահունչ էին ռուսական կայսրության նվաճողական նպատակներին, ուստի ռուսները Ներսես սրբազանին օգնեցին հայ-

կական զորագնդեր կազմելու գործում:

Իսկ մինչ նորից ռազմական մեծ գործողությունների մեջ մտնելը, Գրիգոր Հախումեցուն հարկ եղավ կատարելու Ներսես արքեպիսկոպոսի չափազանց կարևոր հանձնարարությունը: Բանն այն է, որ Երևանի խանի սպասվող բռնություններից փրկվելու նպատակով 1826-ի ամռանը Եփրեմ կաթողիկոսը, մի թուլակամ անձնավորություն, էջմիածնից փախչելով ապաստանել էր Հաղբատի վանքում: Պարսիկները հենց տեղական ապստամբ թուրքերի միջոցով, որոնք բռնել էին Թիֆլիս տանող ճանապարհները, կարող էին կաթողիկոսին հեշտությամբ փախցնել անպաշտպան վանքից: Ներսեսը ծեր կաթողիկոսին իր մոտ՝ Թիֆլիս, հասցնելու հանձնարարություն տվեց Գրիգոր եպիսկոպոսին: Սա 40 հեծյալներով օգոստոսի սկզբին հասնում է Հաղբատ և կաթողիկոսին վերցրած գաղտնի հեռանում դեպի Թիֆլիս: «Սակայն չնայած ամեն տեսակ նախազգուշութիւններին՝ Բօրչալուի դաշտում Խրամ գետի ափին, կաթողիկոսական խմբի վրայ պարսկական մի հեծելագունդ յարձակուեցաւ, որ բաղկացած էր 300 հոգուց: Սկսուեցաւ անհավասար կռիւը թրերով: Գրիգոր եպիսկոպոսի տակի ձին ընկաւ, նա մի այլ ձիու վրայ թռաւ և ամենայն արիութեամբ շարունակում էր ինքը և իւրայինները կատաղի կռիւը: Ի վերջոյ՝ Մանուչարեանցը ինքը հոգի, երկուսը իր ամենամօտ ազգականներն էին, կորցնելով՝ և բաւականին թուրք կոտորելով՝ կարողացաւ Եփրեմ կաթողիկոսին անվնաս Թիֆլիս հասցնել»[181]:

Կովկասի կառավարչապետ գեներալ Ալեքսեյ Երմոլովը, անշուշտ, գիտեր եպիսկոպոս-զորավարի անցյալը, իսկ այժմ Վրաստանի հայոց թեմի առաջնորդից լսելով վերջին քաջագործության մասին, նրան խնդրեց մասնակցել դեպի Գանձակ ձեռնարկվող ռազմարշավին և որ նա զսպի տեղական թուրքերի ապստամբությունն ու վերադարձնի պարսիկների գերի տարած մի քանի հարյուր տուն գյուղացիներին: «Դալի քեշիշը», որը թուրքերի համար առասպելական, անհաղթ հերոս էր դարձել, նորից հավաքեց իր 500 կտրիճներին, միացավ պարսիկների դեմն առնելու համար մարտադաշտ հրավիրված ռուսական բանակի հայ գեներալ, իշխան Վալերիան Մադաթովին և անթերի կատարեց գլխավոր հրամանատարի առաջադրանքը: Նա հսկում էր ճանապարհները, թիկունքից կտրված ռուսական առաջապահ բանակին ապահովում պարենով, շտաբին հե-

տախուզական անհրաժեշտ տեղեկություններ հաղորդում, իսկ օգոստոսի 22-ին փակելով պարսից Զոհրապ խանի նահանջի ճանապարհը՝ նրան ուժգին հարվածեց թիկունքից: Դրա շնորհիվ ռուսական փոքրաթիվ զորքը հնարավորություն ստացավ ամբողջապես ջարդելու պարսիկներին և ապստամբ թուրք աղալարներին: Ապա Գրիգոր եպիսկոպոսը Մադաթովին հանձնեց չորս նշանավոր լրտեսների, որոնք շահի ֆերմաններով գնում էին ընդդեմ ռուսների ոտքի հանելու Ղազախի և Բորչալուի մահմեդականներին: Հասա-սու (Հախում) գետի մոտ Երմոլովը թեժ կռվի պահին անձամբ ականատես եղավ զարմանալի հայի քաջությանը, գրկեց նրան, համբուրեց և խնդրեց ասել, թե ինչպես հատուցի անձնվեր ծառայության դիմաց: Անանձնական երջանկության ասպետը պատասխանեց, որ ինքն անձամբ ոչնչի կարոտ չէ, բայց անօրենություն է համարում, որ թուրք աղալար և բեկ կոչված ազնվականները վաղուց ի վեր տեր են դարձել հայոց գյուղերին ու նրանց կալվածքներին և, ծանր հարկ առնելով, կեղեքում էին հայ ազգաբնակչությանը, այն էլ՝ ներկա քրիստոնյա իշխանության ժամանակ: Երմոլովի առաջարկությամբ տեր Գրիգորն իր խնդրանքը ներկայացրեց գրավոր, որին հետևեց կառավարչապետի սրտառուչ պատասխանը՝ եպիսկոպոս-զորավարի քաջագործությունների մանրամասն շարադրանքով և իր վճիռը:

«Յարգելով ձեր ինձ մատուցած տեղեկագրի մէջ յայտնած մտքերը,- պատասխանում է Երմոլովը,- ես հրամանագրեցի Շամշադիլի գլխավոր վերակացուին, որ նոյն գաւառակի հայերիեն բոլորովին ազատելով թուրքերի (ազնուականների) իրաւասութիւնից՝ արձանագրէ որպէս արքունի: Իսկ ինչ որ կը վերաբերի բոլոր հայոց ընդհանուր կախումն ունենալուն մնացած թուրքաբնակ գաւառակներում, ես այդ ևս անմիջապէս կը կարգադրեմ և պաշտօնապէս կը հրատարակեմ ի գիտութիւն ամենեցուն»[182]: Գրիգոր Մանուչարյանն իր քաջ զինակիցներով նաև մասնակցեց Ասրիկ գետի հովիտ մտած Մահմադ Զաման խանի ու շրջակա ապստամբ աղալարների ջախջախմանը, ապա՝ Շամքորի և Գանձակի հաղթական ճակատամարտերին, ուր՝ որպես մարտադաշտի հերոս, հայոց անունը փառքով պսակեց:

Հայտնի է, որ 1826-ի ամռանը ծավալված ռուս-պարսկական նոր պատերազմի ժամանակ պարսից Աբաս-Միրզա թագաժառանգը՝

հանկարծակի մտնելով Անդրկովկաս, մեծաքանակ զորքը բաժանեց երկու մասի: Հիմնական ուժերը նա՝ վստահելով իր Մահմատ-Միրզա որդուն, ուղարկեց դեպի վրացական սահման, այնտեղից առաջացող գեներալ Վալերիան Մադաթովի (Մադաթյան) դեմն առնելու համար, իսկ ինքը ստանձնեց Շուշի բերդի պաշարումը: Սակայն նախ Ասրիկ գետի հովտում, ապա Շամքորում պարսից բանակը սաստիկ պարտություն կրեց, որի կապակցությամբ Մահմատ-Միրզան հորն ուղարկած զեկուցագրում չմոռացավ հատուկ հաղորդել «հայ հեծելազօրքի բուռն հարձակումների» մասին: Դրությունը շտկելու նպատակով թագաժառանգը դադարեցրեց Շուշիի պաշարումը և, զորքի ավելորդ ծանրությունները թողնելով Թարթառ գետի աջ ափին, շուտափույթ առաջանալով, Քյուրակ-չայ գետի ափին միացավ իր հիմնական զորաբանակի հետ: Մահմատ-Միրզան հորը հայտնեց, թե ինքը՝ տեսնելով Մադաթովի բանակի անկասելի առաջխաղացումը դեպի Գանձակ, «աւելի ընտրած է թշնամուն թողուլ գրաւած Գանձակը՝ քան թէ վիատեալ զօրքով պատերազմել Մատատովի հետ և կրկին հաղթուիլ. թէ մանաւանդ պարսիկ հեծելազօրքն վիատելով թուլացած էր հայ հեծելազօրքի հնարիմաց և կատաղի յարձակումներից, որ ինքեանք կիրթ գոլով՝ անվնաս էին մնում, իսկ մեծապէս կոտորած անում և վիրաւորում իւրյանց հակառակորդները»[183]:

Մադաթովը շարունակեց պարտված ու «վիատեալ» հակառակորդի հետապնդումը, սակայն առաջին գծից հետ քաշելով, Մանուչարյանի հեծելագնդին մարտական նոր, կարևոր առաջադրանք տվեց: Այն օրերին, երբ ռուսները պարսիկների հետ բախվում էին Ասրիկ գետի հովտում և Շամքորում, Երևանի Սարդարի եղբայր Հասան խանը մեծ հեծելագնդով պատրաստվում էր ռուսների հիմնական ուժերին թիկունքից հարվածել Դիլիջանի և Լոռվա կողմից: Ավելին, Աբաս-Միրզան Հասան խանի առաջխաղացմանը նպաստելու համար լեռնային ճանապարհով այնտեղ ուղարկեց վրաց Ալեքսանդր թագաժառանգին, որը Վրաստանի թագավորությունը վերահաստատելու և թագադրվելու նպատակ էր հետապնդում: Հակառակորդի առաջխաղացումը կանխելու, Սևանի կողմից սպասվող հարվածը չեզոքացնելու համար Դիլիջանի ձորի պաշտպանությունը հանձնարարվեց Գրիգոր Մանուչարյանի հեծելագնդին, իսկ Լոռվանը՝ գեներալ Դավիդովի վաշտերին: Նրանք, ճշտորեն կատարելով երկրամա-

սի կառավարչապետ Երմոլովի հրահանգները, հենց սահմանագլխին ջարդեցին Հասան խանի ուժերը և փախուստի մատնեցին*:

Շուտով Գրիգոր արքեպիսկոպոսն իր հեծյալ քաջերով մասնակցեց նաև Երևանի բերդի գրավմանը, որը դարձավ հայոց բազմադարյան ոգորումների մի կարևոր փուլի ավարտը: Այդ առթիվ հայոց մեծերն իրար աչքալուսանք ու շնորհավորանք էին հղում: Հարություն Ալամդարյանը գրում է Ներսես Աշտարակեցուն. «Շնորհավորում եմ Հայաստան աշխարհի փրկությունը անագորույն պարսից երկաթե հնոցից»: «Աչքներս հազար լույս,- գրում էր Մեսրոպ Թաղիադյան հայրենասերը,- որ մեր քաղցր աշխարհը պարսից դառն չարչարանքից ազատվեց»: Գալիք սերունդներին ուղղված իր ասելիքը գերազանց գիտեր Խաչատուր Աբովյանը, որին հետագայում տհասները մեղադրեցին կույր ռուսասիրության մեջ: Նա հայաթափված հայրենիքում հայոց անողորմ ճնշումների ու վերջնական սպառումի ականատեսն էր եղել և ինչպես չքնդար նրա ցավացած սիրտը. «Դժողքի քնդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալու, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար... Օրհնվի էն սհաթը, որ Ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ... Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթական զենքով վերակենդանացած իմ հայրենիքի ազատագրության օրերին ու՞մ հոգին կարող էր այնքան խանդավառված լիներ այդ երջանկության հրճվանքով, եթե ոչ իմը»:

Եվ մինչև երանելի խաղաղության հաստատումը, հայրենյաց թշնամիների դեմ մղած կռիվներում Գրիգոր Հախումեցու հետ էին Հակոբ Փայտյանը, Լյուլասազենց Գրիգորը, Բելլու Քալանթարը, Գրիգոր Մելյանը, Սևունց Բոլին, Սավրունց Տեր Գրիգորը, Սոսի աղա Քալանթարյանը, Մելիք Հոհանջանը, որսորդ Խամսի Թունին, Առստակ Մելիքյանը, Բրուտ Սարգիսը, Գրիգոր Մանուչարյանի եղբայր Գալուստը, Սարգիս Լալիգեղցին, Սերգեյ (Սարգիս) Վարշամովը, Հովհաննես և Ադամ Ալիբեկյանները, բժիշկ Հովհաննես Բաղրամովը, Թաղիբեկյանը, Արան և շատ ուրիշ հերոսներ: Երբ վերջապես խաղաղություն հաստատվեց Անդրկովկասում, հայերը այլ երկրներից բռնեցին տունդարձի ճանապարհը, Գրիգոր արքեպիսկոպոսը քաշվեց մեծ անցուդարձերից հեռու ծվարած Նոր Վարագավանք՝ տրվելով ջերմեռանդ աղոթքներին և ուսումնատենչ պատանիների կրթությանը: ***Եվ հանգավ ի Քրիստոս 1846 ամի*** ու թաղվեց Հին Հախում գյուղի սուրբ Հովհաննես եկեղեցու գավթում: Հավերժական հանգստի վկան ՈՂԷ (1248) թվականին կերտված ոչ մեծ խաչքարն է, որի թիկունքին XIX դարի կեսին փորագրվել է մեծ հայի հարթաքանդակը: Նա պատկերված է իր հավատարիմ նժույգի վրա, ձախ ձեռքում ունի խաչ, աջում՝ հրացան: XIX դարի երկրորդ կեսին գյուղը տեղափոխվեց Հախումի ձորի արևահայաց ձախափնյակ: Հետո քաղաքական ցնցումներ եղան աշխարհում: Գրեթե մոռացության մատնվեց սրբասուն արքեպիսկոպոսը, անանձնական երջանկության քաջ ասպետը: Տողերիս հեղինակի առաջարկով 1997-ի ամռանը, մասնակցությամբ Տեր Գրիգորի զարմիկ Գրիշա Մանուչարյանի և քահանայությամբ տեր Դերենիկ աբեղա Դավթյանի, գրեթե մեկուկես դար ընդմիջումից հետո հոգեհանգստի կարգ կատարվեց մեծ հայի գերեզմանին, որը չպետք է պատված մնա մոռացումի մացառներով, այլ հառնի մեր լեռնաշխարհի մի երևելի կետից: Միայն այսպես Նա կշարունակի իր կիսատ մնացած գործը՝ որպես հայոց հավատքի նվիրյալ սպասավոր, որպես հայոց հողի պաշտպան, գալիք սերունդների դաստիարակ:

Սակայն դառնանք մեր աշխատության բուն շարադրանքին: Ինչպես վերն ասվեց, 1806 թվականին ռուսական իշխանությունները Վրաստանում անց են կացնում աշխարհագիր: Ըստ պաշտոնական վիճակագրության, 1802-ին հաջորդած չորս տարում Լոռվա գավառի Ղազախի դիստանցիայում վերահաստատվում են նախորդ դարում ավերված Ռևազլու (Դիտավան), Մելիք գյուղ (Ներքին Ծաղկավան), Պիպիս (Բերքաբեր), Շամշադինի դիստանցիայում՝ Թաթլու (Պառավաքար), Հախում (Վարագավան), Թովուզ ղալա (Բերդ), Թովուզ քյանդ (Տավուշ) և Ղարաղոյլի (Արծվաբերդ) գյուղերը: Իսկ հետագա 11 տարում, մինչև 1817 թվականի հունվարի 26-ի մարդահամար, նշված ոստիկանական դիստանցիաներում հիմնադրվել են Քարվանսարա (Իջևան), Կուրումսլու (Բարեկամավան), Թազաքյանդ (Նորաշեն), Գյունաշ (մարած) և Ճլիան (Կուրի ափին, մարած) գյուղերը: Այդ ընթացքում հայերն՝ առանձնանալով, հեռացել են խառը բնակչություն ունեցող Ալի-բեգլու և Կիրիխլու գյուղերից:

Անհրաժեշտ է նկատել, որ 1817-ի աշխարհագրի համար պատաս-

* Ավելորդ չէ հայտնել, որ Մադաթովից կրած պարտությունից հետո Աբաս-Միրզան ցանկացավ ռուսների դեմ ոտքի հանել Գուգարաց սարերում գտնվող ղազախ ցեղի թուրքերին, բայց սրանք Աղստևի նեղ ձորում կոտորեցին պարսիկներին, որոնք վայրենաբար բռնաբարել էին ղազախցիների բոլոր աղջիկներին ու տղաներին: Այստեղից Աբաս-Միրզան ճողոպրեց Երևան:

խանատու ռուս պաշտոնյաները տարբեր մոտեցումներ են դրսևորել իրենց առաջադրված խնդրի նկատմամբ և տարբեր արդյունքների են հասել գյուղերն ու դրանց ծխատեր գյուղացիներին ցուցակագրելիս: Եթե Ղազախի դիստանցիայի համար պատասխանատուն կարևոր է գտել ըստ գյուղերի նաև 1806-ին բնակչության քանակը ներկայացնելը, որը կարևոր է բնակչության շարժը դիտարկելու տեսակետից, ապա Շամշադինի պատասխանատուն՝ դա անտեսելով, ներկայացրել է գյուղերի բնակիչների որտեղից եկած կամ հնաբնակ լինելը: Ի դեպ, Տավուշի մարզի հայ բնակիչներն ի սկզբանե, գրեթե ամբողջովին, եղել են պետական գյուղացիներ և փաստաթղթերում, պարսկական տիրապետության ժամանակների պես, շարունակել են կոչվել «խաս» տերմինով: Ճորտեր եղել են միայն Չորաթան գյուղի 7 ծխեր, որոնք պատկանել են Քալանթարյան տոհմի մելիքներին:

1820-1830-ական թվականներին շարունակվում է այլուստ գաղթած հայերի վերաբնակեցումը Ղազախի դիստանցիայի գյուղերում և նոր բնակավայրերի հիմնումը: 1825 թվականին Անդրկովկասի ռուսական կառավարության տնօրինությամբ Քարվանսարայից և մերձակա գյուղերից վերաբնակեցված ընտանիքները վերահիմնում են Դիլիջան (Հին Դիլիջան[184])և Պողոսքիլիսա գյուղերը, որոնցում բնակություն են հաստատում Սևքար, Աչաջուր, Ռևազլու, Խաշթառակ, Կունեն և այլ գյուղերից եկածները: 1840-ական թվականների սկզբին Աչաջուր գյուղից վերաբնակված նախկին ջրաբերդցիները հիմնում են Ջարխեչ (1940-ից՝ Կույբիշև, 1995-ից՝ Հաղարծին) գյուղը, որն իր նախնական անունը ստացել էր Աղստև գետի աջ ափի հնավայրում բարձրացող ժայռին ***շարքով կանգնեցված քսանվեց մեծ ու փոքր խաչքարերից:*** Կոչվել է նաև Շարխաչ կամ Ջառխաչ, ապա՝ աղավաղվելով դարձել Ջարխեչ, և ափսոս, որ XX դարի քաղաքական վայրիվերումների մեջ գյուղին պարտադրվել են նոր անուններ, փոխանակ վերահաստատելու՝ կորցրել է իր գեղեցիկ հայեցի Շարխաչ անունը: 1852 թվականին Կոթի, Կուրումսլու (Դոստլու), Սռի և ապա Դովեղ գյուղերից տեղափոխված երկու տասնյակ ընտանիքներ հիմնում են Գոշ գյուղը՝ կիսավեր Գոշավանքի մոտակայքում:

Ղազախի դիստանցիայի հայկական գյուղերի ծխերի բնակչության քանակը 1806 և 1817 թվականներին*:

Գյուղերի անվանումը	1806թ.		Ծխերի քանակը	1817թ.	
	Բնակչության քանակը			Բնակչության քանակը	
	արական	իգական		արական	իգական
Լալիքյանդ	90	72	20	56	58
Ռևազլու	73	30	10	27	18
Ուզունթալա	99	81	31	87	55
Խաշթառակ	76	79	16	48	28
Քարվանսարա	-	-	54	147	106
Թալաքյանդ	56	72	10	26	18
Ղարանլուխդարա	35	75	13	41	31
Աղդան	167	136	32	66	45
Հաչասու**	283	233	61	185	124
Ղարադաշ	318	293	79	182	207
Կլինչքյանդ	137	100	26	85	61
Մելիքքյանդ	35	27	15	43	28
Պիպիս	187	155	41	129	121
Կունեն	121	116	33	76	70
Կոթի	267	280	41	138	131
Ակսիպար	82	63	19	56	47
Ղոշխոթան	112	115	19	66	88
Կուրումսլու	-	-	20	52	60
Բաղանիս	49	26	10	36	23
Ղալաչա	362	287	81	195	217
Բարանա	128	152	17	28	43
Կողբ	207	172	37	89	101
Ընդամենը	**2894**	**2964**	**685**	**1828**	**1680**

* Կազմվել է ՀՀ ԱԱ 93 ֆոնդի (ց. 1, գ. 9, թթ.29-56) տվյալների համապատասխան:

** Գյուղի անվան ներկա Աչաջուր գրության ձևը գալիս է Հաչաջուր (թուրքերեն՝ Հաչասու) ձևից: Եվ ճշտորեն բացատրվում է երկճղանի ցցի՝ հաչայի, նմանվող գետակի ափերին գտնվելու պատճառով, որի մոտակայքում կանգուն է Մակարավանքի ճարտարապետական համալիրը:

Թաթար-մոնղոլների տիրապետության քայքայման ժամանակներում (XIV-XV դարերում) գրեթե հայաթափված Գետիկի հովտում սկսում են բնակվել կարա-կոյունլու ցեղի թուրքմենները, ապա՝ թուրքական ղազախ ցեղի ենթաճյուղը հանդիսացողները, որոնց անունով ձորահովիտը կոչվում էր Ղազախի գավառ, իսկ նրանց մնացորդներին XX դարի կեսերին, որ ապրում էին Գետիկի ձորում, կոչում էին «ղարափափախներ» (սև փափախավորներ): 1988-ին, Սումգայիթի հայերի նկատմամբ ադրբեջանցիների կողմից իրականացված եղեռնագործությունից հետո, նրանք ութ ամիս շարունակեցին խաղաղ և անվրդով ապրել հայոց հողի վրա: Սակայն նոյեմբերի վերջին, ականջալուր լինելով Ադրբեջանում սկսված հայերի բռնագաղթին, ինքնակամ լքեցին իրենց գյուղերը: Դրանցում բնակություն հաստատեցին մեր հայրենակիցները՝ 1991-ին Սալահը կոչելով Աղավնավանք, Փոլադը՝ Խաչարձան, Վուրղունը՝ Հովք: Խաչարձանի համայնքի մեջ է մտնում նաև Գեղատափ կոչված նախկին Մուրթել գյուղակը:

Հողի սակավության պատճառով 1840-ական թվականների սկզբին Աղդան գյուղի բնակչության մի ստվար հատվածը տեղափոխվում է Ուրթիջուր գետի հովտում գտնվող իրենց աշնան սար և հիմնում Վերին Աղդան գյուղը, ուստի մայր բնակավայրն էլ սկսում է կոչվել Ներքին Աղդան: 1970 թվականին Ներքին Աղդանը վերանվանվել է Ակնաղբյուր, իսկ Վերին Աղդանը 1978-ին՝ Գանձաքար: 1840 թվականի վավերագրերում նշված է նաև Քրդևանը, որի բնակիչները առանձնացել էին Սևքարից, տնտեսական նպատակահարմարության պատճառով հիմնվել գյուղի ձմեռանոցներից մեկում: Քրդևանը 1935 թվականին վերանվանվել է մայիսյան ապստամբության ղեկավարներից մեկի՝ Ենոք Մկրտումյանի, պատվին՝ Ենոքավան:

1927-ին, Հայաստանում փայտամշակման արդյունաբերության առաջին քայլերի հետ, անտառի աշխատողների բանավան է հիմնվում Կիրանց գետի հովտում՝ ճիշտ նախկին Կունեն գյուղի տեղում: Այժմ բնակավայրը կոչվում է Աճարկուտ: 1870-ական թվականների սկզբին, երբ նոր էր սկսել շահագործվել Ղազախ-Դիլիջան-Երևան խճուղային ճանապարհը, ժողովրդի խոսքով՝ «ռսի ճամփեն», ստեղծվեց Ուզունքալայի փոստային կայանը: 1930-ականներին այստեղ կառուցվեցին ծխախոտի հումքի նախնական մշակման (ֆերմենտացիայի) գործարանը և նրա բանվորական ավանը: Հետագայում դա սկսեց կոչվել Կայանավան գյուղ և այժմ գտնվում է Այգեհովիտ համայնքի կազմում:

1900-ական թվականների առաջին կեսին Խաչքառակի մերձակայքում սկսեց ձևավորվել Ծռվիզ գյուղը, որը 1978-ից կոչվում է Լուսահովիտ: Տավուշի մարզի ամենաերիտասարդ բնակավայրերից է Ազատամուտ գյուղը, որը՝ որպես Իջևանի «Բենթոնիտ» կոմբինատի բանավան, հիմնադրվել է 1972 թվականին և անվանակոչվել 1978-ին: XX դարի առաջին կեսերի ծնունդ է Թեղուտ գյուղը, որը առանձնացել է Հին Ջարխեչից:

1845 թվականին Ղալաչայից (Բերդավան) վերաբնակված 20 ընտանիք սկսում են Դովեղ գյուղի տարեգրությունը: Սա կոչվել է նաև Բալաքյանդ, թուրքերեն՝ Փոքր գյուղ:

1840-ական թվականներին Ղազախի գավառի հյուսիս-արևմտյան կողմերում՝ Դեբեդի աջափնյակում, եղել են Կարմունջ, Ճանդար, Թարքևին, Ճալա, Արճիս և Շնող գյուղերը: Մակար Բարխուտարեանցը հայտնում է, որ արճիսցիները տեղափոխվել են Շնողից[185], որի նախնիները դարաբաղցիներ են: Իսկ Լճկածորի բնակիչները նախ գաղթել են Բորչալու բերդի մոտ գտնվող Ուլաշլու գյուղ, ապա՝ Ճալա և Թարքևին, XIX դարավերջին հաստատվել ներկայիս տեղում: Լճկածորը կարճ ժամանակ կոչվել է նաև Նորաշեն:

Առժամանակ Ղազախի գավառի մեջ է մտել նաև նախկին Թումանյանի շրջանի Մարց գյուղը, որովհետև նրա բնակիչները համախումբ տեղափոխվել էին Ղալաչա գյուղից: 1874 թվականից պատմական ասպարեզ է գալիս Ջուջևան գյուղը, որի բնակիչները գաղթել էին Հաղբատ և Ջալու գյուղերից: XIX դարավերջին, Թիֆլիս -Ալեքսանդրապոլ երկաթուղու շինարարության ընթացքում, սկսեց ձևավորվել Այրում գյուղը, որը կտրուկ առաջընթաց ապրեց 1950-ականներին, Չորագետի հարթավայրում այգեգործության զարգացման և Բանավանում պահածոների գործարանի շինարարության հետ: Աշխատուժի ներհոսքի և երկաթուղային կայարանի կից լինելու շնորհիվ, Այրումը դարձավ մեծ բնակավայր և այժմ ունի քաղաքի կարգավիճակ: Անցած դարի կեսերին բուռն վերելք ապրեցին Չորագետի անապատը եզերող, խառը բնակչություն (հայ, ռուս, ադրբեջանցի) ունեցող գյուղերը: Նախկին Լամբալու գյուղը նախ 1960-ին կոչվեց Դեբեդաշեն, ապա Հայաստանի այգեգործության մեծ երախտավոր, աշխատանքի հերոս Բագրատ Վարդանյանի

պատվին՝ Բագրատաշեն (1972թ.): Այդ ընթացքում ձևավորվեց «Լալվար» տնտեսության երկրորդ տեղամասը, որը հետագայում դարձավ առանձին գյուղ և 1978-ից կոչվում է Դեբեդավան: Այդ ժամանակների ծնունդ է Այրումի խաղողագինեգործական տնտեսությանը կից ստեղծված Պտղավան գյուղը: 1972-ին Չորագետի հարթավայրի հյուսիսային կողմում հիմնվել է Դեղձավան գյուղը, որի բնակիչները եկել են նախկին Նոյեմբերյանի շրջանի և Վրաստանի հայաբնակ գյուղերից:

Անշուշտ, Շամշադինի ոստիկանական դիստանցիայի «հնաբնակ» կոչվողներն այն հայերն էին, որոնք, Աղա-Մահմադ խանի մահասփյուռ արշավանքից և նրա դաշնակից Գանձակի Ջավադ խանի գերեվարությունից մազապուրծ՝ մի քանի տարի թափառում էին Մուրղուզի անմատչելի լեռներում ու Գետիկի ձորի անտառների խորքերում և խաղաղ կյանքի վերադարձան ռուսական տիրապետության հաստատումից հետո: Նկատելի է, որ «հնաբնակ» գյուղերի բնակչությունը սակավ է, և դա բացատրելի է: Որովհետև դրանցից դուրս եկած բնակչության մի մասի շնորհիվ են կազմավորվել Թովուզ ղալա, Թովուզ քյանդ, Թազա քյանդ և Ելիան գյուղերը: Իսկ «Գեորգի XII թագավորի տիրապետությունից եկածները» նրանք են, ովքեր նախ Ղարաբաղից մեծ գաղթի ժամանակ իրենց մելիքների հետ հասել են Վրաստան, բայց չտանելով այնտեղ տիրող ճորտատիրությունը՝ բռնել նախահայրենիք վերադարձի ճանապարհը և ամրացել Լոռիում, Ղազախի ու Շամշադինի նորահաստատ գյուղերում, ուր չկար ճորտատիրություն: Իսկ բնակչության ներքին տեղաշարժերը լավ տեսանելի են դառնում Մովսեսի և Թովուզ քյանդի օրինակով: Պարզվում է, որ 1817-ից մի քանի տարի առաջ Մովսեսը տարածաշրջանի մեծ գյուղերից է եղել, սակայն բնակիչների մեծ մասի Թովուզ քյանդ վերաբնակվելու պատճառով մայր գյուղում, ըստ 1817-ի հունվարի 26-ի մարդահամարի, մնացել էր 19 ծուխ՝ 100 բնակչով:

Շամշադինի դիստանցիայի հայկական գյուղերի ծխերի և ըստ սեռի բնակչության քանակը 1817 թվականին*

Գյուղերի անվանումը	Ծխերի քանակը	Բնակչության քանակը		Ծագումը
		արական	իգական	
Թաքլու	41	118	84	Հնաբնակներ
Հախում	13	34	42	Գեորգի XII թագավորի տիրապետությունից եկածներ
Գյունաշ	13	34	29	Արտասահմանից (Արարատյան երկրից) եկածներ
Թովուզ ղալա	26	68	38	Շամշադինի դիստանցիայի այլ գյուղերից հավաքվածներ
Թովուզքյանդ	30	96	82	Մովսես գյուղից եկածներ
Ղզզլ բուլաղ	47	89	89	Հնաբնակներ
Թազաքյանդ	11	34	25	Շամշադինի դիստանցիայի այլ գյուղերից հավաքվածներ
Մովսես	19	60	40	Հնաբնակներ
Կրզեն	24	64	69	Գեորգի XII թագավորի տիրապետությունից եկածներ
Ելիան	6	16	17	Շամշադինի դիստանցիայի այլ գյուղերից հավաքվածներ
Ղուլալի	38	90	93	Գեորգի XII թագավորի տիրապետությունից եկածներ
Ղարաղոլի	17	39	46	Հնաբնակներ
Չորաքան	47	104	77	Հնաբնակներ
Ընդամենը	**332**	**846**	**731**	

1810-ական թվականների վերջին Գյունաշի բնակչությունը միա-

* Ցուցակը կազմվել է ՀՀ ԱԱ 93 ֆոնդի (ց. 1, գ. 8, թթ. 2-120) տվյալներին համապատասխան:

ցել է Թազա քյանդին, իսկ Կուրի ափին գտնվող ճլիանն ընդհանրապես վերացել է: 1825-ի հունիսին Կարմիր աղբյուր (Ղըզըլ բուլաղ) գյուղի բնակչության մի զգալի մասը պետության տնօրինությամբ տեղափոխվել է Թովուզ դալա (Բերդ) գյուղը[186]: 1800 թվականների կեսերին Կարմիր աղբյուր համայնքի կազմում ստեղծվում են Մաֆլար և Քոսալար գյուղակները, որոնք հետագայում դառնում են առանձին գյուղեր՝ Վերին Կարմիր աղբյուր և Ներքին Կարմիր աղբյուր:

Նոր գյուղերը սովորաբար առաջանում էին գյուղի ձմեռանոցի կամ ոչ հեռավոր հանդամասում գտնվող աշնան սարի հիմքի վրա: Այսպես. XIX դարի 60-ական թվականներին Թովուզ դալայից (Բերդ) առանձնանալով, ստեղծվել է Նավուրը, ուր բնակություն են հաստատել նաև Շամշադինի այլ գյուղերից վերաբնակվածները: Իսկ XX դարի 20-ական թվականներին Նավուրից դուրս եկած մի քանի տասնյակ ընտանիքներ հիմնել են Իծաքարը: XX դարի վերջին Թովուզից առանձնացածները հիմնել են Չինչինը, Ղուլալիից (Այգեձոր) առանձնացածները՝ Չինարին, Հախումից առանձնացածները՝ Վելի* գյուղը (1939-ից՝ Ծաղկավան, այժմ՝ Վերին Ծաղկավան): Այգեպարը ստեղծվել է 1937 թվականին՝ որպես ծխախոտի հումքի նախնական վերամշակման նորաստեղծ գործարանին կից բանվորական ավան, և անվանակոչվել 1967-ին:

1830-ական թվականներից Շամշադինի ոստիկանական դիստանցիայի բնակավայրերի ցուցակում երևում են Բադա և Չարդախլու գյուղերը: Առաջինը 1820-ական թվականների վերջին հիմնել են Շամշադինի գյուղերից, Զրաբերդից և Փամբակից եկածները, իսկ երկրորդը՝ 1823թ. Թիֆլիսի Հավլաբար թաղամասից գաղթած նախկին երևանցիները, մասամբ՝ Ղարաբաղից և Պարսկաստանից եկածները[187]: Նաև հայտնի է, որ մերձակայքի չորս լեռների պատճառով Չարդախլու, այսինքն (չհար+դաղլու)՝ չորս լեռնանի, կոչված գյուղում բնակություն են հաստատել նաև Ղազախի գավառի Կոթի գյուղից հեռացած ընտանիքները, որոնցից մեկը եղել է Բաղրամյան-

* Այս անվանումը ևս թուրքերեն է , որովհետև այդ լեզվով հացահատիկ կալսելու գործիքը՝ կամը, կոչվում է «վելի»: Իսկ Հախումից առանձնացած այդ գյուղի կարևոր զբաղմունքներից մեկը եղել է թեղի և կաղնի գերաններից կամեր (վելի) պատրաստելը, ուստի և թուրքերը գյուղը կոչել են Վելի քյանդ, իսկ հայերը բառի երկրորդ մասը հայացնելով՝ Վելի գյուղ:

ների գերդաստանը, որի հարկի տակ հետագայում ծնվում է XX դարի ականավոր զորավարներից մեկը՝ ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանը:

1988-1989թթ. Ադրբեջանում ծավալված հայկական ջարդերի և բռնությունների հետևանքով, հայկական բազմաթիվ գյուղերի պես, նաև Շամխորի շրջանի Չարդախլուի 320 հայ ընտանիքները վերաբնակվել են Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի նախկին ադրբեջանական Վերին Քյորփլու գյուղում և իրենց հերոսական բնօրրանի պատվին 2001-ին այն վերանվանել Զորական:

1850-1860-ական թվականներին՝ Անդրկովկասում լեռնահանքային արդյունաբերության զարգացման շրջանում, շահագործվում են Գետաբեկի պղնձահանքն ու ձուլարանը: Այդ մեծ ձեռնարկությունը բանվորական ձեռքերով ապահովելու նպատակով երկրամասից հավաքագրվում են բազմաթիվ գյուղացիներ: 1863-ին այստեղ են գալիս Ղազախի գավառի Կոթի, Ոսկեպար և Ղալաչա գյուղերի 33 ընտանիքներ, որոնք Հին Գետաբեկից ոչ հեռու հիմնում են Նոր կամ Հայի Գետաբեկ գյուղ:

1840-ական թվականների կեսին Շամշադինի դիստանցիային ենթակա Գետիկի հովտի վերին հոսանքի շրջանում գավառի տարբեր գյուղերից և Ղարաբաղից գաղթած հայերը ստեղծում են Վերին և Ներքին Ճամբարակ, իսկ Ռուսաստանից աքսորված հնադավան մոլոկանները՝ Միխայլովկա (հետագայում՝ Կրասնոսելսկ) գյուղերը: 1850-ականների սկզբին Շամշադինի Չորաթան գյուղից և Ղարաբաղից վերաբնակվածները հիմնում են Հին Բաշքենդ (Արծվաշեն) գյուղը, որն իր հերթին XX դարում իր բնակիչների զգալի մասով կյանք է տվել նախկին Կրասնոսելսկի շրջանի Վահան և Գետիկ գյուղերին:

Ինչպես երևում է վերը բերված ցուցակներից, 1806 և 1817 թվականների մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում այլուստ, հիմնականում՝ Ղարաբաղից եկած բնակչությունը զգալիորեն նվազել է: Նոր գյուղերի հիմնադրման պայմաններում հայ բնակչությունը միայն Ղազախի դիստանցիայում կրճատվել է 2350 մարդով: Մեր ուսումնասիրությունը դրա համար երեք պատճառ է վեր հանել: Նախ հարկ է նշել, որ ռուսական իշխանությունները՝ նորաբնակներին տնավորելու համար, չէին սահմանել տնտեսական արտոնություններ, ինչպիսիք նման դեպքերում սովորաբար անում էին իրենց երկրի շենացմամբ շահագրգիռ միապետները: Ավելին, ինչ-

պես վկայում են վավերագրերը, 1803-ի սեպտեմբերի 20-ին Կովկասի կառավարիչ Պավել Ցիցիանովը Ղազախի աղլարներին, որոնց են-թակայության տակ էին հայկական գյուղերը, հասցեագրած նամակով ահաբեկում է կայսրության նոր հպատակներին՝ խստորեն հիշեցնելով պետության հողից և ջրից օգտվելու դիմաց հարկ վճարելու նրանց սուրբ պարտականությունները: Իսկ եթե ղազախեցիները մինչև 1804-ի հունվարի 1-ը չվճարեն սահմանված 6500 ռուբլին և 650 խալվար ցորենը, կամ լիագումար 13 000 ռուբլի, «ապա ես ձեզ ցույց կտամ,- զգուշացնում է ցարի կատարածու գեներալը,- որ ռուսները կարիքի մեջ չեն, այլ սովորեցնում են մուծել հարկերը կամ էլ կարողանում են իրենց հողերից վռնդել նրանց, ովքեր չեն վճարում, և կգտնեն մարդկանց, ովքեր ձեր կողմից զբաղեցրած հողերի դիմաց գանձարան կմուծեն 13 000 ռուբլի»[188]: Ուստի տնտեսապես դեռ չկայացած ոչ քիչ թվով ծխատեր գյուղացիներ ընտրում են փախուստի ճանապարհը, տեղից-տեղ կամ հետ՝ դեպի Ղարաբաղ:

Երկրորդ պատճառը նորաբնակների կյանքի անապահովությունն էր հարձակումներից: Թալանն ու մարդագողությունն իրենց հիմնական զբաղմունք դարձած Դաղստանի լեռնականները Վրաստանում ռուսական տիրապետության հաստատումից հետո էլ նախկին թափով երկրամասում շարունակում էին իրենց հանդուգն հարձակումները: Գեներալ Լազարևը բարձր հրամանատարությանն ուղարկած իր զեկուցագրում հայտնում էր, որ լեզգիների ասպատակությունների հետևանքով «անմշակ էին մնում դաշտերն ու այգիները, փախչում էին նորաստեղծ գյուղերի բնակիչները, դրանք դառնում էին անմարդաբնակ»[189]:Բանը հասել է այնտեղ, որ Ղազախի գավառում ոսկու հանքի արդյունահանմամբ զբաղված և ավելի քան 250 կազակներով, երկու վաշտ հետևակով ու հրետանիով պաշտպանված ռուսական երկրաբանական արշավախումբը լեզգիների չդադարող հարձակումների պատճառով դադարեցրեց իր գործունեությունը: Ներսից հայերի համար իսկական չարիք էին տեղական թուրք ղաչաղների ավազակախմբերը, որոնց վրա 1837-ի աշնանը Քարվանսարայի բնակիչները Երևանից Թիֆլիս գնացող Նիկոլայ Ա ցարի ուշադրությունը հրավիրեցին: Նա խոստացավ արմատախիլ անել չարիքը: Սակայն՝ ապարդյուն. դա կար նաև դարավերջին: Այդ մասին 1886-ի սեպտեմբերի 6-ի համարում «Նոր-դար» թերթը հայտնում է.

«Ղազախից մեզ գրում են. «Ամբողջ Կովկասում գուցէ չգտնուի մի

ժողովուրդ, որ այս չափ աւազակաբարոյ, խռովասէր, յափշտակիչ բանաւորութիւն ունենար, որքան մեր գաւառի բնակիչներն են ընդհանրապես (խոսքը թուրքերի մասին է - Ռ.Ս.): Յայտնի է, որ այստեղ մահմեդական տարրը ամենայն կերպով իւր ոյժով գերազանցում է միւս բոլոր ազգաբնակութիւններին. նա, մահմեդականը, դեռ գաղափարով իրեն չէ կարող ներկայացնել, որ անցել են Հասան-խանի ժամանակները և գուցէ չէ էլ ախալվում: Մարդասպանութիւնը, միմեանց դաշոյնահար անելը և այլոց ինչքն ու գոյքը յափշտակելը այստեղ առօրեայ և հասարակ բաներ են... Կասեմ, որ Ղազախը ծնող է Կովկասում ամենամեծ ավազակների, որոնց թիւը չկայ, այնքան շատ եղած են նրանք: Այստեղ միշտ անպակաս են եղել մի քանի ավազակախմբեր, որոնք բնակիչներին ահ ու երկիւղի մէջ մշտօրէն պահելուց զատ, գաւառը տակն ու վրայ անելիս են եղած»: Հռչակված են եղել հատկապես Գոյջալի գյուղի ավազակները: Եվ, հենց ներսի ու դրսի հափշտակիչների հարձակումների հետևանքով չպաշտպանված հայկական գյուղերի բնակիչները եղել են փախուստի մեջ, նվազել է դրանց քանակը: Այսպես, 1817-ին Աղդանից փախուստի մեջ էր 192, Աչաջրից՝ 207, սևքարից՝ 212 մարդ:

Սակայն երկրամասում բնակչության նվազման կարևոր պատճառ են եղել նաև սուր վարակիչ հիվանդությունները: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ առողջապահական համակարգի բացակայության պայմաններում իսկական չարիք են եղել հաճախակի կրկնվող ժանտախտն ու մալարիան (ճահճատենդը*), որոնց հետևանքով քանիցս մարդաթափվել է Թիֆլիսը (վավերագրերը հայտնում են, որ 1844-ին այս քաղաքի 50 000 բնակիչներից 1332-ը մահացել էին հիվանդություններից): Դա ավելի զգալի է եղել ցածրադիր գյուղերում: XIX դարի առաջին տասնամյակներում զգալի կորուստ են կրել հատկապես Պիպիսը, Կոթին, Ղալաչանը, Սռի գյուղը, Ղոշխոթանը, Բարանան, Կողբը, Թաթլուն, Չորաթանը, Կունենը: Այսպես, Ղալաչայում 655 բնակիչներից փրկվել է 412-ը, Կողբում՝ 379-ից

* Անկատար բժշկության պատճառով տենդի բուժման ժամանակ կիրառվում էին ծիծաղելի հեքիմական միջոցներ: Օրինակ, «Կովկաս» թերթը (1846թ. N15) խորհուրդ էր տալիս այդ հիվանդությունը բուժել... գորտով: Գորտը գցելով տոպրակի մեջ՝ անհրաժեշտ էր կախել հիվանդի պառկած թախտի տակից այնպես, որ տոպրակի մեջ խաղա: Հենց սատկեր՝ հիվանդը կառողջանար:

190-ը, Բարանայում՝ 180-ից 71-ը: 1806-1817 թվականների միջև ընկած ժամանակահատվածում 43 ծուխ ունեցող Պիպիս գյուղում վարակիչ հիվանդություններին զոհ է գնում 67 մարդ, իսկ 8 ընտանիք ընդանրապես մարում է: Վիճակն այնքան է բարդանում, որ առաջարկվում է գյուղը տեղափոխել նոր վայր[190]: Երկար ժամանակ տեղափոխի խնդրով էր մտահոգված նաև Ներքին Աղդանի համայնքը, որը 1858-ին ուներ ընդամենը 20 ծուխ և 112 բնակիչ[191]:

Վիճակն ավելի լավ հասկանալու համար դիտարկենք գյուղական կյանքի պատկերը XIX դարի ավարտին, որը սերունդներին է թողել նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը: Նա հայտնում է, թե գյուղերը փողոցներ չունեին, ապականության թագավորություն էր: Տները մթին որջերի էին նման և յուրաքանչյուրը մի անցք ուներ ներսուդուրս անելու համար: Եվ հեղինակը սրտի ցավով եզրակացրել է. «Այստեղ քաղաքակրթությունը տեղ չունի և կարելի է հազար տարի հետո»: Նույն իրողությունն է վկայում նաև մեծ վիպասան Ռաֆֆին, որը 1877-ի սեպտեմբերին Թիֆլիսից Ագուլիս ճանապարհվելիս անցել է Աղստևի հովտով: «Մինչև Աղստաֆա բնությունը միակերպ մեռած է: Տեղ-տեղ երևում են հողակույտեր: Հողակույտերը շատ նման են շինվածքներին, երբ խլուրդները իրանց ստորգետնյա բնակարաններից հողը դուրս փորելով, իրանց բույների վրա բլրակներ են կառուցում:

...Թիֆլիսից մինչև Քարվանսարա կոչված հայոց գյուղը անդադար հանդիպում են այդպիսի բնակարաններ. անծանոթ մարդը երբեք չէր կարող կարծել, թե նրանք պատկանում են մարդկանց, թե նրանց մեջ կարող էին ապրել կենդանի արարածներ: Այդ գետնափոր խրճիթները մի տեսակ գերեզմաններ են, այն զանազանությամբ միայն, որ նրանց մեջ կարելի է շունչ քաշել»[192]:

Հետագայում, վարակիչ հիվանդությունների պատճառով նվազած գյուղերի բնակչությունը համալրվել է այլ վայրերից եկած մարդկանցով: Իսկ այդ չարիքից ձերբազատվելու նպատակով մի շարք գյուղեր ցածրադիր վայրերից (գետափերից) տեղափոխվել են բարձրադիր սարալանջեր: Այդպես տեղփոխ են տվել Ղարաղոյլի, Թաթլու, Պիպիս, Կունեն, Աքսիպար, Ղալաչա, Ճալա և Թարքևին գյուղերը: Ի դեպ, մինչև առաջին աշխարհամարտի տարիները, երկրամասում կանանց թիվը միշտ զիջել է տղամարդկանց թվին: Այսպես, 1851-ին Ղազախի և Շամշադիլի դիստանցիաների 45 հայկական գյուղերում ապրելիս է եղել 10206 արական և 9286 իգական սեռի բնակիչ: Անհամամասնությունը կազմել է 920 մարդ: 1885 թվականին երկրամասում 1000 հայ տղամարդու հաշվով կար 850 հայուհի:

Ալեքսանդր Երիցյանը, որը XIX դարի վերջին քառորդում հանգամանալի ուսումնասիրել է Ղազախի գավառի պետական գյուղացիների կյանքը, նկատում է, որ մարդիկ սարսափում էին մարդահամարից, որովհետև դրանով էին սահմանվում հարկերը և տղաները կանչվում բանակ: Ուստի համայնքները թաքցնում էին ծխերի իրական քանակը, իսկ ընտանիքները՝ արական սեռի անդամներին: Այս դեպքում ավելի անհասկանալի է դառնում, թե ինչու մարդահամարների անվանական ցուցակներում միշտ պակաս է կանանց քանակը: Եղել է ընտանիքի իգական անդամների քանակը պակասեցնելու և օտար մարդկանց ներկայությամբ նրանց անունները չտալու արևելյան սովորույթ, սակայն ռուսական տիրապետության հաստատումից հետո, անցած տասնամյակների ընթացքում, նաև պատմության գիրկն էին անցել մահմեդական միապետների կողմից պարբերաբար իրականացվող մանկահավաքները: Իսկ կանանց պակաս զգացվում էր (1999-ի աշնանն Աճարկուտում բնակվող 93-ամյա ոսկեպարցի Սարիբեկ Ալավերդյանը պատմեց մի հին անիծյալ սովորության մասին: Իբրև, թե դեռևս իր պատանեկության տարիներին նորածին աղջիկներին, հատկապես չունևոր և շատ աղջիկներ ունեցող ընտանիքներում, պառավների ձեռքով գաղտնաբար թաղելիս են եղել գոմաղբի թմբերի տակ, կամ «պատահաբար» խեղդամահ արել լոգանքի տաշտերի մեջ, որպես ապագա ավելորդ ուտող բերան և տոհմը չշարունակող հարամ արարածներ):

1830-ական թվականներին գրեթե դադարում են երկրամասի նորեկ հայ բնակչության տեղաշարժերը: Մարդիկ ամրանում են իրենց նախնիների լքած հիմքի վրա, պետական մարմինների տնօրինությամբ դեռ ազատ հողերում հիմնում նոր բնակավայրեր: Աշխուժանում է տնտեսական կյանքը և աճել է սկսում բնակչության քանակը: Ասվեց, որ 1806-ին Ղազախի դիստանցիայի 22 հայկական գյուղերում ապրելիս է եղել 5858, Շամշադիլի դիստանցիայի 13 հայկական գյուղերում՝ 2614, ընդամենը՝ 8462 մարդ: Հետագա 11 տարում հայ բնակչության ընդհանուր քանակը նվազել է 3377-ով: Իսկ ահա 1847-ին Թիֆլիսի նահանգի Ելիզավետպոլի գավառի Ղազախի և Շամշադինի տեղամասերի 47 հայկական գյուղերն ունեին 2029

ծուխ և 16863 երկու սեռի բնակիչ[193]: Այսինքն, 41 տարում հայոց քանակը կրկնապատկվել էր, իսկ 1885-ին հասավ 30494 հոգու, որոնք արդեն ապրում էին 43 գյուղերում և դրանց կից 7 գյուղակներում: Վերջիններից մի քանիսը հետագայում ստացան ինքնուրույն գյուղի կարգավիճակ*: Այդ ժամանակ գյուղերը միջին հաշվով ունեին 72 ծուխ և երկու սեռի 709 բնակիչ, իսկ մեկ ընտանիքում միջին հաշվով կար 9,8 շունչ: XIX դարավերջին այժմյան Տավուշի մարզի տարածքում եղեծ գյուղերի բնակչության մասին ամենաստույգ տվյալները հաղորդում է 1897-ին անցկացված համառուսական մարդահամարը[194], ըստ որի կազմվել է բերվող աղյուսակը:

№	Բնակավայրի անունը 1897թ.	Բնակչութ. թիվը	Եկեղեցու անունը	Բնակավայրի անունը 2012թ.
1	2	3	4	5
1	Աղդան ներքին	232 հայեր	սբ. Աստվածածին	Ակնաղբյուր
2	Աղդան վերին	1524 հայեր	սբ. Աստվածածին	Գանձաքար
3	Աղքիլիսա	115 թաթար.	----------	Ճերմակավան
4	Արճիս (Արճեշ)	530 հայեր	սբ. Հակոբ	Արճիս
5	Արմուտլու (Տանձուտ)	137 հույներ	----------	----------
6	Աչաջուր	2039 հայեր	սբ. Աստվածածին	Աչաջուր
7	Ակսիբար	393 հայեր	սբ. Աստվածածին	Ոսկեպար
8	Բալաքենդ	351 հայեր	սբ. Սարգիս	Դովեղ
9	Բաղանիս	475 հայեր	սբ. Աստվածածին	Բաղանիս
10	Բարանա	1197 հայեր	սբ. Սարգիս	ք. Նոյեմբերյան
11	Գոլովինո	121 ռուսներ	----------	Դիլիջանի թաղամաս
12	Գոշավանք	352 հայեր	սբ. Աստվածածին	Գոշ
13	Դիլիջան հին	1993 հայեր	սբ. Աստվածածին	ք. Դիլիջան
14	Դիլիջան նոր կամ Սլոբոդա	160	Դիլիջանի թաղամաս	----------

* Դրա համար անհրաժեշտ էր ունենալ առանձին համայնք (գյուղապետ), եկեղեցի և գերեզմանոց:

1	2	3	4	5
15	Թազաքյանդ	615 հայեր	սբ. Աստվածածին	Նորաշեն
16	Թաթլու	871 հայեր	սբ. Հովհաննես	Պառավաքար
17	Թալա	559 հայեր	սբ. Նշան	Գետահովիտ
18	Թովուզ դալա	1345 հայեր	սբ. Գր. Լուսավորիչ	ք. Բերդ
19	Թովուզ քյանդ	1289 հայեր	սբ. Աստվածածին	Տավուշ
20	Լալի քյանդ (Աշղի գեղ)	463 հայեր	սբ. Աստվածածին	Վազաշեն
21	Լամբալու	376 թաթար	----------	Բագրատաշեն
22	Լճկածոր (Ճալա)	154 հայեր	----------	Լճկածոր
23	Խաշթառակ	783 հայեր	սբ. Աստվածածին	Խաշթառակ
24	Կոթքյանդ	1769 հայեր	սբ. Աստվածածին	Կոթի
25	Կլիչքյանդ	689 հայեր	սբ. Հովհաննես	Սարի գյուղ
26	Կուլպի (Կողբ)	2006 հայեր	սբ. Աստվածածին	Կողբ
27	Կունեն	273 հայեր	սբ. Երրորդություն	Կիրանց
28	Կուրմսլու (Դոստլու)	740 հայեր	սբ. Գևորգ	Բարեկամավան
29	Հախկխլու	373 թաթար	----------	Հովք
30	Հախում (Ազիզլու)	681 հայեր	սբ. Նշան սբ. Գր. Լուսավորիչ	Վարագավան
31	Ղալաչա	1038 հայեր	սբ. Գևորգ	Բերդավան
32	Ղարաղայա (Ղրղի)	1104 հայեր	սբ. Աստվածածին	Արծվաբերդ
33	Ղարանլուխ դարա	164 հայեր	սբ. Աստվածածին	Լուսածոր
34	Ղըզլբուլաղ ներքին	264 հայեր	սբ. Աստվածածին	Ներքին Կարմիր աղբյուր
35	Ղըզլբուլաղ վերին	779 հայեր	սբ. Հովհաննես	Վերին Կարմիր աղբյուր
36	Ղոշխոթան	1041 հայեր	սբ. Հովհաննես	Ոսկեվան
37	Ղուլալի	1100 հայեր	սբ. Հովհաննես	Այգեձոր
38	Մելիք քյանդ	427 հայեր	սբ. Հովհաննես	Ներքին Ծաղկավան
39	Մոսեսլի	1139 հայեր	սբ. Գևորգ	Մովսես
40	Մուրթել	43 թաթար.	----------	Գեղատափ
41	Նավուր (Նովչալի)	573 հայեր	սբ. Նշան	Նավուր
42	Չինչին	134 հայեր	----------	Չինչին
43	Չինարի	614 հայեր	----------	Չինարի

1	2	3	4	5
44	Չորաթան	395 հայեր	սբ. Հովհաննես	Չորաթան
45	Ջողազ (Պիպիզ)	276 հայեր	սբ. Գևորգ	Բերքաբեր
46	Պողոսքիլիսա	1006 հայեր	սբ. Աստվածածին	Դիլիջանի թաղամաս
47	Ջարխեչ (Շարխաչ)	1232 հայեր	սբ. Աստվածածին	Հաղարծին
48	Ջուջևան (ք)	172 հայեր	---------	Ջուջևան
49	Ռևազլու	178 հայեր	սբ. Գևորգ	Դիտավան
50	Սալահ	184 թաթար.	---------	Աղավնավանք
51	Սևքար (Ղարադաշ)	2411 հայեր	սբ. Պետրոս և Պողոս	Սևքար
52	Ուզունթալա	1421 հայեր	սբ. Աստվածածին սբ. Ամենափրկիչ	Այգեհովիտ
53	Փոլատ Այրում	220 թաթար.	---------	Խաչարձան
54	Քարվանսարա	1761 հայեր	սբ. Ամենափրկիչ	ք. Իջևան
55	Քյորփլու ներքին	68 թաթար	---------	Հաղթանակ
56	Քյորփլու վերին	403 թաթար	---------	Չորական
57	Քրդևան	556 հայեր	սբ. Աստվածածին	Ենոքավան

Ըստ 1897 թվականի համառուսական մարդահամարի այս ցուցակի, Ղազախի գավառի 47 բնակավայրերում ապրում էին 45590 հայեր, որոնցից 38551-ը՝ ներկայիս Տավուշի մարզում և այս թվերը համընկնում են Խորհրդային Հայաստանում առաջին անգամ անցկացված մարդահամարի (1926թ.) տվյալներին[195]: Պարզվել է, որ չնայած առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական գյուղերի կրած կորուստներին, դրանք ունեցել են բնական և մեխանիկական աճ՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների հաշվին: 1926 թվականին, առանց Ադրբեջանին անցած բնակավայրերի, Դիլիջանի գավառում, որի մեջ մտնում էին Դիլիջանի, Իջևանի, Կարմիր գեղի, Շամշադինի և Բարանայի ենթագավառները, ապրող քաղաքացիներից հայեր էին 66934-ը (86%), թուրքեր՝ 8181-ը, ռուսներ՝ 3002, մորդվիններ՝ 412-ը և այլ ազգերի 136 ներկայացուցիչներ: Ելակետ ընդունելով 1806-ի մարդահամարը՝ կստացվի, որ 120 տարում Տավուշի մարզի հայերի քանակն ավելացել էր 58472-ով կամ 7 անգամ: Եվ սա այն դեպքում, երբ XIX դարի վերջից Տավուշի մարզից Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններ՝ հիմնականում Թիֆլիս և Բաքու, էին տեղափոխվել հազարավոր բանվորներ:

XIX դարի առաջին երեք տասնամյակներում պատերազմներով զբաղված Ռուսաստանը ժամանակ չուներ Անդրկովկասում մտցնել վարչատարածքային հիմնավոր փոփոխություններ: Դրանք հնարավոր էին խաղաղ պայմաններում: Ինչպես ասվեց, 1801-ի սեպտեմբերի հրովարտակով Ռուսաստանին միացած Արևելյան Վրաստանի Լոռվա գավառի կազմում էին գտնվում Ղազախի և Շամշադինի սուլթանությունները, որոնց իշխանության տակ էին հայկական գյուղերը: 1819-ին վերացվում են այդ սուլթանությունները և սկսում են կոչվել թաթարական դիստանցիաներ: 1840-ին երկրամասը բաժանվում է Վրաց-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի: 1842-ին Վրաց-Իմերեթական նահանգը ցարի հրովարտակով բաժանվեց 11 գավառների, որոնցից Ելիզավետպոլի գավառի մեջ էին մտնում Ղազախի և Շամշադինի դիստանցիաները: 1846-ին ստեղծվում են Թիֆլիսի, Քութաիսի, Դերբենդի նահանգները: Եվ նորից Ելիզավետպոլի գավառը, նաև՝ Ղազախն ու Շամշադինը մտնում էին Թիֆլիսի նահանգի մեջ:

Ինչպես վերն ասվեց, տնտեսական հետամնացության պատճառով, որին նպաստում էր բազմաքանակ թաթարների շարունակվող քոչվորությունը, երկրամասում չկար որևէ քաղաք, կամ մշտական բնակություն ունեցող մեծ գյուղ, ուստի գավառը նախ ղեկավարվում էր Թիֆլիսից, ուր գտնվում էր գավառապետի նստավայրը: 1830-ական թվականների սկզբին փորձ է արվում գավառի կենտրոն դարձնել թաթարական Սալահլի գյուղը[196], սակայն՝ ապարդյուն: Բանն այն է, որ ապրիլ-սեպտեմբեր ամիսներին, բոլոր թաթարների պես, նրա բնակչությունը ևս գրեթե ամբողջովին գտնվում էր հեռավոր սարամասերում: 1842 թվականից Ղազախի և Շամշադինի դիստանցիաները սկսեցին կառավարվել Ելիզավետպոլ քաղաքից, որը դարձել էր գավառի կենտրոն: 1868-ին ստեղծվում է Ելիզավետպոլի նահանգը և իրականացվում վարչատարածքային նոր բաժանում: Նորաստեղծ Ղազախի գավառի, որի կազմի մեջ մտել էին Ղազախի և Շամշադինի դիստանցիաները, կառավարչի համար հրամայական անհրաժեշտություն է դառնում տեղում նստավայր ճարելը: Այդպիսին նախ դարձավ 1868-1871 թվականներին կառուցված Թիֆլիս-Աղստև գետ-Դիլիջան-Երևան խճուղային ճանապարհի վրա գտն-

վող Դաղբյասաման գյուղը: Իսկ Բաքու-Թիֆլիս երկաթուղու կառուցման հետ, Թիֆլիս-Ելիզավետպոլ խճուղային ճանապարհի՝ Աղստև գետի հետ հատման աջափնյա անկյունում, որտեղից սկսվում էր Երևան ձգվող խճուղային ճանապարհը, 1881-ի փետրվարի 13-ին հիմնադրվեց գավառապետության նոր կենտրոն Ղազախ քաղաքը[197], որն այդ կարգավիճակում մնաց մինչև 1918թ. մայիս՝ Անդրկովկասի անկախ հանրապետությունների ստեղծումը:

Ղազախի գավառի կենտրոնն այստեղ գտնվելու և Ղազախ անունը կրելու «հիմնավորումով» ազերի* վերանվանված թաթարները այժմ էլ հին ավարառուի անբուժելի զառանցանքով իրենցն են հայտարարում շահական Պարսկաստանի կողմից XVI դարում հիմնած «սուլթանության» և, ապա ռուսական պետության ստեղծած գավառի վարչական տարածքում ընդգրկված հայոց պատմական Տավուշ, Միափոր, Ջորափոր (Կայան), Կանգարք, Կողբափոր գավառները, մոռանալով, որ իրենց հայրենիքը հեռվում է՝ Կասպից ծովից և Կովկասյան լեռնաշղթայից անդին, որ հայոց պատմական Արցախ և Ուտիք աշխարհներին իրենք տեր են դարձել արյունալի նախճիրներով: Իսկ Ղազախ քաղաքի ստեղծողները եղան հայերը, ռուսները և

* Հնադարյան պատմիչներն ու աշխարհագրագետները հետագայում աշխարհ գալիք թուրքալեզու ցեղերի, որոնց Անդրկովկասում ընդհանրական անունով թաթար էին կոչում, նկրտումներին անհաղորդ՝ իրենց աշխատություններում մարդկության եկող սերունդներին հայտնել են, որ Արաքս գետից հարավ՝ Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում նախապես եղել է «Աթուրփաթեն», ապա «Ազարբայգան» (հայերեն՝ Ատրպատական) երկիրը, իսկ Կուրից հյուսիս՝ Կովկասյան Ալբանիան (հայերեն՝ Աղվանք): Ուշ միջնադարերում Աղվանքի տարածքում եղել են Շաքիի, Շիրվանի և Ղուբայի պարսկական խանությունները: Եվ ոչ մի խոսք՝ Ադրբեջանի և ադրբեջանցիների մասին: Ու հանկարծ 1918թ. հունիսին, «Մուսաֆաթ» կուսակցության պարագլուխների մտահաղացմամբ, Անդրկովկասում ստեղծված թաթարական պետությունը սկսեց կոչվել Ադրբեջանի Հանրապետություն: Հարևան ժողովուրդները շատ ուշ հասկացան, որ այդ միտումը դանդաղ գործողության մեծ ուժի մի քաղաքական ական է՝ դրված պանթուրքիզմի հեռագնա նպատակների հաղթանակների համար: Վաղուց նրանք տեր էին դարձել Աղվանքի ժողովուրդների և հայերի հողերին ու մշակութային արժեքներին: Հիմա էլ՝ սեփականելով Իրանի «Ազերբայջան» նահանգի անունը, առաջ քաշեցին այն գաղափարը, որ իբրև թե Ազերբայջանը երկու մասի բաժանված մի երկիր է, որի մի մասը գտնվում է Արաքսի հյուսիսում, մյուսը՝ հարավում, և դրանք անհրաժեշտ է միաձուլել: Իսկ դա համընկնում էր պանթուրքիզմի՝ Միջերկրական ծովի ափերից մինչև Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսներ թուրքերի տիրապետության տարածման գաղափարախոսությանը:

պարսիկները, որովհետև թաթարները դեռ չէին անցել նստակեցության, հեռու էին շինարարական արհեստներից, իսկ նրանց կացարանը շարժական, թաղիքե ալաչուխն էր (հայերեն՝ դագա): Հայերը ռուսների նախագծած քաղաքը կառուցելու էին եկել Արցախից, Գանձակից և Ղազախի գավառի գյուղերից և XIX դարի ավարտին կազմում էին նոր քաղաքի բնակչության երկու երրորդը: Խանութների ու արհեստանոցների մեծ մասը պատկանում էր հայերին: Ծննդով Շամխորի Բանանց գյուղացի Մկրտիչ Ջաղեթյանն իր միջոցներով կառուցեց եկեղեցի[198], որն օծվեց Վարդան Մամիկոնյանի անունով և մինչև XX դարի ավարտն այն ավտոկայան էր ծառայում թուրքերին:

1884 թվականին Ղազախի գավառապետը նստում էր նոր քաղաքում: Իսկ ոստիկանական հսկողության տեսակետից գավառը բաժանված էր չորս տեղամասի՝ Շամշադինի, Աղստաֆայի, Սալահլիի և Դիլիջանի, որոնք ունեին գյուղախմբերի համայնքներ և դրանք կառավարող տեղամասային պետեր (պրիստավներ): «Կավկազսկի կալենդար»-ը հաղորդում է, որ 1916 թվականին գավառի հայկական գյուղերը ռուսների հետ կազմում էին 11 գյուղախումբ (համայնք)*:

1. Բարանայի գյուղախումբ
գյուղերը՝ Բալա քյանդ
Բարանա
Ղալաչա
Կողբ

2. Կոթիի գյուղախումբ
գյուղերը՝ Աքսիբար
Բաղանիս-Այրում (թաթարական)
Ջուջևան
Կոթի
Ղոշխոթան

* Այս ժամանակ Բորչալուի գավառի կազմի մեջ էին մտնում Այրում կայարանի բանավանը, Արծիս, Լճկածոր հայկական, Լամբալու, Վերին և Ներքին Քյորփլու թաթարական գյուղերը:

3. Ղարադաշի (Սևքարի) գյուղախումբ
գյուղերը՝ Ներքին Աղդան
Աչաջուր
Սևքար
Կլիչքյանդ (Սռիգյուղ)
Կունեն
Մելիք քյանդ
Պիպիս

4. Միխայլովկայի գյուղախումբ
գյուղերը՝ Միխայլովկա (ռուսներ)
Վերին Ճամբարակ
Ներքին Ճամբարակ

5. Նոր Դիլիջանի գյուղախումբ
գյուղերը՝ Նոր Դիլիջան (ռուսներ)
Գոլովինո (ռուսներ)

6. Հին Դիլիջանի գյուղախումբ
գյուղերը՝ Հին Դիլիջան
Ջարխեչ
Գոշովանք
Պողոսքիլիսա

7. Քարվանսարայի գյուղախումբ
գյուղերը՝ Վերին Աղդան
Արմուտլու (հույներ)
Հախկխլու (թաթարներ)
Քարվանսարա
Քրդևան
Թալաքյանդ
Խաշքառակ

8. Ուզունքալայի գյուղախումբ
գյուղերը՝ Բարխուդարլի (թաթարներ)
Լալաքյանդ
Ռևազլու
Սոֆուլու (թաթարներ)
Ուզունքալա

9. Ղուլալիի գյուղախումբ
գյուղերը՝ Ղարաղոյլի
Ղուլալի
Մովսես
Թազաքյանդ
Չինարի
Չորաթան

10. Թովուզքյանդի գյուղախումբ
գյուղերը՝ Ներքին Կարմիր Աղբյուր
Վերին Կարմիր Աղբյուր
Նավուր
Թովուզ ղալա
Թովուզ քյանդ

11. Թաթլի քյանդի գյուղախումբ
գյուղերը՝ Հախում
Թաթլի քյանդ

Ինչպես երևում է ցուցակից, XIX դարի սկզբին դեռ իր գոյությունը պահպանելիս է եղել Սառնաջուր գետի վտակ Խաչաղբյուրի ձախափնյակում պղնձագործ հույների կառուցած Արմուտլու (Տանձուտ) գյուղը: Համայնքները ղեկավարում էին տանուտերերը (քյոխվաները), որոնք ենթակա գյուղերում ունեին մեկական օգնական: Քյոխվան աշխատավարձ չէր ստանում, որի փոխարեն համայնքի անդամները նրա համար որոշակի պարտականություններ էին կատարում: Ալեքսանդր Երիցյանը նկատել է, որ իր չարչարանքների ու պատասխանատվության համեմատ, կարծես չունենալով գրավչություն, քոխվայությունը հայերի մոտ պատվավոր պաշտոն էր: Գյուղերում յուրաքանչյուր ընտրությունից առաջ ուժեղ քարոզչություն էր

ծավալվում և այդ պաշտոնին ձգտում էին տասնյակ թեկնածուներ: Ավելին, համայնքի համար նրանք կազմակերպում էին կերուխումներ, տալիս ընտրակաշառք և ընդհանրապես ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում, միայն թե՝ ընտրվեին: Ճիշտ և ճիշտ՝ մեր օրերի անարդար ընտրությունների պես: Իսկ նման ընտրյալն անհրաժեշտ հարգանք ու հեղինակություն չէր վայելում, մանավանդ, որ ընտրապայքարի ժամանակ ծախսված միջոցները վերականգնելու համար նրանք սկսում էին զբաղվել անմաքուր գործարքներով: Իսկ նման կյանքով ապրողն օտարանում էր աշխատանքից, տրվում աղայականության ու ծուլության, վերջին հաշվով քայքայում նաև սեփական տնտեսությունը: Ուստի ազնիվ, իրենց գործին նվիրված մարդիկ հրաժարվում էին այդ պաշտոնում ընտրվելու մտքից: Նաև նկատենք, որ XIX դարավերջին Ղազախի գավառի 17 հայ քյոխվաներից 11-ը բացարձակ անգրագետ էին, միայն երկուսն էին գրում և կարդում հայերեն ու ռուսերեն: Գրագիտությունը բարերար ազդեցություն ուներ գյուղական կյանքի վրա, որովհետև լուսամիտ քյոխվաների ենթակա գյուղերում դարավոր կեղտից մաքրվում էին փողոցները, գոմաղբով պարարտացվում էին ուժահատված դաշտերը, գողությունները կանխելու նպատակով գիշերները հերթապահություն էին կազմակերպում, կարգավորում էին հողաբաժանության գործը և հասարակական պարտականությունների կատարումը, քայլեր էին կատարվում եկեղեցիներին կից ծխական դպրոցներ բացելու ուղղությամբ:

Մինչև XX դարի առաջին քառորդը գյուղերում գերիշխում էին գետնափոր տների մի քանի տարբերակներ, որոնք մեկից մեկուկես մետր խորությամբ հողի մեջ բացված, ուղղանկյուն հատակագծով խորշեր էին: Ըստ տարբերակներից մեկի, բացվածքի անկյուններում և կողային գծի կենտրոնում հողում փորված փոսերում դրվում էին երկճյուղ վերնամասով երեք սյուներ, որոնց վրա գցվում էին հեծանները (լծներ): Ավելի բարձր սյուներ էին դրվում (երկու շարք, երեքական սյուն) դռան բացվածքից դեպի տան հետնամաս: Բարձր սյուների վրայով գնացող գերանները ճեղքված հաստ լատաններով (ոչ հաստ գերաններ) միացվում էին կողային ցածր դիրքով անցնող գերաններին: Ստացվում էր թեք հարթ մակերես: Փայտանյութով ծածկվում էր նաև բարձրից անցնող զուգահեռ հեծանների միջև առաջացած բացվածքը: Մուտքի երկու սյունների արանքում կախվում էր

դուռը: Լատանների վրա փռվում էր մոլախոտ կամ ծղոտ, ապա պատվում թաց հողով և տոփանվում: Իսկ ուղղանկյուն տանիքին հողին այնպիսի կորություն էր տրվում, որ սահուն միանան կողային թեք տանիքներին, և դրանց վրայով հեռանան տեղումները: Նման տներում այլևս չկային երդիկներ, դրանցից ներքև՝ թոնիրներ: Բնակարանի հետնամասում կառուցվում էր բուխարիկ, որի ելուստներին սովորաբար դրվում էր ձեթի ճրագ կամ նավթի լամպ: Լույսը ներս էր թափանցում երկու կողմերում բացված լուսամուտներով: Գոմը կից էր լինում տանը: Ընտանիքները քնում էին ընդարձակ թախտերին, որոնց մի անկյունում ցերեկը դարսվում էր անկողինը: Թախտերի վրա էլ մարդիկ ճաշում էին: Երդիկավոր գլխատները գնալով մոռացության էին մատնվում, որոնց միակ հիշողությունն այսօր էլ մնում է Առաքելոցղ վանքի ծածկի «հազարաշեն» կամ «սողոմաքաշ» տարբերակով կերտված գավիթը, որի անկյունագծերին դրված բազալտե սալերով անանուն ճարտարապետը ստեղծել է դեպի վեր աստիճանաբար նվազող բազմանկյուն և ավարտել ավանդական գլխատան երդիկով: Ի դեպ, այժմ էլ գետնափոր տների տարբերակներից մեկը, սուրանկյուն տանիքով, կենտրոնում մեկ հեծանով լայնորեն կիրառում են Տավուշի մարզի սարվորները՝ ժամանակավոր կացարաններ կառուցելիս:

Բնակչության աճը և անընդհատ օգտագործելուց բնահողի հյուծումը հանգեցրել էր հողասակավության, որից դժգոհ էին հայերը: Բանն այն է, որ քանակական տեսակետից նկատելիորեն զիջելով ռուսների (մոլոկանների) ընդարձակ հողաբաժիններին և որոշ չափով գերազանցելով թաթարների ունեցածին, հայերը միաժամանակ նկատելիորեն վերջիններին զիջում էին հողի ուժով, նրա բերքատվության աստիճանով: Հողասակավության պատճառով գյուղական համայնքների միջև տեղի էին ունենում սահմանախախտումներ, մարդասպանությամբ ավարտվող ընդհարումներ: Այդ պատճառով 1806-ին Երևանի խանությունից գաղթած, Ղազախի դիստանցիայի մի շարք գյուղերում տեղավորված հայերը դուրս մղվեցին և, իշխանություններից ազատ հող ստանալով, հիմնեցին Քարվանսարա գյուղը: Իսկ ռուսական իշխանությունները շահագրգռված էին ռուս-պարսկական սահմանի մերձակայքը շենացնելով, որը 1801-ից մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը (1828թ.) անցնում էի Արեգունու և Փամբակի լեռնաշղթաների կատարներով: Դրանցից դեպի հյուսիս

տարածվում էր դեռ անմարդաբնակ Դիլիջանի ձորը, ուր 1825 թվականին տեղափոխվեցին Ղազախի դիստանցիայի հողասակավ հայկական գյուղերից հեռացած ընտանիքները, որոնք հիմնեցին Դիլիջան և Պողոսքիլիսա, իսկ 1840 թվականներին գաղթած ռուսները (մոլոկանները)՝ Նոր Դիլիջան կամ Սլոբոդկա և Գոլովինո գյուղերը:

Իսկ ինչպե՞ս և ինչո՞ւ անծայրածիր ամնշակ հողեր ունեցող Ռուսաստանի զավակները հայտնվեցին Հայաստանում: XVII-XVIII դարերում այդ երկրում մեծ թափ էր ստացել կրոնական քողի տակ հանդես եկող սոցիալական մի շարժում: Գյուղացիները փախչում էին դաժանորեն շահագործող տերերից: Այդ պայքարը ստացավ աղանդավորական բնույթ, և գյուղացիները հանդես էին գալիս «առաջին հերթին պաշտոնական եկեղեցու դեմ, քանի որ եկեղեցին դարերի ընթացքում մեծ ազդեցություն էր ձեռք բերել և մեծ իշխանություն ուներ երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում»*: Աղանդի հիմքում ընկած էր նախնադարի մարդու ազատ գործունեության գաղափարը: Աղանդավորներն առաջ քաշեցին այն տեսակետը, որ յուրաքանչյուր մարդ առանց եկեղեցու էլ, Քրիստոսի միջոցով, կարող է դիմել Աստծուն և մերժեցին ուղղափառ եկեղեցու գերիշխանությունը՝ դրանով հակադրվելով ճորտատիրական կարգերին: Ցարական արքունիքը ռուս աղանդավորներին, որոնց մեզանում մոլոկան են կոչում, որոշեց հեռացնել Ռուսաստանի կենտրոնական նահանգներից և նրանց բնակեցնել նոր գրավված Անդրկովկասում, ուր կային ազատ հողեր: Սրանով երկու հարց էր լուծում ցարիզմը: Նախ նոր գրաված երկրամասի սահմանները կամրացվեին ռուսական տարրերի միջոցով, իսկ Ռուսաստանի ներսում ուղղափառ գյուղացիությունը զերծ կմնար աղանդավորների ազդեցությունից: Այս ծրագիրը սկսեց իրագործվել, երբ 1844-ին ստեղծվեց Կովկասի փոխարքայությունը: 1846թ. Սևանա լճի արևմտյան ափին, որտեղից սկիզբ էր առնում Հրազդան գետը, հիմնադրվեց մոլոկանների առաջին բնակավայրը և կոչվեց Նիկոլայ 1-ի կնոջ անունով՝ Ելենովկա (այժմյան Սևան քաղաքը): Ապա հիմնադրվում են Սլոբոդկա կամ Նոր Դիլիջան, Գոլովինո գյուղերը (այժմ՝ Դիլիջան քաղաքի Գոլովինո և Պապանինո թաղամասեր), Լոռու մարզի Նիկիտինո (Ֆիոլետովո), Վոսկրեսենովկա (Լերմոնտովո), Գեղարքունիքի մարզի Միխայելովկա (այժմ՝ Ճամբարակ) և Սեմյոնովկա գյուղերը:

Աղբյուրները հայտնում են, որ հողահանդակներով ապահովված էր միայն Պիպիս գյուղը, որը գտնվում էր Թիֆլիս-Երևան քարավանային ճանապարհի վրա, ուր 1820-1830-ական թվականներին զարկ տրվեց շինարարությանը: Կառուցվեցին պարենային խանութ, փոստատուն, ծառայողների համար կացարաններ, դպրոց և այլ շինություններ*: Գյուղի բնակչությունն արհեստականորեն աճեց, ուստի Պիպիսին Ջողաս (Ոսկեպար) գետի ձախափնյակում պետական պահուստից հատկացվեցին նոր հողաբաժիններ: Սակայն, երբ կառուցվեց Թիֆլիս-Ղազախ-Դիլիջան-Երևան ճանապարհը և դրանով իրականացվեց փոստային առաքումները, միջնադարերից գործող Պիպիսի քարավանային կայանը լքվեց ու մոռացության մատնվեց: Իսկ իշխանությունների հատկացրած հողը մնաց պիպիսցիներին: 1884-ին 38 ծուխ ունեցող Պիպիսը տնօրինում էր 1678 հա հող, այդ թվում՝ 842 հա անջրդի և ջրովի վարելահող[199], յուրաքանչյուր ծխի հաշվով՝ ավելի քան 22 հա: Օգտվելով այդ առավելությունից՝ պիպիսցիները զգալի տարածքներ վարձակալությամբ տալիս էին կարիքի մեջ գտնվող հարևան գյուղերի հողասակավ բնակիչներին:

Այսօրվա համատարած գրագիտության և բազմաստիճան ուսումնական համակարգի առկայության պայմաններում գուցե անիմաստ է խոսել մեզ հետաքրքրող դարում կրթության վիճակի մասին: Երկու դար առաջ Անդրկովկաս մուտք գործած Ռուսաստանը կապող օղակ դարձավ ասիական բիրտ իրականության և եվրոպական քաղաքակրթության միջև: Այն ժամանակ մեր հայրենիքում տիրում էր մտավոր խավար, ինչպես ասում է Լեոն, ժողովուրդը բարոյական և նյութական ուժեր չուներ իր դժբախտությունը բուժելու համար: Նոր կյանքն անհրաժեշտ էր սկսել կրթության արմատավորումից, իսկ ողջ արևելահայությունն ուներ ընդամենը երկու դպրոց, մեկը՝ Էջմիածնում, մյուսը՝ Թիֆլիսում: Հարցի լուծման լավ օրինակ տվեց ռուսական արքունիքը, որը Վրաստանը Ռուսաստանին միավորելուց հետո

* Ա. Խ. Հայթյան, Հայաստանի ռուս վերաբնակները (1830-1920), Եր., 1989, էջ 23:

* 1870-ական թվականների սկզբին փոստային ճանապարհը Աղստևի հովիտ տեղափոխելու պատճառով կիսատ մնաց Ջողազ գետի վրա կառուցվող աղյուսաշեն կամրջի շինարարությունը, որի հիմքերից մեկը մնում էր աջ ափին, և ժողովուրդը կոչում էր «ռսի խելի» (ռսի կամրջի հիմք):

Թիֆլիսում բացեց պետական դպրոց, և քանի որ տեղացիներն այնտեղ հաճությամբ չէին ուղարկում իրենց զավակներին, սովորողներին սկսեց նպաստ վճարել: Լույսի հունդերը մնում էին անգրագիտության մոխիրների տակ անթեղված: Հայերն էլ զգացել էին ազգային դպրոցներ բացելու անհրաժեշտությունը, սակայն չկային մանկավարժներ և ավանդույթ: Եվ փառք Աստծո, լուսամիտ հայորդիների նվիրումով Մոսկվայում բացվեց Լազարյան ճեմարանը, Աստրախանում՝ Աղաբաբյան, Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցները: Նրանք զարկ տվեցին մանկավարժական կադրերի պատրաստմանը և ժողովրդի հետագա արարումներում անգնահատելի եղավ նրանց անմահ ավանդը: Այո, մեր գրագետ դարերի սկզբնավորողը հայոց գրերի գյուտով եղավ սուրբ Մեսրոպը, սակայն սերունդների համար մտավոր լույսը սկսեց ճառագել ու տարածվել XIX դարի առաջին կեսին բացված ազգային դպրոցների շնորհիվ: Սկզբում կրթության գործը իրենց ձեռքում էին պահում եկեղեցու սպասավորները, բայց հետագայում նրանց փոխարինեցին իսկական մանկավարժները: XIX դարի սկզբին Ղազախի գավառի հայկական գյուղերում գրագետ մարդ դժվարությամբ էր ճարվում՝ համախոսական գրելու կամ կազմված փաստաթուղթը ստորագրելու համար: Հատուկենտ պատանիները գրել-կարդալ էին սովորում տերտերների մոտ: Միայն այդ դարի երկրորդ կեսին գավառում բացվեցին հայկական առաջի կրթարանները: Արդեն 1890-ական թվականների վերջերին ինը գյուղերում գործում էին արական, մեկդասյա եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցում սովորում էին 500 աշակերտներ, իսկ նրանց կրթությամբ զբաղված էին 14 մանկավարժներ: Հայաստանում կրթության գործն արմատապես փոխվեց 1920-ական թվականներին, երբ կիրառվեց համընդհանուր, պարտադիր ուսուցման ծրագիրը: Այդ տասնամյակում բոլոր գյուղերում բացվեցին տարրական, մեծերում՝ յոթնամյա և տասնամյա դպրոցներ: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դեռ վաղ էր խոսել տեղերում գրատպության մասին: Ներկայիս Տավուշի մարզի տարածքում՝ որպես անդրանիկ զանգվածային լրատվամիջոց, հանդիսացել է 1921թ. Դիլիջանում տպագրված «Կանանց թերթ»-ը, ապա՝ 1922 թվականին Իջևանում պարբերար տպագրվող «Մուրճ և մաճ» թերթը:

Մարզի գյուղացիության XIX դարավերջի տնտեսական կացության մասին ընթերցողին փոքր ինչ տեղեկություն տալու նպատակով՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Ալեքսանդր Երիցյանի վերը նշված աշխատության ժամանակի պաշտոնական վիճակագրությունից վերցված տվյալները: 1886թ. մեզ հետաքրքրող գյուղերի 3116 ծխերը լիագումար ունեցել են (չափը դեսյատինով) 792 տնամերձ, 962 այգի, 584 ջրովի, 21 216 անջրդի վարելահող, 23 361 արոտավայրեր և այլ հողատեսքեր, ընդամենը՝ 44 577 դեսյատին հող: Բնակչության թվին համեմատ չափազանց քիչ են եղել բանջարեղենին և այգիներին հատկացված տարածությունները: Ոռոգման նպատակով անարդյունավետ էին օգտագործվել մարգի հովիտներով հոսող գետերը: Երկրագործության համար վարելահողը քանակով եղել է բավարար, յուրաքանչյուր ծխի միջին հաշվով բաժին է ընկել 6,7 դեսյատին, սակայն ցածր բերքատվության պատճառով նախալեռնային գոտու հայկական հողերը հաճախ են զգացել հացահատիկի պակաս: Գավառի գյուղացիության համար շահավետ է եղել անասնաբուծությունը, որից ստացված մթերքները (միս, պանիր, յուղ, բուրդ) վաճառքի էին հանվում նահանգային ելիզավետպոլ, գավառային Ղազախ և փոխարքայության Թիֆլիս քաղաքներում: Մեզ հետաքրքրող գյուղերի բնակիչները 1886թ. լիագումար պահում էին 8256 եզ, 13 547 կաթնատու կով և գոմեշ, 49 037 մանր եղջերավոր կենդանի, 1490 ձի, 993 էշ, 17 064 խոզ: Ի դեպ, խոզաբուծությամբ զբաղվում էին միայն հայերը, որից դավանանքի թելադրությամբ հրաժարվում էին ռուսներն ու թաթարները: Ներկա ընկալմամբ խոսք չէր կարող լինել գյուղատնտեսության էներգազինվածության և մեքենայացման մասին: Հիմնական քաշող ուժն ավանդական եզն էր, որից միջին հաշվով յուրաքանչյուր ծուխ ուներ 2,6 հատ: Եզներով էին իրականացվում ամենածանր աշխատանքները՝ դաշտերի վարուցանքը, բեռնափոխադրումների մեծ մասը, հասկի կալսումը, անտառից վառելիքի և շինափայտի դուրս հանումը: Փոքր ծավալի բեռների և ուղևորների փոխադրման համար օգտագործում էին ձիեր և էշեր: Վերջիններս իսկական փրկություն էին աղքատ ընտանիքների համար: Շուրջտարյա բեռնափոխադրումներով էին զբաղվում Գոլովինոյի և Նոր Դիլիջանի մոլոկանները, որոնք ունեին շուրջ 60 ֆուրգոն, սայլ և սահնակ: Նրանք զգալի գումարներ վաստակեցին հատկապես 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, երբ Թիֆլիսից բեռներ էին տեղափոխում ռազմաճակատի համար: Անհրաժեշտ է հավելել. 1886թ. ներկայիս Տավուշի մարզի տարածքի գյուղերը մուծել էին 19

632 ռուբլի պետական ծխահարկ, 21 224 ռուբլի գավառային և 34 386 ռուբլի հասարակական հարկ: Առաջին երկու հարկատեսակների հասցեատերերը հայտնի էին, իսկ ի՞նչ բան էր երրորդը: Ռուսական իշխանությունները գանձարան մտնող պետական ծխահարկից և տեղական մարմինների գործառույթներն ապահովելու համար հավաքվող գավառային հարկից բացի երկրի քաղաքացիներին պարտադրում էին կատարել հասարակական աշխատանք՝ մասնակցել հասարակական շենքերի, ջրանցքների, ճանապարհների ու կամուրջների շինարարությանը և պետական բեռների փոխադրմանը: Վերջիններիս շատ քչերը կարող էին՝ հիմնական զբաղմունքը թողած, մասնակցել իրենց փոխադրամիջոցներով և գործիքներով, ուստի աշխատանքի փոխարեն մուծում էին սահմանված չափի գումար: Իսկ 1880-1890-ական թվականներին գավառի բնակչության համար հասարակական աշխատանք էր Աղստևի ափից Գետիկի ծորով դեպի Միխայլովկա (այժմ՝ Ճամբարակ) կառուցվող ճանապարհը:

Երկու դար առաջ մտավոր խավարի մեջ էր ոչ միայն մեր նախնիների գրագիտությունը, այլև մշակութային կյանքը: Չկային ընդգծված ազգային նկարագիր ունեցող ազնվականություն և մտավորականություն, որոնք ժողովրդին առաջնորդեին այդ ասպարեզում և խթանեին նրա հոգեկան առկայծումներին: Հին ազվականական ընտանիքներից հայտնի էին Պիպիսի Մելիք-Սարիբեկյանները և Կոթի-ի Սարատիկյանները: Ցարական պետությունը վասն իր շահերի, գյուղացիներին դյուրությամբ կառավարելու մտադրությամբ, 1839 թվականին 14-րդ դասի ազնվականի կոչում շնորհեց սևքարեցի նահանգային քարտուղար Հովսեփ Ղալումյանին, լալիգեղցի Հովհաննես Սարհատյանին, ուզունթալեցի Պետրոս Քալանթարյանին, կողբացի Զալի Յարալյանին, բաղանիսեցի Չալաբի և Իվան Բաղրամյաններին: Դպրոցների բացման, քաղաքների հետ կապի ամրապնդման շնորհիվ շուտով գյուղերից բազմաթիվ պատանիներ ու երիտասարդներ հայտնվեցին մշակութային բարերար միջավայրում և շատերն արագ դրսևորեցին իրենց բնատուր ձիրքերը: Նրանցից երեքը՝ Քեթևան Արամյանը (Մելիք գյուղից), Մկրտիչ Ավալյանը (Բերդ գյուղից) և Սարգիս Մեհրաբյանը (Վերին Աղդան գյուղից) դարձան արևելահայ թատրոնի հիմնադիրներից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ընթերցողին հայտնել, որ առաջին անգամ Տավուշի մարզի տարածքում թատերական ներկայացումներ է բեմադրել (նախ՝

Դիլիջան, ապա՝ Քարվանսարա գյուղերում) ծնունդով քարվանսարեցի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սան մանկավարժ Արշակ Սիմոնյանը (ապագայում՝ Կոմիտաս քահանան): Նա տեղի դպրոցների ուսուցիչների և բարձր դասարանների աշակերտների հետ, 1880-ական թվականների ավարտին, բեմարվեստին բացարձակ անծանոթ հայրենակիցներին է ներկայացրել«Արշակ 2-րդ» դրաման, ապա՝ այլ ստեղծագործություններ: XIX դարի երկրորդ կեսին ասպարեզ են գալիս գյուղագիրներ լալիգեղցի Արշակ Ագապյանը, խաչթառակեցի Հարություն Ճուղուրյանը, թովուզեցի արքեպիսկոպոս Գարեգին (Մելիքսեդեք) Մուրադյանը, ուզունթալեցի հայագետ, բանահավաք Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի), սևքարեցի, ռուսական բանակի հրետանու գեներալ Իվան (Հովհաննես) Վարշամյանը, դալաչեցի, փիլիսոփայության դոկտոր, բառարանագիր և պատմաբան Հարություն Դաղբաշյանը, ուզունթալեցի, բժշկագիտության առաջին հայ դոկտոր, գեներալ-մայոր Ստեփան Քալանթարյանը, ղուլալեցի, պրիմիտիվիստ նկարիչ Կարապետ Տեր-Գրիգորյանը: Դարավարտին հայոց ազգային ազատագրական պայքարի շիկացումների մեջ ևս իրենց մասնակցությունը բերեցին մեր բազմաթիվ հայրենակիցներ: Սևքարեցի Սաքոյի մասին մեր ժամանակակիցները գրեթե գիտեն ամեն ինչ: Սակայն հանիրավի մոռացված անուն է Վերին Աղդանի (Գանձաքարի) զավակ Հակոբ Սառիկյանը: Նա՝ որպես հիսնյակի հրամանատար, Սևքարեցի Սաքոյի հետ, 1897-ի հուլիսի 25-ին մասնակցել է Խանասորի նշանավոր արշավանքին՝ միաժամանակ հանդիսանալով հայրենասերների զորագնդի քահանան, և հետագայում որպես հրապարակախոս հանրությանը ներկայացրել արշավանքի պատմությունը: ***Հ. Սառիկյանը XX դարասկզբի հայոց մտավոր անդաստանի երևելի մշակներից է եղել, բայց նրա վաստակը հանգամանքների թելադրմամբ մատնվել է մոռացության:***

Ռուսաստանի կազմում ապրած հարյուր տարվա ընթացքում (1831-1931թթ.) Հայաստանի Հանրապետության բնակչությունը 161 747 մարդուց հասել էր 1 050 663-ի: Իսկ հայտնի է, որ Ռուսաստանի հետ միացման նախօրյակին Արևելյան Հայաստանում ապրում էր ընդամենը 25 000 հայ (բնակչության շուրջ 18%-ը): Հայկական հարյուրավոր գյուղեր չդադարող պատերազմների, բռնագաղթերի և ապատակությունների հետևանքով անմարդաբնակ էին: Հայ հասարակական գործիչները ռուսական արքունիքի հետ հարաբերություն-

ներքում XVIII դարի ընթացքում բազմիցս արտահայտել էին իրենց բաղձալի նպատակը՝ ներգաղթի միջոցով վերականգնել Հայաստանի ազգային բովանդակությունը, ամայի գյուղերը բնակեցնել աշխարհասփյուռ հայերով: Դեմ լինելով հայոց անկախ պետականության վերականգնմանը, Ռուսաստանը միաժամանակ շահագրգռված էր հայերի ներգաղթով: Ցարերի շրջապատում լավ գիտակցում էին, որ ռուսական նոր սահմանների երկայնքով ամայի հողերի բնակեցումը հնազանդ, աշխատասեր ու հավատարիմ, ռուսներին նվիրված ժողովրդով, մեծ օգուտ կարող էր բերել կայսրությանը:

Ուստի 1828-ին ռուս-պարսկական և 1829-ին ռուս-թուրքական պատերազմների ավարտը վավերացնող հաշտության պայմանագրերում կարևոր տեղ տրվեց Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս հայերի գաղթին, և դա համահունչ էր հայոց ազգային ձգտումներին: Երկու տարվա ընթացքում Արևելյան Հայաստան ներգաղթեցին ավելի քան 140 000 հայեր: Այդ իրողությունը ժամանակին նկատվել է որպես համաշխարհային տարեգրություններում մինչ այդ իր տեսակի մեջ եղած եզակի իրադարձություն: Որովհետև «այն ոչ միայն մարդկանց վերաբնակեցում էր, այլ հոգիների ու սրտերի վերաբնակեցում»: Ներգաղթը բառի բուն իմաստով կենդանություն տվեց Արևելյան Հայաստանին[200]: Պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթի շնորհիվ արմատապես թոխվեց Արևելյան Հայաստանի բնակչության ազգային կազմը: Հայերի թիվը կարճ ժամանակում հասավ 59 տոկոսի: Այսպիսով, ռուսների կազմակերպած ներգաղթը հանդիսացավ բախտորոշ քայլ, ազգահավաքի, ֆիզիկական փրկության, տնտեսական ու մշակութային զարգացման երաշխիք, ապագայում՝ անկախ պետականության վերականգնման հուսալի հիմք:

Սակայն, ավաղ, հետագայում եղան արժեքների անհեռատես վերագնահատումներ: 1919-1920թթ. փոփոխամիտ մարդկանց բորբոքած հակառուսականությունը լրջորեն վնասեց մեր ազգային շահերին*: Այդ ժամանակ Հարավային Կովկաս վերադարձող Խորհրդային Ռուսաստանը պատրաստակամություն էր հայտնում դառնալ Հայաստանին ներկայիս համեմատ շատ հզոր հայրենիք հատկացնելու երաշխավոր ու պաշտպան, միայն թե Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր հետ կնքեր բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագիր: Մերոնց թունավորել էր հակառուսականության բորբոքուն թնջուկը, և չարաչար խաբվեցին Արևմուտքի «ծովից-ծով» Հայաստան տալու սին խոստումներին և հայտնվեցին պատմության կոտրած տաշտակի առաջ: 70 տարի ռուսների հետ հայը նախնյաց ավանդած սուրբ հողակտորի վրա կերտեց իր հինգ հազարամյա կյանքի ոսկեդարը: XX դարի վերջին փողոցից եկած անփորձ ու անբարո մարդիկ, իրենց անազնիվ քաղաքական նպատակներին հասնելու համար, նորից մտան հակառուսականության անիծյալ արահետը: Լավ է, որ մեր հին ու ոխերիմ արևանն Արաքսի մյուս ափից շուտ ցուցադրեց իր ժանիքները: Հայ ժողովուրդն ապավինեց իր պատմական հիշողությանը, որի ծալքերում դեռ ծանրորեն մխում են հայրենիքի կորուստը, աղաղակում՝ մեր մեկուկես միլիոն սուրբ նահատակների հոգիները, նաև՝ բորբոքվում եղեռնազարկող վարպետների հետնորդներից հասցվող վիրավորանքը: Փառք Աստծո, արագ հետ կանգնեցինք ազգավնաս սխալի կեսից՝ Ռուսաստանի հետ նորոգելով երկշահավետ, հին բարեկամությունը: Եվ օրհնելով գալիք օրերի հայորդիների մուտքն այս ծեր ու ծծկեր աշխարհ՝ որպես մտքի շարքային մշակ, նաև ցանկանում եմ պատգամ թողնել: Փոքրաքանակ ազգերին դժվար, չափազանց դժվար է մենակ ապրել արևի տակ, ուստի իրենց երթն արժանապատվորեն շարունակելու համար նրանք ստիպված են եղել և կլինեն «ճանապարհի ընկեր» ընտրել հզորներից մեկին: Երկար դեգերումներից հետո մեր նախնիները ցեղի ապահով գալիքի համար երեք դար առաջ հուսալի ընկեր են ընտրել Ռուսաստանն ու ռուս մարդուն: Իհարկե, փոխվում է աշխարհը, փոխվում են նրանում տիրող իրողությունները, գուցե հարկ լինի փոխել նաև կողմնորոշիչները: Ինչ էլ լինի՝ ապագա քայլերը պիտի համապատասխանեն հայոց հավերժական երթի պահանջներին: Առա՛նց սխալվելու, առա՛նց կորստի:

* Տե՛ս Ռուբեն Դարբինեանի «Ռուսական վտանգը» (Երևան, 1991) և «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ (Երևան), 30 նոյեմբերի - 1 դեկտեմբերի, 1991թ.:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ամեն բան, ինչի ձեռք է զարկում բանական արարածը, իր շարժառիթն ունի: Ստեղծագործության պարագայում առաջ մղող զորությունը հեղինակի արարելու ներքին պահանջմունքն է, կամ հասարակական պատվերը: Այս գիրքն էլ այդ մտքի հաստատումն է, և կհուսամ, որ նրա գոյությունը ճիշտ կընկալվի նման աշխատությունների շարքում:

Երբ 1980-ական թվականների կեսերին խորհրդային երկրում «վերակառուցում» (Перестройка) անունով հովեր փչեցին, գիտակ մարդիկ վտանգներով լի գալիք կանխատեսեցին սկսված անկառավարելի գործընթացի համար: Կատակասերներն էլ այն օրերին մարգարեացան իրենց քաղաքական անեկդոտով, որ լավ հնչում է ռուսերեն: Հայկական ռադիոյին հարցնում են. «А чем кончится перестройка? Большой перестрелкой»,- լինում է պատասխանը*: Իսկապես, յոթ տասնամյակ փառաբանված խորհրդային ժողովուրդների եղբայրական բարեկամությունը սկսեց ճաքեր տալ; Պարտադրված անկախության հետ ասպարեզ հանվեցին նախկին համակարգի գաղափարախոսության տրամաբանությամբ չշոշափվող անցյալի վիրավորանքներն ու ազգային հիմնախնդիրները, որոնք անթեղված կրակի նման մխացել ու բորբոքվելու ելքեր էին որոնել (այդպիսին էր նաև իմ սերնդի նկարագիրը զարդարող 1960-ական թվականների ազգային ոգու զարթոնքը): Ազգայնական տրամադրությունների սրման շնորհիվ տաք բանավեճերը բազմամարդ դահլիճներից, լսարաններից, մամուլի էջերից և եթերից տեղափոխվեցին

* Իմաստը՝ «Ինչո՞վ կավարտվի վերակառուցումը»: «Մեծ փոխհրաձգությամբ»:

փողոցներ ու հրապարակներ, իսկ այնտեղի շիկացումները՝ թեժ մարտադաշտեր:

«Վերակառուցման» գաղափարախոսների հայտարարած սկզբունքներին միամտորեն հավատացած հայրենակիցներս 88-ի գարնանամուտին, հաճախ մեկ միլիոն մասնակից ունեցող հանրահավաքներում կայացած որոշումներով, ցանկացան խորհրդային ղեկավարության ուշադրությունը հրավիրել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վրա՝ ակնկալելով արդարացի լուծում: Չէ՞ որ պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգը, որի բնակիչները ի հնուց անտի եղել են հայեր, երբեք պատմության թատերաբեմում չեղած, ընդամենը 1918թ. ասպարեզ եկած Ադրբեջանի Հանրապետությանը միացվել է հայոց այդ երկրամասում ապրող բնիկ բնակիչների իրավունքների կոպիտ ոտնահարման, ազգերի ինքնորոշման անտեսման պայմաններում: Ազերիները հայերի արդար խոսքին պատասխանեցին «գործով»՝ իրենց նախնիների բարբարոս կրքերի դրսևորումով: Սումգայիթում կազմակերպվեց հայերի նոր կոտորած և բանը հասավ զինված հակամարտության, որն այսօր էլ դեռ չի հասել իր խաղաղ հանգրվանին: Այդ արյունալի իրադարձությունների ասպարեզ են հանդիսացել նաև հայոց հյուսիս-արևելյան սահմանները, որոնք պաշտպանող տավուշցիներն արդեն 20 տարի և՛ քաջարի զինվորներ են, և՛ խաղաղ աշխատավոր: Հայաստանը տարածքով փոքր է: Մեծ աշխարհի այս հողակտորի վրա հայը նահանջելու տեղ չունի և իրավունք չունի: Այս մտքով է միշտ զորացել ու ինքն իրենից աճել տավուշցին: Բուռն իրադարձությունների ծավալման հետ ազերի մտավորականները՝ լկտի համարձակությամբ անտեսելով բնիկ ժողովրդի գոյության փաստը, նաև հին աշխարհի անկողմնակալ մեծերի վկայությունները, հայտարարեցին, թե իրենց ժողովուրդը հետնորդն է Աղվանքի, ուստի և տերը այս աշխարհագրական միջավայրի, որ Կուր և Արաքս գետերի միջանկյալում Հայաստանը չի ունեցել Արցախ և Ուտիք նահանգներ, հայահոծ գավառներ, քաղաքներ ու գյուղեր: Նաև, որ այնտեղ միայն աղվանցիներ (իմա՝ ազերիներ) են բնակվել: Եվ՝ հայ ագրեսորները հետագայում են նվաճել իրենց հողերը, սեփականել ադրբեջանցիների կերտած խաչքարերը, եկեղեցիները, ճոխ մշակույթը, աղվանցի (ազերի) Դավթակ Քերթողին, Մովսես Կաղանկատվացուն, Մխիթար Գոշին, Կիրակոս Գանձակեցուն, Վարդան Արևելցուն, Վանական Վարդապետին և ուրիշների: Ազերի-

ները հոգուտ իրենց մի «կռվան» էլ գտան. եթե Անդրկովկասի շատ տեղանուններ թուրքերեն են, ապա հողերն էլ իրենցն է: Չէ՞որ իրենք թուրք էթնոսի տարրերից են: Բանն այնտեղ հասավ, որ նրանց առաջնորդներից մեկն էլ հայտարարեց, թե Դեբեդի ափից դեպի արևելք՝ Սևանի ափերով դեպի Վայոց ձոր, ադրբեջանական հողեր են, ուստի ինքը տիրոջ իրավունքով, հարմար պահի, առավոտյան կնախաճաշի Գանձակում, իսկ կեսօրին կլողանա և իշխան ձուկ կվայելի Սևանի ափին, առանց վախենալու, որ թոքաբորբ կստանա հայոց ջրի պաղությունից, իսկ ձկան քիստը կմնա կոկորդում:

Նման սին-ստահակ հայտարարություններից բորբոքվում էին մեր հայրենակիցները, վիրավորվում էր նրանց ազգային արժանապատվությունը: Իմ աչքերով եմ տեսել Բաքվում հորինված մի քարտեզ, ըստ որի՝ նաև Հայաստանի հյուսիս-արևելյան ողջ տարածքն էր ընդգրկված երևակայական «միջնադարյան Ադրբեջանի» կազմում:

«Մտավորականներդ ինչո՞ւ եք լռում, մի՞թե մեր բնօրրանը թուրքի հող է, ո՞վ պիտի ճշտի մեր շրջանների պատմությունը»,- քանիցս ինձնից այս հարցերի պատասխանները պահանջեցին, այժմ հանգուցյալ, անբաժան ընկերներ՝ գետահովիտցի Սարիբեկ Արշաբեկի Ղազարյանը, իջևանցի Հրանտ Մամիկոնի Ղուլարյանը և սևքարեցի Ռազմիկ Գևորգի Ղալումյանը, մարդիկ այն համաստեղությունից, ովքեր աճելով գեղճկական միջավայրից, դարձան XX դարի լուսավոր Հայաստանը կերտողներից՝ որպես հասարակ աշխատանքի մշակ, որպես արտադրության կազմակերպիչ և հայոց հավերժական երթի նվիրյալ:

Ահա այս անմոռաց բարեկամների հարցումները տարածաշրջանի պատմական անցյալի մասին գնալով շատացան, ապա փոխվեցին այդ գավառի պատմությունը գրելու համար հորդորների, իսկ հետո՝ պահանջի: Բազմազբաղությանս փաստարկները նրանց կարծես թե լռեցրին, սակայն խոստացա լրագրողական լարված աշխատանքի հետ կամաց-կամաց նյութեր հավաքել ու փորձել ստեղծել իրենց ցանկացածը: Անշուշտ, ի սզբանե գիտակցում էի սպասվող դժվարությունները: Վասպուրականի, Սյունիքի և Արցախի նման մեր երկրամասը չէր ունեցել իր տան պատմիչը, ուստի ամեն ինչ Իջևանի շրջանի մասին պետք էր հատիկ-հատիկ հավաքել մեր հին հեղինակների աշխատություններց և օտար աղբյուրներից, հնավայրերում կատարել ուսումնասիրություններ, ճշգրտել եղած փաստերը:

1990-ականների սկզբին հարկադրված էի գրեթե դադարեցնել գրքին նվիրվող աշխատանքը, որովհետև հյուսիսային Հայաստանին պատուհասած երկրաշարժի հետևանքներին եկան միանալու հանրապետությանը պարտադրված տրանսպորտային շրջափակումը, սահմանային կռիվները և տնտեսական խորացող ճգնաժամը: Կենդանացան մանկությանս օրերի անլույս գիշերները, սովի պատկերները: Կյանքի նեցուկը գալիք լավ օրվա հույսը դարձավ, իսկ հայաստանաբնակ մտավորականների գերխնդիրը՝ նոր փորձությունների մատնված հարազատ ժողովուրդի հետ դժվարություններին դիմագրավելը, հայրենի հողին և իր կոչմանը հարազատ մնալը: Այսպես եմ ասում, որովհետև 1960-ականների ազգային ոգու զարթոնքին գաղափարակից որոշ ընկերներիս պես, վերջին տասնամյակներում շատերը հայտնվեցին հայաստանյան բարդ ու անապահով իրականությունից հեռու՝ հացառատ ու լուսառատ օտար երկրներում:

Երեսուն-քառասուն տարի առաջ մարդիկ հեռանում էին խորհրդային կարգերից վիրավորված լինելու պատճառաբանությամբ: Վերջին հաշվով իրենց այլախոհ համարողները հեռացան իրենց մորից՝ Հայաստանից: Բայց դեռ այսօր էլ մեկնում են այլազան պատճառաբանություններով: Եղուկ և հազա~ր ափսոս...Չէ՞որ անկախ Հայաստանը, որի բախտավորությունը խոսքով երեկ հրապարակներում իրենց նպատակն էին համարում այդ մոլորյալները, կարող է լինել, զորանալ ու հավերժել իր ազգային թանձր բովանդակությամբ, իր բազմաքանակ զավակների օրհնալիր ներկայությամբ, նրանց լուսավոր մտքով և արարիչ բազկով:

Երբ մեր հայրենիքում իրականացվեց վարչատարածքային նոր բարեփոխում՝ ստեղծեցին մարզեր, հասկացա, որ բարեկամներիս ցանկությունն իրականացնելիս այլևս անհնար է սահմանափակվել Իջևանի շրջանի պատմությամբ: Արդեն խոսք պիտի գնար Տավուշի մարզի մասին, որին համընկնող տարածքը Բագրատունյաց թագավորության շրջանում զբաղեցնում էին Լոռվա կամ Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների) թագավորության արևելյան գավառները, որոնք XII-XIII դարերում Արցախի և Ուտիքի հետ հավաքական անունով նաև կոչվել են «Աշխարհ Արևելից» կամ «Կողմանք Արևելից»: Մարզերի ստեղծման պահին սահմանում հրադադար էր հաստատվել, իսկ կյանքը սկսել էր բարվոքել: Սակայն հնարավոր չեղավ եռյակ բարեկամներիս տրված խոստման իրականացմանն անմիջապես լծ-

վել: Ոչ քիչ ժամանակ նվիրեցի ռուսահայոց մի հատվածի տարօրինակ պատմության ուսումնասիրմանը և այդ մասին գրքերի* տպագրությանը:

Երբ ամբողջովին նվիրվել էի այս աշխատության ստեղծմանը, արդեն մահվամբ մի այլ աշխարհ էին տեղափոխված «պատվիրատու» բարեկամներս: Որոնք ամենից առաջ առաքինի հայեր էին և ճշմարիտ հայրենասերներ: Սկսված գործը չմնաց կես ճանապարհին, որովհետև հայրենասերին վայել մտահոգությամբ ուսումնասիրություններս շարունակելու, գրքի շարադրանքը հաջողությամբ ավարտելու և տպագրելու կարելիություններ ստեղծեցին Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը և Տավշո գյուղաշխարհի նվիրյալ բարեկամ, ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Վարդանյանը:

Այս գրքով ես նպատակ չեմ դրել ստեղծելու Տավուշի մարզի համապարփակ պատմությունը, դրանով բանիբուն պատմաբանները կզբաղվեն, այլ ուժերիս ներածին չափ ձգտել եմ շարահարել ակնարկային ժանրի աշխատություն, մի համեստ զրուցարան, որում ամփոփված են XIX դարի նշանակալի իրադարձությունները՝ մինչև տավուշյան ներկա սերնդի նախնիների վերահառնումը պապերի օրրանում, որոնց հիմնած տունն արդեն երկու հարյուր տարի առանց կոտորածի, ասպատակության ու գաղթի ենթարկվելու վախի կառուցվել է ու շենացել և անկախ Հայաստանի այս սահմանակալ թևին գնում է դեպի բաղձալի գալիք: Ափսոս, որ «Տավուշի մարզ»-ի ստեղծման առիթ դարձած հայրենասեր բարեկամներս չտեսան իրենց ցանկացածը: Եվ քանի որ նրանք երազում էին հայոց այս եզերքի պատմությանը նվիրված գիրք ունենալ հայրենակիցների սեղանին, ապա զրուցարանս նրանց ցանկության իրականացումը համարենք և տուրք հիշատակի: Իսկ ջանքերիս գնահատականը թող տան ընթերցողն ու ժամանակը:

* Տե՛ս Рубен Симонян, Едесия-Эдессия, Минеральные воды, 1998. Նաև՝ Ռուբեն Սիմոնյան, Եդեսիա, 1998:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Հայկ Խաչատրյան*, Գրական հիշատակարան, Երևան, 1996, էջ 17:
2. *Մովսես Խորենացի*, Պատմություն հայոց, (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի), Երևան, 1968, էջ 200:
3. *Հովհաննես Դրասխանակերտցի*, Հայոց պատմություն, (թարգմանությունը և ծանոթագրությունը՝ Գ. Թոսունյանի), Երևան, 1996, էջ 164:
4. *А. Д. Ерицов*, Экономический быт государственных крестьян Казахского уезда, Тифлис, 1886, ст. 8.
5. Кавказский календарь, Тифлис, 1883г.
6. *Մ. Խորենացի*, էջ 137:
7. *Ագաթանգեղոս*, Հայոց պատմություն, (թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983, էջ 447:
8. *Մովսես Կաղանկատվացի*, Պատմություն Աղվանից աշխարհի, (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի), Երևան, 1969, էջ 48:
9. Նույն տեղում, էջ 29:
10. *Մ. Խորենացի*, էջ 93:
11. *Բագրատ Ուլուբաբյան*, Զրուցարան, Երևան 1991, էջ 194-195:
12. *Մ. Կաղանկատվացի*, էջ 86:
13. *Հայոց պատմություն* (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2000, էջ 49:
14. *Ղևոնդ, Պատմություն*, (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1982, էջ 35-36:
15. *Միանանք երգով*, Ս. Էջմիածին, 2000, էջ 12:
16. *Ղևոնդ*, էջ 39:
17. *Թովմա Արծրունի* և *Անանուն*, Պատմություն Արծրունյաց տան, (թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի), Երևան, 1978, էջ 139:
18. *Ռաֆայել Մաթևոսյան*, Բագրատունիներ, Երևան,1996, էջ 23:
19. *Հովհ. Դրասխանակերտցի*, էջ143:
20. Նույն տեղում, էջ 223:
21. Նույն տեղում, էջ 247:
22. *Մ. Կաղանկատվացի*, էջ 267:
23. *Հովհ. Դրասխանակերտցի*, էջ 303:

24. Նույն տեղում, էջ 311:
25. Նույն տեղում, էջ 311:
26. Նույն տեղում, էջ 321 և 323:
27. *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունիներ, էջ 31:
28. *Կ. Ղաֆադարյան*, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ190:
29. *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունիներ, էջ 46:
30. *Հակոբ Մանանդյան*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1977, էջ 32:
31. *Ռ. Մաթևոսյան*, Բագրատունիներ, էջ 47:
32. *Լևոն Մելիքսեթ-Բեկ*, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Երևան, 1934, էջ 217:
33. *Հ. Մանանդարյան*, նշվ. աշխ., էջ 98:
34. *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց, (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի), Երևան, 1982, էջ 84:
35. *Բագրատ Ուլուբաբյան*, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան,1975, էջ118:
36. *Լ. Մելիքսեթ-Բեկ*, էջ 218:
37. *Կ. Գանձակեցի*, էջ 84:
38. *Դիվան հայ վիմագրության*, պրակ VI, Երևան,1977, էջ 138:
39. *Կ. Գանձակեցի*, էջ 123:
40. *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի*, Վենետիկ, 1862, էջ 140:
41. *Արտաշես Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը*, Երևան, 1990, էջ 59:
42. *Վարազդատ Հարությունյան*, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը: ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Երևան,1957, N8, էջ 80:
43. *Լևոն Բաբայան*, Հյուսիսային Հայաստանը XII-XIII դարերում, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 530:
44. *Հայկական սովետական հանրագիտարան* (ՀՍՀ), հ. 2, 1976, էջ 37:
45. *Կ. Գանձակեցի*, էջ 152:
46. *Դիվան հայ վիմագրության*, պր. VI, էջ 62:
47. *Ա. Շահնազարյան*, նշվ. աշխ., էջ 46-53:
48. *Ռաֆայել Մաթևոսյան*, Տաշիր-Ջորագետ, Երևան,1982, էջ 27:
49. *Ալիշան*, Հայապատում (Մխիթար Գոշ, Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին մեջ ԺԲ դարու), Վենետիկ, 1901, էջ 384:
50. Նույն տեղում, էջ 384:
51. *Կ. Գանձակեցի*, էջ 154 և 276:
52. *Հայ ժողովրդի պատմություն*, հ. III, Երևան, 1976, էջ 490:
53. *Հաւաքումն պատմութեան...*, էջ166:
54. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Ե-ԺԲ դարեր, (աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի), Երևան, 1988, էջ 223-224:

55. *Կ. Ղաֆադարյան*, նշվ. աշխ., էջ104:
56. *Հ. Մանանդարյան*, նշվ. աշխ., էջ135:
57. *Դիվան հայ վիմագր.*, պր. VI, էջ 37:
58. *Կ. Գանձակեցի*, էջ 153:
59. *Դիվան հայ վիմագր.*, պր. VI, 139:
60. *История и восхваление Венценосцев*, Тбилиси, 1954, ст. 40. Նաև՝ С. Еремян, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках.Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատոր XIII, Երևան,1946, էջ 395:
61. *Կ. Ղաֆադարյան*, Հաղբատ, Երևան,1963, էջ 174:
62. *Կ. Գանձակեցի*, էջ 79:
63. Նույն տեղում, էջ 124:
64. *Е. Такайшвили*, Об Иванно-Богославской церкви в Тбилиси. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1913, ст. 56:65© О© □iЭУiП»уЗ« їз157:
66. С. Еремян, նշվ. աշխ., էջ 395:
67. Նույն տեղում, էջ 413:
68. *Վրաց ժամանակագրություն* (1207-1318), (աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի), Երևան, 1971:
69. *Դիվան հայ վիմագր.*, պր. VI, էջ 159:
70. *Վրաց ժամանակագրություն*, էջ 142:
71. Նույն տեղում, էջ 164:
72. *ՀՍՀ*, հ. 4, Երևան, 1981, էջ 185:
73. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Երևան, 1988, էջ 935:
74. *Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 426-427:
75. *Կ. Գանձակեցի*, էջ 152:
76. Նույն տեղում, էջ 153:
77. *Հայերեն ձեռագրերի հիշատակարան Ե-ԺԲ դարեր*, նշվ. աշխ., էջ 253:
78. *Մխիթար Գոշ*, Գիրք դատաստանի, (աշխատությամբ Խ. Թոսունյանի), Երևան, 1975, էջ 285:
79. *Հաւաքումն պատմութեան...*, էջ 140:
80. *Կ. Գանձակեցի*, էջ 153:
81. Նույն տեղում, էջ 153:
82. *Վրաց ժամանակագրություն*, էջ 59:
83. *Հաւաքումն պատմութեան...*, էջ 146:
84. *Ա. Շահնազարյան*, նշվ. աշխ., էջ 159:
85. *Կ. Գանձակեցի*, էջ 176:
86. Նույն տեղում, էջ 176:
87. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4., Երևան, 1998, էջ 752:
88. *Կ. Գանձակեցի*, էջ 117:
89. Նույն տեղում, էջ 186:

90. *Լ. Բաբայան*, Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 112:
91. *Վրաց ժամանակագրություն*, էջ 74:
92. *Կ. Գանձակեցի*, էջ 200:
93. *Ա. Շահնազարյան*, նշվ. աշխ., էջ 131:
94. *«Հայոց աշխարհ» (օրաթերթ)*, Երևան, 10 դեկտեմբերի 1997թ:
95. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1., Երևան, 1986, էջ 765:
96. *Մակար Բարխուտարեանց*, Արցախ, Բաղու, 1895, էջ 396:
97. *Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի*, Փարիզ, 1960, էջ 34:
98. *Կ. Գանձակեցի*, էջ 181:
99. *ՀՍՀ*, հ. 2, Երևան, 1976, էջ 636:
100. *Հաւաքումն պատմութեան...*, էջ 144-145:
101. *Բագրատ Ուլուբաբյան, Զրուցարան*, Ա, Երևան,1987, էջ107 :
102. *Ագաթանգեղոս*, էջ 29-30:
103. *Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին*, (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Մինասյանի), Երևան, 1971, էջ 77-78:
104. *Մ. Կաղանկատվացի*, էջ 73:
105. *Կ. Գանձակեցի*, էջ 183-184:
106. *«Էջմիածին»*, 2000, Ե, էջ 98-102:
107. *ՏԱՎՈՒՇ* - նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, 2009, էջ78-79:
108. *Միք. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը*, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 533-548:
109. *Հատոր 2*, Երևան, 1988, էջ 927-928:
110. Տե՛ս նրա «Տաշիր-Զորագետ», Երևան,1982:
111. *Ռուբեն Սիմոնյան*, Տավուշի մարզ, Երևան, 2003, էջ 56:
112. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Երևան, 1986, էջ 259:
113. *«Էջմիածին»*, 2001, Ե, էջ 94-104:
114. *Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, 1972, էջ 215:
115. *Մանանդյան Յ. Ա.*, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. д.н.э.-XVв. н.э.), Ереван, 1954:
116. *Վ. Հարությունյան*, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960:
117. *Հովհ. Դրասխանակերտցի*, էջ 143:
118. *«Էջմիածին»*, 1998, Զ, էջ 68-76:
119. *«Էջմիածին»*, 1998, Զ, էջ 77-80:
120. *Հակոբ Մանանդյան*, Երկեր, Ե հատոր, Երևան, 1984, էջ 231-232:
121. *Ա. Ս. Գրիբոյեդով*, Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1954:
122. Նույն տեղում, էջ 19:
123. *Կ. Գանձակեցի*, էջ 160:
124. *Հակոբ Մանանդյան*, Երկեր, Ե հատոր, էջ 313:
125. *Վրաց ժամանակագրություն*, էջ 24:

126. *Կ. Գանձակեցի*, էջ 173:
127. Նույն տեղում, էջ 278:
128. *Հ. Մանանդյան*, նշվ. աշխ., էջ 242:
129. Նույն տեղում, էջ 391:
130. *Ալիշան, Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 96:
131. *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մաս առաջին, (1401-1450թթ.), (աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի), Երևան, 1955, էջ 461:
132. *Առաքել Դավրիժեցի*, Պատմություն, (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի), Երևան, 1988, էջ 85:
133. Նույն տեղում, էջ 43:
134. *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասյան ժողովուրդների մասին*, հ. Ա, Երևան, (աշխատասիրությամբ Ա. Սաֆրաստյանի), 1961, էջ 22:
135. *Д. Зубарев*, Разбор статьи Г. Клепорта. Описание Российской Армении, Северная пчела, 1834, N181:
136. *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V, Երևան, 1974, էջ 17:
137. *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ* (1601-1620թթ.), հատ. Ա, (աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի), Երևան, 1978, էջ 17:
138. *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ* (1641-1660թթ.), հատ. Գ, (աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի), Երևան, 1984, էջ182:
139. *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ* (1621-1640 թթ.), հատ. Բ, (աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի), Երևան, 1978, էջ 260:
140. *Դիվան հայ վիմագր.*, պր. VI, էջ 55:
141. Նույն տեղում, էջ 49:
142. *Ռուբեն Սիմոնյան*, Եղել է նաև Խերումյան մելիքական տոհմ, «Էջմիածին», 1998, Զ, էջ 77-80:
143. *Դիվան հայ վիմագր.*, պր. VI, էջ 216-217:
144. *Ապրես Բէկնազարեան*, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 190:
145. *Սամվել Կարապետյան*, Ադրբեջանական ՍՍՀ Թովուզի շրջանի հայկական պատմա-ճարտարապետական հուշարձաններ, «Էջմիածին», 1989, Ա, էջ 52-54:
146. *Մ. Բարխուտարեանց*, նշվ. աշխ., էջ 59 :
147. *Г. Эзов*, Сношения Петра Великого с армянским народом, С. Петербург, 1892, ст. 36.
148. *Հայոց պատմություն (ուսումնական ձեռնարկ)*, նշվ. աշխ., էջ 79:
149. *Արտաշես Պողոսյան*, Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան, 1974, էջ 10:
150. *З. Авалов*, Присоединение Грузии и России, С. Петербург, 1901, ст. 17
151. *Հայոց պատմություն (ուսումնական ձեռնարկ)*, նշվ. աշխ., էջ 103:

152. *Լ. Մելիքսեթ-Բեկ,* նշվ. աշխ., Բ հատոր, Երևան, 1936, էջ 179:
153. Լեո, Երկերի ժողովածու, III հատոր, Երևան, 1973, էջ 276:
154. Географическое и статическое описание Грузии и Кавказа из путешествия Г-на Академика И. А. Гильдштеда через Россию и Кавказским горам в 1770, 1771, 1772 и 1773 годах, СПб, 1809, с. 337.
155. *Ղազար Հովսեփյան,* Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904:
156. *Армянско-русские отношения в XVIII веке,* Ереван, 1990, ст. 354.
157. *Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին,*1981, էջ 179:
158. Նույն տեղում, էջ 185:
159. *Акты Кавказской археологической комиссии,* (այսուհետև՝ Акты...), том II, Тифлис, 1868, ст. 594.
160. *Армяно-русские отношения...,* նշվ. աշխ., էջ 415.
161. Նույն տեղում, էջ 441:
162. *Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի* ..., նշվ. աշխ., էջ 162-163:
163. *Ռուբեն Սիմոնյան,* Եդեսիա, Երևան, 1998:
164. *Армянско-русские отношения ...,* նշվ. աշխ., էջ 469:
165. Նույն տեղում, էջ 446-447:
166. *Ապրես Բէկնազարեանց,* նշվ. աշխ., էջ 241 :
167. *Լեո,* նշվ. աշխ., էջ 407:
168. *Զ. Авалов,* նշվ. աշխ., էջ 207:
169. *Акты...,* том /, Тифлис, 1866, ст. 475.
170. Նույն տեղում, էջ 461-462:
171. *Ստ. Լիսիցյան,* Պոմպեոսի ուղին Անդրկովկասում, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. XIII, Երևան, 1946, էջ 332:
172. *ՀՀ Ազգային արխիվ* (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 93, g. 1, գ. 9, թթ. 34 և 101-102:
173. *Տեր Կոմիտաս քահանա Սիմոնյան,* Պատմություն տանն Մաթոսա (ձեռագիր), Մաշտոցի անվան մատենադարան, թ. 1925, էջ 2-3:
174. *ՀԱԱ,* ֆ. 93, g. 1, գ. 9, թ. 31:
175. *Акты...,* том /, Тифлис, 1878, ст. 103:
176. *Պատմա-բանասիրական հանդես,* 1967, N2-3, էջ 223:
177. *Լ. Մելիքսեթ-Բեկ,* նշվ. աշխ., հ. Բ , Երևան, 1936, էջ 205:
178. *Եղիշե Գեղամեանց,* Պատմական քաղուածքներ, Բաքու, 1909, էջ 180:
179. *Ապրես Բէկնազարեանց,* նշվ. աշխ., էջ 367:
180. *Ալեքսանդր Երիցյան,* Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, Թիֆլիզ, 1894, էջ 268:
181. *Ե. Գեղամեանց,* նշվ. աշխ., էջ 182:
182. *Ալ. Երիցյան,* Ամենայն Հայոց կաթողիկոս., նշվ. աշխ., էջ 248:
183. *Ապրես Բէկնազարեանց,* նշվ. աշխ., էջ 369:

184. *ՀԱԱ,* ֆ. 93, g. 1, գ. 14, թ.թ 1-2:
185. *Մ. Բարխուտարեանց,* նշվ. աշխ., էջ 390:
186. *ՀԱԱ,* ֆ. 93, g. 1, գ. 8, թ. 45:
187. *Երվանդ Լալայան,* Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 311:
188. *Акты...,* том II, Тифлис, 1868, ст. 561.
189. *Акты...,* том I, Тифлис, 1866, ст. 185.
190. *ՀԱԱ,* ֆ. 93, g. 1, գ. 9, թ. 210:
191. *ՀԱԱ,* ֆ. 93, g. 1, գ. 3830, թ. 67:
192. *Ռաֆֆի,* Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987, էջ 175:
193. *ՀԱԱ,* ֆ. 53, g. 1, գ. 3814, թթ. 91-93:
194. *ՀԱԱ,* ֆ. 56, g. 18, գ. 321, թթ. 81-82:
195. *Զավեն Կորկոտյան,* Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932, էջ 164-165:
196. *Статические описания Закавказкого края,* С. Петербург, 1835, ст. 152.
197. *Մ. Բարխուտարեանց,* նշվ. աշխ., էջ 60:
198. Նույն տեղում, էջ 60:
199. *А. Д. Ерицов,* նշվ. աշխ., էջ 71:
200. *Վ. Պարսամյան,* Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1988, էջ 52:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Նախաբան 5
Բնաշխարհ 9
Պատում լինելիության 32
Հիշատակարան 270
Ծանոթագրություններ 275

ՌՈՒԲԵՆ ԱԲԳԱՐԻ ՍԻՄՈՆՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

РУБЕН АБГАРОВИЧ СИМОНЯН

ТАВУШСКИЙ МАРЗ

Համակարգչ. շարվածք՝ Անժելա Դիլբարյան
Խմբագիր՝ Տիգրան Սիմոնյան

Պատվեր՝ 671:

Տպագրված է «**Տիգրան Մեծ**» հրատարակչություն ՓԲԸ տպարանում

Շապիկի 4-րդ էջին՝ Տավուշի մարզի ամենամեծ թևավոր խաչը, XIIIդ. (Խաչուտ թալա, Դիլիջան):